

ԶԱՐԵՆՆԱԳ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ

**ՃԱՆՉՆԱՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ՝
ՄՕՏԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՍՏՈՒԾՈՑ**

**ԽՄԲԱԳԻՐ՝
ՎԱՂԻՆԱԿ ՎՐԴ. ՄԵԼՈՑԵԱՆ**

2007

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԵՐԱԾԱԿԱՆ

«Չէ՞ք գիտեր որ ձեր մարմինները տաճարն են Սուրբ Հոգիին որ Աստուծակ առիք եւ ձեր մէջ կը բնակի» (Ա.Կր 6.19): Այո՛, Ջարեհ Սրբազանը գիտեր, շա՛տ լաւ գիտեր թէ ինք տաճարն էր Սուրբ Հոգիին: Ա՛յնպիսի տաճար մը՝ ուրկէ լսուեցան Նոր Երգեր՝ Աստուծոյ Գառնու-կին համար երգուած: Ա՛յնպիսի տաճար մը՝ ուր անդուլ նուագեց Դաւիթի տաւիղն ու քնարը: Ա՛յնպիսի տաճար մը՝ որուն մէջ Աստուծոյ ներկայութեան Ուխտի Տապանակը մնաց անվթար ու մշտափայլ: Ա՛յնպիսի տաճար մը՝ որ կառուցուած էր Աստուծոյ լերան՝ Քորեթի վրայ, եւ որ լեցուած էր փառքովն ու փափաքովը ամենակալ Աստուծոյ:

Սրբազանը սիրե՛ց Աստուծոյ տաճարը, նոյնացա՛ւ այդ տաճարին հետ, տաճա՛ր դարձաւ ան, արդարեւ, ինչպէս Վարուժան Արք. Հերկելեան պիտի ըսէր.-

«Տաճար մըն էր Ջարեհ Սրբազանը: Եւ՝
Ի՛նքն էր բոցկլտացող մումը այդ տաճարին,
Ի՛նքն էր շողարձակ լոյսը այդ տաճարին,
Ի՛նքն էր մեղրաբոյր խունկը այդ տաճարին,
Ի՛նքն էր յաղթ հունչը այդ տաճարին,
Ի՛նքն էր սուրբը այդ տաճարին,
Ի՛նքն էր աղօ՛թքը այդ տաճարին,
Ի՛նքն էր բա՛ց Աւետարանը այդ տաճարին»:

Եւ ահաւասիկ այդ Աւետարանին յաւերժական լոյսին ճառագայթումն է այս գիրքը: Գիրք մը՝ զոր իր Աստուածաշունչի գիտութիւնը խորացնել ուզող մարդը՝ ամո՛ւր պէտք է բռնէ իր ձեռքին մէջ: Գիրք մը՝ զոր Աստուծոյ սէրը ըմբռնանելու փափաք ունեցող հաւատացեալը՝ բա՛ց պէտք է ունենայ իր ձեռքին մէջ: Գիրք մը՝ եզակի եւ իր տեսակին մէջ մինակ, ճի՛շդ ինչպէս Սրբազանն էր եզակի եւ իր տեսակին մէջ մինակ:

Եզակի այս գիրքը կ'ընդգրկէ հարուստ եւ հարստացնող տարբեր-տարբեր նիւթեր, գրուած զանազան ժամանակներու ընթացքին եւ խօսուած զանազան առիթներով: Գիրքը կը բացուի «Յիսուսի առաքելութիւնը՝ մեր առաքելութիւնը» վերնագրուած յօդուածով մը, որուն մէջ բացայայտօրէն կը պարզուի Սրբազանին հոգեկան տազնապը ի տես մեր եկեղեցոյ մէջ իսկական աւետարանչութեան «նուագումին ու նուաղումին», իր իսկ բառերով: Սրբազանը իր այս գիրքին ընդմէջէն ժամանակը հասած կը համարէ *«որ վերադառնանք առաքելականութեան, դուրս գանք կրաւորականութենէն եւ դառնանք մարտունակ, յարձակունակ եւ աշխատունակ եկեղեցի, եւ մեր առաքելական գործը հասկնանք ու հասցնենք ո՛չ միայն եկեղեցի եկողին, այլ մանաւանդ դուրսը մնացողին, որ դժբախտաբար ամբողջութեամբ անտեսուած է»:*

2-րդ յօդուածը Եբրայական տօներուն վերաբերեալ աշխատասիրութիւն մըն է: Առանց այդ տօներուն մասին յստակ եւ լայն ծանօթութիւն ունենալու, Աստուածաշունչը ընթերցողին համար եւ յատկապէս Հնգամատեանը ուսումնասիրողին համար՝ շատ բան պիտի մնար անհասկնալի: Եբրայական տօները ունին իրենց տիպաբանական արժէքը քրիստոնէական եկեղեցիին համար. չգիտնալ անոնց տիպաբանական արժէքը՝ զանոնք պիտի դարձնէր անհրապոյր եւ անմատչելի:

3-րդ յօդուածը Մատթէոսի Աւետարանին 13-րդ գլուխէն քաղուած եւ Աստուծոյ արքայութեան հետ առնչուած «Պահուած գանձին օրինակ»ին, «Մարգարիտին օրինակ»ին եւ «Ուռկանին օրինակ»ին վերաբերեալ հոգեւոր մեկնութիւն մըն է: Սրբազանը տուեալ օրինակներուն ընդմէջէն մատնանշելով Աստուծոյ արքայութեան մանրանկարը հանդիսացող եկեղեցիին կոչումը՝ կ'ըսէ. *«Եկեղեցին ունի իր ձկնորսները՝ առաքելներու հետեւորդ քարոզիչները, որոնք Աստուծոյ խօսքին քարոզութեան ուռկանը նետած են ու կը նետեն աշխարհի ծովուն մէջ, եւ այդ ուռկանով եկեղեցոյ մէջ*

կ'առնեն անխտիր ամեն տեսակի ձուկ, այսինքն՝ աշխարհի բոլոր ժողովուրդներէն, թէ՛ մեծ եւ թէ՛ փոքր, թէ՛ լաւ եւ թէ՛ անպէտ, թէ՛ բարի եւ թէ՛ չար, առանց ընտրութիւն կամ դատաստան ընելու»:

4-րդ եւ 5-րդ յօդուածները «Հազարամեակ»ին եւ «Նեո»ին մասին են: Սրբագանը «Հազարամեակ»ին մասին խօսած ատեն կը ներկայացնէ եկեղեցւոյ անցեալի մեկնիչներուն, ինչպէս նաեւ ներկայ ժամանակներու մեկնիչներուն առաջադրած բացատրութիւնները: Ան շատ հետաքրքրական պատմական բացատրութիւններ կ'առաջադրէ «Նեո»ին մասին խօսած ատեն:

6-րդ եւ 7-րդ յօդուածները մեզի որոշ ծանօթութիւններ եւ տեղեկութիւններ կու տան Հին Կտակարանի ժամանակակից եւ յատկապէս Իսրայէլը շրջապատող Քանանեան եւ այլ հեթանոս ազգերու եւ ցեղերու կրօնական հաւատալիքներուն եւ համոզումներուն մասին: Առանց այս ծանօթութեանց եւ տեղեկութեանց, կարելի չէ յստակ եւ ճշգրիտ պատկերացում ունենալ Հին Կտակարանը պարունակող շատ մը դրուագներու եւ դէպքերու մասին:

8-րդ յօդուածը Տիմոթէոսի առաջին նամակին «կսկծալի» սերտողութիւնն է: 1993-ին կատարուած այս սերտողութիւնը «կսկծալի» կոչեցի, որովհետեւ ատիկա ամբողջական չէ, այլ կը սկսի առաջին գլուխին առաջին համարէն եւ կ'երկարի մինչեւ 4-րդ գլխուն 3-րդ համարը: Վստահօրէն չեմ գիտեր եթէ երբեք Սրբագանը նամակը իր ամբողջութեանը մէջ ներկայացուցած է: Ան կ'արծարծէ եւ խորունկ կերպով կը քննարկէ հետաքրքրաշարժ նիւթեր, ինչպէս օրինակ՝ Աստուծոյ բարի ու քաջ զինուորը ըլլալու անհրաժեշտութիւնը, եկեղեցւոյ մէջ կիներուն խօսիլ կարենալ կամ չկարենալու հարցը, եկեղեցւոյ սպասաւորներուն յատկանիշները, ելն:

9-րդ յօդուածը խորհրդածութիւն մըն է Եբրայեցիներուն նամակին 6.4-5 եւ 10.19-31 հատուածներուն վերաբերեալ, ուր

Սրբագանը հանգամանօրէն կ'անդրադառնայ այն կէտին մասին, թէ՛ մէկը որ փրկութիւնը ընդունած է՝ կրնայ իր փրկութիւնը կորսնցնել: Ան կը հաստատէ թէ «Քրիստոս ի նքն է միակ զոհը, որ կրնայ մեր մեղքերն ու յանցանքները սրբել: Առանց Քրիստոսի եւ անոր քաւչարար արիւնին՝ չկայ քաւութիւն, եւ ուստի չկայ յ փրկութիւն: Ինչ կ'ըլլայ ան՝ որ այս զոհը ճանչնալէ եւ ընդունելէ, եւ անոր պարգեւած շնորհքը ճաշակելէ ու վայելելէ ետք՝ գիտակցաբար, կամաւորաբար կը լքէ զայն, եւ նաեւ կ'արհամարհէ ու կ'անարգէ զայն, նախընտրելով մեղքի ու յանցանքի մէջ ապրիլ:» Այնպիսիին կը մնայ միայն իր դատաստանին սպասել: Մպաստում մը՝ որ ահարկու է, Սատանային եւ անոր գործակիցներուն, Աստուծոյ բոլոր հակառակորդներուն վերապահուած վախճանը, որ զանոնք լափող բոցավառ կրակը պիտի ըլլայ»:

10-րդ յօդուածով Սրբագանը լոյսի տակ կը բերէ եւ խո՛ր յուզումով ու ներքին ընդվզումով կը խօսի աշխարհի մէջ ամենէն ցաւալի իրողութեան՝ վիժումի մասին, եւ կ'ըսէ. «Յոյութեան իսկ վայրկեանէն՝ արգանդին մէջ սկիզբ առած սաղմը կամ պտղաձուն գոյութեան եկած է արդէն» ապրող ու բարախող բջիջներու իմաստաւորեա՛լ գումար մըն է՝ կեանքի որոշակի կերպ մըն է՝ եւ ուստի ո՛րեւէ հանգրուանի զայն փճացնելը համազօր է կեանքի ոչնչացումին» կամաւոր սպանութեան»:

11-րդ յօդուածը Աստուածաշունչի հեղինակութեան եւ ներշնչականութեան մասին է: Սրբագանը կը բացատրէ որ թէպէտ Աստուածաշունչը մարդոց կողմէ գրուած է, բայց մարդկային հեղինակութիւն չէ, այլ՝ աստուածային, եւ իբր այդպիսին, բնականօրէն պէտք է ընդունիլ, որ անիկա Սուրբ Հոգիին ներշնչումով գրուած Աստուծոյ Գիրքն է: Ան կը թուէ պատճառներ որոնք մեզ զօրեղապէս կը համոզեն որ Աստուածաշունչը Սուրբ Հոգիին ներշնչումով գրուած աստուածային հեղինակութիւն մըն է:

12-րդ յօդուածով մեր Եկեղեցոյ Սուրբ Պատարագը ճանչցնելու փորձ մըն է որ կ'ընէ Սրբագանը: Ան գեղեցիկ ու տպաւորիչ կերպով կը ներկայացնէ մեր Պատարագին զարգացումը, կառոյցն ու բովանդակութիւնը: Պատարագը գիտնալը ինքնաբերաբար մեզ պիտի առաջնորդէ աւելի՛ սիրելու զայն, աւելի՛ կապուելու անոր եւ աւելի՛ օրհնուելու անով:

13-րդ յօդուածը Հին Կտակարանի պատմութեան խտացումն է: Սրբագանը Հին Կտակարանի պատմութիւնը եօթը օղակներու կը բաժնէ, ներկայացնելով այն հանգրուաններն ու փուլերը ուրկէ Իսրայէլի ժողովուրդը անցաւ: Ներկայացուած եօթը օղակներուն իւրացումը կրնայ օգնել մեզի ամբողջ Հին Կտակարանին պատմութիւնը մեր մտքին մէջ պահելու:

Գիրքին մնացեալ մասը կը բաժնուի երեք մասերու.-

1.- Ներածութիւն Հնգամատեանի: Ասոնք ուղղակիօրէն Սրբագանին կողմէ գրուած են, եւ հետեւաբար, բերանացիօրէն ներկայացուած նիւթեր չեն: Չանոնք լաւ իւրացնելը՝ մեզ կ'առաջնորդէ Հնգամատեանի ճշգրիտ հասկացողութեան:

2.- Եօթը նամակներ՝ եօթը եկեղեցիներուն: Յայտնութեան գիրքէն ուզեցինք առանձնացնել անոր 2-րդ եւ 3-րդ գլուխները, որոնք կը ներկայացնեն այն եօթը նամակները որոնք ուղղուած են այն եօթը եկեղեցիներուն, որոնք Յովհաննէսի ժամանակակից եւ Փոքր Ասիայի տարածքին գտնուող եկեղեցական համայնքներ էին: Ինչո՞ւ այս ընտրութիւնը: Այս ընտրութիւնը կատարեցի, որովհետեւ եկեղեցիներէն *«իւրաքանչիւրին ներկայացուցած յատկանիշները յատուկ են նաեւ բոլոր ժամանակի քրիստոնէական համայնքներուն կամ եկեղեցիներուն»:* Ուստի, անոնք ըսելիք ունին, այսօր, իւրաքանչիւր եկեղեցիի եւ իւրաքանչիւր հաւատացեալի:

Գիրքին վերջին եւ ամենէն ընդարձակ եւ նոյնքան հետաքրքրական բաժինը՝ Հայ Եկեղեցոյ «Հաւատամք»ին մեկնութիւնն ու պատմագիտական բացատրութիւնն է գորս Սրբազանը կատարեց 1999-ին¹: Հաւատամքը խտացումն է մեր ամբողջ դաւանութեանց, աստուածաբանութեան, վարդապետութեան, բայց նաեւ ու մանաւանդ, խտացումն է մեր հայրերու հաւատքին, հայր՝ւ հաւատքին: Ահաւասիկ այդ հաւատքին հո՛ւրն ու լո՛յսն է գորս Զարեհ Սրբազան կը փորձէ դուրս բերել թուղթէն ու մելանէն, անով լուսաւորելու, ջերմացնելու եւ լեցնելու համար Աստուծոյ եւ Աստուծոյ գիտութեան ծարաւ հոգիները:

Վաղինակ Վրդ. Մելոյեան

¹ «Հաւատամք»ին վերաբերեալ ներկայացուած մեկնութիւնը խտացեալ կամ ամփոփ մեկնութիւն մըն է: Անոր ընդարձակը հաւանաբար շուտով լոյս տեսնէ Հալեպի մէջ:

ՅԻՍՈՒՄԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ՝
ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ²
(Սուրբ Գրոց սերտողութիւն)

Առաջին օրուան Աստուածաշնչական մեր սերտողութեան առարկան կը կազմեն Ղուկասի Աւետարանին 4.16-21 համարները: Նախ կարդանք այդ հատուածը լման.-

«Եկաւ Նազարէթ քաղաքը, ուր մեծցած էր, եւ իր սովորութեան համաձայն Շաբաթ օր ժողովարան գնաց: Երբ ոտքի էլաւ կարդալու համար օրուան ընթերցուածը, իրեն տուին Եսայի մարգարէին գիրքը: Բացաւ եւ գտաւ այն տեղը ուր կ'ըսէր.-

*"Տիրոջ Հոգին վրաս է.
որովհետեւ զիս օձեց եւ դրկեց՝
աղքատներուն փրկութեան աւետիս տալու,
սրտաբեկները մխիթարելու,
գերիներուն ազատութիւն բերելու,
կոյրներուն աչքերը բանալու,
հարստահարուածները ազատելու
եւ յայտարարելու՝
թէ ահա հասած է ժամանակը,
երբ Տէրը պիտի փրկէ իր ժողովուրդը":*

Ապա գոցեց գիրքը, տուաւ պաշտօնեային եւ ըսաւ.- Այս մարգարէութիւնը որ դուք լսեցիք, ահա այսօր իրականացաւ»:

Առաջին հերթին դիտենք հատուածին ընդհանուր շրջագիծը: Նկատի ունենանք, որ Ղուկասի Աւետարանը, որպէս կառոյց, գլխաւոր ութը բաժիններ ունի.-

1.- Նախարան (1.1-4):

2.- Յովհաննէս Մկրտիչի եւ Յիսուսի ծնունդն ու մանկութիւնը (1.5-80 եւ 2.1-52):

² Խօսուած «Քահանայից Համագումար»ին, Դպրեվանք, 18 Սեպտեմբեր, 2002:
www.hygradaran.weebly.com 8

3.- Յովհաննէս Մկրտիչի քարոզութիւնն ու գործունէութիւնը (3.1-20):

4.- Յիսուսի մկրտութիւնն ու փորձութիւնը (3.21-22 եւ 4.1-13):

5.- Յիսուսի առաքելութիւնը Գալիլէայի մէջ (4.14- - 9.50):

6.- Գալիլէայէն Երուսաղէմ երթը (9.51- - 19.27):

7.- Վերջին շաբաթը Երուսաղէմի մէջ եւ շրջակայքը, խաչելութիւնն ու թաղում (19.28- - 23.56):

8.- Յիսուսի յարութիւնը, երեւումները եւ համբարձումը (24.1-53):

Ընդհանուր այս շրջագիծին մէջ, մեր հատուածը կ'իյնայ 5րդ բաժինին մէջ, որ կը պատկերացնէ Յիսուսի գործունէութիւնը Գալիլէայի մէջ: Այդ բաժինը, ինչպէս նշեցինք, կը սկսի 4.14-էն, մինչեւ 9.50, եւ ուստի անմիջապէս մեր ուշադրութեան կը բաղի սա իրողութիւնը, որ մեր հատուածը սկիզբը կը կազմէ այս 5րդ բաժինին, եւ ձեռով մը անոր ներածականը կը դառնայ, կը բանաձեւէ Քրիստոսի առաքելական գործունէութեան հաւատամքը՝ Հին Կտակարանէն քաղուած Մեսիական խոստումով, Եսայի մարգարէին բառերով:

Այս հանգրուանին երկու կարեւոր մատնանշումներ.-

1.- Ներկայ հատուածը,- ըսինք,- Յիսուսի առաքելութեան սկիզբը կը կազմէ Գալիլէայի մէջ: Անմիջապէս կ'ուզենք ճշդել, սակայն, որ անիկա առհասարակ Յիսուսի հրապարակային գործունէութեան սկիզբը չէ: Ղուկաս չի՝ նկարագրեր Յիսուսի գործունէութիւնը Հրէաստանի մէջ, Յովհաննէս Մկրտիչի ձեռքով մկրտութենէն անմիջապէս ետք, ո՛չ ալ անկէ ետք առաջին անգամ Գալիլէա գալը, երբ տեղի ունեցած պիտի ըլլայ Կանայի հարսանիքին դրուագը, ուր Յիսուս որոշակիօրէն կ'ըսէ՝ թէ տակաւին ինքզինքը աշխարհին (կամ Գալիլէայի մէջ) յայտնելու ժամանակը չէ հասած (Յհ 2.4): Բայց, միւս կողմէ, այս դրուագին շարունակութեան վրայ, 23-րդ համարին մէջ իր համաքաղաքացիներուն ուղղուած

Յիսուսի յայտարարութենէն իսկ յստակ է, որ Յիսուս Կափառնաումի եւ անոր շրջակայքին մէջ արդէն բաւական լայն գործունէութիւն ունեցած է, որուն արձագանգները տարածուեր են ամենուրեք, եւ իր համաքաղաքացիները տեղեակ են այդ բոլորին:

2.- Բայց եւ այնպէս, Ղուկասի Աւետարանին մէջ ընդհանրապէս Յիսուսի գործունէութեան սկիզբը կը դրուի այս դրուագը, Մկրտութենէն ու փորձութենէն անմիջապէս ետք: Պարզ է, սակայն, որ Ղուկաս այստեղ ժամանակագրական ուստում մը կ'ընէ եւ կը շրջանցէ Կափառնաումի գործունէութիւնը՝ գիտակցաբար, յատուկ դիտումով: Թէպէտ բառերով չի բանաձեւեր զայն, բայց նիւթերուն իր ընտրութեամբն ու դասաւորումովը կ'արտայայտէ իր դիտումը.- Կ'ուզէ Գալիլեայով պատկերացնել անոր առաքելութիւնը:

Ինչ կրնայ ըլլալ Ղուկասի դիտումը, եւ ինչո՞ւ Յիսուսի առաքելութիւնը Գալիլեայով սկսիլը դիտումնաւոր կը կոչենք:

Ինչպէս Աւետարաններուն մէջ կ'արտացոլայ, Յիսուսի եւ աւետարանիչներուն միտքին մէջ Գալիլեան յատուկ տեղ ու կարեւորութիւն ունի, եւ ասիկա կրնանք տեսնել՝ եթէ մակերեսային ընթերցումէն անցնինք ասելի խորահայեաց ընթերցումի մը: Մինչ Յովհաննէսի Աւետարանը առաւել չափով կը ներկայացնէ Երուսաղէմի եւ անոր շրջակայքին մէջ Յիսուսի գործունէութեան երեսները, առաջին երեք Աւետարանները, «համատեսական» կոչուած, Յիսուսի առաքելական գործունէութեան գլխաւոր թատերավայր կը ներկայացնեն Գալիլեան: Եւ ասիկա պատահական չէ: Զ.Ա. Տրդ դարէն սկսեալ Գալիլեան Ասորեստանէն բերուած օտար հեթանոսներով բնակեցուեցաւ, որոնք խառնուեցան արքորէ զերծ մնացած տեղաբնակչութեան, եւ այնուհետեւ Գալիլեան յատկանշուեցաւ իբրեւ հեթանոսութեամբ խառն, որով նաեւ զտարին Հրեաներուն համար խորշելի եւ արհամարհելի (հմմտ Յհ 1.46): Եսայի մարգարէն զայն կը բնորոշէ որպէս

(Գալիլեա հեթանոսաց) (Ես 9.1: Հմմտ Մտ 4.15): Բայց նոյն այդ հանգամանքովը, Գալիլեան խորհրդանիշը պիտի ըլլար ամբողջ աշխարհին, որ հեթանոսութեան մէջ ընկղմած էր Աստուածաշնչական ժամանակներուն: Աւետարանները լռելեայն կ'ըսեն, որ նոյնիսկ եթէ Յիսուսի առաքելութիւնը նախ իր ժողովուրդին մէջ սկսաւ, սակայն ի սկզբանէ սահմանուած էր ամբողջ աշխարհին³: Եւ Ղուկաս, որ նախորդ գլուխին մէջ Յիսուսի ազգաբանութիւնը Յովսէփէն սկսելով ու ետ երթալով մինչեւ Ադամ կը հասցնէ, յատուկ կերպով կ'ուզէ ցոյց տալ, որ Յիսուս ամբողջ աշխարհի Փրկիչն է, ո՛չ միայն Հրեային, այլ մանաւանդ՝ հեթանոսին:

Համար 16. «Եկաւ Նազարէթ քաղաքը, ուր մեծցած էր»:

Իր հայրենի քաղաքը, իր սննդավայրը վերադառնալը կը հաստատուի պարզապէս, առանց մեկնաբանութեան: Վերը նշեցինք, որ հարկաւ առաջին այցելութիւնը չէր ասիկա, քայց հաւանական է ենթադրել, որ հրապարակ գալէն մինչեւ այս հանգրուանը Յիսուս չէր ուզած երկար մնալ ու գործել այնտեղ: Պատճառը, ինչպէս յետոյ ինք կը նշէ, հոգեբանական է. *«մարգարէն իր ծննդավայրին մէջ յարգ չունի»* (Ղկ 4.24): Կ'ուզէր որ նախ իր գործունէութիւնը եւ իր մարգարեական կամ մեսիական ինքնութիւնը չափով մը ճանչցուի շրջակայքին մէջ, եւ յետոյ միայն իր նոր հանգամանքովը գայ իր համաքաղաքացիներուն, որոնք զինք լաւ կը ճանչնային իր իմաստութեամբը, որով նաեւ սիրելի եղած էր անոնց (Ղկ 2.52), քայց որոնք միայն զարմանքով եւ թերահաւատութեամբ

³ Աւետարաններուն մէջ ամենէն բացայայտը Մատթէոսն է, որ մկրտութենէն ու փորձութենէն ետք Յիսուսի առաքելութիւնը կը ներկայացնէ Գալիլեայի մէջ, անոր մէջ տեսնելով Տիրոջ ծրագիրը՝ Եսայի մարգարէով նախաձայնուած (Ես 9.1-2: Տե՛ս Մտ 4.12-16), եւ իր Աւետարանը կը փակէ դարձեալ Գալիլեայով, ուր Յիսուս իր տասնըմէկ աշակերտներուն կը յանձնէ հեթանոս աշխարհին աւետարանելու առաքելութիւնը (Մտ 28.16-20):

լսեր էին իր կատարած հրաշագործութեանց եւ բժշկութեանց մասին:

«Եւ իր սովորութեան համաձայն Շարաթ օր ժողովարան գնաց»:

Յիսուսի մասին կարելոր հաստատում մըն է այս մէկը: Ամէն Հրեայ պատանի, 12 տարեկանը բոլորելէ ետք, մինչ այդ Օրէնքը սորված եւ «Օրէնքի որդի» դարձած ըլլալով, պէտք էր ամէն Շարաթ օր կանոնաւորաբար ժողովարան յաճախէր: Ինչպէս իւրաքանչիւր բարեպաշտ Հրեայի, այնպէս ալ Յիսուսի համար սովորական պարտականութիւն մըն էր այդ մէկը: Բայց չմոռնանք որ Ղուկաս իր Աւետարանը կը գրէ Յոյներու համար, հեթանոս աշխարհին համար, կամ Քրիստոսի նորածին եկեղեցիին համար, եւ այդ հաստատումը կարելոր է՝ օրինակ տալու համար Քրիստոսի հետեւորդութեան կանչուած իւրաքանչիւր անձի համար:

Սակայն վերոյիշեալ հաստատումը կարելի է կարդալ երկրորդ իմաստով մըն ալ: Յիսուս ո՛չ միայն կանոնաւորաբար ժողովարան կ'երթար, այլ նաեւ, հիմա որ արդէն ծանօթ ու փնտռուած քարոզիչ մը եւ ուսուցիչ մըն էր, ժողովարան իր այցելութիւնները կ'օգտագործուէր՝ այնտեղ քարոզելու եւ ուսուցանելու համար, ինչպէս մեր հատուածը կանխող 15-րդ համարը կ'ըսէ. *«Անոնց ժողովարաններուն մէջ կ'ուսուցանէր, արժանանալով բոլորին հիացումին»:* Հետագային նոյնը պիտի ընէին նաեւ առաքեալները, աշխարհի ամէն կողմը նախ ժողովարաններուն մէջ իրենց պատգամը լսելի դարձնելով:

Համար 17. «Երբ ոտքի ելաւ կարդալու համար օրուան ընթերցումը»:

Ժողովարաններէն ներս, պաշտամունքին հիմնական տարրերը կը կազմէին Օրէնքի գիրքէն (այսինքն՝ Հնգամատեանէն) ընթերցում մը, որ Եբրայերէնով «Փարաշահ կը կոչուէր», Սաղմոսները, եւ Մարգարեական գիրքերէն ընթերցում մը, որ կը կոչուէր «Հաֆթարահ»: Այս

ընթերցումները, ըստ ընկալեալ սովորութեան, կը կատարուէին ոտքի:

«Օրուան ընթերցուածը» բառերը բնագրային չեն, այլ թարգմանութեան մէջ աւելցուած են, որպէս իմաստի յստակացում: Ծանօթ չէ, թէ կա՞ր արդեօք ընթերցումներու սահմանուած կարգ մը, թէ իւրաքանչիւր Շաբաթ օրուան ընթերցումը ժողովրդապետը ի՛նք կ'որոշէր: Մէկ բան որոշ է, որ յաճախ այս ընթերցումը կատարելու պատիւը կու տային այցելու կամ յարգուած անձերու, ինչպէս այս պարագային պատիւը կը տրուի Յիսուսի:

«Իրեն տուին Եսայի մարգարէին գիրքը»:

Օրուան երկրորդ մարգարէական ընթերցումը ընելու կը հրաւիրուի Յիսուս, եւ իրեն կու տայ Եսայի մարգարէին գիրքը, այսինքն՝ մագաղաթիայ փաթոյթը:

«Բացաւ եւ գտաւ այն տեղը ուր կ'ըսէր»:

Գալարուած մագաղաթը բանալու համար պէտք էր մէկ կողմի վրայ ոլորել զայն⁴: Աւետարանիչը կ'ըսէ, թէ Յիսուս «գտաւ այն տեղը ուր կ'ըսէ»: Դարձեալ մեզի համար որոշ չէ, թէ օրուան ընթերցուածը սկիզբէն որոշուած հատուած մըն էր, որուն ընթերցումը թելադրուեցաւ Յիսուսի եւ ինք պարզապէս որոշուած այդ տեղը բացաւ ու գտաւ, թէ՛ հատուածին ընտրութիւնը իրե՛ն ձգուած էր, եւ Յիսուս դիտմամբ բացաւ ու գտաւ Եսայի մարգարէութեան 61-րդ գլուխը, որուն առաջին երկու համարները ընտրեց, իր անձով անոնց Մեսիական կատարումը ցոյց տալու համար:

Փոքրիկ մանրամասնութիւն մըն ալ: Որոշ է, որ Եսայի մարգարէի բնագիրը Եբրայերէն էր: Սակայն Յիսուսի ժամանակակից ժողովուրդը արդէն Եբրայերէն գրեթէ չէր հասկնար, ուստի ժողովարանին մէջ ընթերցումները

⁴ Յունարէնի մէջ «բացաւ» բային համապատասխանն է՝ «αναπτύξας» (Գրաբար՝ «բացեալ»), որուն տառացի թարգմանութիւնը պիտի ըլլար՝ «ան-ուլորել» կամ «ուլորը բանալ»:

անմիջապես կը թարգմանուէին Արամերէնի⁵, որ ժամանակի խօսակցական լեզուն էր, եւ ապա նոյն ժողովրդական լեզուով ալ մեկնաբանական պատգամ մը կու տային: Վստահաբար Յիսուս նոյնպէս իր կարդացածը նախ Արամերէնի թարգմանեց, եւ ապա իր մեկնաբանական պատգամը տուաւ:

Համար 18-19. *«Տիրոջ Հոգին վրաս է. որովհետեւ զիս օծեց»:*

Ըսինք արդէն, թէ այս բառերով կը սկսի Եսայի մարգարէի գիրքին 61-րդ գլուխը: Այս բառերը զօրեղապէս Մեսիական են, այսինքն կը վերաբերին Աստուծոյ Օծեալին, այն յատուկ Օծեալին՝ որ իր ժողովուրդին փրկութեան համար աշխարհ պիտի գար: Մարգարէութեան նախորդ՝ 60-րդ գլխուն մէջ գալիք Մեսիական թագաւորութիւնն է որ կը պատկերացուի, կամ աւելի ճիշդ՝ անոր երկրաւոր պատկերը. վերաշինուած Երուսաղէմը՝ փրկութեամբ պարսպաւորուած եւ գովութեամբ լի, Տիրոջ յաւիտենական լոյսով ճառագուն ու փառաւոր, եւ անոր բնակիչները՝ բռնութիւնն ու ստրկութիւնը թօթափած, երկիրը՝ իր ամայութիւնը թօթափած եւ փարթամ բուսականութեամբ հարստացած, եւ բոլոր ժողովուրդները հոն խոնուած, Տէրը փառաբանելու համար: Խաղաղութիւնն ու արդարութիւնը պիտի ըլլան հոն տիրապետողը:

Այս պատկերացումը նկարագրութիւնն է Աստուծոյ հոգեւոր թագաւորութեան այժմեան մանրանկարին՝ Եկեղեցիին, որուն Օծեալ թագաւորը Քրիստոս ինքն է: Եւ Քրիստոս սովորական օծեալ մը չէ, ոեւէ թագաւորի կամ մարգարէի կամ քահանայի նման, այլ՝ իր օծումը կը նշէ ամբողջական ներկայութիւնը Աստուծոյ Հոգիին, որ իրմէ անբաժան է իր բնութեամբ եւ աստուածութեամբ: Իրողութիւն մը, որուն կապակցութեամբ Յովհաննէսի Աւետարանին մէջ

⁵ Այս թարգմանութիւնը կատարողը կրնար ըլլալ նոյնինքն Եբրայերէն բնագիրը կարդացողը, եւ կամ, եթէ անիկա կարող չէր, կար յատուկ «վերծանող» (= թարգմանիչ, Եբր.՝ «մեթուրկեման») մը, որուն պարտականութիւնն էր ժողովուրդին հասկնալի լեզուով թարգմանել հատուածը:

Քրիստոս ինքն իսկ իր մասին կ'ըսէ. *«Ան որ Աստուծոյ կողմէ
դրկուած է՝ Աստուծոյ խօսքերը կը քարոզէ, որովհետեւ
Աստուած իր Հոգին ամբողջապէս անոր տուած է»* (Յհ 3.34):

Օծուար, ուրեմն, Սուրբ Հոգիին մնայուն ներկայութիւնը
եւ գործակցութիւնն է Քրիստոսի մարմնաւոր կեանքին ու
երկրաւոր առաքելութեան ամէն մէկ երեսին մէջ:

«Եւ դրկեց՝ աղքատներուն փրկութեան աւետիս տալու»:

Երկու կարեւոր բառեր, այստեղ, կը բնորոշեն Օծեալին
առաքելութիւնը: Առաջին, «դրկեց» բայը, որ ցոյց կու տայ թէ
Օծեալը՝ Քրիստոս նախ եւ առաջ ինքզինք կը հասկնայ որպէս
Հօրը Առաքեալը, այսինքն՝ անոր կողմէ լիազօրուած ու
դրկուած ներկայացուցիչը՝ փրկութեան առաքելութեամբ,
*«որովհետեւ Աստուած իր Որդին աշխարհ դրկեց՝ ո՛չ թէ
որպէսզի աշխարհը դատապարտէ, այլ որպէսզի աշխարհը
փրկէ»* (Յհ 3.17): Եւ Քրիստոս տեսաբար պիտի յիշեցնէր, թէ
ինք դրկուած մըն է. *«Ես Աստուծմէ ելայ եւ եկայ. ես ինձմէ
չեկայ, այլ անհկա դրկեց զիս»* (Յհ 8.42: Հմմտ 10.36, 17,3,8,21,
23,25): Եւ պիտի աւելցնէր. *«Իմ կերակուրս այն է՝ որ
գործադրեմ զիս դրկողին կամքը, եւ լրումին հասցնեմ անոր
գործը»* (Յհ 4.34): *«Ինչ որ ձեզի կ'ուսուցանեմ՝ իմ
վարդապետութիւնս չէ, այլ անորը՝ որ զիս դրկեց»* (Յհ 7.16:
Հմմտ 18, 28-29 եւ 33 համարներուն հետ, տե՛ս նաեւ 8.26,
12.49): *«Այս ըսածներս որ լսեցիք՝ իմ խօսքերս չեն, այլ
խօսքերը Հօրս, որ զիս դրկեց»* (Յհ 14.24): Եւ իր
առաքելութեան աւարտին, իր ընտրած առաքեալները
աշխարհ դրկած ատեն այս անգամ ի՛նք պիտի լիազօրէր
զանոնք ու դրկէր որպէս իր եւ արքայութեան
ներկայացուցիչները, ըսելով. *«Որպէս առաքեաց զիս Հայր, եւ
ես առաքեմ զձեզ»* (Մտ 28.18: Յհ 20.21):

Երկրորդ կարեւոր բառն է՝ «աւետիս տալու»: Նախքան
փրկութիւնը իրագործելը, Օծեալին առաքելութիւնն է՝
փրկութեան աւետիսը տալ: Աւետարանը իր իսկական
իմաստին մէջ աւետիս մըն է, եւ այդ աւետիսը նախքան

գրաւոր խօսք դառնալը՝ կենդանի Բանն էր, Օծեալը ի՛նք, որ իր ժողովուրդին մէջ շրջեցաւ՝ այդ աւետիսը բաշխելու եւ այդ աւետիսին հաղորդ դարձնելու համար բոլորը: Քրիստոսէ առաջ եւ Քրիստոսէ ետք բազմաթիւ եղան եւ են աւետարանիչները, բայց գլխաւոր աւետարանիչը ինք՝ մեր Տէրը եղաւ, մարմնացումը իր փրկութեան աւետարանին:

Ապա կու գան աւետիսին հասցէն եւ բովանդակութիւնը:

«Եւ ղրկեց՝ աղքատներուն փրկութեան աւետիս տալու, սրտաբեկները մխիթարելու, գերիներուն ազատութիւն բերելու, կոյրներուն աչքերը բանալու, հարստահարուածները ազատելու»:

Նախ, որո՞նց կ'ուղղուի աւետիսը: Եսայի մարգարէին բառերով, Աստուած կու գայ ըսելու՝ թէ իր Օծեալը աւետիս մը կը բերէ աղքատներուն, սրտաբեկներուն, գերիներուն, կոյրներուն ու հարստահարուածներուն: Կարելի է այս բառերուն ետին տեսնել զրկեալներու բոլոր խաւերը՝ իրենց բոլոր հասկացողութիւններով.- Նիւթական, ընկերային, քաղաքական, մարմնաւոր թէ հոգեւոր: Բայց վստահաբար անոնց առաջնային եւ գլխաւոր իմաստը հոգեւորն է:

Աւետարանը հոգիներո՛ւն ուղղուած աւետիսն է, եւ փրկութիւնը որ կ'աւետուի՝ մեղքով Աստուծմէ զրկուած եւ աղքատացած հոգիներուն է որ կ'ուղղուի, անոնց՝ որոնք մեղքին պատճառով իրենց մարդկային ինքնութեան եւ արժանապատուութեան մէջ կոտորած են ու խորտակուած, որոնք մեղքին գերին դարձած՝ անոր կապանքներուն մէջ կը տուայտին ու կը հեծեն, որոնց հոգեւոր տեսողութիւնը կորսուած է եւ կոյրերու պէս կը խարխափեն փրկութեան ելքին ի խնդիր, իրենց վիրաւոր հոգիին մէջ ամէն օր ապրելով Աստուծոյ որդիութենէն իրենց զրկուածութեան դառն հետեւանքները, անառակ որդիին պէս, որ իր հօրը տունէն հեռու եւ յետին թշուառութեան հասած՝ մտաբերեց թէ ի՛նչպիսի գերազանց փառքի մը կցորդ էր եւ իր ազատ կամքով զայն կորսնցուց:

Իսկ ի՞նչ է տրուած աւետիսը: Տիրոջ Օծեալը կու գայ՝

1.- Աղքատներուն աւետելու, թէ երանելի են իրենք, եթէ Աստուծմէ իրենց հեռու վիճակին կը գիտակցին եւ կ'ուզեն իրենց աղքատացած հոգիները Աստուծոյ ներկայութեան հարստացնել ու զարդարել կրկին. որովհետեւ դէպի Աստուած դարձը իրենց պիտի վերադարձնէ հարստութիւններու հարստութիւնը, որմէ զրկուած էին ժամանակաւորապէս, այսինքն՝ երկինքի արքայութիւնը, որ իրենց է այսուհետեւ (Մտ 5.3):

2.- Սրտաբեկներուն ու սգաւորներուն մխիթարութիւն բերելու (հմմտ Մտ 5.4), աւետելով թէ եկած է իրենց բժշկութեան ժամանակը, իրենց կողքին է հոգիներու Բժիշկը, ան՝ որ աստուածային սիրոյ դեղատոմսով եկաւ եւ իր սիրովը բուժեց մարմինները, բայց մանաւանդ մեղքին պատճառով տրտում ու սգաւոր սիրտերն ու հոգիները բուժեց աստուածային ներումին բալասանով, երկրի վրայ պատկերացնելով գալիք արքայութիւնը, ուրկէ ընդմիջտ բացակայ պիտի ըլլան մեղքը եւ անոր հետեւանքները, որովհետեւ Աստուած «անոնց աչքերէն ամէն արցունք պիտի սրբէ. այլեւս ո՛չ մահ գոյութիւն պիտի ունենայ, ո՛չ սուգ, ո՛չ ողբ, ո՛չ ցաւ եւ ո՛չ ալ յոգնութիւն» (հմմտ Յյտ 21.4): Այն օրը, կը շարունակէ Եսայի, բոլոր սգաւորները պիտի մխիթարուին, մոխիրի փոխարէն փառք պիտի ունենան, սուգի փոխարէն՝ ուրախութեան անուշահոտ իւղը, կոտրած հոգիի փոխարէն՝ գովութեան պատմուճան (Ես 61.2-3):

3.- Գերիներուն աւետելու, թէ արձակուած են իրենց կապերէն ու կապանքներէն, որոնց մէջ բանտուած էին իրենց հոգիներն ու մարմինները խաւարին կապանքներով: Որովհետեւ, ինչպէս կ'ըսէ 107-րդ Սաղմոզը, անոնք

*«մահաստուեր խաւարի բնակիչ դարձան,
բանտերու խորը շղթայակապ չարչարուելով.
որովհետեւ Աստուծոյ պատուէրներուն ընդդիմացան,
արհամարհելով Բարձրեային կամքը:*

*Տաժանակիր աշխատանքով անոնց հոգին ճնշուեցաւ,
տկարացան եւ ինկան, եւ չկար մէկը որ օգնէր:
Իրենց նեղութեան մէջ ՏԻՐՈՋ աղաղակեցին,
եւ Տէրը զանոնք փրկեց իրենց անձկութիւններէն:
Չանոնք դուրս բերաւ մահաստուեր խաւարէն,
փշրելով անոնց կապանքները» (10-14):*

Իր ժողովուրդը Եգիպտոսի ստրկութենէն արձակող նոյն Տէրն է, որ հիմա կու գայ մեղքով կորացած իր ժողովուրդը մեղքին եւ անմարմին Փարաունին՝ Չարին ստրկութենէն արձակելու, անոնց ծառայութեան լուծը խորտակելու, որպէսզի իրեն ապաւինողները բարձրագլուխ քալեն (ՂԵ 26.13): Ճշմարիտ Արձակիչն է ան, որ «մեզ սիրեց եւ իր արիւնով մեր մեղքերուն շղթաները փշրեց» (Յյտ 1.5), որպէսզի «Սատանային կողմէ գերուած» եւ մեղքով կարկամեալ հոգիներուն ու մարմիններուն ազատութիւն տայ (հմմտ ՂԿ 13.16), անոնց պարանոցէն չարին լուծը հանէ եւ իր սիրոյ լուծը անցնէ, որպէսզի անոնք իրենց հոգիին հանգիստը գտնեն (հմմտ Օս 11.4: Մտ 11.29):

4.- Կոյրերուն տեսութիւն շնորհելու: Աչքը ստեղծող արարիչ Աստուածը ահա որպէս Օծեալ Տէր, որպէս Բժիշկ ու Փրկիչ կու գայ, «որպէսզի չտեսնողները տեսնեն եւ տեսնողները կուրնան» (Յհ 9.39): Ի՛նչ լաւ արձանագրեր է Վարդանանց հերոսամարտի դիւցազներգողը, Եղիշէ Պատմիչ, ժողովրդական իմաստութեան խտացումը. «Աւելի լաւ է աչքով կոյր ըլլալ, քան՝ մտքով»: Եւ մտքի կամ սրտի կուրութեան պատճառը դարձեալ մեղքն է: Մեղքով էր որ մարդը կորսնցուց Աստուծոյ տեսութիւնը, որ ունէր սկզբնապէս երանական դրախտին մէջ: Մեղքով է նաեւ որ մարդ կորսնցուցած է եւ կը կորսնցնէ ճշմարտութեան տեսութիւնը, որովհետեւ հպարտութիւնն ու նախանձը, չարակնութիւնն ու թշնամութիւնը, կաշառքն ու ստութիւնը, ցանկութիւնն ու անիրաւութիւնը կը կուրցնեն մարդուս միտքն ու սիրտը, կը խափանեն մարդուս հոգեւոր

տեսողութիւնը, պատճառ դառնալով որ մարդ գրկուի Աստուծոյ երանական տեսութենէն, եւ կոյրերու պէս ապրի իր ներքին խաւարին մէջ, սպասելով անոր՝ Միակին՝ որ կրնայ բանալ աչքերը մարմնին, ինչպէս աչքերը հոգիին, անոր՝ որ եկաւ մեր աչքերը բանալու առաքելութեամբ, եւ արդարեւ մեզ *«խաւարէն իր սքանչելի լոյսին կանչեց»* (Ա.Պտ 2.9), մեզի սորվեցնելով նոյնը ընել (հմմտ Հո 2.19):

5.- Եւ, ի վերջոյ, հարստահարուածներուն աւետելու, թէ հասած է ազատութեան ժամը, որովհետեւ արդէն հասած է երկինքի արքայութիւնը, հո՛ւ է Օծեալ Թագաւորը, երկինքին Տէրը, որուն ձեռքն է փրկութեան դուռը փակելու եւ բանալու բացարձակ իշխանութիւնը (հմմտ Յոս 3.7), փակելու երկրաւոր կեանքի դժուարութեանց եւ դժբախտութեանց ժամանակաշրջանը, եւ բանալու աստուածամերձ կեանքի մը երանութեան անվախճան ժամանակը. վերջ դնելու Աստուծմէ հեռու ապրուած երկրաւոր պանդխտութեան կարօտամաշ օրերուն, եւ սկզբնաւորելու հոգիին սպասող տունդարձի երջանիկ օրը. բուժելու մեղքով երկիր ինկած հոգիին կոտրած թելերը, եւ զայն վերստին սլացնելու դէպի բարձունքը յաւիտենութեան, անմատոյց լոյսին հաղորդութեան մէջ ապրելու վերստին:

[«Հարստահարուածները ազատելու» բառերը (Գրաբար՝ «արձակել զվիրաւորս ի թողութիւն», Յունարէն՝ «αποστειλαι τεθραυσμενους εν απεσει») չկան Ես 61.2-ին մէջ, այլ՝ առնուած են Ես 58.6-էն: Երեւոյթը շատ հետաքրքրական է, որովհետեւ ցոյց կու տայ պարագայ մը՝ ուր բնագրին մէջ ուրիշ բնագրէ մէջբերում մը տեղ կը գտնէ: Հաւանական է ենթադրել, որ Քրիստոս դիտումնաւոր կերպով այս բառերով կը լրացնէ 61-րդ գլխուն առաջին երկու համարները, անոնցմով ամբողջացնելու համար իր աշխարհ գալուստին առաքելութեան երեսները]:

«Եւ յայտարարելու՝ թէ ահա հասած է ժամանակը, երբ Տէրը պիտի փրկէ իր ժողովուրդը»:

Այս մէկը ազատ թարգմանութիւնն է բնագրին, որ տառացիօրէն կ'ըսէ. «*Հոչակելու Տիրոջ ընդունելի տարին*», ուր «*ընդունելի*» (Յունարէն «*δεχτον*») բառը թարգմանութիւնն է Եբրայերէն «*րացո՛ն*» բառին, որ կը նշանակէ՝ «*հաճութիւն, բարեացակամութիւն*», կամ՝ «*շնորհք*», որով «*Տիրոջ ընդունելի տարին*» խօսքը կը հասկցուի՝ «*Տիրոջ հաճութեան տարին*», կամ «*Տիրոջ շնորհքի տարին*»:

Որոշապէս այս խօսքին մէջ «*տարի*» բացատրութիւնը նշանակ է ո՛չ թէ թիւով սահմանուած 365 օրերու, այլ՝ նոր ժամանակաշրջանի մը, «անսահման ժամանակաւ», որուն սկիզբը գիտենք ներկայ ժամանակին մէջ, բայց որուն աւարտը անվախճանին, յաւիտենականին կը յանգի: Տիրոջ «*շնորհքի տարին*» է անիկա, այսինքն՝ Աստուծոյ կողմէ ցուցաբերուած ամենառատ սիրոյն եւ ներողամտութեան, ձրի փրկութեան եւ Սուրբ Հոգիին անսահման պարգեւներու շնայումին ժամանակաշրջանը, Աստուածորդիին աշխարհ գալուստովը, մարդէութեամբը սկիզբ առած: Այս շնորհքի տարին կատարումն էր Օրէնքին մէջ ստուերագրուած «*թողութեան տարի*»ին, երբ մարդ արարածը եւ երկիրը պէտք էր ստրկութենէ կամ ծառայութենէ ազատագրուէին, առանց դրամի «*փրկուէին*» եւ վերադառնային իրենց աստուածապարգեւ ազատութեան: Եւ արդարեւ Աստուածորդին աշխարհ եկած էր մարդը մեղքին ծառայութենէն կամ ստրկութենէն ազատելու, եւ Աստուծոյ որդիութեան ձրի պարգեւը շնորհելու վերստին, որպէսզի Աստուծմէ վերստին ծնած մարդ արարածին համար նախ այս աշխարհի վրայ ապրուած օրերը ըլլան «*երկինքի օրեր երկրի վրայ*» (Բ.Օր 11.21), այսինքն՝ երկրի վրայ եւ մարդուս սրտին մէջ Քրիստոսի բնակութեամբ՝ երկիրը երկինքի փոխուի, ինչպէս կ'ըսէ մեր սրբազան Պատարագամատոյցը («*Եւ իբրեւ Աստուած՝ նոր ճարտարապետութեամբ մը երկիրը երկինքի*

վերածեց»⁶), որով նաև երկրեն երկինք անցումը ըլլայ պարզապես ամպերուն վրայ Տէրը դիմաւորել մը (հմմտ Ա.Թս 4.17), արքայութեան ներկայ ժամանակաւոր յարկէն դէպի՝ յաւիտենական յարկը անցում մը միայն, սեփական՝ հարազատ հօրենական յարկը վերադարձողի ուրախութեամբն ու փառքովը:

Յիսուս իր ընթերցումին մէջ այստեղ կանգ առաւ: Ինչո՞ւ շարունակութիւնը չկարդաց: Որովհետեւ մարգարէութեան շարունակութիւնը անմիջապէս կ'անցնի Մեսիական դարաշրջանի աւարտին, եւ դատաստանի (բառացիօրէն՝ վրէժխնդրութեան, «հատուցման») օրուան մասին կը խօսի: Յիսուս կը կարդայ միայն այսքանը, որովհետեւ այսքանը կը վերաբերի իր առաջին գալուստին (հմմտ Յե 3.17), մինչ շարունակութիւնը երկրորդ գալուստին կը վերաբերի:

Համար 20. *«Ապա գոցեց զիրքը, տուաւ պաշտօնեային եւ նստաւ»:*

Ընթերցումը աւարտելէ ետք Յիսուս մագաղաթը կը փաթթէ դարձեալ⁷, եւ փաթոյթը կը յանձնէ ժողովրդապետին օգնականին, որ «պաշտօնեայ» (Յունարէն՝ «սπηρετης», սպասաւոր, Եբրայերէնով՝ «հազգամ») կը կոչուէր: Ապա կը նստի: Պատահական չէ աւետարանիչին կողմէ «նստաւ» բառը, որ այստեղ կը նշանակէ՝ նստաւ բեմին վրայ, այն աթոռին, ուր կը նստէին սովորաբար Օրէնքը ուսուցանողները, Մովսէսական Օրէնքին մասնագէտ «դպիր»ները, եւ որպէս Մովսէսի յաջորդներ՝ Օրէնքը կը բացատրէին⁸:

⁶ Տե՛ս «Խորհրդատետր Սրբազան Պատարագի», Կաթողիկոսարան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս-Լիբանան, էջ 70:

⁷ Յունարէնի մէջ «գոցել» բային համապատասխանն է՝ «πτύξαι» (Գրբ. «փակել»), որուն տառացի թարգմանութիւնը պիտի ըլլար՝ «ոլորել», քանի խօսքը գալարուած փաթոյթի մասին է:

⁸ Հմմտ այս դպիրներուն ուսուցողական դերին կապակցութեամբ Յիսուսի արտայայտութիւնը. «Մովսէսի այթոռը նստան Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները: Իրենց ըսածներուն հնազանդեցէ՛ք ու կատարեցէ՛ք» (Մտ 23.2-3):

Այստեղ ամենաբանիչը մեզի չ'ըսեր, որ Յիսուս յատուկ այդ աթոռին նստելով սկսա բացատրել ու մեկնել իր կարդացած հատուածը: Չմոռնանք որ Ղուկաս ականատես վկայ մը չէ, եւ ներկայ մը չըլլալուն՝ Յիսուսի պատգամին բովանդակութիւնը կամ ճշգրիտ բառերը կ'անգիտանայ, եւ միայն անոր խտացումը եղող եզրակացութիւնը կու տայ 21-րդ համարին մէջ:

Մինչ Յիսուս իր պատգամը կու տայ, «Ժողովարանին մէջ գտնուողներուն բոլորին աչքերը իրեն սեւեռած էին», կ'ըսէ ամենաբանիչը: Նազարէթի բնակիչները աչք ու ականջ կտրած կը հետեւին իրենց համաքաղաքացի եւ իր նախընթաց կեանքով սիրելի Վարդապետին խօսքերուն, որոնք լեցուն են Աստուծոյ խօսքին սքանչելի գիտութեամբ, իմաստութեամբ, եւ մանաւանդ հեղինակութեամբ:

Համար 21. *«Այս մարգարէութիւնը, որ դուք լսեցիք, ահա այսօր իրականացաւ»:*

Մինչ ժողովարանին մէջ բոլորը զարմանքով, ապշութեամբ եւ հիացումով կը լսեն Յիսուսի խօսքերը, Յիսուս իր պատգամին եզրակացութիւնը՝ կու տայ.- Աստուծոյ Օծեալին կամ Մեսիային վերաբերող մարգարէական խոստումները ահա «այսօր», այսինքն՝ իրենց օրերուն կ'իրականանան, իրենց կատարումը կ'ունենան:

Թէ ո՞րքանով ներկաները կը հասկնան Յիսուսի ակնարկութիւնը, եւ իր անձին մէջ կը փորձեն տեսնել մարգարէական խոստումին կատարումը, վստահ չենք կրնար ըսել: Բայց գէթ ոմանք անդրադարձան անշուշտ, որ Յիսուս իր անձին մասին կը խօսի. ատոր համար ալ իրենց զարմանքն ու հիացումը թերահաւատութեան երանգ մը ստացան, եւ սկսան հարց տալ՝ «Այս մարդը Յովսէփին որդին չէ՞»:

⁹ Յատկանշական է դիտել, որ «երբ ըսաւ» բառերուն տեղ բնագիրը ունի «սկսաւ ըսել», ինչ որ ոմանց ենթադրել կու տայ, թէ Յիսուս այս բառերով սկսաւ իր պատգամը, յետոյ անշուշտ ընդարձակելով իր բացատրութիւնը:

Մենք գիտենք շարունակությունը, թե ի՛նչպես երբ Յիսուս յանդիմանեց իրենց թերահաւատությունը, եւ մանաւանդ ակնարկեց՝ թե իրենց անհաւատությունը պատճառ պիտի ըլլայ որ Աստուած իրենները մերժելով հեթանոսներուն տայ իր փրկությունը, զարմանքը զայրոյթի փոխուեցաւ, եւ զայրացան ա՛յնքան՝ որ մինչեւ իսկ զայն լեռնէն գահավիժելով սպաննել փորձեցին (4.22-23): Բայց այդ բաժինը մեր սերտողութեան նպատակէն դուրս կը մնայ:

Վերոյիշեալ հատուածը այսօր մեզի քանի մը բաներ յիշեցնելու կոչուած է.-

1.- Տեսանք, որ Յիսուսի առաքելությունը ո՛չ միայն Գալիլեայով կը սկսի, այլ նաեւ գլխաւորաբար Գալիլեայի մէջ կը ծաւալի: Եւ Գալիլեան խորհրդանշականօրէն կը պատկերացնէ հեթանոս աշխարհը:

Այս իրողությունը մեր միտքերուն մէջ համեմատութեան գեղեցիկ երես մը պէտք է բանայ մեր առաքելութեան կապակցութեամբ: Քրիստոսի Եկեղեցիին առաքելությունը միայն դէպի ներս ուղղուած առաքելութիւն մը չէ՛, այլ նա՛եւ ու մա՛նաւանդ՝ դէպի դուրս, հեթանոս աշխարհին: Այդպէս եղած է միշտ Քրիստոսի Եկեղեցին, թէպէտ Քրիստոնէութեան պետական ճանաչումովն ու եկեղեցիին հաստատութեանականացումովը շուտով ներքին եւ արտաքին առաքելութեանց համեմատութիւնները շրջուած են: Բայց մենք դիտենք մե՛ր եկեղեցին, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին: Ի՞նչ է պատկերը այնտեղ: Կա՞յ առաջինը, եւ կա՞յ երկրորդը:

Կար ժամանակ, երբ մեր եկեղեցին չափազանց աշխոյժ էր, կենդանի հաւատքով կենդանի եկեղեցի՛ն էր, հաւատքի տարածման նախանձախնդրութեամբը վառուած, որ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի եւ անոր որդիներուն ու թոռներուն ժամանակաշրջանին, եւ յաջորդող քանի մը դարերուն, ո՛չ միայն Հայաստան աշխարհի մէջ անդուլ քարոզութիւն կը ծաւալէր, այլ նաեւ առաքելական գործ կը կատարէր շրջակայ

երկիրներուն մէջ, իր ձայնը հասցնելով մինչեւ հեռաւոր Կովկաս, մինչեւ Չինաստանի սահմանները: Ո՞ր է այդ եկեղեցին այսօր: Պատմական պարագաները ստիպեցին, որ մենք բաւարարուինք մեր ազգի սահմաններուն մէջ միայն աւետարանչութիւն ընելով, եւ այդ ալ չպահեց իր թափը, այլ՝ աստիճանաբար նուազեցաւ, մինչեւ որ նուաղեցաւ: Չեմ ուզեր ըսել աւելին: Արդ, ի՞նչպէս կրնանք պատկերացնել եկեղեցի մը՝ որ աւետարանչութիւն չունի: Կը նմանի մարմինի մը, որուն մէջ արեան շրջագայութիւնը դադրած է, այլ խօսքով՝ դիակ մըն է պարզապէս:

Եկեղեցիին գործը նախ եւ առաջ Աստուծոյ խօսքին կենդանի քարոզութիւնն է, որպէսզի այդ խօսքը իրմով կենդանի պահէ եկեղեցին, ըստ աստուածային խոստումին: Մոռնանք պահ մը, որ մեր եկեղեցին դէպի հեթանոս աշխարհ առաքելութիւնը դադրեցուցեր է, Քրիստոսի Եկեղեցին ինքն իր մէջ կծկելով ու պարփակելով: Մեր եկեղեցին նաեւ մոռցեր է ներքին աւետարանչութիւնը: «Ազգային եկեղեցի ենք», կ'ըսենք յաճախ, բայց նոյնիսկ ազգին սահմաններէն ներս աւետարանչութիւն չունինք: Այսօր ի՞նչ քրիստոնէական դիմագիծ կը պահէ մեր ազգը: Ի՞նչ տոկոսով մեր ժողովուրդը քրիստոնէայ է, կամ տեղեակ է իր հաւատքին, եւ որքանով մենք հետաքրքրուած ենք այդ պատկերը փոխելու գործով: Այսօրուան Հայ հոգեւորականը դարձեր է միայն եկեղեցիին չորս պատերէն ներս գործող պաշտօնեայ մը, եկեղեցի եկողներուն համար միայն, եւ յաճախ անոնց հետ իսկ դժկամակութեամբ վարուող: Ժամանակն է որ վերադառնանք առաքելականութեան, դուրս գանք կրաւորականութենէն եւ դառնանք մարտունակ, յարձակունակ եւ աշխատունակ եկեղեցի, եւ մեր առաքելական գործը հասկնանք ու հասցնենք ո՛չ միայն եկեղեցի եկողին, այլ մանաւանդ դուրսը մնացողին, որ դժբախտաբար ամբողջութեամբ անտեսուած է:

Առաքելական գո՛րծ, Քրիստոսի օրինակով ու պատուէրով:

2.- Առաքելական գործ ընելու համար առաքելական հոգի՝ պետք է նախ: Եւ առաքելական հոգին թեպէտ աստուածային կոչում ու պարգեւ է, բայց կը սկսի ինքնադաստիարակութեամբ: Ղուկաս Յիսուսի համար կ'ըսէր՝ «Եւ իր սովորութեան համաձայն ժողովարան գնաց»: Ոեւէ գործի պատրաստութեան կարեւորագոյն բաժինը՝ զայն մեր կեանքին, մեր առօրեային, մեր սովորութեանց բաժին դարձնելն է:

Մեր Տիրոջ՝ Յիսուսի եւ իր առաքելներուն օրինակով, եկեղեցիներու հետագայ բոլոր առաջնորդներուն ու հոգեւորականներուն սովորութիւնն էր, ո՛ր որ ալ գտնուէին եւ ի՛նչ առիթով ալ գացած ըլլային, եկեղեցիին հետ կապի մէջ պետք էր ըլլային, իսկ Տիրոջ օրը անպայման պետք էր երթային եկեղեցի, եւ որպէս այցելու հոգեւորական նաեւ իրենց պատգամը տային. կամ ի՛նչ շրջանակի մէջ ալ գտնուէին, իրենց կոչումին եւ առաքելութեան բարձրութեան վրայ պետք էր ըլլային: Ատիկա սոսկ պարտականութիւն չէր իրենց համար, այլ՝ հոգիի պա՛րտք էր, սեփական առաքելութեան հասկացողութիւն էր, հոգեւորականի ինքնութիւնն իսկ էր:

Այո՛, առաքելական հոգի մը, որ կը պակսի ներկայ մեր ժամանակին, երբ հոգեւորականը ինքզինք ամէն ձեւով կը նոյնացնէ աշխարհական մարդուն հետ, եւ ճիշդ անոր նման՝ իր պաշտօնին պարտաւորութեան տակ կը զգայ գրասենեակային սահմանուած ժամերու ընթացքին միայն, իսկ անկէ անդին կ'ըսէ՝ «Ես հիմա ազատ եմ. ես այս պահուն քահանայ չեմ, արձակուրդի մէջ եմ»: Ո՛չ, սիրելիներ, հոգեւորականը ազատ չէ. հոգեւորականը արձակուրդ չունի: Այդ չէ՞ր Պօղոս առաքելին ըսածը իր աշակերտ Տիմոթէոսին, «Աստուծոյ խօսքը քարոզէ եւ զայն յայտարարէ ամէն առիթով, առանց պատեհութիւնը կամ անպատեհութիւնը խորհելու»: Դուն միշտ արթուն եղիր, նեղութիւններու համբերէ, աւետարանիչի քու գործը ըրէ եւ ծառայութիւնդ իր աւարտին

հասցուր» (Բ.Տմ 4.2, 5): Առաքելական գործը ժամ ու ժամանակ չի ճանչնար, որովհետև փրկութեան գործը ինք ժամով ու ժամանակով չի սահմանուի: Փրկութեան յարմար ժամանակը, փրկութեան օրը հիմա՛ է, կ'ըսէ Պողոս առաքեալ (Բ.Կր 6.2), եւ ուէ պատճառով կարելի չէ յետաձգել հոգիներու փրկութեան գործը, որուն համար այսօ՛րն է կարելորը, վաղը ուշ է արդէն: Եւ յիշենք առաքեալին միւս խօսքը. *«Անշուշտ պարծենալիք բան մը չունիմ՝ երբ Աւետարանը կը քարոզեմ, որովհետև պարտաւոր եմ ատիկա ընելու, եւ վա յինձի՝ եթէ չքարոզեմ»* (Ա.Կր 9.16):

3.- Չմոռնա՛նք, սակայն, որ կայ առաքելութեան միւս կարելոր երեսը: Մենք մեզ «առաքեալներ», այլ խօսքով՝ «ղրկուածներ» կը զգանք, այսինքն՝ Քրիստոսի՛ կողմէ ղրկուածներ, իբրեւ դեսպաններ՝ կոչուած միայն զինք ներկայացնելու, ի՛ր կամքը կատարելու, ի՛ր խօսքը փոխանցելու, ի՛ր գործը շարունակելու, ի՛ր ծրագիրը իրականացնելու:

Մեզմէ ո՞վ չի տեսներ, կամ ո՞վ չի գիտեր, որ մեր եկեղեցին շատոնց դադրած է Քրիստոսի ձայնը լսելէ եւ անոր կամքը կատարելէ, եւ դարձած է իր հաւատքէն, իր ինքնութենէն ու նպատակէն պարպուած եկեղեցի մը: Դարձած է անկամ կամակատարը երկրաւոր շահեր ու նպատակներ հետապնդող իշխանութեանց, որոնք ո՛չ միայն մեզ կը հեռացնեն Աստուծոյ կամքէն, այլ յաճախ նոյնիսկ անոր հակառա՛կ գործել կու տան, մեզ դնելով երկինքի արքայութեան գործը խափանողներու կարգին:

Եւ մեզմէ ո՞վ չի գիտեր, որ մենք, հոգեւորականներս, յաճախ դիրին կերպով մեր պատասխանատուութիւններէն փախուստ կու տանք, մեր ապիկարութեան, մեր թուլութեան ու ծուլութեան, եւ մեր առաքելութեան զանցառութեան ամբողջ յանցանքը վերագրելով մեր եկեղեցին թակարդող ու մեր գործը խոչընդոտող այդ կացութեան: Սակայն ե՞րբ, ի՞նչ դժուարութեան առջեւ կամ արգելքի ու խոչընդոտի դիմաց

Քրիստոս ինք, կամ Քրիստոսի առաքելները, կամ Քրիստոսի Եկեղեցին դադրեցան Աստուծոյ խօսքը սերմանելէ, Աստուծոյ կամքը կատարելէ եւ Աստուծոյ գործը յառաջացնելէ. այլ խօսքով՝ իրենց գործը ընելէ: Եթէ մենք չուզենք մեր առաքելութեան մեջ զիջիլ՝ ո՛չ ոք եւ ո՛չ մէկ բան կրնայ մեզ անկէ ետ կեցնել եւ Աստուծոյ խօսքն ու գործը խափանել, ո՛չ ոք եւ ո՛չ մէկ բան կրնայ Աստուծոյ խօսքը կաշկանդել եւ գրուանի տակ պահելով անպտուղ դարձնել: Յիշենք Պօղոս առաքելի խօսքը, բանտէն գրուած իր Տիմոթէոս աշակերտին. *«Աւետարանին համար է որ կը չարչարուիմ ահա եւ նոյնիսկ բանտարկուած ալ եմ, չարագործի մը պէս: Սակայն Աստուծոյ խօսքը կարելի չէ՝ բանտարկել: Ատոր համար ալ ամէն բանի կը համբերեմ՝ Աստուծոյ ընտրեալներուն սիրոյն, որպէսզի անոնք եւս Քրիստոս Յիսուսի միանալով՝ հասնին փրկութեան եւ յաւիտենական փառքին»* (Բ.Տմ 2.9-10):

4.- Եսայի մարգարէին բառերով, Քրիստոս իր դերը եւ առաքելութիւնը կը սահմանէ իբրեւ «աւետիս տուող»: Եկեղեցին Քրիստոսի փրկարար խօսքն ու գործը կը հասկնայ իբրեւ «Աւետարան», իբրեւ աւետիս, եւ իր կարգին՝ ինքզինք կը հասկնայ «աւետիս տուող»ի դերով:

Արդեօք մենք ի՞նչ աւետիս կու տանք մեր ժողովուրդին, Աստուծոյ հօտին, որուն հովիւ եւ տեսուչ կարգուած ենք Սուրբ Հոգիին կողմէ: Մեր քարոզութիւնը իսկական «աւետարան» է ունկնդիրներուն համար: Որովհետեւ՝ միայն Աւետարանն է որ ծնունդ կու տայ փրկարար հաւատքին, ինչպէս կ'ըսէ Պօղոս առաքել. *«Հաւատքը ծնունդ կ'առնէ քարոզութիւնը լսելէն. իսկ քարոզութիւնը հաւատք կ'արթնցնէ՝ երբ Քրիստոսի խօսքերն են որ կը քարոզուին»* (Հո 10.17): Սակայն Քրիստոսի Աւետարանը կը քարոզուի՞ մեր եկեղեցիներուն մեջ:

Մեզմէ շատեր հազիւ թէ ծանօթ են այդ Աւետարանին: Ուրիշներ Աւետարանները եւ անոնց բովանդակութիւնը

հինգած կը համարեն, եւ տարուան ընթացքին հազիւ թէ քանի մը անգամ անոնցմէ կ'առնեն իրենց քարոզութեան նիւթը, այն ալ երբեմն պարզ բարոյախօսութեան վերածելու համար: Իսկ ո՞ր է աւետիսը, ի՞նչ է եւ ո՞ր է աւետուողը՝ Քրիստոս ինք, եւ ապաշխարութիւնը, եւ փրկութիւնը, եւ Տիրոջ երկրորդ գալուստը, եւ երկինքի արքայութիւնը: Կրնանք Պօղոս առաքեալին հետ ըսել, որպէսզի մեր խնամքին յանձնուած հաւատացեալն ալ կարենայ ըսել՝ «Կը ճանչնամ Փրկիչս, որուն վստահած եմ» (Բ.Տմ 1.12):

Այո՛, «Հաւատքը ծնունդ կ'առնէ քարոզութիւնը լսելէն», եւ այդ հաւատքը ինք աւետիս եւ ուրախութիւն կը դառնայ սրտերուն, փրկութեան կանչ եւ դաստիարակ կը դառնայ միտքերուն, կենդանութիւն եւ կեանք կը դառնայ հոգիներուն: Պայմանաւ՝ որ մենք Աւետարանի քարոզութեամբ այդ աւետիսը հասցնենք սրտերուն, միտքերուն, հոգիներուն:

5.- Արդեօք աղքատներուն կ'աւետարանենք, ինչպէս մեր Տէրը ըսաւ ու գործով ցոյց տուաւ՝ թէ աղքատն ու չքաւորը, որքն ու այրին, խեղճն ու տկարը առաջիններն ու վերջիններն են, որոնց նուիրեց իր ամբողջ ուշադրութիւնը, իր սէրը, իր համակրանքը, իր զօրակցութիւնը, իր կարեկցութիւնը, իր հրաշագործ բժշկութիւնները: Ո՞ր է աղքատներուն տեղը մեր առաքելութեան մէջ: Մենք նկատի կ'առնենք զանոնք, թէ՛ յաճախ նոյնիսկ մեր հօրենական տուներու աղքատ ու համեստ պայմանները մոռնալով՝ երես կը դարձնենք անոնց, մեր ամբողջ ուշադրութիւնը, մեր համակրանքը, մեր սրտակցութիւնն ու մեր ստրկական գործակցութիւնը ընծայելով միայն հարուստներուն, յաջողակներուն, երեւելիներուն, զօրաւորներուն:

Եւ տակաւին, արդեօք Աստուծմէ զրկուած աղքատ հոգիները մեր խօսքերուն ընդմէջէն կը լսեն Տիրոջ քաղցր ձայնն ու հրաւերը, որ կ'ուղղուի մեղքով ծանրաբեռնուած եւ ընկճուած ու դառնացած հոգիներուն. «Ինծի՛ եկէք դուք

բոլորդ, յոգնածներ ու բեռնաւորուածներ, եւ ես հանգիստ պիտի տամ ձեզի» (Մտ 11.28):

6.- Ո՞րքան ժամանակ կու տանք մխիթարելու «սրտաբեկները», կոտրած հոգիները, աշխարհէն յուսախաբները, մարդոցմէ յուսալքուածները չարին ու դժբախտութեանց պատճառով յուսահատ սրտերը: Եւ մանաւանդ, ո՞րքան ժամանակ կը տրամադրենք մեղքին պատճառով տրտմած ու սգաւոր մարդոց, Աւետարանին աւետիսով զանոնք դուրս բերելու համար իրենց տրտմութեան ծովէն, որուն անծայր տարածութեան մէջ իրենց անզօր թւաբախումէն յոգնած են ու սրտաբեկ:

Ծանօթ իրողութիւն է, որ մեր ժամանակին մէջ՝ մարդկային ընկերութեան մակարոյծներուն կողմէ մեղքը կը քաջալերուի, ամենայն լրբութեամբ կը հրապարակուի եւ կը քարոզուի, հրապուրիչ ու սիրելի կը դառնայ, եւ նոյնիսկ հերոսութեան եւ քաջագործութեան տեղ կ'անցնի յաճախ: Եւ քիչ չեն պարագաները, երբ մենք, հոգեւորականներս, փոխանակ քաջալերելու զոջումն ու մեղքերու խոստովանութիւնը, անօրէններուն միացած՝ ծաղրի ու քամահրանքի կ'ենթարկենք զոջացող մեղաւորը, լռելեայն իրաւունք տալով միւսներուն՝ անզիղջներուն, եւ մոռնալով որ մեղքը պահելով՝ հոգին չի բուժուիր, ինչպէս մարմնին ցաւը պահելով՝ առողջութիւն չի պահպանուիր: Որովհետեւ, ծածկուած մեղքը կը նմանի յարդի շեղջին տակ պահուած կրակին, գեհեճական կրակին, որ ուշ կամ կանուխ կը բռնկեցնէ յարդը:

Աստուած կը դատապարտէ մեղքը, բայց ներումի աւետիսով հրաւեր կը կարդայ մեղաւորին: Իսկ ի՞նչ կ'ընենք մենք: Արդեօք տրտում ու սգաւոր այդ հոգիները մեր կողմէ կը հրաւիրուի՞ն ապաշխարութեան երկնային ցօղով լուալու իրենց սիրտն ու միտքը, որպէսզի «նորոգուած միտքերով նոր մարդ դառնան», «Աստուծոյ պատկերին համաձայն նորոգուած արարած»ի իրենց փորձառութեամբ «ընտրելու

համար լաւը, գիտնալով Աստուծոյ կամքը, այսինքն՝ ինչ որ բարի է, ընդունելի է իրեն եւ կատարեալ» (Հո 12.2: Եփ 4.23-24):

7.- Կոչուած ենք Աւետարանին աւետիսով կոյրերուն աչքերը բանալու: Արդեօք մեր վարմունքով, մեր խօսքով ու խորհուրդով կը փորձե՞նք պայքարիլ միտքերու խաւարին դէմ, պայքարիլ անհաւատութեան եւ աղանդաւորութեանց ստութեանց դէմ, այլ խօսքով՝ ճշմարիտ աստուածգիտութեան լոյսի՛ն բանալ կոյր միտքը, որոնց համար առաքեալը կ'ըսէ. *«Այս աշխարհի "աստուածը" նկատուած Մատանան կորցուցած է այդ անհաւատներուն միտքը, որպէսզի չըլլայ որ Աւետարանին բերած լոյսը ծագի անոնց մէջ, այսինքն տեսնենք փառքը Քրիստոսի, որ անտեսանելի Աստուծոյ պատկերն է: Սակայն մենք մեր անձերը չէ՛ որ կը քարոզենք, այլ Տէրը՝ Յիսուս Քրիստոսը կը քարոզենք®: Որովհետեւ Աստուած ինք, որ ըսաւ՝ "խաւարին մէջ լոյս թող ծագի", ինք մեր սիրտերուն մէջ ծագեցաւ, որպէսզի լուսաւորուինք եւ Աստուծոյ փառքը ճանչնանք Յիսուս Քրիստոսի անձին մէջ»* (Բ.Կր 4.4-6):

8.- Աշխարհի հարստահարուածներուն աւետիս կու տա՞նք, այլ խօսքով, կը փորձե՞նք մարդոց միտքերը այս աշխարհէն կտրելով՝ անոնց ուշադրութիւնը երկինք դարձնել, ինչպէս առաքեալը կ'ըսէ. *«Այսուհետեւ ձեր ուշադրութիւնը երկինք դարձուցէք, որովհետեւ հո՛ն է Քրիստոս, Հօր Աստուծոյ աջ կողմը նստած: Երկնաւոր բաներու մասին խորհեցէք եւ ոչ թէ երկրաւոր բաներու»* (Կղ 3.1-2): Ի՞նչ կը քարոզենք. այս աշխարհը, թէ՛ արքայութիւնը: Ո՞ր է մեր գանձը եւ ո՞ր կը սորվեցնենք փնտռել մեր գանձը, երկրի՞ վրայ, թէ՛ երկինքի մէջ (հմմտ 6.19-21): Աստուած է մեր գանձը, թէ՛ աշխարհը, որովհետեւ *«Ոչ մէկ ծառայ կրնայ երկու տէրերու ծառայել, որովհետեւ՝ կա՛մ մէկը պիտի ստէ եւ միւսը սիրէ, կա՛մ մէկը պիտի մեծարէ եւ միւսը արհամարհէ:*

Չէք կրնար թէ Աստուծոյ ծառայել եւ թէ՛ դրամին», կ'ըսէ մեր Տէրը (Ղկ 16.13):

9.- Ի վերջոյ, արդէօք վիրաւոր ու տագնապող հոգիներուն կը դիմե՞նք Աւետարանին աւետիսով, փրկութեան կոչով, զանոնք Աստուծոյ ազատարար եւ բուժիչ խօսքին բերած ճշմարիտ ազատութեան մէջ դնելու համար: Կը յայտարարե՞նք Տիրոջ շնորհքի տարին, փրկութեան ժամանակին ներկայութիւնը եւ Աստուծոյ շնորհքին մեծութիւնը: Այլ խօսքով՝ գիտակի՞ց ենք մեզի վստահուած դերին, որ դէպի աշխարհ երկարած Աստուծոյ փրկարար ձեռքերը ըլլալն է, ինչպէս Յակոբոս առաքեալ կ'ըսէ. *«Գիտցէ՛ք թէ մեղաւորը իր մոլար ճամբէն դարձնողը՞ անոր հոգին մահուրնէ կը փրկէ»* (Յկ 5.20):

Այո՛, սիրելի եղբայրներ, Քրիստոս այսօր անգամ մը եւս մեզի կը յիշեցնէ, թէ իր առաքելութիւնը մե՛ր առաքելութիւնն է: Մեզ վերստին կը կոչէ՝

Առաքեա՛լ ըլլալու, եւ ո՛չ թէ պարզապէս պաշտօնէայ:

Հոգեւորակա՛ն ըլլալու եւ հոգիներո՛ւ մատակարար, եւ ո՛չ թէ պարզապէս եկեղեցական եւ նիւթական մատակարարութեամբ զբաղած տնտես:

Աւետարանի՛չ ըլլալու, եւ ո՛չ թէ միայն պարզ բեմբասաց ու հոետոր:

Աւետարե՛ր ըլլալու, եւ ո՛չ թէ միայն անխինդ եւ անլոյս խօսքի վաճառական:

Պատգամախօ՛ս ըլլալու, եւ ո՛չ թէ միայն աստուածային տառին թութակաբար եւ անհոգի կրկնաբանող:

Ուսուցիչ հա՛յր ու հոգիներու դաստիարակ ծնո՛ղ ըլլալու, եւ ո՛չ թէ հայրութեան հոգիէն զուրկ լոկ վարձկան հովի:

Այո՛, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի օրինակով կոչուած ենք երկինքի դեսպան ըլլալու, փրկութեան միջնորդ եւ շնորհքի մատակարար: Եւ թող Աստուած անգամ մը եւս իր Սուրբ Հոգիին օծումը պարգեւէ մեզի, որպէսզի Աստուծոյ նոր

**առաքելները ըլլանք մեր եկեղեցւոյ այսօրուան կեանքին
մէջ:**

ԵՐԲԱՅԱԿԱՆ ՏՕՆԵՐԸ

ՏՕՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՀՐԱՀԱՆԳԸ

Օրենքի հնագոյն տասնաբանեան երեք գլխաւոր տօներու կատարումը պայման կը դնէր ռեւէ արու Հրեայի.- Ելք 34.18 եւ 22-23 (հմմտ 23.14-17): Այս տօները, ծանօթ նաեւ Պասեք կամ Չատիկ, Պենտէկոստէ եւ Տաղաւարահարաց անուններով, սերտօրէն կապուած են Եբրայեցի ժողովուրդին խաշնարածական եւ երկրագործական կեանքին, ինչպէս ուրիշ ժողովուրդներու կեանքին մէջ ալ կրօնական տօները կապուած են նոյն երեւոյթներուն: Նպատակը՝ անշուշտ Աստուծոյ օրհնութիւնը ունենալն էր, առանց որուն՝ երկիրը իր բերքը չէր տար ակնկալուած ձեւով (տե՛ս Անգ 1.9-10: Հմմտ Ծն 4.12, Կայէնի տրուած անէծքը):

Ինչպէս պիտի տեսնենք, Եբրայական տօները իրենց կրօնական նշանակութեան առընթեր՝ պատմական նշանակութիւն ալ ստացած էին, կապուած ըլլալով պատմական կարեւոր դրուագներու: Այսպէս, Պասեքն ու Բաղարջակերքը միաժամանակ կը յիշատակէին Եգիպտոսէն ելքը: Պենտէկոստէն՝ Օրենքի տրւութիւնը Սինայի վրայ: Իսկ Տաղաւարահարացը՝ անապատին մէջ 40-ամեայ թափառումները:

ՊԱՍԵՔ ԵՒ ԲԱՂԱՐՉԱԿԵՐՔ

Առաջինը կը կատարուէր Նիսան (կամ՝ Ապիպ) ամսուն 14-ի երեկոյեան, իսկ երկրորդը՝ ամսուն 15-21:

Պասեքը, Եբրայերէն «Փեսախ» [=Տիրոջ «անցնիլ»ը, Հայերէնի մէջ Չատիկ թարգմանուած], սկզբնապէս խաշնարածութեան կապուած տօն մըն էր, որուն նպատակն էր՝ հաւանաբար՝ նորածին գառնուկներուն համար շնորհակալութիւն յայտնել Աստուծոյ: Որովհետեւ, ինչպէս Օրենքի գիրքերուն ծանօթացումը ցոյց կու տայ Հին Կտակարանեան հաւատալիքն էր՝ թէ մարդկային թէ

կենդանական ամեն անդրանիկ ծնունդ, ինչպես երկրի բոլոր բերքերուն երախայրիքը, Աստուծոյ կը պատկանի, եւ յատուկ ընծաներով պէտք է զանոնք «փրկել», այսինքն՝ «գնել» (տե՛ս Թւ 18.15-16):

Մովսէս եւ Ահարոն երբ գացին Փարաւոնին ըսելու՝ որ իրենց ժողովուրդին թոյլ տայ Եգիպտոսէն ելլել, Աստուծոյ կողմէ այսպէս ըսին անոր. *«Այսպէս կ'ըսէ Տէրը, Իսրայէլի Աստուածը.- Արձակէ՛ իմ ժողովուրդս, որպէսզի անապատին մէջ ինծի տօնախմբութիւն ընեն»* (Ելք 5.1): Ակնարկուած տօնը պէտք է նոյն Պասեքը ըլլայ, որ զուգադիպեցաւ իրենց փախուստին եւ ազատագրութեան, եւ ատոր համար ալ ստացաւ նոր՝ աւելի խորունկ նշանակութիւն մը, որ իրենց իբրեւ ազգ ծնունդը եւ կազմաւորումը պիտի ըլլար, եւ որուն մէջ պիտի տեսնէին Աստուծոյ աջին միջամտութիւնը:

Պասեքը կը տօնուէր տարուան առաջին ամսուն՝ Ապիպ կամ Նիսան ամսուն, որ մօտաւորապէս Մարտի կէսէն մինչեւ Ապրիլի կէսը կ'երկարի: Հաւանաբար Հրեական օրացուցային տարիի հասկացողութիւնն ալ կապուած է այս «Ելք»ին, որովհետեւ այդ առիթով է որ Տէրը Մովսէսի եւ Ահարոնի կ'ըսէ. *«Այս ամիսը ձեզի համար թող ամիսներու սկիզբը ըլլայ, տարուան առաջին ամիսը ըլլայ ձեզի համար»* (Ելք 12.2): Ամսուն 10-ին, իւրաքանչիւր ընտանիք պէտք էր *«կատարեալ, արու, մէկ տարեկան, անարատ»* ոչխար մը կամ ուլիկ մը առնէր եւ պահէր մինչեւ ամսուն 14-ը (Ել 12.5), վստահ ըլլալու համար որ հիւանդ չէ կամ արատ մը չունի: Ապա ամսուն 14-ի երեկոյեան պիտի մորթէին զայն, «երկու իրիկուններուն միջեւ» (Ելք 12.6): Եբրայական մտածողութեան մէջ երեկոն կը սկսէր ուշ յետ-միջօրէին, այսինքն՝ կէսօրէ ետք ժամը երեքէն սկսեալ¹⁰, եւ կ'աւարտէր մայրամուտով, մօտաւորապէս ժամը

¹⁰ Նոր Կտակարանեան ժամանակներուն գառնուկները կը մորթուէին տաճարի շրջափակին մէջ, բաւական մեծ հանդիսաւորութեամբ, եւ անոնց արիւնը կը սրսկուէր տաճարի բակին մէջ գտնուող գոհասեղանին վրայ: Եւ որովհետեւ շատ մեծ կ'ըլլար թիւը մորթուելիք գառնուկներուն, զենման այդ գործողութիւնը կը www.hygradaran.weebly.com

վեցին, երբ կը սկսէր յաջորդ օրը: Գառնուկը մորթելէ ետք, պիտի առնէին անոր արիւնէն, որ կեանքի խորհրդանիշն էր, եւ քսէին իրենց տան երկու դրանդիներուն եւ բարաւորին:

Սկզբնապէս իւրաքանչիւր ընտանիք իր տան մէջ կը զենէր եւ կ'ուտէր գառնուկը, բայց հետագային, տաճարին շինութենէն ետք, պայման դրուեցաւ՝ որ ամէն ոք Երուսաղէմ երթայ զենելու եւ Չատիկը ուտելու (Բ. Օր 16.1-8, մինչ Ել 12-ը տարբեր ձեւով):

Ուրիշ մէկ տարբերութիւն էր՝ ոչխարը պատրաստելու ձեւը: Ըստ Ելից պատումին՝ պէտք էր զայն խորովէին. կ'արգիլուէր հում ուտել կամ խաշել (Ելք 12.8-9), մինչդէռ Երկրորդումն Օրէնքի գիրքը կ'ըսէ՝ «պիտի եփես» (թէպէտ LXXը կ'աւելցնէ՝ «եւ խորովեսցես» - 16.7): Ընդհանրապէս զոհերը կ'եփուէին¹¹: Բայց ինչ կը վերաբերի գատկական գառնուկին, անշուշտ Եգիպտոսէն ելքի գիշերը ժամանակ չկար խաշելու, եւ ուստի պատուիրուած էր՝ խորովել, հրահանգելով նաեւ՝ որ գառնուկին ռեւէ ոսկորը չփշրուի (Ելք 12.46: Թւ 9.12), մինչդէռ խաշելու պարագային հարկադրաբար պէտք էր կտոր-կտոր ընել զայն: Հետագային վերստին շեշտուեցաւ գատկական գառնուկը լրիւ խորովելու հրահանգը, առանց ոսկոր մը փշրելու, ինչ որ իրենց մտածողութեան մէջ կը խորհրդանշէր Իսրայէլի ամբողջականութիւնն ու միութիւնը¹²:

սկսէր բաւական կանուխ, կէսօրին, կամ նոյնիսկ աւելի կանուխ: Ահա թէ ինչպէս՝ Քրիստոսի, մեր Չատկական Գառնուկին, խաչի վրայ զոհագործումը կատարելապէս համապատասխանը եղաւ գատկական գառնուկներու զենումին, փոխարինելով զանոնք:

¹¹ Ստոր վկայութիւնները կան: Օրինակ, Թագաւորներու Ա. գիրքին մէջ կը պատմուի (2.12-17), թէ Հեղի քահանային երկու որդիները, իրենք ալ քահանաներ, կը մերժէին խաշած միս ուտել, ուստի կը բռնանային զոհ մատուցանողներուն վրայ եւ խորովելու համար հում միս կ'ուզէին անոնցմէ: Իրենց ըրածը «Տիրոջ զոհը արհամարհել» նկատուեցաւ եւ Տէրը պատժեց զիրենք (4.1-11):

¹² Սակայն աստուածային տնօրինութեան մէջ այդ կարգադրութիւնը կը հայեր ապագային, խաչի վրայ Քրիստոսի պատարագումին, որուն ռեւէ ոսկորը պիտի չփշրուէր, ըստ Աստուծոյ կամքին (տե՛ս Յ 19.31-37): Ստով Աստուծոյ Գառնուկը www.hygradaran.weebly.com 35

Զատկական ընթրիքը կ'ուտէին «յաջորդ օրը», այսինքն՝ երեկոյեան, կամ արեւմարէն ետք, երբ Հրեական օրացոյցով սկսած կ'ըլլայ 15 Նիսանը: Մասնակցողները պատրաստուած կ'ըլլային՝ ճամբորդութեան պատրաստուած մարդու պէս, ինչպէս էր Եգիպտոսէն ելքի գիշերը (Ել 12.11): Սեղանին վրայ պէտք էր լեղի խոտեր ըլլային, ստրկութեան դառնութիւնը վերյիշելու համար: Ընտանիքին կրտսերագոյն անդամը պէտք էր հարցնէր. *«Ի՞նչ է այս արարողութեան նշանակութիւնը»*, եւ ընտանիքին գլուխը պէտք էր պատասխանէր Տիրոջ բառերով. *«Ասիկա Տիրոջ Զատիկին գոհն է: Եգիպտոսի մէջ երբ Տէրը Եգիպտացիները հարուածեց, Իսրայէլի որդիներուն տուններուն վրայէն անցաւ, մեր տուները [հարուածէն] գերծ պահելով»* (Ել 12.26-27): Ընթրիքի որոշ պահերուն կ'երգուէին «Ալէլուք» կոչուած Սաղմոսները (111-118)¹³, որուն յիշատակութիւնը ունինք նաեւ Յիսուսի Վերջին Ընթրիքի պատումին մէջ (Մտ 26.30: Մր 14.26): Գառնուկին մնացորդները լուսաբացէն առաջ պէտք էր այրուէին:

Նիսան 15-ի երեկոյէն կը սկսէր Բաղարջակերաց տօնը, որ պէտք էր տուէր եօթը օր, մինչեւ ամսուն 21-ի երեկոն: Բաղարջ ուտելը բացատրուած է իբրեւ յիշատակ՝ Եգիպտոսէն ելքին (Ելք 12.39, 34.18): Բայց կ'երեւի թէ հինին մէջ ասիկա առանձին երկրագործական տօն մըն էր, առաջին հունձքին (գարիի) կապուած: Տարին մէկ անգամ հին խմորի բոլոր մնացորդները կը փճացուէին եւ նոր հունձքին հետ նոր խմոր կը սկսէր: Եւ վստահ ըլլալու համար, որ հին խմոր չմնաց, լման շաբաթ մը անխմոր պէտք էր ուտել հացը: Հրեաներ

Քրիստոս կատարեալ գուգահեռը կը դառնար զատկական գառնուկին: Իսկ Քրիստոսի ուեւէ մէկ ոսկորին չփշրուիլը նոյնպէս կը խորհրդանշէր ամբողջականութիւնը Աստուծոյ նոր ժողովուրդին, որուն անձնաւորումն էր Քրիստոս (հմմտ Հո 12.4-5: Ա.Կր 1.12-13, 10.17: Եփ 4.3-5):

¹³ Ք.Ե. առաջին դարուն նաեւ սովորութիւն եղած էր սեղանին վրայ դնել չորս բաժակ կարմիր գինի, որոնք պէտք էր խմուէին որոշ հանգրուաններու: Բայց որոշ չէ, թէ Յիսուսի օրով կա՞ր այդ սովորութիւնը, եւ արդեօք սեղանին վրայ կայի՞ն մէկէ աւելի բաժակներ, թէ միայն մէկ հատ:

խմորը ապականութեան եւ անմաքրութեան խորհրդանիշ կը նկատէին, անոր ունեցած խմորումին համար: Քրիստոս ալ խմորը խորհրդանիշ կը նկատէ ապականութեան (Մր 8.15: Ղկ 12.1):

Երկու այս տօները, Չատիկ եւ Բաղարջակերք, թէպէտ սկզբնապէս իրարմէ տարբեր, բայց ա՛յնքան իրարու մօտիկ են, եւ պատմական նշանակութեամբ ալ իրարու կապուած, որ յաճախ մէկ անունը փոխարինած է միւսը: Այդպէս է, օրինակ, որ համատեսական աւետարաններուն մէջ Չատիկի նախօրեակը կոչուած է Բաղարջակերքի առաջին օրը (Մտ 26.14: Մր 14.12: Ղկ 22.7):

Հրէից պատմութեան մէջ Չատիկի եւ Բաղարջակերպց տօնի յիշարժան առիթ մը եղաւ Ք.Ա. 516 թուականը, երբ Անգէ մարգարէի քաջալերութեամբ եւ Յուդայի վերջին թագաւոր Յովակիմի թոռ՝ Ջորաբաբէլի կառավարիչին ջանքերով, չորս տարուան աշխատանքէ ետք տաճարին վերաշինութիւնը աւարտեցաւ 3 Ատարին (=10 Մարտ), եւ նոյն տարուան առաջին մեծ տօնը որ հոն կատարուեցաւ՝ Չատիկն էր:

ՊԵՆՏԷԿՈՍՏԷ

Կը կատարուի Եբր. Միւսան ամսուն (=Յունիս) 6-ին:

Այս տօնն ալ երկրագործական է, եւ յաճախ կոչուած է նաեւ «Երախայրիներու Տօն», կամ՝ «Առաջին Բերքի Տօն», որովհետեւ կը նշէր ցորենի հունձքին սկիզբը: Եբրայեցիներ առհասարակ զայն կը կոչեն «Շաբաթներու Տօն» (Եբր. Shavuoth), որովհետեւ, ինչպէս Ղեւտական գիրքը կը սահմանէ, Բաղարջակերպց տօնին յաջորդ օրէն սկսեալ լման եօթը շաբաթներ պէտք էր հաշուել, որ 49 օր կ'ընէ, եւ յաջորդ՝ 50-րդ օրը կատարել այս նոր տօնը (Ղկ 23.15-16): Ասկէ կու գայ «Պենտէկոստէ» անունը, որ Յունարէն է եւ կը նշանակէ՝ 50-րդ:

Տօնը կատարելու ամփոփ նկարագրական-հրահանգ մը կը գտնենք Ղեւտական գիրքի 23.15-21-ին մէջ, ուր տօնին իբրեւ յատկանշական գիծ կը տեսնենք՝ նոր ցորենով եփած

խմորուն երկու պաներու ընծայումը՝ երերցնելով, իբրև երախտագիտութեան զոհ Աստուծոյ, որ ինքնին ճանաչումն է՝ թէ երկրին բերքերը Աստուծոյ պարգէն են:

Այս տօնը եւս երկրագործական իր նշանակութեան առընթեր՝ պատմական յիշատակի մը եւս կապուած էր, որուն հրահանգը կը գտնենք Բ.Օր 16.9-12ի մէջ: Այնտեղ կ'ըսուի, թէ հունձքի ուրախութեան հետ միասին պէտք է յիշեն իրենց հայրերու ստրկութիւնը Եգիպտոսի մէջ եւ դարձեալ երախտապարտ զգան Տիրոջ, որովհետեւ հունձքի տօն կատարելը ազատ ժողովուրդի մը առանձնաշնորհումն է: Ուստի Պենտէկոստէն, ըստ Օրէնքի գիրքին, ստրկական ծառայութենէ ազատագրուելուն առիթով արտայայտուած երախտագիտութեան տօն է:

Ի վերջոյ, բաւական ուշ շրջանի մը, այս տօնը պատմական ուրիշ նշանակութիւն մը եւս ստացաւ, խորհրդանշելով Սինա լեռան վրայ աստուածային պատուիրաններուն տրւչութիւնը եւ Աստուծոյ հետ Ուխտին կնքումը:

ՆՈՐ ՏԱՐԻ ԿԱՄ «ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՄԱՐ ՓՈՂ ՀՆՉԵՑՆԵԼՈՒ ՕՐ»

Կը կատարուի Թիշրի ամսուն 1-ին (=Սեպտեմբերի կէս):

Նոր Տարուան այս տօնը Ղեւտացոց գիրքին մէջ կը կոչուի «Յիշատակ փողոց» կամ «Յիշատակի համար փող հնչեցնելու օր» (Ղ 23.24):

Այս տօնը երկրագործական կեանքին կապուած չէ, այլ կը նշէ Եփրայական օրացոյցին եօթներորդ Թիշրի ամսուն սկիզբը, որ սկզբնապէս Եփրայական հին՝ «աշխարհիկ» օրացոյցին առաջին ամիսն էր, եւ միայն Եգիպտոսէն ելքին առիթով փոխուեցաւ, երբ Աստուծոյ հրահանգով սկիզբ դրուեցաւ «կրօնական» օրացոյցին, որ կը սկսէր Ապիպ կամ Նիսան ամիսով (Ելք 12.2: Բ.Օր 16.1: Արդ, «Յիշատակի համար փող հնչեցնելու օր»ը կը նշէ Եփրայական քաղաքային

տարիին սկզբնաւորութիւնը, այլ խօսքով, ինչպէս ներկայ բացատրութեամբ կը ճանչցուի, քաղաքային Նոր Տարին է անիկա (Եբր. Ռոշ հաշանա=տարեգլուխ):

Այս մասին առաջին ակնարկութիւն մը կը գտնենք Ելից գիրքին մէջ (23.16), ուր աշնանային բերքահաւաքի, այսինքն՝ Տաղաւարահարաց տօնը կը սահմանուի իբրեւ «տարւոյն վերջաւորութեան բերքահաւաքի տօնը» (հմմտ 34.22): Այստեղ «տարւոյն վերջաւորութեան» բացատրութիւնը իբրեւ մնացորդ հին օրացուցային դրութենէն, կը վկայէ օրացուցային զոյգ դրութիւններու միաժամանակ գործածութեան մասին, «քաղաքական»ը՝ աշնան սկսող եւ մինչեւ աշուն երկարող, եւ «կրօնական»ը՝ գարնան սկսող մինչեւ գարուն երկարող:

Օրացոյցին ակնարկած ատեն իբրեւ ծանօթութիւն ըսենք, որ Հրեաներ լուսնային օրացոյց կը գործածէին: Իրենց տարին ունէր 12 ամիսներ, որոնք կը սկսէին լուսնի ծնունդով, որուն առաջին օրը «սուրբ» կը նկատուէր: Բայց որովհետեւ լուսնային ամիսները 29/30 օր կը հաշուէին, եւ ուստի իրենց տարին մեր սովորական՝ արեգակնային տարիէն 11 օրեր պակաս կը հաշուէր, ժամանակ առ ժամանակ իրենց օրացոյցին վրայ 13-րդ ամիս մը կ'աւելցնէին, արեգակնային տարիէն խտտորումը ուղղելու համար: Թէ ինչպէս կը հաշտեցնէին լուսնային ամիսները արեգակնայինին՝ ճշգրիտ չենք գիտեր: Բայց յայտնապէս երկու բեւեռներ կային.- Առաջինը աշնան գիշերահաւասարն էր, «ելք տարւոյն», այսինքն՝ «տարւոյն վերջաւորութիւնը» կոչուած (Ելք 23.16), եւ երկրորդը՝ գարնան գիշերահաւասարն էր, «դարձ տարւոյն», այսինքն՝ «տարուան տարեդարձը» կամ «գարնանասկիզբը» կոչուած (հմմտ Գ. Թգ 20.26: Բ.Մն 36.10):

Շատ կարեւոր էր ամսամուտերը ճշդել, որովհետեւ տօները ըստ այնմ կը կատարուէին: Աստղաբաշխական հաշիւներ կատարելը արգիլուած էր Հրեաներուն համար. ուստի կային նշանակուած յատուկ վկաներ, որոնք նորալուսինը տեսնելուն պէս՝ պէտք էր իմաց տային

Ատեանին (=Մինետրիոն): Երբ այս ժողովը հոչակեր՝ «Սրբեալ է», քահանաներ փողերը կը հնչեցնէին, ատով նոր ամսամուտին սկիզբը նշելով, որուն առաջին օրը, ինչպէս ըսինք, «սուրբ» էր, այսինքն՝ Տիրոջ նուիրուած տօնական օր էր: Այդ օր, սովորական գոհերուն առնթեր՝ յատուկ գոհեր ալ կը մատուցուէին (Թւ 28.11-15): Նկատի ունենալով այն կարեւորութիւնը, որ Հրեաներ կու տային 7 թիւին, 7-րդ ամիսը յատուկ նշանակութիւն մը ունէր, եւ ուստի 7-րդ, այսինքն՝ Թիշրի ամսուն առաջին օրը «փող հնչեցնելու օր» էր (Թ. 29.1), լման օրը փող կը հնչեցնէին, ուրկէ կու գայ այդ օրուան տրուած անունը:

Թիշրի ամիսը նաեւ Հրեայ ժամանակագրութեան կամ թուականին սկիզբը կը նշէր, եւ ատով ալ կարեւոր էր: Ըստ աւանդութեան՝ աշխարհի ստեղծումը Թիշրի ամսուն մէջ տեղի ունեցած էր. ուստի թուականը կը հաշուէին այդ ամիսէն: Այս թուականը կը կոչուէր «ստեղծագործութեան թուական»:

ՔԱԻՈՒԹԵԱՆ ՕՐ

Կը կատարուի Թիշրի ամսուն 10-ին, այսինքն՝ Սեպտեմբերի վերջը կամ Հոկտեմբերի սկիզբը:

Հինին մէջ Թիշրի ամսուն 1-10 յատուկ բան մը չկար. բայց հետագային միջանկեալ օրերը նկատուեցան Քաւութեան Օրը կանխող ապաշխարութեան օրեր:

Թիշրի ամսուն 10-ը «Քաւութեան Օր»ն էր (Եբր. Եոմ հաք-քիփուրիմ, կամ՝ Եոմ Քիփփուր): Այդ օրը «սուրբ» օր էր եւ ամէն գործ պէտք էր դադարէր, տօնական ռեւէ օրուան պէս, բայց այդ օրը մէկէ աւելի բաներով տարբեր էր ուրիշ տօներէ.

1.- Տարուան մէջ միակ օրն էր՝ երբ պարտադիր ծոմ պէտք էր պահէին բոլորը, ծերերէն մինչեւ երեխաները:

2.- Տարուան մէջ միակ օրն էր, երբ Քահանայապետը կը մտնէր Վկայութեան Խորանին կամ տաճարին «Սրբութիւն

Սրբութեանց» կոչուած բաժինը, ուր իրմէ գատ ո՛չ ոք իրաւունք ունէր մտնելու:

3.- Տարուան մէջ միակ օրն էր, երբ Քահանայապետը անձամբ կը մատուցանէր բոլոր զոհերը. թէ՛ առաւօտեան ու երեկոյեան կանոնաւոր զոհերը, եւ թէ՛ մեղքերու քաւութեան սահմանուած առանձնական զոհերը: Այս զոհերուն կարգը եւ մատուցման կերպը այնպիսին էր, որ քահանայապետը այդ օր բազմաթիւ անգամներ Սրբութիւն Սրբութեանց կը մտնէր:

Նախ, առաւօտ կանուխ կը հագնէր իր քահանայապետական ոսկեկար հանդերձները եւ կը մատուցանէր առաւօտեան սովորական զոհերը, որմէ ետք կը լուացուէր եւ ճերմակ կտաւէ (=քթան) քահանայական պարզ հագուստ կը հագնէր, ի նշան մաքրութեան: Ապա, նախ կ'առնէր իբրեւ մեղքի պատարագ սահմանուած զուարակը (=մատղաշ ցուլ) եւ ձեռքերը անոր գլխուն դնելով՝ կը խոստովանէր իր եւ իր տան, այսինքն՝ բոլոր քահանաներուն մեղքերը: Յետոյ կ'առնէր երկու նոխագները եւ վիճակ կը ձգէր, որոշելու համար՝ թէ անոնցմէ ո՛ր մէկը իբրեւ մեղքի պատարագ Տիրոջ պիտի ընծայուի եւ ո՛ր մէկը անապատ պիտի դրկուի՝ իբրեւ «Քաւութեան Նոխագ»: Ապա դարձեալ զուարակին գլխուն դնելով ձեռքերը՝ անգամ մը եւս կը խոստովանէր իր եւ քահանաներուն մեղքերը եւ կը զենէր զայն, արիւնը յատուկ անօթի մը մէջ ժողվելով:

Այնուհետեւ բուրվառն ու խնկամանը առնելով կը մտնէր վարագոյրին ներսիդին, այսինքն՝ Սրբութիւն Սրբութեանց, որ թանձր վարագոյրով մը բաժնուած էր «Սրբութիւն» կոչուած բաժինէն, եւ կրակին վրայ խունկ լեցնելով՝ ներսը կը լեցնէր խունկին ծուխով, «որպէսզի չմեռնի» (Ղւ 16.13): Ասիկա Աստուծոյ երեւման կերպին առնչուած հասկացողութիւն մըն է: ԶԱստուած դէմ առ դէմ ո՛չ ոք կրնայ տեսնել եւ ապրիլ, ինչպէս Աստուածաշունչը բազմիցս կը հաստատէ (Ել 33.20: Դտ 13.22): Ատոր համար ալ Աստուծոյ փառքը, այսինքն՝ իր ներկայութիւնը միշտ ծուխով կամ ամպով պարուրուած

կ'երեւի: Հոս ալ, կարծէք, քահանայապետը Աստուծոյ ներկայութեան չի կրնար կանգնիլ՝ եթէ ոչ միայն Սրբութիւն Սրբութեանցը խունկի ծուխով լեցնելէ ետք¹⁴:

Ինչ կար վարագոյրէն անդին: Նախագերութեան շրջանին Սրբութիւն Սրբութեանց կոչուած այս փոքրիկ սրահին մէջ կար Ուխտի Տապանակը, որ իր համակ ոսկիէ կափարիչով՝ կը նկատուէր նոյնինքն Աստուծոյ բնակութիւնը եւ ներկայութիւնը: Այդ կափարիչին վրայ՝ երկու ծայրերուն, կային իրարու դարձած երկու քերովբէներ, որոնք իրենց աչքերը դարձուցած էին դէպի վար՝ այն տեղը, որ «Քաւութիւն» կը կոչուէր, եւ որմէ ամբողջ կափարիչը «Քաւութիւն» անունը ստացած էր, որովհետեւ անոր առջեւ էր որ քահանայապետը կը սրսկէր մեղքի պատարագներուն արիւնը, որպէսզի իր եւ ամբողջ ժողովուրդին համար քաւութիւն ձեռք բերէ Աստուծմէ: Գերութեան շրջանին Տապանակը կորսուեցաւ, եւ այլեւս ոեւէ տեղ անոր յիշատակութեան չենք հանդիպիր: Ուստի յետգերութեան շրջանի նոր տաճարին մէջ, որ նախ Զօրաբարէլի եւ ապա Մեծն Հերովդէսի կողմէ վերաշինուեցաւ, Սրբութիւն Սրբութեանցը ամբողջութեամբ դատարկ էր:

Ներսը խնկելէ ետք, քահանայապետը դուրս կու գար, կ'առնէր զուարակին արիւնը եւ ներս մտնելով՝ մատը կը թաթխէր արիւնին մէջ եւ եօթն անգամ կը սրսկէր Քաւութեան առջեւը (կամ, հետագային, այն տեղը՝ ուր անցեալին Տապանակը դրուած էր): Ապա դարձեալ դուրս գալով՝ այս անգամ ամբողջ ժողովուրդին մեղքերուն համար կը մորթէր Տիրոջ վիճակուած նոխազը, եւ նոյն ձեւով անոր արիւնը առնելով՝ կը մտնէր վարագոյրին ներսիդին եւ անկէ եւս եօթն անգամ կը սրսկէր Քաւութեան առջեւը: Յետոյ նոյն արիւններէն կը սրսկէր Սրբութիւն Սրբութեանցին

¹⁴ Հաւանաբար նոյն այս հասկացողութեան հետ կապ ունի նաեւ մեր եկեղեցոյ մէջ Սուրբ Պատարագին սկիզբը քահանային կողմէ նախ Սուրբ Խորանը խնկարկելու սովորութիւնը:

վարագուրեալ մուտքի սեմերուն վրայ: Իսկ ամենէն վերջը, արիւնները իրարու խառնելով՝ եօթն անգամ կը սրսկեր խունկերու սեղանին չորս եղջիրներուն (=անկիւններուն) եւ գազաթին, որմէ ետք արիւնը կը թափեր ողջակէզներու սեղանին յատակը:

Ջուարակին ու նոխազին արեան սրսկումը Քաւութեան վրայ՝ կը նշէր քահանաներուն ու ժողովուրդին սրբուիլը. իսկ սեմերուն եւ խունկերու սեղանին վրայ սրսկումը՝ նոյնինքն Վկայութեան Խորանին կամ Տաճարին սրբուիլը (տե՛ս Ղւ 16.16,33): Այս բոլորը քահանայապետը պէտք էր առանձինը ընէր, որովհետեւ իրմէ գատ ոչ ոք պէտք էր գտնուէր Սրբարանին մէջ (16.17): Նաեւ՝ այս բոլորը պէտք էր ընէր՝ առանց իր ճերմակ հագուստին վրայ բիծ բերելու:

Ի վերջոյ, քահանայապետը իր ձեռքերը քաւութեան նոխազին գլխուն դնելով՝ Աստուծմէ կը խնդրէր որ ներէ իր ժողովուրդին մեղքերը, եւ դէպի ժողովուրդը դառնալով՝ կը վստահեցնէր որ պիտի սրբուին: Ապա, ժողովուրդին մեղքերը իր վրայ կրող նոխազը դուրս կը հանուէր եւ Սողոմոնի Սրահին տակէն, այսինքն՝ պարիսպին արեւելեան դռնէն անցընելով՝ որոշուած մարդու մը ձեռքով կը տարուէր քաղաքէն դուրս, դէպի անապատ, մինչ միւս կողմէ՝ իբրեւ մեղքի պատարագ մատուցուած զուարակը եւ միւս նոխազը քաղաքէն դուրս կը տարուէին եւ կ'այրուէին (Ղւ 16.27):

Քաւութեան Օրուան յատուկ արարողութիւնները կ'աւարտէին Սուրբ Գիրքէն որոշ ընթերցումներով եւ աղօթքներով:

Այս ամբողջ ծիսակատարութեան նկարագրականը եւ անոր կապուած հրահանգները կը գտնենք Ղեւտական գիրքի 16րդ գլխուն մէջ:

Այս տօնին շատ մը երեսները կարելոր են մեզի համար, որովհետեւ, ինչպէս Եբրայեցիներու նամակին հեղինակը ցոյց կու տայ, տօնը ինք եւ տօնին կապուած թէ՛ քաւութեան զոհերը եւ թէ՛ անապատ արձակուած քաւութեան նոխազը

նախապատկերացումն են Քրիստոսի, Աստուծոյ Գառնուկին, որ եկաւ աշխարհի մեղքերը իր վրայ առնելու եւ Աստուծոյ ընծայուելու իբրեւ յաւիտենական քաւութիւն՝ իրեն հաւատացող «շատերու» մեղքերուն համար (կարդա՛ Եբր 9.6-14, 10.1-18, 13.10-12):

ՏԱՂԱԻԱՐԱՀԱՐԱՑ

Այս տօնը տեղի կ'ունենայ Եբր. տարուան 7-րդ՝ Թիշրի (հին անունով՝ Էթանիմ = Մեպտեմբեր/Հոկտեմբեր) ամսուն 15-22:

Ինչպէս Նոր Տարուան առիթով յիշեցինք, Ելից գիրքը այս տօնը կը սահմանէ իբրեւ «տարւոյն վերջաւորութեան» կատարուելիք տօն, եւ զայն կը կոչէ «բերքահաւաքի տօն» (Ել 34.22): Երկրագործական երեք տօներէն վերջինն է, աշնանային բերքահաւաքի տօնը, որով գոհութիւն կը յայտնուէր բոլոր պտուղներուն ու գինիին համար:

Տօնը կատարելու հրահանգը առաջին տասնաբանեային մէջ կը գտնենք (Ել 34), իսկ Երկրորդումն Օրէնքի գիրքը կը հրահանգէ տօնը կատարել եօթը օր, ուրախութեամբ, եւ զայն կատարել Երուսաղէմի մէջ (Բ.Օր 16.13-16): Ղեւտական եւ Թիւերու գիրքերը տօնակատարութեան օրերը ութը ցոյց կու տան, փոխանակ եօթի (Ղւ 23.36: Թւ 29.12-39):

Ղեւտական գիրքը կը սահմանէ տօնը կատարելու կերպը, եւ նաեւ զայն կը կապէ պատմական յիշատակի մը՝ անապատային քառասնամեայ թափառումներու տարիներուն (23.33-43): Տօնին կապուած կարգադրութեանց մէջ ամենէն յատկանշական գիծերը երկուք են. - *«Առաջին օրը՝ լաւագոյն ծառերու պտուղներէն պիտի առնէք, (ինչպէս նաեւ) արմաւենիի ոստեր, տերեւախիտ ծառերու եւ ուռիներու ոստեր պիտի առնէք, եւ Տիրոջ ձեր Աստուծոյն առջեւ եօթը օր պիտի ուրախանաք: ... Եօթը օր տաղաւարներու մէջ պիտի բնակիք. ամէն բնիկ Բարայէլացի տաղաւարի մէջ պիտի բնակի, որպէսզի ձեր սերունդները*

գիտնան, թէ Իսրայէլի որդիները Եգիպտոսի երկրէն հանած աստենս տաղաւարներու մէջ բնակեցուցի զանոնք» (Ղւ 23.40, 42-43):

Որոշ է, որ տօնը իր անունը կ'անէ՝ եօթը կամ ութը օր տաղաւարներու մէջ բնակելու այս կարգադրութենէն. եւ արդէն Գրաբար լեզուով «Տաղաւարահարք» կը նշանակէ՝ «տաղաւար շինել», կամ «հիւղակ կանգնել»: Իսկ տօնին Եբրայերէն անունն է՝ «Սուքքոթ», որ կը նշանակէ՝ «տաղաւարներ», կամ «փարախներ»: Ակնարկուած տաղաւարները կամ հիւղերը ծառերու ճիւղերով կը շինուէին Երուսաղէմի շրջակայ բլուրներուն վրայ կամ տուներու գաւիթներուն մէջ, տանիքներուն վրայ կամ փողոցներուն մէջ: Բացի կիներէն ու մանուկներէն, ինչպէս նաեւ հիւանդներէն ու հիւանդապահներէն, Երուսաղէմ բնակող թէ ուխտաւորաբար եկած ամէն մարդ պէտք էր լման ութը օր անոնց մէջ բնակէր: Գալով միւս յատկանշական երեւոյթին, պտուղներէն դուրս՝ միւս ծառերու ճիւղերն ու ոստերը պարզ զարդարանքի համար են:

Տօնի ութը օրերուն ամենօրեայ զոհեր կը մատուցուէին: Ամէն օր նոխսագ մը կը զենուէր իբրեւ «մեղքի պատարագ», ինչպէս նաեւ զառնուկներ, խոյեր ու զուարակներ՝ իբրեւ «ողջակէզ», որոնց ընդհանուր թիւը 182 կ'ըլլար մինչեւ տօնին վերջանալը¹⁵: Աւելի ուշ՝ ողջակէզին հետ նաեւ գինի

¹⁵ Թիւերու գիրքը մանրամասնօրէն կը նկարագրէ (29.12-39) այս զոհերուն ու հեղուկ նուէրներուն մատուցման բաշխումը տօնին ութը օրերուն վրայ: Հասարակաց զոհին համար առաջին 7 օրերուն՝ ամէն օր կը մատուցուէր 2 խոյ եւ 14 զառնուկ: Զուարակները կը մատուցուէին այսպէս.-

- ա. օրը՝ 13 հատ
- բ. օրը՝ 12 հատ
- գ. օրը՝ 11 հատ
- դ. օրը՝ 10 հատ
- ե. օրը՝ 9 հատ
- զ. օրը՝ 8 հատ
- է. օրը՝ 7 հատ

կ'ընծայեին, որ կը թափուէր իւրաքանչիւր օրուան առաւօտեան զոհին վրայ:

Ամէն օր, բացի Շաբաթ օրուրնէ, քահանայ մը յատուկ թափօրով կ'երթար Մելովամի աւազան, եւ ոսկեայ սափօրը ջուրով լեցնելէ ետք՝ նոյն թափօրով տաճար կը վերադառնար, «Ջուրի դարպաս»էն անցնելով, եւ տաճար կը հասնէր ճիշդ ա՛յն պահուն, երբ առաւօտեան զոհերը մատուցուելու վրայ կ'ըլլային: Քահանան ի տես բոլորին՝ փողերու եւ եղջերափողերու հնչիւններուն տակ հանդիսաւորապէս ջուրը կը թափէր Վկայութեան Խորանին (=տաճարին) ձախակողմը գտնուող արծաթեայ «աւազանին» մէջ: Ջուրի այս հեղումը կրկնակ նշանակութիւն ունէր.- Նախ՝ կը խորհրդանշէր անձրեւային եղանակին սկիզբը, իբրեւ նշան թէ Աստուած, որ անապատին մէջ ջուր տուաւ իր ժողովուրդին, առանց ջուրի պիտի չթողու զիրենք: Երկրորդ՝ ասիկա կը խորհրդանշէր նաեւ Աստուծոյ Հոգիին առատապէս հեղումը, եւ թերեւս ալ ժողովուրդին մեղքերուն ջնջումը՝ Աստուծոյ կողմէ (հմմտ Ա.Թգ 7.6): Այս արարողութենէն ետք կ'երգէին Եսայի մարգարէի 12-րդ գլուխը, որ Եգիպտոսէն ելքը յիշատակող օրհներգ մըն է, եւ ուր ի միջի այլոց կ'ըսուի. «Ուրախութեամբ ջուր պիտի քաշէր փրկութեան աղբիւրներէն» (Ես 12.3): Հաւանաբար ասկէ թելադրուած էր այս տօնին առիթով, անոր վերջին եւ հանդիսաւոր օրը, Յիսուսի նշանաւոր մէկ յայտարարութիւնը. «Ով որ ծարաւ է՝ թող ինծի գայ եւ խմէ: Ով որ ինծի կը հաւատայ, ինչպէս Սուրբ գիրքը կ'ըսէ՝ "Անոր սիրտէն կենսատու ջուրի գետեր պիտի բղխին"» (Յհ 7.37-38):

Ջուրէն ետք ջրախառն գինին կը թափէին ուրիշ արծաթեայ կոնքի մը մէջ, մինչ միւս կողմէ «Ալէլուիա»

Իսկ 8-րդ օրը կը մատուցանէին՝ 1 զուարակ, 1 խոյ կամ 7 գառնուկ: Այս զոհերուն հետ ամէն օր նաեւ «հացի ընծայ» կը մատուցուէր, որ պատրաստուած կ'ըլլար իւղով զանգուած նաշիհով (Թւ 29.14): Ասոնք՝ «մշտնջենաւոր», այսինքն՝ ամենօրեայ ողջակեզէն եւ անոր ընկերացող հացի ընծայէն ու հեղուկ նուերներէն գատ (տե՛ս Թւ 29.16,19 ելն):

կոչուած Սաղմոսները (111-118) կ'երգուէին: Վերջին՝ 118-րդ Սաղմոսին հետ բազմութիւնը կը սկսէր ճօճել մրտենիի, արմաւենիի եւ ուռենիի ոստերը, մանաւանդ երբ կ'արտասանէին 25-րդ համարը.- «Փրկէ՛ մեզ», Եբրայերէնով՝ «Ովսա՛ննա»: Որպէս ծանօթութիւն պէտք է գիտնալ, թէ «Ալէլուիա» կոչուած այս Սաղմոսները կ'երգուէին նաեւ Երուսաղէմ եկող ուխտաւորները դիմաւորելու համար, եւ այդպէս էր որ 118-րդ Սաղմոսին 25-26 համարները պատշաճեցուեցան Յիսուսի, երբ Երուսաղէմ կը մտնէր (տե՛ս Մր 11.8-10):

Տօնին կապուած ուրիշ կարեւոր երեւոյթ մըն ալ կար: Տօնին առաջին իրիկունը, տաճարին «Կանանց գաւիթ» կոչուած բաժինին մէջ չորս հսկայ աշտանակներ կը վառէին, եւ տօնին բոլոր օրերուն անոնք քաղաքը կը լուսաւորէին: Տաճարը Աստուծոյ բնակութիւնը նկատուելուն համար՝ ասիկա կը խորհրդանշէր Աստուծոյ խօսքին ու փառքին ճառագայթումը աշխարհի խաւարին մէջ, այսինքն՝ հեթանոս աշխարհին մէջ¹⁶, եւ հեթանոս ժողովուրդներու դարձը դէպի Տիրոջ լեռը եւ Տիրոջ «տունը», այսինքն՝ տաճարը, ուրկէ կ'ելլէ Աստուծոյ Օրէնքը, Աստուծոյ խօսքը (հմմտ Ես 2.2-5: Մք 4.1-4): Կը կարծուի, որ տաճարի մէջ վառած այս լոյսէն էր որ առիթ քաղէց Յիսուս, երբ Տաղաւարահարաց տօնին առիթով Երուսաղէմ եկած էր, երբ վերջին օրը կատարեց իր միւս կարեւոր յայտարարութիւնը.- *«Ես եմ աշխարհի լոյսը»* (Յհ 8.12):

Աստուծոյ Օրէնքին ճառագայթող կեդրոնը ըլլալու այս ըմբռնումը կու գայ նաեւ անկէ, որ ըստ Մովսէսի հրահանգին՝ ամէն եօթը տարին անգամ մը, Տաղաւարահարաց տօնին, Օրէնքի գիրքը լման եւ հրապարակաւ պէտք էր կարդացուէր «եկեղեցացեալ» ժողովուրդին՝ այր, կին թէ մանուկ, բանակ թէ

¹⁶ Տեառնընդառաջի օրը մեր եկեղեցիին մէջ խորանէն լոյս առնելու եւ տուները տանելու սովորութիւնը հաւանաբար կապ մը ունի այս սովորութեան հետ: Հոս Քրիստոսի Եկեղեցին իրմէ լոյս կու տայ աշխարհին:

եկուր, որպէսզի Աստուծոյ պատուիրանները սորվին (տե՛ս Բ.Օր 31.9-13):

Հետագայ ասանդութիւնը կ'ըսէր, թէ անապատին մէջ Եբրայեցի ժողովուրդը առաջնորդող կրակէ սիւնը առաջին անգամ Թիշրի ամսուն 15-ին, այսինքն՝ Տաղաւարահարաց տօնին առաջին օրն էր որ երեւցաւ, եւ նոյն օրն էր որ Մովսէս իր ժողովուրդին հրահանգեց Ուխտի Տապանակին (=տաղաւար) շինութիւնը:

ՆԱԻԱԿԱՏԻՔ, ԿԱՄ ՏՕՆ ՆԱԻԱԿԱՏԵԱՑ

Կը կատարուի Եբր. Քասդեւ (Դեկտեմբեր/Յունուար) ամսուն 25-ին: Նաւակատիքի տօնը (Եբր. Հանուքթա - Hanukkah) ծանօթ է նաեւ իբրեւ «Ճրագներու տօն», կամ «Լոյսերու տօն», եւ կապուած է Մակաբայեցոց շրջանի կարեւոր մէկ դէպքին:

Արդարեւ, Ք.Ա. 167 թուականին, Սելեւկեան թագաւորներէն՝ Անտիոքոս Դ. Եպիփանէս ջնջեց նախապէս Հրեաներուն տրուած բոլոր առանձնաշնորհումները, արգիլեց Շաբաթը պահել, արգիլեց թլփատութիւնը, եւ յոռեգոյնը, տաճարը պղծեց՝ Չեւսի արձանը կանգնելով այնտեղ, ինչ որ Դանիէլի մարգարէութեան մէջ այլաբանօրէն կոչուած է՝ «աւերուածին պղծութիւնը» (Դն 9.27, 11.31, 12.11: Հմմտ Ա.Մկ 1.54, 6.7: Մտ 24.15: Մր 13.14), եւ ստիպեց զանոնք՝ պիղծ համարուած կենդանիներ (օրինակ՝ խոզեր) զոհել անոր: Յարուցուած հալածանքներուն դէմ ապստամբութիւն քարձրացուց Եղիազար քահանան, որուն հինգերորդ զաւակը՝ Յուդա Մակաբէ յաջողեցաւ Երուսաղէմը ազատագրել, մաքրել տաճարը եւ զայն Աստուծոյ վերընծայել 164 թուականի Դեկտեմբերի 15-ին (Հրեական Քասդեւ ամսուն 25-ին): Ա՛յս է «նաւակատիք» կոչուածը, որմէ ետք սովորութիւն եղաւ ամեն տարի ութը օր տօնել անոր յիշատակը, 25 Քասդեւէն սկսեալ (հմմտ Յհ 10.22):

Մակարայեցիներու առաջին գիրքը տաճարի մաքրագործման կը կապէ տօնին հրահանգը, ըսելով՝ թէ զայն պէտք է տօնեն ցնծութեամբ եւ ուրախութեամբ, ուրքը օր (տե՛ս Ա.Մկ 4.36-59): Իսկ Մակարայեցիներու Բ. գիրքը կը հրահանգէ զայն տօնել ճիշդ Տաղաւարահարաց տօնի օրերուն պէս, յիշելու համար թէ ի՛նչպէս անցնող երեք տարիներուն լեռներու ծերպերուն ու քարայրներուն մէջ կը կատարէին իրենց պաշտամունքը, որուն համար ալ պէտք էր տօնը ծաղկեցնել գեղեցիկ ծառերու ճիւղերով եւ արմաւենիի ոստերով (տե՛ս Բ.Մկ 10.1-8): Տաղաւարահարաց տօնէն, ինչպէս նաեւ Զատիկէն ու Պենտէկոստէէն, անոր տարբերութիւնը կը կայանար հոն՝ որ կարելի էր տօնը կատարել նաեւ Երուսաղէմէն դուրս ռեւէ տեղ:

Բացի ծառերու ոստերով զարդարուելէն եւ «Ալէլուիա» Մաղմուններուն (111-118) երգուած ատեն զանոնք ձօճելէն, տաճարին լուսավառութիւնը եւս Տաղաւարահարաց տօնը կը յիշեցնէր, թէպէտ կապուած էր Մակարայեցիներու Ա. գիրքին մէջ նկարագրուած այն կէտին, ուր կ'ըսուի՝ թէ տաճարը մաքրելէ ետք, ուրիշ սուրբ սպասներու կարգին ներս տարին «լոյսի աշտանակը», «ճրագներ վառեցին եւ տաճարը լուսաւորեցին» (Ա.Մկ 4.49-50): Ասոր հետեւողութեամբ, ամէն մէկ Հրեայ իր տան մէջ մոմեր կամ ճրագներ կը վառէր, ուրկէ կու գայ այս տօնին ուրիշ մէկ անունը՝ «ճրագներու Տօն»:

Առանձին տօներու կարգին անհրաժեշտ է նաեւ յստակ գաղափար մը ունենալ Շաբաթ օրուան մասին, որ տօնական իմաստ եւ յատուկ նշանակութիւն ունէր, եւ որուն կապուած են, ինչպէս գիտենք, շատ մը պատուէրներ:

Նոր Տարուան («Փողերու Յիշատակ» կամ «Փող հնչեցնելու յիշատակ») մասին խօսած ատեն ակնարկեցինք, որ ռեւէ Շաբաթ օր «սուրբ» էր: Միւս կողմէ գիտենք, որ Շաբաթը սուրբ պահելու այս հրահանգը կու գայ տասնաբանեայ պատուիրաններէն (Ել 20.8-11): Բայց անոր ծագումը վստահաբար շատ աւելի հին է: Օրինակ, դեռ

տասնաբանեան ստանալէ իսկ առաջ՝ մանանայով կերակրուելու դրուագին մէջ կը տեսնենք «Տիրոջ սուրբ Շաբաթը» բացատրութիւնը եւ պատուիրանին գործնական կիրառութիւնը (տե՛ս Ել 16.10-31):

Շատ աւելի առաջ եւս, նոյնիսկ նախքան Աբրահամ, շաբաթը եօթը օրերու բաժնելու դրութիւնը ծանօթ էր Միջին Արեւելքի կարգ մը երկիրներուն մէջ: Իսկ ատիկա բնականօրէն կապուած էր հնագոյն օրացոյցին, որ իր կարգին կապուած էր լուսնի ծնունդներուն եւ լրումներուն կանոնաւոր դրութեան, որով 28 (կամ 29) օրերէ կազմուած ամսուան մէջ լուսինը իր լրումին կը հասնէր ճիշդ կէսին՝ 14-րդ օրը: Իսկ այս 14 օրերը կրնային կիսուիլ երկու եօթնեակ-ներու (կամ շաբաթներու), իբրեւ առաջին քառորդ եւ վերջին քառորդ լուսնի:

Իսկ ուրկէ՞ կու գայ իւրանքանչիւր եօթներորդ օրուան կապուած կրօնական նշանակութիւնը: Կարգ մը ժողովուրդներու քով անիկա հաւանաբար կու գայ լուսնին կապուած պաշտամունքին: Աբրահամ նահապետ եւս, նախքան Միջագետքի Ուր քաղաքէն դէպի Խառան մեկնումը, եւ Աստուծոյ յայտնութիւնը ունենալէ առաջ, հաւանաբար լուսնի պաշտամունքին հետեւող մըն էր¹⁷:

Շաբաթ անունը Եբրայերէն լեզուին մէջ կը նշանակէ՝ հանգիստ, դադար¹⁸: Հետաքրքրական է դիտել, որ հնագոյն

¹⁷ Լուսնի պաշտամունքը անշուշտ պաշտօնապէս ճանչցուած չէր Հրէից մէջ. բայց Քանանի մէջ ծանօթ կրօն ըլլալով՝ շուտով հետեւողներ ունեցաւ իրենց մէջ, եւ մինչեւ Բաբելոնի գերութեան շրջան՝ անոր հետքերը կը տեսնենք: Այսպէս, օրինակ, Բ.Օրինաց գիրքը բացարձակապէս կ'արգիլէ եւ մահապատիժ կը սահմանէ անոնց՝ որոնք պաշտամունք կը մատուցանեն օտար աստուածներու, «արեգակին կամ լուսնին, կամ երկինքի որեւիցէ զարդերուն [կամ՝ զօրքին]» (տե՛ս 17.2-7): Օրէնքի այս գիրքին հիմամբ, Ք.Ա. 621-ին Յովսիա թագաւոր իր բարեկարգութիւններուն մէջ առաջին գործ ըրաւ՝ օտար պաշտամունքներու կարգին ջնջել նաեւ «արեգակին ու լուսնին եւ [տասներկու] կենդանակերպներուն ու երկինքի բոլոր զօրութիւններուն խունկ ծխողները» (տե՛ս Դ.Թգ 23.1-5):

¹⁸ Ըստ ոմանց՝ Շաբաթ անունը կապ ունի բաբելոնական «Շաբբաթում» (shabbatum) անունին հետ, որ իւրաքանչիւր լուսնային ամսուան 14-րդ օրը կատարուող, www.hygradaran.weebly.com 50

տասնաբանեային մէջ Շաբաթը պահելու ռեւէ կրօնական պատճառ չէ տրուած: Պարզապէս կ'ըսուի. «Վեց օր պիտի գործես, ու եօթներորդ օրը հանգստանաս» (Ել 34.21): Շեշտուածը կարծէք մարդկային հանգիստի անհրաժեշտութիւնն է: Տասնաբանեային երկրորդ Օրինապաշտ խմբագրութեան մէջ Շաբաթի պահպանութիւնը կապուած է Եգիպտոսի մէջ ծառայութեան յիշատակին, եւ նկատուած է Տիրոջ կողմէ շնորհուած ազատութեան նշանակ. «Հանգստութեան օրը զգուշութիւն ըրէ որ սուրբ պահես, ինչպէս քու Տէր Աստուածդ քեզի պատուիրեց: Վեց օր պիտի աշխատիս ու բոլոր գործդ պիտի ընես. բայց եօթներորդ օրը Տիրոջը՝ քու Աստուծոյդ հանգստութեան օրն է. [այն օրը] գործ մը չգործես, ո՛չ դուն, ո՛չ քու որդիդ, ո՛չ քու աղջիկդ, ո՛չ քու ծառայ ու աղախինդ, ո՛չ քու եզդ ու էջդ կամ ռեւէ անասունդ, ո՛չ ալ քու տանդ մէջ եղող օտարականը. որպէսզի քու ծառայ կամ աղախինդ ալ քեզի պէս հանգստանայ: Եւ միտքդ բեր՝ որ դուն Եգիպտոսի երկրին մէջ ծառայ էիր, եւ քու Տէր Աստուածդ զօրաւոր ձեռքով ու բարձր բազուկով քեզ հոնկէ հանեց: Անոր համար քու Տէր Աստուածդ քեզի պատուիրեց՝ որ հանգստութեան օրը պահես» (Բ. Յր 5.12-15): Իսկ Տասնաբանեային երրորդ Քահանայական խմբագրութեան մէջ, որ ամենէն ընդհանրացածն է, Եգիպտոսի ծառայութեան ակնարկութիւն չկայ, այլ հանգիստը կը բացատրուի Աստուծոյ օրինակով, որ վեց օր ստեղծագործելէ ետք՝ եօթներորդ օրը հանգիստ ըրաւ եւ նուիրագործեց այդ օրը (Ել 20.3-11): Ելից 31-րդ գլուխին մէջ նոյն պատուերը կը կրկնուի՝ դարձեալ նոյն բացատրութեամբ, բայց Շաբաթը կը կոչուի եւ կը նկատուի «յաւիտենական

այսինքն՝ լուսնի լրման կապուած տօն մըն էր: Բայց միայն անունն է կապը. որովհետեւ, նախ՝ բաբելոնեան շաբաթը հինգ օրերէ կը բաղկանար, փոխանակ եօթի, եւ ապա՝ Շաբթաթում կոչուած օրերը անպայման գործէ դադարելու օրեր չէին անոնց համար, ինչ որ ցոյց կու տայ՝ թէ Շաբաթն ու Շաբթաթումը իմաստով շատ հեռու են իրարմէ:

նշան» մը՝ Աստուծոյ կողմէ, եւ «յաւիտենական ուխտ» իր ժողովուրդին համար. ուխտ մը՝ որ պէտք է պահել (12-17): Ասոր համար է որ Շաբաթը լուծողը մահապարտ կը նկատուէր եւ գործնապէս ալ մահապատիժի կ'ենթարկուէր (տե՛ս Թւ 15.32-36):

Օրերը հաշուելու եփրայական դրութեամբ՝ Շաբաթը կը սկսէր Ուրբաթ արեւնամուտէն եւ կ'երկարէր մինչեւ Շաբաթ երեկոյ, արեւմարի պահը: Նախընթաց օրը, այսինքն Ուրբաթը, կը կոչուէր՝ «պատրաստութիւն Շաբաթու»¹⁹, որովհետեւ Շաբաթ օր արգիլուած էր կրակ վառել, հաց կամ կերակուր պատրաստել եւ այլ գործեր կատարել. ուստի պէտք էր նախորդ օրուրնէ ամէն բան պատրաստել: Նոյնիսկ երկար ճամբորդութիւնը արգիլուած էր Շաբաթ օրով. միայն մէկ մղոն (շուրջ մէկ ու կէս քլմ.) արտօնուած էր, եւ կը կոչուէր «Շաբաթ օրուան մը ճամբայ» (տե՛ս Գրծ 1.12: Հմմտ Մտ 24.20):

Տաճարին կապուած երեք երեւոյթներ կային, Շաբաթին առնչուած.-

1.- Տաճարին մէջ ծառայութիւն ընող քահանաներն ու Ղեւտացիները Շաբաթ օրը կը սկսէին իրենց եօթնօրեայ ծառայութեան կարգը, եւ յաջորդ Շաբաթ կ'աւարտէին:

2.- Ամէն Շաբաթ օր քահանաներ Առաջաւորութեան նոր հացերը կը դնէին առաջաւորութեան սեղանին վրայ, վերցնելով եւ տեղւոյն վրայ ուտելով հիները (Ղւ 24.5-9):

3.- Նոյնպէս, իւրաքանչիւր Շաբաթ օր՝ սովորական օրերու գոհերէն զատ՝ կարելոր երկու գառնուկներ կ'ընծայուէին իբրեւ ողջակէզ, գինիով եւ իւղազանգ նաշիհով միասին (Թւ 28.9-10):

Քրիստոսի ժամանակներուն, րաբբիական դպրոցներու կամ ուսուցումներուն մէջ Շաբաթ օրուան պահպանութեան

¹⁹ Արդէն, ըլլա՛յ Ուրբաթ անունը, որ Ասորերէնէ կու գայ, ըլլա՛յ անոր համապատասխան Յունարէն անունը, *παρα-σαββατη* (=բարասաբեի՛), կը նշանակեն՝ «պատրաստութիւն»:

համար ա՛յնքան մանրամասն պատուերներ մշակուած էին²⁰, որ անիկա իսկապէս «բեռ» եղած էր: Քրիստոս Շաբաթ օրուան մասին իր ակնարկներուն մէջ «հայրերու» այս աւանդութեան ստրկական հետեւողութիւնը կը դատապարտէր, յայտարարելով՝ «Շաբաթը մարդուն համար եղաւ եւ ո՛չ թէ մարդը՝ Շաբաթին: Եւ հետեւաբար Մարդու Որդին Շաբաթին ալ Տէրն է» (Մր 2.27-28): Ասով Քրիստոս կու գար յայտարարելու՝ Շաբաթը պահելու կերպին աստուածային պահանջը, որ ա՛յնքան զօրեղ շեշտով ներկայացուած է յատկապէս Եսայիի մարգարէութեան մէջ (տե՛ս 1.13-15, 58.13-14):

Ի վերջոյ, կարելի է հարց տալ՝ թէ Շաբաթին պահպանութիւնը ի՞նչ նշանակութիւն կրնար ունենալ, որուն համար դրուած էր վերել յիշուած աստուածային բացարձակ պահանջը:

Առաջին նշանակութիւնը, կապուած ներկայ կեանքին, շաբթուան օրերէն մէկը Տիրոջ վերապահելն է՝ այդ օրը «սուրբ պահելով» այսինքն՝ զայն մարդկային գործերէն ազատ թողելով եւ Տիրոջ նուիրուած գործերով լեցնելով: Այլ խօսքով, զայն առանձնացնել միւս օրերէն, լեցնելու համար սիրոյ գործերով, բարեգործութեամբ, եւ Աստուծոյ փառաբանութեան նուիրելով:

Երկրորդ նշանակութիւնը վախճանաբանական է, կապուած հանդերձեալին: Ինչպէս Հին Կտակարանի բոլոր կարգերն ու հաստատութիւնները նախապատկերացումը կամ շուքն էին Քրիստոսով գալիք իրականութեանց (հմմտ Կղ 2.16-17: Եբր 9.8-12 եւ 23-24, 10.1), այնպէս ալ Շաբաթը ինչպէս ներկայիս քրիստոնէական եկեղեցիին համար՝ Կիրակին, որպէս հանգիստ՝ նախապատկերացումն է այն երանական հանգիստին որ դրախտային կեանքն էր՝ Աստուծոյ

²⁰ Օրինակի համար, բաբբիական մեկնութեան բերանացի աւանդութիւնները ի մի բերող Միշնա կոչուած ժողովածուին մէջ՝ երկու առանձին եւ ընդարձակ գլուխներ կան այս մասին:

ստեղծագործութեան բարութեան մէջ, եւ որմէ մարդը զրկուեցաւ իր անհնազանդութեամբ, բայց Աստուած ուզեց որ մարդիկ դարձեալ ճանչնան իր կամքը եւ այս կեանքի բովէն անցնելով՝ արժանանան իր հանգիստին, որուն պատկերն է Շաբաթ օրը, այսինքն՝ հանգիստի օրը (տե՛ս Եբր 3.7-19, 4.1-10):

ԵՐԲԱՅԱԿԱՆ ՏՕՆԵՐՈՒՆ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՀԱՄԱՐ.-

1.- **ԶԱՏԻԿ** կամ **ՊԱՍԵՔ**: Մեր Զատիկը աստ՝ Ա.Կր 5.7: Ա.Պտ 1.18-19, եւ նոր սեղանը յերկինս՝ Ղկ 22.15-16:

2.- **ԲԱՂԱՐՁԱԿԵՐՔ**: Մեր անապական ծնունդը աստ՝ մկրտութեամբ, իբրեւ նոր մարդ՝ Ա.Կր 5.7-8: Եփ 4.22-24: Հմմտ Հռ 6.6: Կղ 3.8-10, եւ ի հանդերձելումն՝ Ա.Կր 15.42:

3.- **ՊԵՆՏԷԿՈՍՏԷ** կամ **ԵՐԱԽԱՅՐԵԱՅ ՏՕՆ**: Քրիստոնէութեան առաջին հունձքը աստ՝ Մտ 9.37-38: Հմմտ Յկ 1.18: Եկեղեցոյ հիմնադրութիւն:

4.- **ՆՈՐ ՏԱՐԻ** կամ **ՅԻՇԱՏԱԿԻ ՓՈՂՈՅ**: Աւետում նոր ժամանակի եւ ընտրեալներու կոչ: Մեզի համար նշանակութիւնը կրնայ ըլլալ՝ Քրիստոսով նոր ստեղծագործութեան մը նշումը (Նոր Ադամ), որով սկիզբ կ'առնէ փրկութիւնը, բայց որ իր կարգին տիպն է հոգեւոր ծննդեամբ նոր սկիզբին, որ Քրիստոսի երկրորդ գալուստով ծայր պիտի առնէ:

5.- **ՔԱԻՈՒԹԵԱՆ ՕՐ**: Տասը օր ետք – հազարամեակի աւարտին՝ բուն Սրբարան մուտքը®: Փող հնչելու տօնէն տասը օր ետք կատարուող այս տօնը կարծէք կը նշէ, թէ փրկութեան սկզբնաւորութենէն «հազարամեակ» մը ետքն է

որ տեղի պիտի ունենայ բուն փրկութիւնը, երբ Քրիստոս կատարեալ արդարութիւն պիտի հազցնէ փրկուածներուն՝ Երկնաւոր Սրբարանը մտնելով:

6.- ՏԱՂԱԻԱՐԱՀԱՐԱՑ ՏՕՆ: Վերջին հունձք, «երկրի արդիւնքը ժողովելու ատեն» (Ղւ 23.39) - Աշխարհի կատարածի հունձքը՝ Յտ 14.15-16, «երկրի բերքը» Աստուծոյ համար՝ Մտ 13.36-43: Հմմտ Ա.Թս 4.13-17: - Ութերորդ օրը՝ բացուող նոր «օրը», աներեկոյ եւ անվախճան:

7.- ՇԱԲԱԹ: Աստուծոյ հանգիստը՝ Եբր 3 եւ 4 գլուխներ:

ՄԵԿՆՆՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍ 13.44-52ի²¹

Այսօրուան մեր եկեղեցւոյ ճաշու այս ընթերցման մէջ առնուած երեք առակներն ալ Աստուծոյ արքայութեան մասին կը խօսին: Քրիստոսի առաքելութեան գլխաւորագոյն տարրն էր՝ երկինքի վերահաս արքայութեան հռչակումը: Իր քարոզութիւնը սկսաւ այդ յայտարարութեամբ, շարունակեց՝ միշտ անոր տեսլականը փոխանցելով եւ խորացնելով, եւ իր առաքելութիւնը աւարտեց՝ իրեններուն միտքերը այդ արքայութեան սպասումին ուղղելով: Բայց յատկանշական է, որ Քրիստոս տեսական բացատրութիւններ չտուաւ այդ թագաւորութեան ինչ եւ ինչպէս ըլլալուն մասին: Իր միտքը պարզեց առակներով, արքայութիւնը իր ունկնդիրներու միտքերուն առջեւ պատկերացուց առակներով:

Երբ այդ առակները աչքի առջեւ կ'ունենանք, կը տեսնենք որ անոնք քարացած միակ պատկեր մը չեն տար մեզի, այլ կը ներկայացնեն երեւոյթներու գումար մը, աւելի շուտ՝ շարք մը, որ տեղէ մը սկիզբ կ'առնէ՝ հասնելու համար իր կատարումին: Այլ խօսքով, աւետարաններուն մէջ պատկերուած արքայութիւնը կայական, անշարժ վիճակ մը ցոյց չի տար. անիկա զարգացող ընթացք մըն է: Այդպէս ալ, անիկա նախ կը ներկայանայ իբրեւ անհատ մարդոց սրտին մէջ սերմանուող ցորենի հատիկ (Մտ 4.26, 3-9, 14-20), մարդուն ներսիդին սկիզբ առնող իրականութիւն (Ղկ 17.21), որ հետզհետէ կ'արտաքնանայ, մանանեխի հատիկին պէս աճիլ եւ տարածուիլ կը սկսի (Մտ 13.31-32), ուրիշներու կեանքը կը սկսի խմորել թթխմորի պէս (Մտ 13.33), եւ ուղկանի մը պէս կը նետուի ամբողջ աշխարհ՝ իր մէջ առնելու համար բոլոր մարդիկը (Մտ 13.47-50), եւ զանոնք հրաւերելու համար Աստուծոյ պատրաստած փառաւոր կոչունքին (Մտ 22.1-14): Ուստի, եթէ ուզենք ուրուագծել, առաջին աստիճանի վրայ՝

²¹ Խօսուած Անթիլիաս, 27-30 Մարտ, 1984:

արքայութիւնը Աստուծոյ ընծայուած անհատ մարդուն սիրտին մէջ հաստատուած հաւատքը եւ հնազանդութիւնն է երկնաւոր թագաւորին՝ Քրիստոսի. ապա, երկրորդ աստիճանի վրայ՝ Աւետարանի հետզհետէ սփռումով հաւատքի եւ հնազանդութեան կանչուածներու մարմինն է, այսինքն՝ Եկեղեցին, իբրեւ Թագաւորին խոստացուած Հարսը՝ որ անոր հետ միացած մէկ մարմին է. եւ երրորդ աստիճանի վրայ, Քրիստոսի երկրորդ գալուստով՝ այդ թագաւորութեան հաստատումը ամբողջ աշխարհի մէջ՝ աշխարհին ենթարկումովը յաղթական թագաւորին: Առաջին աստիճանը սկիզբն է պարգապէս, երկրորդը՝ ներկայ ժամանակներուն մէջ անոր արմատաւորումը, իսկ երրորդը՝ գալիք յաւիտեաններուն մէջ անոր յաղթական տիրապետութեան փառքով պսակումը:

Այս համայնապատկերը գծելը անհրաժեշտ նկատեցինք, որովհետեւ այսօրուան ընթերցուածէն մեզի խօսող երեք առակները կարծեք մեզի կը ներկայացնեն վերոյիշեալ երեք աստիճանները կամ հանգրուանները, որոնք անմիջականօրէն կը կապուին այսօրուան մեր խորհրդածութեան հետ: Տեսնենք իւրաքանչիւրին յատկանշական տարրերը, լսենք անոնց բացատրութիւնը եւ բանանք իւրաքանչիւրին անմիջական առնչութիւնը՝ հոգեւոր կրթութեան նուիրեալ մշակներուն՝ մեզի հետ:

1.- Արտի մէջ գանձ գտնող մարդու առակին մէջ տիպարը աղքատ մըն է. ատիկա կը հետեւցնենք անկէ՝ որ հողակտոր մը գնելու համար ստիպուած կ'ըլլայ իր ամբողջ ունեցուածքը ծախելու: Երկրորդ, գանձու պատահաբար կը գտնէ արտին մէջ, առանց փնտռտուքի: Երրորդ, գտած գանձը խնամքով կը ծածկէ՝ որպէսզի ուրիշին ձեռքը չանցնի անիկա, եւ ուրախութենէն՝ կ'երթայ կը ծախէ ինչ որ ունի, տիրանալու համար գանձին:

Այս առակը, ինչպես որ մենք կը հասկնանք զայն, կարելի է մեկնել քանի մը կերպերով, որոնք նոյն իմաստին տարբերակներն են.-

Ա.- Առաջին մեկնութեամբ զանձը երկինքի արքայութիւնն է, որուն թագաւորը՝ Քրիստոս, կու գայ զայն հոչակելու եւ մարդիկը հրաւիրելու որ յայտնաբերեն եւ իրենց մէջ ընդունին զայն: Արտը՝ ուր այդ զանձը պահուած է՝ Քրիստոս է, որ մարդացու, հողեղէն մարմին եղաւ՝ մարդոց հետ ու մարդոց մէջ ապրելու եւ շրջելու համար իբրեւ երկնից արքայութեան հոգեղէն անպարունակելի զանձին մարմնաւոր պարունակը: Աղքատ մարդը ան է՝ որ կալուած կամ հարստութիւն չունի: Գիտենք որ Քրիստոս առ հասարակ երանի կու տայ աղքատներուն, որովհետեւ անոնք երկրաւոր ինչքեր չունենալով՝ ասելի դիրութեամբ ու պատրաստակամութեամբ իրենց սիրտերը կրնան կապել երկինքի արքայութեան, քան անոնք՝ որոնք հոգիով ու սրտով իրենց դիզած հարստութեան կապուած են, անոր մէջ տեսնելով իրենց ապահովութիւնը, իրենց զանձը (Մր 10.17-25: Հմմտ Ղկ 12.16-21): Բայց Քրիստոս մասնաւորաբար երանի կու տայ հոգիով աղքատներուն՝ ըսելով. «Երանի հոգիով աղքատներուն, որովհետեւ անոնց է երկինքի արքայութիւնը» (Մտ 5.3), որովհետեւ հոգիով աղքատները անոնք են՝ որոնք այս աշխարհը եւ անոր հարստութիւնները չունին իրենց սիրտերուն մէջ. հետեւաբար ծանրաբեռնուած չեն աշխարհիկ հոգերով, թեթեւ են իրենց սիրտով եւ պատրաստ են արքայութեան աւետիսը ընդունելու: զանձը գտնելէն ետք, մարդը զայն առժամաբար զայն կը ծածկէ: Այս ծածկելը նախ կը նշանակէ՝ ամէն ապահովութիւն ձեռք առնել եւ ամէն միջոց ի գործ դնել՝ զայն ձեռքէ չփախցնելու համար, եւ երկրորդ՝ որ արքայութիւնը առայժմ տակաւին ծածկուած կը մնայ իբրեւ ներքին՝ հոգեկան իրականութիւն: Այն սիրտը ուր Քրիստոս կը թագաւորէ՝ իր մէջ արքայութիւնը ունի, որովհետեւ Արքան իր մէջ ունի: Բայց ասիկա արքայութեան

վերջնական գալուստը չէ, որուն կը սպասենք դեռ՝ միշտ տիրականօրէն խնդրելով. «Եկեցէ արքայութիւն քո»: Եւ սակայն արքայութիւնը սկսած է արդէն՝ իբրեւ հաւատացող հոգիներուն մէջ տիրող, Աստուծոյ կամքին հնազանդութեամբ անոնց ներսիդին իր տիրապետութիւնը հաստատած իբրեւ իրականութիւն, որուն ակնարկելով է որ Քրիստոս կ'ուտէր. «Աստուծոյ արքայութիւնը ձեր ներսիդին է» (Ղկ 17.21): Երթալ ինչքերը ծախել՝ կը նշանակէ՝ հետեւիլ Քրիստոսի ամէն ինչ ձգելով, ամէն բանէ հրաժարելով: Անհրաժեշտ է դիտել, որ մարդը ուրախութենէն է որ կ'երթայ եւ ամէն ինչ կը ծախէ: Ամէն բան թողուլը, ամէն բանէ հրաժարիլը ուրախութեամբ յանձն առնուած զոհողութիւններ են՝ մեծագոյն գանձը ձեռք բերելու համար: Ի վերջոյ, մարդը կը գնէ արտը. եթէ արտը Քրիստոս էր, ինչպէս ըսինք, զայն գնել՝ կը նշանակէ իր վրայ առնել Քրիստոսի օրինակը, հետզհետէ աւելի իր վրայ հագնիլ զայն (Հո 13.14), մինչեւ կատարելապէս իր սեփականը դարձնէ զայն:

Բ.- Երկրորդ մեկնութեամբ գանձը՝ Քրիստոս է, *«Քրիստոսի փառքին աւետարանին լոյսը»*, եւ Քրիստոսով յայտնուած *«Աստուծոյ փառքին գիտութեան լոյսը»* (հմմտ Բ.Կր 4.4, 6): Արտը այս պարագային Քրիստոսի հաւատացած մարդն է որ ինքզինքը պահարան դարձուցած է երկնաւոր գանձերուն: *«Այս գանձը մենք ունինք կաւէ ամաններու մէջ»* կ'ըսէ Պօղոս առաքեալ (Բ.Կր 4.7), ակնարկելով մեր մարմիններուն, որոնք աստուածային գանձը իրենց մէջ կրող կաւեղէն անօթներ են: Գանձը գտնող մարդը պէտք է ըլլայ դարձեալ նոյն ինքը, որ իր անձին մէջ որպէս երկնաւոր գանձը ներպարունակող արտ՝ պիտի յայտնաբերէ գանձը: Հաւատքի ճամբով այդ անօթներուն մէջ յայտնուած գանձը պէտք է ծածկուած մնայ, այսինքն՝ մարդ զգոյշ պէտք է ըլլայ զայն աշխարհին չբանալու եւ չկորսնցնելու: Այնուհետեւ ուրախութենէն պէտք է երթայ իր բոլոր ունեցածը ծախելու, այսինքն՝ *«ուրանայ իր անձը եւ խաչը առնէ ու հետեւի»*

Քրիստոսի (Մտ 16.24): Այս ամբողջական ինքնամոռացումին վրայ կատարեալ նուիրումն է այն գինը՝ որ ենթական պետք է վճարէ գնելու համար արտը, այսինքն՝ իր անձը: Ատոր համար էր որ Քրիստոս կ'ըսէր. «Ով որ ինձի համար իր անձը կորսնցնէ՝ այժտի գտնէ զայն» (Մտ 16.25):

Գ.- Ի վերջոյ, երրորդ մեկնութեամբ, գանձը դարձեալ Քրիստոսով երկրի վրայ սկսած երկինքի արքայութիւնն է: Արտը այս պարագային, եկեղեցին է որ իբրեւ մարմին իր մէջ ունի զՔրիստոս եւ Քրիստոսով՝ արքայութեան անկորուստ գանձը: Այդ գանձը գտնողները եկեղեցւոյ հաւատքի որդիներն են, որոնք արքայութեան աշակերտած իբրեւ դպիրներ՝ կը փութան զայն իրենց սեփականը դարձնել, բայց առաջին հերթին զայն այնտեղ՝ եկեղեցւոյ կեանքին մէջ ծածկուած կը պահեն առժամաբար, այսինքն այս աշխարհի մէջ եւ ներկայ ժամանակին համար, մինչեւ Քրիստոսի գալուստը: Մինչայդ կ'ուրախանան այդ գանձին տէրը ըլլալու հեռանկարով, մինչեւ երթան իրենց բոլոր ունեցածը ծախեն, այսինքն՝ այս կեանքի օրերը Աստուծոյ ընծայելէ ետք մահուամբ ելլեն այս աշխարհէն, երթալ գնելու համար արտը, այսինքն՝ ժառանգելու համար երկնաւոր եկեղեցին, վերին Երուսաղէմը, եւ վերջնականապէս տիրանալու գանձին՝ Քրիստոսի յաղթական ու փառաւոր արքայութեան:

2.- Թանկագին մարգարիտ մը փնտռող վաճառականին առակը մեզի կը ներկայացնէ տիպար մը՝ վաճառականը, որ աղքատ չէ, ունեւոր մըն է, եւ ապա՝ ո՛չ թէ պատահականօրէն կը գտնէ, այլ իր գործին բերումով կը փնտռէ եւ կը գտնէ գեղեցիկ մարգարիտը: Նկատի պետք է առնել երկու բան.- նախ մարգարիտին բացառապէս թանկագին ըլլալը, որուն համար ալ վաճառականը պետքը կը զգայ իր ամբողջ ունեցածը ծախելու, եւ երկրորդ՝ այն պատրաստակամութիւնը որով կը ծախէ ամէն բան եւ կը գնէ այդ մարգարիտը:

Իմաստով՝ այս առակը ո՛չ մէկ տարբերութիւն ունի առաջինէն, բացի անկէ որ կը շեշտէ կամաւոր եւ գիտակից փնտռութի մը երեսը, եւ ատով իսկ կը մղէ մտածելու՝ թէ այս առակը առաւելաբար ուղղուած է Քրիստոսի աշակերտներուն, առաքեալներուն, անմիջական հետեւորդներուն, եւ մինչեւ այսօր բոլոր աշակերտողներուն. այսինքն անոնց՝ որոնք Քրիստոսի միացած են եւ անոր մարմինը՝ եկեղեցին կը կազմեն իբրեւ անդամներ. որոնք արդէն գիտակից են արքայութեան իսկական արժէքին, գիտեն թէ ինչպիսի մեծ ու թանկագին մարգարիտ մըն է անիկա, եւ ուստի պէտք է իրենց կեանքի փնտռութեամբ հետապնդեն եւ ամէն ինչ տալով տիրանան անոր:

3.- Ծով նետուած ուռկանի առակը կը պատկերացնէ արքայութիւնը իր ներկայ եւ ապագայ երկու երեսներով: Ներկայ երեսը եկեղեցւոյ կեանքն է: Եկեղեցին ունի իր ձկնորսները՝ առաքեալներու հետեւորդ քարոզիչները, որոնք Աստուծոյ խօսքին քարոզութեան ուռկանը նետած են ու կը նետեն աշխարհի ծովուն մէջ, եւ այդ ուռկանով եկեղեցւոյ մէջ կ'առնեն անխտիր ամէն տեսակի ձուկ, այսինքն՝ աշխարհի բոլոր ժողովուրդներէն, թէ՛ մեծ եւ թէ՛ փոքր, թէ՛ լաւ եւ թէ՛ անպէտ, թէ՛ բարի եւ թէ՛ չար, առանց ընտրութիւն կամ դատաստան ընելու: Ընտրութիւնը կամ դատաստանը՝ ապագայ երեսն է, աշխարհի կատարածին տեղի ունենալիք, երբ *«հրեշտակներ պիտի ելլեն եւ չարերը արդարներուն մէջէն պիտի գատեն»*, ճիշդ ինչպէս որոմներու առակով ալ պատկերացուցած է Քրիստոս (Մտ 13.37-43):

Այս երեք առակները հաւանաբար Քրիստոս առանձին իր աշակերտներուն խօսեցաւ, եւ իրենց էր որ ուղղեց հարցումը. *«Այս բոլորը հասկցա՞ք»*: Անոնք պատասխանեցին. *«Այո՛, Տէ՛ր»*: Նախապէս շատ մը առակներ չէին հասկցած եւ Քրիստոս ժողովուրդէն մեկուսի իրենց բացատրած էր անոնց իմաստը, որովհետեւ նոյնիսկ եթէ բոլորին տրուած չէր գիտնալ, սակայն իրենք՝ առաքեալները եւ մտերիմ

աշակերտները պետք էր հասկնային, որովհետեւ իրենց տրուած էր գիտնալ երկինքի թագաւորութեան գաղտնիքներն ու խորհուրդները (Մտ 13.11): Եւ որովհետեւ հասկցած էին առակներուն միտք բանին, Քրիստոս անոնց ըսաւ. *«Ատոր համար, երկինքի արքայութեան աշակերտած ամէն դպիր, նման է տանտիրոջ մը որ իր գանձէն կը հանէ նորը եւ հինը»* (Մտ 13.52):

Աստուածաշունչին մէջ «դպիր» կը նշանակէ՝ Օրէնքի ուսուցիչ: Բարելոնի գերութեան դարձէն (538 Ն.Ք.) ետք երեւան եկած, ասոնք որոշ ընտանիքներ էին՝ որոնց գործն էր Մովսիսական Օրէնքը պահել ու փոխանցել, ինչպէս նաեւ ուսումնասիրել եւ ուսուցանել: Ուստի օրէնսգէտ, Մովսիսական Օրէնքին քաջատեղեակ եւ մեկնաբան մարդն է դպիրը: Քրիստոս կ'ըսէ որ երկինքի արքայութեան աշակերտած մէկը՝ արքայութեան խորհուրդներուն քաջատեղեակ եւ անոնց մեկնաբան եւ պատգամախօս-ուսուցիչ դպիր մըն է, որ կը նմանի տանտիրոջ. այսինքն՝ որ ինքզինքը չ'զգար իբրեւ պաշտօնեայ, այլ իբրեւ տանուտէր, իբրեւ ժառանգորդ երկինքի արքայութեան եւ տէր անոր խորհուրդներու գանձին, որմէ կը հանէ՝ այսինքն՝ որոնց ուսուցումը կը կատարէ իշխանութեամբ ու հեղինակութեամբ, իր երկնաւոր Ուսուցիչին եւ արքայութեան հարազատ Տանուտէրին՝ Քրիստոսի օրինակով (Մտ 7.29):

«Նորը» եւ «հինը» բացատրութիւնները կրնան ակնարկութիւն ըլլալ նոյն այս 13-րդ գլխուն 35-րդ համարին մէջ յիշուած Մաղմոսին խօսքերուն. *«Առակներով պիտի բանամ բերանս. աշխարհի սկիզբէն ի վեր ծածկուած բաները պիտի յայտնեն»* (Մղ 77.2), որ Մատթէոս աւետարանիչ Յիսուսի կը պատշաճեցնէ: Մինչեւ Քրիստոս, ծածկուած այդ խորհուրդները «հին» կը կոչուին, որովհետեւ աշխարհի գոյութենէն ալ առաջ անոնք սահմանուած էին արդէն: Բայց միաժամանակ «նոր» կը կոչուին, որովհետեւ միայն նոր է որ կը յայտնուէին Քրիստոսով: Այս իմաստով «հին»ը նաեւ Հին

Կտակարանն է, իսկ «նոր»ը՝ Նոր կտակարանը, ուր Քրիստոսով բացայայտուած են Աստուծոյ թագաւորութեան վերաբերեալ խորհուրդները:

Երբ վերոյիշեալ առակներուն եւ Քրիստոսի տուած եզրակացութեան առնչութիւնը ուզենք տեսնել մեր անձերուն եւ մանաւանդ հոգիներու մշակութեան կոչուած ուսուցիչներու գործին, առաքելութեան հետ, հետեւեալ քանի մը ճշմարտութիւնները կը հանդիպին մեր միտքերուն:

Ա.- Ամէն մէկ հոգեւոր մշակ՝ առաջին հերթին արքայութեան աստուածաշնորհ գանձին յայտանբերողը պէտք է ըլլայ՝ Քրիստոսի անձին ու կեանքին մէջ: Երկինքի արքայութեան պիտի աշակերտի՝ ուղղակի Քրիստոսէ առնելով եւ սորվելով, որովհետեւ ա՛ն է իր ուսուցիչը եւ իր կատարեալ օրինակը, յարացոյցը: Ա՛ն է աղբիւրը եւ կենդանարար ջուրը որմէ ինք՝ իբրեւ աշակերտ՝ պիտի մատրուակէ Աստուծոյ ծարաւ հոգիներուն: Ա՛ն է երկնային անկապուտ գանձին գանձատունը. անկէ առնելով է որ հոգեւոր մշակը պիտի մատակարարէ մեծին ու փոքրին, մանաւանդ հոգիով աղքատներուն, Աստուծով հարստանալու ձգտող հոգիներուն եւ մանուկներուն. այլ խօսքով՝ այդ գանձը անոնց հոգիներուն արտին մէջ պէտք է ծածկէ մինչեւ անոնք ուրախութիւնը զգան հետեւելու եւ ամէն գնով անոր տիրանալու:

Բ.- Ամէն մէկ հոգեւոր մշակ՝ երկինքի արքայութեան աշակերտած տանտէր դպիր մըն է: Անիկա ոչ միայն գանձը յայտնաբերած կամ գտած մարդը պէտք է ըլլայ, այլ նաեւ՝ զայն իւրացուցած. ի՛րը դարձուցած, այնպէս որ՝ Յիսուսի խօսքով, կարենայ «իր գանձէն» հանել նորն ու հինը: Ասիկա, ինչպէս գիտենք, ճշմարիտ ուսուցչութեան առաջին անհրաժեշտ պայմանն է: Եթէ ռեւէ դասատու ուսուցիչի համար ճշմարիտ է որ նիւթը լաւ պէտք է գիտնայ, հոգեւոր մշակին համար, առաւել չափով ճշմարիտ է ասիկա: Աստուծոյ արքայութեան խորհուրդները բաց գիրք պէտք է

ըլլայ իրեն համար: Եւ ատոր համար ալ, ինք պէտք է մնայ յաւիտենական աշակերտը, յարատեւ ընթերցումը, Աստուածաշունչ սերտողութիւնը, ճշմարիտ մեկնութեան փնտոտութիւնը իր մնայուն զբաղմունքը պէտք է ըլլան, որպէսզի գանձարանը մնայ մի՛շտ լեցուն, եւ ինք հարազատ տանտիրոջ մը ազատութեամբ եւ համարձակութեամբ կարենայ իր գանձէն հանել Աստուծոյ կամքին յայտնութեան մէջէն նորը եւ հինը, ազդու եւ օգտաշահ ընծայելով իր ուսուցումը:

Գ.- Ինչպէս ուսուցիչին գործը՝ մարդկային փորձառութեամբ գտնուած ճշմարտութիւնները փոխանցել է, այնպէս ալ հոգեւոր մշակին առաքելութիւնն է՝ Աստուծմէ յայտնուած եւ հոգեւոր կեանքի փորձառութեամբ գտնուած ճշմարտութիւնները փոխանցել:

Քրիստոս եկաւ իբրեւ մարմնացեալ ճշմարտութիւն, մարդը բերելու համար Աստուծոյ, եւ մարդուն փոխանցելու երկնային իրականութեանց մասին այն գիտութիւնը որ մարդիկ չէին կրնար գտնել իրենց միտքով, երկրաւոր կեանքի փորձով: Ուստի՝ յայտնեց ճշմարտութիւնը, որպէսզի մարդիկ այդ գերազանց գիտութեամբ ազատագրուին անգիտութեան սահմանափակութենէն, կաշկանդումէն, եւ իրենց միտքին հորիզոնները լայնցնելով՝ կարենան լայնօրէն ընդգրկել այս աշխարհի եւ այս կեանքի մասին ճշմարտութիւնը, եւ անով՝ կարենան ճիշդ գնահատական տալ իւրաքանչիւր երեւոյթի, կշռելով եւ դատելով գնայունն ու մնայունը, *«Ո՛չ թէ երեւոյթներէն դատելով, այլ ուղիղ դատաստան ընելով»* (Յի 7.24):

Դ.- Հոգեւոր մշակը աստուածաշնորհութեան վաճառաշահութիւնը սորվեցնող մըն է (հմմտ Ա.Տմ 6.6): Իւրաքանչիւր մարդ որ գեղեցիկ հետաքրքրութիւններ ունի եւ զանոնք գահոցնելու հետամուտ է՝ գեղեցիկ մարգարիտներ փնտոող վաճառական մըն է: Վաճառականը այն մարդն է, որ աշխարհին հետ մնայուն կապի, առեւտուրի մէջ է, կը

ճանչնայ այս աշխարհը եւ գիտէ լաւապէս գնահատել աշխարհային հարստութիւնները եւ արժէքները, եւ որքան աւելի լայն ըլլայ իր ծանօթութիւնը, այնքան աւելի լաւ կրնայ կշռել ու գնահատել բացառիկը, «պատուական մարգարիտի» մը իրական արժէքը, որուն քով միւսները կը տժգունին: Նոյնն է ճշմարտութիւնը՝ Աստուծոյ արքայութեան գնահատման պարագային: Անոր իսկական արժէքը այնքան լաւ չի կրնար հասկնալ ու գիտնալ ան՝ որ տեսարար շփման մէջ ըլլալով աշխարհին հետ՝ կրնայ երկնայինը երկրայիններուն հետ համեմատել եւ աւելի ամբողջական պատկերի մէջ տեսնել ու գնահատել գերազանցութիւնը առաջինին:

Հոգեւոր մշակին առաքելութիւնը՝ ուսուցանել է այս վաճառաշահութիւնը, մատնանշելով արքայութեան գերազանց արժէքը, զայն լաւագոյնս եւ ճշմարտագոյնս արժեւորելով՝ կեանքի մէջ, անհատ մարդու եւ ընկերութեան կեանքին մէջ, աշխարհային ժամանակաւոր եւ գնայուն արժէքներու համեմատութեան մէջ:

Ե.- Հոգեւոր մշակին առաքելութիւնն է՝ հաւատքի ներշնչումով եւ սրտով փոխանցել իրեն վստահուած «աւանդը»: Ինչպէս գանձ փնտրողը ուրախութեամբ փութաց իր ինչքերը վաճառել եւ տիրանալ անոր, կամ թանգակին մարգարիտին հանդիպող վաճառականը, մեծ պատրաստակամութեամբ ամէն ունեցածը ծախելով գնեց զայն, այնպէս ալ մշակ-ուսուցիչը, եթէ գիտակցութիւնը եւ համոզումը ունի այդ գանձին, որուն տնտես եւ մատակարար կարգուած է, չի կրնար անտարբեր փոխանցող մը ըլլալ: Ուեւէ գանձ, աշխարհային թէ հոգեւոր, չի կրնար մեզ անտարբեր ձգել: Քանձը յոյզ, գրգիռ ու թրթիռ կու տայ անձին, սիրտը կը կապէ իրեն: Զուր տեղ չէ որ Քրիստոս կ'ըսէ. *«Ձեր գանձը ուր որ է՝ ձեր սիրտն ալ հոն պիտի ըլլայ»* (Մտ 6.21): Արդ, Քրիստոսի ուսուցումը տեսական չէ. կապուած է անձերու, մէկ կողմէ՝ Հօր Աստուծոյ, մարմնացեալ Քրիստոսի եւ մեր մէջ խօսող ու ներգործող Սուրբ Հոգիին, իսկ միւս կողմէ՝ մեր

անձերուն: Անձնական կապ եւ յարաբերութիւն է մեր հաւատքը, եւ անձնական այս կապը չի՛ կրնար միայն տեսութիւն մնալ: Հոգի է Աստուած եւ կը խօսի մեր հոգիներուն: Նախախնամող եւ սիրող Աստուծոյ մը պատկերն է որ ունինք, եւ մեր սիրով է որ կը կապուինք իրեն: Միտէ-սիրտ յարաբերութիւն մըն է ասիկա, եւ անոր մասին ուսուցումը այդ բաբախուն փորձառութեան թրթռուն աւանդումը պէտք է ըլլայ. անձնական վկայութիւն մը ուսուցիչին կողմէ, որ առանց սիրտի եւ զգացումի չի կրնար ըլլալ:

Ձ.- Ի վերջոյ, հոգեւոր մշակին մեծագոյն առաքելութիւնն է՝ իր անձով օրինակ հանդիսանալ իր սորվեցուցած ճշմարտութեանց: Գիտենք որ մեր երկնաւոր Վարդապետը նոյնը ըրաւ: Ճիշդ է որ իբրեւ մարմնացեալ Բան (Խօսք) անդադար քարոզեց, բայց նամանաւանդ սորվեցուց իր անձով: Ատով Յիսուս գեղեցկագոյն օրինակ մը եւ դաստիարակչական մեծագոյն սկզբունք մը տուաւ մեզի, թէ՛ ուսուցանելու լաւագոյն կերպը՝ ուսուցումը ճշմարտութիւնները սեփական օրինակով մարմնաւորել եւ այդ կերպով տպաւորելն ու դրոշմելն է աշակերտողներուն մէջ:

Բայց, ուսուցիչին մարմնաւորած օրինակը համոզիչ ըլլալով հանդերձ կրնայ իր ամբողջ զօրութիւնը չունենալ՝ եթէ գրաւիչ չըլլայ: Իսկ գրաւչութիւնը բան մըն է՝ որ կապ չունի ֆիզիքական երեւոյթներուն, արտաքին գեղեցկութեան կամ շքեղութեան հետ, այլ սիրտերը իրմով բռնկեցնող ու բռնող այն ներքին կրակին՝ որ կը կոչուի սէր եւ նուիրում: Միտոյ անդիմադրելի մղումով էր որ Քրիստոս աշխարհ եկած էր. *«Որովհետեւ Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ»* (Յհ 3.16): Միտոյ առաջնորդութեամբ ապրեցաւ երկրաւոր իր կեանքի իւրաքանչիւր վայրկեանը: Միտոյ սերմնացանը եւ սիրոյ

ուսուցիչը եղաւ ժողովուրդին մէջ, երբ զանոնք կերակրեց, հանգստացուց, բժշկեց եւ իրեն կանչեց, ըսելով. *«Ինձի՛ եկէք, ո՛վ յոգնածներ եւ ծանրաբեռնուածներ, եւ ես պիտի հանգստացնեմ ձեզ. իմ լուծս ձեր վրայ առէք եւ սորվեցէք ինձմէ»* (Մտ 11.28-29): Եւ իր կեանքի աւարտին, երբ կը պատրաստուէր իր կեանքը տալ իրեններուն եւ ամբողջ աշխարհին համար, ցոյց տալով թէ *«Չկայ աւելի մեծ սէր քան այն սէրը՝ որ ինքզինք կու տայ իր բարեկամներուն համար»* (Յհ 15.13), միաժամանակ յաւիտենական կտակ ձգեց իրեններուն՝ ըսելով. *«Նոր Պատուիրան մը կու տամ ձեզի, որ զիրար սիրէք, ինչպէս ես ձեզ սիրեցի»*: Եւ կ'աւելցնէր. *«Մարդիկ ասով պիտի ճանչնան թէ իմ աշակերտներս էք, երբ իրարու վրայ սէր ունենաք»* (Յհ 13.34-35):

Ահա մեծագոյն ուսուցումը մեծագոյն Ուսուցիչին, որ իր օրինակով հիմնական ուղեցոյցը տուաւ հոգիի բոլոր մշակներուն: Ուսուցումն ու կրթութիւնը սիրոյ բոլորում են եւ առանց սիրոյ չեն հասնիր իրենց ճիշդ նպատակին: Մենք եթէ Քրիստոսի մասին պիտի սորվեցնենք եւ Աստուծոյ թագաւորութեան ծանօթութիւնն ու հրաւերը պիտի տանք փոքրիկներուն, պէտք է միշտ յիշենք՝ թէ մեր դասերուն ընդմէջէն պէտք է միշտ ցոյց տանք Քրիստոսի սիրոյ դիմագիծը, որ կը խոնարհի դէպի մեզ, եւ յատկապէս կը խոնարհի դէպի մանուկները՝ զանոնք իր գիրկը առնելու եւ իր սիրոյն մէջ աճեցնելու համար: Չէ՞ որ քրիստոնէական դաստիարակութեան գերագոյն նպատակն է՝ մարդիկը Քրիստոսի կատարեալ նմանութեան բերել, Քրիստոսի նկարագիրը կերտել անոնցմէ իւրաքանչիւրին մէջ, *«զՔրիստոս հագնիլ»*, ինչպէս կ'ըսէ Պօղոս առաքեալ (Հռ 13.14), *«մինչեւ բոլորս ալ հասնինք հաւատքի մէկ միութեան եւ Աստուծոյ որդիին ճանաչումին, կատարեալ մարդու աստիճանին՝ Քրիստոսի կատարելութեան հասակին չափով»* (Եփ 4.13): Մարդկային հոգին մինչեւ որ սիրով չբռնկի, սերէն չբռնուի՝ ճիգ չ'ըներ ինքզինք վերափոխելու, նորոգուելու,

նո՛ր անձ եւ նո՛ր ստեղծուած դառնալու, ինչպէս որ Քրիստոս կ՛ուզէ որ ըլլանք իւրաքանչիւրս: Միայն սէ՛րն է որ մարդս կը մղէ իր հին եւ-ը մոռնալու եւ ամբողջական հոգեփոխութեան, հոգիով նորոգուելու եւ թարմանալու՝ մանուկի մը պէս, ինչպէս Քրիստոս օրինակ տուաւ եւ պայման դրաւ՝ Աստուծոյ արքայութիւնը մտնել կարենալու համար: Եւ արդէն, Աստուծոյ արքայութիւնը նախ մարդոց ներսիդին կը սկսի, ինչպէս տեսանք, այսինքն՝ նախ սիրտերուն մէջ սկիզբ կ՛առնէ՝ երբ մարդուն սիրտը Քրիստոսով կը տիրապետուի, երբ Քրիստոս այնտեղ կը բազմի իբրեւ Տէր եւ Թագաւոր, սիրոյ, արդարութեան եւ խաղաղութեան իր հովանիին տակ առնելով իրեն յանձնուած սիրտը:

Այո՛, Աստուծոյ արքայութիւնը սիրոյ թագաւորութիւնն է, իսկ այդ թագաւորութեան իւրաքանչիւր քարոզիչ ու հոգեւոր մշակ, անոր Թագաւորին՝ Քրիստոսի դեսպանն է, անոր առաքեալը (Բ.Կր 5.20): Ինչպէս որ Քրիստոս ինք կ՛ըսէր. «Ով որ զիս տեսաւ՝ Հայրը տեսած եղաւ» (Յհ 14.9), այնպէս ալ մենք, մեզմէ իւրաքանչիւրը պէտք է կարենայ ըսել. «Ով որ զիս տեսաւ՝ իմ Տէրս՝ Քրիստոսը տեսաւ»: Միւրոյ մագնիսն է, սիրոյ գրաւչութիւնն է գաղտնիքը ուսուցման յաջողութեան եւ մեծագոյն առաքելութիւնը Աստուծոյ գիտութեան աշակերտած դպիրին, որ հոգիներու դաստիարակութեան գործին մէջ նետուած է:

Ահա մեր խորհրդածութիւնները՝ Մատթէոսի Աւետարանէն այսօրուան ընթերցուածին կապակցութեամբ, որ հոգեւոր դաստիարակութեան մեր առաքելութեան կապուած այսքան եւ դեռ այնքան գեղեցիկ մտածումներու դուռ կը բանայ խուզարկու միտքերուն առջեւ: Բայց մտածումները միայն ճանապարհը կը մատնանշեն. կարելորը՝ այդ ճանապարհէն քալելը եւ անդու ծառայութեամբ ու Սուրբ Հոգիի գործակցութեամբ՝ Աստուծոյ արքայութեան բերած արդարութեան, խաղաղութեան ու խնդութեան ակտիւսը հասցնելն է Աստուծոյ բացուող

**հոգիներուն: Անով է որ մենք կ'օրհնուինք եւ կը ճանչցուինք
որպէս Աստուծոյ օրհնեալ զաւակները (Ես 65.23):**

**ՀԱԶԱՐԱՄԵԱԿԸ
ԵՒ ԱՆՈՐ ԿԱՊՈՒԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Յայտնութեան գիրքին 20-րդ գլուխը կը խօսի այս աշխարհի վրայ Քրիստոսի եւ իր սուրբերուն հազարամեայ թագաւորութեան մասին, որմէ ետք ժամանակաւորապէս կապուած Սատանան վերստին պիտի արձակուի կարճ ժամանակի մը համար եւ վերջին փորձ մը պիտի ընէ բոլոր ազգերը մոլորեցնելու եւ Աստուծոյ դէմ ապստամբութեան մղելու իր օրինակով: Բայց ինք ալ եւ իր հետեւորդներն ալ կրակի լիճը պիտի ձգուին, եւ ապա նոր երկինք ու նոր երկիր պիտի հաստատուին:

Արդ, ի՞նչ է այս հազարամեայ թագաւորութիւնը: Ի՞նչպէս պէտք է հասկնալ զայն: Նախ ըսեմ, որ Յայտնութեան գիրքին 20-րդ գլուխը Նոր Կտակարանին մէջ միակ տեղն է ուր այս հազարամեայ թագաւորութիւնը կը յիշատակուի, եւ երկրորդ, անիկա որոշ հարցեր կը ստեղծէ, որոնք իրենց պատասխանը պէտք է ունենան: Այսպէս.-

1.- Քրիստոսի երկրորդ գալուստը եւ թագաւորութիւնը: Քրիստոս մէկ եւ միակ գալուստի մը եւ հաստատուելիք միակ թագաւորութեան մը մասին խօսեցաւ միշտ, մինչդեռ եթէ Հազարամեան ընդունինք՝ թէ՛ գալուստը երկու հանգրուաններու կը վերածուի եւ թէ՛ թագաւորութեան հաստատումը, որովհետեւ հաստատուելիք հազարամեայ թագաւորութիւնը դարձեալ առժամեայ հանգամանք կը ստանայ, երկրաւոր եւ դեռ մահկանացու բնոյթով, մինչեւ հասնի Սատանային վերջնական դատապարտութիւնը եւ կրակի լիճը ձգուիլը, որմէ ետք սկիզբ պիտի առնէ բուն արքայութիւնը՝ անմահական կեանքով:

2.- Չարին վերջնական դատապարտութիւնը: Արմազեդոնի պատերազմը ցոյց կու տայ աշխարհի բոլոր իշխանութեանց խորտակումն ու բնաջնջումը եւ Քրիստոսի թագաւորութիւնը ամբողջ աշխարհի վրայ (Յտ 19-րդ գլուխ):

Այժմ Սատանային ժամանակաւոր արձակումով անգամ մը եւս կը տեսնենք ազգերու եւ թագաւորներու վերջին ապստամբութիւն մը կամ ազգերու վերջին մոլորութիւն մը, Գոգի եւ Մագոգի առաջնորդութեամբ ներկայացուած, որմէ ետք կու գայ Չարին վերջնական կորուստը եւ արքայութեան վերջնական հաստատումը՝ նոր երկինքով ու նոր երկիրով:

3.- Մեռելներու յարութեան հարցը: Յիսուս միայն մէկ յարութեան մասին կը խօսի, արդարներուն եւ մեղաւորներուն համար միաժամանակ (Յհ 5.28-29). մինչդէռ եթէ 20-րդ գլխուն բացատրութիւնը տառացիօրէն հասկնանք՝ երկու յարութիւններ կան. առաջին յարութիւնը տեղի պիտի ունենայ հազարամեայ թագաւորութեան սկիզբը, երբ միայն Քրիստոսի հաւատարիմ վկաները եւ իր անունին համար նահատակուածները յարութիւն պիտի առնեն եւ իրեն հետ միասին թագաւորեն, իսկ Հազարամեակի աւարտին տեղի պիտի ունենայ երկրորդ յարութիւնը եւ վերջին դատաստանը, այսինքն՝ երբ բոլոր մնացեալ մեռեալները յարութիւն պիտի առնեն եւ դատուին իրենց գործերուն համաձայն, եւ Կեանքի գիրքին մէջ անուն չունեցողները պիտի դատապարտուին յաւիտենական կորուստի:

Տառացի հասկացողութեան բերած այս դժուարութիւնները ցոյց կու տան, թէ Հազարամեակի հասկացողութիւնը պարզ եւ դիւրին չէ, եւ ասոր համար ալ զայն հասկնալու տարբեր փորձեր եղած են: Ոմանք կը պահեն տառացի իմաստը, զայն հասկնալով իբրեւ հազար տարուան շրջան մը: Ուրիշներ զայն կը մեկնեն այլաբանօրէն, անոր տակ հասկնալով երկար եւ անսահմանելի ժամանակ մը:

Այս կապակցութեամբ, Եկեղեցւոյ անցեալի մեկնիչները երեք խումբի կը բաժնուին.-

1.- Ոմանք հազար տարին կը հասկնան տառացիօրէն իբրեւ հազար տարի, որու ընթացքին Քրիստոսի հետեւորդները երկրի վրայ պիտի իջնեն, որմէ ետք տեղի

պիտի ունենայ ընդհանուր յարութիւնը: Այս հեղինակներու կարգին են.- Արեւելքի մէջ՝ Պապիաս (2-րդ դարու սկիզբ), Յուստինոս Վկայ (2-րդ դարու կէս), Իրենէոս հայրապետ (2-րդ դարու վերջ), իսկ Արեւմուտքի մէջ՝ Տերտուլիանոս (3-րդ դարու սկիզբ) եւ Վիկտորինոս (4-րդ դարու կէս):

2.- Ուրիշ մեկնիչներ դարձեալ տառացի մեկնութեամբ մը՝ անով կը հասկնան ստեղծագործութեան 7-րդ Հազարամեակը, որ ամբողջ ներկայ ժամանակն է, մինչեւ Քրիստոսի երկրորդ գալուստը: Այս հեղինակներու շարքին են.- Բառնաբասի նամակին հեղինակը (2-րդ դարու սկիզբ), Հիպպոլիտոս Հռոմայեցի (3-րդ դարու ա. կէս), Որոգինէս (3-րդ դարու կէս), Մեթոսիոս Ոլիմպացի (3-րդ դար):

3.- Երրորդ խումբ մը կը կազմեն այն մեկնիչները, որոնք Օգոստինոսէն (5-րդ դարու ա. կէս) սկսեալ, հազար տարին կը հասկնան խորհրդականօրէն, իբրեւ ճշգրտօրէն չսահմանուած ժամանակ մը, Եկեղեցոյ ժամանակաշրջանը, որ Քրիստոսի առաջին գալուստէն կը սկսի եւ կ'երկարի մինչեւ երկրորդ գալուստը: Եկեղեցոյ հետագայ մեկնիչները գլխաւորաբար այս ուղղութեան կը հետեւին, եւ մինչեւ հիմա անիկա կը մնայ եկեղեցոյ հիմնական հասկացողութիւնը:

Ներկայ ժամանակներու մեկնիչները իրենք ալ գլխաւոր երեք խումբերու կը բաժնուին, մօտաւորապէս նոյն հասկացողութիւններով եւ հետեւեալ անուանումներով.-

1.- Նախա-Հազարամեայ հասկացողութիւն (Premillennialism): Ըստ այս մեկնութեան, որ տառացի է, ներկայ ժամանակի վախճանին, որ Քրիստոսի երկրորդ գալուստով պիտի ըլլայ, նախ տեղի պիտի ունենայ մեռելներու առաջին յարութիւնը, եւ արքայութեան ներկայ վիճակը պիտի թեւակոխէ նոր հանգրուան մը, որ պիտի ըլլայ տառացիօրէն հազար տարուան թագաւորութեան նոր շրջան մը՝ այս աշխարհի վրայ, խաղաղութեամբ եւ արդարութեամբ յատկանշուած: Հազար տարի ետք տեղի պիտի ունենան վերջնական յարութիւնը եւ վերջին դատաստանը, երկինքն ու

երկիրը պիտի նորոգուին, եւ հազար տարուան այդ թագաւորութիւնը յաւիտենական թագաւորութեան մէջ պիտի լուծուի:

2.- Յետ-Հազարամեայ հասկացողութիւն (Postmillennialism): Ըստ այս մեկնութեան, որ դարձեալ տառացի է, ներկայ աշխարհը աստիճանաբար պիտի ճանչնայ եւ ընդունի Քրիստոսը, եւ երբ բոլորը քրիստոնէութիւնը ընդունին՝ պիտի գայ խաղաղութեան եւ բարօրութեան հազարամեայ շրջան մը, որու աւարտին տեղի պիտի ունենան Քրիստոսի երկրորդ գալուստը, մեռելներու յարութիւնը, վերջին դատաստանն ու յաւիտենական կեանքի սկիզբը:

3.- Ապա-Հազարամեայ հասկացողութիւն (Amillennialism): Ըստ այս մեկնութեան, որ այլաբանական է եւ սահմանուած չէ տարիներու որոշակի թիւով, Հազարամեակը Աստուծոյ թագաւորութեան ներկայ հանգրուանը կը պատկերացնէ, երբ արդարներու հոգիները Քրիստոսի հետ կը թագաւորեն երկինքի մէջ: Այս հանգրուանին պիտի յաջորդէ Քրիստոսի երկրորդ գալուստը, երբ տեղի պիտի ունենան մեռելներու ընդհանուր յարութիւնը, եւ վերջին դատաստանը, եւ սկիզբ պիտի առնէ յաւիտենական թագաւորութիւնը՝ նոր երկինքով ու նոր երկիրով:

Վերը նշեցինք, որ Եկեղեցւոյ հիմնական հասկացողութիւնը հազար տարիներուն խորհրդական (կամ Ապա- Հազարամեայ) հասկացողութիւնն է: Մեր եկեղեցին Հազարամեակը կը հասկնայ ո՛չ թէ Քրիստոսի երկրորդ գալուստէն ետք գալիք ժամանակաշրջան մը, այլ՝ առաջին գալուստին յաջորդող ժամանակաշրջանը, այսինքն՝ ներկայ ժամանակաշրջանը, երբ Քրիստոս իր յարութենէն ետք երկինք համբարձումով՝ Հօրը աջ կողմը բազմած, իր թագաւորութիւնը առած է արդէն եւ հոգեւորապէս կ'իշխէ, այսինքն՝ իր թագաւորութեամբ եկած է արդէն Եկեղեցիին համար, ուր մեղքով մեռած մարդիկ հոգեւորապէս յարութիւն

առած են եւ իր ընտրեալ սուրբերը իրեն հետ միասին կը թագաւորեն:

Հետեւաբար Հազարամեան տառացիօրէն հազար տարի չէ՛, այլ՝ յարաբերաբար երկար ժամանակահատուած մը, որ Քրիստոսի Եկեղեցոյ ժամանակն է:

Այս պատկերացումը հասկնալու համար լաւ կ'ըլլայ յիշել, որ Աստուածաշունչը աշխարհը ստեղծուած կը ներկայացնէ վեց օրուան մէջ (=անկատարութիւն), իսկ եօթներորդ օրը (=կատարելութիւն) կը կոչէ Տիրոջ հանգիստի օրը, երբ Աստուած դադար առաւ ստեղծագործելէ: Արդ, խորհրդական մեկնութեամբ՝ ներկայ աշխարհի ժամանակաշրջանը 6.000 տարի նկատուած է, ստեղծագործութեան իւրաքանչիւր օրուան դիմաց՝ հազար տարի: Այս 6.000 տարիներու աւարտին եկաւ Քրիստոս, եւ իր գալուստին յաջորդող հազարամեակը (ո՛չ տառացի) պիտի ըլլայ Աստուծոյ կամքին ու ծրագիրին կատարումը կամ ամբողջացումը: Այս հազար տարիներու աւարտին տեղի պիտի ունենան Քրիստոսի երկրորդ գալուստը եւ անոր կապուած բոլոր մեռելներու մարմնաւոր յարութիւնը, վերջին դատաստանը եւ յաւիտենական կեանքի սկիզբը:

Ո՞Վ Է ՆԵՌԸ
(Յտ 13)

Նեոին անունը կարճ նկարագրականով մը եւ խորհրդաւոր թիւով մը միայն արտայայտուած է Յայտնութեան մէջ (13.18), իսկ այդ թիւը կոչուած է անոր «անունը»: Արդ, դարերու ընթացքին մարդիկ բազմաթիւ փորձեր կատարած են որոշելու համար անոր ինքնութիւնը.- Ո՞Վ է, կամ ո՞վ պիտի ըլլայ, ան:

Ստորեւ կը բերենք առաջարկուած տարբեր բացատրութիւններէն փունջ մը.-

ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Ոմանք պատմական բացատրութիւն մը փնտռած են, 666 թիւին տակ կարդալ փորձելով ծանօթ իշխանութեան մը կամ տիրակալի մը անունը: Օրինակ.-

1.- Ոմանք այս թիւին մէջ տեսեր են եկեղեցւոյ ամենէն կատաղի հալածողներէն՝ Ներոն կայսրին անունը, զայն կարդալով Եբրայերէն տառերով՝ «Ներոն կայսր» ($\text{נ}^{50}\text{ר}^{67}\text{ך}^{200}\text{נ}^{50}$ $\text{ך}^{200}\text{נ}^{60}\text{ך}^{100}$): Ուրիշներ կարգ մը ձեռագիրներու ընծայած 616 տարբերակէն օգտուելով՝ զայն հաշուած եւ բացատրած են իբրեւ «Գայոս կայսր» (=Կալիգուլա կայսրը), կամ ընդհանուր ձեւով՝ «Աստուած կայսր», նկատի ունենալով կայսրեր իրենք զիրենք աստուած կը հռչակէին:

2.- Երանոս հայրապետ այս թիւին տակ կը կարդայ Յունարէն Լատինոս ($\lambda\alpha\tau\varepsilon\nu\omicron\varsigma$) բառը, որ կը նշանակէ Լատին, եւ որուն բաղկացուցիչ տառերուն գումարը 666 կ'ըլլայ ($\lambda^{30}\alpha^{1\tau}^{300}\epsilon^{510}\nu^{50}\omicron^{70}\varsigma^{200}$): Այս անունին տակ կը հասկցուի Հռոմէական կայսրութիւնը:

3.- Նոր մեկնիչներէն ոմանք անոր մէջ կը տեսնեն Դոմեստիանոս կայսրին անունը, որովհետեւ իր կտրել տուած դրամներէն մէկուն վրայի տառերուն թուահամարը 666 կու տայ:

4.- Նորագոյն ժամանակներուն ուրիշներ այդ թիւին տակ ուզած են տեսնել ուրիշ անձերու կամ երեւոյթներու կանխագուշակումը, ինչպէս՝ Պապութիւնը եւ Կաթողիկէ եկեղեցին, Մարթին Լուտերը եւ անոր շարժումը, 1789 թուականի Ֆրանսական յեղափոխութիւնը, Նափոլէոնը, Միոնիզմը, Լենինը եւ համայնավարութիւնը, Արեւմտեան դրամատիրութիւնը, Հիթլերը, Ստալինը, Ամերիկեան կայսերապաշտութիւնը, Երոպական տնտեսական շուկան եւ ապրանքներու փոխանակման համար անոր որդեգրած պայմանները, ելն:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՎԱԽՃԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Ուրիշներ այդ թիւին մէջ կարդացած են աւելի ընդհանուր նշանակութիւն ունեցող անուն մը, որ կը պատշաճի բոլոր ժամանակներուն մէջ Քրիստոսի եւ Եկեղեցոյ հակառակորդներուն: Այսպէս.-

1.- Ադրէաս Կեսարացին Հիպպոլիտոսի հետեւողութեամբ անոր մէջ կը կարդայ «Ուրանամ» (Յունարէն՝ *αρονουμαι* - ^o): Անոր հետեւողութեամբ՝ Գրիգոր Տաթեւացի Հայերէն Այբուբենով գրուած 666 կամ ՈԿԶ թիւը կը կարդայ՝ «Ուրանամ Կամաւ Ջարարիչն երկնի եւ երկրի»:

2.- Ընդհանուր նշանակութիւն մը փնտռող ուրիշ բացատրութիւն մըն է այն՝ որ մինչ 7 թիւը կատարելութեան խորհրդանիշ է, 6-ը անկատարութեան խորհրդանիշ մըն է, եւ իբրեւ այդպիսին կ'արտայայտէ արարածի վիճակը եւ անկատարութիւնը: Արդ, այստեղ ունինք երիցս 6՝ 666, որ բացարձակ անկատարութիւնը կը նշէ:

3.- Նոյն այս անկատարութեան հասկացողութիւնը աւելի մասնաւոր երեսով մը յատուկ է մարդուն եւ մարդ արարածը կը նշէ, մանաւանդ եթէ յիշենք որ անիկա ստեղծագործութեան 6-րդ օրը գոյացաւ: Արդ, Յայտնութեան գիրքը կ'ըսէ՝ թէ յիշեալ թիւը «մարդու մը անունին տառերուն

թին է» (13.18), ինչ որ ցոյց կու տայ Նեոին մարդկային ծագումը: Այս առումով հետաքրքրական է նաեւ յիշել, որ Դանիէլի մարգարէութեան մէջ (3.1 եւ շար.) Նաբուգոդոնոսորի կողմէ կանգնուած եւ պաշտամունքի համար պարտադրուած արձանին բարձրութիւնը 60 կանգուն եւ լայնութիւնը 6 կանգուն նշուած են, եւ այդ արձանը նախապատկերացումն է այս գագանին, որուն արձանը պիտի կանգնուի եւ անոր պաշտամունքը պարտադրուի բոլոր մարդոց:

4.- Ճորճ Ուիլիըմս, կու տայ նաեւ ուրիշ բացատրութիւն մը, թէ՛ 666 թիւին համապատասխան Յունարէն տառերն են՝ չէ՛, որոնց առաջին եւ երրորդ տառերը չՏ Քրիստոսի անունին կրճատումը կը ներկայացնեն, իսկ անոնց մէջ միջանկեալ կերպով մտած է չ օձաձեւ տառը, հաւանաբար խորհրդանշելու համար սուտ Քրիստոսը:

ԱՍՏՈՒԾՈՅ ԸՄԲՈՆՈՒՄԸ
ՀՐԵԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՄՕՏ

Ինչպէս մարդկային պատմութիւնը, այնպէս ալ աստուածային յայտնութեան պատմութիւնը երկու տարբեր ուղղութիւններ ունի.-

Ա.- Վերընթաց

Բ.- Վարընթաց

Վերընթաց ըսելով կը հասկնանք՝ մարդուն կողմէ Աստուծոյ փնտռութիւնը, իսկ Վարընթաց ըսելով կը հասկնանք՝ Աստուծոյ կողմէ իր անձին յայտնութիւնը մարդուն:

Հրեայ հեղինակներ համոզուած էին, որ Աստուած ինքզինք ամբողջ աշխարհին յայտնելու փոխարէն, յայտնեց քիչերու, որոնք մենք կը կոչենք՝ «ընտրեալներ»։ միաժամանակ համոզուած էին որ Աստուած ինքզինք յայտնեց մասնաւորաբար, «ընտրեալ ժողովուրդ»ին, (այսինքն՝ իրենց), որպէսզի յետոյ անոնց միջոցաւ ամբողջ մարդկութիւնը նաեւ հասնէր ճշմարիտ Աստուծոյ ճշմարիտ ճանաչողութեան:

Երբ յետադարձ ակնարկ մը նետենք Հրեաներու հաւատքի կեանքին վրայ, կը տեսնենք որ հին ժամանակներուն, Աստուծոյ հասկացողութիւնը հին Հրեաներուն մօտ նախնական էր, այսինքն, անոնց համար Աստուած կը համեմատուէր ուրիշ աստուածներու հետ, եւ անոնց յատկանիշներով հանդէս կու գար, եւ կը յայտնուէր, իբրեւ խիստ, վրէժխնդիր եւ անհանդուժող նկարագրի տէր աստուածութիւն:

Հետեւաբար, պէտք չէ մոռնալ որ մարդիկ իրենց սահմանափակ պատկերացումով եւ ծանօթութեամբ կը խօսէին ու կը գրէին Աստուծոյ մասին, միշտ իրենց օրուան եւ իրենց ժամանակին հասկացողութեամբ, եւ ո՛չ թէ այն ամբողջական լոյսով որ Նոր Կտակարանը կը բերէ մեզի:

Այս նախնական հասկացողութեան մաս կը կազմեն եւ անոր արտայայտութիւնը կը դառնան նաեւ որոշ երեւոյթներ, ինչպէս մարդկային գոհը, կամ այն կոտորածներն ու բնաջնջումները, որոնք Աստուծոյ անունով կը կատարուէին, եւ որոնք Աստուծոյ հրամանով եղած կը նկատուէին:

Հին Կտակարանեան Աստուծոյ ըմբռնումը մենք սխալ կը հասկնանք եթէ նկատի չունենանք նաեւ զանազան հեղինակներու գրութեան սեռը եւ տեսակը. օրինակ, Յովնանու գիրքին մէջ կրնանք տեսնել թէ՛ պատմութիւն եւ թէ՛ այլաբանութիւն: Գրական սեռն ու տեսակը շատ բան կրնան փոխել տուեալ բաժինէն մեր քաղելիքէն:

Սուրբ Գիրքի բոլոր հեղինակները ոչ միայն Աստուծոյ անունով կամ անոր մասին կը խօսին, այլ նաեւ Աստուծոյ բերանով կամ Աստուծոյ կողմէ կը խօսին: Հետեւաբար, եթէ կ'ուզէք, Աստուծոյ կողմէ ուղղակի ծանօթութիւններ կը ներկայացնեն մեզի: Ասոնք, այսպէս կոչուած, Աստուծամէներշնչուած եւ Աստուծոյ խօսքերն են, բայց անոնց մէջ անխուսափելի է ժամանակի գոյնը եւ դրոշմը, թէ՛ մարդուն կողմէ (իր հասկացողութիւնը պատկերացնող) եւ թէ՛ Աստուծոյ կողմէ (մարդուն ըմբռնումին համաձայն տալու իր պատգամը, տուեալ ժամանակի ոգիին եւ կացութեան մէջ գործնական ըլլալու համար):

Ուրիշ մէկ ըմբռնումը Աստուծոյ մասին այն է, որ Աստուած ամէն բանէ առաջ Հրեայ է, եւ հետեւաբար, չի հետաքրքրուիր ուրիշ ժողովուրդներով: Ասիկա նախնական գիրքերու մէջի հասկացողութիւնն է: Նման պատկերացում շատ նեղ սահմաններէ կը մեկնի:

Կարգ մը մարգարէներ ցոյց տուին ժամանակի ընթացքին թէ Աստուած բոլոր ազգերուն Աստուածն է. բայց նոյնիսկ Յիսուսի ժամանակ նեղ եւ մոլեռանդ այս հասկացողութիւնը կը մնար եւ Յիսուսի կողմէ անոր հակառակը մատնանշող ակնարկութիւնը պատճառ պիտի դառնար իր սպաննութեան (Ղկ 4.28-31):

Այս կատաղի ազգայնապաշտութեան պատճառով Հրեաներ իրենք զիրենք ամբողջութեամբ պիտի հեռացնէին հեթանոսներէն եւ նոյնիսկ կոտորէին զանոնք Աստուծոյ անունով (Ա.Թգ 15.1-3): Այս ոգին մենք անհաշտելի կը գտնենք Աստուծոյ կողմէ տրուած ռեւէ պատուերի հետ եւ խոտոր կը համեմատի Աստուածաշունչ մատեանի ոգիին:

Այս ըմբոսումները հասկնալու դժուարութիւնն էր, օրինակի համար, որ մղեց 2-րդ դարու հերետիկոս մը՝ Մարկիոնը, որ Հին Կտակարանի Աստուածը տարբեր նկատէ Նոր Կտակարանի Աստուծմէն: Ճիշդ այսպէս նաեւ կը դատեն շատեր, երբ կ'ըսեն թէ Հին Կտակարանը երբեք պէտք չէ կարդալ, որովհետեւ սխալ ըմբոսում կու տայ մեզի Աստուծոյ մասին:

1.- ՆԱՀԱՊԵՏՆԵՐՈՒ ՇՐՋԱՆ

Մովսէսէն առաջ, Եբրայեցի ժողովուրդը արդէօք իր ամբողջութեանը մէջ կը ճանչնա՞ր զԱստուած. ասկա ինքնին կասկածելի է, որովհետեւ Մինայի մօտն էր որ Մովսէս զԱստուած ծանօթացուց իրեններուն:

Հրէից ազգային պատմութիւնը կը սկսի Եգիպտոսի ելքով. Ծննդոցի շրջանին, նահապետներուն պատմութիւնը կարելի է ըսել որ նախազգային պատմութիւն է: Այդ շրջանը Անոնց թափառումներն են մինչեւ Եգիպտոս հասնիլը: Բայց անշուշտ այդ թափառումները պատահականութեան արդիւնք չէին: Անոնց ետին կեցող հաւատալիքը այն էր, որ Աստուած ի՛նքն էր որ կանչեց Աբրահամը եւ իր ծրագիրին համաձայն առաջնորդեց նաեւ միւս նահապետները, անոնց տալով նոր երկրի մը խոստումը, հզօր ազգ մը դառնալու եւ նաեւ իրենց սերունդին ընդմեջէն աշխարհի բոլոր ժողովուրդները օրհնելու խոստումը:

Աստուած կը ներկայանայ իբրեւ ուրիշ աստուածներու կարգին Աստուած մը: Ժողովուրդը կը հաւատար

աստուածներու (Էլօհիմ)ի²² գոյութեան եւ անոնց մէջ, Աստուած (Էլ)ը անոնցմէ մէկն էր: Այս աստուածները կը ճանչցուէին յատուկ վայրով մը, որ կրնար ըլլալ աղբիւր, քար, ծառ, ժայռ, անտառ, եւն: Ճիշդ ատոր համար ալ, հոն ուր Յակոբ Աստուծոյ տեսիլքը ունեցաւ, այնտեղը կոչեց Բեթէլ, այսինքն՝ Աստուծոյ տունը (Մն 28.16-19): Ան Աստուծոյ անունը չէր գիտեր, ստիպուած զայն կոչեց կամ կը կոչէր՝ Բեթէլի Աստուածը, ըսել ուզելով՝ այն Աստուածը որ Բեթէլի մէջ երեւցաւ:

Տեղի մը կամ երկրամասի մը կապուած առանձին Աստուծոյ մը այս նախնական հաւատալիքը ճակատագրական դեր պիտի կատարէր Եբրայեցի ժողովուրդին կեանքին մէջ, ինչպէս պիտի տեսնենք: Նահապետական այս ժամանակներուն ուրիշ յատկանիշ մըն է նաեւ Աստուծոյ մարդակերպ ներկայացումը կամ պատկերացումը: Աստուած կամ ռեւէ աստուած, տեսակ մը, գեր-մարդ է, որ ունի աչք, ականջ, թեւեր եւ նաեւ զգացական պետքեր, որով իր վերաբերումը կը ճշդէ մարդոց հանդէպ:

2.- ԱՆԱՊԱՏԱՅԻՆ ԹԱՓԱՌՈՒՄՆԵՐՈՒ ՇՐՋԱՆ

Աստուծոյ ըմբռնումը կը տեսնենք որ ցեղային է, այսինքն՝ Աստուած ցեղի մը Աստուածն է, որ կը նշանակէ թէ ան կը պաշտպանէ ցեղ մը՝ ուրիշ ցեղի մը դէմ, կամ երկիր մը՝ ուրիշ երկրի մը դէմ, կամ քաղաք մը՝ ուրիշ քաղաքի մը դէմ: Օրինակ, Եբրայեցիները համոզուած էին որ Եհովան իրենց Աստուածն էր եւ ի՛նքն էր որ զիրենք ազատեց Եգիպտոսէն եւ պատերազմեցաւ Եգիպտացիներուն դէմ (տե՛ս Ել 15.1-5):

Միաժամանակ, Եբրայական մտայնութեան կամ հասկացողութեան մէջ, Աստուած՝ անապատի Աստուածն է. այս հասկացողութիւնը անոնց միտքին մէջ կազմուեցաւ,

²² Եբրայերէն լեզուին մէջ «Էլօհիմ» կը նշանակէ՝ աստուածներ:

անոր համար որ անոնք վայելեցին Աստուծոյ պաշտպանութիւնը, Աստուծոյ առաջնորդութիւնը կրակի եւ ամպի սիւներուն միջոցաւ (Ել 13.21), եւ մանաւանդ, անոր համար որ անոնք անապատներուն մէջ, Աստուծոյ նախախնամութեամբ կերակրուեցաւ երկնաէջ մանանայով:

Աստուծոյ տեղայնական, (այսինքն՝ յատուկ տեղի մը Աստուածը ըլլալու) այս հասկացողութիւնը նոյնիսկ քրիստոնէական դարաշրջանին կը տեսնենք շատ մը ժողովուրդներու կեանքին եւ մտածողութեան մէջ:

Ի վերջոյ, շատ մը մարգարէներու համար, անապատի այս շրջանը Աստուծոյ պաշտամունքին իտեալ շրջանն է, որովհետեւ Եբրայեցի ժողովուրդը տակաւին չէ սկսած ուրիշ ժողովուրդներու կամ կրօններու հետ շփման մէջ մտնել եւ այլասերիլ: Իր ժողովուրդը գերութենէն ազատող Աստուծոյ պահանջը՝ միայն հաւատարմութիւն պիտի ըլլար, քան մը՝ որ Եբրայեցի ժողովուրդը երբեք չըրաւ:

3.- ՔԱՆԱՆՈՒ ԳՐԱԻՈՒՄԻ ԵՒ ՀՈՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՇՐՋԱՆ

Այս շրջանին մի քանի հասկացողութիւններ կը յայտնուին: Նախքան այդ հասկացողութեանց մասին խօսիլը, հաստատենք, որ եթէ կարդանք Յեսուի գիրքը, այն տպաւորութիւնը կ'ունենանք որ Քանանու երկիրը մէկ հարուածով գրաւուեցաւ: Սակայն Դատաւորաց գիրքէն գիտենք որ երկրին գրաւումը այնքան ալ դիւրին չեղաւ եւ տեւեց շուրջ երկու հարիւր տարի: Այս շրջանին կը տեսնենք հետեւեալ հասկացողութիւնները.-

Ա.- Կը ճանչնանք խստապահանջ Աստուծոյ մը պատկերը, որ նոյնիսկ իր մեծագոյն ծառան՝ Մովսէսը կը պատժէ, զայն զրկելով խոստացուած երկիրը մտնելու օրհնութենէն (Թւ 20.8-12):

Բ.- Աստուած կը հրահանգէ երկրի բնակիչները եւ քաղաքի ամբողջ գանձերը իրեն նուիրել. ժողովուրդին մէջէն կը գտնուի մէկը՝ Աքար, որուն ազահութեան պատճառով Իսրայէլացիները պարտութիւն կը կրեն: Երբ հանդէս կու գայ որ Աքարին պատճառով պարտութիւն կրած էին, զինք եւ իր ամբողջ ընտանիքը կը քարկոծեն եւ կ'այրեն (Յես 7):

Առաջին հերթին երբ կը կարդանք նման դրուագ մը, Աստուծոյ վարմունքը անհասկնալի կը մնայ, որովհետեւ քրիստոնէական հասկացողութեամբ, Աստուած ինչո՞ւ միայն յանցաւորը պատժելու տեղ, անոր ամբողջ ընտանիքը սպաննել կու տայ: Սակայն, պէտք է շեշտել որ ժամանակի ըմբռնումով ատիկա հասկնալի է, որովհետեւ չարիքը իր արմատէն կտրելու եւ ոչնչացնելու սկզբունքին է որ կը հետեւի:

Նոյն այդ մտայնութեան մէկ այլ պատկերացումը կրնանք կարդալ ուրիշ դրուագի մը մէջ (Բ.Թգ 13-14 գլուխներ): Այս ըմբռումը երկարատեւ կը մնայ Իսրայէլի պատմութեան մէջ, մինչեւ որ Օրինաց գիրքերուն մէջ կը սկսին մարդիկ կամաց-կամաց փոփոխութեան ենթարկել զայն, եւ կարգադրել, որ յանցանքին համար հայրը կամ զաւակները չսպաննուին, այլ միայն յանցագործը (Բ.Օր 24.16, Եր 31.28-30, Եզ 18.14-20):

Գ.- Կը տեսնենք որ ամբողջ քաղաքներ կամ ցեղեր կը բնաջնջուին Աստուծոյ անունով. ի՞նչպէս կարելի է հաշտեցնել այս երեւոյթը Աստուծոյ գաղափարին հետ: Ասոր միակ բացատրութիւնը, Աստուծոյ պաշտամունքը հեթանոսական պաշտամունքներու պղծութենէն հեռու պահելն էր, այսինքն՝ երբ Աստուած կը հրահանգէր ցեղեր կամ քաղաքներ կոտորել, իր միակ նպատակն էր, իր ժողովուրդը (Եբրայեցիները) անոնց պաշտամունքներէն, անոնց բազմաստուածապաշտ վերաբերմունքէն, անոնց կռապաշտական ազդեցութիւններէն հեռու պահել (Բ.Օր 20. 13-18):

Ասիկա մասամբ մը Հրեայ ազգայնապաշտութեան ոգին արտայայտութիւնն է. բայց չմոռնանք հիմնական իրողութիւն մը, այն՝ որ Աստուած (ինչպէս Աստուածաշունչը ցոյց կու տայ), կը գործածէ ժողովուրդներ, ցեղեր, իշխաններ, թագաւորներ, պարզ մարդիկ, անոնք ըլլան չար թէ բարի, եւ զանոնք կը ծառայեցնէ իր ծրագիրին իրագործման համար:

Ի՞նչ էր Քանանեան ժողովուրդներու կրօնական բարոյական պատկերը, որ Հրեայ ժողովուրդին կողմէ այդ ազգերուն բնաջնջումը տեղի ունեցաւ: Դիմելէ առաջ հնագիտական տուեալներու, տեսնենք թէ Աստուածաշունչը ի՞նչ կ'ըսէ այդ ուղղութեամբ: Քանանու աստուածութիւնները ընդհանրապէս կը կոչուէին Բահաղ անունով, որ յատուկ անուն մըն է, թէեւ կը գործածուի որպէս հասարակ անուն ալ եւ կը նշանակէ՝ «տէր»: Քանանեան աստուածութիւններու մէջ այր աստուածութիւնները «Բահաղ» կը կոչուէին, իսկ անոնց ընկերացող կին աստուածութիւնները՝ «Աստարովթ», որոնք կը խորհրդանշուէին ծառի կոճղով, քարով, եւլն: Այս երկուքին նուիրուած պաշտամունքային բոլոր վայրերն ալ, ընդհանրապէս անառակութեանց վայրեր եւ կեղրոններ էին: Այնտեղ ծառայող, այսպէս կոչուած, քահանայուհիները, «տաճարին» մէջ ծառայող կին պոռնիկներ էին պարգապէս, եւ կային նաեւ այր պոռնիկներ, որոնք կը ճանչցուէին որպէս Սողոմացիներ (Բ.Թգ 23.4-10: Գ.Թգ 14.22-24: Ես 57.1-10: Եր 3.1-10): Ասոնք Աստուածաշնչական տուեալներն են:

Դիմելով հնախուրդական տուեալներու, կը տեսնենք որ պատմութիւնը իր յատուկ վկայութիւնը կու գայ տալու: Հնախոյզներ, 20-րդ դարու սկիզբները, յատկապէս 1904-1908ի միջոցին իրենց կատարած պեղումներուն ընթացքին, Հրէաստանի (Պաղեստինի) հարաւակողմը յայտնաբերեցին Բահաղի եւ Աստարովթի նուիրուած տաճար մը, որ կու գայ Ն.Ք. շուրջ 1500 թուականէն: Տաճարը ունի պատերով եզերուած շրջաբակ մը, որմէ ներս կը կանգնին տասը

բաւական կոպիտ եւ հաստ սիւներ, որոնց առջեւ կը մատուցանէին զոհերը:

Աւերակներուն տակէն գտնուած են ահագին թիւով կարասիներ, եւ անոնց մէջ Բահաղին զոհուած նորածին երեխաներու մնացորդներ (տե՛ս Եր 19.5: Բ.Օր 12.29-31): Ուրիշ սարսափելի սովորութիւն մըն էր նոր տուններու հիմներուն տակ թաղել երեխայ մը (Գ.Թգ 16.34): Նոյն այդ պեղումներուն ընթացքին գտնուած են նաեւ բազմաթիւ նկարներ եւ արձանիկներ սեռային կոշտ եւ մեծցուած գործարաններով, որոնց միակ նպատակը մարմնական կիրքերը հրահրելն էր: Նման բաներ գտնուած են նաեւ Մակեդոնի հիւսիսը, ինչպէս նաեւ Երիթովի մէջ եւ այլուր: Հետեւաբար, որոշ ցեղեր կամ քաղաքներ բնաջնջելու աստուածային հրահանգը կարելի է մեկնաբանել տեսակ մը իբրեւ պատիժ այն ժողովուրդներուն, որոնք երկիրը կամ իրենց բնակավայրերը իրական Սողոն Գոմոր դարձուցած էին:

Քանանի գրաւումին ժամանակ, յստակօրէն կը դրսևորուի ժողովրդական այս հաւատալիքը, թէ՛ աստուածներ յատուկ երկրի մը աստուածներն էին: Ըստ իրենց ըմբռնումին, կարծէք Եհովան անապատի եւ մի՛այն անապատի աստուածն էր: Հիմա որ կը մտնէին Քանան, Քանանը ունէր իր խնամակալ աստուածները, որոնք երկրագործական եւ պտղաբերութեան աստուածներ էին (Բահաղ, Աստարովթ, եւլն): Կար Բահաղը, ինչպէս նաեւ անոր մի քանի տեսակները, այսպէս, օրինակ, Սողոքը, Քամովս, եւլն: Հարցը հետեւեալն էր.- Հրեաներ կրնայի՞ն անտեսել Քանանի աստուածները եւ արհամարհելով վիրաւորել զիրենք, եւ միւս կողմէ, արդեօք Եհովան կրնա՞ր իրենց օգնել երկրագործութեան մէջ: Այս մտահոգութիւնները պատճառ դարձան, որ Եբրայեցիներ սկսին պաշտել երկուքն ալ, թէ՛ Եհովան եւ թէ՛ Բահաղը, առանց շատ զանազանութիւն դնելու անոնց միջեւ եւ ահա այս

մտայնութեան դէմ էր որ բողոքի եւ կատաղի պայքարի պիտի սկսէին մարգարէները:

4.- ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ

Միապետութեան ստեղծումը, Եբրայական ցեղերուն ապագային մէջ յառաջ բերաւ միասնութիւն, եւ այդ միասնութեան ստեղծումը՝ նպաստեց Եհովայի պաշտամունքին: Դաւիթ Ուխտի Տապանակը Երուսաղէմ բերաւ եւ Սողոմոն յատուկ տաճար մը շինեց 966-ին ուր եւ զետեղուեցաւ Ուխտի Տապանակը: Այս երեւոյթները պարզապէս պաշտօնականացուցին Եհովայի պաշտամունքը:

Յաճախ նոյն տաճարին մէջ իսկ, տեղ գտան օտար աստուածութիւններ՝ թագաւորներու կամ թագուհիներու ձեռքով (Գ.Թգ 11.1-10: Դ.Թգ 23.11-12): Յերոբովամ, օրինակի համար, հորթերու պաշտամունքը վերականգնեց գլխաւորաբար երկու վայրերու մէջ՝ Բեթէլի եւ Դանի մէջ, կուռքերուն յատուկ տուներ շինելով, որպէսզի մոռցնել տար Երուսաղէմի տաճարը (Գ.Թգ 12.26-31):

Ժողովուրդին ըմբռնումով, կը բաւեր որ իրենք պաշտօնապէս կը ճանչնային Եհովան իր տաճարին մէջ. անկէ անդին, իրենք զիրենք ազատ կը զգային ուրիշ պաշտամունքներու նուիրուելու: Աքաաբի օրով, անոր կինը՝ Յեզաբել, Փիւնիկեցիներուն պաշտած Բահաղ չաստուածին պաշտամունքը պարտադրիչ դարձուց: Իսրայէլի մայրաքաղաքը՝ Սամարիան, եղաւ այդ պաշտամունքին կեդրոնը:

Հետաքրքրական է դիտել, որ Եղիայի կողմէ Բահաղի քահանաներուն դէմ մղուած պայքարին մէջ, շեշտը կը դրուի այն իրողութեան վրայ, թէ՛ Եհովան Իսրայէլի Աստուածն է. ասիկա տեղայնական մտածողութեան մէկ արտայայտութիւնն է Եղիայի մօտ (Գ.Թգ 18.36):

Ասկէ ետք հետզհետէ մարգարէներ շեշտեցին միաստուածութիւնը, եւ թէ՛ բոլոր ժողովուրդներու ճակատագիրը Աստուծոյ ձեռքին մէջ է, եւ թէ՛ Աստուած նոյնիսկ ուրիշ ժողովուրդներ կը գործածէ, ինչպէս օրինակ, Բաբելացիները, Պարսիկները, Ասորիները, Հռոմայեցիները, իր ծրագիրը յաջողցնելու համար, կամ նոյնիսկ Իսրայէլը պատժելու համար: Եւ հետեւաբար, մարգարէներ կը փորձեն ժողովուրդը հրաւիրել այն գիտակցութեան, որ օտար աստուածները օգուտ չունին իրենց:

621 թուին, Յովսիա թագաւոր սկսաւ բարեկարգական շարժումներու: Ան օտար պաշտամունքները արգիլեց. Երուսաղէմի տաճարը եղաւ զոհագործումի միակ վայրը: Նոր մարգարէներ հետզհետէ տուին Աստուծոյ նկարագրին որոշակի պատկերը, զայն ներկայացնելով իր բարոյական որոշ ստորոգելիներով իբրեւ արդար եւ ուղիղ, զթած եւ ներողամիտ, ինչպէս նաեւ սուրբ եւ կատարեալ, որ իր ժողովուրդին սրբութիւնը կը կամենայ:

Աստուծոյ այս ծանօթութիւնը եւ սրբութեան գաղափարը, մարդուն եւ Աստուծոյ միջեւ խրամատը լայնցուց այն իմաստով որ նախապէս Աստուծոյ գաղափարը կամ ըմբռնումը աւելի շօշափելի էր եւ մարդակերպ, օրինակ, Մովսէս «երես առ երես» կամ «բերան առ բերան» կը խօսէր Աստուծոյ հետ (Թւ 12.7-8), մինչդէռ հետագայի ըմբռնումը զայն կը պատկերացնէ աւելի վեր եւ անմատչելի, ինչպէս օրինակ, Եսայի զայն կը տեսնէ «բարձր եւ վերացած», այնպիսի ձեւով մը, որուն նոյնիսկ սերովբէները չէին կրնար նայիլ (Ես 6.1-2):

5.- ԳԵՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ՝ Ն.Ք. 587-538:

Այս շրջանին Եբրայեցիները ստրվեցան թէ Աստուած ամբողջ տիեզերքի արարիչն է: Իրենց գերութեան սկիզբը այն տպաւորութիւնը ունէին թէ օտար հողի վրայ իրենք կտրուած

էին իրենց Աստուծմէն (Մդ 137.4), բայց շուտով անդրադարձան թէ իրականութիւնը այդպէս չէ. եկան մարգարէներ, ինչպէս օրինակ Եզեկիէլ, Դանիէլ, Անգէ, Ջաքարիա, Եզրա, Նեհեմիա, որոնք ամրապնդեցին զիրենք եւ սկսան մտածել նաեւ վերադարձի մասին:

Գերութիւնը Իսրայէլի գաւակներուն մեծագոյն փորձառութիւնը եղաւ: Այս շրջանին էր նաեւ որ Եբրայեցիները վերախմբագրեցին իրենց ամբողջ պատմութիւնը եւ մասնաւորաբար՝ Օրէնքը: Այս շրջանը յատկանշական երբորդ երեւոյթ մըն ալ ունի, որ առանց գոհի պաշտամունքին հաստատումն է եւ ստեղծումը այն կերպին, զոր այսօր կը ճանչնանք իբրեւ Սինակոկի պաշտամունք, եւ որ յատկանշուած կ'ըլլար Աստուածաշունչի ընթերցումով, մեկնութեամբ եւ աղօթքով):

Միաժամանակ այդ Սինակոկի դրութեան հաստատումին հետ կը շեշտուի թլփատութեան պայմանը որպէս ուխտի նշան: Գերութեան այս շրջանին, մենք մարգարէական գրականութեան մէջ կը տեսնենք նոր յայտնութիւն մը. այս շրջանին է մասնաւորաբար, որ երբորդ Եսայիի մարգարէութիւնը (40-55 գլուխներ) կը խմբագրուին, որուն մէջ այս անգամ, Աստուծոյ յայտնութիւնը նոր երես մը կ'ունենայ զոր կը կոչենք Աստուծոյ «Չարչարուող Ծառայ»ին պատկերը. այդ Ծառային պատկերը այս շրջանին էր որ սկսաւ կամաց-կամաց կազմուիլ:

Գերութեան մէջ եղած ժողովուրդը գիտէ որ իր կործանած թագաւորութիւնը պէտք է վերականգնէ, սակայն իր յոյսը մարդկային ուժերու վրայ՝ գրեթէ կորսուած է. ուստի, իր յոյսը կը դնէ աստուածային միջամտութեան վրայ, որ Եսայիի մարգարէութեան մէջ կապուած է չարչարուող Մեսիայի մը պատկերին հետ, ինչ որ մեծագոյն կապը պիտի ըլլար Հին եւ Նոր Կտակարաններուն միջեւ. հո՛ւ է որ կը շեշտուի Աստուծոյ փրկութեան ճամբան, Անմեղին (Քրիստոսի) կողմէ ստանցնուելիք չարչարանքի ճանապարհը: Ասիկա Աստուծոյ

փրկութեան մասին նոր հասկացողութիւնն էր, որ սակայն, Եբրայեցի ժողովուրդին կողմէ գրեթէ չընդունուեցաւ: Աստուած իր ժողովուրդը փրկելու նոր եւ տարբեր ճամբայ մըն է որ ցոյց կու տայ քան այն պատկերացումը որ իրենք ունէին առհասարակ:

6.- ՅԵՏ-ԳԵՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ

Յետ-գերութեան շրջանին մենք բազմաստուածութեան հետքը բնաւ չենք տեսներ, ընդհակառակը, կը տեսնենք, որ Եբրայեցի ժողովուրդը հասած է միաստուածութեան բացարձակ գաղափարին: Ասոր հետ միաժամանակ, իրենց մէջ կը զօրանայ ընտրեալ ժողովուրդի գաղափարը, այսինքն՝ իրենք զիրենք Աստուծոյ «ընտրեալ ժողովուրդը» կը սեպէին:

Մարգարէներ իրենց գերութիւնը կամ թագաւորութեան կործանումը կը ներկայացնեն իբրեւ պատիժ մը Աստուծոյ կողմէ՝ տրուած օտար թագաւորութեանց միջոցաւ. բայց այդ պատահարներուն առընթեր, տրուած էր նաեւ խոստում մը, ըստ որուն, Աստուած իր ժողովուրդէն ընտիր մնացորդ մը պիտի պահէր: Գերութենէն վերադարձողները իրենք զիրենք այս ընտիր մնացորդը կը համարէին, բայց փոխանակ ասիկա զիրենք մղէր որ աշխատանք տանէին զԱստուած հեթանոսներուն ճանչցնելու, ընդհակառակը, զիրենք մղեց այլամերժութեան, թէպէտ մարգարէներ շարունակեցին պայքարիլ նաեւ այդ այլամերժութեան դէմ, եւ այսպէս է որ ծնունդ առին օրինակ Հռութի զիրքը եւ Յովնանու մարգարէութիւնը:

Յետ-գերութեան շրջանին, հետզհետէ մարգարէական ձայնը կը դադրի, հաւանաբար անոր համար որ այլեւս օտար պաշտամունքներու վտանգը չկար, իսկ մարգարէութեան տեղը գրաւելու կու գայ Օրէնքը, որ կը մեկնաբանուի դպիրներու կողմէ եւ այս ձեւով կը կազմուի հաւատալիքներու այն ամբողջութիւնը կամ կրօնական եւ

ազգային այն դրութիւնը որ մենք կը ճանչնանք իբրև Յուդայականութիւն (Judaism):

Այս նոր դրութիւնը զօրաւոր շեշտ կը դնէր բարեպաշտութեան վրայ, Օրէնքի կապուածութեան վրայ: Եւ սակայն, թէպէտ այս դրութիւնը բարեպաշտ Հրեաներ պատրաստեց, որոնք պատրաստ էին նոյնիսկ իրենց կեանքը զոհաբերելու, մասնաւորաբար Սելէւկեան տիրապետութեան տակ, բայց միւս կողմէ, ծնունդ տուաւ Փարիսեցիներու օրինապաշտ եւ արարողապաշտ ուղղութեան, որ Օրէնքը պիտի նկատէր ինքնանպատակ եւ սրբութեան հասնելու միակ միջոցն ու ճանապարհը: Ի վերջոյ, այս շրջանին նաեւ զարգացաւ անդենական կեանքի հաւատքը, որ ձեռով մը կապուած էր եւ է Աստուծոյ տիեզերականութեան գաղափարին:

7.- ԱՍՏՈՒԾՈՅ ԱՆՈՒՆԵՐԸ

Գիտենք որ ներկայիս մենք Աստուծոյ որոշ անուն մը տալու մասին չենք իսկ մտածեր, բայց միաժամանակ գիտենք, որ հինէն ի վեր մարդիկ միշտ ալ փորձած են սահմանում մը տալ Աստուծոյ: Բազմաստուածութեան շրջանին ծանօթ են զանազան տեսակի անուններ, բայց նոյնիսկ հինէն ի վեր միաստուածութեան գաղափարին հասած մարդիկ, ինչպէս իմաստասէրները, փորձած են սահմանումներ կատարել Աստուծոյ վերաբերեալ, ինչպէս օրինակ, ըսել՝ «Առաջին Պատճառ», կամ՝ «Գերագոյն Իրականութիւն», կամ՝ «Բացարձակը», կամ՝ «Գոյութեան Պատճառը» եւլն:

Գալով Եբրայեցի ժողովուրդին, մենք գիտենք որ Հրեաներ բազմաստուածութեան ժամանակներուն պէտք ունեցած են Աստուծոյ անունի մը, զատորոշելու համար իրենց Աստուածը միւս աստուածութիւններէն: Հին Կտակարանին մէջ Աստուծոյ համար գործածուած տարբեր

անուանումներ կը գտնենք. բոլորը պիտի չլիշեմ, այլ քանի մը հատը միայն.-

1.- «Էլ» (յոզնակին՝ «Էլիմ»), որ կը նշանակէ՝ Աստուած: Յատուկ անուն մը չէ, այլ՝ հասարակ անուն մը կամ գոյական մը, որ սակայն յատուկ անունի պէս կը գործածուի: Կը տրուի ո՛չ միայն ճշմարիտ Աստուծոյ, այլ՝ չաստուածներուն եւս (հմմտ Ծն 35.2: Բ.Օր 4.28, 12.2 ելն):

2.- «Էլո՛ւս», Աստուած, համապատասխանը Արաբերէն «իլահ» բառին: Կրկին, յատուկ անուն մը չէ: Առհասարակ բանաստեղծական հատուածներուն մէջ հանդէս կու գայ (օրինակ՝ Բ.Օր 32.15, 17), մանաւանդ Յոբի գիրքին մէջ:

3.- «Էլոհի՛մ»²³, Էլոահ-ին յոզնակին, որ երբեմն հանդէս կու գայ իբրեւ պարզ յոզնակի, բայց Աստուածաշունչին մէջ առհասարակ կը գործածուի իբրեւ անեզական բառ, դարձեալ «Աստուած» նշանակութեամբ, երբ կը վերաբերի միակ ճշմարիտ Աստուծոյն (Ծն 1.1 ելն): Ուստի, դարձեալ, յատուկ անուն չէ, այլ՝ հասարակ անուն կամ գոյական մը, որ յատուկ անունի պէս կը գործածուի:

4.- «Էլ Օլամ», որ կը նշանակէ՝ Յաւիտենական Աստուած (Ծն 21.33): Իրականին մէջ Եահուէ անունին բացատրութիւն մըն է, ինչպէս ստորեւ պիտի տեսնենք:

5.- Շատտայ, որ կը նշանակէ՝ Ամենակարող (կամ՝ Ամենակալ): Իրականին մէջ յատուկ անուն մը չէ, այլ՝ Աստուծոյ տրուած ստորոգելի մը: Երբեմն կը գործածուի նաեւ «Էլ»ին կցուած, «Էլ-Շատտայ», Ամենակարող Աստուած (Ել 6.3):

²³ Հետաքրքրական է դիտել տալ որ Ծն 1.1-ին մէջ «Աստուած» բառին համար գործածուած Եբրայերէն բառը՝ Էլոհի՛մ բառն է որ յոզնակի է եւ կը նշանակէ՝ «Աստուածներ»: Էլոհի՛մ բառին եզակին՝ «Էլոահ» բառն է, որ այս անգամ կը նշանակէ՝ «Աստուած»: Աստուած բառին յոզնակիով ըլլալը՝ վստահաբար ապացոյց մըն է Աստուծոյ Երրորդութիւն ըլլալու իրողութեան: Էլոհի՛մ բառին գործածութեամբ, սկիզբէն մեզի ցոյց կը տրուի որ ստեղծագործութեան հեղինակը աստուածութեան երեք անձերն են եւ ո՛չ թէ անոնցմէ մէկը կամ միւսը:

6.- «Ատոն», որ կը նշանակէ՝ Տէր, կամ «Ատոնայ», յոգնակի ձեւը, որ դարձեալ Տէր կը թարգմանուի, բայց կրնայ նաեւ նշանակել՝ «տէրերու Տէր»: Ասիկա եւս յատուկ անուն մը չէ, այլ՝ Աստուծոյ տրուած ստորոգելի մը, որ շատ սովորական գործածութիւն ունի:

7.- «Եահուէ» կամ «Եհովա»: Այն անունն է, որ Աստուած ինք Մովսէսին յայտնեց (Ել 3.14-15): Խորհրդաւոր անուն մըն է, որուն սկզբնական ձեւերը աւելի հին են, եւ Միջին Արեւելքի տարբեր ժողովուրդներու քով ծանօթ՝ «Եահու, Եավէ, Թահ, Եահ, Եա, Եաու» ձեւերով: Օրինակ, Ուկարիթի (Ռաս-Շամրա, Սուրիոյ մէջ, Լաթաքիայէն քիչ մը հիւսիս, ծովեզերք) մէջ յայտնաբերուած կաւէ սալիկներու վրայ կը գտնենք «Եահ» ձեւը, ուրիշ անուններու միացած, որոնք կու գան Ք.Ա. 15-րդ կամ 14-րդ դարէն:

Նոյն ձեւը 15-րդ դարուն կը գտնենք հարաւային Արաբիոյ՝ Եմէնի մէջ յայտնաբերուած արձանագրութեանց մէջ: Դեռ աւելի կանուխ, Բաբելոնեան սալիկներու վրայ կը գտնենք «Եա» կամ «Եաու» ձեւերով, Ք.Ա. շուրջ 2000 թուականներէն, կամ «Եավէ» ու «Եահու» ձեւերով կը կարդանք նոյնինքն Պաղեստինի մէջ՝ Մեզիդոյէն հարաւարեւելք գտնուող Թասանախ քաղաքին մէջ յայտնաբերուած սալիկի մը վրայ, Ք.Ա. 2000-1500 թուականներէն եկող:

Իսկ նոյն կրճատ ձեւերը լաւապէս ծանօթ են Եբրայական շատ մը անուններէ, ինչպէս օրինակ՝ Եղիա (Եբր. «Էլի-Եահ» = Եահը իմ Աստուածս է), կամ Ադոնիա (Եբր. «Ադոնի-Եահ» = Եահը իմ տէրս է), եւլն:

Այս անունին կապակցութեամբ քանի մը նկատողութիւն.-

1.- «Եահուէ» կամ «Եհովա» անունին կապակցութեամբ պէտք է գիտնալ, որ, ինչպէս անունը զոյգ ձեւերով նշելու այս կերպը ցոյց կու տայ, մենք ճշդիւ չենք գիտեր՝ թէ անցեալին ի՞նչպէս կը հնչուէր կամ կը կարդացուէր այս անունը, Եահուէ՞, թէ՛ Եհովա: Ինչպէս գիտենք, Հրեաներ ձայնաւորներ

չունէին, եւ կը գրէին միայն բաղաձայն տառերը: Այս անունը կը գրուէր չորս տառերով, բայց, դարձեալ կ'ըսեմ, չենք գիտեր թէ ի՛նչպէս կը հնչուէր, Եահուէ՞, թէ՛ Եհովա: Պատճառը այն է, որ Հրեաները, Տասնաբանեայ պատուիրաններէն Չրդին սխալ մէկ հասկացողութեամբ կը զգուշանային Աստուծոյ անունը արտասանելէ կամ կարդալէ. երբ Աստուածաշունչին մէջ Եահուէ անունին հանդիպէին՝ չէին կարդար, այլ՝ անոր փոխարէն կ'ըսէին «Ատոնայ», «Տէրը». ուստի ժամանակի ընթացքին մոռցուեցաւ զայն հնչելու ճիշդ կերպը: Աստուծոյ անունը չարտասանելու երկրորդ պատճառ մըն ալ կար: Մէկու մը անունը տալ՝ կը նշանակէր անոր վրայ որոշ իշխանութիւն ունենալ, անկէ մաս մը ունենալ, եւ հակառակը՝ անուն տալ՝ կը նշանակէր ինքզինքէն մաս մը տալ: Ատոր համար ալ իսկական իմաստով Աստուած անուն չունի, իսկ տրուած անունն ալ կարելի չէ գործածել: Ահա թէ ինչու, որովհետեւ ճիշդ արտասանութիւնը պահուած չէ, Սուրբ Գրոց գիտութեան մէջ ընդունուած ձեւ դարձաւ այս անունը կոչել պարզապէս «քառատար», այսինքն՝ չորս տառերէ բաղկացած (Յունարէն բառով մը՝ tetragrammaton), ինչպէս մինչեւ հիմա սովորութիւն կը մնայ:

2.- Աստուծոյ անունը տալէ խուսափիլը ուշ շրջանի սովորութիւն չէ: Սկիզբէն իսկ կարծէք աստուածաշնչական հեղինակներուն քով կայ միտումը՝ խուսափելու Եահուէ կամ նոյնիսկ Աստուած ըսելէ, եւ ասոնք փոխարինելու «Անունը» բացատրութեամբ: Այսպէս, օրինակ, երբ Մովսէս ինք կ'օրինադրէ Աստուծոյ դէմ ոեւէ հայհոյութիւն ընող քարկոծումով սպաննել, այսպէս կ'ըսէ. «Օտարական թէ երկրացի, ով որ Անունին հայհոյէ՝ պէտք է մեռցուի» (Ղ 24.16): Իսկ շատ սովորական է «Եահուէ»ի փոխարէն «Աստուծոյ անունը», «Տիրոջ անունը», կամ պարզապէս «անոր անունը» (քու անունդ, իմ անունս) բացատրութիւնները գտնել (տե՛ս Սղ 8.1, 20.1, 54.1, 89.16 եւլն):

Հետաքրքրական է դիտել, որ Քրիստոսի ժամանակակից Հրեաները նոյնպես, ինչպես Նոր Կտակարանին մեջ կը տեսնենք, առհասարակ կը խուսափին Աստուծոյ անունը բերան առնելէ, եւ փոխարէնը կը գործածեն «Հօրը» (Ղկ 1.49), «Զօրութիւնը» (Մտ 26.64), «Մեծութիւնը» (Եբր 1.3), կամ՝ «Աստուծոյ Անունը» (Մտ 6.9: Ղկ 11.2: Յհ 17.16 եւ 26), եւլն:

3.- Նկատի ունենալով որ Եահուէ անունը կազմուած է Եբրայերէն «եմ» էական բայով, կարելի է հարց տալ, թէ արդեօք յատուկ անուն է Եհովա, թէ՛ միայն Աստուծոյ ներկայութիւնը եւ յաւիտենականութիւնը կը նշէ (ինչպէս արդէն թարգմանութիւնները կը նշեն երբեմն): Կը թուի թէ Աստուծոյ կողմէ այս անունը Մովսէսին յայտնելը աւելի ջատագովական եւ աստուածաբանական նշանակութիւն մը ունի, Եզիպտոսի չաստուածներուն դիմաց ինքզինք ներկայացնելով իբրեւ Ան՝ որ միշտ «Է», «Մշտնջենաւորը», «Յաւիտենականը», «Անժամանակը»: Այս կապակցութեամբ յատկանշական է վերեւ նշուած «Յաւիտենական Աստուած» արտայայտութիւնը, որ կը գտնենք Ծննդոց գիրքին մեջ. *«Աբրահամ ծառեր տնկեց Բէրշեբայի մէջ, եւ հոն յաւիտենական Աստուծոյ՝ Եահուէի անունը կանչեց»* (Մն 21.33):

4.- Վերը տրուած տեղեկութիւնները ենթադրել կու տան, թէ Եահուէ անունը Մովսէսէն առաջ ծանօթ էր արդէն նահապետներուն, դեռ Աբրահամի եւ միւս նահապետներու ժամանակէն, ինչպէս Սուրբ Գիրքին մէջ ալ կը հանդիպինք (տե՛ս, օրինակ, Մն 27.20), եւ ինքզինք ալ Մովսէսին կը յայտնէ իբրեւ *«Ձեր հայրերուն Տէր (=Եահուէն) Աստուածը, Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը, եւ Յակոբի Աստուածը»* (Ել 3.15): Այս կապակցութեամբ պէտք է նաեւ ըսել, թէ մինչ «Էլ» կամ «Էլոհիմ» անունները առհասարակ Աստուծոյ մէջ տիեզերքի արարիչը, գերագոյն էակը կամ բարձրեալը կը նշեն, որ աւելի Աստուծոյ վերացական հասկացողութիւնն է, «Եահուէ» անունը աւելի Աստուծոյ

անձը կը նշէ եւ մարդոց հետ անձնական եւ սերտ
յարաբերութիւն մը կ'արտայայտէ, ինչպէս նահապետներուն
եւ ապա Մովսէսի հետ իր յարաբերութեան կերպը ցոյց կու
տայ, «երես առ երես» խօսելով անոնց հետ: Եւ Աստուած այս
անձնաւորական անունը կը յայտնէ Մովսէսին, որպէսզի
անով ինքզինք յայտնէ ու ճանչցնէ իր ժողովուրդին, ինչ որ կը
մատնանշէ Աստուծոյ նպատակը՝ իր ժողովուրդին հետ սերտ
կապ եւ յարաբերութիւն ստեղծելու, անոնց մէջ բնակելու (Ել
29.45: Ղւ 26.12: Եզ 37.27), անոնց հայր դառնալու եւ զանոնք
ունենալու իբրեւ որդիներ ու դուստրեր (հմմտ Ել 6.6-7: Բ.Թզ
7.14: Ես 43.6: Հմմտ Ել 4.22: Եր 31.9):

ԿՐՕՆԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԱԻԱՏԱԼԻՔՆԵՐ
ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՄԷՁ

1.- ՈԳԵՊԱՇՏԱԿԱՆ ՀԱԻԱՏԱԼԻՔՆԵՐ

Այսպիսի հաւատալիքներ ոչ միայն Հրեայ ժողովուրդին մէջ կային, այլ տարածուած էին բոլոր ժողովուրդներու եւ կրօններու մէջ: Անոնցմէ ոմանք կը կոչենք «նախապաշարում» կամ՝ «հին հաւատալիք»: Գիտենք, օրինակի համար, որ նախադարեան մարդը բնութեան բոլոր շարժուն առարկաներուն մէջ հոգիներ կ'ուզէր տեսնել, ինչպէս ամպին, արեւին, լուսնին, կայծակին, ծառին, ջուրին, գետին, ծովուն, երկրաշարժին, հրաբուխին մէջ: Բայց հոգիներ կամ ոգիներ կը տեսնէր նաեւ անշարժ բաներու մէջ, ինչպէս փայտին, քարին, ժայռին մէջ, եւլն: Բոլոր ժողովուրդներու դիցաբանութիւնները լեցուն են այսպիսի հաւատալիքներով եւ այդ ոգիներուն տրուած մասնաւոր անուններով եւ բնութեան երեւոյթներուն եւ առարկաներուն աստուածացումով: Հին Կտակարանի մէջ անոնց հետքերը կրնանք նշմարել կարգ մը տեղեր:

Այս երեւոյթներուն հետքերը կը տեսնենք թէ՛ նահապետական շրջանին, թէ՛ անկէ առաջ, եւ թէ՛ նոյնիսկ անկէ քիչ մը աւելի ուշ: Այսպիսի երեւոյթներ են օրինակ.-

Ա.- Սրբազան ծառերու կապուած հաւատալիքներ:

Մարդիկ կը հաւատային սրբազան ծառերու կամ անտառներու եւ անոնց յատուկ պաշտամունք կը մատուցանէին: Յաճախ այդ ծառերու կամ անտառներու պաշտամունքին համար կարգուած կ'ըլլային յատուկ քահանաներ կամ քահանայուհիներ, որոնք նաեւ որոշ պատգամներ կը ստանային անոնցմէ եւ այդ պատգամները կը մեկնաբանէին մարդոց:

Այդ ծառերուն կ'ընծայուէին թէ՛ զոհեր եւ թէ՛ աւելի մանր նուէրներ, որոնք կը կախուէին ուղղակի ծառերուն ճիւղերէն: Այս պաշտամունքին մնացորդին մէկ օրինակը կրնայ նկատուիլ Դաւիթի կեանքին մէջ տեղ գտած մէկ դէպքը (Բ.Թգ 5.22-25):

Ծառերու կապուած այս հաւատալիքը կար նաեւ Քանանու երկրին մէջ: Այս լոյսին տակ, հետաքրքրական է դիտել որ Աստուծոյ որոշ յայտնութիւնները կը կատարուէին ծառերու մօտիկ, այսպէս օրինակ, Աստուած Միւքէմին մերձակայքը՝ Մօրէի կաղնիին մօտ էր որ խօսեցաւ Աբրահամին առաջին անգամ եւ խոստացաւ իր սերունդին տալ այդ երկիրը եւ Աբրահամ տեղւոյն վրայ Աստուծոյ սեղան մը շինեց (Օն 12.6-7): Դարձեալ, այս անգամ Քեբրոնին մերձակայքը՝ Մամբրէի կաղնիի քով էր որ Աստուած երկրորդ անգամ ըլլալով երեւցաւ Աբրահամին (Օն 18.1):

Երբ Յակոբ դէպի Խառան կամ դէպի Միջագետք իր փախուստէն վերադարձաւ Քանանու երկիրը եւ Բեթել պիտի երթար հոն զԱստուած պաշտելու համար, իր ընտանիքէն հաւաքեց բոլոր թերափները, այսինքն՝ արտաքին աստուածները, ինչպէս նաեւ իր կիներուն ականջներուն օղերը, որոնք հմայութեան համար կը գործածուէին եւ *«թաղեց զանոնք Միւքէմի մօտ եղած Բեւեկնիին տակ»* (Օն 35.2-4): Յակոբ ասիկա ըրաւ պարզապէս ինքզինք եւ իր տունը սրբելու համար, այսինքն՝ օտար պաշտամունքի ամէն հետք ջնջելու համար, բայց եթէ երբեք իր ժամանակի հաւատալիքներու լոյսին տակ նայինք, ասիկա կրնար նշանակել թէ այդ արձանիկները, այլ խօսքով՝ աստուածները, պիտի չկարենային վնասել իրեն եւ իր ընտանիքին, քանի որ զանոնք թաղելով՝ զանոնք դրած կ'ըլլար ծառի ոգիին իշխանութեան տակ:

Աւելի ուշ շրջանի դրուագ մըն է Գեղէօնի դրուագը: Գեղէօն ինք եւս հրեշտակին յայտնութիւնը ունեցաւ բեւեկնիի մը տակ (Դտ 6.11-12): Ասոնց պէս բազմաթիւ դէպքերու կը

հանդիպինք Հին Կտակարանին մեջ: Նշանաւորագոյնը ասոնցմէ Աստուծոյ երեւումն է մորենիին մեջէն Մովսէսին (Ել 3.2-4): Ոգեպաշտական բացատրութիւն փնտռողներ անոր մեջ կը տեսնեն «կրակ աստուծոյ» տունը եւ կը փորձեն ըսել որ թերեւս Քորեբ լեռը ինքն ալ հրաբուխ մըն էր, իսկ հրաբուխները ոգեպաշտական հաւատալիքով կը նկատուէին «կրակ աստուծոյ» բնակարանները:

Բ.- Լեռներու կապուած հաւատալիքներ:

Լեռներու մասին գիտենք որ աշխարհի ամենէն բարձր, ահարկու կամ վեհ գագաթները նկատուած են աստուածներու բնակատեղի: Կարծէք այդպիսին նկատուած է Սինայի լեռը կամ Քորեբ լեռը, ուր Աստուած սկիզբը կ'երեւի միայն Մովսէսի: Ապա Մովսէս հոն կը բերէ իր ժողովուրդը եւ Աստուած կրկին կ'երեւի ծուխին եւ ամպին մեջ թաղուած լեռան բարձունքին (Ել 19.3-6, 9-13): Այս իմաստով հետաքրքրական է դիտել, որ Բահադի մարգարէներուն կոտորածէն ետք, Եղիա Քորեբ ապաստանեցաւ, եւ հոն էր որ Աստուծոյ հետ խօսեցաւ (Գ.Թգ 19.8-18):

Կարմել (=Կարմեղոս) լեռը նոյնպէս Եահուէի պաշտամունքի վայր կը սեպուէր կարծէք: Հո'ն էր որ Եղիա մարգարէն Տիրոջ փլած սեղանը վերաշինեց եւ վերանորոգեց, զանիկա վերածելով Եհովայի պաշտամունքի սեղանի (Գ.Թգ 18.30-31): Նոյն այս լեռան վրայ էր որ Աստուած կրակով ընդունեց Եղիայի մատուցած զոհը, որմէ ետք Եղիա սպաննել տուաւ Բահադի բոլոր սուտ մարգարէները:

Գ.- Քարերու կապուած հաւատալիք:

Քարերու կապուած հաւատալիքին մնացորդներն ալ կը տեսնենք: Բեթէլի դէպքը անոր մէկ կենդանի օրինակն է (Ծն 28.11-22): Յակոբ իր գլխուն տակ դրուած քարը իբրեւ արձան

կանգնեց որպէսզի որեւէ մէկը անզգուշութեամբ չըլլայ որ դպչի անոր կամ արհամարհէ զայն, բայց միաժամանակ անոր վրայ իւր թափեց, հաւանաբար իբրեւ չքմեղանքի ձեւ մը իր անզիտակից արարքին համար:

Դարձեալ, երբ Յակոբի ու Լաբանի միջեւ վեճ եղաւ, կը տեսնենք որ անոնք քարի արձան մը կը կանգնեցնեն եւ քարերու կոյտ մը կը բարձրացնեն, որպէսզի այդ արձանը եւ քարերու կոյտը վկայ ըլլան իրենց ուխտին եւ այդ ուխտին դէմ իրենց կողմէ կատարուած ուրիշ զանցառութեան (Օն 31.44-54):

Ուրիշ դրուագ մըն է Յեսուի ձեռքով կանգնուած 12 քարերը Յորդանանի մէջ (Յես 4.9): Կամ Յորդանանէն բերուած այլ 12 քարերու կանգնեցուիլը Գաղգաղայի մէջ (Յես 4.20): Կամ դարձեալ Յեսուի ձեռքով Սիւքեմի մէջ «Տիրոջ սրբարանին քով եղած բեւեկնիին տակ» քարի մը կանգնեցուիլը, որպէս Աստուծոյ հետ ուխտի նորոգութիւն եւ վկայութիւն (Յես 24.23.25-28):

Քարերը նոյնպէս, ըստ ոգեպաշտական հաւատալիքին, ունին իրենց ոգիները եւ հաւանաբար այդ հասկացողութեամբ է որ հնագոյն ժամանակներուն մարդիկ մեռեալի մը գերեզմանին վրայ մեծ քար մը կամ քարէ արձան մը կը կանգնեցնէին: Անոր բացատրութիւնը հաւանաբար այն է, որ մեռեալը կը յանձնուէր այդ քարին մէջ բնակող ոգիին պահպանութեան: Արդ, Հին Կտակարանի մէջ կը տեսնենք որ Յակոբ իր կնոջ Ռաքելի վրայ կանգնեց այդպիսի քար մը (Օն 35.20: Ա.Թգ 7.10-12):

Դ.- Ջուրերու կապուած ոգեպաշտական հաւատալիք:

Կեանքի պահպանութեան համար հանքային ջուրերը իրենց բուժիչ յատկութեանց համար նկատուած են իբրեւ ոգիներով բնակուած, մանաւանդ հոսուն ջուրերը, որոնք կոչուած են եւ Հին Կտակարանին մէջ ալ կը կոչենք «կենդանի

ջուր», ի հակադրութիւն այն ջուրերուն որոնք ամբարուած եւ լճացած են:

Ջուրերուն մէջ բնակող ոգիներու կամ աստուածներու գոյութեան հաւատալիքը մեզի ծանօթ է նաեւ բոլոր ժողովուրդներուն դիցաբանութենէն: Օրինակ, Յունական դիցաբանութեան մէջ ջուրերը ունին իրենց աստուածը՝ Պոսիդոնը, լատիններու մօտ՝ Նեփթոնը: Նաեւ կը գտնենք գետերու եւ ծովերու կապուած ծովանոյշներու հաւատալիքը: Ջուրերու հաւատալիքը կար նաեւ Հայաստանի մէջ, ուր կը տեսնենք որ ջուրերու պաշտամունքին կապուած էր վիշապներու հասկացողութիւնը, այսինքն այն՝ որ ջուրերուն մէջ վիշապներ կը բնակէին:

Այսպիսի հաւատալիքներու որոշ տեղեկութիւններ, յատկապէս կապուած որոշ աղբիւրներու կամ ջրհորներու, կը քաղենք նաեւ Հին Կտակարանէն: Այսպէս, օրինակ, Ծննդոց գիրքէն մեզի ծանօթ է Աբրահամի կեանքին մէջ այն ջրհորը որ կը գտնուէր Արաբիոյ անապատին մօտիկը, ուր Հագար (Աբրահամի եւ Սարայի աղախինը) ունեցաւ Աստուծոյ հրեշտակին յայտնութիւնը եւ այդ ջրհորը կոչեց՝ «Լահայրոյի ջրհոր», որ կը նշանակէ՝ *«տեսիլքիս կենդանի Աստուծոյն ջրհորը»* (Ծն 16.6-14, 21.14-19): Բայց այս երկու երեւումներն ալ տակաւին ջրհորներու կամ աղբիւրներու հաւատալիքի մասին ոչինչ կ'ըսեն մեզի:

Ծն 14.7-ին մէջ յիշուած է Կադէս անունով ջրհոր մը որ կը կոչուէր՝ «պատասխանի աղբիւր» կամ «դատաստանի աղբիւր»: «Դատաստանի աղբիւր» բացատրութիւնը կա՛մ պատմական տուեալ ունի եւ կա՛մ ջրհոր մըն էր, ուր յաճախ ցեղապետներ կը նստէին եւ դատաստան կ'ընէին, հաւանաբար այդ աղբիւրէն պատասխան եւ կարծիք առնելով կամ գուշակութիւն ընելով:

Ուրիշ դրուագ մըն ալ կը գտնենք Ծննդոց գիրքին մէջ: Երբ Յակոբ Միջագետքէն կու գար, կը հանդիպի Յարոկ կոչուած տեղ մը ուրկէ կ'անցնէր Եաբոկ անունով գետակ մը՝

երթալ թափելու համար Յորդանան գետին մեջ: Յակոբ գիշերով գետակը անցած ատեն կռիւի կը բռնուի «մարդ»ու մը հետ, որ ամբողջ գիշերը մենամարտելէ ետք, արշալոյսէն առաջ կ'ուզէ ձգել երթալ: Մինչ Ծննդոց գիրքը անոր մէջ Աստուծոյ ներկայութիւնը կը տեսնէ (32.28-30 հմմտ Ռվս 12.4-5), ոգեպաշտական բացատրութեան կողմնակիցները անոր մէջ ջուրի ոգին կ'ուզեն տեսնել, որ լոյսին բացուելէն առաջ կ'ուզէ չքանալ:

2.- ՄԱՐԴԱԶՈՂ

Հին ժամանակներուն մէջ, ամէն տեղ, մենք այս սովորութեան հետքերը կը գտնենք: Մարդիկ երբ ուզէին աստուածներէն բացառիկ շնորհք մը խնդրել կամ երբ ուզէին կատարուած ծանր յանցագործութեան մը համար անոնց քաւութիւնը ունենալ, կը մտածէին ընծայ բերել անոնց, եւ ամենէն թանկագին ընծան գոր կը մատուցանէին աստուածներուն՝ իրենց զաւակներն էին, եւ աւելի թանկագին կը սեպուէր նուէրը՝ եթէ երբեք ընծան (գոհը) անդրանիկ զաւակը ըլլար:

Գալով Հին Կտակարանին, հոն կը հանդիպինք մարդագոհի բազմաթիւ օրինակներու, որոնք սակայն, կը վերաբերին ուրիշ ժողովուրդներու: Յստակ է որ Եբրայական կրօնքի մէջ մարդագոհի սովորութիւնը չկար: Երբ կ'առնենք Իսահակի գոհագործման դրուագը կամ Աստուծոյ պահանջքը այդ գոհագործումը կատարելու, կը տեսնենք որ նոյնինքն այդ դրուագը մեզի կ'ուզէ սորվեցնել որ Աստուած մարդկային գոհ չ'ուզեր, այլապէս Տիրոջ հրեշտակը Աբրահամին պիտի չըսէր. *«Տղուն ձեռք մի՛ դպցներ եւ անոր բան մը մի՛ ըներ»* (Մն 22.12):

Հոս սակայն ուրիշ երեւոյթ մը կամ իրողութիւն մը կայ որուն պէտք է անդրադառնալ: Երբ Աբրահամ Իսահակը գոհելու Աստուծոյ պահանջքը լսեց, վստահաբար ցաւեցաւ,

բայց չզարմացաւ, որովհետեւ իր շրջանի մէջ այնքան ծանօթ երեւոյթ էր որ իրեն համար անակնկալ մը չէր:

Հետաքրքրական է նաեւ գիտնալ որ թագաւորներ մեծ պատերազմներէ առաջ, որպէսզի յաղթանակ ապահովէին, իրենց անդրանիկ որդիները կը գոհէին: Այսպիսի նշանաւոր օրինակ մըն է Մովսէսի Մեսա թագաւորին արարքը: *«Ան երբ տեսաւ որ պատերազմը իր վրայ սաստկացաւ®, առաւ իր անդրանիկ որդին® ու զանիկա պարիսպին վրայ գոհեց»* (Դ.Թգ 3.26-27): Ասիկա մէկ բան ցոյց կու տայ, թէ այն ժամանակուան մարդոց վրայ զօրաւոր ազդեցութիւն կ'ունենար այսպիսի գոհագործում մը, որովհետեւ այդ բացառիկ գոհով, զոհ մատուցանողը աստուածներու հաճութիւնը կրնար ունենալ:

Այս մարդագոհի կապակցութեամբ, մենք արդէն յիշեցինք Բահադի եւ Աստարովթի պաշտամունքին կապուած երեխաներուն գոհագործումը, կամ նոր շինուած տուներու, պարիսպներու, պատերու եւ դռներու ներքեւ երեխաներու գոհագործումը: Թէպէտ մարդագոհը բնաւ չընդունուեցաւ Եբրայական կրօնի մէջ, բայց եւ այնպէս, բոլոր անդրանիկ զաւակները Աստուծոյ սեփականութիւնը կը նկատուէին (Ել 13.1-2), եւ իբր այդպիսին, անոնք պէտք էր «ազատագրուէին» կամ «զնուէին» Աստուծմէ. իսկ ատիկա կ'ըլլար անոնց փոխարէն ընտանի անասունի մը ընծայումով: Ոչ միայն մարդոց անդրանիկները, այլեւ՝ անասուններու անդրանիկները եւս պէտք էր փրկել զանոնք փոխարինելով ուրիշ անասունով մը (Ել 13.11-13, 23.19):

Իսկ երբ կու գանք Նոր Կտակարանին, կը տեսնենք որ Յիսուսի տաճար ընծայման ատեն նոյն Օրէնքը ի զօրու էր, թէպէտ արարողական որոշ պաշտամունք մըն ալ աւելցած է: Ի վերջոյ, Եբրայական կրօնքը չընդունեց մարդկային գոհը, բայց երբ Եբրայեցիները Բահադի եւ Աստարովթի պաշտամունքին նուիրուեցան, կիրարկեցին մարդագոհը եւ

այս երեւոյթին դէմ էր որ կատաղի բողոք բարձրացուցին մարգարէները (Եզ 20.18-32):

3.- ՄՐԲՈՒԹԻՒՆ

Սրբութեան այսօրուան մեր հասկացողութիւնը հիմնականին մէջ կապուած է բարոյական մաքրութեան եւ կատարելութեան հասկացողութեան, բայց երբ ակնարկ մը նետենք անցեալին վրայ, կը տեսնենք որ այդպէս չէր հասկացողութիւնը հին ժամանակներուն:

Սկզբնապէս Հին Կտակարանին մէջ սրբութիւնը երբեք կապ չունի մարդոց հետ, այլ կապուած է մի՛այն Աստուծոյ: Աստուած է միակ սուրբը, ինչպէս Սուրբ Գրոց մէջ կ'ըսուի՝ «Սուրբն Իսրայէլի», եւ ասիկա կու գայ շեշտելու Հրեաներու մտածողութեան մէջ Աստուծոյ տարբերութիւնը բոլոր միւս շաստուածներէն կամ աստուածութիւններէն, որովհետեւ այդ աստուածները իրենք մարդոցմէ կամ մարդկային նկարագրէն ոչինչով կը տարբերին: Աստուած սակայն անհունօրէն տարբեր է մարդոցմէ եւ ճիշդ ատոր համար է որ կարելի չէ անոր մօտենալ, կարելի չէ գայն տեսնել կամ անոր նայիլ կամ նոյնիսկ կարելի չէ անոր ձայնը լսել եւ ողջ մնալ (Մն 32.30: Ել 33.20-23: Բ.Օր 5.24-29: Դտ 6.22-23, 13.21-23):

Ինչո՞ւ կարելի չէ սրբութեան հետ յարաբերիլ.-

Ա.- Սրբութիւնը կը հասկցուէր իբրեւ բան մը որ կրնար մահացու կերպով վիրաւորել կամ հարուածել. ճիշդ ինչպէս մեղքը իր հին հասկացողութեամբ փոխանցիկ էր, եւ ուստի, կրնար ուրիշներուն փոխանցուիլ, սրբութիւնն ալ նոյնպէս կ'ըմբռնէին: Լաւագոյն համեմատութիւն մը կ'ըլլայ ասոր՝ հիւլէական շողարձակումը, որուն հետ յարաբերութեան մէջ եկողը կը վտանգուի եւ որուն ստացած վարակը փոխանցիկ է.

վարակ մը որ կը քայքայէ մարմինները, եւ հետեւաբար, մահացու կ'ըլլայ:

Հին Կտակարանի մէջ, ո՛չ միայն Աստուծոյ կարելի չէր մօտենալ, այլ նաեւ Աստուծոյ ընծայուած ոեւէ առարկայի, այլ խօսքով՝ սրբազան առարկաներու, ինչպէս օրինակ, Ուխտի Տապանակին, տաճարին ընծայուած զոհերուն, եւլն: Հետեւաբար, սրբութիւնը մարդոց կողմէ եւ մարդոց համար փափաքելի յատկանիշ մը չէր եւ չէր կրնար ըլլալ:

Այն անձը որ գիտակից կամ անգիտակից կերպով շփման մէջ կու գար անոր հետ, պէտք էր մեկուսացուէր եւ մահուան ենթարկուէր, չարիքի պատճառ չըլլալու համար ուրիշներուն: Այս հասկացողութեամբ կը բացատրուի կարգ մը երեւոյթներ Հին Կտակարանին մէջ, այսպէս օրինակ, երբ Աստուած Սինա լեռան վրայ պիտի իջնէր եւ պիտի խօսէր Մովսէսի եւ իր ժողովուրդին հետ, Աստուած Մովսէսի բերնով արգիլեց լեռան մօտենալ: Ով որ մօտենար՝ մարդ թէ անասուն, պէտք էր մահուան ենթարկուէր (Ել 19.10-13): Եթէ ամէն մօտեցող պիտի սպաննուէր, այդ պարագային, ի՞նչպէս Մովսէս պիտի կարենար լեռ բարձրանալ, այլ խօսքով, ի՞նչպէս պիտի կարենար սրբութեան հետ հաղորդակցութեան մէջ գալ եւ ողջ մնալ:

Յստակ է սակայն, որ Մովսէս առանձնաշնորհեալ մէկն էր եւ արտօնութիւն ունէր նոյնինքն Աստուծոյ կողմէ՝ մօտենալու Աստուծոյ: Հետեւաբար, ան կրնար մօտենալ Աստուծոյ եւ կրնար ԿՈՒՅԼ սրբութեամբ կոխուած լեռը կամ ձեռնել Աստուծոյ մատով գրուած Օրէնքի տախտակները: Մենք հետաքրքրական բան մը կը տեսնենք Ելիցի գիրքին մէջ, ուր դրուագ մը կայ որ մեր ուշադրութիւնը կը գրաւէ: Երբ Մովսէս լեռնէն իջաւ՝ անոր դէմքը կը ճառագայթէր (Ել 34.29-35): Ատիկա յստակ է որ Աստուծոյ փառքին ճառագայթումն է, ճիշդ այնպէս ինչպէս կը բացատրէ Պօղոս առաքեալ (Բ.Կր 3.13-18):

Բ.- Սրբութեան երկրորդ հասկացողութիւնը ծիսական հասկացողութիւնն է: Աստուած սուրբ ըլլալով, իր պաշտամունքին նուիրուած կամ յատկացուած ռեւէ առարկայ նոյնպէս սուրբ կամ սրբուած կը համարուի: Այսպէս, օրինակ, Ուխտի Տապանակը, տաճարական առարկաները կամ վայրերը, Սրբութիւն Սրբոցը: Միայն յատուկ կերպով սրբուած պաշտօնեաներ կրնային մօտենալ անոնց: Հին ժամանակներուն, Աստուծմէ նշանակուած կամ օծուած կրօնական առաջնորդները, ինչպէս նաեւ, Ահարոնի եւ անոր որդիներուն օծումով քահանայական դասը միայն արտօնութիւն ունէին, իբրեւ Աստուծոյ նուիրագործուած մարդիկ, սրբութեանց հետ շփման մէջ գալու:

Հետաքրքրական է սակայն, դիտել որ քահանաները եւս ստիպուած էին յատուկ սուրբ զգեստներ հագնելու երբ տաճարէն ներս պարտականութիւն մը պիտի կատարէին, եւ պաշտօնին աւարտին, մարդոց հետ շփման մէջ մտնելէ առաջ, թէ՛ զգեստները պէտք էր յատուկ կերպով լուացուէին եւ թէ՛ իրենք (Ղւ 8.1-13, 16.1-2, 23-28):

Միւս կողմէ, ռեւէ մէկը որ նուիրագործուած պաշտօնեայ չէր, եթէ համարձակէր դպչիլ ռեւէ սրբազան առարկայի՝ չարաչար կը հարուածուէր (Ա.Թգ 7.1-2: Բ.Թգ 6.1-11): Աստուծոյ նուիրուած ընծաներն ալ կը դառնային սրբութեամբ վարակուած եւ զանոնք ձեռնողը կամ իւրացնողը՝ պէտք էր պատժուէր, նոյնիսկ իր հետ շփման մէջ եղող բոլոր մարդոցմով, իր բոլոր ընտանիքով, իր բոլոր ինչքերով պէտք էր կորսուէր, որպէսզի սրբութեան մահացուցիչ վարակը չփոխանցուէր ուրիշներուն: Ասկէ առաջ տեսանք, որ երբ Երիքովի կործանումէն ետք, Աքար համարձակեցաւ իր ձեռքը երկնցնել Աստուծոյ աւարին, ատիկա պատճառ եղաւ ի՛ր եւ ի՛ր ամբողջ ընտանիքին քարկոծումին: Այնտեղ, մեղքի հասկացողութիւնը կայ, այո՛, բայց չմոռնանք որ կայ նաեւ Աստուծոյ սրբութեամբ վարակուած ըլլալու վախը, որով կը

բացատրուի Աքարի ընտանիքին եւ իր ինչքերուն ամբողջական փճացումը:

Գ.- Սրբութեան սկզբունքին այս հասկացողութիւնը որ աւելի վանողական էր եւ կարելի չէր յատկացնել մարդոց, ժամանակի ընթացքին հետզհետէ հասաւ իր ուղիղ ըմբռնումին, երբ մարդիկ տեսան՝ թէ սրբութիւնը ո՛չ միայն Աստուծոյ նկարագիրին յատկանիշն է, իբրեւ բարոյական հասկացողութիւն, իբրեւ կատարեալ մաքրութիւն եւ նոյնինքն կատարելութիւն, այլ նաեւ Աստուծոյ պահանջքն է մարդոցմէ, ինչպէս Ղեւտական գիրքին մէջ կը կարդանք. *«Ես եմ Տէրը, ձեր Աստուածը: Դուք ձեզ սրբեցէք եւ սուրբ եղէք, որովհետեւ սուրբ եմ ես»* (Ղ. 11.44-45: Հմմտ 19.2): Նոյն այս բարոյական կատարելութեան հասկացողութեամբ էր, օրինակ, որ Եսայի իր տեսիլքին մէջ զԱստուած պիտի տեսնէր, որուն համար սերովբէներ կ'երգէին. *«Սուրբ, Սուրբ, Սո՛ւրբ է զօրքերու Տէրը»* (Ես 6.3):

4.- ԱՆՂԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՀԱԻԱՏԱԼԻՔԸ

Անղենական կեանքի հաւատալիքը կամ հաւատքը շատ հին է եւ անիկա յատուկ է բոլոր ժողովուրդներուն²⁴: Ընդհանրապէս կը խորհուէր թէ մեռելները կ'երթան ստորերկրեայ աշխարհ մը, ուրկէ կարելի չէր վերադառնալ:

²⁴ Եթէ կարենանք տեսնել կամ կարդալ պեղումներու մասին, որոնցմէ մարդիկ զանազան յայտնութիւններ կը բերեն այս դարուն եւ երբ կը տեսնենք այդ յայտնուածները, կ'եզրակացնենք որ անղենական կեանքի հաւատալիքը կը մատնանշեն մեզի, որովհետեւ բոլոր այն առարկաները որ մեռելին հետ կը թաղուին, տեսակ մը իր երկար ճամբորդութեան պատրաստութիւնն են, օրինակ, նկատի ունենանք Եգիպտոսի բուրգերը: Նոյնպիսի հաւատալիք եւ սովորութիւն կը գտնենք Հայաստանի մէջ, ուր կատարուած պեղումներէն գտնուած են շատ զարմանալի առարկաներ, ինչպէս օրինակ, Սեւանի ափին, Լճաշէն գիւղին մէջ, ջուրերուն իջած տեղը յայտնաբերուած են դամբարաններ. հետաքրքրական է յատկապէս անոնցմէ մէկը, որուն մէջ ցեղապետ մը թաղուած է իր կարգով, ծառաներով, հագուստներով եւ զէնքերով:

Այդ աշխարհը ունէր իր յատուկ աստուածը, Եգիպտացիներուն քով Օսիրիս կոչուած, Բաբելացիներուն քով՝ Ներկալ, Ասորեստանցիներուն քով՝ (Օ), Յոյներուն քով՝ Հադէս, Քանանացիներուն քով՝ Հորոն, Սուրիացիներուն քով՝ Մոթ, Հայոց մէջ՝ Տիր: Մեռելներու աշխարհին պատկերացումը կը գտնենք շատ մը արևմտաեւրոպական գրոյցներու մէջ²⁵:

Եգիպտական բուրգերէն մէկուն մէջ գտնուած է գիրք մը որ կը խօսի մեռելներու պատրաստութեան մասին եւ կը կոչուի «Գիրք Մեռելոց»: Բաբելացիները անդենական աշխարհը կը պատկերացնէին տեսակ մը իբրեւ հսկայ խոռոչ մը բացուած լերան մը մէջ, ուր սակայն ամէն ինչ ծածկուած էր փոշիով. այնտեղ գացողները՝ իրենք եւս փոշիով կը ծածկուէին:

Ուրիշ ժողովուրդներ, մեկնող հոգիներու գոյութիւնը կը պատկերացնեն շուքի ձեւով, կամ մեռելի հոգին շուք մը կը նկատեն, ինչպէս օրինակ Յունական արևմտաեւրոպական ցոյց կու տայ: Մինչդեռ տարբեր ժողովուրդներ կը հաւատային հոգիին իրական գոյութեան: Այս վերջին հաւատալիքը ունեցող ժողովուրդները, մեռելները կը թաղէին բնակութենէ հեռու, "որպէսզի".- ինչպէս կ'ըսէին.- "մեռելը տուն չվերադառնայ եւ մարդիկը չհալածէ, եւ կամ".- ինչպէս դարձեալ կ'ըսէին.- "որպէսզի հոգին իր նոր կեանքին վարժուի եւ իր հին կեանքը

²⁵ Յիշեցէք Յոյն Օրբէոսի նշանաւոր դրուագը. ան հոչակաւոր էր իր կախարդական եւ գրաւիչ քնարով եւ կը սիրէր աղջիկ մը: Աղջիկը կը մահանայ եւ Օրբէոս սաստիկ կը ցաւի եւ կ'որոշէ երթալ եւ անդենական կեանքի աստուծմէն խնդրել իր սիրածը: Բաւական դժուարութիւններէ ետք, կը հասնի հոն ուր սաստիկ խաւար կը տիրէ եւ կը յաջողի իր քնարով հմայել այդ աստուածը որ կը խոստանայ իրեն վերադարձնել իր սիրածը, սակայն իրեն պայման կը դնէ որ մինչեւ մթութեան ծայրը հասնիլը իր ետեւ չնայի: Օրբէոս կը խոստանայ պայմանը կատարել եւ ճամբայ կ'ելլէ: Աղջիկը շուքի ձեւով կը հետեւի իրեն, սակայն Օրբէոս ճամբու կիսուն կը սկսի կասկածիլ թէ արդեօք աղջիկը իրեն կը հետեւի, եւ ետեւ կը նայի: Նոյն ժամուն աղջիկը կ'աներեւութանայ մեծ մթութեան մէջ:

չփնտոէ"²⁶: Ուրիշ ժողովուրդներ, ճիշդ հակառակը կ'ընէին: Իրենց մեռելները իրենց անմիջական շրջապատին մէջ կը թաղէին, որպէսզի իրենց հետ ըլլան:

Ի՞նչ էր Հրէից հաւատքը այս մասին:

Եբրայական կրօնքը անդենականով շատ հետաքրքրուած չէր, այլ՝ այս աշխարհով: Ասկէ կը բղխէր այն համոզումը, թէ արդարը իր վարձատրութիւնը կը ստանայ այս աշխարհին մէջ: Երկար եւ բարօր կեանք մը, աստուածային նշան կը նկատուէր արդարութեան (Ես 65.17-20: Սղ 55.15, 22-23: Հմմտ Յոր 15.20, 32: Առ 10.27): Հրեաներ կը հաւատային անդենական աշխարհին որուն պատկերացումը մօտիկ էր Բաբելականին, անիկա կը կոչուէր՝ դժոխք, յաճախ թարգմանուած իբրեւ՝ գերեզման, գուբ, խորք, անդունդ, եւ կը գտնուէր աշխարհի ստորին բաժնին մէջ, եւ ասկէ կու գայ վար իջնելու կամ գերեզման իջնելու գաղափարը, կամ դժոխքին աշխարհէն վար ըլլալու գաղափարին ծագումը (Օն 44.29-31):

«Դժոխք» բացատրութեամբ մենք չենք հասկնար չարչարանքի վայր մը, այլ անով կը հասկցուի մեռելներու աշխարհը: Բայց ինչո՞ւ անցեալին դժոխքը սարսափելի բան մը կը նկատուէր. որովհետեւ հոն երթալը Աստուծմէ բաժանում կը նկատուէր: Ասկէ առաջ ըսինք որ Եբրայեցիի մը համար, Աստուած անապատի Աստուածն էր: Եթէ Աստուծոյ այս տեղայնական հասկացողութիւնը առնենք, կը նշանակէ թէ ստորերկրեայ այս աշխարհը (դժոխքը) Աստուծոյ տիրապետութենէն դուրս բան մըն էր, եւ հոն երթալ, կը նշանակէր Աստուծոյ ներկայութենէն զրկուիլ, ահա թէ ինչո՞ւ սարսափելի բան էր անիկա:

²⁶ Հաւանաբար այս մտածողութեան արտայայտութիւնն է Բսլամներու սովորութիւնը մինչեւ այսօր՝ մեռելը գերեզման դնելու եւ փախչելու:

Թե ի՛նչ ձեռով կը պատկերացուի անդենական կեանքը, կարելի է մեջբերել որոշ արտայայտութիւններ: Անիկա նկատուած է մոռացութեան երկիր (Սղ 88.10-12): Նկատուած է «մութ երկիր» եւ «մահուան շուք» (Յոբ 10.21-22): Ումանց պատկերացումով, ոչ միայն մեռելները իրե՛նք մոռցուած են, ինչպէս կ'ըսէ Սաղմոսը (31.12), այլ մեռելները իրե՛նք եւս չեն յիշեր այս աշխարհը եւ չեն խոստովանիր զԱստուած (Սղ 6.5: Ես 36.18-19):

Ուրիշներու պատկերացումով մեռելները կը ճանչնան զիրար, թէպէտ ասիկա կ'ենթադրէ առակաւոր պատկերացում մը ըլլալ (Ես 14.4-12): Բայց այնտեղ այլեւս այս աշխարհին յատուկ տէր-ծառայի, կամ հարստահարիչ-հարստահարեալի յարաբերութիւնները չկան: Չկան խնդիրներ եւ հարցեր, այլ կայ միայն հանգիստ (Յոբ 3.13-19):

Կարգ մը հատուածներու մէջ, մենք կը գտնենք դժոխքի ուրիշ մէկ պատկերացում մը առասպելական ձեռով, իբրեւ հսկայ բերան մը որ կը բացուի եւ կը կլլէ մարդիկը, աւելի ճիշդ կը կլլէ չարերը, եւ ասոր մէկ պատկերացումը կը գտնենք Թուոց գրքին մէջ (16.33-35): Պատկերացում մըն է որ նախնական ժողովուրդներու մօտ կայ. այստեղ անոր մէկ արտայայտութիւնը կը գտնենք: Այսպիսի մէկ արտայայտութիւն մըն ալ կը գտնենք մեր պատմութեան մէջ, Արտաւազդ թագաւորի դրուագին մէջ:

Հրեաներ չափազանց մեծ կարեւորութիւն կու տային թաղումին: Առանց թաղումի ոեւէ անձ անդենական կեանք չէր ունենար: Հետեւաբար, մեծագոյն դժբախտութիւն կը նկատուէր եւ մեծագոյն պատիժի արտայայտութիւն էր թաղում չունենալը, որովհետեւ անձը զրկուած կ'ըլլար անդենական կեանքէն: Այս հաւատալիքին արտացոլացումը կը գտնենք Հին Կտակարանեան քանի մը դրուագներու մէջ, օրինակ, Սաւուղի եւ իր երեք որդիներուն թաղման պարագան որ տեղի ունեցաւ Գաղաադացիներու կողմէ, կը բացայայտէ որ Գաղաադացիներ իրե՛նք եւս նոյն այս

հաւատալիքը ունէին (Ա.Թգ 31.11-13): Տե՛ս նաեւ Աքաափ եւ Յեզաբելի պարագան (Գ.Թգ 21.20-24): Նոյնինքն այս հաւատալիքին պատճառով էր որ մարդիկ յատուկ դամբարաններ կը գնէին:

Երկրորդ մէկ երեւոյթը անդէնական կեանքի հաւատալիքին հետեւեալն է.- Քանի որ մահը տեսակ մը կորուստ կամ մոռացում կը նկատուէր, Եբրայեցիներու մէջ հետզհետէ ժամանակի ընթացքին ծնունդ առած էր տագրամուսնութեան պարագան (Բ.Օր 25.5-10): Ասիկա նպատակ ունէր ննջեցեալին անունը անյիշատակ չձգել, բայց հաւանաբար, մեկնած այն հաւատալիքէն, թէ՛ մարդու մը հոգին իր գաւակներուն մէջ կ'ապրի: Ուստի իրենց հասկացողութեամբ, զուակ չունեցող մարդը դժբախտ է եւ ամբողջական կորուստի ենթարկուած:

Անդէնական կեանքին կապուած երրորդ երեւոյթ մըն էր՝ մեռելահմայութիւնը կամ ոգեհարցութիւնը, որ թէպէտ խստիւ արգիլուած էր Հրեայ ժողովուրդին մէջ, բայց ըստ երեւոյթին, միշտ ալ կիրարկողներ կային (Բ.Օր 18.9-14 հմմտ Ա.Թգ 28.3-19):

Երբ ժամանակի ընթացքին Աստուծոյ մասին Հրեաներու ըմբռնումը զարգացաւ եւ տեղական հասկացողութիւնը տեղի տուաւ Աստուծոյ տիեզերականութեան գաղափարին, թեթեւօրէն փոխուեցան նաեւ մահուան եւ անդրաշխարհի պատկերացումները: Այլեւս մեռեալը Աստուծմէ բաժնուած չէր նկատուէր, որովհետեւ Աստուած դժոխքին վրայ եւս տիրապետութիւն ունէր: Այս հաւատքին կամ հաւատալիքին հետքերը մենք կը գտնենք Ն.Ք. 8-րդ դարու վերջաւորութեան: Աստուած Յուդայի Աքազ թագաւորին կ'առաջարկէ նշան մը ուզել *«ի խորութեան կամ ի բարձրութեան»* (Ես 7.11): Այս բացատրութիւնը պարզապէս կը նշանակէ որ Աստուած պատրաստ է իրեն նշան տալու ոեւէ տեղէ, եւ ասիկա ուրիշ բան չի մատնանշեր եթէ ոչ Աստուծոյ տիեզերականութեան, այլ խօսքով՝ ամենուրեքութեան իրողութիւնը:

5.- ԱՆԴԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՀԱԻԱՏԱԼԻՔԸ
ՅԵՏ-ԳԵՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԻՆ

Երկու խօսք ըսենք յետ-գերութեան շրջանին անդենական կեանքի հաւատքին մասին: Վերեւ ակնարկուած փոփոխութիւնը դանդաղօրէն կատարուեցաւ: Այս փոփոխութեան մէջ, Աստուծոյ տիեզերականութեան հաւատաքին առընթեր, մեծ դեր ունեցան նաեւ կեանքի փորձառութիւնը եւ չարի հարցին տրուած պատասխանը:

Կեանքը ցոյց կու տար որ միշտ չէ որ արդարները երկար եւ բարօր կեանք մը կը վայելեն, այլ թէ յաճախ, չարերն են որ բարօրութիւն կը վայելեն եւ ընդհանրապէս արդարները իրե՛նք են որ կը տառապին: Արդարին այս տառապանքը պատկերացնող գիրքը պիտի ըլլար Յոբի գիրքը, գրուած շուրջ 400 թուականներուն, որ ձեւով մը կու գայ ըսելու թէ տառապանքը Աստուծոյ կողմէ պատիժ չէ եւ թէ ճշմարիտ հատուցումը ապագայ վարձատրութիւնն է:

Այսպէս ալ, Յոբ վերակենդանութեան եւ զԱստուած տեսնելու յոյսը եւ հաւատքը կ'արտայայտէր: Յոբ բացարձակ վստահութիւն ունէր իր Փրկիչին (իր դատը տեսնողին) վրայ: Ան ամբօրէն կը հաւատար որ թէպէտ իր մարմինը ամբողջապէս փճանայ՝ դարձեալ պիտի կենդանանայ, եւ իր մարմինով, իր սեփական աչքերով զԱստուած պիտի տեսնէ, ինչպէս կ'ըսէ այնքան գեղեցիկ կերպով. *«Գիտեմ թէ իմ Փրկիչս ողջ է՞, թէեւ մորթս եւ մարմինս ամբողջապէս փճանան՝ գիտեմ սակայն որ զԱստուած պիտի տեսնեմ ոչ թէ ուրիշին ընդմէջէն այլ իմ սեփական աչքերս պիտի դիտեն զայն»* (Յոբ 19.25-27): Յոբին այս խօսքը Աստուծոյ հանդէպ բացարձակ վստահութիւն եւ հաւատք ունեցող մարդու խօսք է:

Եսայի մարգարէն ի՛նք եւս մեռելներու յարութեան նախատեսիլքը ունի: Ան կ'ըսէ. *«Քու մեռելներդ պիտի*

ողջնանան: Մեռելներուդ մարմինները յարութիւն պիտի առնեն: Արթնցէ՛ք ու ցնծութեամբ երգեցէ՛ք, ո՛վ հողի մէջ բնակողներ՞. երկիրը իր մեռելները դուրս պիտի նետէ» (Ես 26.19: Տե՛ս նաեւ Դն 12.2-3: Եզ 37.1-14):

Նոյն այս հաւատքը, այսինքն՝ յաւիտենական կեանքի հաւատքը՝ հաւատքի վերածուած եւ բացարձակ ձեռով ժողովրդականացած կը գտնենք արդէն Մակարայեցոց դարաշրջանին: Մակարայեցիներուն երկրորդ գիրքին մէջ կը պատմուի եօթը եղբայրներու նահատակութեան մասին որ իրենց մօր աչքին առջեւ տեղի ունեցաւ: Անոնցմէ երկրորդը՝ Մակար, երբ իր հոգին աւանդելու վրայ էր, հետեւեալ բառերը ըսաւ Անտիոքոս թագաւորին. «*Դուն ո՛վ գոռոզ, ինքնահաւան ու ամբարտաւան, դուն կը կարծես թէ մեզ կը զրկես այս աշխարհի կեանքէն: Թէպէտ մենք կը մեռնինք օրէնքի համար, բայց Աստուած որ աշխարհի թագաւորն է, յաւիտենական կեանքի մէջ, երկրորդ ծնունդի ժամանակ՝ վերստին կեանք պիտի պարգեւէ մեզի» (Բ.Մկ 7.9 եւ 14-րդ համար):*

Եթէ ուզենք այս բառերը մեր մատենագրութեան մէջ փնտռել, գտնոնք կը գտնենք Եղիշէի գրքին մէջ. «*Դուն թէպէտ մեր այս կեանքը կրճատել կը սեպես, բայց Ան որ բոլոր աշխարհներու թագաւորն է, նոյնիսկ եթէ մենք մեռնինք օրէնքին համար, Ան նո՛ր կեանք պիտի տայ մեզի եւ կեանքէ կեանք պիտի տանի մեզ»:* Այսպիսի յայտարարութիւններ կը գտնենք նաեւ միւս եղբայրներուն մօտ եւ այս յայտարարութեան մէկ նմանակը կը գտնենք անոնց մօր բերնին մէջ նաեւ: Ան քաջալերած ատեն իր որդիները որոնք կը նահատակուէին, իրենց կը վստահեցնէր, թէ Աստուած իր գալստեան օրը պիտի վերադարձնէ իրենց՝ իրենց կեանքն ու հոգին (Բ.Մկ 7.23), եւ ինք՝ մայրը, Աստուծոյ ողորմութեամբ վերստին պիտի տեսնէ եւ ընդունի իր որդիները (Բ.Մկ 7.29): Բայց մեր կողմէ հարց կը դրուի, թէ ինք իր զաւակները պիտի տեսնէ անոնց արդարութեա՞ն համար, թէ ընդհանրապէս:

Ի վերջոյ, յաւիտենական կեանքի եւ վարձատրութեան լաւագոյն արտայայտութիւններէն մէկն է Իմաստութիւն Սողոմոնի գիրքը, որ կը շեշտէ, թէ՛ Աստուած մահը չստեղծեց, այլ ինչ որ ստեղծեց՝ ստեղծեց որ մնան, եւ թէ՛ Աստուծոյ արդարութիւնը անմահ է, մինչ ամբարիշտները իրենց կամքով մահը ընտրեցին (Իմաստ 1.12-16): Այլ տեղ կը կարդանք. «Արդարներու հոգիները Աստուծոյ ձեռքին մէջ են. մահը այլեւս չի կրնար մօտենալ անոնց» (Իմաստ 3.1: Տե՛ս նաեւ 2-10 համարները): Եթէ այս խօսքերը բաղդատենք Իմաստ 4.7-16 համարներուն հետ, կը տեսնենք թէ տանջանքի եւ արդարութեան մասին հին հասկացողութիւնը կը սրբագրուի:

Քրիստոսի ժամանակներուն ասիկա իւրաքանչիւր բարեպաշտ Հրեայի, մանաւանդ Փարիսեցիներուն զօրաւոր հաւատքն էր, բայց կային նաեւ շատեր, ինչպէս Սաղուկեցիներու ամբողջ աղանդը, որոնք չէին հաւատար անդենական կեանքի եւ մեռելներու յարութեան: Այս մասին յիշենք իրենց հեգնական հարցումը Յիսուսի ուղղուած (Մր 12.18-27) եւ Փարիսեցիներու հետ իրենց հակադրուածութիւնն ու բախումը (Գրծ 23.6-9): Քրիստոսի եւ իր հետեւորդներուն դէմ Սաղուկեցիներու շղթայազերծած հալածանքին մէկ հիմնական պատճառը նաեւ մեռելներու յարութեան այս հաւատքը եւ անոր քարոզութիւնն էր:

ՄԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
(Ա.ՍՄ 1-3 ԳԼՈՒԽՆԵՐ ԵՒ 4.1-3)²⁷

ՀՈՎՈՒԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Տիմոթեոսին գրուած առաջին նամակը մէկն է այն երեք նամակներէն, որոնք ստացած են Հովուական անունը: Այսպէս կը կոչուին, որովհետեւ ամբողջութեամբ կապուած են Քրիստոսի Եկեղեցիին մէջ հովուական գործին զանազան երեսներուն եւ հարցերուն:

Այդ հարցերէն հիմնականագոյնը՝ ուղիղ հաւատքին պահպանումն էր, այլ խօսքով՝ աղանդաւորական հոսանքներու ներկայութիւնը եւ անոնց հանդէպ եկեղեցիին որդեգրելիք կեցուածքը:

Ո՞Վ ԷՐ ՏԻՄՈԹԷՈՍ

Տիմոթեոս Հրեայ մօր մը եւ Յոյն (հեթանոս) հօր մը զաւակն էր, Փոքր Ասիայի Լիստրա քաղաքէն, Պօղոսի առաջին այցելութեամբ իսկ քրիստոնէայ դարձած: Պօղոսի առաքելական 2-րդ եւ 3-րդ ճամբորդութիւններուն ընթացքին զայն միշտ կը գտնենք առաքելային հետ, իբրեւ անոր ընկերակիցը եւ մտերմագոյն մէկ գործակիցը: Ըստ երեւոյթին՝ Տիմոթեոս իր նրբամտութեամբ եւ իմաստութեամբ շահած էր առաքելային ամբողջական վստահութիւնը, որով Պօղոս բազմաթիւ անգամներ անոր վստահեցաւ նոր հաստատուած քրիստոնէական եկեղեցիներէն ներս ծագած խնդիրներու

²⁷ Ասիկա Ա.Սմ 1.3-էն մինչեւ 4.3 համարներուն վերաբերեալ կատարուած սերտողութիւն մըն է, թեպէտ պէտք է հաստատել որ տուեալ բաժնին բոլոր համարները չեն քննարկուած: Որոշ համարներ պարզապէս յիշուած են առանց ուրիշ բացատրութեան: Բացորոշ է սակայն, որ յիշեալ սերտողութեան աւելի ընդարձակը պէտք է ըլլայ, որ սակայն անձամբ չունիմ զայն իմ տրամադրութեանս ներքեւ:

լուծումը: Պօղոսի Հռոմ բանտարկության միջոցին եւս զայն կը գտնենք առաքելին հետ (հմմտ Կղ 1.1: Փլմ 1: Փլպ 1.1): Իսկ երբ Պօղոս երկրորդ անգամ բանտարկուեցաւ, 66 կամ 67 թուականին, Տիմոթէոս պատասխանատու նշանակուեցաւ Եփեսոսի եկեղեցիին, հոն տեղ գտած հերետիկոսական աղանդի մը դէմ՝ առաքելական հաւատքը եւ եկեղեցւոյ աւանդութիւնը պահպանելու յատուկ առաքելութեամբ:

Այս նամակը գրուած պէտք է ըլլայ՝ Հռոմի մէջ Պօղոսի առաջին բանտարկութենէն ետք, որ երկու տարի տեւեց, 62-64 թ., եւ որուն շատ հպանցիկ նկարագրութեամբ կ'աւարատի Գործ Առաքելոց գիրքը: Ներկայ նամակը, ինչպէս նաեւ Տիտոսին գրուածը, կը վկայեն՝ թէ իր արձակումէն ետք առաքելը նոր առաքելական ճամբորդութեանց ձեռնարկած է, նախքան իր 2-րդ բանտարկութիւնը, որ պիտի աւարտէր իր գլխատումով, 67 թ.: Այս եւ Տիտոսի նամակները գրուած են երկու բանտարկութեանց միջեւ ինկող ժամանակին, շուրջ 65/66 թ., մինչ Տիմոթէոսին ուղղուած երկրորդ նամակը գրուած է վերջին բանտարկութեան ընթացքին, 66/67 թ.:

ՆԱՄԱԿԻՆ ԿԱՌՈՅՑԸ

- 1.- Նախաբան (1.1-2):
- 2.- Եկեղեցիին եւ անոր պաշտօնեաներուն վերաբերեալ ցուցմունքներ (1.3-20, 2.1-15, 3.1-16):
- 3.- Տիմոթէոսի առաքելութեան վերաբերող ցուցմունքներ (4.1-16, 5.1-25, 6.1-21):

ՆՊԱՏԱԿ

Նամակը գլխաւոր երեք նպատակներ կը հետապնդէ.-

Ա.- Առաջին հերթին ազդարարութիւն մը եւ յարձակում մըն է՝ աղանդի մը դէմ, այլ խօսքով՝ եկեղեցւոյ մէջ սկիզբ առած սխալ վարդապետութեան մը դէմ, որուն ճշգրիտ ինչ ըլլալը չենք գիտեր, բայց յատկանշական քանի մը կողմերէ նամակին մէջ գծուած կը գտնենք: Այստեղ ներկայացող աղանդաւորները Հրեական միջավայրէ եկողներ են, որովհետեւ հանդէս կու գան իբրեւ Օրէնքին եւ անոր կապուած սովորութիւններուն պաշտպան, ինչպէս նաեւ Հրեական առասպելներով զբաղող մարդիկ (հմմտ 1.7, 3.9): Բայց յայտնապէս նաեւ Գնոստիկեան աղանդի գաղափարախօսութեան յատուկ որոշ տարրեր իւրացուցած եւ ճշմարիտ աստուածպաշտութենէն շեղածներ են, որովհետեւ կը վարդապետեն՝ թէ այս նիւթդէն աշխարհը չար է, եւ մարդ կրնայ փրկութեան հասնիլ՝ յատուկ գիտութեամբ մը, որ ծածուկ է, եւ յատուկ կենցաղով մը, ինչպէս օրինակ՝ հեռու մնալով ամուսնութենէ եւ որոշ ուտելիքներէ: Առաքեալը զանոնք կը բնորոշէ՝ իբրեւ մտքով ապականած մարդիկ, որոնք մէկ կողմէն կրօնքը՝ շահագործման առարկայ դարձուցած են եւ միւս կողմէ՝ ինկած բարոյական ապականութեանց գիրկը (հմմտ 4.2, 6.5), իրենց հետ քաշելով տանելով նաեւ տկարահաւատները:

Բ.- Բազմաթիւ եւ շատ կարեւոր ցուցմունքներ կ'ընէ, եկեղեցւոյ պաշտամունքային կեանքին եւ ներքին կարգ ու կանոնին մասին, ուր յատկապէս կ'անդրադառնայ կիներու տեղին ու դերին: Առանձնակի կը խօսի՝ եկեղեցւոյ առաջնորդէ մը, երեցէ մը, կամ սարկաւազէ մը պահանջուած նկարագրային յատկանիշներուն եւ արժանիքներուն մասին: Բոլորին հանդէպ անոնց ունենալիք վերաբերումին մասին, սխալող կամ մեղանշող երեցները յանդիմանելու մասին, առանց քննութեան մէկը չձեռնադրելու մասին, եւլն:

Գ.- Կենցաղուվարքի յատուկ անձնական յորդորներ կուտայ՝ թե՛ Տիմոթեոսին, այլ խօսքով՝ Քրիստոսի ծառայութեան նուիրուած ռեւէ անձի, թե՛ ի՛նչպէս կրնայ ինքզինք օրինակ դարձնել բոլորին՝ իր հաւատքով ու մաքուր վարքով, իր սիրով եւ ճշմարիտ ուսուցումներով, եւ թե՛, անուղղակիօրէն, քրիստոնէայ եկեղեցոյ իւրաքանչիւր անդամի, յատկապէս՝ այրիներուն, ծառաներուն ու հարուստներուն:

ՈՂՋՈՅՆ (1.1-2)

(1.1) *«Ես Պօղոս, որ Քրիստոս Յիսուսի առաքեալն եմ՝ մեր Փրկիչ Աստուծոյ եւ մեր յոյսը եղող Քրիստոս Յիսուսի հրամանով»:*

(1.2) *«Քեզի՛ կը գրեմ, հաւատքի հարազատ որդիս, Տիմոթեոս: Թող Հայրն Աստուած եւ մեր Տէրը Քրիստոս Յիսուս՝ շնորհք, ողորմութիւն եւ խաղաղութիւն պարգեւենք քեզի»:*

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ ՄԽԱԼ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՍՈՒՑԱՆՈՂՆԵՐԷ (1.3-11)

(1.3) *«Երբ Մակեդոնիա կ'երթայի, խնդրեցի որ Եփեսոս մնաս եւ խօսիս քանի մը հոգիներու, որպէսզի դադրին սխալ վարդապետութիւններ ուսուցանել»:*

(1.4) *«Եւ չգրադին սկիզբ ու վերջ չունեցող առասպելներով եւ ազգահամարներով, որոնք վէճերու դուռ կը բանան, փոխանակ օգնելու մարդոց հաւատքին եւ Աստուծոյ ծրագիրին իրականացման»:*

(1.5) *«Գերագոյն պատուիրանը սէրն է. անառատ սրտէ, մաքուր խղճմտանքէ եւ անկեղծ հաւատքէն բոխած սէրը»:*

«Գերագոյն պատուիրանը», Գրք. «գլուխ», մինչ Յունարէնը՝ *τελος* [telos], որ կը նշանակէ՝ թէ՛ վախճան, նպատակ, եւ թէ՛ կատարում, ամբողջացում: ®®

(1.6-7) «Շատեր այս պատուերը մոռցած, դատարկ վիճաբանութեան մէջ մտնելով՝ մեզի Օրէնք սորվեցնելու ելեր են, մինչդէռ ո՛չ իրենց խօսածը գիտեն, ո՛չ ալ Աստուծոյ Օրէնքը, որուն մասին այնքան վստահութեամբ կը ճանեն»: «Մոռցած», Գրաբար՝ «վրիպեցան», ըստ Յունարէնին՝ «խախտեցան» (εξετραπησαν- εκτρεπω [ektrepo]) բժշկական եզրաբանութեան մաս կը կազմէր, եւ կը գործածուէր՝ տեղէն խախտած յօդերուն կամ անդամներուն համար: Օտար ուսմունքներու չհետեւելու եւ առասպելներով ու ազգահամարներով չգրադելու պատուերները հաւատքի ուղղափառութիւնը պահպանելու այն ուղեցոյցն են, որմէ շեղողը անկէ դուրս ինկած կ'ըլլայ, տեղէն խախտած անդամի մը պէս, որ ամբողջ մարմինին ցաւ կը պատճառէ:

Այս ուսուցիչները, որոնք Օրէնքի անունով եւ անոր իբրեւ պաշտպան հանդէս կու գան, իրականին մէջ, Աստուծոյ Օրէնքը չեն գիտեր. այսինքն՝ չեն գիտեր այն իսկական դիտումը, նպատակը, որ Օրէնքը ունի: Օրէնքին բուն նպատակն է՝ ո՛չ թէ փրկել, այլ՝ դաստիարակի դեր կատարել. մարդոց ճանչցնել իրենց մեղաւորութիւնը (Հո 3.19-20) եւ զգացնել փրկութեան անհրաժեշտութիւնը, որուն չեն կրնար հասնիլ առանց Քրիստոսի, եւ ուստի Օրէնքին նպատակն է մարդիկը առաջնորդել Քրիստոսի (Գղ 3.24): Բայց միաժամանակ՝ Օրէնքին լրումը եւ բուն նպատակը՝ սէր սորվեցնելն է (5-րդ համար), մաքուր սրտէ, բարի խղճմտանքէ եւ անկեղծ հաւատքէն բղիսած սէր: Ով որ այս ճշմարտութիւնը սորված չէ՝ Օրէնքը եւ անոր բուն դիտումը հասկցած չէ տակաւին, ինչ որ կը նշանակէ՝ թէ Հրեական ըմբռնումներէն դուրս չէ եկած դեռ, հակառակ քրիստոնէայ կոչուելուն:

(1.8) «Գիտենք թե Օրենքը լաւ է՝ երբ պէտք եղած ձեռով գործադրուի»: (Տե՛ս Հո 7.7-12):

(1.9-10) «Սակայն գիտենք նաեւ, թե Օրենքը արդարներուն համար տրուած չէ, այլ՝ անօրէններուն եւ անհնազանդներուն, ամբարիշտներուն ու մեղաւորներուն, սրբութիւնները ոտնակոխ ընողներուն ու պիղծերուն, հայր ու մայր անարգողներուն, մարդասպաններուն, պտռնկութիւն ընողներուն, արուազէտներուն, մարդ արեւանգողներուն, ստախօսներուն, սուտ երդում ընողներուն, եւ բոլոր այն արարքներուն համար, որոնք հակառակ են իմ փոխանցած առողջ ուսուցումներու»: Այստեղ «արդար»ը արդարութիւն գործող կամ ուղիղ ընթացքի մէջ գտնուող ոեւէ մէկն է: Ուղիղը գործողը Օրենքին պէտք չունի, մինչդեռ Օրենքը դրուած է սխալը ուղղելու համար եւ ուստի՝ սխալ գործողներուն համար: Եթէ ասիկա ճշմարիտ է ընդհանրապէս Օրենք-մարդ յարաբերութեան համար, նոյնը աւելիով ճշմարիտ է քրիստոնէայ մարդուն համար, որ անգամ մը փրկութեան զալէ ետք՝ ա՛լ օրենքին ենթակայ չէ, այլ՝ շնորհքին (Հո 6.14):

Այստեղ թուած մեղքերը կարծէք տասնաբանէայ պատուիրաններուն զուգահեռ մէկ ցանկն է: Այսպէս.-

- 1.- Ինձմէ գատ ուրիշ Աստուած չունենաս
(Անօրէն)
- 2.- Կուրք չպաշտես
(Անհնազանդ)
- 3.- Անունս պարապ տեղ բերան չառնես
(Սրբութիւնները ոտնակոխող)
- 4.- Շարք օրը սուրբ պահէ
(Պիղծ)
- 5.- Պատուէ՛ հայրդ ու մայրդ
(Հայր եւ մայր անարգող)
- 6.- Մի՛ սպաններ
(Մարդասպան)

- 7.- Մի՛ շնար
(Պոռնիկ, արուագէտ)
- 8.- Մի՛ գողնար
(Մարդ արեւանգող)
- 9.- Մի՛ սուտ վկայեր
(Ստախոս, ստերդումն)
- 10.- Ընկերոջդ ունեցածին մի՛ ցանկար
(Ողջմիտ վարդապետութեան հակառակ արարքներ)

«Առողջ ուսուցումներու», բոց՝ «Ողջմիտ վարդապետութիւն» (Յունարէն՝ *δγαινουση διδασκαλια*) [*hygiainouse didaskalia*): Պօղոսի հովուական նամակներուն մէջ քանիցս կրկնուող բացատրութիւն մըն է ասիկա (հմմտ 6.3: Բ.Տմ 1.13, 4.3: Տիտ 1.9, 2.1), որ ուրիշ տեղ չենք գտներ: Կը նշանակէ՝ ուղիղ ուսուցում, որ համաձայն է առաքելներէն փոխանցուած «աւանդ»ին: Պօղոս զայն «առողջ» կը կոչէ՝ հակադրելով այն սխալ եւ սուտ վարդապետութիւններուն, որոնք երեւան եկած են եւ կը սպառնան լայնօրէն տեղ գտնելով, «քաղցկեղի պէս ճարակելով» (հմմտ Բ.Տմ 2.17) հաւատացեալները շեղել ուղիղ հաւատքէն եւ հեռացնել փրկութենէն:

(1.11) *«Պատուէրներու, որոնք համաձայն են երանելի Աստուծոյ փառքը պատմող Աւետարանին, որ ես հաւատարմօրէն քարոզեցի»*: Ողջմիտ վարդապետութեան պատուէրները նոյնինքն ճշմարիտ Աւետարանէն բխող ուսուցումներն են, այն Աւետարանէն, որ երանելի Աստուծոյ փառքը կը պատմէ: Ինչպէս նկատել կու տայ C. Sumner Wemp, քրիստոնէայ մարդը կը փոխակերպուի՝ ո՛չ թէ օրէնսդրական պատուէրներու քարոզութեամբ կամ ուսուցումով, այլ՝ հայելիի մը պէս արտացոլացնելով «Տիրոջ փառքը» (հմմտ Բ.Կր 3.18) (տե՛ս *The First Epistle to Timothy, in Liberty Commentary on the New Testament*, էջ 607ա):

ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐՈՒԹԵԱՆ
ՀԱՄԱՐ (1.12-17)

(1.12-13) *«Երախտապարտ եմ մեր Տիրոջ՝ Քրիստոս Յիսուսի, որ զօրացուց զիս եւ արժանի համարեց իրեն սպասաւոր կարգելու. զիս՝ որ նախապէս կը հայհոյէի իրեն, կը հալածէի եւ կ'անարգէի զինք»:* Երբ կը խօսի Օրէնքի «պաշտպաններու» մասին, Պօղոս անմիջապէս կը յիշէ իր անձնական օրինակը, երբ տակաւին Հրէութեան մէջ կ'ապրէր: Ինք ալ Օրէնքի տառին նախանձախնդիր Փարիսեցի մըն էր, ժամանակակից Հրէութեան հաւատալիքները եւ ազգային-հոգեւոր ակնկալութիւնները բաժնող եւ այդ հայեցակէտով ալ մերժող մըն էր Յիսուս Քրիստոսի, Տիրոջ հայհոյող մըն էր, հալածող մը եւ անարգող մը: Բայց Տէր Յիսուս սէր եւ հաշտութիւն ցուցաբերեց իրեն, զօրացուց զինք եւ իր «սպասաւորութեան» (διακονια [diakonia]) հրաւիրեց: Ահա թէ ինչու՝ Պօղոս երախտագիտութեամբ լեցուած է, որովհետեւ զիտէ՝ թէ ատիկա արժանաւորութեան հարց չէ եւ ո՛չ որ կրնայ ինքնիրմէ այդ պատիւը առնել իր վրայ, եթէ Աստուծոյ կողմէ չկոչուի (հմնտ Եբր 5.4):

Բայց ինք ողորմութիւն ցոյց տուաւ ինձի, որովհետեւ առանց գիտնալու կ'ընէի, երբ տակաւին չէի հաւատացած իրեն: Պօղոսի փրկութիւնը ու առաքելական պաշտօնը (=պատիւը) Տիրոջ ողորմութեան, այսինքն՝ սիրոյն եւ գթութեան պարգէնն է:

(1.14) *«Մեր Տէրը իր շնորհքով ողողեց զիս, տալով այն հաւատքն ու սէրը որ մենք՝ Քրիստոս Յիսուսի միացածներու ունինք»:*

(1.15) *«Մէկ բան որոշ է, եւ ամէն մարդ պէտք է գիտնայ, թէ Քրիստոս Յիսուս աշխարհ եկաւ մեղաւորները փրկելու համար. եւ առաջին մեղաւորը ես եմ»:* «Մէկ բան որոշ է», բոց.՝ «Այս խօսքը հաւատարիմ է»: Այս բանաձեւը, որ միայն հովուական նամակներուն մէջ կը գտնենք, հինգ անգամ գործածուած (հմմտ 3.1, 4.9: Բ.Տմ 2.11: Տիտ 3.8), կարելոր յայտարարութիւն մը ներկայացնելու ընդգծուած ձեւ մըն է:

(1.16) *«Բայց Աստուած ողորմութիւն ցոյց տուաւ ինծի, որպէսզի Յիսուս Քրիստոսի նախ ինծի հանդէպ ցուցաբերած անսահման համբերատարութիւնը օրինակ ծառայէ բոլոր անոնց, որոնք իրեն կը հաւատան՝ յաւիտենական կեանքը ունենալու համար»:*

(1.17) *«Իրեն՝ յաւիտենական Թագաւորին, անմահ եւ անտեսանելի միակ Աստուծոյն, պատիւ եւ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն»:*

ԲԱՐԻ ԶԻՆՈՒՈՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԷՐ (1.18-20)

(1.18) *«Որդեակս, Տիմոթէոս, հետեւեալ պատուերը կու տամ քեզի, որ սկիզբէն քեզի համար եղած մարգարէական պատգամները միտքէդ չհանես»:* «Կու տամ», բոց.՝ «կ'աւանդեմ» (Յունարէն՝ παρατιθημι [paratithemi]), որ դրամատնային գործարքներու յատուկ լեզու է, եւ կը նշանակէ՝ բան մը ի պահ դնել՝ ուրիշին փոխանցելու համար: Այս պարագային անիկա կ'արտայայտէ սա իրողութիւնը, որ աւանդուած պատուերը Պօղոս իր կարգին ստացած է Քրիստոսէ կամ եկեղեցիէն կամ առաքեալներէն, եւ այդ պատուերը կանոնական զօրութիւն ունի: Այս «աւանդ»ը առհասարակ քրիստոնէական վարդապետութեան կը վերաբերի, անոր առողջ պահպանման մտահոգութեամբ:

Առաքելին այս եւ ստոր նման միւս հրահանգները առիթ եւ պատճառ եղան, որ քրիստոնէական հնագոյն եկեղեցիները զօրեղ շեշտ դնեն բոլոր այն բաներուն վրայ, որոնք առաքելներուն եւ անոնց անմիջական յաջորդներուն միջոցաւ իրենց փոխանցուեցան, կամ «աւանդուեցան»: Այդպէս կազմուեցաւ եւ փոխանցուեցաւ «Աւանդութիւնը», որ հաւատքի եւ պաշտամունքի հիմնական սկզբունք եւ «ողջմիտ վարդապետութեան», այսինքն՝ ուղղափառութեան կանոն ճանչցուեցաւ բոլորին կողմէ:

Տիմոթէոսի համար «սկիզբէն եղած մարգարեական պատգամները» իր ձեռնադրութեան առիթով իրեն տրուած պատգամներն են: Առաջին եկեղեցիին մէջ շատ ծանօթ երեւոյթ մըն է մարգարեական պատգամախօսութիւնը, որ Սուրբ Հոգիին կարելոր պարզելներէն կամ «յայտնութիւններէն» մէկն է Քրիստոսի Եկեղեցիին եւ կարելոր պաշտօններէն մէկը եկեղեցւոյ կեանքին մէջ (հմմտ Ա.Կր 12.7, 10): Այդպիսի մարգարէներ կը գտնենք Երուսաղէմի մէջ, Անտիոքի մէջ, Պաղեստինեան Կեսարիայի մէջ, եւլն: Այդպիսի մարգարէներ էին որ Սուրբ Հոգիէն պատգամ ստանալով՝ Բառնաբասն ու Պօղոսը ձեռնադրելով առաքելական առաջին ճամբորդութեան ղրկեցին (Գրծ 13.1-3): Ըստ երեւոյթին՝ Տիմոթէոսի ձեռնադրութիւնը եւ առաքելական պաշտօնավարութիւնը եւս Սուրբ Հոգիէն տրուած մարգարեական պատգամներով սկսած էր (հմմտ նաեւ 4.14):

(1.18-19) *«Այլ անոնցմով զինուիս եւ բարի զինուորութիւն ընես, հաւատքդ եւ յիղճդ մաքուր պահելով»:* Մարգարեական պատգամներուն հետ Աստուած իր շնորհքները եւ պարգեւները եւս տուած է Տիմոթէոսի (4.14), իր առաքելական եւ հովուական պաշտօնը կատարելու համար: Այդ շնորհքները Աստուծոյ կողմէ պարգեւուած զէնքեր են, անոնցմով զօրանալու եւ մղելու համար այն պայքարը, որ

իւրաքանչիւր քրիստոնէայ կը մղէ, բայց որ յատուկ կերպով կը մղէ Աստուծոյ հօտին պատասխանատուութեան կանչուած ռեւէ հովիւ: Անոր կեանքը մնայուն զինուորութիւն է: Եւ որովհետեւ ինք կոչուած է օրինակ եւ ուղեցոյց ու դաստիարակ ըլլալու իր խնամքին յանձնուած հօտի անդամներուն, պէտք է «բարի զինուորութիւն» ըլլայ իրը: Իսկ բարի զինուորութիւնը կարելի կ'ըլլայ իրագործել ամէն բանէ առաջ՝ քրիստոնէական հաւատքը անբիծ եւ անարատ պահելով: Իր երկրորդ նամակին մէջ առաքեալը իր մասին այս կարեւոր հաստատումը կ'ընէ (հմմտ Բ.Տմ 4.7):

Բայց հաւատքին առնթեր կարեւոր ուրիշ բան մըն ալ կայ՝ խիղճը, որովհետեւ հաւատքը չկայ առանց կեանքի: Երկրորդ անգամ ըլլալով (հովուական նամակներուն մէջ ընդամենը վեց անգամներ) Պօղոս կը խօսի մաքուր խիղճ ունենալու կարեւորութեան մասին: Քրիստոնէական հաւատքը կարելի չէ ապրիլ առանց մաքուր խղճմտանքի: Աստուծոյ հետ յարաբերութիւնը պայմանաւոր է մարդոց հետ մեր յարաբերութեամբ: Ոեւէ բան, որ կը ծանրանայ մեր խղճին վրայ, կը խանգարէ կամ կ'արգելակէ մեր եւ Աստուծոյ ուղիղ եւ անմիջական յարաբերութիւնը: Իսկ ով որ կ'ըսէ թէ ինք մեղք չունի՝ ինքզինք կը խաբէ (Ա.Յհ 1.8):

(1.19) *«Շատեր իրենց խղճին չանսալով՝ իրենց հաւատքը կործանեցին»:* Բնագիրը չունի «իրենց» ստացականը, այլ պարզապէս՝ «հաւատքը» (Յունարէն՝ *τεν πιστεν* [ten pisten]), որ քրիստոնէական ընդհանուր եւ առարկայական հաւատքին կամ ճշմարտութեան մասին է, քան անձնական հաւատքին կամ հաւատալու կերպին: «Կործանեցին», բոց՝ «նաւաբեկեցին», նաւաբեկումի ենթարկեցին: Շատ հետաքրքրական եւ միաժամանակ ցայտուն բացատրութիւն մը, ներկայացնելու համար շատերու հաւատքին խորտակումը եւ ընկղմումը որ արդիւնքն է, ինչպէս առաքեալը կ'ընդգծէ, խղճին ձայնը չանսալուն: Մեղքերը երբ

չեն խոստովանուիք եւ կը մնան խղճին վրայ, որքա՛ն ալ փոքր ըլլան անոնք, կուտակուելով կը դառնան ծով եւ ի վերջոյ կը խեղդեն: Ահա թէ ինչու՝ իր հաւատքին համար պայքարող քրիստոնեային համար անհրաժեշտ է միշտ աչքի առջեւ ունենալ իր մեղքերը (հմմտ Սղ 51.3) եւ տեւաբար իր խղճմտանքը անոնցմէ սրբելու աշխատիլ:

(1.20) *«Անոնցմէ են Հիմենէոսն ու Ալեքսանդրոսը, որոնք Սատանային կամքին ձգեցի, որպէսզի իրենց պատիժը կրելով՝ սորվին Աստուծոյ չհայհոյել»:* Եփեսոսի եկեղեցիին մէջ գործող կամ ծանօթ երկու օրինակներ են Հիմենէոսն ու Ալեքսանդրոսը, սխալ վարդապետութիւններ ուսուցանող երկու դէմքեր (հմմտ Բ.Տմ 2.16-18), որոնք մաքուր խղճմտանք ունենալու սկզբունքն ու անհրաժեշտութիւնը մոռցած՝ արդէն իրենց եւ ուրիշներու հաւատքը եւս նաւաբեկումի ենթարկած են, եւ առաքեալը եկեղեցական կարգապահութեան ծանրագոյն քայլին դիմած է՝ զանոնք խրատելու իբրեւ ծայրայեղ միջոց:

Ի՞նչ է այդ ծայրայեղ միջոցը: «Սատանային կամքին ձգեցի», բոց՝ «Սատանային մատնեցի» [=յանձնեցի]: Այս բացատրութիւնը կը գտնենք Կորնթացիներու Առաջին նամակին մէջ (5.3-5), ուրկէ նաեւ կը հետեւցնենք, թէ բանադրելու կամ եկեղեցիէ արտաքսելու կերպ մըն է անիկա (հմմտ Մտ 18.17), որպէսզի ենթական եկեղեցւոյ կամ Քրիստոսի պաշտպանութենէն դուրս մնայ, չարին ամէն յարձակման ենթակայ եւ անոր դէմ անպաշտպան, որպէսզի այդ ձեւով «խրատուի», այսինքն՝ որոշ իմաստով պատժուի եւ սրբագրուի, սորվի «Աստուծոյ չհայհոյել», այսինքն՝ Աստուծոյ փրկարար ծրագիրը եւ անոր կապուած ճշմարտութիւնները չխեղաթիւրել:

ԱՂՕԹՔԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ (2.1-15)

(2.1) *«Արդ, ամէն բանէ առաջ կը խնդրեմ որ աղօթէք, խնդրանք, պաղատանք եւ գոհութիւն մատուցանէք բոլոր մարդոց համար»:* Թէպէտ իր հոգեւոր որդիին կը գրէ Պօղոս, բայց խորքին մէջ ամբողջ եկեղեցիին (Եփեսոսի) է որ կ'ուղղէ խօսքը, յիշեցնելով՝ որ Աստուծոյ մարդուն առաջին եւ կարեւորագոյն պարտականութիւնը՝ աղօթելն է (հմմտ Ղկ 18.1: Հռ 12.12: Եփ 6.18: Կղ 4.2: Ա.Թս 5.17): «Աղօթք» բառը, Յունարէն՝ *δεησις* [deesis], կը նշանակէ՝ թախանձանքով խնդրել Աստուծմէ, եւ ուստի կապուած է կարիքի մը կամ անհրաժեշտութեան մը (հմմտ Ղկ 1.13): «Խնդրանք»ը, Յունարէն՝ *προσευχη* [proseuche], որ կը նշանակէ՝ ըղձանք կամ բաղձանք մը յայտնել Աստուծոյ, եւ դարձեալ «աղօթք» կը թարգմանուի ընդհանրապէս (հմմտ Ղկ 19.46): Երրորդ բառն է՝ «պաղատանք», Յունարէն՝ *εντευξις* [enteuxis], որ կը նշանակէ՝ մէկու մը կողմէ կամ անոր համար միջնորդութիւն կամ բարեխօսութիւն ընել, խնդրանք ներկայացնել, բայց գործածուած է նաեւ «աղօթք» նշանակութեամբ, եւ երբեմն ալ ուղղակի թարգմանուած է «աղօթք» (տե՛ս Ա.Տմ 4.5): Չորրորդ եւ վերջին եզրն է՝ «գոհութիւն», Յունարէնով՝ *ευχαριστια* [eucharistia], որ ստացուած բարիքի մը կամ օրհնութեան մը դիմաց՝ շնորհակալութեան կամ երախտագիտութեան արտայայտութիւնն է: Քրիստոնէային ուրիշ մէկ կոչումն է՝ անդադար գոհութիւն մատուցանել Աստուծոյ. ա՛յդ է Աստուծոյ կամքը (Ա.Թս 5.18), եւ ուստի մեր աղօթքներուն մէջ, անպայման պէտք է գոհութիւն յայտնենք Աստուծոյ՝ իր ընծայած փրկութեան եւ բոլոր պարգեւներուն համար:

Կարեւոր է դիտել, որ աղօթքը, խնդրանքը, պաղատանքը եւ գոհութիւնը, որ քրիստոնէայ մարդը պէտք է մատուցանէ Աստուծոյ՝ իրեն համար չեն միայն եւ պէտք չէ ըլլան, այլ նաեւ՝ «բոլոր մարդոց համար» (հմմտ Եփ 6.18):

(2.2) *«Մանաւանդ թագաւորներուն եւ իշխանութեան գլուխ գտնուող բոլոր մարդոց համար»:* Քրիստոնէայ մարդուն ուրիշ մէկ պարտաւորութիւնն է՝ յարգել պետական

իշխանութիւնները, որովհետեւ անոնք Աստուծոյ կողմէ կարգուած են (տե՛ս Մտ 22.21: Հո 13.1-7: Տիտ 3.1: Ա.Պտ 2.13-14: Հմմտ Եր 27.6: Դն 2.21, 4.17), եւ միշտ աղօթել իշխանութեան գլուխ գտնուողներուն համար:

Հետաքրքրական եւ որոշ իմաստով նոյնիսկ տարօրինակ կրնայ թուիլ մեզի այս պատուէրը, եթէ մանաւանդ յիշենք՝ թէ առաքեալը ասիկա կը պատուիրէ այնպիսի՝ ժամանակի մը, երբ Հռոմէական կայսրութիւնը քրիստոնէաներուն դէմ շղթայազերծած էր ամենէն կատաղի հալածանքները: Ի՞նչ կը նշանակէր՝ զանոնք յարգելու եւ անոնց համար աղօթելու այս պատուէրը: Ատիկա կ'ենթադրէ՞ր հնազանդիլ անոնց բոլոր հրահանգներուն եւ դէմ երթալ հաւատքին: Անշուշտ ոչ: Մարմնաւոր գործերուն ու հրահանգներուն մէջ հարկաւ կայսրին պէտք էր տալ ինչ որ կայսրինն է, այսինքն՝ պետութեան իրաւունքն է, բայց հաւատքի եւ խղճի հարցերուն մէջ միակ հաւատարմութիւնը եւ հնազանդութիւնը Աստուծոյ պէտք է երթայ, ինչպէս Քրիստոս տուած էր սկզբունքը (հմմտ Մտ 22.21):

«Որպէսզի խաղաղ ու հանդարտ կեանք մը վարենք՝ կատարեալ աստուածպաշտութեամբ եւ պարկեշտութեամբ»: Ահաւասիկ աղօթքին նպատակը.- Ներքնապէս խաղաղ (ηρεμον [eremon]) եւ հանդարտ (ησυχιον [hesychion]) կեանք մը պարգեւել: Կարելի չէ որ մարդկային եւ մանաւանդ հաւատքի մեր կեանքը զերծ ըլլայ արտաքին դժուարութիւններէն, նեղութիւններէն ու հալածանքներէն, այսինքն՝ աներեւոյթ Թշնամիին յարձակումներէն, որոնք մարմնաւոր ու հոգեւոր բոլոր երեսներով կը ներկայանան մեզի: Բայց այն մարդը որ ինքզինք աղօթքով կը յանձնէ Աստուծոյ՝ այդ ամբողջ փոթորիկներուն մէջ իսկ կը մնայ խաղաղ ու հանդարտ, աստուածային վստահութեամբ զօրացած: Արդէն կը տեսնուի, որ առաքեալը անմիջապէս ճշդում մը կը բերէ մեզի, թէ՛ այդպիսի կեանք մը կարելի չէ վարել առանց աստուածպաշտութեան եւ պարկեշտութեան:

Աստուածպաշտութիւնը եւ պարկեշտութիւնը արտաքին խաղաղութիւն չեն ապահովեր մեզի. ընդհակառակը, աշխարհին ու չարին ուշադրութիւնն ու հարուածները կը դարձնեն դէպի մեզ. բայց միւս կողմէ՝ Աստուծոյ աջակցութիւնը եւ մեր մէջ ներկայութիւնը կ'ապահովեն մեզի համար, եւ Աստուծոյ ներկայութեան՝ բոլոր փոթորիկներու ալիքները անպայման որ կը փշրուին խաղաղութեան ժայռին վրայ: («Աստուածպաշտութիւն» բառը միայն հովուական նամակներուն մէջ է որ կը գտնենք, մէկական անգամ՝ Բ.Տիմոթէոսի եւ Տիտոսի մէջ, իսկ ուրբ անգամներ՝ այս նամակին: Անիկա Աստուծոյ հանդէպ խորունկ հաւատքով եւ յարգանքով ու հնազանդութեամբ ապրուած բարի եւ արդար կեանքն է):

(2.3) *«Որովհետեւ ա՛յդ է բարին եւ այդ կը փափաքի Աստուած, մեր Փրկիչը»:* Ի՞նչն է բարին: «Այդ» ցուցականը այստեղ կրնայ առանձնապէս վերաբերիլ անդադար աղօթքին, կամ՝ ընդհանուր ձեւով մը՝ վերաբերիլ աստուածպաշտութեամբ եւ պարկեշտութեամբ ապրուած խաղաղ ու հանդարտ կեանքին: Կը թուի թէ երկուքը միասին պէտք է հասկնալ, որովհետեւ անդադար աղօթքը, աստուածապաշտ կեանքի մը բնական արտայայտութիւնն է, իսկ ճշմարիտ աստուածպաշտութիւնը՝ փրկութեան սահմանուած կեանքի մը բնական պատկերը:

(2.4) *«Որ կ'ուզէ որ բոլոր մարդիկը փրկուին եւ հասնին ճշմարտութեան ճանաչումին»:* Աստուած բոլորին փրկութիւնը կ'ուզէ, բայց փրկուելու համար, մարդիկ պէտք է հասնին ճշմարտութեան ճանաչումին: Ի՞նչ ճշմարտութիւն է ատիկա: Այդ ճշմարտութիւնը տեսական ծանօթութիւն չէ՛: Մարդիկ նոյնիսկ առանց Աստուծոյ խօսքին ու յայտնութեան՝ հասան Աստուծոյ ճանաչողութեան, բայց ինչ որ փրկութեան համար կարեւոր էր՝ չրին. այսինքն՝ չընդունեցին զԱստուած,

չանսացին անոր, չենթարկուեցան անոր կամքին եւ չփառաւորեցին զայն, այլ մերժեցին եւ նախընտրեցին մնալ իրենց կեանքի խաւարին մէջ (հմմտ Հո 1.21), եւ ուստի չփրկուեցան:

Ուրեմն բոլոր մարդիկ չէ որ պիտի փրկուին, այլ միայն անոնք՝ որ Աստուած սկիզբէն ընտրած է (Ա.Պտ 1.2): Այս ընտրութիւնը նախասահմանում չէ, եւ ընտրուածները Աստուծոյ կողմէ կանխորոշուած չեն, այլ, ինչպէս Պօղոս առաքեալ զայն կը հասկնայ, Աստուած իր կանխագիտութեամբը գիտէ անոնք՝ որոնք իրն են, որոնք Աւետարանին պատգամը լսելով՝ պիտի ընդունին զայն, պիտի դառնան Աստուծոյ եւ փրկութիւնը ժառանգեն (հմմտ Հո 8.29: Հմմտ Եփ 1.4-5: Բ.Տմ 1.9, 2.19):

(2.5-6) «Թէ՛ մէկ Աստուած կայ միայն, եւ Աստուծոյ ու մարդոց միջեւ միակ միջնորդ մը Յիսուս Քրիստոս մարդը, որ ինքզինքը իբրեւ փրկագին տուաւ բոլոր մարդոց համար»: Քրիստոնէական հաւատքին հիմնաքարը, որ միաստուածութիւնն է, ինչպէս էր Հրէութեան մէջ (հմմտ Սր 12.29): Բայց այս համարը տարբեր մեկնիչներու գրիչին տակ բաւական չարչարուած է:

Ոմանք այս համարը կ'օգտագործեն՝ Քրիստոսի աստուածութիւնը մերժելու համար ըսելով՝ թէ այստեղ «Աստուած» ըսելով առաքեալը կը հասկնայ միայն Հայրը, որուն կողքին կը յիշէ Յիսուս Քրիստոս մարդը, ցոյց տալու համար թէ՛ անիկա Աստուծմէ տարբեր է, այսինքն՝ Աստուած չէ. մինչդեռ բնագիրին հիմնական իմաստը որոշապէս տարբեր է: Դիտենք, որ այստեղ առաքեալը կը շեշտէ ու կ'ընդգծէ՝ «Յիսուս Քրիստոս մարդը»: Ինչո՞ւ արդեօք, եթէ ոչ ըսելու համար, թէ ան որ Հօր հետ էր, անոր էութենէն եւ անոր հաւասար ու համապատիւ Աստուածն էր՝ մարդոց փրկութեան սիրոյն ՄԱՆԴ եղաւ եւ ինքզինքը իբրեւ փրկագին տուաւ (Սր 10.45), մարդիկը ազատելու համար մեղքի

ստրկութենէն, ասով ալ դառնալով միակ իսկական միջնորդը Աստուծոյ եւ մարդոց միջեւ:

Ուրիշներ այս համարը կը գործածեն՝ մերժելու համար եկեղեցոյ մէջ սուրբերու բարեխօսութիւնը, առարկելով՝ թէ առաքեալը «միակ միջնորդ կը յայտարարէ Յիսուս Քրիստոս Մարդը»: Բայց անոնք կը մոռնան, որ եկեղեցին Քրիստոսի խորհրդական Մարմինն է, իր Գլուխէն՝ Քրիստոսէ անբաժան (Եփ 1.22-23, 5.23: Կղ 1.18 եւ 24: Հմմտ Ա.Կր 12.12 եւ 27), եւ հետեւաբար եկեղեցոյ եւ սուրբերուն բարեխօսութիւնը նոյնինքն Քրիստոսի բարեխօսութիւնն է, ինչպէս Սուրբ Հոգիին առաջնորդութեամբ՝ եկեղեցոյ գործունէութիւնը Քրիստոսի գործունէութիւնն է (հմմտ Մտ 16.19, 18.13: Յհ 20.23: Ա.Կր 5.4):

(2.6-7) «Ատոր վկայութիւնը Աստուած տուաւ իր ատենին, եւ նոյն այդ վկայութիւնը տալու համար է որ ես ալ քարոզիչ եւ առաքեալ կարգուեցայ, քրիստոնէական հաւատքը եւ ճշմարտութիւնը սորվեցնելու համար բոլոր հեթանոսներուն: Եւ Քրիստոս ինք վկայ է՝ թէ ճշմարտութիւնը կ'ըսես, առանց ստելու»: Վկայութիւնը, որուն կ'ակնարկուի, առաքելական քարոզութիւնն էր, որ Աստուած իր ատենին անոնց միջոցաւ տուաւ իր ժողովուրդին եւ աշխարհին, անոնց յայտնելու համար իր փրկութիւնը՝ Քրիստոսի զոհազոհական մահուամբ իրագործուած եւ աշխարհին պարգեւուած: Եւ նոյն վկայութիւնը բոլոր հեթանոս ազգերուն տալու համար էր, որ Աստուած իբրեւ «ընտիր անօթ» ընտրեց եւ կանչեց Պօղոսը (հմմտ Գրծ 9.15):

(2.8) «Կ'ուզեմ որ ամենուրեք, երբ այր մարդիկ աղօթքի կանգնին՝ Աստուծոյ բարձրացուցած իրենց ձեռքերը արդար գործերով լեցուն ըլլան, եւ ո՛չ թէ վրէժխնդրութեամբ եւ անհրաւուրեամբ»: Ձեռքերը բարձրացուցած աղօթելը Հրեաներուն քով ծանօթ կերպ մըն էր (հմմտ Սղ 134.2: Ես 1.15

եւլն): Բայց այստեղ Պօղոս արտաքին կեցուածքին, այսինքն՝ կերպին վրայ չէ որ մեր ուշադրութիւնը կը հրաւիրէ, այլ՝ մեր ներքին կեցուածքին, այսինքն՝ մեր բարոյական վիճակին, որ Աստուծոյ համար միակ կարեւոր բանն է: Բարոյական այդ վիճակը կը տրուի պատկերաւոր բացատրութեամբ մը որ Հին Կտակարանէն ծանօթ է (հմմտ Ես 1.15, 59.2-3): «Իրենց ձեռքերը արդար գործերով լեցուն ըլլան», բոց՝ «սուրբ ձեռքեր», բայց որոշ է՝ որ ծիսական սրբութեան կամ մաքրութեան մասին չէ խօսքը, այլ՝ ընկերային եւ բարոյական, ինչպէս նշուած է մարգարէութեան մէջ: «Ո՛չ թէ վրէժխնդրութեամբ եւ անիրաւութեամբ», բոց՝ «առանց բարկութեան եւ երկմտութեան»:

(2.9-10) «Նոյնպէս կ'ուզեմ որ կիներ իրենք զիրենք զարդարեն խոնարհութեան զարդերով, ամօթխածութեամբ եւ պարկեշտութեամբ: Ո՛չ թէ մազերու յարդարանքով կամ ոսկեղէնով, մարգարիտներով կամ սուղ զգեստներով, այլ՝ բարի գործերով, ինչպէս որ աստուածպաշտութեամբ ապրիլ յանձն առած կիներուն կը վայելէ»: Պօղոս կը սկսի խօսիլ կիներու դերին մասին, նախ ընկերութեան մէջ, ապա եկեղեցիին մէջ (11-12 համարներ) եւ ի վերջոյ ընտանիքին մէջ (15-րդ համար):

Ընկերութեան մէջ, կինը իր պատուոյ տեղը ունի: Բայց այդ պատիւը բարձր պահելը նոյնինքն կնոջ կ'իյնայ: Քրիստոնէական հաւատքով դաստիարակուած ունէ կին իր զարդերը եւ հետեւաբար իր պարծանքը կամ հպարտութիւնը կը փնտռէ ո՛չ թէ ոսկեղէններուն եւ արծաթեղէններուն մէջ, այլ՝ առաքինութիւններու մէջ: Հարցը ոսկեղէնն ու արծաթեղէնը կամ գոհարեղէնը չեն, եւ առաքեալը չ'արգիլէր կամ չի դատապարտէր զանոնք գործածելը: Այլ, ճիշդ ինչպէս հարստութեան վերաբերմամբ քրիստոնէական կեցուածքը երբեք դատապարտողական չէ, բայց երբ նիւթը կամ հարստութիւնը ըլլայ մարդուս ուշքն ու միտքը գրաւողը՝

մարդս կը մոռնայ զԱստուած եւ Աստուծոյ եւ իր նմանին հանդէպ իր բոլոր պարտաւորութիւնները, այնպէս ալ զարդեղէն գործածելը ինքնին պախարկելի կամ դատապարտելի բան մը չունի. բայց երբ կը դառնայ միակ մտահոգութիւն եւ ուշադրութեան ու պարծանքի միակ առարկան, մոռցնել տալով այն միւս՝ աւելի կարեւոր զարդերը, առաքինութիւնները, որ ռեւէ մարդ եւ յատկապէս ռեւէ կին մարդ պէտք է ունենայ, այն ատեն արդէն կը դառնայ պախարկելի եւ նոյնիսկ դատապարտելի:

Ըստ առաքեալին՝ քրիստոնէայ կնոջ մը զարդերը եւ պարծանքի առարկաները պէտք է ըլլան խոնարհութիւնը, ամօթխածութիւնը, պարկեշտութիւնը (հմմտ Ա.Պտ 3.3-4):

(2.11-12) *«Եկեղեցական հաւաքոյթներուն՝ կիներ պէտք է սորվող ըլլան միայն, լռութեամբ եւ կատարեալ հնազանդութեամբ: Չեմ արտօնէր որ կին մը այր մարդուն սորվեցնէ կամ հեղինակութիւն բանեցնէ անոր վրայ: Ընդհակառակը, պէտք է լուռ մնայ»:* Այս համարներուն մէջ կը թուի թէ Պօղոս բացարձակ սկզբունք մը կը դնէ, որ եկեղեցիին մէջ կիներ միայն լսող ու հնազանդող ըլլան եւ ո՛չ ուսուցանող կամ հեղինակութիւն բանեցնող: Բայց պէտք է հարցնենք թէ արդեօք առաքեալին հրահանգը բացարձակ է, եւ բոլոր եկեղեցիներուն ու բոլոր ժամանակներուն համար տրուած հրահանգ մըն է, թէ կը վերաբերի միայն Եփեսոսի եկեղեցիին, եւ այն ալ՝ որոշ ժամանակի մը համար եւ որոշ պայմաններու մէջ:

Երբ աչքէ կ'անցնենք Պօղոսի միւս նամակները, տեսնելու համար՝ թէ արդեօք նման պարագայ մը կամ նման հրահանգ մը կա յ ուրիշ տեղ, այս հրահանգին մէկ նմանակը կը գտնենք Ա.Կր 14-րդ գլխուն մէջ (34-38 համարներ), ուր Պօղոս առաքեալ կ'ըսէ. *«Ձեր կիները եկեղեցիներուն մէջ լուռ թող կենան, որովհետեւ անոնց հրաման չկայ խօսելու, այլ՝ հնազանդ ըլլալու, ինչպէս Օրէնքն ալ կ'ըսէ»* (Ա.Կր 14.34), ուր

Օրէնք ըսելով հաւանաբար կը հասկնայ Մն 3.16-ը: Այստեղ ալ կը թուի թէ հրահանգը բացարձակ է եւ կը վերաբերի բոլոր եկեղեցիներուն եւ բոլոր ժամանակներուն. բայց իրականութեան մէջ այդպէս չէ:

Այս կապակցութեամբ պէտք է գիտնալ մեկնաբանական հետեւեալ սկզբունքը.- Առաքելական նամակներուն մէջ կան հրահանգներ, որոնք «կանոնադրական եւ պարտադիր սկզբունքներ» են՝ բոլոր եկեղեցիներուն եւ բոլոր ժամանակներուն համար, եւ կան հրահանգներ, որոնք «յատուկ կամ ժամանակաւոր կարգադրութիւններ» են՝ մասնաւոր եկեղեցւոյ մը համար եւ մասնաւոր պայմաններու մէջ:

Սակայն ի՞նչպէս պիտի գիտնանք, թէ խնդրոյ առարկայ ունէ՞ հրահանգ այս երկու խմբաւորումներէն որո՞ւն մէջ կ'իյնայ: Սկզբունքը հետեւեալն է.- Ունէ՞ հրահանգ, որուն մէջ արտայայտուած տեսակէտը ուսուցուած կը գտնենք ուրիշ տեղ, եւ որուն ընդհանուր ճշմարտութիւն ըլլալը հաստատուած կը գտնենք եկեղեցւոյ կեանքը նկարագրող դրուագներու կամ հատուածներու մէջ, ինքնին կը դառնայ կանոնադրական եւ պարտադիր՝ ամբողջ եկեղեցւոյ եւ բոլոր ժամանակներուն համար: Իսկ, հակառակէն դիտուած, եթէ տրուած հրահանգը այլապէս չենք գտներ ուսուցողական բնագիրներու մէջ ո՛չ ալ անոր գործնականացումը կը գտնենք նկարագրական հատուածներու մէջ, կը նշանակէ՞ թէ տուեալ հրահանգը կը վերաբերի միայն տուեալ կացութեան եւ տուեալ ժամանակին, թէպէտեւ նման կացութեանց մէջ ուրիշ տեղեր եւ ուրիշ ժամանակներու ալ ի գօրու կրնայ ըլլալ:

Արդ, մեր բնագիրին գալով, արդեօք այստեղ եւ Ա.Կր 14.34-ին մէջ տրուած հրահանգը կանոնադրական եւ պարտադիր սկզբունք մըն է, թէ յատուկ, մասնակի եւ ժամանակաւոր կարգադրութիւն մը: Քննութիւնը ցոյց կու տայ որ խօսքը բացարձակ սկզբունքի մը մասին չէ, որովհետեւ կիներու կողմէ մարգարէութիւնը, աղօթքը, քարոզութիւնը եւ

ուսուցումը ընդունուած ծանօթ իրողութիւններ են եկեղեցւոյ կեանքին մէջ, ամենուրեք: Այսպէս.-

1.- Դեռ Պենտէկոստէի օրը Պետրոս առաքեալ Յովէլ մարգարէի բառերը կը յիշեցնէր, թէ *«Այնուհետեւ, երբ վերջին օրերը գան, - կ'ըսէ Աստուած,- իմ Հոգիս պիտի թափեմ բոլոր մարդոց վրայ. ձեր տղաքն ու աղջիկները իմ պատգամներս պիտի փոխանցեն ձեզի [=պիտի մարգարէանան]»*: Այն օրերուն իմ Հոգիս պիտի թափեմ նաեւ իմ ծառաներուս եւ աղախիններուս վրայ, եւ անոնք եւս իմ պատգամներս պիտի փոխանցեն ձեզի» (Գրծ 2.17-18: Հմմտ Յվլ 2.28):

2.- Գործք Առաքելոց գիրքը կը վկայէ Փիլիպպոս Սարկաւագի չորս աղջիկներուն համար, որ մարգարէութիւն կ'ընէին (21.9):

3.- Տարբեր եկեղեցիներու կեանքին մէջ սարկաւագութիւն եւ քարոզութիւն կը կատարէին շատ մը կիներ, ինչպէս Ֆիպէ սարկաւագուհին (Հո 16.1), Պրիսկա [կամ Պրիկիլա] որ Պօղոսի գործակից մըն էր եւ Աւետարանը ուսուցանող մը (հմմտ Հո 16.3: Գրծ 18.26), Յունիա, որ ուրիշներու հետ միասին «առաքեալ» կը կոչուի (Հո 16.7), Եւոզիա եւ Սինտիք, որոնք Պօղոսի կողքին Աւետարանը քարոզողներ էին (Փլպ 4.2-3), եւլն:

Այս օրինակները ցոյց կու տան, թէ լուռ մնալու եւ չուսուցանելու հրահանգը ընդհանուր եւ բացարձակ չեն: Այդ պարագային, ինչո՞ւ առաքեալը այդ հրահանգը կու տայ հոս եւ Ա.Կր 14.34-ին մէջ: Հաւանական պատճառը այն է, որ ողջմիտ վարդապետութեան հակառակ ուսմունքներ ջատագովողներ կան, ինչպէս տեսանք, որոնք «առասպելներով ու ազգահամարներով» կը զբաղին եւ վէճեր կը յարուցանեն (1.4), «պառաւական առասպելներ»ու ետեւէ են (4.7), «սուտանուն գիտութեան» մը անունով՝ «պիղծ ունայնաբանութիւններ» կ'ընեն եւ հակառակութիւններ կը ստեղծեն, հաւատքէն մոլորելով ու մոլորեցնելով ուրիշները (6.20-21): Այստեղ «պառաւական» (γραδοης [graodes]) բառը

արդեօք կրնա՞յ նշել, թե անոնցմով զբաղողները գլխաւորաբար կիներ են: Այս մէկը աւելի քան հաւանական կը դառնայ, երբ նկատի ունենանք, թե որբեւայրիներուն՝ մասին խօսած ատեն ալ Պօղոս կը դատապարտէ անոնք՝ որոնք իրենց հաւատքէն կը շեղին եւ *«ծուլութեան վարժուելով՝ կը սկսին տունէ տուն շրջիլ, եւ ո՛չ միայն ծոյլ, այլ նաեւ բամբասող ու հետաքրքիր կը դառնան, եւ իրենց գործը չեղած բաներու մասին կը խօսին»* (5.13): Եթէ այս ենթադրութիւնները ուղիղ են, մեր եզրակացութիւնը այն կ'ըլլայ՝ որ Եփեսոսի մէջ կարգ մը կիներ իրենք են սխալ եւ սուտ վարդապետութեանց հիմնական լծակներն ու խօսնակները, եւ այդ պատճառով է որ Պօղոս կ'արգիլէ որ կիներ ուսուցանեն Եփեսոսի եկեղեցիին մէջ:

Ի վերջոյ, Պօղոս կ'ըսէ նաեւ՝ թէ յիշեալ կիները պետք է «կատարեալ հնազանդութիւն» ցուցաբերեն. որո՞ւ. կասկած չկայ որ եկեղեցոյ երեցներուն, եւ առաջին հերթին՝ Տիմոթէոսի: Իսկ այս մասին ակնարկը կապուած է յաջորդ համարին միւս բացատրութեան, ուր առաքեալը անոնց կ'արգիլէ ուսուցանել եւ մանաւանդ «հեղինակութիւն բանեցնել այր մարդոց վրայ»: Պարզ է, որ այս կիները շատերը իրենց սխալ ուսուցումներուն հրապուրելով՝ իրենց համար տեսակ մը դիրք շինած էին եւ կը փորձէին նոյնիսկ ճնշում կամ հեղինակութիւն բանեցնել այր մարդոց վրայ, կամ եկեղեցոյ իշխանաւորներուն վրայ, ինչ որ Պօղոս զօրեղապէս կ'արգիլէ՝ «չեմ արտօներ» բացատրութեամբ:

(2.13) *«Որովհետեւ նախ Ադամ էր որ ստեղծուեցաւ, եւ ապա միայն Եւա»:*

(2.14) *«Եւ յետոյ, Ադամ չէր որ խաբուեցաւ, այլ՝ կինն էր որ խաբուելով յանցանքի մէջ ինկաւ»:* Երկու կարգի պատճառաբանութիւններ կամ "ապացոյցներ" կը բերէ Պօղոս,

իր դրած արգելքին համար.- մեկը՝ ստեղծագործութենէն, միւսը՝ մեղքով անկումէն:

1.- Ստեղծագործական պատճառաբանութիւնը այն է, որ նախ Ադամ ստեղծուեցաւ, եւ ապա միայն կինը, իբրեւ անոր «օգնական», թեպէտ Օննդոց գիրքին եւ առհասարակ Հին Կտակարանին մէջ այս բառը ռեւէ ձեւով ստորադասութիւն չի յուշեր:

Այս պատճառաբանութեան կարելի է առարկել, ըսելով՝ թէ ստեղծագործութեան երկու պատումներ կան Օննդոց գիրքին մէջ, եւ եթէ ըստ երկրորդին կինը աւելի ետք կը ստեղծուի, սակայն առաջինին պատումին համաձայն այր եւ կին միասին կը ստեղծուին, երկուքն ալ Աստուծոյ պատկերով եւ նմանութեամբ, եւ երկուքին ալ համահաւասար իշխանութիւն եւ տիրութիւն կը տրուի ամբողջ աշխարհին վրայ:

2.- Անկումէն առնուած պատճառաբանութիւնը այն է՝ որ կինը նախ ի՛նք յանցանքի մէջ ինկաւ եւ եղաւ մարդուն անհնազանդութեան եւ անկումին պատճառ, որուն իբրեւ հետեւանք՝ Աստուած դատավճիռ արձակեց, որ այնուհետեւ կինը *«իր ամուսինին հնազանդ ըլլայ»* (Օն 3.16): Այս պատճառաբանութեան եւս կարելի է առարկել, ըսելով՝ թէ այդ դատավճիռը ուղիղ ըլլալով հանդերձ՝ Աստուծոյ սկզբնական նպատակին մէջ չէր իյնար, եւ ի գօրու էր մինչեւ Քրիստոսով եկած փրկագործութիւնը. բայց երբ Քրիստոս եկաւ եւ իր ծնունդով մարդկային ծնունդներուն վրայ դրուած անէծքը վերցուց, ա՛լ այդ դատավճիռը իր ոյժը կորսնցուց, որով այլեւս Քրիստոսի միացածներուն միջեւ խտրութիւն չկայ, *«ո՛չ Հրեայի եւ հեթանոսի, ո՛չ ծառայի եւ ազատի, ո՛չ արուի եւ էգի»* (Գղ 3.28):

Բայց Պօղոս այս մեկնութիւնը կը կատարէ ո՛չ այնքան կնոջ ենթակայութիւնը ցուցնելու համար, որքան՝ ընդգծելու համար իսկական այն դերը՝ որ անիկա ունի Աստուծոյ կամքին ու ծրագիրին մէջ. այդ դերը որդեծնութիւնն է, որ

Աստուած տուած է անոր, որպէսզի Աստուծոյ համար զաւակներ ծնանի եւ ատով իր փրկութիւնը ապահովէ:

(2.15) «*Բայց եւ այնպէս՝ կինն ալ կը փրկուի զաւակներ ծնելուն համար, եթէ ապրի պարկեշտութեամբ, հաւատքով, սիրով եւ սրբութեամբ*»: «Զաւակներ ծնելուն համար», բոց. «որդեճնութեամբ»: Քրիստոնէայ կնոջ մը համար Աստուծմէ իրեն սահմանուած առաջին եւ կարեւորագոյն դերը՝ ընտանիքին մէջ իր ունեցած դերն է, իբրեւ կին եւ իբրեւ մայր (հմմտ 5.14): Այս շեշտը հոս կարեւոր է մանաւանդ անոր համար, որ Եփեսոսի մէջ սուտ վարդապետութեան կողմնակիցները, եւ վստահաբար նաեւ ակնարկուած կիները կը մերժեն ամուսնութիւնը եւ ընտանեկան պարտաւորութիւնները (հմմտ 4.3): Այլ կերպով անոնք մերժած կ'ըլլան այն աստուածադիր կարգը, որ իրենց համար Աստուծոյ կամքին հիմնական երեսն է: Իսկ Աստուծոյ կամքին կատարումը փրկութեան առաջին ու վերջին պայմանն է: Միւս կողմէ, «որդեճնութեամբ» բառին մէջ որոշ մեկնիչներ կը կարդան ակնարկութիւն մը Քրիստոսի մարդեղութեան որ մարդկային բոլոր ծնունդներուն նուիրագործումը եղաւ եւ իրմով լուծումը բերաւ Եւայի (=կիներուն) վրայ դրուած անէծքին. այսինքն՝ կնոջ փրկութեան պատճառ եղաւ (հմմտ Գղ 4.4-5):

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍԸ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ (3.1-7)

(3.1) «*Մէկ բան որոշ է, որ եպիսկոպոսութեան ձգտողը բարի գործի է որ կը ցանկայ*»: «Եպիսկոպոս» բառը Յունարէն է (επισκοπος [episkopos]), եւ կը նշանակէ՝ «վերադիտող, տեսուչ»: Կը գործածուէր աշխարհիկ թէ կրօնական ռեւէ կազմակերպութեան նախագահին կամ վերադիտող պաշտօնէային համար:

Քրիստոնեայ համայնքներու մէջ այդ անուանումը տրուեցաւ տեղական հովիւներուն վրայ կարգուած պատասխանատուին, որուն Եբրայական համապատասխանն էր՝ «երեց», ինչպէս այս բառերու փոխնիփոխ գործածութենէն կը հետեւցնենք (հմմտ Գրծ 20.17 եւ 28: Տիտ 1.5-7: Ա.Պտ 5.1-2):

Եպիսկոպոսի մը հիմնական պարտաւորութիւններն են.-

1.- Աստուծոյ հօտին հովուութիւնը (Գրծ 20.28: Ա.Պտ 5.2): Առանց հօտի կարելի չէ երեւակայել հովիւ, եւ ուստի Աստուածաշնչական հասկացողութեամբ՝ կարելի չէ պատկերացնել եպիսկոպոս մը որ հօտ եւ հովուական գործ չունենայ: Բայց հովուութիւնը այս պարագային ուրիշ բան չէ՝ եթէ ոչ մարդոց հոգիներուն փրկութեան գործին իր հսկողութիւնը (հմմտ Եբր 13.17):

2.- Քարոզութիւնը եւ ուսուցումը՝ խօսքով եւ անձնական օրինակով (3.2, 5.17: Բ.Տմ 4.5: Ա.Պտ 5.3):

3.- Ուղիղ հաւատքին անեղծ պահպանութիւնը (Գրծ 20.28-31): Առաքելական «առողջ» հաւատքը իբրեւ թանկագին «աւանդ» իր հսկողութեան ու խնամքին յանձնուած է, եւ ինք պէտք է այդ աւանդը պահէ անարատ, հեռու՝ սխալ վարդապետութեանց բիծէն ու ապականութենէն (6.20: Բ.Տմ 1.13-14: Տիտ 1.9): Իր այդ դերին մէջ եպիսկոպոսը պէտք է ի գործ դնէ իր հեղինակութիւնը եւ ի հարկին նաեւ՝ սաստր, յանդիմանութիւնը, պատիժը (տե՛ս Տիտ 1.9: Հմմտ 5.12), որովհետեւ ասկէ կախում ունի իրեն յանձնուած հօտին փրկութիւնը (հմմտ 4.16):

4.- Եկեղեցւոյ գործերուն յանձանձումը (3.5, 5.17): Եպիսկոպոսը նաեւ պատասխանատուն եւ հսկիչն է՝ եկեղեցական համայնքի ներքին կարգ ու կանոնին, իրեն օգնական երեցներու ընտրութեան ու գործունէութեան, եւլն (հմմտ 5.19-22):

(3.2) «Արդ, եպիսկոպոսը պէտք է անմեղադրելի ըլլայ. մէկ կնոջ ամուսին, զուսպ, զգաստ, մեղմաբարոյ, հիւրասէր եւ

ուսուցանելու ատակ»: Պօղոս յատուկ կերպով կը շեշտէ, թէ եպիսկոպոսը «անմեղադրելի» պէտք է ըլլայ (հմմտ Տիտ 1.6, 7), ինչպէս նոյնը կը պահանջէ սարկաւագներուն համար (3.10): «Մէկ կնոջ ամուսին» բացատրութիւնը կարելի է հասկնալ ու թարգմանել նաեւ «մէկ անգամ ամուսնացած», ըլլա՛յ իբրեւ բազմակնութեան արգելք, ինչպէս ոմանք կ'ուզեն հասկնալ, ըլլա՛յ որպէս կրկնամուսնութեան արգելք, թէ՛ կնոջ մահուան պարագային եւ թէ՛ ամուսնալուծման մը պարագային, ըլլա՛յ որպէս ամուսնական անհաւատարմութեան արգելք: Երեք պարագաներուն ալ շեշտուածը այն է՝ թէ եպիսկոպոսը պէտք է տիպար օրինակը ըլլայ եւ տայ՝ բարոյական զգաստութեան, չափաւորութեան, ինքնատիրապետումի, ինչպէս յաջորդող բացատրութիւնները եւս կրնան ցուցնել:

Եպիսկոպոսը պէտք է «զուսպ» ըլլայ ամէն բանի մէջ, թէ՛ խօսքի եւ թէ՛ վարմունքի մէջ: «Պէտք է ըլլայ զգաստ», այսինքն՝ արթուն ինքզինքին տիրապետող, ամէն բանի մէջ չափաւոր ու հաւասարակշռուած: Պէտք է ըլլայ «մեղմբարոյ», ո՛չ յախուռն, ո՛չ զայրացկոտ, ո՛չ նախատող, ո՛չ ծայրայեղ, այլ՝ «հիւրասէր», որ Տիրոջ օրինակով մարդիկը ընդունելու իր մնայուն պատրաստակամութեան արտայայտութիւնը ըլլայ, եւ նաեւ՝ «ուսուցանելու ատակ» ըլլայ, որպէսզի կարենայ քաղցրութեամբ խրատել եւ ուղղութեան բերել բոլորը (հմմտ Բ.Տմ 2.24):

(3.3) *«Պէտք չէ՛ գինեմով ըլլայ, ո՛չ ալ կոպիտ, այլ՝ ազնիւ. ո՛չ կռուական եւ ո՛չ ալ դրամասէր»:*

(3.4-5) *«Իր սեփական ընտանիքին լաւ վերակացութիւն ընող պէտք է ըլլայ. եւ ունենայ զաւակներ՝ որոնք իրեն հնազանդ ըլլան ամենայն ակնածանքով: Այլապէս, եթէ իր սեփական ընտանիքին վերակացու չի կրնար ըլլալ, ի՛նչպէս պիտի կարենայ Աստուծոյ եկեղեցիին հոգ տանիլ»:*

(3.6) *«Պէտք չէ՛ հաւատքի մէջ նորադարձ մը ըլլայ, որպէսզի չըլլայ որ հպարտանալով՝ դատապարտութեան տակ իյնայ Սատանային պէս»:* «Հաւատքի մէջ նորադարձ»,

բոց՝ «մատաղատունկ» կամ «նորատունկ», որ իրականին մեջ ծառերուն համար գործածուող բառ մըն է, այստեղ պատշաճեցուած՝ քրիստոնէական հաւատքին նոր դարձած մարդոց համար:

Պարզ է, որ տարիքով շատ երիտասարդ եւ նաեւ պաշտօններու մեջ շուտ յառաջացող անձ մը շատ դիրքաւ կրնայ իյնալ հպարտութեան մեջ, Սատանային պէս, եւ այդպիսով ալ ինքզինքը դատապարտութեան ենթարկել: Ահա թէ ինչու՝ Պօղոս կը յանձնարարէ նորադարձները հեռու պահել եկեղեցոյ տեսչութեան պատասխանատու պաշտօնէն:

(3.7) *«Այլ՝ պէտք է լաւ անուն ունենայ նոյնիսկ ոչ-քրիստոնէայ մարդոց մեջ, որպէսզի չըլլայ որ նախատանքի առարկայ դառնայ եւ Սատանային լարած թակարդին մեջ իյնայ»:* Իւրաքանչիւր քրիստոնէայ, բայց մանաւանդ ուրիշներուն ուսուցանելու եւ զանոնք առաջնորդելու պատասխանատուութիւնը ունեցող անձը, եպիսկոպոսը, ներկայացուցիչ մը եւ դեսպան մըն է Քրիստոսի (հմմտ Բ.Կր 5.20: Եփ 6.20), եւ ըստ այնմ, պէտք է կենցաղավարի: Իր ամէն մէկ արարքը քննութեան ու քննադատութեան առարկայ կրնայ ըլլալ այլահաւատներուն կողմէ, եւ իրենց կողմէ գործուած սխալը կամ գէշ վարմունքը կրնայ պատճառ ըլլալ որ Աստուծոյ անունը անարգուի (տե՛ս Հո 2.24: Հմմտ 6.1), որով պէտք է չափազանց զգոյշ եւ շրջահայեաց ըլլայ, առիթ չտալու համար Սատանային, որ զինք կործանելու եւ քրիստոնէական հաւատքը արհամարհանքի նիւթ դարձնելու առիթ կը փնտռէ:

ՄԱՐԿԱԻԱԳԻ ՄԸ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ (3.8-13)

(3.8) *«Նոյնպէս ալ սարկաւագները»:* «Սարկաւագ» (Յունարէն՝ διακονος [diakonos]) բառը իր ընդհանուր, ոչ-
www.hygradaran.weebly.com 140

մասնագիտական գործածութեանը մէջ պարզապէս կը նշանակէ՝ «ծառայող»: Իսկ մասնագիտական իր գործածութեամբ՝ սարկաւագութիւնը առաջին եկեղեցւոյ երկու հիմնական պաշտօններէն մէկն է: Ինչպէս մեր բնագիրը, այնպէս ալ Փիլիպպեցիներուն ուղղուած նամակը (1.1) ցոյց կու տան, թէ եկեղեցւոյ կեանքին մէջ եպիսկոպոսներուն կողքին միակ յիշուած պաշտօնեաներն են անոնք, գէթ սկզբնական շրջանին:

Եկեղեցւոյ մէջ սարկաւագները պաշտօնի կոչուեցան՝ իբրեւ առաքեալներուն կամ (երեց)ներուն օգնական, որպէսզի անոնք որոշ գործնական ծառայութիւններէ զերծ ըլլալով՝ կարենան ամբողջապէս նուիրուիլ աղօթքի եւ մանաւանդ Աստուծոյ խօսքին քարոզութեան եւ ուսուցման (տե՛ս Գրծ 6.2-4): Այդ գործնական ծառայութիւնները սկզբնապէս ծիսական հասկացողութիւն չունէին, այլ կը վերաբերէին՝ եկեղեցւոյ ընկերային ծառայութեան երեսներուն, այսինքն՝ աղքատներու, այրիներու եւ որբերու խնամածութեան, նիւթական օժանդակութեանց յանձանձումին, եւլն:

(3.8) *«Պէտք է պարկեշտ ըլլան եւ ո՛չ թէ կեղծաւոր, գինեսէր կամ շահամոլ»:* Սարկաւագներէն ալ կը պահանջուի «պարկեշտ» ըլլալ (Յունարէն՝ σεμνος [semnos]), որ կը նշանակէ՝ ամէն ինչի մէջ ուղիղ եւ յարգանք պարտադրող վարմունք կամ ընթացք: Ասիկա բոլոր հաւատացեալներէն պահանջուած յատկութիւն մըն է հարկաւ (հմմտ 2.2), որուն լաւագոյն մէկ օրինակը պէտք է ըլլայ Սարկաւագը: Նիւթական գործառնութիւնները կամ կարիքաւորներուն պէտքերուն մատակարարումը, որոնց պատասխանատուութիւնը ունի, կրնան դիւրաւ առիթներ տալ զեղծումներու եւ իր մասին դժգոհութեանց: Արդ, որպէսզի իր ընթացքով բոլորին յարգանքը վայելէ՝ պէտք է իր բոլոր յարաբերութեանց մէջ եւ գործառնութեանց մէջ ուղիղ ըլլայ, հեռու՝ «կեղծաւորութենէ» եւ «շահամոլութենէ»: Պէտք է

www.hygradaran.weebly.com 141

հեռու ըլլայ նաեւ «խմիչքի մոլութենէն», որ զինք զգաստութենէն ու պարկեշտութենէն դուրս կը բերէ:

(3.9) *«Պէտք է մաքուր խիղճով պահեն հաւատքին յայտնեալ ճշմարտութիւնները»:* «Յայտնեալ ճշմարտութիւնները», բոց. «խորհուրդը» (Յունարէն՝ *μυστηριον* [mysterion]), որ սովորաբար գաղնիք մը կամ ծածուկ բան մը կը նշանակէ, բայց այստեղ կը վերաբերի հաւատքին եւ ուստի՝ քրիստոնէական հաւատքին վերաբերող այն ճշմարտութիւններուն, որ Քրիստոս մեզի յայտնեց, եւ որ եկեղեցին առաքեալներէն իբրեւ աւանդ ստացաւ՝ զայն անեղծ ձեւով պահպանելու եւ փոխանցելու համար: Եւ անգամ մը եւս առաքեալը կը շեշտէ, թէ այդ հաւատքը ամուր եւ կենդանի պահելու համար անհրաժեշտ է մաքուր պահել խղճմտանքը (հմմտ 1.5 եւ 19):

(3.10) *«Աստնք եւս նախ պէտք է փորձուին եւ ապա միայն, եթէ անմեղադրելի ըլլան, իրենց պաշտօնին անցնին»:*

(3.11) *«Անոնց կիները նոյնպէս պէտք է պարկեշտ ըլլան. ո՛չ թէ չարախօս, այլ՝ զուսպ եւ ամէն բանի մէջ վստահելի»:* Յունարէն բնագիրին մէջ չկայ «իրենց» ստացականը, որ բնագիրին տրուած մեկնութիւն մըն է, որպէսզի անով հասկցուին սարկաւագներուն կիները: Սակայն առանց այդ յաւելուած ստացականին՝ «կիները» այստեղ կրնայ ուրիշ բան ալ յուշել. այսինքն՝ «կին սարկաւագ»ները, կամ այլ խօսքով, «սարկաւագուհի»ները: Թէպէտ յաջորդ համարին մէջ դարձեալ սարկաւագներուն մասին խօսիլը ոմանց համար կրնայ բացառել այդ կարելիութիւնը, սակայն ուրիշներու համար ատիկա արգելք մը չէ այստեղ սարկաւագուհիներու մասին հրահանգ մը տեսնելու: Ամէն պարագայի, Նոր Կտակարանին մէջ սարկաւագուհիի պաշտօնը եւս ծանօթ է, եւ, ինչպէս վերեւ ակնարկեցինք, նոյնինքն Պօղոսի

գործակիցներուն մէջ կայ Տիպէ քոյրը, որ Հոռմի եկեղեցիին սարկաւագուհին է (տե՛ս Հո 16.1):

Ասոնք ալ պէտք է ամենեւին «պարկեշտ» ըլլան, այսինքն՝ ուղիղ ընթացքի մէջ գտնուին իրենց կենցաղով եւ ուրիշներուն հանդէպ վարմունքով: Պէտք չէ «չարախօս» (Յունարէն՝ διαβολος [diabolos]) ըլլան, այսինքն ուրիշներուն մասին անհիմն եւ սուտ լուրեր տարածեն ու զրպարտեն, որովհետեւ ատիկա Սատանային գործն է: Ընդհակառակը, պէտք է «զուսպ» ըլլան, ինչպէս վերը եպիսկոպոսին համար ըսուած էր, եւ «ամէն բանի մէջ վստահելի», բոց՝ «հաւատարիմ»: Եթէ իրօք սարկաւագուհիներու մասին է խօսքը, այս «վստահելի» բառը կրնայ վերաբերիլ իրենց պաշտօնին, որ թէպէտ սահմանուած չենք գտներ ոեւէ տեղ, բայց դարձեալ կրնայ կապ ունենալ նիւթական գործառնութեանց կամ պատասխանատուութեանց հետ:

(3.12) «Մարկաւագները պէտք է մէկ կնոջ ամուսին ըլլան, եւ թէ՛ իրենց զուակներուն եւ թէ՛ իրենց ընտանիքին վերակացու եղած ըլլան»: «Մէկ կնոջ ամուսին» բացատրութեան համար, տե՛ս վերեւ 3.2-ին մէջ ներկայացուած բացատրութիւնը:

(3.13) «Որովհետեւ, լաւ ծառայութիւն ընողները թէ՛ իրենք իրենց համար վարկ կը շահին եւ թէ՛ մեծ համարձակութեամբ կրնան խօսիլ Քրիստոս Յիսուսի հանդէպ ունեցած իրենց հաւատքին մասին»:

ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՄԵՐ ՀԱԻԱՏՔԻՆ ՄԵԾ ԽՈՐՀՈՒՐԴԸ
(3.14-16)

(3.14-15) «Յոյս ունիմ որ շուտով քովդ կ'ըլլամ: Բայց այս բաները կը գրեմ քեզի, որպէսզի, եթէ ուշանամ, գիտնաս՝ թէ՛ ի՛նչպէս պէտք է շարժիս Աստուծոյ ընտանիքին մէջ, այսինքն՝

կենդանի Աստուծոյ եկեղեցիին մէջ: Պօղոս կը բացատրէ, թէ ի՞նչ նպատակով կը գրէ իր նամակը.- Եկեղեցւոյ մէջ, այսինքն քրիստոնէական համայնքի կեանքին ու պաշտամունքին մէջ, իւրաքանչիւրին տեղին ու դերին, եւ իւրաքանչիւրին ունենալիք վարմունքին մասին իր ցուցմունքները տալու համար:

Եկեղեցիին մասին խօսած ատեն, այստեղ Պօղոս գեղեցկագոյն սահմանումներէն մէկը կը կատարէ, նախ զայն բնորոշելով իբրեւ «կենդանի Աստուծոյ», այսինքն՝ ճշմարիտ Աստուծոյ (հակադրաբար չաստուածներուն, որոնք անշունչ, մեռեալ տարրեր են) պատկանող, եւ ապա՝ իբրեւ «Աստուծոյ ընտանիքը», բոց՝ «տունը», որ սակայն, ինչպէս յստակ է, չի վերաբերիր շէնքի մը, այլ՝ հաւատացեալներու ամբողջութեան, որ Աստուծոյ տունն է, այսինքն՝ ընտանիքն է:

(3.15) *«Որ ճշմարտութեան սիւնը եւ խարխսին է»*: Հմտ Յյտ 3.12: Ինչպէս սիւնը շէնքը իր վրայ պահողն է, իսկ խարխսիսը կամ հիմը անոր ամրութիւնը, հաստատունութիւնը, այնպէս ալ Քրիստոսի սուրբ Եկեղեցին Աստուծոյ կողմէ յայտնուած ճշմարտութեան պահապանն է, զայն վեր պահողը, եւ անոր պաշտպանը, զայն անշարժ եւ անխախտ պահողը:

(3.16) *«Եւ անհերքելիօրէն մեծ է աստուածպաշտութեան խորհուրդը, որովհետեւ՝ Աստուած մարմինով երեւցաւ»*: «Խորհուրդ» կը նշանակէ ծածուկ կամ գաղտնի ճշմարտութիւն մը, իսկ «աստուածպաշտութեան խորհուրդ» կը նշանակէ այն ծածուկ ճշմարտութիւնը, որ կապուած է մեր հաւատքի ու բարեպաշտութեան եւ մարդս կ'առաջնորդէ ճշմարիտ աստուածպաշտութեան:

Ծածուկ այն ճշմարտութիւնը, որ մարդս աստուածպաշտութեան կ'առաջնորդէ նոյնինքն մարդացեալ Քրիստոսն է, կամ, աւելի ճիշդ, մարդացեալ Քրիստոսին

վերաբերող եւ անոր մէջ ծածկուած ճշմարտութիւնը, որ անոր բուն ինքնութիւնն է: Ի՞նչ կը տեսնենք մենք Քրիստոսի մէջ. միայն մա՛րդը. եթէ մեր աչքերը յառած պահենք միայն մարդ-Քրիստոսին վրայ, այդ պարագային չենք տեսներ այն մեծ «խորհուրդը» որ Աստուած կը յայտնէ մեզի: Այդ խորհուրդը այն է, որ «Աստուած մարմինով երեւցաւ» կամ «յայտնուեցաւ»: Մարմինը արգելք պէտք չէ ըլլայ, որ հաւատքի աչքը տեսնէ անոր մէջ պարփակուած աստուածութիւնը: Մարդ արարածը դժուար կրնայ հասկնալ եւ չի կրնար պատկերացնել, թէ ի՛նչպէս Աստուած կրնայ գալ եւ մարդկային մարմինի մէջ պարփակուիլ, սահմանափակուիլ, եւ երկիրի վրայ ապրիլ մարդու մը պէս: «Ծառայի կերպարանքով» (հմմտ Փլպ 2.7): Այդ դժուար հասկնալի եւ անպատմելի ճշմարտութիւնն է այն գաղտնիքը, (խորհուրդը), որ աստուածպաշտութենէ հեռու մարդիկ չեն կրնար ճանչնալ եւ ընդունիլ, մինչ ճանչցողներուն եւ ընդունողներուն համար անիկա աղբիւր է առաւել հաւատքի եւ աստուածապաշտ կեանքի:

(3.16) «*Եւ հոգիով արդարացաւ*»: «Արդարացաւ» բառը այստեղ կը հասկնանք՝ ո՛չ թէ մեղքերէն կամ յանցանքներէն կամ ամբաստանութիւններէն արդարանալ, այլ՝ արդար յայտարարուիլ կամ ցոյց տրուիլ: Մեկնութիւնները կը տարբերին Յիսուսի մարդկային հոգիի՞ն համար, թէ իր աստուածային հոգեղէն գոյութեան համար:

1.- Սուրբ Հոգին ինքն էր որ վկայեց Յիսուսի մասին, եւ այդ վկայութեամբ ցոյց տուաւ, թէ արդար էր անիկա ամեն ինչով, եւ այդ արդարութեամբ ալ յաղթանակ տարաւ չարին վրայ:

2.- Ոմանք այս բառերը կ'առնեն իբրեւ հակադրութիւն նախորդ տողին «մարմինով երեւցաւ» բառերուն, եւ «հոգիով» բացատրութիւնը կը հասկնան իբրեւ ակնարկութիւն՝ Քրիստոսի յարութեան եւ յարուցեալ գոյութեան, որով ո՛չ միայն իբրեւ Քրիստոս, այսինքն Մեսիա ճանչցուեցաւ, այլ

նաեւ ու մանաւանդ՝ իբրեւ Տէր եւ Աստուած, որով իր անձին համար իր բոլոր յայտարարութիւնները ճշմարտուեցան, «արդարացան» (հմմտ Հո 1.3):

(3.16) *«Հրեշտակներուն յայտնուեցաւ»*: Այս խօսքը երեք նշանակութիւններով կրնայ հասկցուիլ.-

1.- Հրեշտակները մնայուն ականատեսները եւ վկաները, երբեմն ալ աւետողները եղան մարդացեալ Աստուծոյ՝ Յիսուս Քրիստոսի տնօրինական կեանքին եւ առաքելութեան ամբողջ ընթացքին, իր յղութենէն ու ծնունդէն սկսեալ մինչեւ իր մկրտութիւնն ու փորձութիւնները, իր երկրաւոր կեանքի իւրաքանչիւր քայլափոխը՝ մինչեւ Գեթսեմանի ու Գողգոթա եւ զերեզմանը, ուրկէ յարութիւն առաւ, եւ մինչեւ փառքով երկինք համբառնալը:

2.- Մարդացեալ Աստուածը՝ Յիսուս Քրիստոս միայն «երկրի վրայ չերեցաւ», այլ նաեւ մարդոց փրկութեան սիրոյն *«յանձն առաւ նոյնիսկ մահը, եւ այն ալ խաչի անարգ մահը»* (Փլպ 2.8): Յաւիտեաններէն ի վեր ծածուկ մնացած Աստուծոյ «իմաստութիւն»ն էր ատիկա (հմմտ Ա.Կր 2.7), մեծ եւ աներեւակայելի «խորհուրդ» մը՝ ո՛չ միայն մարդոց համար, այլ նաեւ հրեշտակներուն համար, որոնք այդ խորհուրդին *«կատարումը գէթ մասամբ պիտի ուզէին տեսնել»* (Ա.Պտ 1.12), եւ որ իր ամբողջ ճոխութեամբը *«եկեղեցիին միջոցաւ յայտնուեցաւ երկինքը եղող իշխանութիւններուն ու պետութիւններուն»* (տե՛ս Եփ 3.8-10):

3.- Իր յարութեամբ եւ մանաւանդ համբարձումով, երբ Աստուծոյ աջ կողմը նստաւ (Մր 16.19), Քրիստոս՝ իբրեւ մարդացեալ Փրկիչ՝ իր հնազանդութեան տակ առաւ հրեշտակները եւ երկնային կամ ոգեղէն բոլոր իշխանութիւններն ու զօրութիւնները (տե՛ս Ա.Պտ 3.22), զանոնք բոլորը ընդգրկելու համար Աստուծոյ փառաւոր ծրագիրին մէջ:

(3.16) *«Ազգերուն մէջ քարոզուեցաւ, աշխարհի մէջ հաւատացուեցաւ, փառքով երկինք բարձրացուեցաւ»:* Աստուածպաշտութեան այս մեծ խորհուրդը առաքելական քարոզութեամբ ամբողջ աշխարհ տարածուեցաւ, որպէսզի ամէնքն ալ ճանչնան Աստուծոյ փրկարար շնորհքին ճոխութիւնն ու մեծութիւնը, ամէնքն ալ փրկութիւն ունենան մարդացեալ Աստուծոյ քաւչարար արեան միջոցաւ եւ որդեգիր դառնան Աստուծոյ (հմմտ Եփ 1.4-7), հաշտուելով Աստուծոյ հետ, եւ սրբուելով ու արդարանալով իրենց մեղքերէն (հմմտ Բ.Կր 5.19-21): Եւ արդարեւ, փրկութեան այդ Աւետարանը ամէն կողմ ունեցաւ իր հաւատացողները, որոնք Քրիստոսի միանալով՝ մաս դարձան անոր մարմինին, (Աստուծոյ ընտանիքին [=տունին], այսինքն՝ կենդանի Աստուծոյ եկեղեցիին):

ՎԵՐՉԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՆ ՅԱՅՏՆՈՒԵԼԻՔ
ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ (4.1-5)

(4.1) *«Բայց Սուրբ Հոգին յայտնապէս կ'ըսէ, թէ վերջին ժամանակներուն շատեր պիտի լքեն հաւատքը»:* Այստեղ խօսքը կարելի է առնել ընդհանուր ձեւով մը, եթէ ընդունինք՝ թէ Պօղոս նախապէս, Հին Կտակարանին մէջ կամ Քրիստոսէ յայտնուած իրողութեան մը կ'ակնարկէ (տե՛ս, օրինակ, Մտ 24.10-12: Հմմտ Գրծ 20.29-30): Բայց կարելի է նաեւ զայն հասկնալ՝ իբրեւ Աստուծոյ Հոգիին կողմէ Պօղոսին տրուած յատուկ յայտնութիւն մը:

«Վերջին ժամանակներուն» (Յունարէն՝ εν υστεροισ [en hysterois kariois]) բացատրութիւնը Նոր Կտակարանին մէջ ընդհանրապէս կը վերաբերի Քրիստոսի առաջին գալստեան ժամանակին (տե՛ս Ա.Պտ 1.20: Հմմտ Գրծ 2.17: Եբր 1.2): Բայց կը թուի թէ այստեղ, ինչպէս Բ.Տմ 3.1-ին մէջ, խօսքը առաքելային ժամանակին եւ գալիք ժամանակին մասին է (հմմտ Բ.Տմ 4.3: Բ.Պտ 3.3: Յդ 18): Այսպէս, օրինակ,

Յովհաննէս առաքեալ իր առաջին նամակին մէջ «վերջին ժամ» (Յունարէն՝ εσχάτη ώρα [eschate hora]) կը կոչէ իր ժամանակը (Ա.Յհ 2.18): Այդ բացատրութեամբ կը յատկանշուի մասնաւորապէս Քրիստոսի երկրորդ գալուստը կանխող ժամանակը:

«Պիտի լքեն հաւատքը» չի՛ նշանակեր թէ անհաւատ պիտի դառնան, հաւատալէ պիտի հրաժարին, այլ՝ թէ ճշմարիտ կամ ողջմիտ, առողջ հաւատքէն պիտի հեռանան, հետեւելու համար իրենց քմայքները գոհացնող տեսութիւններու: Մինչդէռ «մէկ» է ճշմարիտ հաւատքը (Եփ 4.5), ճշմարիտ «աստուածպաշտութեան խորհուրդը» որ դեռ հիմա առաքեալը խտացուց շեշտելով Յիսուս Քրիստոսի մարդեղութիւնը եւ փառքը (3.16). հաւատք մը, որմէ շեղողները կ'իյնան ստութեան որոգայթին մէջ:

(4.1-2) *«Ականջ տալով մոլորեցուցիչ չար ոգիներու եւ դէներու ուսուցումներուն, որոնք կը քարոզուին կեղծաւոր եւ ստաբան մարդոց կողմէ, որոնց խիղճը Սատանային կնիքով խարանուած է»:* Ճշմարիտ հաւատքին մերժումը յայտնապէս դիւական ազդեցութեան արդիւնք է: Ճիշդ է, որ մարդկային մտածողութեանց դրսեւորումն է կամ կը թուի անիկա, բայց նոյնիքն այդ մտածողութիւնները իրենց դրդումը կ'առնեն մոլորեցուցիչ չար ոգիներէն: Առաքեալը իր նամակներուն մէջ բազմիցս կ'անդրադառնայ այս կէտին, ցոյց տալով՝ թէ Աստուծոյ գիտութենէն, ճշմարիտ հաւատքէն եւ պարկեշտ ու զգաստ կենցաղէն հեռացումները պատահական չեն, այլ յայտնի արդիւնքներն են Սատանայէն դրդուած մոլորութեանց, որոնց նպատակն է մարդիկը հոգեւորապէս կուրցնել այդ գիտութեան ու ճշմարտութեան դիմաց եւ զանոնք դարձնել Աստուծոյ թշնամի եւ հետեւաբար Աստուծոյ բարկութեան առարկայ, կորուստի դատապարտուած (Բ.Կր4.3-4: Հմմտ Հռ 1.18-32: Բ.Պտ 2.1):

Որոշ է, որ առաքելալը ընդհանուր կերպով աշխարհի մեջ յայտնուելիք սխալ ուսուցումներուն կամ աղանդներուն մասին չէ որ կը խօսի, այլ մասնաւորապէս նկատի ունի Եփեսոսի համայնքին մէջ սխալ վարդապետութիւններ ուսուցանող մարդիկը եւ անոնց տեսութիւնները, որոնք կը հռչակէ «կեղծ» եւ «սուտ»: Այդ մարդիկը արդէն Սատանային կնիքը կը կրեն իրենց խիղճերուն վրայ, ինչ որ ցոյց կու տայ՝ թէ անոր կը պատկանին, ինչպէս մարդիկ իրենց պատկանող ստրուկներուն եւ կենդանիներուն վրայ խարանով նշան մը կը դնեն:

(4.3) «Մարդիկ՝ որոնք ամուսնութիւնը կ'արգիլեն եւ կը հրահանգեն հեռու մնալ կարգ մը ուտելիքներէ»: Եփեսոսի մէջ գործող սուտ ուսուցիչները կը քարոզեն խստակեցութեան որոշ սկզբունքներ, որոնք երբեք ալ Աստուածաշնչական չեն: Այստեղ կարելի է տեսնել Հրէութեան որոշ մէկ ազդեցութիւնը, որ սակայն խառն է հեթանոսական հասկացողութեանց հետ: Հրէութենէն եկողներէն շատեր վստահաբար տակաւին կապուած կը մնային սուրբ եւ անսուրբ ուտելիքներու հրահանգներուն: Բայց վստահ չենք, թէ արդեօք միայն ա՛յդ է յիշեալ սուտ ուսուցիչներուն դիտումը: Որովհետեւ ամուսնութեան արգելքը արդէն կապ չունի Հին Կտակարանի հետ, այլ կու գայ առաջին դարու քրիստոնէական որոշ շրջաններու մէջ հետզհետէ տարածում գտնող Գնոստիկեան աղանդին հիմնական այն հաւատալիքէն, թէ նիւթեղէն այս աշխարհը չարին ստեղծումն է եւ ուրեմն չար է: Արդ, անոնք մարմինը եւս չար կը նկատէին եւ կ'ուզէին զայն ամէն կերպով ճնշել. ուստի նաեւ փափաքելի չէին գտներ ամուսնութիւնը, թէպէտ միւս կողմէն բարոյական յանցանք չէին նկատեր անառակութիւնը:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ
ԵԲԸ 6.4-6 ԵՒ 10.19-31
ՀԱՏՈՒԱԾՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱԻԱՏՔԸ ՉԼՔԵԼՈՒ
«Ուստի, քրիստոնեական հաւատքի նախագիտելիքները ձգելով՝ զանք չափահասներու յատուկ գիտելիքներուն: Չենք ուզեր վերստին խօսիլ այն հիմնական գիտելիքներուն մասին, որոնք կը վերաբերին մեռելական գործերէ ապաշխարելուն եւ Աստուծոյ հաւատալուն, քրիստոնեական դաստիարակութեամբ մկրտուելուն, ձեռնադրութեան, մեռելներու յարութեան եւ յաւիտենական դատաստանի: Այլ, Աստուծոյ թոյլտուութեամբ կ'անցնինք չափահասներու յատուկ ուսուցումներուն:

Արդ, անոնք որ անգամ մը լուսաւորուելով մկրտուելէ ետք՝ երկնային պարգեւին համը առին, Սուրբ Հոգիին հաղորդակից դարձան, Աստուծոյ բարի խօսքին եւ գալիք աշխարհի գորութիւններուն նախաճաշակը առին, այդպիսիները երբ իրենց հաւատքը կը լքեն՝ անկարելի է որ (կարենան վերստին ապաշխարել) ապաշխարութեամբ վերստին նորոգուին: Անկարելի է ատիկա, որովհետեւ այդ ձեւով իրենք իրենց համար վերստին խաչը կը հանեն Աստուծոյ Որդին, զայն հրապարակաւ խայտառակ ընելով» (Եբր 6.1-6):

ՅՈՐԴՈՐ՝ ԱԻԵԼԻ ՄՕՏԵՆԱԼՈՒ ԱՍՏՈՒԾՈՅ

«Հետեւաբար, եղբայրներ, Յիսուսի արիւնով այլեւս ազատ ենք Սրբարան մտնելու, որովհետեւ Յիսուս ինք մեզի համար բացաւ Աստուծոյ հասնելու այդ նոր եւ կենդանի ճամբան՝ վարագոյրէն անդին անցնելով, այսինքն՝ իր մարմինը որպէս զոհ մատուցանելով, եւ ատով իսկ Աստուծոյ ժողովուրդին Քահանայապետը եղաւ: Ուստի անկեղծ սրտով եւ վստահութեամբ լեցուն հաւատքով մօտենանք Աստուծոյ,

մեր սրտերը մաքրած խղճմտանքը ծանրացնող յանցանքներէն եւ մեր մարմինները մաքուր ջուրով լուացած: Անխախտ պահենք այն յոյսը որ կը դաւանինք, վստահ ըլլալով որ Աստուած հաւատարիմ է իր խոստումին: Հոգածու ըլլանք իրարու հանդէպ, սիրոյ եւ բարի գործերու մղելով զիրար: Բնաւ չդադրինք պաշտամունքի հաւաքոյթներուն մասնակցելէ, ինչպէս ոմանք կ'ընեն. ընդհակառակը, այդ ուղղութեամբ աւելի եւս յորդորենք իրար, քանի կը տեսնենք թէ Տիրոջ օրը կը մօտենայ:

Որովհետեւ ճշմարտութիւնը ճանչնալէ եւ ընդունելէ ետք, եթէ զիտակցաբար շարունակենք յանցանք գործել, այնուհետեւ ա՛լ չի մնար ոեւէ զոհ որ մեր մեղքերը քաւէ. այլ մեզի կը մնայ միայն ահարկու սպասում մը՝ Աստուծոյ դատաստանին եւ այն բոցավառ կրակին, որ պիտի լափէ Աստուծոյ հակառակորդները: Եթէ Մովսիսական Օրէնքը խախտողը "երկու կամ երեք հոգիի վկայութեամբ մահուան կը դատապարտուի" առանց գթութեան, որքա՛ն աւելի ծանր պատիժի արժանի է այն անձը՝ որ ոտնակոխ կ'ընէ Աստուծոյ Որդին, կ'արհամարհէ Նոր Ուխտին կնքումին համար թափուած արիւնը, որով Քրիստոս զինք սրբեց, եւ կ'անարգէ շնորհքները պարզելող Սուրբ Հոգին: Որովհետեւ մենք կը ճանչնանք ան որ կ'ըսէ. "Ի՛մս է դատելու եւ պատժելու իրաւունքը. ե՛ս պիտի հատուցանեմ,- կ'ըսէ Տէրը", եւ կ'աւելցնէ. "Տէրը ինք պիտի դատէ իր ժողովուրդը": Իրաւ որ սարսափելի բան է կենդանի Աստուծոյ ձեռքը իյնալը» (Եբր 10.19-31):

1.- ՔՆՆՈՒԹԻՒՆ 6.1-3 ՀԱՄԱՐՆԵՐՈՒՆ

Այս երեք համարները շատ խիտ լեզուով կը փորձեն ներկայացնել քրիստոնէական դաստիարակութեան էական տարրերը սորվելու եւ քրիստոնէական կեանքին հաղորդակից դառնալու ընթացքը, որ գլխաւոր երկու

հանգրուաններ ունի, եւ իւրաքանչիւր հանգրուանի մէջ տարբեր մակարդակներ եւ աստիճանաւորումներ:

Գլխաւոր երկու հանգրուանները կարելի է կոչել- Երեխայութիւն եւ չափահասութիւն:

Առաքելաւր մասնաւոր անուն մը չի տար առաջինին, մինչ երկրորդը կը կոչէ «կատարելութիւն» (Յունարէն՝ *τελειοτητα*), որ բարոյական կատարելութեան իմաստը չունի այստեղ, այլ կը նշէ քրիստոնէական կեանքի չափահաս, գիտակից եւ պատասխանատու վիճակը: Զմոռնանք, որ Պօղոս առաքել «կատարեալ» կը կոչէ (Յունարէն՝ *τελειος*) հոգեւոր չափահասութեան հասած հաւատացեալները, երբ, օրինակ, Ա.Կր 2.6-ին մէջ կ'ըսէ. *«Սակայն կատարեալներուն հետ իմաստութիւն կը խօսինք»*, կամ երբ Փլպ 3.15-ին մէջ կ'ըսէ. *«Մենք ամենքս որ կատարեալ ենք»*. եւ արդէն Յունարէն նոյն «կատարեալ» բառը «չափահաս» թարգմանուած կը գտնենք Ա.Կր 14.20-ին մէջ, ուր առաքելաւր կ'ըսէ. *«Եղբայրներ՝ ը, միտքով երեխայ մի՛ ըլլաք, երեխաներու պէս եղէք միայն չարիք խորհելու մէջ. իսկ միտքով չափահաս եղէք»*:

2.- ՔՆՆՈՒԹԻՒՆ 6.4-6 ՀԱՏՈՒԱԾԻՆ

1.- *«Անգամ մը լուսաւորուելով մկրտուելէ ետք»* (համար 4): Բնագիրին մէջ չկայ «մկրտուելէ» բառը: Ոմանք լուսաւորուիլը կը հասկնան միայն մտաւոր իմաստով մը, որպէս Աստուածաշունչի ճշգրիտ բացատրութեամբ ստացուած լուսաբանութիւն, եւ որպէս կոչ՝ Աստուծոյ դառնալու, այլ խօսքով՝ ապաշխարելու: Այս իմաստը սխալ չէ անշուշտ, բայց «լուսաւորուիլ» բացատրութեան մէջ աւելի հաւատքի լուսաւորումն է որ կայ, եւ հաւատքի լուսաւորումը սերտօրէն կապուած է մկրտութեան հետ: Յիշենք, որ Նիկոդէմոսին ըսուած Քրիստոսի խօսքերով՝ կարելի չէ վերստին ծնիլ եւ արքայութիւն մտնել առանց «ջուրէն», այսինքն՝ մկրտութենէն եւ «Հոգիէն», այսինքն՝ Սուրբ Հոգիի պարգեւէն վերստին ծնած ըլլալու (Յհ 3.5): Եւ յատկանշական

է, որ եկեղեցական հայրերու գրիչին տակ մկրտութիւնը յաճախ արտայայտուած է «լուսաւորութիւն» կամ «լուսաւորուիլ» բացատրութեամբ:

2.- «*Երկնային պարգեւին համը առին*» (համար 4): «*γευσσαμενους τε της δωρεας της επουρανιου*»:

«Համը առնել» կը նշանակէ համտեսել, ճաշակել, նախաճաշակը առնել: Իսկ այստեղ ի՞նչ կը նշանակէ «պարգեւ»:

Ոմանք կը փորձեն զանազանութիւն դնել կամ տարբերութիւն տեսնել «շնորհք» (Յունարէն՝ «*το χαρισμα, η χαρις*») եւ «պարգեւ» (Յունարէն՝ «*η δωρεα, το δωρον*») բառերուն միջեւ, բայց Նոր Կտակարանին մէջ այս երկուքին գործածութիւնները քննելով՝ իրական տարբերութիւն մը չենք գտներ:

«Շնորհք» (*χαρισμα, χαρις*) գործածուած է եւ կը բնորոշէ, օրինակ, փրկութեան կոչումը Աստուծոյ կողմէ (Հո 11.29), կամ Քրիստոսով մեր փրկութիւնը (Հո 6.23), կամ Սուրբ Հոգիին բազմապատիկ պարգեւները, ինչպէս՝ իմաստութեամբ յորդորելու կարողութիւնը, հոգեւոր գիտութեան հասնելու եւ զայն ուսուցանելու կարողութիւնը, հաւատքի զօրութիւնը, բժշկելու զօրութիւնը, հրաշագործութեան կարողութիւնը, մարգարեական պատգամախօսութեան շնորհքը, Հոգիէն տրուած պարգեւները ճանչնալու կարողութիւնը, յափշտակութեան մէջ լեզուներ խօսելու շնորհքը, այդ լեզուներով խօսուածը մեկնաբանելու կարողութիւնը, եւլն (հմմտ Ա.Կր 12.1-112), կամ ամուրի թէ ամուսնացած վիճակի մէջ մնալու կարողութիւնը (Ա.Կր 7.7), կամ ձեռնադրութեամբ ստացուած զօրութիւնն ու կարողութիւնը (Ա.Տմ 4.14): Նոյն բառը գործածուած է նաեւ նիւթական, դրամական նուէրներուն համար (Ա.Կր 16.3):

«Պարգեւ» (*δωρεα, δωρον*) բառը գործածուած է գրեթէ նոյն իմաստով, տարբեր շրջագիծերու մէջ: Այսպէս, օրինակ, գործածուած է Քրիստոսի պարգեւած կենդանի ջուրին

համար (Յհ 4.10), որ Սուրբ Հոգին է, ինչպես Պետրոս իր առաջին քարոզին մեջ որոշակիորեն կ'արտայայտե «Սուրբ Հոգին պարզելը» բացատրությամբ (Գրծ 2.38, հմմտ նաև 8.20, 10.45), կամ գործածուած է՝ նոյնիսկ Աստուծոյ կողմէ փրկութեան շնորհքին տրւելու համար (Եփ 2.8), ինչպէս առաքելական շնորհքին տրւելու համար (Եփ 3.7), կամ շնորհքին տարբեր աստիճանաւորումներուն կամ չափերուն համար (Եփ 4.7):

Ուել գանազանութեան գաղափար կը հերքուի, երբ մանաւանդ կը կարդանք Հո 5.15-17 համարները, ուր առաքելաւ կ'ըսէ. *«Բայց նախ՝ յստակ տարբերութիւն մը կայ մեղքին եւ շնորհքին միջեւ. որովհետեւ եթէ ճշմարիտ է որ մէկուն յանցանքով բոլորը մեռան, շատ աւելի ճշմարիտ է՝ որ Աստուած միակ մարդու մը՝ Յիսուս Քրիստոսի շնորհիւ իր շնորհքն ու պարզելը առատացուց բոլորին վրայ: Ապա՝ դարձեալ տարբերութիւն կայ մէկուն մեղանշումով յառաջ եկած արդիւնքին եւ շնորհքին միջեւ. որովհետեւ մինչ մէկուն մեղանշումով աստուածային դատաստանը՝ դատապարտութեան տակ կ'առնէր բոլորը, շնորհքը՝ հակառակ բոլորին մեղանշումին՝ կ'արդարացնէ զանոնք: Որովհետեւ, եթէ ճշմարիտ է որ միակ մարդու մը պատճառով, մէկ հոգիին յանցանքով մահը թագաւորեց, ո՛րքան աւելի ճշմարիտ է՝ որ Աստուծոյ առատ շնորհքն ու արդարութեան պարզելը ստացողները պիտի թագաւորեն կեանքի մէջ, միակ անձի մը՝ Յիսուս Քրիստոսի միջոցաւ»:* Նոյնպէս, Բ.Կր 9.14-15 համարները նոյն երկու բառերով կ'արտայայտեն զԱստուած փառաւորելը, Աւետարանը դաւանիլը, եւ նիւթական առատաձեռն նուէրներով ուրիշներու կարիքներուն հասնիլը:

Ի՞նչն է ուրեմն «երկնային պարզելը»:

Երկնային պարզելը ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ ակնարկութիւն փրկութեան պարզելին, որ մերը կը դառնայ մկրտութեամբ: Յակոբոս առաքելաւ շատ գեղեցիկ կերպով կ'արտայայտե այս պարզելին ինչութիւնը եւ նպատակը. - *«Ամէն բարի*

ցանկութիւն ու կատարեալ պարգեւ (δωρον τελειον) երկինքէն է որ կու գայ, Հօր Աստուծմէ, որ լոյսի արարիչ է, որուն կամքը անփոփոխ է, անդառնալի եւ անստուեր: Աստուած կամեցաւ մեզ վերստին ծնիլ, որպէսզի իր ճշմարիտ նպատակը յայտնուի, որովհետեւ կ'ուզէ որ մենք իր նոր ստեղծագործութեան առաջին պտուղները ըլլանք» (Յկ 1.17-18):

3.- *«Սուրբ Հոգիին հաղորդակից դարձան»* (համար 4): Բնագրային բառը «բաժնեկից դառնալ» է (Յունարէն՝ μετοχους γενηθεντας): Բայց իմաստը կը մնայ նոյնը:

Փրկութեան կոչուած եւ լուսաւորուած, այսինքն մկրտուած ռեւէ քրիստոնէայ անմիջապէս պէտք է ստանայ եւ կը ստանայ Սուրբ Հոգին, որ իր մէջ կը բնակի, զինք Աստուծոյ տաճար դարձնելով: Եւ ուստի ռեւէ ճշմարիտ քրիստոնէայ մնայուն կերպով հաղորդակից է Սուրբ Հոգիին:

Այստեղ անմիջապէս հարց մը: Կրնա՞նք ըսել՝ թէ փրկուած ենք: Յաճախ կը հարցուի այս մասին: Եւ քիչ ետք հաւանաբար նոյն մտածումը վերադառնայ: Բայց մենք Սուրբ Հոգիին ներբնակութեամբ վստահութիւնը ունինք թէ փրկուած ենք: Որքան ատեն որ այս աշխարհի մէջ կը մնանք, այդ փրկութիւնը դեռ իր լրումին կամ կատարումին հասած չէ: Վերջնականօրէն փրկուած չենք, բայց արդէն Սուրբ Հոգին մեր մէջ ունինք իբրեւ փրկութեան գրաւական, ինչպէս կ'ըսէ Պօղոս առաքեալը. *«Բայց հիմա յարմար ժամանակը հասած համարելով, Աստուած աշխարհ ղրկեց իր Որդին, որ կ'նոջմէ մը ծնաւ եւ Օրէնքին տակ ապրեցաւ, որպէսզի մեզ Օրէնքին գերութենէն փրկէ եւ Աստուծոյ որդիներ դարձնէ: Արդ, որովհետեւ իր որդիներն ենք՝ Աստուած մեր սիրտերուն մէջ ղրկեց իր Որդիին Հոգին, որով զԱստուած "Աբբա", այսինքն "Հայր" կը կոչենք: Ուստի այլեւս ծառայ չէք, այլ՝ որդի եւ քանի որդի էք՝ Աստուծոյ խոստումը պիտի ժառանգէք»* (Գղ 4.4-7):

4.- *«Աստուծոյ բարի խօսքին նախաճաշակը առին»* (համար 5: Յունարէն՝ *χαι χαλον γευμαμενους Θεου ρημα*

δυναμεις τε μελλοντος αιωνος): «Բարի» ածականը (Յունարեն՝ χαλον), կը նշանակէ՝ լաւ, հարազատ, իսկական, ճշմարիտ: Գրաբարը այստեղ զայն թարգմանած է «գեղեցիկ»:

Աստուծոյ Խօսքը նախ Աստուծոյ յայտնութիւնը եւ պատգամն է, Աստուծոյ խօսքին կենդանարար հացը եւ անխարդախ կաթը, բերանացի կերպով թէ գրաւորապէս մեզի ւսանդուած, որպէսզի անոր ընթերցումով եւ իւրացումով սնանինք հոգեւորապէս:

Աստուծոյ Խօսքը նաեւ ու մանաւանդ Քրիստոս ինքն է, որ մեզի կը բաշխուի միշտ մարմնաւորապէս, մեզ հոգեւորապէս սնուցանելու եւ զօրացնելու համար, բայց որ մեր մնայուն սնունդը պիտի ըլլայ յաւիտենական կեանքին մէջ, գալիք թագաւորութեան մէջ, երբ իր տեսքէն պիտի կշտանանք, ինչպէս կ'ըսէ Սաղմոսագիրը (17.15), որովհետեւ *«երբ Քրիստոս յայտնուի, իրեն նման պիտի ըլլանք, որովհետեւ զինք պիտի տեսնենք ինչպէս որ է»* (Ա.Յհ 3.2), երբ մնայուն կերպով պիտի ճաշակենք իր սէրը, իր ողորմութիւնը, իր բարութիւնը, իր լոյսը, իր ճշմարտութիւնը, եւ պիտի կշտանանք:

5.- *«Գալիք աշխարհի զօրութիւններուն նախաճաշակը առին»* (համար 5: Յունարեն՝ και χαλον γεσσαμενους Θεου ρομα δυναμεις τε μελλοντος αιωνος): Ի՞նչ կը հասկնանք «գալիք աշխարհի զօրութիւնները» բացատրութեամբ: Զօրութիւն բառը ո՛չ միայն կը նշանակէ ոյժ, կարողութիւն, մասնաւորապէս հրաշագործ զօրութիւն, յատուկ ակնարկութեամբ Աստուծոյ կամ անոր Հոգիին (Մտ 22.29: Մր 5.30, 12.30 եւ 33: Ղկ 1.51, 4.36, 5.17, 9.1, 24.49 եւլն), այլ Աստուածաշունչին մէջ նաեւ կը նշանակէ՝ իմաստ կամ նշանակութիւն (հմմտ Ա.Կր 14.11: Բ.Տմ 3.5), կը նշանակէ՝ ազդեցութիւն կամ ներգործութիւն (հմմտ Ղկ 1.17, 4.14: Գրծ 11.28), ինչպէս նաեւ՝ սքանչելի կամ հրաշալի նշան, հրաշագործութիւն, հրաշք (Հո 15.19: Բ.Կր 12.12: Գդ 3.5):

Արդ, ամէն քրիստոնէայ Աստուծոյ ամենագոր կարողութեան եւ Աստուծոյ հրաշքներուն վկայ մըն է, ո՛չ միայն իր սորվածներն ու կարդացածները պատմելու կամ փոխանցելու իմաստով, այլ՝ իր անձնական կեանքին փորձառութեամբը:

Ուեւէ ճշմարիտ հաւատացեալ իր կեանքին մէջ զգացած եւ ապրած է այն հրաշալի փոփոխութիւնը, որ Աստուծոյ խօսքով եւ Աստուծոյ Հոգիին ներգործութեամբ յառաջ կու գայ մարդու մէջ. երբ հին մարդը կարծէք կը նահանջէ ու կը մեռնի, եւ հաւատացեալը ինք կը նորոգուի, նոր ստեղծուած կը դառնայ, զՔրիստոս կը հագնի (Գղ 3.27), եւ կը դառնայ իր Տիրոջ եւ Փրկիչին հաւատարիմ հետեւորդը եւ հարազատ պատկերը:

Ուեւէ ճշմարիտ հաւատացեալ իր կեանքին մէջ տեսած եւ զգացած է խաւարին փարատումը եւ լոյսին ծագումը, անյուսութեան վանումը եւ լոյսին յաղթանակը, չարին նահանջը կամ պարտութիւնը եւ բարիին յաղթանակը: Եւ բոլորս ալ գիտենք, թէ այդ բոլոր փոփոխութիւնները կամ յաղթանակները մեր սեփական կարողութեան ու զօրութեան արդիւնքը չեն, այլ պարգեւներն են Աստուծոյ, մեր կեանքին մէջ յայտնութիւններն են այն զօրութիւններուն, որոնք յատուկ են Աստուծոյ թագաւորութեան, որ իր կարգին գալիք աշխարհին եւ անոր զօրութիւններուն նախաճաշակն է այս աշխարհի մէջ:

*«Այդպիսիներ երբ իրենց հաւատքը կը լքեն՝ անկարելի է որ (կարենան վերստին ապաշխարել) ապաշխարութեամբ վերստին նորոգուին» (համար 6: Յունարէն՝ *չαι παραπεσοντες, παλιν ανακαινιξειν εις μετανοιαν*):*

Նոր Կտակարանին մէջ հաւատքին մէջ մնալը երբեմն պատկերաւոր լեզուով կ'արտայայտուի «կանգնիլ» կամ «կանգուն մնալ» բացատրութեամբ, իսկ հաւատքէն հեռանալը, հաւատքը կորսնցնելը կամ լքելը կ'արտայայտուին «իյնալ» բացատրութեամբ:

Արդ, հաւատքով Աստուծոյ դարձած եւ կապուած, Աստուծոյ մէջ հաստատուած եւ անոր պարգեւներուն հաղորդակից դարձած մը երբ հաւատքը լքէ, վերստին վերադարձի կարելիութիւն ունի՞, թէ՛ ոչ: Առաքեալին պատասխանը շատ կտրուկ եւ անդառնալի կը թուի: Ո՛չ: Բայց այս մասին քիչ ետք պիտի անդրադառնանք:

Շատ հետաքրքրական է այստեղ դիտել, որ բնագիրը բառացիօրէն կ'ըսէ «ապաշխարութեամբ վերստին նորոգուիլ»: Ապաշխարութիւնը անձին վերանորոգութիւնն է հոգեւորապէս, ինչպէս վերը ըսինք: Արդ, վերանորոգութիւնը միայն մէկ անգամ կ'ըլլայ, թէ՛ մէկէ աւելի անգամներ կրնայ կրկնուիլ: Այս մասին եւս քիչ ետք:

«Անկարելի է ատիկա, որովհետեւ այդ ձեւով իրենք իրենց համար վերստին խաչը կը հանեն Աստուծոյ Որդին, զայն հրապարակաւ խայտառակ ընելով» (համար 6):

Եբրայեցիներուն նամակին հեղինակը անգամ մը եւս կը կրկնէ, թէ անկարելի է ատիկա: Ո՛չ թէ Աստուծոյ կողմէ արգելք կը դրուի, կամ ապաշխարութեան կարելիութեան դուռը կը փակուի, այլ՝ անձը ի՛նքն է որ ինքզինք կը դնէ այդ անկարելիութեան առջեւ: Լաւ կարդացէք նախադասութիւնը, եւ պիտի տեսնէք, որ հարցը կը դիտուի հաւատքը լքող անձին դիտանկիւնէն: *«Իրենք իրենց համար վերստին խաչը կը հանեն Աստուծոյ Որդին, զայն հրապարակաւ խայտառակ ընելով»*, որ կը նշանակէ՝ կ'ուրանան իրենց հաւատքը Խաչեալին եւ խաչին հանդէպ, եւ խաչին վրայ թափուած Քրիստոսի արեան քաւարար զօրութեան հանդէպ, ինչ որ անհաւատ կեցուածքն էր Աստուծոյ Որդին խաչ հանել տուողներուն, եւ անոնց հրապարակային անարգալից արտայայտութիւնները՝ խաչին դիմաց կանգնած (Մտ 27.32-44: Մր 15.29-32, եւլն):

Արդ, այսպիսի մէկը կրնա՞յ վերստին հաւատքին դառնալ եւ ապաշխարութեամբ վերանորոգուիլ:

3.- ՔՆՆՈՒԹԻՒՆ 10.19-31 ՀԱՏՈՒԱԾԻՆ

«Որովհետև ճշմարտությունը ճանչնալ է և ընդունել էտք, եթե գիտակցաբար շարունակենք յանցանք գործել, այնուհետև ա՛լ չի մնար ոեւէ զոհ որ մեր մեղքերը քաւէ. այլ մեզի կը մնայ միայն ահարկու սպասում մը՝ Աստուծոյ դատաստանին և այն բոցավառ կրակին, որ պիտի լափէ Աստուծոյ հակառակորդները: Եթէ Մովսիսական Օրէնքը խախտողը "երկու կամ երեք հոգիի վկայութեամբ մահուան կը դատապարտուի" առանց գթութեան, որքա՛ն աւելի ծանր պատիժի արժանի է այն անձը՝ որ ոտնակոխ կ'ընէ Աստուծոյ Որդին, կ'արհամարհէ Նոր Ուխտին կնքումին համար թափուած արիւնը, որով Քրիստոս զինք սրբեց, և կ'անարգէ շնորհքները պարզեւող Սուրբ Հոգին: Որովհետև մենք կը ճանչնանք ան որ կ'ըսէ. "Ի՛մս է դատելու և պատժելու իրաւունքը. ե՛ս պիտի հատուցանեմ,- կ'ըսէ Տէրը", և կ'աւելցնէ. "Տէրը ինք պիտի դատէ իր ժողովուրդը": Իրաւ որ սարսափելի բան է կենդանի Աստուծոյ ձեռքը իյնալը» (Եբր 10.26-31):

Անցեալին, Հին Կտակարանին մէջ, Աստուած մեղքի կամ յանցանքի համար մատուցուելիք զոհեր նշանակեց, որպէսզի իր ժողովուրդը ըլլալու կոչուածները անոնցմով սորվին մեղքերն ու յանցանքները սրբելու անհրաժեշտութիւնը, և միաժամանակ անոնցմով դաստիարակուին՝ պատրաստուելով այն ճշմարիտ և իսկական Ջոհին, Քրիստոսի, որ իր ատենին երկնաւոր Հայրը պիտի տար ամբողջ մարդկութեան: Եւ երբ յարմար ժամանակը հասաւ, *«Աստուած մեզի համար մեղքը պատարագ ըրաւ Քրիստոսը, ան՝ որ բնա՛ւ մեղք չէր գործած, որպէսզի մենք անոր միանալով արդարանանք Աստուծոյ համար» (Բ.Կր 5.2):*

Արդ, Քրիստոս ի՛նքն է միակ զոհը, որ կրնայ մեր մեղքերն ու յանցանքները սրբել: Առանց Քրիստոսի և անոր քաւչարար արիւնին՝ չկայ քաւութիւն, և ուստի չկա՛յ փրկութիւն:

Ի՞նչ կ'ըլլայ ան՝ որ այս գոհը ճանչնալէ եւ ընդունելէ, եւ անոր պարզեւած շնորհքը ճաշակելէ ու վայելելէ ետք՝ գիտակցաբար, կամաւորաբար կը լքէ զայն, եւ նաեւ կ'արհամարհէ ու կ'անարգէ զայն, նախընտրելով մեղքի ու յանցանքի մէջ ապրիլ:

Հոս եւս պատասխանը միայն ժխտական է: Այնպիսիին կը մնայ միայն իր դատաստանին սպասել: Սպասում մը՝ որ ահարկու է, Սատանային եւ անոր գործակիցներուն, Աստուծոյ բոլոր հակառակորդներուն վերապահուած վախճանը, որ զանոնք լափող բոցավառ կրակը պիտի ըլլայ:

4.- ԿԱՐԵՒՈՐ ՀԱՐՅՈՒՄԸ

Եբրայեցիներուն նամակին վերոյիշեալ երկու հատուածները լուրջ հարց մը կը դնեն մեր դիմաց, երբ մանաւանդ զայն կը դնենք ուրիշ կարեւոր հաստատումի մը դէմ առ դէմ:

Յովհաննէսի Աւետարանին 10-րդ գլուխին մէջ, ունինք Քրիստոսի հետեւեալ յայտարարութիւնը.- *«Ես ոչխարներս կը ճանչնամ. անոնք ձայնս կը լսեն եւ կը հետեւին ինծի, եւ ես անոնց յաւիտենական կեանք կու տամ. անոնք բնաւ պիտի չկորսուին: Ո՛չ ոք պիտի կարենայ զանոնք յափշտակել իմ ձեռքէ: Հայրս այդ ոչխարները ինծի տուաւ, եւ ո՛չ ոք կրնայ յափշտակել զանոնք իմ Հօրս ձեռքէն, որովհետեւ Հայրս բոլորէն աւելի մեծ է: Ես եւ Հայրս մէկ ենք»* (Յհ 10.27-30):

1.- Նախ կը յայտարարէ թէ ի՛նքն է ճշմարիտ Հովիւր, որ իր հօտին ոչխարները կը ճանչնայ, եւ այս վերջինները հնազանդութեամբ կը հետեւին իրեն:

2.- Կ'ըսէ՝ թէ ինք անոնց յաւիտենական կեանքի պարգևը կու տայ այժմէն, եւ ուստի անոնք բնաւ պիտի չկորսուին:

3.- Ոչ ոք պիտի կարենայ Քրիստոսի ոչխարները յափշտակել իր ձեռքէն:

4.- Քրիստոս այս խոստումը կու տայ ո՛չ միայն իբրեւ մարգարէ եւ Մեսիա, այլ՝ իբրեւ ճշմարիտ Աստուած,

հաւասար եւ մէկ՝ շօրը հետ, եւ ուստի իր խոստումը անդառնալի է եւ անփոփոխելի, ինչպէս Աստուծոյ բոլոր խոստումները անդառնալի են եւ անփոփոխելի:

Արդ, ի՞նչ կ'ըսէր Եբրայեցիներուն նամակը այս մասին: Կրնա՞յ Քրիստոսի կողմէ փնտռուած եւ գտնուած ոչխար մը դարձեալ կորսուիլ: Այլ խօսքով, կրնա՞յ փրկուած անձ մը վերստին կորսուիլ: Կրնա՞յ Սուրբ Հոգիին պարգեւները ճաշակած եւ անոր տաճար դարձած մարդ մը հետագային իյնալ եւ բնակարան դառնալ Սատանային, յաւիտենական կորուստի մատնուելով:

Երկու հաստատումները հակասական եւ իրարու հետ անհաշտելի կը թուին: Եւ եթէ երկուքն ալ առնենք իրենց տառացի եւ բացարձակ հասկացողութեամբ, հարցը լուծում չի կրնար ունենալ: Բայց ճիշդ այստեղ կը հարցնենք.- Արդեօք բացարձակ կ'իմաստով պէտք է առնենք այս հաստատումները, թէ՛ ընդհանուր:

Երբ հարցը մանրամասնութեանց մէջ եւ օրինակներով քննենք, կը տեսնենք թէ այս հաստատումները ընդհանուր բնոյթ մը ունին, եւ ոչ բացարձակ, եւ այնքան ալ հակասական չեն իրարու, ո՛չ ալ հեռու իրարմէ:

Կարճ պատասխան.- Եթէ ճշմարիտ հաւատացեալին համար կը խօսինք, Քրիստոսի խոստումը տառացիօրէն ճշմարիտ է անկասկած: Իսկ ճշմարիտ հաւատացեալը ռեւէ մէկն է, որ իր հաւատքը եւ փրկութիւնը Քրիստոսի անունին կապած՝ իր հաւատքի կեանքը կ'ապրի փրկութեան վստահութեամբը:

Միւս կողմէ, Եբրայեցիներուն նամակին հեղինակը աստուածաբանական ցուրտ հաստատում մը չէ որ կը կատարէ, այլ՝ աւելի սրտցաւ եւ թախանձագին յորդոր մը եւ ազդարարութիւն մըն է որ կ'ուղղէ մեզի, ինչպէս 6.1-3 եւ 10.19-25 համարները ցոյց կու տան, հաւանաբար իր ժամանակի եկեղեցիին մէջ առկայ հաւատուրացութեան օրինակներուն ի տես:

Ա.- Նախ, մեզի կը յիշեցնէ մեր մարդկային տկարութիւնը:
Մենք յաճախ կը մոռնանք մեղքին զօրութիւնը, եւ անհոգ
կը գտնուինք: Կ'անտեսենք Չարին հնարքները, եւ մեղքի
որոգայթին մէջ կը բռնուինք:

Աստուծոյ վրայ վստահութիւն՝ չի նշանակեր աշխարհին
հանդէպ միամտութիւն: Բարեմտութիւն չի նշանակեր
անմտութիւն: Քրիստոս մեզի պատուիրեց աղանձներու պէս
միամիտ ըլլալ, բայց նաեւ խորագէտ՝ օձերու պէս (Մտ 10.16):
Չարը, այն Առաջին Օձը, միշտ մեր շուրջ կը յաճի, մեր
զարշապարը խայթելու համար: Առիծի պէս կը մոնչէ, եւ կը
փնտռէ՝ թէ ո՞վ կ'լլէ (Ա.Պտ 5.8): Այս խօսքերը եկեղեցիէն դուրս
գտնուողներուն համար չեն ըսուած, այլ ըսուած է մեզի՝
Քրիստոսի հօտին անդամներու համար, որպէսզի
համապատասխան արթնութիւն եւ զգուշաւորութիւն
ցուցաբերենք, խուսափելու համար որոգայթներէն եւ
անխախտ պահելու համար մեր հաւատքը: (Ինչպէս երբ նաւը
ժամանակ առ ժամանակ չնորոգուի՝ կը ժանգոտի ու կը ծակի,
այնպէս ալ մեր հաւատքը, եթէ երբեք աղօթական կեանքի եւ
աստուածահաճոյ բարեգործութիւններով չարծարծենք ու
չսնուցանենք՝ կը տկարանայ եւ հետզհետէ կը չքանայ):

Բ.- Մեզի կը յիշեցնէ մեր բնութեան յարափոփոխութիւնը:

Մենք յաճախ կը մոռնանք, որ մարդը կրնայ փոխուիլ,
ամենէն ամուր եւ հաստատակամ մարդն իսկ ենթակայ է
կեանքի յորձանքներուն, ճնշումներուն: Եթէ ժայռն իսկ կը
մաշի անդադար թափուող ջուրի հոսանքէն կամ նոյնիսկ
բարակ կաթիլներէն, մարդը իր տկարութիւնները պէտք է
գիտնայ եւ անոնց դէմ զրահաւորուի: Եթէ Ադամ,
աստուածաստեղծ կատարեալ մարդը, մեղքին տեղի տուաւ,
եթէ հրեշտակներուն մէջ գերազանցը՝ Արուսեակը մեղանչեց
եւ Աստուծոյ դէմ դարձաւ, մեղանչական ու տկար մարդը
կրնայ յաւակնիլ ըսելու՝ թէ իր ընտրութիւնն ու որոշումը
վերջնական են, իր հաւատարմութիւնը անխախտելի է@:

Այդպէս փոփոխական են մեր միտքը, մեր սիրտը, մեր յարգանքը, մեր հաւատարմութիւնը, մեր սէրը®:

Գ.- Կը յիշեցնէ, որ քաւելի մեղքերուն կողքին անքաւելի մեղք մը կայ, որ միտքէ պէտք չէ հանենք: Յիշենք, որ 10-րդ գլխուն 29-րդ համարին մէջ երեք կէտեր կը շեշտուէին.-

1.- *«Ան որ ոտնակոխ կ'ընէ Աստուծոյ Որդին»:*

2.- *«Կ'արհամարհէ Նոր Ուխտին կնքումին համար թափուած արիւնը, որով Քրիստոս զինք սրբեց»:*

3.- *«Կ'անարգէ շնորհքները պարգեւող Սուրբ Հոգին»:*

Առաջին երկու յանցանքները կամ մեղքերը ուղղուած են Աստուծոյ Որդիին՝ Քրիստոսի, իսկ երրորդը՝ Սուրբ Հոգիին:

Յիշեցէք որ մեր Տէրը կ'ըսէր, թէ անքաւելի է Սուրբ Հոգիին դէմ գործուած մեղքը: *«Լա՛ւ գիտցէք, մարդիկ որքան ալ մեղք գործեն կամ հայհոյութիւն ընեն, Աստուած պիտի ներէ իրենց այդ բոլորը, բայց յաւիտեան պիտի չներէ՝ անոր՝ որ Սուրբ Հոգիին կը հայհոյէ, այսինքն՝ կը նախատէ, որովհետեւ ըրածը յաւիտենական մեղք է»* (Մր 3.28-29):

Արդ, կրնա՞յ պատահիլ որ մարդս Սուրբ Հոգիին բնակարան դառնալէ ետք դարձեալ իյնայ հաւատքի մերժումի մեծ մեղքին մէջ, եւ դէմ դառնայ Աստուծոյ Հոգիին: Որովհետեւ Սուրբ Հոգիին դէմ հայհոյութիւնը խօսքով կատարուած հայհոյութիւն չէ, այլ՝ Աստուծոյ շնորհքին ու պարգեւներուն մերժումը, եւ Աստուծոյ զօրութեան հանդէպ արհամարհանքն ու անարգանքը (հմմտ Մտ 3.30):

Յիշեցէ՛ք օրինակը Յուդային, որ Քրիստոսի ձեռքով լուսաւորուեցաւ, առաքելական դասին հետ միասին Քրիստոսի ամենօրեայ ներկայութեան պարգեւը վայելեց, փրկութեան եւ արդարութեան երկնային պարգեւին համը առաւ, Քրիստոսի գործած հրաշքներուն եւ զօրութիւններուն ընդմէջէն, ինչպէս նաեւ իրենց տրուած բժշկութեան եւ դէտերը հալածելու իշխանութեան ընդմէջէն Աստուծոյ թագաւորութեան զօրութիւններուն նախաճաշակը առաւ, եւ սակայն յետոյ մոլորեցաւ եւ կորուստի գուրը ինկաւ, իր

աշխարհիկ ձգտումներուն եւ ակնկալութիւններուն զոհ դառնալով:

Յիշեցէ՛ք դարձեալ Քրիստոսի հետեւեալ խօսքերը, լերան քարոզին մէջ բովանդակուած.- *«Չկարծէք թէ ով որ ինծի "Տէ՛ր, Տէ՛ր" կ'ըսէ, երկինքի արքայութիւնը պիտի մտնէ. այլ պիտի մտնէ միայն անիկա՝ որ երկինքի մէջ գտնուող իմ Հօրս կամքը կը կատարէ: Երբ այդ օրը գայ, շատեր պիտի ըսեն ինծի. "Տէ՛ր, Տէ՛ր, չէ՞ որ քու անունովդ Աստուծոյ պատգամները փոխանցեցինք, քու անունովդ չար ոգիներ դուրս հանեցինք եւ քու անունովդ բազմաթիւ հրաշքներ գործեցինք": Այն ատեն պիտի յայտարարեմ անոնց. "Բնա՛ւ ձեզ չեմ ճանչնար: Հեռացէ՛ք ինձմէ դուք բոլորդ, որ չարիք կը գործէիք"» (Մտ 7.21-23):*

Հարցնենք.- Ասոնք Քրիստոսի հետեւորդները չէի՞ն: Ասոնք երկնային պարգեւին համը առած չէի՞ն, ասոնք Սուրբ Հոգին ստացած չէի՞ն, Քրիստոսի անունով չէ՞ր որ քարոզէր ու Աստուծոյ պատգամները փոխանցէր էին, ասոնք բժշկութեան զօրութիւնը կամ պարգեւը չունէի՞ն, եւ Տէր Յիսուսի անունով չէ՞ր որ գործէր էին իրենց հրաշքները: Եւ սակայն, Տէրը պիտի մերժէ զանոնք, որովհետեւ իրենց կեանքին մէջ տեղ մը իրենց հաւատարմութիւնը փոխուած պիտի ըլլայ Քրիստոսի հանդէպ, իրենց առաջնահերթութիւնները փոխուած պիտի ըլլան, իրենց հաւատքի սափորը ծակոտկէն պիտի ըլլայ, ծակած կուծի մը պէս, որ իր մէջ Սուրբ Հոգիին կենդանարար ջուրը չի կրնար պահել, եւ դատապարտուած է չորնալու եւ կոտրուելու:

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՎԻԺՈՒՄԸ
ՀԱՅՅ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՅԵՅՈՂՈՒԹԵԱՆ ՄԷՁ²⁸

«Մօրս արգանդէն իսկ քեզի՛ յարեցայ,

դեռ մօրս որովայնէն՝ դո՛ւն ես իմ Աստուածս» (Սղ. 22.10):

Արհեստական վիժումի մասին Հայց. Եկեղեցւոյ կեցուածքը լիովին պարզելու համար անհրաժեշտ պիտի ըլլար անցնիլ մեր եկեղեցական գրականութեան բոլոր էջերէն՝ եւ մանաւանդ բոլոր դարերու եկեղեցւոյ հայրերուն ու վարդապետներու գրուածքներուն մէջէն ժողովել ամէն նիւթ որ սոյն հարցին կ'առնչուի: Այդպիսի աշխատանքի մը՝ այսինքն ուսումնասիրութեան մը բաւարար ժամանակը կը պակսեր ինծի. ուստի պիտի բաւարարուիմ ներկայացնելով նախ Աստուածաշունչին կեցուածքը այս մասին՝ ապա մեր եկեղեցւոյ անցեալ կեցուածքը՝ արտացոլացուած մեր եկեղեցւոյ Կանոնագիրքին մէջ՝ եւ եկեղեցւոյ մտածողութիւնն ու կեցուածքը՝ արդի ժամանակներուն:

Ոեւէ շփոթէ հեռու մնալու համար սկիզբէն կ'ընդգծեն՝ «թէ ներկայ խօսքին մէջ «վիժում» բացատրութիւնը կը վերաբերի միայն վիժումի արհեստական» այսինքն՝ կամաւոր փորձերուն կամ արարքներուն: Քննարկումէ դուրս կը մնայ բնական կամ ինքնաբեր վիժումը՝ որ արկածի արդիւնք է՝ եւ որուն մէջ կիներ կամ մայրը պատասխանատուութեան ռեւէ բաժին չունի. բնական վիժում մը բարոյական ռեւէ հարց չի դնէր՝ եւ ուստի եկեղեցին ալ յատուկ ըսելիք չի կրնար ունենալ այդ կապակցութեամբ:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻՆ ԿԵՅՈՒԱԾՔԸ

Աստուածաշնչական ժամանակներուն անձանօթ բան էր վիրաբուժական գործողութիւնը՝ եւ ուստի այդպիսի

²⁸ Խօսուած Հինգշաբթի՝ 8 Դեկտեմբեր 1994՝ Հ.Կ.Բ.Մ. կեդրոն՝ Հաճըն:

միջամտութեամբ արհեստական վիժումի մասին խօսքն ալ չէր կրնար ըլլալ: Գալով արհեստական վիժումի ուրիշ կերպերու» Աստուածաշունչը ուղղակիօրէն չի խօսիր այդ մասին: Ի՞նչն է արդեօք պատճառը. երեւոյթը անծանօթ է. ո՛չ հարկաւ. վստահաբար եղած են ու ծանօթ եղած պէտք է ըլլան նման պարագաներ: Իսկ եթէ նման պարագաներ կային եւ ծանօթ էին« ինչո՞վ եւ ի՞նչպէս պէտք է բացատրել Աստուածաշունչին լռութիւնը« դրական« թէ՛ ժխտական« թէ՛ր« թէ՛ դէմ:

Եթէ ուղղակի խօսք չենք գտներ« բայց ունի՛նք անուղղակի պատասխան մը« որ կը քաղենք Աստուածաշնչական որոշ տուեալներէ« եւ մանաւանդ կեանքին նուիրականութեան գերագոյն սկզբունքէն« որ կը դրուի այնտեղ:

Մեր պատասխանը փնտռենք երկու հարցումներով.-

1.- Աստուածաշունչը ի՞նչպէս կը դիտէ դեռ չծնած երեխան: Ի՞նչ կը նկատէ մօրը որովայնին մէջ գտնուող սաղմը (embryo) կամ պտղաձուն (fetus):

139-րդ Սաղմոսը խօսքը Աստուծոյ ուղղելով կ'ըսէ. «Դո՛ւն ստեղծեցիր իմ երիկամունքներս« եւ իմ մօրս որովայնին մէջ դո՛ւն զիս ծածկեցիր: ... Իմ գոյութիւնս չծածկուեցաւ քեզմէ« երբ գաղտուկ տեղը շինուեցայ« երկրի խորութիւններուն մէջ ճարտարութեամբ կազմուեցայ [նկարակերպուեցայ]: Քու աչքերդ իմ անկատար կազմուածքս տեսան« եւ անդամներս բոլորը քու գիրքիդ մէջ գրուած էին« որոնք ժամանակին պիտի կազմուէին« երբ դեռ անոնցմէ մէ՛կը չկար» (համար 13« 15-16): Ահա թէ ի՛նչպէս կը ներկայանայ անձին երեխան՝ Աստուծոյ հայեացքին մէջ: Դեռ երեխային անդամները լրիւ կազմուած ալ չըլլան՝ բայց անոնք Աստուծոյ համար կա՛ն« Աստուծոյ գիրքին մէջ գրուա՛ծ են« այսինքն՝ Աստուած սաղմը կամ պտղաձուն կը դիտէ կատարելապէս կազմաւորուած մարդուն պէս« այնպէս՝

ինչպես սերմանուած ցորենահատիկին մէջ մենք կը տեսնենք կազմաւորուող հասկը» բայց ուէ մէկս ալ չի կրնար հերքել թէ ցորենահատիկը լիիրաւ եւ ինքնարժէք հացահատիկն է արդէն:

Այս կապակցութեամբ հետաքրքրական է Յիսուսի ծնունդին կապուած դրուագներուն մէջ դիտել հետեւեալ մանրամասնութիւնը: Երբ Մարիամի նշանածը՝ Յովսէփ կ'անդրադառնայ Մարիամի յի ըլլալուն եւ կ'ուզէ լռելեայն արձակել զայն՝ Տիրոջ հրեշտակը տեսիլքի մը մէջ անոր կը յայտնէ Մարիամի գերբնական յղութեան մասին աստուածային ճշմարտութիւնը՝ սա՛ բառերով. *«Մի՛ վախնար, քու կինդ՝ Մարիամը քու քովդ առնելու» որովհետեւ անկէ ԾՆԱԾԸ Սուրբ Հոգիէն է»* (Մտ 1.20): Թէ այս դէպքը ե՛րբ տեղի կ'ունենայ՝ Մարիամի յղութեան քանի՛ երոքոք շաբթուն կամ ամսուն՝ չենք գիտեր՝ բայց յատկանշական է՝ որ հրեշտակը Մարիամի որովայնին մէջ կազմաւորուող երեխային համար չ'ըսէր «յղացուածը»՝ այլ կ'ըսէ՝ «ԾՆԱԾԸ» (Յուն. το γεννηθέν)՝ արգանդին պտուղը դիտելով իբրեւ արդէն կազմաւորուած մարդ:

Աւետարանէն առնուած շատ հետաքրքրական ուրիշ դրուագ մըն է հետեւեալը: Քրիստոսի մայրը՝ Մարիամ՝ աստուածային աւետիսը ստանալէ եւ Սուրբ Հոգիով յղանալէ ետք այցելութեան կ'երթայ իր ազգականուհիին՝ Եղիսաբէթի՝ որ վեց ամսուան յի էր՝ եւ որ ծնունդ պիտի տար Յովհաննէս Մկրտիչին: Արդ՝ հազիւ Մարիամ Եղիսաբէթի տունը կը մտնէ եւ իր ողջոյնը կու տայ անոր՝ ահա Եղիսաբէթի արգանդին մէջ «մանուկը»՝ այսինքն ապագայ մկրտիչը ցնծութեամբ կը շարժի՝ եւ Եղիսաբէթ կ'ըսէ. *«Երբ ողջոյնդ լսեցի» երեխասս [=մանուկս] ուրախութեամբ շարժեցաւ որովայնիս մէջ»* (Լկ 1.41«44): Այստեղ եւս յատկանշական է՝ որ Եղիսաբէթ իր արգանդին պտուղը արդէն «ՄԱՆՈՒԿ» կը կոչէ՝ ինչպէս մե՛նք կ'ընենք՝ զայն նկատելով ո՛չ թէ բջիջներու անորոշ

զանգուած մը՝ այլ թանկագին կեանք մը՝ որ իր խորհրդաւոր եւ սքանչելի նախապատրաստութիւնը կ'ապրի:

Վերադառնալով վերեւ յիշուած 139-րդ Սաղմոսին՝ անոր առաջին համարը անծին երեխային մասին աւելի 'ն կ'ըսէ՝ թէ՛ մեր յղութիւնը եւ մօրը արգանդին մէջ մեր կազմաւորումը եթէ մարդկային հայեցողութեամբ՝ զուտ բնախօսական գործընթացք մը կը թուի՝ բայց՝ կրօնական հայեցողութեամբ՝ այդ գործընթացքը նոյնինքն Աստուծմէ կ'առնէ իր մղումը՝ Աստուծոյ կամքին արտայայտութիւնն է՝ մարդկային զարմին աճման եւ բազմացումին համար սահմանուած աստուածադիր կարգը եւ օրէնքն է (տե՛ս Օն 1.27-28)՝ Աստուծոյ ե՛ւ օրհնութիւնը ե՛ւ գործակցութիւնը կայ անոր մէջ՝ եւ այդ պատճառով է որ Սաղմոսագիրը Աստուծոյ դիմելով կ'ըսէ՝ «Դո՛ւն ստեղծեցիր զիս»՝ մարդկային ամէն ծնունդ դիտելով իբրեւ Աստուծոյ ստեղծագործական արարքին շարունակութիւնը՝ նո՛ր ստեղծագործութիւն:

Եւ դեռ բան մը աւելի կայ: Ո՛չ միայն անիկա Աստուծմէ ստեղծուած կեա՛նք մըն է՝ այլ նաեւ Աստուծոյ ծրագիրին մէջ իր յատուկ տեղը եւ դերը ունի: Տեսէ՛ք թէ Աստուած ի՛նչ կ'ըսէ Երեմիա մարգարէին. *«Քեզ որովայնի մէջ չըստեղծած քեզ գիտցայ» դուն քու մօրդ արգանդէն չելած քեզ սրբեցի» քեզ ազգերուն մարգարէ ըրի»* (Եր 1.5): Եսայի մարգարէին բերնով մօտաւորապէս նոյնը կ'ըսէ Աստուած իր ժողովուրդին. *«Քեզ ստեղծող» քեզ արգանդի մէջ ձեւակերպող եւ քեզի օգնութիւն ընող Տէրը այսպէս կ'ըսէ... քու Փրկիչդ» քեզ արգանդի մէջ ստեղծողը»* (Ես 44.2«24): Եւ աստուածային այդ յայտնութեան լոյսին տակ Եսայի մարգարէ կ'ըսէ. *«Տէրը զիս արգանդէն կանչեց» իմ անունս մօրս որովայնէն յիշեց...»* (Ես 49.1«5): *Նոյնը կ'ըսէ Պօղոս առաքեալ» յայտարարելով՝ «Աստուած մօրս որովայնէն զիս ընտրած եւ իր շնորհքովը զիս այս պաշտօնին կոչած էր»* (Գղ 1.15): Ասոնք որոշապէս ցոյց կու տան՝ թէ Աստուածաշնչական հայեացքով՝ մօրը որովայնին մէջ եղող անծին երեխան յղացման առաջին օրէն սկսեալ

Աստուծոյ յաւիտենական ծրագիրին մէջ ներկայ է՝ իր անունով՝ իր կոչումով՝ իրեն վերապահուած առաքելութեամբ:

Աստուածաշունչին պատասխանը կ'ամբողջանայ՝ երբ հարցնենք նաեւ.-

2.- Ի՞նչպէս կը դիտէ անիկա՝ դեռ անծին մանուկի մը սպաննութիւնը: Ելքի գիրքին օրէնքներու բաժինին մէջ այս կապակցութեամբ հետաքրքրական դատավճիռ կայ: Հոն կը կարդանք. «Եթէ [պատահի որ] մարդիկ կռուին» եւ [անոնցմէ մէկը] յղի կնոջ մը զարնուելով՝ պատճառ դատնայ որ անոր երեխան [կամ՝ երեխաները] դուրս գայ» եթէ [կնոջ կամ երեխային] վնաս մը չհասնի՝ [ենթական] պարզապէս պիտի կրէ այն տոյժը» որ այն կնոջ ամուսինը իր վրայ կը դնէ» եւ դատաւորներուն ներկայութեան պիտի հատուցանէ զայն: Բայց եթէ [կնոջ կամ երեխային] վնաս մը հասնի» այն ատեն կեանքի տեղ կեանք պիտի հատուցանես» աչքի տեղ՝ աչք՝ ակոյսի տեղ՝ ակոյս՝ ձեռքի տեղ՝ ձեռք՝ ոտքի տեղ՝ ոտք՝ խարանի տեղ՝ խարան՝ վերքի տեղ՝ վերք՝ հարուածի տեղ՝ հարուած» (21.22-25): Այս հրահանգը որոշապէս հաւասար գետնի վրայ կը դնէ անծին երեխան եւ անոր մայրը՝ հաւասար արժէք կը նկատէ երկուքին ալ կեանքը՝ վիժումով երեխային կորուստը կը նկատէ մանկասպանութիւն» եւ ըստ այնմ՝ կեանքի տեղ կեանք՝ այլ խօսքով՝ մահապատիժ կը սահմանէ ականայ սպանութիւնը գործողին²⁹: Ստորեւ դարձեալ պիտի

29 Այս կապակցութեամբ կարելի է յիշատակել նաեւ ուրիշ տուեալ մը՝ թեպէտ բնագիրը որոշ մթութեամբ մը կը ներկայանայ մեզի: Գաղատացիներուն գրուած նամակին մէջ Պօղոս առաքեալ «մարմինին»՝ այսինքն՝ մեղքով գրաւուած մարդկային մտածողութեան յատուկ գործերը թուած ատեն» կռապաշտութեան կողքին կը յիշատակէ «կախարդութիւն»՝ ըստ Հայերէն թարգմանութեան» սակայն որուն Յունարէնը (փարմակեիվա) ո՛չ միայն կախարդութիւն կը նշանակէ՝ այլ նաեւ «դեղատոութիւն»՝ ինչպէս թարգմանուած կը գտնենք Յայտնութեան գիրքին մէջ (9.21 եւ 18.23՝ հմտտ նաեւ 21.8): Իսկ այս բառը գոյգ ձեւերով կրնայ հասկցուիլ՝ «ըլլա՛յ իսկական դեղի մատակարարում» «ըլլա՛յ թունաւորում» «թոյնի մատակարարում (հարկաւ գիտենք» որ բժշկութեան մէջ շատ յաճախ ասոնք կը նոյնանան): Արդ՝ որոշ մեկնիչներ այս բառին ետին կը տեսնեն թունաւորման
www.hygradaran.weebly.com 169

անդրադառնանք այս հատուածին» որ տեղ գտած է Մխիթար Գօշի Դատաստանագիրքին 62-րդ կանոնին մէջ:

Աստուածաշունչին կեցուածքը աւարտելու համար ըսենք» որ անիկա ռեւէ խօսք չունի հարկադրական կամ անհրաժեշտ վիժումի մասին: Այսինքն» երբ ինչ-ինչ պատճառներով յղութեան շարունակութիւնը կը սպառնայ մօրը կեանքին» ի՞նչ պէտք է ընել» արտօնել վիժումը՝ փրկելու համար մօրը կեանքը» թէ՛ չարտօնել: Այդ մասին պիտի անդրադառնանք վարը» եկեղեցւոյ արդի մօտեցման մասին խօսած ատեն:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԵՑՈՒԱԾՔԸ ԱՆՑԵԱԼԻՆ

Եկեղեցւոյ անցեալ կեցուածքը արտայայտուած կը գտնենք՝ թէ՛ եկեղեցւոյ հայրերու գրութիւններուն մէջ» եւ թէ՛ եկեղեցական համաժողովներու կամ տեղական ժողովներու կողմէ առնուած որոշումներուն ու սահմանուած կանոններուն մէջ: Այսպէս» օրինակ» առաջին դարերէն եկող գործի մը մէջ» որ կը կոչուի «Վարդապետութիւն Երկոտասան Առաքելոց» վիժումը բացարձակ սպանութիւն կը նկատուի եւ կը դատապարտուի. *«Չըլլայ որ սաղմը սպաննես վիժումով» եւ չըլլայ որ նորածինը ոչնչացնես»* (2.2):

Ներկայ մեր գրութեան մէջ մենք պիտի բաւարարուինք միայն ակնարկ մը նետելով Հայ Եկեղեցւոյ Կանոնագիրքին վրայ» որ իր մէջ կը խմբէ մեր եկեղեցւոյ կողմէ վաւերացուած եւ ընդունուած կամ իր իսկ կողմէ սահմանուած կանոնները:

Այդ կանոնները շատ քիչ կ'անդրադառնան արհեստական վիժումին» բայց ամէն անգամ որ կ'անդրադառնան՝ զայն կը դատապարտեն առանց այլեւայլի: Ի միջի այլոց» անոնց մէջ չենք հանդիպիր «վիժում» բառին» որ

միջոցով ի գործ դրուած արհեստական վիժումները կամ փորձերը» եւ ուստի Պօղոս առաքելալի կողմէ կամ Յայտնութեան գիրքին մէջ խիստ դատապարտութիւն կը կարդան արհեստական վիժումին դէմ:

կամքէ անկախ եղած անկում մը կ'արտայայտէ՝ այլ կը գործածեն բացատրութիւններ՝ որոնք արարքին կամաւոր ըլլալը եւ ուստի գործողին պատասխանատուութիւնը կ'ընդգծեն: Այդ արարքը կը բնորոշուի իբրեւ՝ «հեղուլ գորդեծնութիւն» [որդեծնութիւնը թափել կամ հոսեցնել]՝ կամ «անցուցանել զմանուկն» [մանուկը անցընել]՝ կամ «մանկակորոյս լինել» [մանուկը կորսնցնել] եւ կամ «հեղձուցանել զտղայ» [մանուկը խեղդել]՝ «սպանանել զմանուկն յորովայնի» [մանուկը որովայնին մէջ սպաննել]՝ կամ պարզապէս՝ «սպանանել զմանուկն»:

Ինչ կը գտնենք Կանոնագիրքին մէջ:

Կանոններուն ծանօթացումը ցոյց կու տայ՝ որ անոնք եւս՝ Աստուածաշունչին հետեւողութեամբ՝ յղութեան առաջին պահէն սկսեալ՝ սաղմը կը կոչեն «ստեղծեալ» եւ «մանուկ»: Չի՛ դրուիր տեսական հարցը՝ թէ՛ ե՞րբ՝ յղութեան ո՞ր մէկ հանգրուանին կը սկսի «կեանքը»: Առաջին իսկ պահէն սաղմը կամ «պտղաձու»ն կը կոչուին «մանուկ» կամ «տղայ» (երեխայ): Այս առնչութեամբ հետաքրքրական է Բարսեղ Կեսարացիի կողմէ Ամփիլոքիոսին ուղղուած կանոններէն 3-րդը՝ որ կ'ըսէ. «*Եթէ մէկը անակնկալօրէն էզ մը պղծէ՝ պէտք է իբրեւ մահապարտ դատապարտուի: Բայց պէտք է հաւաստի կերպով հասկնալ ու քննել կատարուածը՝ կինը բերել եւ օրերը [հաշուելով] տեսնել՝ թէ սաղմը արմատաւորուած է թէ ոչ [=թէ աննկար իցէ թէ նկարեալ]...*»³⁰: Վերջին բացատրութիւնը իր Գրաբարեան ձեւին մէջ կը ներկայանայ՝ «*Տեսանել աւուրքք զսաղմնն թէ աննկար իցէ թէ նկարեալ*»: Կանոնին մէջ վիժումի հարց դրուած չէ. անիկա յանցագործին պատիժով կը զբաղի միայն՝ եւ ո՛չ թէ կնոջ պարագայով: Բայց եւ այնպէս կ'արձարծէ՝ թէպէտ միայն կողմնակի կերպով՝ ուրիշ հարց մը: Արդարեւ

³⁰ Տե՛ս Կանոնագիրք Հայոց՝ հատոր Ա՝ էջ 336:

հետաքրքրական է գիտնալ՝ թե ի՞նչ ձեռով կը կատարուէր ստուգումը թէ արդեօք սաղմը «աննկար» է՝ թէ՛ «նկարեալ»՝ եւ ապա՝ թե ի՞նչ վերաբերում կը ճշդէին՝ եթէ սաղմը տակաւին «արմատաւորուած» չըլլար՝ այդ պարագային արտօնելի՞ պիտի ըլլար ձերբագատուիլ անկէ։ Անհրաժեշտ է՝ սակայն՝ լաւ հասկնալ «աննկար» եւ «նկարեալ» եզրերը։ Ասոնք կու գան Ելից գիրքին վերեւ քննարկուած հատուածին (Ելք 21.22-23) Գրաբար թարգմանութենէն՝ «որ իր կարգին Յունարէն Եօթանասնից բնագրին թարգմանութիւնն է։ Իսկ այս թարգմանութիւնը բառացիօրէն նոյնը չէ՛ Եբրայական բնագրին հետ։ Եբրայերէնի «վնաս մը չհասնի («չար ինչ ոչ պատահիցէ») բացատրութիւնը Յունարէնի եւ Հայերէնի մէջ թարգմանուած է՝ «աննկար» (Յունարէն՝ μη εξεικονισμενον)՝ իսկ Եբրայերէնի «վնաս մը հասնի» բացատրութիւնը՝ «կերպարանեալ իցէ» (Յունարէն՝ εξεικονισμενον ην)։ Ըստ երեւոյթին սխալ հասկցուած է Եբրայերէն բնագիրը՝ որ «նկարուելու» կամ «կերպարանուելու» մասին չի խօսիր։ Կարելորը երեխային կեանքն է. եթէ ողջ դուրս եկաւ՝ հարուածողը միայն տուգանքի կ'ենթարկուի՝ իսկ եթէ մեռաւ՝ անպայման մահապատիժ պիտի դրուի հարուածողին վրայ՝ որովհետեւ անիկա «կեանք» մըն էր՝ «անձ» մըն էր՝ նոյնիսկ եթէ տակաւին սաղմնային վիճակի մէջ էր եւ ո՛չ կազմաւորեալ. ուստի կեանքի տեղ կեանք» այսինքն՝ անձի տեղ անձ պիտի հատուցուի։ Եւ ուստի ռեւէ գատորոշում չի՛ կատարեր երկու պարագաներուն միջեւ՝ ինչ որ կը թելադրուի Յունարէն եւ Գրաբար թարգմանութիւններէն։ Այս վերջինները՝ «աննկար» եւ «կերպարանեալ» գատորոշումները տեսնելով բնագրին մէջ։ Եբրայերէնը բառացիօրէն կ'ըսէ՝ «Եթէ երկու մարդիկ կռուին՝ եւ յի կնոջ մը զարնեն եւ անոր զուակը դուրս գայ՝ բայց վնաս մը չպատահի» տուժելով պիտի տուժէ՝ ինչպէս որ իր վրայ դնէ կնոջ ամուսինը՝ եւ [ինք] պիտի տայ դատաւորներուն [որոշածին] համաձայն՝ բայց եթէ վնաս մը պատահի՝ այն

ատեն անձի տեղ անձ պիտի տաս...»: Բայց ասկէ գատ երկրորդ սխալ մըն ալ սպրդած է Գրաբար թարգմանութեան մէջ« որ այս օրէնքին հետագայ մեկնութեան մէջ իր կարելորդերը ունեցած է: Մինչ Եբրայերէնն ու Յունարէնը կ'ըսեն« որ եթէ երեխան չվնասուի՝ հարուածող մարդը դարձեալ անպայման իր պատիժը պիտի կրէ. «տուժելով տուժեցի», «επιζημιον ζημιοθησεται»:

Թարգմանութեան մէջ ուրիշ սխալ մը եւս տեղ գտած է: Եբրայերէնը բառացիօրէն կ'ըսէ՝ «Եթէ երկու մարդիկ կռուին» եւ յի կնոջ մը զարնեն եւ անոր զաւակը դուրս գայ» բայց վնաս մը չպատահի» տուժելով պիտի տուժէ՝ ինչպէս որ իր վրայ դնէ կնոջ ամուսինը» եւ [ինք] պիտի տայ դատաւորներուն [որոշածին] համաձայն» բայց եթէ վնաս մը պատահի» այն ատեն անձի տեղ անձ պիտի տաս»: Արդ»

Առաքեալներուն յաջորդող Հայրերուն վերագրուած կանոններէն առաջինը կ'ըսէ. «*Եթէ մէկը [իր] զաւակը խեղդէ կամ խեղանդամ դարձնէ կամ աւորաբար՝ շնութեան ընթացքին՝ անոր փոխարէն ի՛նք պէտք է մեռնի՝ որովհետեւ ինչպէս որ հնարաւոր չէ [զաւակը] վերականգնել՝ այնպէս ալ [իրեն հնարաւոր չէ] ապաշխարել*»³¹: Ճիշդ է որ այստեղ վիժում բառը չկայ» բայց վստահաբար ակնարկուած մանկասպանութիւնը վիժումի առնչուած է: Նոյն որոշումին կ'ակնարկուի Կեսարիա գումարուած ժողովի մը 3-րդ կանոնին մէջ« որ սակայն մահապատիժին տեղ ծանր ապաշխարութիւն կը սահմանէ³²: Նոյն ժողովին 4-րդ կանոնը կ'ըսէ՝ թէ նման սպանութիւնները կը կատարուին

³¹ Վազգէն Յակոբեան« *Կանոնագիրք Հայոց*» հատոր Ա« Երեւան 1964» էջ 103: Աշխատասիրողը կ'ենթադրէ« որ այս կանոնախումբը թարգմանութիւն մը չէ՛ օտար լեզուէ՛ ալ հայկական շրջանակներու մէջ սկիզբ առած է» նախ քան 8-րդ դարը (տե՛ս Նախաբանը» էջ XLI): Այդ տեսակետը քննարկելի կը մնայ« որովհետեւ» օրինակ« Կեսարիայի ժողովին 3-րդ կանոնը (տե՛ս յաջորդ ծանօթագրթ.) կը թուի թէ կը հիմնուի նոյնինքն այս կանոնին վրայ» որ ծանօթ պէտք էր ըլլար ժողովին մասնակիցներուն:

³² Տե՛ս անդ« էջ 170:

«կամաւորաբար» չար արուեստներով» (տե՛ս թիւ 2 ծանօթագրութիւնը):

Թաղէոս առաքեալին վերագրուած կանոններուն 18-րդին մէջ կը կարդանք. «*Հարցում.- Երբ մէկը կը շնայ եւ որդեծնութիւնը կը թափէ՝ ի՞նչ պէտք է ընել: Պատասխան.- Եթէ քրիստոնէայ ըլլալով [հանդերձ] կը շնայ եւ որդեծնութիւնը կը թափէ՝ ոչինչ համարելով Աստուծոյ վախը՝ [այլ պարզապէս] որպէսզի մարդոց յայտնուի» այնպիսին սպանողներուն կարգին պէտք է [դասուի եւ] երկար ատեն ապաշխարէ հառաչանքով»³³:*

Ինչպէս կանխեցինք ըսել՝ եկեղեցւոյ անցեալի կեցուածքին մէջ չկա՛յ արհեստական վիժումը արդարացնելու ուէէ փորձ՝ չկան պարագաներու մասնաւորումներ՝ չկան օրէնսգիտական խաղեր՝ «մեղմացուցիչ դէպք յանցանաց»ներ: Պարզ ու մեկին՝ կայ դատապարտութիւնը անծին երեխայ մը ոչնչացնելու արարքին՝ որ առանց այլեւայլի կը նոյնացուի սպանութեան հետ եւ ըստ այնմ կը վճռուի նաեւ եկեղեցւոյ վերաբերումը վիժումը ի գործ դնողին նկատմամբ:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԵՑՈՒԱԾՔԸ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՆ

Ինչպէս անցեալ՝ այնպէս ալ ներկայ ժամանակներուն եկեղեցին չի՛ կրնար չանդրադառնալ այս հարցին՝ որովհետեւ մարդկային կամ բարոյական՝ եւ միաժամանակ ընկերային կամ գոյութենական ու գործնական կարելոր հարց մըն է անիկա՝ որուն դէմ յանդիման՝ եկեղեցին անհրաժեշտ կը զգայ վերստին մտածելու անոր մասին՝ նոր գիտութեանց՝ կենսաբանութեան՝ բժշկագիտութեան՝ ընկերաբանութեան ու հոգեբանութեան լոյսին տակ եւ անոնց հետ միասնաբար՝ առանց երբեք մոռնալու՝ սակայն՝ որ հարցը հիմնականին

³³ Տե՛ս Վազգէն Յակոբեան՝ Կանոնագիրք Հայոց՝ հատոր Բ՝ Երեւան 1971՝ էջ 33-34:
www.hygradaran.weebly.com 174

մէջ ո՛չ գիտութեան առնչուած է եւ ո՛չ ալ արդիականութեան«
այլ՝ առնչուած է բարոյական մեր ըմբռնումներուն եւ
մարդկային արժէքներու գնահատման կայուն սկզբունքի մը«
որուն մեկնակէտը Աստուածաշունչը կամ քրիստոնէական
մեր հաւատքն է նախ« եւ այդ հաւատքին փորձառութիւնը
ներկայ կեանքին մէջ:

Արդ՝ ի՞նչ է մարդկային իրաւունքներու մեր
հիմնականագոյն սահմանումը« եւ այդ սահմանումին հիմը
հանդիսացող ամենատարրական եւ ամենակենսական
սկզբունքը: Այդ սկզբունքը սա՛ է՝ որ ռեւէ մարդ անհատ« այլ
խօսքով՝ ռեւէ անձ« անձեռնմխելի իրաւունքը ունի ապրելու«
ըստ Աստուածային եւ մարդկային սահմանադրութեանց:
Կեանքի՛ իրաւունքը:

Այս սկզբունքէն ծագած հարցերը հետեւեալներն են.-

1.- Անձին երեխային պարագային ի զօրո՞ւ է վերոյիշեալ
օրէնքը կամ սկզբունքը. այլ խօսքով՝ անիկա Ա՞նձ մըն է՝ թէ՛
ոչ:

2.- Մարդուն կեանքը պե՞տք է կախում ունենայ
ուրիշներու կամքէն« ըլլան անոնք ծնողներ թէ բժիշկ«
ընկերութիւն թէ պետութիւն:

3.- Ի՞նչ է բժիշկին դերը: Խնամել ու պահել՞ կեանքը«
յարգելով անոր նուիրականութիւնը« թէ՛ ըստ կամս պահել
կամ վերջ տալ անոր:

4.- Ի՞նչ է մայրութեան հասկացողութիւնը եւ դերը՝ այս
պարագային: Մայրը կեանքի պահապանն է՝ թէ՛ դահիճը:

Ի՞նչ են եկեղեցւոյ կողմէ այս հարցերուն
պատասխանները:

1.- Աստուածաշունչին հետեւողութեամբ« Եկեղեցին
կ'ուսուցանէ՝ թէ տիեզերքի մէջ ռեւէ աննպատակ գոյութիւն
չկայ: Իւրաքանչիւր ստեղծուածի համար Աստուած նպատակ
մը ունի: Արդ՝ յղութեան իսկ վայրկեանէն՝ արգանդին մէջ
սկիզբ առած սաղմը կամ պտղաձուն գոյութեան եկած է

արդէն« ապրող ու բաբախող բջիջներու իմաստաւորեա՛լ գումար մըն է« կեանքի որոշակի կերպ մըն է« եւ ուստի ո՛ւրէ հանգրուանի զայն փճացնելը համազօր է կեանքի ոչնչացումին» կամաւոր սպանութեան:

2.- Դժբախտութիւնը այն է« որ անծին երեխան կեանք մը ըլլալով հանդերձ՝ անպաշտպան կեանք մըն է« զուրկ ինքզինք պաշտպանելու հնարաւորութենէն« եւ ատով իսկ ձգուած՝ ընկերութեան կամ օրէնքին« կամ բժիշկին ու ծնողին խղճին ու կամքին:

Իսկ ի՞նչ կ'ընեն ընկերութիւնները« կամ պետութիւնները« որոնց դատարանները յաճախ քննարկած են ու կը քննարկեն արհեստական վիժումի հարցը՝ տարբեր որոշումներու յանգելով« բայց աւելի յաճախ տեղի տալով ընկերութեան մէջ որոշ հոսանքներու ձայնին եւ անպատասխանատու կերպով թոյլատրելով զայն:

Երեւոյթին ահաւորութիւնը չափելու համար լաւ կ'ըլլայ գիտնալ անոր ունեցած կամ ստացած ահարկու համեմատութիւնը: Ամբողջական վիճակագրութիւններ չկան մեր ձեռքին տակ« բայց քանի մը տուեալներ արդէն բաւարար պատկերացում կու տան: Այսպէս« ըստ 1988-ի վիճակագրութեանց« Ամերիկայի Միացեալ Նահանգներուն եւ Գանատայի մէջ՝ արձանագրուած պաշտօնական վիժումներուն թիւը երկու միլիոն եղած է« որուն 50«000-ը միայն Լոս Անճելըսի մէջ« ուր վիժումի ծառայող 5«000 դարմանատուներ կը գործեն: 1990-ի տուեալներով՝ Տրանսայի մէջ տարեկան մօտ 160«000 վիժումներ կ'արձանագրուին« ըստ պաշտօնական վիճակագրութեանց« առանց հաշուելու ծածկաբար կատարուածները: Իսկ 1993-ի տուեալներով՝ ամբողջ աշխարհի մէջ ԵՐԵՍՈՒՆ ՄԻԼԻՈՆԻ կը հասնի արհեստական վիժումներու տարեկան թիւը« դեռ առանց նկատի առնելու այն պարագաները« որոնք չեն հրապարակուիր: Ի՞նչ կ'արտայայտեն այս թիւերը: Ի՞նչ կրնանք ըսել մեր աշխարհին եւ մեր բարոյական

չափանիշներուն մասին: Երբ աշխարհի մամուլը ամէն օր մեծաշփնդ խորագիրներով կը ներկայացնէ հոս ու հոն կատարուած քաղաքական թէ քրեական ոճիրներու մանրամասնութիւնները» երբ ամէն օր հեռատեսիլներու բոլոր կայաններէն այնքան աղէտներու գոհեր ու սպանութիւններ ցոյց կը տրուին մեզի« ինչո՞ւ նոյն մամուլը եւ հեռատեսիլը առհասարակ լուռ կ'անցնին այս մեծագոյն աղէտին եւ լռիկ սպանութիւններուն վրայէն» որոնք իւրաքանչիւր տարի այսքա՛ն միլիոն գոհ կը խլեն աշխարհի վրայ:

Արդ՝ հարց է՝ պետութիւններն ու դատարանները իրաւունքը ունի՞ն անձին երեխային կեանքը ըստ կամս եւ քմահաճօրէն տնօրինելու:

Պատասխանը ո՛չ է՝ գօրեղապէս: Պետական օրէնսդրութիւնը եւ դատարանական որոշումները ո՛չ մէկ նշանակութիւն ունին քրիստոնէական հայեացքին համար» եւ ոեւէ ձեւով արդարացում չեն կրնար բերել մեր արարքին: Որքա՛ն ոճիրներ կամ յանցանքներ կան» որոնց համար պետական օրէնսդրութիւնները ոչինչ կ'ըսեն» կամ որքա՛ն ոճիրներ ու յանցանքներ կան» որոնք կ'արդարացուին դատարանական որոշումներով» բայց ոչ՝ եկեղեցւոյ հայեացքով: Մարդկային մտածողութիւնը կրնայ այլափոխել ոեւէ ճշմարտութիւն եւ արդարացնել ոեւէ սխալ» սակայն աստուածային դատաստանը անկաշառ հայեացքով կը դիտէ ու կը դատէ ամէն բան» իւրաքանչիւր երեւոյթի տալով իր իսկական անունը» բնոյթը եւ արժանիքը» այսինքն՝ գնահատումը եւ հատուցումը:

3.- Նոյնն է պարագան՝ բժիշկին դատումին կամ վերաբերումին» որոնք պէտք չէ՛ շփոթել եկեղեցւոյ կեցուածքին հետ: Սկզբունքով՝ բժիշկը դատաւոր մը չէ՛» եւ ինքը չէ՛ որ պիտի որոշէ կամ կ'որոշէ՝ արհեստական վիժում կատարել՝ թէ՛ ոչ: Բժիշկը իր հաւատքին (եթէ հաւատացեալ մըն է) կամ համոզումներուն բերումով կրնայ ընդդիմանալ

վիժումին» գայն հակառակ գտնելով խղճին ու բարոյականութեան» կրնայ ըլլալ չեզոք ու անտարբեր» եւ հարցին վճռումը ձգել ծնողին կամ ընկերութեան» ինք պարզապէս մասնագիտական իր գործակցութիւնը բերելով անոր» իսկ որոշ պարագաներու կրնայ անձամբ քաջալերող մը ըլլալ վիժումին՝ բժշկագիտական տուեալներէ մեկնած կամ ինչ-ինչ դրդապատճառներէ մղուած: Այս պարագային արդեօք պէտք է բժիշկին կարծիքը որոշադրիչ ըլլայ ծնողներուն կամ ծնող մօրը համար: Ո՛չ: Ինչպէս պետական օրէնսդրութիւնը կամ դատարանական որոշումը» այնպէս ալ բժշկական այս կարծիքը» թելադրութիւնը կամ վճիռը» ո՛չ մէկ նշանակութիւն ունին եկեղեցոյ եւ հաւատացեալ անձին քրիստոնէական հայեացքին համար: Արարքը ամէն բանէ առաջ բարոյակա՛ն դատաստան մըն է» որուն պատասխանատուութիւնը չի՛ կրնար յանձնուիլ բժիշկին» կամ ոեւէ մէկ ուրիշին:

Միսալ չհասկնա՛նք: Եկեղեցին բժիշկին դէմ չէ՛: Եկեղեցին երախտագիտութեամբ կը նայի թէ՛ բժշկութեան» եւ թէ՛ բոլոր այն գիտութիւններուն» որոնք կը ծառայեն մարդը եւ անոր բնութիւնը ճանչնալու իր ամբողջութեանը մէջ եւ աշխարհային միջավայրին յարաբերաբար» եւ մարդկային կեանքը պահելու իր աստուածային նշանակութեամբ» որպէսզի մարդը ներկայ աշխարհին մէջ իրագործէ իր կոչումը: Քրիստոնէական հայեացքով բժշկութիւնը լաւագոյն մէկ գործիքը պէտք է ըլլայ աստուածային ստեղծագործութիւնը» այս պարագային՝ մեր մարմինները պահելու լաւագոյն վիճակի մէջ: Եթէ մնայ իր այդ դերին մէջ» բժշկութիւնը աստուածային սիրոյն թարգմանը կը հանդիսանայ՝ մարմնաւոր կեանքի մակարդակին վրայ» որովհետեւ քրիստոնէական հայեացքին մէջ մարմինը նո՛յնքան կարեւոր է՝ որքան հոգին» եւ արդարեւ կը հաւատանք՝ թէ «մարմինը տաճարն է հոգիին»» մեզի տրուած՝ անով զԱստուած փառաւորելու համար (Ա.Կր 6.19-20: Հմմտ

3.16-17): Ուստի լաւագոյն վիճակի մէջ պէտք է պահել զայն՝ եւ բժշկութիւնը ա՛յդ պէտք է փորձէ ընել՝ աստով իսկ դառնալով Աստուծոյ նախախնամութեան պատկերը եւ թանձրացումը՝ եւ օրինակը Քրիստոսի՝ որ մարդոց մարմինները բժշկեց՝ անոնց հոգիներուն եւս դարման ու փրկութիւն պարգեւելու համար:

4.- Գալով մայրութեան եւ մօրը դերին՝ առողջ մտածողութեան եւ առողջ դատումի պայմաններուն մէջ կարելի չէ՝ երեւակայել՝ որ ոեւէ կին՝ ամուսնացած կամ ոչ՝ կամաւոր թէ ակամայ յղութեան պայմաններու մէջ՝ ուզէ փճացնել իր մէջ սկիզբ առած կեանքը: Արտաքին պայմաններու առթած եւ ներքին զգացումներու եւ տագնապներու պատճառած հոգեբանական ճնշումներն է որ յաճախ անցանկալի կը դարձնեն յղութիւնը՝ եւ կը մղեն զայն՝ արհեստական վիժումի դիմելու որոշումին: Իսկ այդ որոշումը յաճախ աղիտաբեր կ'ըլլայ անձին համար՝ որովհետեւ՝ ինչպէս բժշկութիւնը կը հաստատէ՝ արհեստական վիժումը (մանաւանդ առաջին յղութեան պարագային) պատճառ կրնայ դառնալ շատ աւելի անցանկալի բարդութիւններու՝ ամլութեան՝ վաղահաս ծերութեան՝ սեռային գործարաններու մնայուն բորբոքումներու՝ եւ ընդհանուր տկարութեան՝ մարմնի դիմադրողականութեան նուազումին:

Ոմանց համար արդարանալի կը թուի վիժումը՝ երբ յղութիւնը արդիւնք է բռնաբարման՝ կամ արենապիղծ յարաբերութեան մը: Արդար գտնողները կը հիմնուին սա՛ առարկութեան վրայ՝ թէ վիժումը արգիլել՝ կը նշանակէ անարդար գտնուիլ իր կամքին հակառակ մայրութեան կոչուած կնոջ կամ աղջկան հանդէպ: Սակայն անոնք կը մոռնան՝ որ այս պարագային վիժումը թոյլատրել կը նշանակէ աւելի մեծ անարդարութիւն մը թոյլատրել՝ սպաննելով անմեղ կեանք մը՝ որ ո՛չ յանցանք ունի կատարուած անիրաւութեան մէջ՝ ո՛չ ալ ոեւէ պաշտպանութիւն ունի կատարուելիք աւելի մեծ

անիրաւութեան մէջ: Անշուշտ մօրը համար կրնան հոգեբանական» ընկերային կամ նիւթական դժուարութիւններ ծագիլ ու մնալ« քայց ատոնք ի վերջոյ անլուծելի հարցեր չեն» եւ նաեւ՝ երբեք ալ չեն կրնար աւելի ծանրակշիռ ըլլալ քան անմեղ կեանքի մը ոչնչացումը» որ քացի ինքնին ծանր յանցանք մը ըլլալէ« հետագային կրնայ հոգեբանական աւելի ծանր հարուած մը ըլլալ նոյնինքն ծնողին համար:

Արհեստական վիժումը թոյլատրելի է միայն մէ՛կ պարագայի: Երբ ինչ-ինչ պատճառներով յղութեան շարունակութիւնը կը սպառնայ մօրը կեանքին« Բարոյական հարցը՝ որ կը դրուի՝ հետեւեալն է.- Ո՞րն է աւելի թանկագինը« մօ՞րը կեանքը« թէ անծին երեխայինը: Նկատի ունենալով« որ յղութեան շարունակութիւնը չարիք կը դառնայ երկուքին համար ալ« հարկադրական կը դառնայ ընտրութիւն մը կատարել« գէթ փրկելու համար անոնցմէ մէկը: Եւ այս պարագային բնական ընտրութիւնը կ'երթայ մօրը« որուն առողջութիւնը եւ կեանքը անհրաժեշտ են ո՛չ միայն իր անծին համար« այլ նաեւ իր ընտանիքին« իր ամուսինին ու միւս զաւակներուն համար: «Չարեաց փոքրագոյնը» տրամաբանութիւնն է այս պարագային գործողը« որ սակայն իր ոյժը կ'առնէ երեք գործօններէ.-

1.- Արժէքներու գնահատման դրական չափանիշէ մը« որ ընտանիքին գերագոյն շահը կամ բարիքն է:

2.- Բարոյական կեցուածքէ մը« որուն դիտումը կամ նպատակը չէ՛ կեանք մը առնելը կամ ոչնչացնելը« այլ ընդհակառակը՝ աւելի անհրաժեշտ կեանք մը փրկելը: Եւ

3.- Երկու կեանքերը միաժամանակ փրկելու անկարելիութենէն« երբ մօրը սպառնացող մահուան վտանգը ինքնին կը սպառնայ նաեւ անծին երեխային կեանքին« եւ այս վերջինը անկարելի է առանց առաջինին:

Այս պարագային հարկադրական վիժումը չի՝ դադրիր ինքնին չարիք մը ըլլալէ՝ որ սակայն կը թոյլատրուի՝ մեծագոյն չարիք մը կանխելու համար:

Ոմանք արհեստական վիժումը թոյլատրելի կը գտնեն նաեւ՝ երբ ժառանգական ծանր հիւանդութիւն մը փոխանցելու հարց կայ: Մտահոգութիւնը արդար կը թուի՝ բայց կախում ունի բժշկագիտական մեր մակարդակէն: Ինչ որ այսօր անբուժելի կը նկատուի՝ կրնայ յանկարծ վաղը բուժելի դառնալ՝ ո՞վ կրնայ երաշխաւորել ու պատասխանատուութիւն ստանձնել տուեալ պարագային:

Եկեղեցիին կողմէ արմատական այս կեցուածքը շատերու համար կրնայ շատ կարծր եւ անզիջող՝ կամ զուտ դատապարտողական թուիլ՝ հեռու այն սերէն ու հասկացողութենէն՝ որ ինքը՝ եկեղեցին կը քարոզէ անդադար: Բայց՝ պէտք է յստակ ըլլայ՝ թէ սեր՝ չի՝ նշանակեր թուլութիւն եւ ամէն բանի հանդէպ անպայմանաւոր կերպով թոյլատու կեցուածք:

Եկեղեցւոյ մտածողութեան հիմնաքարը եւ մեկնակէտը՝ կեանքին նուիրականութիւնն է՝ եւ եկեղեցին կը մերժէ արհեստական վիժումը՝ իբրեւ կեանքի հիմնական իրաւունքին եւ մարդկային ազատութեան դէմ առնուած անթոյլատրելի քայլ: Այդուհանդերձ՝ եկեղեցւոյ պարտականութիւնը դատապարտել չէ՝՝ ատոր համար չէ՝՝ որ գոյութիւն ունի անիկա: Եկեղեցին կայ՝ պարզապէս յստակացնելու եւ ճշդելու համար այն մտածողութիւնը՝ որ համաձայն է Աստուածաշունչին եւ Աստուծոյ յայտնութեան ամբողջութեան: Այդ յստակացումը կամ լուսաբանութիւնը եկեղեցին կը կատարէ իր հաւատացեալներուն սիրոյն՝ որպէսզի անոնք, կեանքէն ծագած հարցերուն կապակցութեամբ իրենց քրիստոնէական հաւատքին պատասխանները ունենան եւ ըստ այնմ՝ առաւել գիտակցութեամբ եւ պատասխանատուութեամբ՝ իրենց ընտրութիւնը կատարեն եւ քայլ առնեն:

Մարդկային կեանքին հանդէպ մեր անհատական ու հաւաքական պատասխանատուութիւնը կը բղխի նոյնինքն Աստուծոյ կողմէ մեզի տրուած իշխանութենէն ու կոչումէն: Աստուած մարդը կոչեց՝ զաւակներ ունենալու՝ բազմանալու եւ աշխարհը լեցնելու: Աստուած նաեւ տէր եւ իշխան կարգեց ամբողջ ստեղծագործութեան՝ աշխարհին՝ բնութեան՝ կենդանիներուն եւ իր նմաններուն՝ ինչպէս նաեւ իր անձին ու մարդկային գալիք սերունդներուն՝ որպէսզի «ՊԱՀԷ» ու խնամէ զանոնք (հմմտ Ծն 2.15):

Եկեղեցիին կողմէ արհեստական վիժումի մեքենական եւ ապաքարոյական տրամաբանութեան մը մերժումը ի վերջոյ կապ ունի շատ աւելի խորունկ հայեացքի մը հետ՝ որ մարդկայնական մտածողութիւնն է՝ մարդկութեան մարդկայնականութիւնը: Մարդը մեքենայ մը չէ՝ « եւ մարդուն ներկայ եւ ապագայ կեանքը մեզի համար մեքենայի մը արժէքը չի ներկայացներ պարզապէս» որ ուզած աստեղ կրնաս մէկդի նետել: Նման մտածողութիւն մը տեղ չունի սիրոյ համար՝ որ սակայն անհրաժեշտ տարրն է մարդուն իբրեւ մարդ աճումին ու զարգացումին համար:

Քրիստոնէական աշխարհահայեացքը իրեն հորիզոն ունի սերը: Աշխարհը Աստուծոյ սիրոյն ծնունդն է՝ եւ Քրիստոսի մարդեղութիւնը նոյն այդ սիրոյն զօրեղագոյն եւ թանձրագոյն արտայայտութիւնը: Քրիստոնէական աշխարհահայեացքը այդ սիրով պայմանաւոր է՝ եւ սիրոյ այդ հայեացքով կը նայի աշխարհին՝ գոր պահելու կոչուած է՝ եւ մարդուն՝ որուն ինքնիրագործումը շատ աւելի անդին է՝ քան զուտ կենսաբանական իր գոյութիւնը՝ եւ որուն անհրաժեշտ սնունդը եւ պայմանը՝ ըսինք արդէն՝ դարձեալ սերն է: Ահա թէ ինչու՝ քրիստոնէական աշխարհահայեացքին մէջ կեանքին նուիրականութիւնը կը մնայ ամէն բանէ վեր՝ եւ այդ կեանքը աստուածային սիրով պարուրելու՝ խնամելու եւ պահելու պարտականութիւնը կոչումն է մարդ անհատին՝ պետութեան ներկայացուցիչին թէ գիտութեան ներկայացուցիչին՝

Իմաստասերին թե ընկերաբանին՝ բժիշկին թե
հոգեւորականին:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻՆ
ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆԵՐՇՆՉԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԿԱՍ
ՆԵՐՇՆՉԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

«Հեղինակություն» բառը ընդհանրապես երկու իմաստներով կը գործածուի.-

Ա.- Նախ նշելու համար առարկայի մը կամ գործի մը հեղինակը, այսինքն՝ ստեղծողը կամ գիտարարը, աշխատասիրողը կամ արտադրողը:

Բ.- Նշելու համար ոեւէ անձի կամ գործի ունեցած կշիռը, ազդեցութիւնը, բոլորին կողմէ վայելած յարգանքը, վարկը, անառարկելի դիրքը եւ վստահութիւնը:

Աստուածաշունչին պարագային նոյնպէս զոյգ իմաստներով կը գործածուի (հեղինակություն) բառը.-

1.- Ո՞վ է հեղինակը Աստուածաշունչին:

2.- Ի՞նչ կշիռ եւ վարկ ունի, ի՞նչ դեր եւ տեղ ունի անիկա եկեղեցիին կամ անհատ հաւատացեալին կեանքին մէջ:

Խորքին մէջ ասոնք երկու տարբեր հարցեր չեն, այլ միեւնոյն հարցին զոյգ երեսները: Աստուածաշունչը մարդկայի՞ն հեղինակութիւն է, թէ՛ աստուածային: Անոր հեղինակը Աստուած ի՞նքն է, թէ՛ մարդկային մտածողութեան արդիւնքն է անիկա:

Եթէ մարդկային մտածողութեան արդիւնքն է անիկա, այն ատեն անոր արժէքը զուտ պատմական, գրական ու մշակութային է մեզի համար, աւանդութեան զօրութենէն անդին հեղինակութիւն մը չունի մեզի համար, եւ անոր պատգամները կամ հրահանգները բնաւ ալ պարտադիր չեն արդի ժամանակներուն մէջ ապրող մարդուն համար: Իսկ եթէ Աստուած է անոր հեղինակը, այն ատեն անիկա պարզապէս

մարդկային իմաստությունը արտացոլացնող սովորական գիրք մը չէ, լոկ պատմական կամ գրական-գեղարուեստական երկասիրություն մը չէ, պարզ բարոյական ուղեցոյց մը չէ, պարզապէս մարդուն կեանքը բարելաւելու եւ ազնուութիւն ու բարութիւն սորվեցնող իմաստասիրութիւն մը կամ վարդապետութիւն մը չէ, միայն անցեալին պատկանող եւ միայն աւանդական արժէք մը ունեցող գիրք մը չէ, այլ՝ մարդը փրկութեան կանչող եւ փրկելու սահմանուած գիրք մըն է, անոր պատգամները յաւերժական են եւ նոյնքան ի զօրու են այսօր որքան էին երէկ, անցնող հազարամեակներու ընթացքին:

Իսկ ի՞նչ է «ներշնչականութիւն»ը:

Աստուածաշունչին պարագային այս բառը կը նշէ՝ անոր Աստուծմէ ներշնչուած ըլլալը:

Այստեղ մեզ հետաքրքրողը այդ ներշնչականութեան կերպը չէ. այսինքն, պիտի չփորձենք տեսնել՝ թէ Աստուած ի՞նչ տարբեր կերպերով այդ ներշնչումը տուաւ մարդոց, որոնք իր խօսքին արձանագրողները պիտի ըլլային: Մեզ հետաքրքրողը ներշնչականութեան իրողութիւնն է, այսինքն գտնել հաստատումը կամ ապացոյցը՝ Աստուածաշունչը բաղկացնող գիրքերուն Աստուծմէ ներշնչուած ըլլալուն:

Աստուածաշունչը երկինքէն ինկած չէ հարկաւ, ինչպէս Իսլամները կը հաստատեն իրենց հաւատքի մատեանին՝ Քորանին համար: Բայց թէ՛ Հրեաներ եւ թէ՛ քրիստոնեաներ կը հաւատան՝ թէ Աստուածաշունչը ուղղակիօրէն Աստուծմէ ներշնչուած է, ինչպէս «Աստուածաշունչ» բառը ցոյց կու տայ: Իսկ Աստուածաշունչի ներշնչականութիւնը, կամ աստուածային հեղինակութիւնը, կը ճանչցուի եւ կ'ընդունուի միայն կանոնական գիրքերուն համար, որոնք Առաքելական աւանդութեան համաձայն են եւ ունին Եկեղեցւոյ ճանաչումը եւ պաշտօնական վաւերացումը:

ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԻՆ ՀԱՐԱԶԱՏՈՒԹԵԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Աստուածաշունչը Աստուծոյ կենդանարար խօսքն է եւ անոր փրկութեան պատգամը: Փրկութեան այդ պատգամին կապակցութեամբ պէտք է երկու ճշդում կատարենք.-

1.- Փրկութիւնը հաւատքէն է որ կու գայ, ինչպէս մարգարէն կ'ըսէ. *«Արդարք իր հաւատքով պիտի փրկուի»* (Ամբ 2.4: Հմմտ Հո 1.17): Եւ Պօղոս առաքեալ կը լրացնէ. *«Հաւատքը ծնունդ կ'առնէ քարոզութիւնը լսելէն. իսկ քարոզութիւնը հաւատք կ'արթնցնէ՝ երբ Քրիստոսի խօսքերն են որ կը քարոզուին»* (Հո 10.17): Եթէ մարդիկ իրենք զիրենք քարոզեն, կամ մարդկային իմաստութեան եւ ճարտարախօսութեան վրայ հիմնուի քարոզութիւնը, ո՛չ մէկ դրական արդիւնք կ'ունենայ, չի՛ ներգործեր մարդոց վրայ եւ հաւատք չ'արթնցնէր: Մինչդեռ Աստուծոյ խօսքը ինքը իր ամբողջ պարզութեամբ հանդերձ՝ իր մէջ ունի ներքին փոխակերպիչ զօրութիւն մը, որ կրնայ մարդոց սիրտերը շարժել եւ անոնց կեանքերը յեղափոխել:

Արդարեւ, ինչպէս կ'ըսէ Եբրայեցիներուն նամակին հեղինակը, *«Աստուծոյ խօսքը կենդանի է եւ ազդու, աւելի հատու՝ քան ոեւէ երկսայրի սուր, եւ կը թափանցէ մարդու շունչին ու հոգիին մէջ, մինչեւ ողն ու ծուծը, եւ կը քննէ մտածումներն ու սրտին խորհուրդները»* (Եբր 4.12): Իսկ Պօղոս առաքեալ հետեւեալը կը գրէ Թեսաղոնիկեցիներուն. *«Մենք անդադար Աստուծոյ շնորհակալութիւն կը յայտնենք նաեւ անոր համար, որ դուք հազիւ Աստուծոյ խօսքին քարոզութիւնը մեզմէ լսած՝ ընդունեցիք զայն. ո՛չ իբրեւ մարդկային պատգամ, այլ՝ իբրեւ Աստուծոյ պատգամը, որովհետեւ ճշմարտապէս ալ Աստուծոյ պատգամն է, եւ իբրեւ այդպիսին կը ներգործէ հաւատացեալներուդ մէջ»* (Ա.Թս 2.13): Իսկ Տիմոթէոսին գրած երկրորդ նամակին մէջ կ'ըսէ.

«Արդէն մանուկ հասակէդ գիտես Սուրբ Գիրքերը, որոնք զօրութիւնը ունին քու միտքդ իմաստութեան բանալու, որպէսզի Քրիստոս Յիսուսի հաւատասա եւ փրկուիս» (Բ.Տմ 3.15):

2.- Աստուծոյ խօսքին քարոզութիւնը կամ պատգամը մեր սրտին ու գիտակցութեան կը հասնի եւ փրկութեան զօրութեան կը վերածուի Աստուծոյ Հոգիին զօրութեամբ միայն: Յիսուս սկիզբէն ըսաւ իր աշակերտներուն, թէ իր խօսքերը Սուրբ Հոգիին ուսուցման լոյսով պիտի իրենց ամբողջական իմաստը գտնեն իրենց միտքերուն մէջ. *«Այս բոլորը խօսեցայ ձեզի, քանի տակաւին ձեզի հետ եմ: Բայց Միսիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրս ձեզի պիտի դրկէ իմ անունովս, անհկա ձեզի ամէն ինչ պիտի սորվեցնէ եւ յիշեցնէ ինչ որ ես ձեզի ըսի» (Յհ 14.26):* Եւ ճշմարտութեան ակունքէն բղխած այդ ճշմարիտ խօսքն է որ մարդոց հոգին կը կենդանացնէ, ինչպէս կ'ըսէ Քրիստոս. *«Աստուծոյ Հոգին է որ կեանք կու տայ, մարդս բան մը չի կրնար ընել: Այն խօսքերը որ ես ձեզի խօսեցայ, Աստուծոյ Հոգիէն կու գան եւ կեանք կու տան» (Յհ 6.63):* Իսկ Պօղոս առաքեալ սեփական փորձառութեամբ կը հաստատէ այս ճշմարտութիւնը, ըսելով. *«Աստուած մեզի յայտնեց այդ խորհուրդը իր Հոգիին միջոցաւ: Եւ ինչ որ կը խօսինք՝ մարդկային իմաստութեան բերումը եղող խօսքեր չեն, այլ՝ Սուրբ Հոգիին կողմէ սորվեցուած իմաստութեամբ հոգեւոր ճշմարտութիւններ կը բացատրենք հոգեւոր մարդոց: Աստուծոյ Հոգին չունեցող մարդը չ'ընդունիր Աստուծոյ Հոգիին բերած ճշմարտութիւնները, որովհետեւ անոնք յիմարտութիւն կը թուին իրեն. եւ չի կրնար զանոնք ճանչնալ, որովհետեւ անոնք միայն Հոգիով կը քննուին» (Ա.Կր 2.10, 13-14):*

Սուրբ Հոգին է միայն, որ կրնայ սորվեցնել ինչ որ մեր փրկութեան համար անհրաժեշտ է մեզի, յիշեցնելով եւ մեր

մէջ տպաւորելով Քրիստոսի խօսքերը, միաժամանակ Քրիստոսի մասին ճշմարտութիւնը բանալով մեր աչքերուն դիմաց (Յհ 15.26): Անոր համար է որ առաքելաւ կ'ըսէ՝ դարձեալ, «*Ես ալ, եղբայրներ, երբ ձեզի եկայ՝ իմաստասիրական մեծ-մեծ խօսքերով չէր որ ձեզի պատմեցի Աստուծոյ փրկութեան ծրագիրին մասին, որովհետեւ միակ նպատակ դրած էի՝ ձեզի ճանչցնել Յիսուսը՝ Քրիստոսը, այսինքն նոյնինքն խաչուած Փրկիչը: Եւ ձեր քով եկած ատենս ալ տկար էի, սաստիկ վախ ու դողի մէջ, եւ իմաստութեան ճարտար խօսքերով չէր որ խօսեցայ կամ քարոզեցի, այլ՝ Սուրբ Հոգիին զօրութեամբ եւ ներգործութեամբ, որպէսզի ձեր հաւատքը հիմնուի Աստուծոյ զօրութեան վրայ, եւ ո՛չ թէ մարդկային իմաստութեան» (Ա.Կր 2.1-5):*

Առաքելները որոշապէս ունէին Աստուծոյ խօսքին այս բացարձակ հեղինակութեան եւ անոր ներգործող զօրութեան գիտակցութիւնը, եւ երբեք իրենց սեփական խօսքը չեն շփոթեր աստուածայինին հետ, բնաւ մարդկային իրենց հեղինակութեամբ արտաբերուած խօսքին աստուածային հեղինակութիւն չեն տար, կամ համարժէք չեն նկատեր անոր, նոյնիսկ եթէ իրենք զիրենք Աստուծոյ Հոգիով լեցուած կը ճանչնան (հմմտ Ա.Կր 2.12-13 եւ 16):

ՆԵՐՇՆՀԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՊԱՅՈՅՅԸ

Աստուծոյ խօսքին ուղղակիօրէն Աստուծմէ «եկած» կամ «ներշնչուած» ըլլալուն եւ ըստ այնմ ալ ունեցած բացարձակ հեղինակութեան մասին խօսած ատեն, մարդկային միտքը բնականօրէն կը մտածէ ապացոյցի մասին: Ի՞նչ բանը կը համոզէ մեզ, կամ ապահովութիւն կու տայ մեզի, թէ իրօք անիկա Աստուծոյ խօսքն է:

Աստուածաշունչին ներշնչականութեան ապացոյցը դուրսէն չի գար. անիկա այդ ապացոյցը ինքն իր մէջ ունի:

Աստուածաշունչը մէկ գիրք է, հակառակ 66 տարբեր գրութիւններէ բաղկացած ըլլալուն: Աշխարհի վրայ չենք գտներ գիրքեր, որոնց համար կարենանք ըսել՝ թէ միասնաբար մէկ գիրք են: Արդ, Աստուածաշունչին պարագային ի՞նչը կը կազմէ այդ 66 գրութեանց միութիւնը, որ ամբողջութիւնը կը դարձնէ մէկ գիրք:

Այդ միութիւնը կու գայ հեղինակին նոյնութենէն, ներշնչումի եւ նպատակի միութենէն: Կարելի է զայն արտայայտել քանի մը կէտերով.-

1.- Աստուածաշունչին ներշնչականութեան ապացոյցը կարելի է տեսնել անոր պատմութեան եւ նպատակին շարունակականութեան մէջ:

Հակառակ այն իրողութեան, որ անիկա գրուած է ո՛չ թէ մէկ անգամէն, այլ՝ ժամանակի ընթացքին, պատմական երկար ժամանակաշրջանի մը վրայ, եւ արձանագրուած է կեանքի ամէն բնագաւառէ ու մակարդակէ եկող անձերուն կողմէ,- ինչպէս՝ թագաւոր (Դաւիթ, Սողոմոն, Եզեկիա), հովիւ (Դաւիթ, Ովսէա), գեղջուկ, պետական գործիչ (Մովսէս, Եսայի, Դանիէլ, Նէեմիա), քահանայ (Երեմիա, Եզեկիէլ, Եզրա), բանաստեղծ (Դաւիթ, Սողոմոն), իմաստասէր (Սողոմոն, Յոբ, Սիրաք), մաքսաւոր (Մատթէոս), ձկնորս (Յովհաննէս), բժիշկ (Ղուկաս), եւլն,- բայց անիկա կը ներկայացնէ իբրեւ՝

Ա.- Շարունակական մէկ պատմութիւն՝ ստեղծագործութենէն մինչեւ նոր երկինք եւ նոր երկիր:

Բ.- Փրկութեան մէկ ծրագիր՝ մարդուն անկումէն սկսող եւ Իսրայէլի պատմութեան ընդմէջէն հասնող մինչեւ Քրիստոս, մինչեւ Եկեղեցին եւ Աստուծոյ թագաւորութեան վերջնական հաստատումը: Եւ

Գ.- Փրկութեան առաջնորդող մէկ պատգամ՝ փրկութեան նախատիպ եղող օրինակներով պատկերուած, աստուածային

օրէնքներով հաստատուած, մարգարէական պատգամներով խոստացուած, Քրիստոսով իրականացած, եւ Եկեղեցիով մեզի պարգեւուած:

Այս շարունակականութիւնը կարելի չէ երբեք բացատրել բնական միջոցներով, կամ մարդկային մտածողութեամբ: Եւ ասիկա ինքնին մեզ կը մղէ, որ անոր մէջ մարդկային հեղինակութենէն անդին Սուրբ Հոգիի ներշնչումը եւ առաջնորդութիւնը ճանչնանք:

2.- Աստուածաշունչին ներշնչականութեան ապացոյցը կարելի է տեսնել անոր վարդապետութեան կամ ուսուցումներուն միութեան մէջ:

Աստուածաշունչը մեր հաւատքին ու մեր հոգեւոր դաստիարակութեան գիրքն է: Անով է որ կը սորվինք Աստուծոյ մասին, անոր մէկութեան եւ Երրորդութեան մասին, հոգեղէն եւ նիւթեղէն ստեղծագործութեան մասին, մարդուն եւ մեղքին, Աստուծոյ շնորհքին եւ փրկութեան մասին, Եկեղեցոյ եւ անոր խորհուրդներուն մասին, այս աշխարհին եւ հանդերձեալին մասին: Քրիստոնէական աստուածաբանութեան միակ հիմն է Աստուածաշունչը, Եկեղեցոյ վաւերական աւանդութեան լոյսին տակ (Ա.Տմ 6.20: Բ.Տմ 1.14):

Աստուածաբանական մտածողութեան այս բնագաւառին մէջ Աստուածաշունչը դարձեալ ի յայտ կու գայ կատարեալ միութեամբ մը, ուսուցման շարունակական ընթացքով մը, որ մարդուն աստիճանական դաստիարակութեան հետ կ'աճի, կը զարգանայ, եւ Քրիստոսով իր լրումին կը հասնի: Թէպէտեւ, ինչպէս ըսել կ'ուզենք, անիկա անփոփոխ չի մնար, բայց, միւս կողմէ, երբեք փոփոխութիւն չի կրեր՝ այլափոխման կամ շեղումի կամ հակադրութեան իմաստով (հմմտ, օրինակ, Յիսուսի ուսուցումները հին Օրէնքին մասին, Մտ 5.17-48):

Անոր մէջ փոփոխութիւնը յառաջատուական ընթացք մըն է, այսինքն՝ ներքին զարգացման ընթացք մը՝ մարդուն ընդունելու կարողութեան համաձայն: Յիշենք, օրինակ, ինչ որ մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս վերնատան մէջ իր աշակերտներուն կ'ըսէր. *«Տակաւին շատ բաներ ունիմ ըսելիք ձեզի, սակայն այժմ չէք կրնար տանիլ»* (Յհ 16.12): Երեքուկէս տարիներ ուսուցանեց անոնց, Աստուծոյ խօսքը բացայայտեց անոնց, բայց տակաւին լրումը չտուաւ, որովհետեւ դեռ ի վիճակի չէին ամէն ինչ հասկնալու: Կատարումը պիտի գար յարութենէն ետք, երբ շփոթահար ու խռոված միտքերը իրենց խաղաղութիւնը գտնէին յարուցեալ Փրկիչով, ի վիճակի ըլլային «տանելու», հասկնալու, եւ Սուրբ Հոգին գար զիրենք լեցնելու ամբողջական գիտութեան պարգեւովը: Եւ այդ ամբողջական գիտութեան լոյսին տակ անոնք այլեւս կարենային տեսնել սքանչելի միութիւնը Հին Ուխտին եւ անոր կատարումը եղող Նոր Ուխտին:

3.- Աստուածաշունչին ներշնչականութեան ապացոյցը որոշապէս կը տեսնուի անոր մարգարէական խոստումներուն կատարումին մէջ:

Աստուածաշունչին ներշնչականութեան ամենէն զօրաւոր վկայութիւնը եւ ամենէն հիանալի իրողութիւնը անոր մարգարէական կանխասացութեանց եւ խոստումներուն կատարումն է: Երեմիայի մարգարէութեան մէջ այս մասին կը կարդանք. *«Երբ մարգարէ մը խաղաղութիւն կը մարգարէանայ, եւ այն մարգարէին խօսքը կը կատարուի, այն ատեն կը հասկցուի՝ որ անիկա ճշմարտապէս Տիրոջմէ ղրկուած մարգարէ մըն է»* (Եր 28.9): Այս նոյն մարգարէութեան շրջուած ձեւն ալ կը գտնենք Աստուածաշունչին մէջ: Աստուած ինք Մովսէսի բերնով հետեւեալը կ'ըսէ. *«Եթէ մարգարէ մը Տիրոջ անունով բան մը ըսէ, եւ այդ բանը Տիրոջ անունով չկատարուի, կը նշանակէ թէ*

այդ բանը Տէրը ըսած չէ: Այդ մարգարէն յանդգնութեամբ խօսած է այդ բանը. անկէ չվախնա՛ս» (Բ.Օր 18.22):

Քրիստոս ինք իր երկրաւոր կեանքին եւ առաքելութեան ամեն մէկ քայլափոխին ցոյց տուաւ Հին Կտակարանի մարգարէութեանց կատարումը՝ իր անձին վերաբերեալ, եւ այս մասին առիթով մըն ալ ըսաւ. «Ես կը ճանչնամ ընտրածներս. այլ որպէսզի իրականանայ Սուրբ Գիրքին խօսքը, որ կ'ըսէ՝ "Ան որ ինձի հետ հաց կ'ուտէր՝ դաւաճանեց ինձի" [Մդ 41.9]: Հիմակուրնէ իսկ կ'ըսեմ ձեզի, տակաւին ասիկա չպատահած, որպէսզի երբ պատահի՝ հաւատաք թէ Ես եմ» (Յհ 13.18-19): Քիչ ետք դարձեալ ըսաւ. «Այս բոլորը ձեզի ըսի՝ նախքան պատահիլը, որպէսզի երբ պատահին՝ այն ատեն հաւատաք» (Յհ 14.29): Յիսուսի կեանքին մէջ այդ բոլոր «գրուածներուն» կատարումին ականատես Աւետարանիչը Յովհաննէս, խաչելութեան առիթով այսպէս կ'ըսէ այդ մասին. «Ան որ տեսաւ ասիկա՝ ի՛նք վկայեց այս մասին, եւ անոր տուած վկայութիւնը վաւերական է: Անիկա գիտէ որ ըսածը ճշմարտութիւնն է, որպէսզի դուք ալ հաւատաք: Ասիկա պատահեցաւ՝ որպէսզի իրականանայ Սուրբ Գիրքերուն մէջ ըսուածը. "Անոր ռեւէ մէկ ոսկորը պիտի չփշրուի" [Ել 12.46: Ղւ 9.12], ինչպէս նաեւ միւս գրուածը, որ կ'ըսէ. "Պիտի նային անոր՝ որ խոցեցին" [Զք 12.10]» (Յհ 19.35-37):

Նոր Կտակարանը ուղղակի եւ անուղղակի ձեւով կը յիշէ կատարումը բազմահարիւր մարգարէութեանց կամ խոստումներու, որոնք Քրիստոսով իրենց կատարումը գտան: Եւ ասիկա ամենէն դժուար հերքելի երեսն է Աստուածաշունչին ներշնչականութեան:

ՆԵՐՇՆՉԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԿԱՅՈՂՈՒԹԻՒՆԸ

Այժմ փորձենք տեսնել, թէ ի՞նչպէս կը հասկցուի այս գիրքերուն կամ անոնց արձանագրող հեղինակներուն Աստուծմէ ներշնչուած ըլլալը: Այս հասկացողութիւնը եւս

կարելոր է՝ Աստուածաշունչ մատեանի հեղինակութիւնը, եւ ըստ այնմ՝ Աստուածաշունչէն բղխած վարդապետական, ծիսական թէ բարոյական աստուածաբանութիւնը ճշդելու եւ արժեւորելու տեսակէտէն:

Քրիստոնէական Եկեղեցին ընդհանրապէս եւ իւրաքանչիւր եկեղեցի առանձնապէս կ'ընդունի Հին եւ Նոր Կտակարանի մատեաններուն «աստուածաշունչ» հանգամանքը: Բայց բոլորը նոյն ձեւով չեն հասկնար անոր ներշնչականութիւնը, եւ ուստի ոմանց կողմէ տարբեր կ'ընկալուի անոնց հեղինակութիւնը, այսինքն՝ Աստուծոյ խօսքին նշանակութիւնը եւ դերը՝ եկեղեցւոյ եւ մեր կեանքին մէջ:

Աստուածաշունչի ներշնչականութեան տարբեր հասկացողութիւնները կարելի է ամփոփել այսպէս.-

1.- **ՏԱՌԱՅԻ ՆԵՐՇՆՉԱԿԱՆՈՒԹԻՒՆ:** Այս տեսութեան համաձայն, Աստուածաշունչ գիրքերու ներշնչականութիւնը մեքենական ու կատարեալ է: Այսինքն, արձանագրող անձերը անոր մէջ ոեւէ դեր կամ բաժին չունին, այլ՝ տառացիօրէն արձանագրած են ինչ որ Սուրբ Հոգին թելադրած է, առանց անկէ բառ մը կամ տառ փոխելու:

Այս բացատրութիւնը զուտ բարեպաշտական չէ, այլ կը բղխի այն իրողական փորձառութենէն, որ կարգ մը հեղինակներ կ'արձանագրեն ու կը մատնանշեն: Այսպէս, օրինակ, երբ արձանագրող անձը կը նշէ, թէ ինք Սուրբ Հոգիին կամ միջնորդ հրեշտակին կողմէ տրուած պատգամը չի հասկնար, եւ պարզապէս պատգամը կ'արձանագրէ այնպէս՝ ինչպէս ստացած է, մօտաւորապէս այդ հասկացողութիւնը կը թելադրէ: Դանիէլի մարգարեութեան աւարտին կը կարդանք. *«Ու ես լսեցի, բայց չհասկցայ: Եւ ըսի (հրեշտակին). "Ով տէր իմ, ասոնց վերջը ի՞նչ պիտի ըլլայ": Եւ անիկա ըսաւ. "Գնա՛, ո՛վ Դանիէլ, որովհետեւ այս խօսքերը*

մինչև վերջին ժամանակը գոցուած ու կնքուած են"» (Դն 12.8-9): Մօտաւորապէս նոյնը կը թելադրէ Պետրոս առաքեալ, երբ իր առաջին նամակին մէջ մարգարէներուն համար կ'ըսէ. «Այս փրկութիւնն էր որ փնտռեցին եւ փորձեցին հասկնալ մարգարէները, որոնք ձեզի տրուելիք շնորհքին մասին մարգարէանալով՝ կը փորձէին հասկնալ՝ թէ ի՛նչ ժամանակ եւ ի՛նչ պարագաներ կը ծանուցանէր իրենց մէջ գործող Քրիստոսի Հոգին, որ կանուխէն կը վկայէր Քրիստոսի չարչարանքներուն եւ անոնց յաջորդելիք փառքին մասին: Աստուած անոնց յայտնեց, թէ իրենց փոխանցած այդ պատգամները իրենց ժամանակներուն համար չէին, այլ՝ մեզի համար էր որ խօսեցան այն՝ ինչ որ ներկայիս Աւետարանը քարոզող մարդիկ ձեզի փոխանցեցին, երկինքէն դրկուած Սուրբ Հոգիին մղումով: Պատգամներ՝ որոնց կատարումը հրեշտակներն իսկ պիտի ուզէին գէթ մասամբ տեսնել» (Ա. Պտ 1.10-12):

Այս տեսութեան թերութիւնը այն է, որ կը մոռնայ իւրաքանչիւր արձանագրող հեղինակի խառնուածքն ու անհատականութիւնը եւ այդ անհատականութենէն բխած մասնաւոր հետաքրքրութիւնները, լեզուական ու ոճական առանձնայատկութիւնները, եւլն:

2.- ԳԱՂԱՓԱՐԻ ՆԵՐՇՆՉԱԿԱՆՈՒԹԻՒՆ: Այս տեսակէտին համաձայն, Աստուած միայն գաղափարը կամ մտածումը տուողն է, իսկ մարդը՝ զայն ազատօրէն արձանագրողը, եւ հետեւաբար Աստուածաշունչին մէջ իմաստ չունի առանձին բառերուն վրայ կանգ առնելը, որովհետեւ բառերը իրենք չեն ներշնչեալը, այլ՝ ընդհանուր միտքը:

Այս տեսակէտը չի կրնար հաշտ ըլլալ Աստուծոյ յայտնութեան հետ, զոյգ պատճառներով.-

Ա) Նախ, որքան ալ չուզենք Աստուածաշունչին ամէն մէկ բառին վրայ կանգ առնել, բայց նաեւ պէտք չէ մոռնանք, որ

յաճախ Աստուածաշունչը ինք մեզի կը ցուցնէ բառերուն կարեւորութիւնը, ինչպէս նաեւ անոր ամբողջականութիւնը անեղծ պահելու կարեւորութիւնը, առանց որուն՝ Աստուծոյ յայտնութիւնը կը կորսնցնէ իր ամբողջական եւ ուղիղ պատկերը:

Այսպէս, օրինակ, Հին Կտակարանի Օրէնքին ու մարգարէութեանց կապակցութեամբ մեր Տէրը բացարձակ յայտարարութիւն մը կատարեց.- *«Հաստատ գիտցէք, որ բոլոր Օրէնքն ու մարգարէութիւնները կէտ առ կէտ պիտի իրականանան՝ առանց բառ մը իսկ դուրս ձգելու, մինչեւ գայ այն օրը, երբ այս երկինքն ու երկիրը պիտի անցնին: Ով որ ամենափոքր պատուիրանն իսկ զանց ընէ եւ ուրիշներուն ալ այդպէս սորվեցնէ, երկինքի արքայութեան մէջ յետինը պիտի նկատուի: Իսկ ով որ գործադրէ պատուիրանները եւ ուսուցանէ, մեծ պիտի ըլլայ երկինքի արքայութեան մէջ»* (Մտ 5.18-19):

Նոյնպիսի յայտարարութիւն մը եւ նաեւ ազդարարութիւն մը կը գտնենք Յայտնութեան գիրքին վերջաւորութեան. *«Եւ ես, Յովհաննէս, կ'ազդարարեմ բոլոր անոնց՝ որոնք այս գիրքին մարգարէութեան խօսքերը կը լսեն: Եթէ ոեւէ մէկը բան մը ւաւելցնէ ասոր վրայ, Աստուած անոր տրուելիք պատիժին վրայ, պիտի ւաւելցնէ այս գիրքին մէջ նկարագրուած պատուհասները: Եւ եթէ ոեւէ մէկը բան մը պակսեցնէ այս գիրքին մարգարէութեան խօսքերէն, Աստուած ալ այս գիրքին մէջ նկարագրուած Կեանքի ծառէն եւ Սուրբ Քաղաքէն իր բաժինը պիտի նուազեցնէ»* (Յտ 22.18-19):

Նոյն շեշտը կը գտնենք նաեւ Պետրոս առաքելալի քով, որ իր 2-րդ նամակին մէջ խօսելով Քրիստոսի երկրորդ գալուստին եւ աստուածային խոստումին համաձայն «նոր երկինքի մը եւ նոր երկրի մը» մասին, որոնց ակնկառոյց կը սպասէ Եկեղեցին, իր խօսքը այսպէս կ'եզրակացնէ. *«Եւ Տիրոջ համբերատարութիւնը փրկութիւն համարեցէք ձեզի համար, ինչպէս մեր սիրելի եղբայրը՝ Պողոս ալ գրեց ձեզի, Աստուծմէ՛*

իրեն շնորհուած իմաստութեամբ: Անիկա նոյն այս բաներուն մասին խօսած է իր բոլոր նամակներուն մէջ ալ: Այդ նամակներուն մէջ կարգ մը դժուար հասկնալի մասեր կան, որոնց իմաստը չարափոխումի կ'ենթարկուի տգէտ ու փոփոխամիտ մարդոց կողմէ: Անոնք միւս Սուրբ Գիրքերը եւս կը չարափոխեն իրենց սեփական կորուստը պատրաստելով» (Բ.Պտ 3.16): Վերջին նախադասութիւնը յստակօրէն ցոյց կու տայ Պետրոսի կեցուածքը Հին Կտակարանի գիրքերուն վերաբերմամբ, որոնք «Սուրբ Գիրքեր» են, որոնց մէջ ուէ փոփոխութիւն կամ այլափոխում թոյլատրուած չէ եւ Աստուծոյ կողմէ անպատիժ չի մնար:

Որոշ պարագաներու, յայտնութեան մէջ գործածուած բառերուն եւ բացատրութեանց ներկայացուցած կարեւորութեան մասին կարելի է յիշել նաեւ շատ մը ուրիշ հատուածներ կամ համարներ:

Այսպէս, առիթով մը, երբ Յիսուս ինքզինք նոյնացուց Աստուծոյ հետ, եւ Հրեայ կրօնական պատասխանատուները քարեր առին որ զինք քարկոծեն, «*Յիսուս պատասխանեց անոնց.- Չէ՞ որ ձեր Օրէնքին մէջ գրուած է՝ "Ես ըսի թէ աստուածներ էք" (Սդ 82.6): Ահաւասիկ Աստուած ինք "աստուածներ" կ'անուանէ այն մարդիկը, որոնց իր խօսքը կ'ուղղէ: Եւ Սուրբ Գիրքին ըսածը կարելի չէ ջնջել» (Յհ 10.34-35):*

Նոյնպէս, առանձին բառի մը կարեւորութեան վրայ կը ծանրանայ Պօղոս առաքեալ, անոր մէջ յատուկ Մեսիական խոստում տեսնելով. «*Արդ, Աստուած խոստումներ տուաւ Աբրահամին եւ անոր զաւակին: Սուրբ Գիրքը չ'ըսեր՝ "Եւ անոր զաւակներուն", որ բազմաթիւ անձերու ակնարկութիւն պիտի ըլլար, այլ եզակի ձեւով կ'ըսէ՝ "Եւ քու զաւակիդ" (Օն 12.7): Իսկ այդ զաւակը Քրիստոս է» (Գղ 3.16):*

Միւս կողմէ, Պօղոս անգամ մը եւս կը շեշտէ, թէ իրենց սորվեցուցածները մարդկային իմաստութեան արդիւնքը եղող խօսքեր չեն, այլ Հոգիին մղումով տրուած հոգեւոր

ճշմարտութիւններ. «Ինչ որ կը խօսինք՝ մարդկային իմաստութեան բերումը եղող խօսքեր չեն, այլ՝ Սուրբ Հոգիին կողմէ ստրվեցուած իմաստութեամբ հոգեւոր ճշմարտութիւններ կը բացատրենք հոգեւոր մարդոց» (Ա.Կր 2.13), որոնք, հետեւաբար, Աստուծոյ խօսքն են:

Բ) Գաղափարի կամ պարզապէս մտածումի ներշնչականութեան տեսութիւնը Աստուծոյ յայտնութեան հետ հաշտ չի կրնար ըլլալ նաեւ անոր համար, որ ատիկա կը նշանակէ ըսել՝ թէ Աստուած թոյլ պիտի տար որ մադրիկ իրենց ուզած ձեւով մեկնէին ու ներկայացնէին իր խօսքը: Իսկ ատիկա իր կարգին պիտի նշանակէր, որ մեզի տրուած յայտնութեան մէջ մենք երբեք ալ Աստուծոյ անմիջական խօսքը չունինք կամ ի վիճակի չենք ճանչնալու, այլ միայն ունինք անոր արձագանգները, որոնց հաւաստիութեան վստահ ալ չենք, քանի կրնան նաեւ յայտնութեան այլափոխութիւնը ըլլալ:

3.- ՄԱՍՆԱԿԻ ՆԵՐՇՆՉԱԿԱՆՈՒԹԻՒՆ: Տառացի ներշնչականութեան ճիշդ հակառակն է ասիկա: Այս տեսակէտը ունեցողները քմահաճ մօտեցում մը կը ցուցաբերեն Աստուածաշունչին եւ անոր ներշնչականութեան հարցին, կամայականօրէն իրենց ուզած բաժինները Աստուծմէ ներշնչեալ համարելով, իսկ ուրիշ բաժիններ՝ ոչ:

Որոշ է որ այս տեսակէտը եւս ճշմարտութեան հետ հաշտ չի կրնար ըլլալ, որովհետեւ Աստուծոյ խօսքին դատաւոր կը կարգէ մարդուն միտքը. այսինքն՝ մարդը ի՛նք կ'ըլլայ որոշողը՝ թէ Աստուածաշունչին մէջ ի՛նչ բանը աստուածային ներշնչումով գրուած է, եւ ինչը՝ ոչ: Իսկ եթէ մարդը ի՛նքը պիտի որոշէ, կը նշանակէ՝ թէ առարկայական ճշմարտութիւն մը չկայ այդ մասին, որովհետեւ մեկուն ներշնչեալ համարածը ուրիշ մը կրնայ ժխտել, եւ փոխադարձաբար: Մինչդեռ սրբազան Գիրքերը Աստուածաշունչ են՝ մենք ուզենք թէ չուզենք: Աստուած

Երեմիա մարգարեին բերնով կ'ըսէ . *«Իմ խօսքս ունեցողը ճշմարտութեամբ թող իմ խօսքս խօսի»* (Եր 23.28): Իսկ Պետրոս առաքեալ մարգարեութեանց մասին խօսելով կը յայտարարէ. *«Չմոռնաք բնաւ, որ ոեւէ մէկը ինքն իրմէ չի կրնար բացատրել Սուրբ Գիրքերուն մարգարեութիւնները, որովհետեւ մարգարեութիւնները բնաւ մարդոց կամքին ծնունդը չեն, այլ Սուրբ Հոգիին մղումով էր որ Աստուծոյ մարդիկը խօսեցան զանոնք»* (Բ.Պտ 1.20-21):

4.- ՍՈՍԿ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՄՂՈՒՄԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ:
Նորագոյն ժամանակներուն կան նաեւ անհատ աստուածաբաններ կամ մտածողներ, որոնց տեսակէտով՝ Աստուածաշունչին մէջ չկայ իսկական իմաստով աստուածային ներշնչում: Անոնք Աստուծոյ կողմէ ուղղակի յայտնութիւն չեն ընդունիր: Ներշնչականութիւնը կը հասկնան պարզապէս իբրեւ մղում մը Աստուծոյ կողմէ, բայց իրականին մէջ Աստուածաշունչը իրենց համար կը ներկայանայ իբրեւ զուտ մարդկային հեղինակութիւն: Աստուածաշունչին մէջ յաճախակիօրէն ակնարկուած Սուրբ Հոգիին դերը կը դիտեն պարզապէս իբրեւ օժանդակութիւն մը, որ մարդկային հեղինակը ճշմարտութենէն դուրս չգայ մտածումի եւ խօսքի իր ընտրութեան մէջ:

Հետեւաբար, այս տեսութեան համաձայն՝ չկան «աստուածային» կամ «աստուածաշունչ» գիրքեր: Հին եւ Նոր Կտակարանները մարդկային միտքով ու ձեռքով գրուած են, հոգեւոր դաստիարակութեան մը մարդկային մտահոգութենէն առաջնորդուած:

5.- ՃՇՄԱՐԻՏ ՆԵՐՇՆՉԱԿԱՆՈՒԹԻՒՆ: Վերոյիշեալ տեսակէտներուն միջինն է հինգերորդ, Հայ Եկեղեցւոյ կողմէ ընդունուած սա տեսակէտը, որ Աստուծոյ ամբողջական ներշնչումը ճանչնալով հանդերձ ընդհանուր Աստուածաշունչին եւ անոր ամէն մէկ գիրքին համար,

նկատի կ'առնէ նաեւ իւրաքանչիւր գրողի առանձնայատկութիւնները, որոնք անձին անհատականութեան, անոր ուսումնական պատրաստութեան, իր ժամանակին եւ ընկերային միջավայրին բնական բերումները, անոնց խառնուածքին ու մտածողութեան յատուկ տարրերն են:

Այսպէս, օրինակ, Կորնթոսի եկեղեցիին իր թելադրութիւնները ըրած աստէն, Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Մակայն, ամուրիներուն եւ այրիներուն կ'ըսեմ.- Աւելի լաւ կ'ընեն՝ եթէ ինձի պէս մնան. բայց եթէ չեն կրնար տոկալ՝ թող ամուսնանան, որովհետեւ նախընտրելի է ամուսնանալ քան ցանկութեամբ ետայ: Իսկ ամուսնացեալ զոյգերուն հետեւեալ պատուէրը կու տամ, ո՛չ թէ ես, այլ Տէրը.- Ուեւէ կին իր ամուսինէն թող չբաժնուի. իսկ եթէ բաժնուի, կա՛մ առանց ամուսնութեան թող ապրի եւ կամ դարձեալ հաշտուի իր ամուսինին հետ: Նոյնպէս, ուեւէ այր իր կինը թող չձգէ: Միւսներուն ե՛ս կը պատուիրեմ, ո՛չ թէ Տէրը.- Եթէ ուեւէ հաւատացեալ եղբայր ունի անհաւատ կին մը որ կ'ուզէ իր հետ ամուսնացած մնալ, թող չբաժնուի իր կնոջմէ:» Այլապէս, իւրաքանչիւրը թող ապրի Աստուծմէ իրեն տրուած շնորհքին համաձայն, ինչպէս որ էր՝ երբ Աստուած զինք կանչեց: Այսպէս կը պատուիրեմ բոլոր եկեղեցիներուն:» Բայց ես՝ իբրեւ Տիրոջմէ ողորմութիւն գտած մէկը, որուն կարելի է վստահիլ, հետեւեալ խրատը կու տամ.- Կը խորհիմ որ իրենց վիճակը լաւագոյնն է:» (Ա.Կր 7.8-12): Եւ քիչ մը անդին ամուսնութեան վերաբերող այս հաստուածը կը փակէ՝ ըսելով. «Ուեւէ ամուսնացած կին ազատ չէ, որքան աստէն որ ամուսինը ողջ է. իսկ ամուսինին մահէն ետք ազատ է, որու հետ որ ուզէ՝ կ'ամուսնանայ. միայն թէ՛ քրիստոնէայի մը հետ: Բայց աւելի երանելի կ'ըլլայ՝ եթէ տուած խրատիս հետեւի եւ մնայ այնպէս՝ ինչպէս որ է հիմա: Եւ կը խորհիմ որ Աստուծոյ Հոգին է որ այսպէս ըսել կու տայ ինձի» (Ա.Կր 7.39-40): Ինչպէս պարզօրէն կը տեսնուի, առաքեալը փոխն ի փոխ կը յիշեցնէ

Տիրոջ խօսքերը կամ պատուերները, որոնք բացարձակ արժեք է անփոփոխ նկարագիր ունին, եւ պարտադիր են, մինչդեռ իր անձնական թելադրութիւնները կը զանազանէ միշտ, անուղղակիօրէն նշելով՝ թէ անոնք անփոփոխելի չեն եւ ուստի պարտադիր ալ կրնան չըլլալ:

Տակաւին, ինչպէս վերը ակնարկեցինք, կան լեզու եւ ոճի հարցեր, կամ զուտ անձնական հետաքրքրութիւններ, կամ մօտեցումներ, որոնք միայն գրողին անհատականութեամբ կը բացատրուին, մինչդեռ մեքենական արձանագրութեան պարագային զանոնք պիտի չգտնէինք Աստուծոյ խօսքին մէջ: Տանք քանի մը պարզագոյն օրինակներ.-

Ա.- Նոր Կտակարանի բոլոր գիրքերն ալ գրուած են Յունարէնով, եւ սակայն նոյն լեզուն չէ որ կը գտնենք բոլորին մէջ. ոմանք աւելի ժողովրդական եւ անպաճոյճ լեզուով մը գրուած են, ուրիշներ՝ աւելի մաքուր ու գեղեցիկ, աւելի բարձրաճ Յունարէնով: Եւ շատ պարզ է, որ յաճախ անիկա կախում ունի արձանագրող անձին ուսումնական պատրաստութենէն: Յատկապէս մաքուր ու գեղեցիկ Յունարէն մը կը գտնենք ծագումով Յոյն Ղուկաս Աւետարանիչի երկու գրութեանց մէջ, եւ Եբրայեցիներուն նամակին մէջ, որ կը վերագրուի ծագումով Յոյն հեղինակի մը (Ապողո՞ս, Սիդուանո՞ս, Կղեմէս Հռոմայեցի՞):

Բ.- Մատթէոսի Աւետարանին մէջ «Աստուծոյ արքայութիւն» բացատրութեան փոխարէն միշտ կը գտնենք «երկինքի արքայութիւն» բացատրութիւնը (Մտ 3.2 եւ 4.17 հմմտ Մր 1.15: Մտ 5.3 հմմտ Ղկ 6.20: Մտ 8.11 հմմտ Ղկ 13.29: Մտ 10.7 հմմտ Ղկ 9.2: Մտ 13.11 հմմտ Մր 4.11 եւլն), որովհետեւ Մատթէոս իր Աւետարանը կը գրէ Հրեական մտայնութեամբ՝ Հրեայ ընթերցողներու համար, որոնք առհասարակ զգոյշ են եւ կը խուսափին Աստուծոյ անունը շատ բերան առնելէ, եւ «երկինք» բառը կը գործածեն «Աստուած» ըսելու փոխարէն:

Գ.- Մարկոսի Աւետարանին մէջ յաճախակի կերպով կը գտնենք նշումներ՝ Յիսուսի մարդկային երեսը շեշտող, ինչ որ համատեսական միւս Աւետարաններուն՝ Մատթէոսի եւ Ղուկասի համապատասխան բաժիններուն մէջ չենք գտներ: Այսպէս, որոշ պարագայի մը Յիսուս «կը սրդողի» իր աշակերտներուն դէմ, որոնք մանուկներուն արգելք կ'ուզեն ըլլալ (10.14: Հմմտ Մտ 19.14), «կը զարմանայ» Նազարէթցիներու անհաւատութեան վրայ (6.6: Հմմտ Մտ 13.58), եւ նոյնիսկ «չի կրնար» այնտեղ հրաշք գործել (6.5: Հմմտ Մտ 13.58), եւլն:

Դ.- Դարձեալ Մարկոսի Աւետարանին մէջ կը գտնենք գործածութիւնը բազմաթիւ Լատիներէն բառերու (Յունարէն տառադարձութեամբ) կամ ոճերու, մինչ միւս երկու Աւետարաններուն մէջ չենք գտներ: Այսպէս.- Դահիճ բառին համար փոխանակ գործածելու Յուն. բառը՝ «վասանիսթի՛ս» [Βασανιστης] (Մտ 18.34), կը գործածէ «սփեքուլա՛թոր» [σπεκουλατορ] [Լատ. speculator] բառը (Մր 6.27): Լումայ բառին համար փոխանակ գործածելու Յուն. «լեփթո՛ս» [λεπτος] բառը (Ղկ 21.2), կը գործածէ «քոտրա՛նթիս» [κοδραντης, Լատ. quadrans] բառը (Մր 12.42): Կամ հարիրապէտ բառին համար փոխանակ ըսելու «էքաթոնթա՛րչիս» [εκατονταρχης] (Մտ 27.54: Ղկ 23.47), կը գործածէ «քենթրի՛ոն» [κεντυριον, Լատ. centurion] (Մր 15.39), եւլն:

Ե.- Ղուկասի Աւետարանին մէջ չենք գտներ Արամերէն այն բառերը, որոնք Մատթէոսի եւ Մարկոսի գրիչին տակ կ'երեւին: Ղուկաս անոնց տեղ կը գործածէ համապատասխան Յունարէն բառերը: Այսպէս, օրինակ, փոխանակ ըսելու «դպիր», տեղ-տեղ կը գործածէ «օրինական» [«նոմիքո՛ս» νομικος] (Ղկ 7.30, 10.25, 11.45-46 եւ 52, 14.3: Հմմտ Մտ 23): Փոխանակ խաչելութեան վայրին Արամերէն «Գողգոթա» անուանումը տալու, կու տայ միայն Յունարէն

թարգմանութիւնը՝ «Գանկ» կամ «Գագաթ» [«Քրանիոն՝ն», κρανιον] (Ղկ 23.33: Հմմտ Մտ 27.33: Մր 15.22), եւլն:

Զ.- Դարձեալ, իր Յունական մտածողութեամբ՝ Ղուկաս ո՛չ միայն արձանագրող մըն է իր գտած տեղեկութիւններուն կամ Աստուծոյ յայտնութեամբ տրուածներուն, այլ նաեւ կը ստուգէ եւ ապա կը դասաւորէ, կը կարգաւորէ նիւթերը՝ ժամանակագրական կարգով թէ այլ առաջադրանքով մը (տե՛ս Ղկ 1.3, Գրծ 2.36, 18.25շ, 21.34, 22.30, 23.15 եւ 20, 24.22, 25.26):

Է.- Դարձեալ, Նոր Կտակարանի գրողներուն մէջ Ղուկաս գրեթէ միակն է, որ հիւանդութիւններուն ճիշդ անուանումները կու տայ, ճշգրիտ ախտաճանաչումները կը կատարէ, եւ բժշկութեան կապակցութեամբ ճշգրիտ եզրերը կը գործածէ (Ղկ 4.40 հմմտ Մտ 8.16, Մր 1.32-34, Գրծ 3.7-8, 28.8-9 եւլն): Եւ ասիկա բնական է, եթէ յիշենք՝ որ ինք զբաղումով բժիշկ մըն է:

Ը.- Եթէ բաղդատենք Պօղոս առաքեալի եւ Յովհաննէս առաքեալի նամակները, պարզ ու յստակ կերպով կը տեսնենք անհատական խառնուածքի տարբերութիւնը: Մինչ առաջիններուն մէջ կը յայտնուի Պօղոսի բուն նկարագիրը, երկրորդներուն մէջ որոշապէս կը պատկերանայ Յովհաննէսի քաղցրաբարոյ նկարագիրը:

Անսահմանօրէն կարելի է երկարել շարքը այսպիսի դիտողութեանց, որոնք կը վկայեն ի նպաստ արձանագրող հեղինակներու անհատական տարբերութեանց: Եւ այս ճշմարտութիւնը իր կարգին կը վկայէ, թէ Աստուծոյ խօսքին ներշնչումը երբեք ալ մեքենական չէ, եւ ուստի անիկա չ՛ոչնչացներ մարդուն անհատականութիւնը: Ընդհակառակը, Աստուած իր պատգամը կու տայ մարդուն, յարգելով հանդերձ մարդուն անձը, անհատական եւ ժամանակակից հետաքրքրութիւնները, ազգային պատկանելութիւնը, մշակութային ժառանգութիւնը, լեզուն ու ոճը:

Այդ բոլորը չեն մթագներ Աստուծոյ պատգամը, այլ ընդհակառակը, զայն աւելի մատչելի եւ խօսուն կը դարձնեն ժամանակակից մարդուն, թոյլ տալով որ Աստուծոյ խօսքը իր անմիջական ներգործութիւնը ունենայ անոնց վրայ:

Միւս կողմէ, այս պարագան կրնայ իր կարգին ապացոյց դառնալ աստուածային ներշնչումի, եթէ նկատի ունենանք, որ արձանագրող հեղինակներէն շատերը իրենք անուսում եւ անգրագէտ մարդիկ էին, եւ իրենց մտաւորական կարողութիւններով երբեք ալ ի վիճակի պիտի չըլլային արտադրել այն պատգամը որ մեզի կը ներկայացնեն. բայց որոնք Աստուծմէ իրենց ստացած պատգամը փոխանցեցին եղածին պէս, ծայրայեղ նախանձախնդրութեամբ եւ կարելի բժախնդրութեամբ, եւ, որ կարելորն է, անառարկելի հեղինակութեամբ:

Աստուած իր յայտնութիւնը կու տայ եւ իր պատգամները կը թելադրէ անկատար մարդոց, որոնք իրենց անձին յատուկ իրայատկութիւնները պահելով հանդերձ՝ այդ յայտնութիւնն ու պատգամները կ'արտաբերեն (յաճախ անոնք կ'արձանագրուին ուրիշներու կողմէ, օրին կամ յաջորդ սերունդին կողմէ, ինչպէս Յիսուսի ուսուցումներուն պարագային եւս) կամ կ'արձանագրեն՝ միշտ Աստուծոյ առաջնորդութեամբ, այնպէս որ անոնց մէջ յայտնութիւնը զերծ է մարդկային միտքին յատուկ սխալներէն: Իսկ այս անսխալականութիւնը իր կարգին մեծագոյն ապացոյցներէն մէկն է Աստուածաշունչ մատեանի աստուածային ներշնչականութեան եւ բացարձակ հեղինակութեան:

ՀԱՄԿՆԱՆՔ ՄԵՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԸ

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ, ԿԱՌՈՅՑԸ ԵՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Մեր Սուրբ Պատարագը այսօր կը ներկայանայ իբրև գեղեցիկ ու կատարեալ ամբողջութիւն մը, ինչպէս մեզի՝ այնպէս ալ օտարներուն համար: Եւ փաստօրէն, այդ օտարներէն մէկը, առիթով մը ներկայ ըլլալէ ետք մեր Պատարագի քառաձայն շքեղ երգեցողութեան, ըսած է՝ թէ հիանալի «օրաթորիօ» մըն է ան: Կարծէք մէկ հեղինակի ձեռքով, մէկ հօր ներշնչումով ու բացառիկ ճաշակով գործ մը ըլլար:

Եւ սակայն ճշմարտութիւնը այն է, որ Պատարագը եկեղեցական ռեւէ ուրիշ արարողութեան չափ, եւ թերեւս բոլորէն աւելի, փոփոխութեանց, կամ աւելի ճիշդ՝ աստիճանական զարգացման ենթարկուած է:

Դժուար ու երկար պիտի ըլլար այդ բոլոր փոփոխութեանց մանրակրկիտ պատկերը ներկայացնել: Բայց շատ հպանցիկ ձեւով մը կարելի է հետեւեալ քանի մը հանգրուանները ուրուագծել:

1.- Քրիստոսէ հաստատուած Խորհուրդը՝ իր պարզագոյն ձեւով ու բառերով:

2.- Առաքեալներ ուր որ գացին՝ «Հացի բեկանումը» կատարեցին անշուշտ, խորհրդանշական այդ արարքէն առաջ պատմելով չարչարանքներու եւ խաչի մահուան նախօրեակին Քրիստոսի վերջին Ընթրիքը իր աշակերտներուն հետ, եւ վերարտադրելով Քրիստոսի արտասանած բառերը, այնպէս ինչպէս անոնք դրոշմուած էին իրենց միտքերուն մէջ: Հացի բեկանումը անշուշտ կը կնքուէր գոհաբանական աղօթքով եւ հաւանաբար գոհաբանական մէկ-երկու Սաղմոսներով:

3.- Առաքելներէն ետք, տեղական իւրաքանչիւր եկեղեցի շարունակեց Սուրբ Պատարագը կատարել իր այդ պարզագոյն ձեւին մէջ: Պատարագողը կ'ըլլար տեղոյն Եպիսկոպոսը, այսինքն՝ տեղական եկեղեցիին վերատեսուչը, եւ եթէ քահանաներ կային՝ անոր կողքին կանգնած կը սպասարկէին:

Այն բանաձեւը որ առաքելները սորված էին, կը կրկնէին գրեթէ բառացի, կամ թեթեւակի ազատութեամբ մը: Եւ շուտով, 2-րդ դարու սկիզբներէն, այդ բանաձեւերը գրի առնուեցան, ասանդութիւնը աւելի ամուր պահելու համար: Բայց պարտադիր չէր անպայման այդ բանաձեւը կրկնել: Այն եպիսկոպոսները, որոնք շնորհքը ունէին ազատ կերպով աղօթելու, անոնք իրենց բառերով եւ իմաստի նոր ճոխացումներով կրնային խորհուրդը կատարել:

4.- Պատարագի խորհուրդը 3-րդ եւ 4-րդ դարերուն նոր զարգացումներ ապրեցաւ: Սկզբնական մէկ եւ միակ աղօթքը շրջանակուեցաւ ուրիշ աղօթքներով, խնդրանքներով, մաղթանքներով, յիշատակութիւններով, գոհաբանական բառերով կամ երգերով: Եւ առաքելական ծագում ունեցող տարբեր եկեղեցիներու մէջ կը տեսնենք երեւան գալը տարբեր պատարագներու, որոնք նոյն կորիզը ունենալով հանդերձ՝ իրենց զարգացման մէջ շատ տարբեր են իրարմէ:

Այսպէս, օրինակ, 3-րդ դարուն արդէն Երուսաղէմի մէջ մշակուած էր Պատարագ մը, որ կը կրէ Յակոբոս առաքելի անունը: Մշակումը Առաքելինը չէ անշուշտ, բայց անոր կորիզը կու գայ նոյնինքն Առաքելէն, որ Երուսաղէմի եկեղեցիին առաջին եպիսկոպոսն էր: Արեւելքի բոլոր պատարագներուն ալ սկզբնաղբիւրը Սուրբ Յակոբոս առաքելի այս Պատարագն է:

Եգիպտոսի մէջ՝ Աղեքսանդրիա, յառաջ եկաւ ուրիշ Պատարագ մը, որ այդ եկեղեցիին հիմնադիր առաքելին՝ Սուրբ Մարկոսի անունով կը կոչուի: Արեւմուտքը ունեցաւ իր Պատարագները, որոնք, զիրենք խմբագրող

եպիսկոպոսներուն կամ եկեղեցիներուն անունով ճանչցուեցան (Ամբոսեան Պատարագ, Կելասեան Պատարագ, Գրիգորեան Պատարագ, Գաղղիական Պատարագ) եւն:

Արեւելքի պատարագներու մշակման ամենէն բեղմնաւոր դաշտը եղաւ Կապադովկիան, ուր Սուրբ Բարսեղ Կեսարացի մշակեց ու խմբագրեց իր անունով ծանօթ Պատարագը, իսկ Գրիգոր Նազիանզացի, «Աստուածաբան» մականունաւոր, Պատարագի չորս տարբեր խմբագրութիւններ հրատարակեց:

Անտիոքի առաքելական աթոռին տիեզերահռչակ Հայրապետը՝ Սուրբ Յովհան Ոսկեբերան, ի՛նք եւս Բարսեղ Կեսարացիի խմբագրած Պատարագը նոր մշակումի ենթարկելով խմբագրեց Պատարագ մը, որ ցարդ Յոյն կամ Բիւզանդական բոլոր եկեղեցիներուն մէջ գործածուող Պատարագն է:

Վերոյիշեալ անուններէն ոմանք կարելոր են մեզի համար, որովհետեւ սերտօրէն կ'առնչուին մեր Պատարագի պատմութեան:

5.- Ի՞նչ էր կացութիւնը Հայաստան աշխարհի մէջ: Պետք է գիտնալ, որ եթէ այսօր մէկ եւ միակ Պատարագ մը ունինք մեր բոլոր եկեղեցիներուն մէջ, այդպէս չէր սակայն 4-րդ եւ 5-րդ դարերուն: Կարելիութիւնը չունինք խօսելու Սուրբ Գրիգոր Լուսաւորիչէն առաջ տիրող կացութեան մասին: Բայց 4-րդ դարը կը բացուի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչով եւ մեր եկեղեցւոյ ծիսական ու նուիրապետական կազմակերպումով:

Լուսաւորիչ Հայրապետը Կապադովկիայէն ու Եդեսիայէն իրեն հետ բերաւ ո՛չ միայն քարոզիչներ, այլ վստահաբար նաեւ ծիսական-պաշտամունքային եւ աստուածաբանական երկեր, որոնք Յունարէն եւ Ասորերէն էին հարկաւ: Ծիսական գիրքերու կարգին պիտի ըլլային բնականաբար Պատարագը եւ ժամակարգութեան բաժինները:

Թէ ի՞նչ Պատարագ բերաւ Սուրբ Գրիգոր Կեսարիայէն, դժուար է ըսել: Վարդան Վրդ. Հացունի կը հաստատէ. *«Առաջին Պատարագամատոյցը որ Հայաստանեայց Եկեղեցին գործածեց, Սուրբ Բարսեղ Կեսարացիին գրածն էր»³⁴*: Բայց որոշապէս ասիկա ճիշդ չի կրնար ըլլալ: Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի ժամանակ տակաւին Սուրբ Պատարագի Բարսեղեան խմբագրութիւնը գոյութիւն չունէր: Յովսէփ Վրդ. Գաթըրճեան, Հայոց Պատարագամատոյցին մեծագոյն ուսումնասիրողը, կ'ենթադրէ, որ մինչեւ 4-րդ դարու վերջին քառորդը, այսինքն մինչեւ Բարսեղ Կեսարացիի Պատարագին Հայաստան բերուիլը, նախա-Նիկիական Պատարագներէն մէկը կը գործածուէր Հայաստանի մէջ, (ամենայն հաւանականութեամբ, Սուրբ Յակոբոս առաքելի Պատարագը), կամ՝ Ասորերէն Պատարագամատոյց մը, որ սակայն Հայերէնի չթարգմանուեցաւ 5-րդ դարուն, մինչդէռ Բարսեղ Կեսարացիին խմբագրած Պատարագը գրեթէ գիտէն անմիջապէս ետք թարգմանուեցաւ եւ ամբողջ 5-րդ դարուն մեր մէջ գործածուածը անիկա եղաւ³⁵: 4-րդ դարու վերջին քառորդին, Սուրբ Բարսեղ Կեսարացիի եւ Սուրբ Գրիգոր Նազիանզացիի չորս պատարագները մուտք գործեցին Հայաստան: Նազիանզացիի Պատարագի խմբագրութիւններէն չորրորդը, սխալմամբ վերագրուած Սուրբ Աթանաս Աղեքսանդրացի Հայրապետին, աւելի մեծ ընդունելութիւն ու տարածում գտաւ Հայաստանի մէջ:

5-րդ դարուն այս երեք Պատարագներն ալ (Յակոբոս Առաքելի, Բարսեղ Կեսարացիի, Գրիգոր Նազիանզացիի) կային մեր երկրին մէջ, եւ ասոնց վրայ շուտով աւելցաւ նաեւ Սուրբ Յովհան Ոսկեբերանի խմբագրածը:

³⁴ Պատարագամատոյց ըստ արարողութեան Հայաստանեայց Եկեղեցոյ, Վենետիկ, ի Վանս սրբոյն Ղազարու, 1936, էջ 5-6:

³⁵ Սրբազան Պատարագամատոյցը Հայոց, հրատարակեալ հանդերձ յաւելուածով՝ ի Յ. Յակովբոս Վ. Տաշեան, Վիեննա, Մխիթարեան Տպարան, 1897, էջ95-96:

Պատարագամատոյցին հայացումը անշուշտ տեղի ունեցաւ 5-րդ դարուն: Կարելի է ենթադրել սակայն որ կարգ մը մասեր բերանացի թարգմանուած էին դեռ 4-րդ դարէն: Բայց հիմնական եւ ամբողջական թարգմանութիւնները կատարուեցան Սուրբ Յովհան Մանդակունի Հայրապետին ձեռքով: Հայացում ըսելով պարզապէս Յունարէն բնագիրներուն թարգմանութիւնը չենք հասկնար: Մանդակունի Հայրապետ ո՛չ միայն համադրեց Բարսեղ Կեսարացիի, Գրիգոր Նազիանզացիի (Աթանաս Աղեքսանդրացի անունով ծանօթ) եւ Յովհան Ոսկեբերանի պատարագները, այլ նաեւ որոշ պատշաճեցումներ ու լրացումներ կատարեց, որոնք եկան Պատարագի բնագիրին Հայկական դրոշմ մը տալու:

6.- Յովհան Մանդակունիի ձեռքով խմբագրուած Պատարագամատոյցը իր հիմնական ձեւով պահուեցաւ յաջորդ դարերուն, ինչպէս ունինք վկայութիւնը 10-րդ դարուն՝ Խոսրով Անձեւացեաց Եպիսկոպոսի մեկնութենէն:

7.- 12-րդ դարուն Պատարագամատոյցը նոր եւ զգալի փոփոխութիւններ կը կրէ Սուրբ Ներսէս Շնորհալիի եւ Սուրբ Ներսէս Լամբրոնացիի ձեռքով:

Լամբրոնացիի բերած հիմնական փոփոխութիւնը Պատարագի մուտքի բաժինին յաւելումն էր անոր վրայ: Այսինքն, պատարագիչին զգեստաւորման աղօթքները, ապա եկեղեցի մուտքը, խորանին առջեւ ձեռքերու լուացումը, մեղքերու խոստովանութիւնը, եւ ի վերջոյ 26-րդ Սաղմոսին արտասանութեամբ խորան բարձրանալը, (հաւանաբար նաեւ թափօր դառնալը). այս բոլորը ուղղակիօրէն առնուած են ժամանակի Լատինական Պատարագէն, որ Լատին կրօնաւորներ իրենց հետ բերած էին Արեւելք, եւ կը գործածուէին Անտիոքի եւ շրջակայքին մէջ, ինչպէս նորահաստատ Լատինական վանքերու մէջ: Լամբրոնացի զեղեցիկ գտաւ անոր մուտքի բաժինը եւ որդեգրեց զանիկա եւ այնուհետեւ անիկա պահուեցաւ մեր Պատարագին մէջ:

8.- 13-րդ դարուն է որ Պատարագին սկիզբը կ'աւելնայ՝ զգեստաւորման երգը՝ «Խորհուրդ խորին», որուն հեղինակն է Խաչատուր Վրդ. Տարօնեցի:

9.- 12-15 դարերուն է որ Պատարագին լրացուցիչ տաղեր ու մեղեդիներ կը յօրինուին, մեծ մասամբ մեզի անծանօթ մնացած հեղինակներու կողմէ:

10.- Պատարագին վրայ վերջին յաւելումները կու գան 17-րդ եւ 18-րդ դարերէն: 17-րդ դարուն Պատարագի աւարտին աւելցաւ Աւետարանի ընթերցումը, որ նախապէս չկար, եւ Լատինական ազդեցութեամբ ներս սողոսկեցաւ, չենք գիտեր՝ որո՞ւ կողմէ: Իսկ վերջին յաւելումը 18-րդ դարու երկրորդ կէսէն եկող՝ «Տէր Ողորմեա»ն է: Սա հեղինակութիւնն է Միմէռն Երեւանցի Կաթողիկոսին (1763-1780), եւ թեպէտ սկզբնապէս գրուած չէր եկեղեցական արարողութեանց մաս կազմելու համար, բայց ա՛յնքան սիրուեցաւ եւ մանաւանդ ժողովուրդին սրտին դպաւ, որ աստիճանաբար մտաւ արարողութեանց կարգին, եւ ի վերջոյ նաեւ Պատարագին: Թէ ե՞րբ, ճշգրիտ կերպով չենք գիտեր:

Ի՞նչ է Պատարագին կառոյցը:

Քրիստոսի հաստատած ձեռով՝ անիկա մէկ եւ միակ առանցք մը ունէր, որ նուիրագործումն էր հացին ու գինիի բաժակին, իր աշակերտներուն ընծայուած՝ իբրեւ իր Մարմինն ու Արիւնը: Եւ այսպէս մնաց անիկա՝ որքան ատեն որ առաքեալներն ու Քրիստոսի բոլոր հետեւորդները տակաւին կը շարունակէին տաճար կամ ժողովարան երթալ իրենց առօրեայ աղօթքներուն համար, իսկ շաբաթը մէկ առանձինն կը հաւաքուէին «հացը բեկանելու», այսինքն՝ Սուրբ Պատարագի խորհուրդը կատարելու համար:

Ժամանակ մը ետք, երբ քրիստոնէական համայնքը անջատուեցաւ Հրեական տաճարէն ու ժողովարաններէն, Սուրբ Պատարագին եկաւ միանալու ուրիշ տարր մը, որ յատուկ էր ժողովարաններու պաշտամունքին, եւ որուն

առանցքը կը կազմէին աստուածաշնչական ընթերցումները, շրջանակուած Սաղմոսներով եւ կարճ աղօթքներով:

Այսպէս, Պատարագը ունեցաւ երկու մաս.- Առաջինը՝ Աստուծոյ խօսքին մատուցումը եւ անով հոգեւոր դաստիարակութիւնն ու պաշտամունքը, իսկ երկրորդը՝ Քրիստոսի զոհագործման խորհուրդին մատուցումը: Պատարագը իր անունը կ'առնէ այս երկրորդ իրողութենէն: Հայերէնի մէջ «Պատարագ» բառը կը նշանակէ «ընծայ» կամ «նուէր». սակայն աստուածաշնչական իր իմաստին մէջ՝ այդ ընծան առհասարակ Աստուծոյ մատուցուած զոհ մըն էր, եւ ուստի «Պատարագ» բառը ստացած է նաեւ «զոհ» կամ «զոհագործում» նշանակութիւնը:

Պատարագը հետեւաբար, մեր մեղքերուն քաւութեան համար խաչին վրայ Քրիստոսի զոհագործումին յաւերժացումն է, որ բոլոր հաւատացեալները կ'ընդունին շնորհակալութեամբ, հաւատքի խոր երախտագիտութեամբ. ասոր համար ալ Սուրբ Պատարագը յաճախ բնորոշուած է իբրեւ «զոհաբանութիւն», Յունարէն՝ Ευχαριστια, որ տառադարձութեամբ անցած է ուրիշ լեզուներու, ինչպէս Ֆրանսերէնի (Eucharistie) կամ Անգլերէնի (Eucharistia): Հետաքրքրական է, որ մեր Պատարագամատոյցը զայն կը սահմանէ որպէս «Պատարագ օրհնութեան», որ կը նշանակէ «շնորհակալութեան ընծայ», կամ «զոհութեան ընծայ», ինչպէս Փաւստոս Բիւզանդ զայն կը կոչէ «Գոհութեան Պատարագ»:

Աւելի ուշ, վերոյիշեալ հիմնական երկու բաժիններուն վրայ աւելցան երկու ուրիշ բաժիններ եւս, մէկը սկիզբը՝ իբրեւ պատրաստութիւն, իսկ միւսը աւարտին՝ իբրեւ եզրափակում: Այսպիսով Պատարագը ունեցաւ չորս մասեր, ինչպէս մեր այժմու Պատարագին մէջ կը տեսնենք:

Առաջին մաս.- ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Կը սկսի «Խորհուրդ խորին» երգով եւ կ'երկարի մինչեւ թափօրին աւարտը:

Երկրորդ մաս.- ՃԱՇՈՒ ԺԱՄ, կամ ԵՐԱԽԱՅԻՑ ՊԱՏԱՐԱԳ

Կը սկսի քահանային «Օրհնեալ թագաւորութիւնն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ» օրհնութեամբ, եւ կ'երկարի մինչեւ «Սուրբ Սուրբ»ը:

Երրորդ մաս.- ԲՈՒՆ ՊԱՏԱՐԱԳ, կամ ՀԱԻԱՏԱՅԵԼՈՑ ՊԱՏԱՐԱԳ

Կը սկսի «Սուրբ Սուրբ» երգով, եւ կ'երկարի մինչեւ Սուրբ Հաղորդութեան բաշխումը: Ճիշդ այս պատճառով ալ, յաճախ այս երրորդ մասը կը կոչուի նաեւ Սուրբ Հաղորդութեան Խորհուրդ:

Չորրորդ մաս.- ԳՈՆՀԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՁԱԿՈՒՄ

Կը սկսի «Լցաք» երգով, եւ կ'աւարտի քահանային արձակման օրհնութեամբ:

1.- ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Երկու տեսակ կամ երկու տարբեր պատրաստութիւններ կան: Առաջին պատրաստութիւնը պատարագիչ անձին պատրաստութիւնն է, որ տեղի կ'ունենայ յատուկ աղօթքներով եւ յատուկ զգեստաւորումով, աւանդատան մէջ, առհասարակ ժողովուրդին աչքէն հեռու: Չզեստի իւրաքանչիւր բաժին ունի իրեն յատուկ կարճ աղօթք մը որ զգեստաւորուող քահանան կ'արտասանէ: Այս աղօթքները Սուրբ Յովհան Ոսկեբերանի Պատարագէն առնուած են:

Չզեստաւորումը անցեալին կ'ըլլար Պատարագի խորհուրդէն առաջ, մեկուսի, ինչպէս նշեցինք: Ներկայիս զգեստաւորումը դարձեալ մեկուսի կը կատարուի, բայց գրեթէ Պատարագին մաս դարձած է, որովհետեւ 13-րդ դարուն այս զգեստաւորման համար գրուած է նոր երգ մը, որ անկէ ի վեր անբաժանելի մասն է Հայկական Պատարագին: Ատիկա

«Խորհուրդ խորին» երգն է, որ ունի իր հետաքրքրական պատմությունը.-

13-րդ դարուն սկիզբը, երբ Ջաքարե սպասալար իր զինուորական յաջողություններէն ետք նախաձեռնեց նաեւ Հայոց Պատարագի բարեկարգութեան, Լոռի քաղաքին մէջ եկեղեցական ժողով մը գումարել տուաւ, 1208 թուականին. ժողովի հրահրեալներուն մէջ էին նաեւ Հայաստանի ժամանակակից կարեւոր կեդրոններու առաջնորդները՝ Հաղբատի, Անիի, Բջնիի, Դուինի եւ Կարսի եպիսկոպոսները, ինչպէս նաեւ բազմաթիւ ուրիշ վանքերու առաջնորդ վարդապետներ: Այս յատուկ առիթով, Կիլիկիայէն, օրուան Կաթողիկոսէն ղրկուած եկեղեցաձեւ վրանի մը տակ մատուցանել տուաւ հանդիսաւոր Պատարագ մը: Եւ ահա, այս Պատարագին սկիզբը, Հաղարծին Վանքի վանահայր՝ Խաչատուր Տարօնեցի Վարդապետը, որ «հոչակուած էր իբրեւ սուրբ եւ առաքինի, եւ իր գիտութեամբ, մանաւանդ երաժշտական արուեստով», ելաւ եւ անակնկալ կերպով երգեց իր նոր գրած տաղը կամ շարականը՝ «Խորհուրդ խորին» երգը, որ իր խորիմաստ բառերով եւ զեղարուեստականօրէն մեծարժէք ու սքանչելի եղանակով, մէկ անգամէն տպաւորեց ու նուաճեց բոլոր ունկնդիր ներկայները, եւ այնուհետեւ մնաց Պատարագէն անբաժան:

ՄՈՒՏՔ

Զգեստաւորումը լրանալուն, ներկայիս քահանան դուրս կու գայ սուրբ բեմին առջեւ, ուր իր ձեռքերը կը լուայ եւ բոլորին դիմաց համառօտակի կը խոստովանի: Դպիրներ փոխն ի փոխ կը կարդան 100-րդ Սաղմոսը՝ «Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր»: Յետոյ Սուրբ Եկեղեցւոյ նուիրուած կարճ աղօթքէ մը ետք, 43-րդ («Դա՛տ արա ինձ, Տէր») Սաղմոսին արտասանութեամբ պատարագիչը կը բարձրանայ բեմ, սուրբ Սեղանին առջեւ: Այս ամբողջ բաժինը չկար անցեալին, մինչեւ 12-րդ դար: Մինչ այդ զգեստաւորումը

կը կատարուէր ուղղակի Սեդանին առջեւ: Այս միջանկէալ բաժինին յաւելումը եկաւ Լատինական Պատարագին ազդեցութեամբ, եւ մեր մէջ տեղ գտաւ 13-րդ դարէն ետք, որովհետեւ 13-րդ դարուն սկիզբը, Յովհաննէս Արճիշեցիի Պատարագի Մեկնութեան մէջ եւս յիշատակութիւն չկայ այդ մասին:

Նարեկացիի աղօթքները

Եթէ Եպիսկոպոսական պատարագի մը ներկայ եղած ենք արարողութեան սկիզբէն, տեսած պէտք է ըլլանք, որ հազիւ բեմ բարձրացած՝ Եպիսկոպոսը խոյրը գլուխէն կը հանէ, ծունկի կու գայ եւ բազկատարած աղօթք կ'արտասանէ, մինչ դպիրներ կ'երգեն «Ընտրեալդ յԱստուծոյ» տաղը: Եպիսկոպոսը զոյգ աղօթքներ կը կարդայ, երկուքն ալ գրուած Սուրբ Գրիգոր Նարեկացիին կողմէ (Բան ԼԳ. դ. եւ ե.): Բայց Սուրբ Գրիգոր Նարեկացի ինք չէր այդ աղօթքները Պատարագին մէջ փոխադրողը: Հաւանաբար մեծ սուրբին վախճանումէն կարճ ժամանակ մը ետք, անիկա ներառնուեցաւ Պատարագի խորհուրդին մէջ, կարծէք յատուկ կերպով գրուած ըլլար նոյնինքն Պատարագին համար: Զանոնք արդէն կը գտնենք 12-րդ դարու Պատարագամատոյցին մէջ, եւ Սուրբ Ներսէս Լամբրոնացի Եպիսկոպոս անոնց համառօտ մեկնութիւնը կու տայ 1177 թուականին գրած իր «Խորհրդածութիւն Սրբազան Պատարագի» գործին մէջ³⁶: Գալով «Ընտրեալդ» երգին, անիկա դեռ չի յիշուիր Լամբրոնացիի քով, ոչ ալ Արճիշեցիի քով, եւ հաւանաբար աւելի ուշ գրուած է: Ե՛րբ, եւ որով կողմէ: Հաւանաբար 14-15 դարերուն:

ԸՆԾԱՆԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

³⁶ Խորհրդածութիւն Սրբազան Պատարագի, բացատրութեամբ Տեառն Ներսէսի Լամբրոնացոյ Արք.ի Տարսնի Կիլիկեցոյ, Երուսաղէմ, ի տպարանի Սրբոց Յակովբեանց երջանիկ Առաքելոց, 1842, էջ 9-16:

Երկրորդ պատրաստութիւնը, սուրբ ընծաներուն՝ Հացին ու Գինին պատրաստութիւնն է, որ տեղի կ'ունենայ սուրբ Սեղանին վրայ, դարձեալ ժողովուրդին աչքէն հեռու, որովհետեւ վարագոյրը ձգուած կ'ըլլայ: Ի դէպ, անցեալի Պատարագամատոյցներուն մէջ վարագոյրի յիշատակութիւն չկայ, եւ կը թուի թէ պատարագիչը ժողովուրդին դիմաց կը զգեստաւորուէր, եւ Ընծաներու պատրաստութիւնն ալ կը կատարէր ժողովուրդին աչքին դիմաց: Ընծաները, այսինքն Հացը (=Նշխարը) յատուկ աղօթքով կը դրուի մաղզմային վրայ, եւ Գինին նոյնպէս աղօթքով կը լեցուի բաժակին մէջ:

Մինչ պատարագիչը այս պատրաստութիւնը կը կատարէ, դպիրներ մեղեդի մը կամ տաղ մը կ'երգեն: Սեղեդիներ կամ տաղեր երգելու այս սովորութիւնը վստահաբար հին չէ: Անոր յիշատակութիւնը չունինք ո՛չ 12-րդ դարուն՝ Լամբրոնացիին քով, ո՛չ ալ 13-րդ դարուն՝ Արճիշեցիին քով: Ուստի աւելի ուշ մուտք գտած պէտք է ըլլայ:

Պատարագի թափօր

Ընծաներու պատրաստութեան աւարտին, պատարագիչը բուրվառը ձեռք առնելով կը խնկարկէ Ընծաներուն եւ սուրբ Սեղանին, եւ ապա բեմէն կ'իջնէ վար՝ ժողովուրդին մէջ թափօրով դառնալու համար:

Թափօրը կը խորհրդանշէ Հօր Աստուծոյ կամքով Քրիստոսի աշխարհ եջքը եւ փրկագործական առաքելութեամբ մարդոց մէջ շրջիլը, ինչպէս աւելի ուշ երգուող Սրբասացութիւնը՝ «Բագմութիւնք» ցոյց կու տայ՝ *«Ի յերկրի երեւեցաւ եւ ընդ մարդկան շրջեցաւ, զի կեցուսցէ զանձինքս մեր»*: Այս շրջումը կը յատկանշուի քահանային խնկարկումով, որ զոյգ խորհուրդներ ունի: Խունկը առհասարակ խորհրդանիշ է աղօթքի, մանաւանդ՝ Աստուծոյ ընդունելի աղօթքի, «սուրբերո՛ւն» աղօթքին:

Այս խնկարկութեամբ, քահանան սուրբերուն, այսինքն՝ Քրիստոսի ամբողջ Եկեղեցիին աղօթքն է որ կը բերէ մեզի, որուն դիմաց մենք կը խոնարհինք՝ զայն խոնարհութեամբ ընդունելու որպէս նշան, եւ կը խաչակնքենք՝ զայն Քրիստոսով մերը դարձնելու իբրեւ դատակնիք:

Թափօրին միացած այս խնկարկութիւնը նաեւ խորհրդանշականօրէն կ'արտայայտէ բաշխումը այն օրհնութեանց եւ բժշկութեան պարգեւներուն, որ մեր Տէրը սփռեց ամենուրեք, ո՛ր որ շրջեցաւ, մարդոց հաւատքին համաձայն: Եւ մենք խոնարհելով ու մենք մեզ խաչակնքելով՝ նոյն այդ օրհնութիւնը եւ հոգեւոր առողջութիւնն է որ կը խնդրենք:

Այժմու Պատարագին մէջ, թափօրին հետ շարական կ'երգուի: Շարական երգելու այս սովորութիւնը կրնանք վստահաբար ըսել, թէ կու գայ 13-րդ դարէն: Լամբրոնացիի քով անոր յիշատակութիւնը չկայ: Բայց յաջորդ դարուն Արճիշեցիի մեկնութեան մէջ կը գտնենք հետաքրքրական նշում մը՝ *«Եւ [քահանայն] ծխէ լման եկեղեցոյն մինչեւ ցետին ժողովուրդն: Եւ պաշտօնեայքն ասեն շարական զինգոցն՝ մինչեւ քահանայն դառնայ ի խորանն»*³⁷:

2.- ՃԱՇՈՒ ԺԱՄ, կամ ԵՐԱԽԱՅԻՑ ՊԱՏԱՐԱԳ

Մինչեւ հոս, ինչպէս ըսինք, պատրաստութիւնն էր: Այստեղ Պատարագը կը սկսի՝ պատարագիչին կողմէ ամենասուրբ Երրորդութեան ուղղուած փառաբանութեամբ՝

³⁷ Տե՛ս Գաթրճեան, Սրբազան Պատարագամատոյցը Հայոց,® էջ 514ա: Հետաքրքրական է նշել, որ Լամբրոնացիի ալ Պատարագամատոյցին մէջ, ընդօրինակութեան մէջ կ'ա խնկարկութեան աղօթք մը, որ կը յիշեցնէ հետագային գրուած «խնկարկութեան շարական»ը, որ կը սկսի «Յայս յարկ նուիրանաց» բառերով, եւ որուն շարունակութիւնը կը կազմէ շատ ծանօթ «Բարեխօսութեամբ մօր քո եւ կուսի» թափօրի շարականը (տե՛ս Անդ, էջ 525):

«Օրհնեալ թագաւորութիւնն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն»:

Այս մասը «Ճաշու Ժամ» կը կոչուի, որովհետեւ իրականին մէջ առանձին ժամերգութիւն մըն է, որ կը կատարուի կէսօրուան մօտ, եւ որուն հիմնական բաժինը աստուածաշնչական ընթերցումներն են: Նոյն այս մասը կը կոչուի նաեւ «Երախայից Պատարագ»: Երախայ կը կոչուէին նորահաւատները, որոնք տակաւին մկրտուած չէին, եւ մինչեւ իրենց մկրտուիլը պէտք է քրիստոնէական հաւատքը ուսանէին, հաւատքի հիմնական կէտերը սորվէին եւ ապա մկրտուելով՝ համարուէին Եկեղեցւոյ ճշմարիտ անդամ, եւ կարենային հաղորդուիլ Քրիստոսի Մարմինին եւ Արեան: Պատարագի այս բաժինը քրիստոնէական այդ դաստիարակութիւնը փոխանցելու կը ծառայէր, հետեւաբար, առաջին հերթին սահմանուած էր «երախաներուն», թէպէտ ո՛չ միայն անոնց, այլ նաեւ հաւատացեալներուն, ինչպէս քիչ ետք պիտի ըսենք:

Ճաշու Ժամամուտ

Հազիւ Ճաշու Պատարագը սկսած, դպիրները կը ձայնեն օրուան Ժամամուտը, որ նոյն օրուան տօնական խորհուրդը կ'ամփոփէ եւ կ'արտայայտէ (օրինակ՝ սովորական Կիրակիներուն՝ «Միածին Որդի եւ Բանդ Աստուած», որ փրկագործական տնօրինութեանց ամփոփումն է, Ծնունդին՝ «Աստուածածին անհարսնացեալ», Զատիկին՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց», Հոգեգալուստին՝ «Աստուած զքեզ խոստովանիմք, զՍուրբ Հոգիդ, եւ երկիր պագանեմք», Խաչի տօներուն՝ «Առաջի պատուական ամենայաղթ խաչի քոյ», եւլն:

Ճաշու Շարական

Քահանային կողմէ կարճ աղօթքէ մը ետք՝ *«Տէր Աստուած մեր, որոյ կարողութիւնդ անքնին է...»*, դպիրները կ'երգեն

օրուան յատուկ ճաշու շարականը: Ինչպէս անունը ցոյց կու տայ, այս շարականը ճաշու ժամերգութեան յատուկ է, եւ օրուան խորհուրդը կամ յիշատակը կ'արտացոլացնէ (Յարութեան, Համբարձման, Հոգեգալստեան, Վարդավառի, Աստուածածնայ, Խաչի, Ծննդեան, Սրբոց, Ապաշխարութեան) եւլն:

Սուրբ Աստուած

Անմիջապէս կը հետեւի «Սուրբ Աստուած» երգը, որ կը կոչուի նաեւ «երեքսրբեան» կամ «երեքսրբեան փառաբանութիւն», որովհետեւ անով երեք անգամ Աստուծոյ անմատչելի սրբութիւնը կը յայտարարենք: Այս երգը յատուկ է նաեւ մեզ շրջապատող միւս եկեղեցիներուն: Բայց մինչ Արեւելքի եկեղեցիներս զայն կ'երգենք ի դիմաց Քրիստոսի, Բիզանդական եկեղեցին զայն կ'երգէ ի դէմս ամենասուրբ Երրորդութեան: Ասիկա անցեալին բաւական վեճերու եւ նոյնիսկ հակառակութեանց պատճառ հանդիսացած է:

Հետաքրքրական է գիտնալ, սակայն, որ մեր եկեղեցիին համար այս երգը Քրիստոսաբանական ճշմարիտ դաւանութեան արտայայտութիւն մը նկատուած է, եւ զայն կը գտնենք ո՛չ միայն Պատարագին մէջ, այլ նաեւ առաւօտեան եւ երեկոյեան ժամերգութեանց մէջ, եւ, ինչ որ շատ յատկանշական է, նոյնիսկ կարգ մը եկեղեցական հայրերու կամ ժողովներու դաւանական գրութեանց մէջ. որովհետեւ անով կը դաւանինք Քրիստոսի աստուածութիւնը՝ «հօր եւ անմահ», եւ միաժամանակ անոր մարդեղացունը մեզի համար՝ «որ մարմնացար վասն մեր», եւ խաչի վրայ զոհագործումը մեզի համար՝ «որ խաչեցար վասն մեր», եւ կը կնքենք իր ողորմութիւնը խնդրելով:

Մինչ ժողովուրդը կը սկսի «Սուրբ Աստուած» երգել, պատարագիչը Սեդանին վրայէն սուրբ Աւետարանը առնելով կու տայ սպասարկող Սարկաւագին, որ զայն ժողովուրդին ի տես բարձրացուցած՝ հանդիսաւորապէս կը վերաբերէ զայն,

այսինքն՝ խորանին ետեւէն թափօր դառնալով զայն Մեղանին աջակողմէն կը բերէ ձախ կողմը, եւ բեմին յառաջակողմը գալով՝ համբուրել կու տայ դասին մէջ կանգնող հոգեւորականներէն երիցագոյնին (այսօր Աւետարանը համբուրել կը տրուի օրուան ընթերցողին, այսինքն՝ այն անձին որ քիչ ետք մարգարեական եւ առաքելական գիրքերէն պիտի կարդայ): Այս հանդիսաւորութիւնը աննպատակ եւ առանց իմաստի չէ: Աւետարանը Աստուծոյ Խօսքն է: Այս պահուն անիկա ժողովուրդին կը ներկայանայ Աստուծոյ մատով քարեղէն տախտակներուն վրայ գրուած Տասնաբանեայ Պատուիրաններուն պէս, որ Մովսէս մարգարէ Սինա լեռան վրայ Աստուծմէ առնելով բերաւ ժողովուրդին:

Համաշխարհական քարոզ

«Մուրք Աստուած»ին կը յաջորդէ «Համաշխարհային Քարոզ»ը: Եկեղեցական լեզուին մէջ մենք «քարոզ» կը կոչենք Սարկաւագին կողմէ բարձրաձայն եւ եղանակաւոր հրահանգները կամ յորդորները որ անիկա կ'ուղղէ ժողովուրդին, թելադրելով այն՝ ինչ որ ժողովուրդը պէտք է ընէ, ինչպէս օրինակ՝ «Օրթի» [=ոտքի՛], «Աստուծոյ երկրպագեսցուք» [=Աստուծոյ երկրպագենք], «Երկիւղածութեամբ լուարուք» [=երկիւղածութեամբ լսեցէ՛ք], «Ողջո՛յն տուք միմիանց ի համբոյր սրբութեան» [=Մուրք համբոյրով ողջունեցէ՛ք իրար], «Առ դրունս ելէք եւ աղօթեցէ՛ք» [=դուրս ելէք եւ աղօթեցէ՛ք], եւլն, կամ ինչ որ ժողովուրդը պէտք է ըսէ, օրինակ՝ «Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք» [=Դարձեալ խաղաղութիւն աղերսենք Տիրոջմէ], «Ասացուք ամենեքեան միաբանութեամբ» [=բոլորս միաբերան ըսենք], «Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերում դպի՛րք» [=Դպիրներ, Սաղմո՛ս երգեցէք մեր Աստուծոյն], եւլն:

Արդ, այս հանգրուանին Սարկաւագը կը յորդորէ ժողովուրդը, որ Աստուծմէ խնդրէ՝ աշխարհին խաղաղութիւն, եւ սուրբ Եկեղեցիին անսասանութիւն, եւ աղօթէ եկեղեցւոյ պաշտօնէութեան՝ դպիրներուն, սարկաւագներուն, քահանաներուն, վարդապետներուն, եպիսկոպոսներուն ու հայրապետին համար, բոլոր հաւատացեալներուն եւ անոնց հոգիի փրկութեան համար, գերեալներուն, ճամբորդներուն, հիւանդներուն, ուխտաւորներուն եւ հանգուցեալ հոգիներուն համար. մէկ խօսքով՝ ամբողջ եկեղեցւոյ համար, իր զինուորեալ եւ յաղթական բաժիններով:

Ընթերցումներ

Համաշխարհական քարոզէն ետք կը կատարուին աստուածաշնչական ընթերցումները, որոնք Սուրբ Պատարագի խորհուրդին երկու առանցքներէն առաջինը կը կազմեն: Ասիկա, ինչպէս ըսինք, «Աստուծոյ Խօսքին ընծայում»ն է:

Եկեղեցւոյ կեանքին մէջ աստուածաշնչական ընթերցումները միշտ ալ ուսուցողական դեր ունեցած են: Անցեալին, Մովսէսի ձեռքով Օրէնքը եւ մնացեալ ուսուցումները իր ժողովուրդին տալէ ետք, Աստուած Մովսէսի միջոցաւ հրահանգեց քահանաներուն, որ տարուէ տարի այդ օրէնքներն ու ուսուցումները բարձրաձայն կարդացուին ժողովուրդին ներկայութեան, որպէսզի զիտցողները անոր մէջ արմատանան, իսկ չզիտցողները, նորեկները եւ նոր սերունդը լսեն եւ անով դաստիարակուին (Խմբ. Բ.Օր 31.9-13):

Հետագային, ինչպէս արդէն յիշատակեցինք, ժողովարաններու մէջ պաշտամունքային կեդրոնը կը կազմէին աստուածաշնչական ընթերցումները, երբեմն անոնց կցուած բացատրութեամբ եւ կամ պատգամով մը: Քրիստոնէական Եկեղեցին հազիւ տաճարէն ու ժողովարաններէն դուրս եկած եւ անկախացած՝ որդեգրեց

աստուածային ընթերցումներով ինքզինք դաստիարակելու այս կերպը: Եւ ահա, Բուն Պատարագի խորհուրդին կցուած առաջին յաւելումը՝ ընթերցումներու այս բաժինը եղաւ, համահաւասար կարեւորութեամբ:

Կը շեշտենք «համահաւասար կարեւորութեամբ» բառերը, որովհետեւ յաճախ անիրաւ կերպով անտեսուած է կարեւորութիւնը այս բաժինին, որ, սակայն, անհրաժեշտ նախապատրաստութիւնն է Քրիստոսի զոհագործման խորհուրդին: «Ճաշակեցէք եւ տեսէք զի քաղցր է Տէր» պիտի երգենք Պատարագի աւարտին, Սաղմոսին բառերով: Բայց ճաշակումը երկու տեսակի է, նախ միտքով՝ հոգեւոր ճաշակումը Աստուծոյ խօսքին, եւ ապա շրթներով՝ մարմնաւոր ճաշակումը մեր Տիրոջ Մարմինին եւ Արեան: Խորքին մէջ այս երկուքը նոյնն են, երկու տարբեր կերպերով: Երկուքով ալ Աստուծոյ Խօսքը՝ Բա՛նը կը ճաշակենք, մէկը՝ անմարմին վիճակով, իսկ միւսը՝ մեզի համար մարմնացած վիճակով:

Աստուածաշնչական ընթերցումները Աստուծոյ ձայնն է որ լսելի կը դարձնեն մեզի, Աստուծոյ ինքնութիւնը եւ կամքը կը յայտնեն մեզի, եւ մեզ կը պատրաստեն աւելի մեծ յայտնութեան մը՝ զինք դէմ յանդիման տեսնելու քիչ ետք, սուրբ Սեղանին վրայ դրուած, իբրեւ զոհագործուած «Աստուծոյ անարատ Գառնուկը»: Առաջին բաժինը, հետեւաբար, մարդուն հոգեւոր պատրաստութիւնն է Աստուծոյ հետ այս մարմնաւոր հանդիպումին, մինչ երկրորդ բաժինը՝ Աստուծոյ ինքնընծայումն է մեզի, ամբողջ աշխարհի փրկութեան համար:

Մարգարէական եւ առաքելական ընթերցումներ

Մարգարէական եւ առաքելական գիրքերէն քաղուած ընթերցումը կը կատարուի դասին կեդրոնէն, այսինքն՝ «վար»էն՝ ժողովուրդին մէջէն: Ասիկա իր յատուկ իմաստը ունի: Մարգարէներն ու առաքեալները աշխարհի մէջ

ներկայացուցիչը եւ արձագանգն են աստուածային ձայնին, առաջինները իբրեւ «յառաջագոյն տեսանողները» Աստուծոյ Որդւոյն աշխարհ գալուստին եւ մեր փրկութեան, իսկ երկրորդները՝ իբրեւ «աւետաւորներն ու սպասաւորները Բան Աստուծոյ»: Մինչդեռ Աւետարանը պէտք է անպայմանօրէն սուրբ Բեմէն կարդացուի, որովհետեւ անով՝ մարմնացեալ մեր Աստուածը ի՛նք է որ ուղղակիօրէն կը խօսի մեզի: Եւ ճիշդ անոր համար ալ, զայն կարդալէ առաջ Սարկաւազը կը հրահանգէ՝ «Երկիւղածութեա՛մբ լուարուք» (=երկիւղածութեա՛մբ լսեցէք), իսկ ժողովուրդը (ներկայիս՝ դպիրները) կ'ըսէ՝ «Ասէ Աստուած» (=Աստուած կը խօսի):

Փառք քեզ, Տէ՛ր

Աւետարանի ընթերցումէն անմիջապէս ետք ժողովուրդը (դպիրները) կ'աղաղակէ՝ «Փա՛ռք քեզ, Տէր Աստուած մեր»: Նոյն այս փառաբանութիւնը Աւետարանէն առաջ ալ կար, եւ Պատարագին մէջ թէ այլ արարողութեան մը ընթացքին՝ ամէն անգամ որ Աւետարան կը կարդանք՝ կարդալէ առաջ ու ետք, նոյն փառաբանութիւնն է որ կը կրկնենք, մեր երախտագին շնորհակալութիւնը յայտնելով Աստուծոյ, որ իր խօսքին հաղորդ դարձուց մեզ, եւ արժանի է մշտնջենաւոր փառաբանութեան: Այս հանգրուանին երգուած «Փառք քեզ Տէր»ը աննման է, փառաբանութեան սրտարուիս եւ անզսպելի պտոթկում մը, որ Աւետարանով բարձրացած հոգիներէն ջրվեժի պէս բարձունքէն վա՛ր կը խուժէ, աստիճանաբար հանդարտելով երթալ թաղուելու համար հաւատքի երկիւղածութեամբ լեցուած հոգիներու խորը:

Ուսուցողական եւ հոգեւոր ինքնապատրաստութեան այս հանգրուանը կը յատկանշուի երկու այլ իրողութիւններով, որոնցմէ առաջինը աստուածաշնչական պատգամն է, այլ խօսքով՝ քարոզը: Դժբախտաբար ներկայիս քարոզախօսութիւնը կը կատարուի «Հայր մեր»էն առաջ, ինչ որ մէկ կողմէ կը խանգարէ Պատարագին կարգը, եւ միւս

կողմէ՝ անտեղիօրէն իրարմէ կը հեռացնէ օրուան աստուածաշնչական ընթերցումներն ու քարոզը, մինչդէռ այս վերջինը, բացատրութիւնը պէտք է ըլլայ առաջիններուն, եւ անոնց վրայ հիմնուած օրուան պատգամը: Միայն այս բացատրութենէն ու պատգամէն վերջն է որ ժողովուրդը միահամուռ պէտք է արտասանէ «Հաւատամք»ը, որ իր հաւատքին խտացած խոստովանութիւնն է:

Հաւատամք

«Հաւատամք»ը սկիզբէն Պատարագին մաս չէ կազմած, թէպէտ այսօր կարելի չէ առանց անոր երեւակայել Պատարագը: Հաւանաբար անիկա Պատարագին մէջ ներառնուած է 5-րդ դարուն, 473 թուականին, Անտիոքի Պետրոս «Թափիչ» Պատրիարքին կողմէ, եւ յաջորդ դարուն որդեգրուած նախ Յոյն (511 թ.) եւ ապա Լատին (589 թ.) եկեղեցիներուն կողմէ³⁸: Եւ շատ հաւանական է ենթադրել, որ նոյնինքն 5-րդ դարու վերջը կամ 6-րդ դարու սկիզբը անիկա մուտք գործած է նաեւ մեր Պատարագամատոյցին մէջ:

«Հաւատամք»ը եկեղեցւոյ միութեան եւ միասնութեան դրսեւորումն է՝ իր հաւատքին մէջ, այնպէս ինչպէս Սուրբ Հաղորդութեան խորհուրդը եկեղեցւոյ միութեան տեսանելի եւ շօշափելի արտայայտութիւնն է՝ նոյն Քրիստոսի Մարմինին եւ Արեան ճաշակումով: Պօղոս առաքեալ կ'ըսէ. *«Մէկ է Մարմինը եւ մէկ՝ Սուրբ Հոգին, ինչպէս մէկ է յոյսը՝ որուն հրաւիրեց ձեզ Աստուած: Մէկ է Տէրը, մէկ՝ հաւատքը»* (Եփ. 4:4-5): Առաքեալին յիշած Մարմինը Քրիստոսի Սուրբ Եկեղեցին է, որ մէկ է եւ անբաժանելի, հիմնուած մէկ Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի վրայ, շնչաւորուած մէկ Հոգիով՝ Սուրբ Հոգիով, եւ որդեգրուած միակ Հօր մը՝ երկնաւոր Հօր, որ

³⁸ Տե՛ս Անդրանիկ Ծ. Վրդ. Կոստեան, «Հայ Ծիսական Պաշտամունքը», Պէյրութ, 2001, էջ 182:

«Հայրն [է] ամենուն, որ կը տիրէ բոլորին, կը գործէ բոլորին ընդմէջէն, եւ կը մնայ բոլորին մէջ» (Եփ 4.6):

Արդ, Եկեղեցին ամբողջութիւնն է ո՛չ թէ ազգի մը զաւակներուն, ո՛չ թէ նոյնախօս կամ նոյնագոյն մարդոց, այլ ամբողջութիւնն է Քրիստոսի հաւատացողներուն: Այս հաւատքին շուրջ միութիւնը անհրաժեշտ է Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին կազմելու համար, ինչպէս նաեւ անոր իսկական անդամը ըլլալու համար: Մենք չենք կրնար ռեւէ քանի հաւատալ (կամ չհաւատալ), եւ Քրիստոսի Եկեղեցին ճշմարիտ անդամ դաւանիլ մենք մեզ: Քրիստոսի Եկեղեցին Աստուծոյ կողմէ տրուած յայտնութեան անօթակիրն է, եւ այդ յայտնութեան երկու երեսները, ինչպէս ըսինք, Աստուածաշունչ Մատեանը եւ Մարմնացեալ Բանը՝ Քրիստոսն են. արդ, անոնց կապակցութեամբ եկեղեցոյ եւ անոր անդամներուն հաւատքը պէտք է ըլլայ մէկ եւ նոյն, եւ հարկաւ պէտք է ըլլայ ճշմարիտ, ուղղափառ, որպէսզի իրենց միասնութիւնը ըլլայ կատարեալ միութիւն՝ սիրոյ նոյն համբոյրին մէջ:

Ժամանակ մը եկեղեցիներու մէջ սովորութիւն եղած էր (եւ կարգ մը տեղեր դեռ կը յամենայ) «Հաւատամք»ը արտասանելը ձգել Աւետարանը կարդացող Սարկաւագին, եւ ուստի կ'երգուէր առանձին: Ասիկա երբեք ճիշդ չէ Արեւելեան եկեղեցիներու հասկացողութեամբ: «Հաւատամք»ը իր յոգնակի ձեւովն իսկ՝ «կը հաւատանք», կը յուշէ թէ հաւատքի խոստովանութիւնն է ամբողջ եկեղեցոյ, եւ իբր այդպիսին՝ զայն պէտք է արտասանեն բոլո՛ր հաւատացեալները անխտիր, ինչ որ իր կարգին կը նշանակէ՝ թէ իւրաքանչիւր հաւատացեալ պէտք է զայն զոց գիտնայ անպայման:

Ճաշու Պատարագի փակում

«Հաւատամք»էն ետք դարձեալ Սարկաւագը ժողովուրդին ուղղուած երկար յորդոր մը ունի, գեղեցիկ բովանդակութեամբ. *«Մանաւանդ հաւատքով աղաչենք եւ*

խնդրենք, որ մեր Տէրը, մեր Աստուածն ու Փրկիչը՝ Յիսուս Քրիստոս, այս պաշտամունքը եւ աղօթքները ընդունելութեան արժանի համարէ: Աղաչենք որ Տէրը լսէ մեր ձայնը, ընդունի մեր սրտաբուխ խնդրանքները, ներէ մեր յանցանքները եւ ողորմի մեզի...» ելլն: Դժբախտաբար հոս եւս դպրապետներ ու դպիրներ, անմիտ կերպով կ'ընդհատեն մաղթանքը, եւ առանց թոյլ տալու որ խնդրանքը ամբողջանայ կամ յաջորդ տուները ըսուին՝ «Կեցո՛ Տէր, Ծնորհեա՛ Տէր»ներու անիմաստ շարք մը կ'երգեն, խօսքն ու միտքը լռեցնելով եւ միայն եղանակին կարեւորութիւն տալով:

«Ճաշու» կամ «Երախայից Պատարագ»ի այս մասը կը փակուի պատարագիչին «Խաղաղութեամբ քով, Քրիստոս Փրկիչ մեր» ձայնաւոր աղօթքով, որ կ'աւարտի օրհնութեամբ՝ «Տէր Աստուած օրհնեսցէ զամենեսեան» (=Տէր Աստուած օրհնէ՛ բոլորդ):

Երկու իրողութիւններ կը յատկանշեն Ճաշու կամ Երախայից Պատարագի այս բաժինին աւարտը:

Նախ, պատարագիչը այս հանգրուանին կը հանէ իր թագը եւ հողաթափները, իսկ եթէ եպիսկոպոս է՝ նաեւ պանակէն, Եմիփորոնը եւ մատանին: Այլ խօսքով, կը մերկանայ իր բոլոր զարդերէն, մեկդի կը դնէ ամէն շքեղանք, որոնք յատուկ են իր պաշտօնին եւ անոր բարձրութեան, եւ կը պատրաստուի սուրբ Ընծաներուն ընդմէջէն Տէրը՝ Յիսուս Քրիստոսը դիմաւորելու, համեստ ծառայի մը պէս:

Երկրորդ, Սարկաւագը իր խօսքը ուղղելով բոլոր «անկնունք, անհաւատ, անապաշխար կամ անմաքուր» մարդոց, կը հրահանգէ որ եկեղեցիէն դուրս ելլեն, «չմօտենա՛ն աստուածային այս խորհուրդին»՝ «Մի՛ որ յերախայից, մի՛ որ ի թերահաւատից, եւ մի՛ որ յապաշխարողաց եւ յանմաքրից մերձեցի յաստուածային խորհուրդս»: Այս հրահանգը այսօր ոչինչ կ'ըսէ մեզի. ան իր իմաստն ու նշանակութիւնը ամբողջութեամբ կորսնցուցած է: Այսօր երբ կը հրահանգուի Սարկաւագին կողմէ որ

«անկնունք, անհաւատ, անապաշխար կամ անմաքուր» մարդիկը եկեղեցիէն դուրս գան, մէկը տեղէն չի շարժիր. մինչդէռ անցեալին այս հրահանգը հնչելուն պէս՝ անհաւատները, չմկրտուած անձերը, ապաշխարութեան մէջ եղողները եւ ուստի իրենց մեղքերէն չսրբուած անձերը, որոնք մինչեւ այս հանգրուանը կրնային ներկայ ըլլալ Պատարագին, (քանի ուսուցողական կամ դաստիարակութեան բաժինն էր անիկա, ինչպէս կանխաւ ըսինք), այս հանգրուանին պէտք էր դուրս գային եկեղեցիէն. իրենց արտօնուած չէր մասնակցիլ բուն հաւատացեալներուն սահմանուած Սուրբ Հաղորդութեան խորհուրդին:

Գալով «եկեղեցիէն դուրս գալ» բացատրութեան, ա՛յդ եւս երկու կերպով կը հասկցուի: Կա՛մ այն է որ ամբողջութեամբ եկեղեցւոյ շէնքէն պէտք էր դուրս ելլէին, եւ կամ՝ (այն եկեղեցիներուն պարագային՝ ուր յետսակողմը գաւիթ կար) պէտք էր երթային գաւիթ՝ «առ դրունս ելէք», եւ հոն աղօթէին, ճշմարիտ հաւատացեալներէն անջատուած, եկեղեցւոյ հաղորդութեան մասնակցելու անկարող:

3.- ԲՈՒՆ ՊՍՏԱՐԱԳ, կամ ՀԱԻՍՏԱՑԵԼՈՑ ՊՍՏԱՐԱԳ

Երբ եկեղեցիին մէջ կը մնան միայն հաղորդուելու ի վիճակի եղող հաւատացեալները, այն ատեն կը սկսի Բուն Պատարագը, կամ Հաւատացեալներու Պատարագը:

Մարմին Տէրունական

Այս բաժինը կը բացուի «Մարմին Տէրունական» երգով, եւ անոր հանդարտ, վեհ եւ գեղեցիկ եղանակով: Իսկապէս երկնայիններուն վայել փառաբանութիւն մը, արձագանգը հրեշտակներու «Սուրբ, Սուրբ, Սուրբ» փառաբանութեան, ինչպէս երգին բառերը մեզի կ'ըսեն:

Այս երգին կապակցութեամբ անմիջապէս պէտք է ըսենք, որ մեր ներկայ Պատարագին մէջ անիկա իր ճիշդ տեղը չէ: Կարգի խախտում մը կայ, որ դժբախտաբար նուիրականացած է արդէն: Այս երգը իրականին մէջ պէտք է

Սրբասացութենէն ետք գայ, եւ ո՛չ թէ անկէ առաջ: Առաջին անգամ Լամբրոնացիին քով է որ կը նշմարենք այդ խախտումը, մինչդեռ հնագոյն Պատարագամատոյցին մէջ անիկա Սրբասացութենէն ետքն է: Եւ տրամաբանութիւնն ալ անոր ճիշդ ըլլալը կը հաստատէ: Դո՛ւք դատեցէք: Երբ տակաւին վերաբերումը չէ կատարուած, այսինքն՝ Հացն ու Գինին սուրբ Սեղան չեն բերուած, տակաւին ժողովուրդին ի տես չեն պարգուած, մենք կ'երգենք՝

«Տիրոջ Մարմինն է, Փրկչին Արիւնն է

ահա դրուած մեր դիմաց:

Երկնային զօրքերը անդադար կ'երգեն՝ ըսելով.

“Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ ես, Տէր Զօրութեանց”:

Պարզ չէ՞ որ սխալ բան մը կայ այստեղ: Մինչդեռ վերաբերումէն ետք, երբ Ընծաները Սեղան կը դրուին, շատ բնական կու գան վերոյիշեալ բառերը:

Սրբասացութիւն

«Մարմին Տէրունական» երգէն անմիջապէս ետք Սարկաւազը կը ձայնէ՝ *«Դպիրնէ՛ր, Սաղմո՛ւ երգեցէք մեր Տէր Աստուծոյն. քաղցր ձայնով հոգեւոր երգէ՛ր երգեցէք»* («Սաղմո՛ւ ասացէք Տեառն Աստուծոյ մերում, դպի՛րք, ձայնիւ քաղցրութեան՝ զերգս հոգեւորս»): Եւ *«դպիրները օրուան խորհուրդին համաձայն Սրբասացութիւն կ'երգեն, իսկ սարկաւազները վեր՝ սուրբ Սեղան կը բերեն սրբազան Հացը եւ անմահութեան Բաժակը»*³⁹:

Խորհրդատետրէն քաղուած այս բացատրականը որոշապէս մեզի կ'ըսէ՝ թէ դպիրները այստեղ Սրբասացութիւն կ'երգեն՝ «օրուան խորհուրդին համաձայն»: Անցեալին, եւ տակաւին 12-րդ դարուն՝ Լամբրոնացիի քով եւ 13-րդ դարուն՝ Արճիշեցիի քով ալ, կայ միայն մէկ Սրբասացութիւն, որ կը կոչուի «Որք զքրովբէից», եւ որ

³⁹ Խորհրդատետր, էջ 58:

Յովհան Ոսկեբերանի Պատարագէն կու գայ: Բայց 13-րդ դարէն ետք եկող Պատարագամատոյցներուն մէջ կը գտնենք նոր սրբասացութիւններ, որոնք հեղինակութիւնն են 12-րդ դարու մեր մեծագոյն մատենագիրին եւ երաժիշտ Հայրապետին՝ Սուրբ Ներսէս Շնորհալիի, յօրինուած՝ տօնական զանազան առիթներու համար, ինչպէս՝ «Հրեշտակային»ը (սովորական Կիրակիներուն, Եկեղեցոյ տօներուն, Ծաղկազարդին եւ Հրեշտակաց տօնին համար), «Ով է որպէս»ը (Յինանց շրջանին եւ Խաչի տօներուն համար), «Բազմութիւնք Հրեշտակաց»ը (Ծննդեան, Աւետման, Վարդավառի եւ Աստուածածնայ տօներուն համար), «Սրբութիւն սրբոց»ը (Մարտիրոսաց յիշատակներուն համար): Եւ հետաքրքրական իրողութիւնը այն է, որ թէպէտ «Որք զքրովբէից»ը իր եղանակով միասին հասած է մինչեւ մեր օրերը, բայց արդէն դադրած ենք զայն կատարելէ, եւ միայն Շնորհալի Հայրապետին յօրինածները կը գործածենք:

Յիշեալ երգերը «Սրբասացութիւն» կը կոչուին, որովհետեւ բոլորն ալ, («Որք զքրովբէիցն»ին նմանողութեամբ) կ'ակնարկեն Եսայի մարգարէի տեսիլքին, ուր սերովբէները Աստուծոյ շուրջը կանգնած եւ իրենց դէմքերը թեւասքողած՝ անդադար կ'երգեն. «*Մո՛ւրբ, Մո՛ւրբ, Մո՛ւրբ, Տէր Ջօրութեանց*» (Ես 6.1-3), եւ կ'աւարտին սերովբէներու արտաբերած նոյն այս բառերով:

Վերաբերում

Սրբասացութիւնը երգուած ատեն, պատարագիչը ցած ձայնով թախանձագին կ'աղօթէ, յիշելով մեզի՝ անարժան մարդոցս վստահուած քահանայութիւնը, եւ շնորհք կը խնդրէ՝ որպէսզի արժանի ըլլայ սպասաւորելու այս ահաւոր խորհուրդին, որուն իսկական քահանայապետը՝ մատուցանողը, եւ միաժամանակ մատչողը, զայն ընդունողն ու մեզի պարգեւողը Քրիստոս ի՛նքն է: Հոս կը կատարուի Ընծաներու վերաբերումը:

Ի՞նչ կը նշանակէ «վերաբերում»: Իր պարզագոյն բաղադրիչներով՝ կը նշանակէ «վեր - բերելը»: Ներկայ ժամանակներուն, պատրաստուած Ընծաները, այսինքն՝ Հացն ու Գինին, խորանին աջակողմեան (հիւսիսակողմը) պատին վրայ գտնուող խորհրդանոցին մէջ, կամ Սեղանին աջակողմը գտնուող երկրորդ Սեղանի մը վրայ դրուած կ'ըլլան, եւ այս հանգրուանին՝ պատարագիչին սպասարկող սարկաւագներէն մէկը զանոնք հոնկէ առնելով՝ հանդիսաւորապէս կը բարձրացնէ, եւ թափօրով խորանին ետեւէն անցնելով՝ կու գայ Սեղանին ձախակողմը (հարաւակողմը), զայն նոյն հանդիսաւորութեամբ յանձնելու համար պատարագիչին: Անցեալին պատկերը քիչ մը տարբեր էր, եւ «վերաբերում» անունը իր իսկական նշանակութիւնը ունէր:

Անցեալին Պատարագին համար ժողովուրդը իր ընծաները կամ նուէրները (=պատարագ) կը բերէր: Այս ընծաներէն հացերը առանձին ափսէներով կամ մաղզմաներով, իսկ գինին յատուկ բաժակներով, այս հանգրուանին հանդիսաւորապէս ժողովուրդին մէջէն վեր՝ խորան կը բերուէին սուրբ Սեղան դրուելու համար: Եւ այս էր իսկական վերաբերումը:

Ներկայիս այս ձեւը կորսուած է, բայց խորհուրդը եւ անունը պահուած կը մնայ: Ուստի, սուրբ Սկիհին վերաբերումը կը խորհրդանշէ հաւատացեալ ժողովուրդին նուէրներուն մատուցումը Աստուծոյ:

Վերաբերումը կատարող Սարկաւագը Ընծաները խորհրդանոցէն առնելէն մինչեւ հարաւակողմ հասնիլը Սաղմոսներէն եւ Ամբակում մարգարէէն քանի մը համարներ կ'արտասանէ (Սկիհը առնելուն պէս «Աստուած երկինքի մէջ բնակարան կանգնեց Արեգակին, եւ սա՛ փեսայի մը պէս իր առագաստէն դուրս կու գայ» (Սղ 19.5): Երբ արեւելեան կողմ կը հասնի՝ «Ճամբայ բացէք անոր՝ որ արեւելք կը նստի, երկինքներէն վեր» (Սղ 68.33): Իսկ երբ հարաւակողմ կը

հասնի՝ «Աստուած հարաւէն պիտի գայ, Փառան լեռնէն պիտի գայ Սուրբը» (Ամբ 3.3): Իսկ հարաւակողմ հասնելէ ետք պահ մը կանգ կ'առնէ, ապա դէպի հիւսիս՝ դէպի պատարագիչը կը դառնայ, եւ անոր հետ փոխն ի փոխ կ'արտասանեն 24-րդ Սաղմոսին 7-10 համարները («Համբարձէք, իշխանք, գորունս ձեր ի վեր...»), որոնք «փառաց Թագաւորին» տաճար գալուստը կը պատկերացնեն: Ատով ըսել կ'ուզուի՝ թէ ահա սուրբ Սկիհին մէջ դրուած Հացին ու Քինիին խորհրդական կերպարանքով խորքին մէջ ամենագօր մեր Աստուածը ի՛նք է որ կու գայ Սեղան բազմելու, այդպիսով սուրբ Սեղանը եւ մեր սրտերը իր աննիւթեղէն անճառելի փառքին հողեղէն աթոռը դարձնելով:

Այս պահէն սկսեալ՝ մեզի համար խորանը եւ սուրբ Սեղանը երկրաւոր յարկ մը չեն ներկայացներ, այլ՝ երկրի վրայ երկինքը կը պատկերացնեն, որովհետեւ երկինքներէն վեր նստող Արեգակը ինք իբրեւ թագաւոր կու գայ հոն բազմելու, իր ներկայութեամբ երկիրը երկինքի վերածելու եւ ամբողջ եկեղեցին իր արքայութեան վերափոխելու:

Բոլոր հաւատացեալները պէտք է զգան, թէ իրենց Թագաւորին, իրենց Փրկիչին եւ իրենց Աստուծոյն դիմաց են հիմա: Եւ այս իրականութիւնը Պատարագի այս բաժինը կազմող քարոզին, աղօթքին ու երգին մէջ կ'արտացոլայ:

Մարկաւագը իր քարոզով կը յիշեցնէ՝ թէ ի՛նչ կը պահանջուի իւրաքանչիւր հաւատացեալէ: «Հաւատքով, սրբութեամբ եւ երկիւղով աղօթքի կանգնինք Աստուծոյ այս սուրբ Սեղանին առջեւ, եւ ո՛չ թէ գայթակղալից խիղճով, նենգութեամբ ու խորամանկութեամբ, պատրանքով ու խաբէբայութեամբ, երկմտութեամբ ու թերահաւատութեամբ: Այլ՝ ուղիղ վարքով, պարզ միտքով, անկեղծ սրտով, կատարեալ հաւատքով, սիրով լեցուած եւ ամէն տեսակի բարի գործերով հարստացած աղօթքի կանգնինք Աստուծոյ այս սուրբ Սեղանին առջեւ...»:

Մինչ այդ, պատարագիչը նախ ծածուկ կերպով կ'աղօթոր Աստուած մեր ձեռքէն ընդունի Սեղան դրուած այս Խորհուրդը, եւ զայն իր կատարումին հասցնէ, իբրէ խորհուրդը Միածինի Մարմնին եւ Արեան, որոնց ճաշակումը «մեղքերու քաւութեան դեղ ըլլալ ճաշակողներուս համար»: Ապա բարձրաձայն երգով կը յայտարարէ՝ թէ ատիկա արդիւնքն է մեր Տիրոջ եւ Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի շնորհքին ու մարդասիրութեան: Եւ աղօթքի աւարտին կ'օրհնէ ժողովուրդը:

Ողջոյն

Այնուհետեւ պատարագիչը կէս մը կը բանայ Սկիհին ծածկոցը, որպէսզի սուրբ Հացը երեւի մաղզմային եզերքէն, եւ թեթեւ մը դէպի ձախ կ'երթայ, որպէսզի Ընծան ժողովուրդին կողմէ տեսնուի, եւ ձեռնամած կը կանգնի: Իսկ բուրվառակիր Սարկաւագը խնկարկելէ ետք կու գայ կը համբուրէ Սեղանը եւ ապա պատարագիչին աջը, այդ ձեւով խաղաղութեան ողջոյնը առնելով անկէ, եւ բեմին աջ աստիճաններէն վար իջնելով՝ ողջոյնը կը փոխանցէ դասին կեդրոնը կանգնած աւագերէցին, կամ ժողովուրդի մէկ ներկայացուցիչին: Մինչ այդ, սպասարկող Սարկաւագը բեմէն կը հրահանգէ՝ «Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան...» (=Սուրբ համբոյրով ողջունեցէք իրար): Եւ դպիրները ժողովուրդին հետ միասին կ'երգեն ծանօթ գեղեցիկ երգը՝ «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»:

Ողջոյնը տուող իւրաքանչիւր անձ կ'ըսէ՝ «Քրիստոս է ի միջի մերում» (=Քրիստոս մեր մէջն է), իսկ ողջոյնը ստացողը կը պատասխանէ՝ «Է եւ եղիցի» (=Մեր մէջն է եւ [միջտ] պիտի ըլլայ): Ողջոյնի այս խօսքը արտայայտութիւնն է այն համոզումին, թէ Քրիստոս իր յաւերժական ներկայութեամբ, եւ հիմա՝ այստեղ՝ եկեղեցիին մէջ իր մարմնաւոր ներկայութեամբ «մեր մէջն է», ներկայ է:

Ողջոյնի բանաձեւին կ'ընկերանայ ողջագործումը: Անցեալին այս ողջագործումը ձեւական չէր, այլ՝ իրական, եւ իրական համբոյրով, ինչպէս Սարկաւագին հրահանգը կ'ըսէր: Որովհետեւ սկզբնական քրիստոնէական փոքր համայնքները հաւատքի շատ սերտ ընտանիք մը կը կազմէին, եւ ոչ ոք անպարկեշտ բան կը տեսնէր ընտանիքի մը անդամներուն միջեւ փոխանակուած համբոյրին մէջ:

Որքան եկեղեցիները մեծցան, այնքան ողջոյնը ձեւափոխուեցաւ: Սկզբնական համբոյրը փոխանակուեցաւ ողջագործումով, երբ իւրաքանչիւրը միւսին ուսը կը համբուրէր: Յետոյ այս ալ փոխուեցաւ, եւ իրարու թեթեւ խոնարհումի մը ձեւը ստացաւ, աջ ձեռքը կուրծքին դրած: Իսկ կարգ մը ուրիշ եկեղեցիներու մէջ անիկա վերածուեցաւ պարզ ձեռք թօթուելու արարողութեան մը, որ իր կարգին նահանջի մէջ է ներկայ ժամանակներուն:

Պահ մը երեւակայեցէք, որ «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» երգը գոյութիւն չունի, եւ կատարեալ լռութեան մէջ հաւատացեալները իրարու կը փոխանցեն ողջոյնը: Այդպէս էր Պատարագը Սուրբ Ներսէս Շնորհալիէն առաջ: Շնորհալի հայրապետը ի՛նքն էր որ այս սքանչելի երգը յօրինեց, տուեալ խորհրդալից պահը դարձնելով աւելի պայծառ, եւ ողջոյնը՝ աւելի գուարթ ու յաղթական: Եւ իր աշակերտը՝ Սուրբ Ներսէս Լամբրոնացի, արդէն այս երգը առած է իր Պատարագամատոյցին մէջ:

«Որք հաւատով կայք»

Տօնական օրերուն, «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»էն անմիջապէս ետք սուրբ Սեղանին սպասարկող սարկաւագները կ'երգեն. «Որք հաւատով կայք յանդիման սուրբ Սեղանոյս արքայական, տեսէ՛ք բազմեալ գՔրիստոս արքայն եւ շուրջ պատեալ զօրք վերնական» (=Դուք՝ որ հաւատքով կանգնած էք արքայական այս սուրբ Սեղանին դիմաց, տեսէ՛ք [հոն] բազմած Քրիստոս արքան եւ զինք

շրջապատող վերնական [=երկնային] զօրքերը): Որուն դպիրները եւ ժողովուրդը կը պատասխանեն. «Վեր համբառնամք զաչս ունելով եւ պաղատիմք զայս ասելով: Ըզմեղս մեր մի՛ յիշեսցես, այլ գթութեամբ քո քաւեսցես: Ընդ հրեշտակացն օրհնենք զքեզ, եւ ընդ սրբոց քոց, Տէր, փա՛ռք քեզ» (=Մեր աչքերը բարձրացնենք եւ պաղատինք՝ այսպէ՛ս ըսելով.- Մեր մեղքերը մի՛ յիշեր, այլ գթութեամբդ քաւէ՛: Հրեշտակներուն հետ կ'օրհնենք քեզ, եւ սուրբերուն հետ [կ'ըսենք՝] «Փա՛ռք քեզի»)՝⁴⁰:

Երգի աւարտին՝ Սարկաւագը հետեւեալ յորդորը կ'ուղղէ ժողովուրդին. «Ահիւ կացցուք, երկիւղիւ կացցուք, բարուք կացցուք, եւ նայեցարո՛ւք զգուշութեամբ» որ կը նշանակէ՝ *«Երկիւղով ու պատկառանքով կանգնինք, եւ ուշադրութեամբ նայինք»*: Ժողովուրդը կը պատասխանէ՝ *«Առ քե՛զ, Աստուած»*, այսինքն՝ *«Ուշադրութեամբ կը նայինք քեզի՛, ո՛վ Աստուած»*: Սարկաւագը կը շարունակէ. *«Պատարագ Քրիստոս մատչի, անարատ Գառն Աստուծոյ»*, այսինքն՝ *«Պատարագուողը Քրիստոս է, Աստուծոյ անարատ Գառնուկը»*, որ մեր Տէրը եւ մեր Աստուածն է, եւ մենք իրե՛ն է որ կը նայինք՝ մեր ուշադրութիւնը կեդրոնացուցած: Եւ ժողովուրդը կը լրացնէ մտածումը ըսելով. *«Ողորմութիւն եւ խաղաղութիւն եւ պատարագ օրհնութեան»*, այսինքն՝ *«Պատարագուող Աստուծոյ Գառնուկը մեզի համար աղբիւր է ողորմութեան եւ խաղաղութեան, եւ մեր գոհութեան կամ երախտագիտութեան ընծան է՝ Աստուծոյ»*:

Այստեղ միջանկեալ երկու նկատողութիւն.-

1.- Թէպէտ մինչեւ այս հանգրուանը առիթ չեղաւ ըսելու, բայց այստեղ աւելի յստակ կը դիտենք, որ Պատարագը կը զարգանայ քահանայ եւ ժողովուրդ երկխօսութեամբ, կամ քահանայ-Սարկաւագ-ժողովուրդ եռախօսութեամբ: Յաճախ

⁴⁰ Այս երգը եւս՝ իր գոյգ բաժիններով՝ չկայ մինչեւ 13-րդ դար Պատարագամատոյցներուն մէջ: Կը յայտնուի յաջորդ դարերուն:

մէկուն կամ միւսին բաժինը ինքնիր մէջ լման չէ, եւ իր ամբողջական իմաստը կը ստանայ միայն դիտելով ամբողջ փոխասացութիւնը, ուր մէկ միտքը կը շղթայուի միւսին եւ կ'ամբողջացնէ զայն: Ասիկա՝ Պատարագի խօսքերը հասկնալու գաղտնիքներէն մէկն է:

2.- Վերջին ժամանակներուն շատեր սովորութիւն դարձուցեր են Ողջոյնէն անմիջապէս ետք նստիլ: Ասիկա հաշտ չէ տուեալ պահու մեծ խորհուրդին հետ: Սարկաւագին հրահանգը (Գրաբարին մէջ) երեք անգամ կը կրկնէ՝ «կացցուք», որ կը նշանակէ՝ «կանգնինք», «ոտքի կենանք [կամ մնանք]», «կանգուն մնանք»: Ի՞նչպէս մենք կրնանք նստիլ: Նոյնը, ինչպէս տեսանք, այլ ձեւով կ'արտայայտուի՝ երբ խորանէն կ'երգուի. «Որք հաւատով կայք յանդիման սուրբ Սեղանոյս արքայական, տեսէ՛ք բազմեալ գՔրիստոս արքայն եւ շուրջ պատեալ զօրք վերնական» (=Դուք՝ որ հաւատքով կանգնած էք արքայական այս սուրբ Սեղանին դիմաց, տեսէ՛ք [հոն] բազմած Քրիստոս արքան եւ զինք շրջապատող վերնական [=երկնային] զօրքերը): Ո՛չ մէկ տրամաբանութիւն կը ներէ, որ մենք այս պահուն նստինք, եթէ անշուշտ հիւանդ չենք կամ հարկեցուցիչ ուրիշ պարագայ մը չունինք:

Ողջոյնի բաժինը կը փակուի օրհնութեամբ: Երբ բոլոր հաւատացեալները միասնաբար Աստուծոյ հետ իրենց հաշտութիւնը կը յայտարարեն հրճուանքով, եւ իրենց միութիւնը կը հռչակեն Քրիստոսով, պատարագիչը կը դառնայ եւ խաչակնքելով կ'օրհնէ բոլորը Պօղոս առաքեալի գործածած (հմմտ Բ.Կր 13.13) օրհնութեան բանաձեւով. «Շնորհք, սէր եւ աստուածային սրբաբար զօրութիւնն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ՝ եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեսեան» (=Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին շնորհքը, սէրը եւ աստուածային սրբացուցիչ զօրութիւնը ձեզի՝ բոլորիդ հետ ըլլայ):

Յետոյ դարձեալ Սարկաւագին ու ժողովուրդին միջեւ փոխասացութիւն մըն է որ կը հնչէ: Սարկաւագը կը

հրահանգէ. «Զորունս, զորունս...»- այսինքն՝ «Դռները- դռները [փակեցէք], եւ իմաստուն զգուշաւորութեամբ՝ ձեր միտքերը վեր բարձրացուցէք՝ աստուածային այս խորհուրդին»: Որպէս արձագանգ՝ ժողովուրդը կ'ըսէ. «Մեր միտքերը քեզի՛ բարձրացուցած ենք, Ամենակա՛լ Տէր» («Ունիմք առ քեզ, Տէր Ամենակալ»): Սարկաւագը իր կէս մնացած հրահանգը կը շարունակէ. «Եւ գոհացարուք զՏեառնէ՛ բոլորով սրտիս» (=Եւ ամբողջ սրտով գոհութիւն յայտնեցէք Տիրոջ): Որուն՝ ժողովուրդը կը պատասխանէ. «Արժան եւ իրաւ», այսինքն՝ «Իրաւացի է եւ արդար»: Իսկ այս խօսքին ալ իմաստը պատարագիչին ծածուկ աղօթքն է որ կ'ամբողջացնէ կամ կը բացայայտէ. «Իրապէս իրաւացի է եւ արդար՝ սրտանց եւ եռանդագին երկրպագելով փառաւորել քեզ, Ամենակա՛լ Հայր...»: Ապա աղօթքը կը յիշէ Քրիստոսի մարդեղութիւնը եւ մեր մէջ բնակութիւնը, ասով իսկ երկիրը երկինքի վերածելը, որովհետեւ «մեր փրկութեան համար մարդանալով՝ երկնայիններու հոգեղէն խումբերուն միախառնուելու շնորհքը տուաւ մեզի»: Ապա մինչ այդ ծածուկ ըսուածները կը լրացնէ բարձրաձայն, եղանակով. «Եւ ընդ Սերովբէսն եւ ընդ Քերովբէսն...», այսինքն՝ եւ շնորհեց, որ սերովբէներուն ու քերովբէներուն ձայնակցելով [քու] սրբութիւնդ երգենք ու եղանակենք, բարձրաղաղակ գոչելով եւ ըսելով®):

«Սուրբ, Սուրբ, Սուրբ»

«Սուրբ, Սուրբ» երգը, ինչպէս կը տեսնենք, կու գայ իբրեւ բնական շարունակութիւնը պատարագիչին աղօթքին:

Վերը, Սրբասացութեան մասին խօսած ատեն ըսինք, որ անոնք «Սրբասացութիւն» կը կոչուին, որովհետեւ կ'ակնարկեն Եսայի մարգարէի տեսիլքին (Ես. 6:1-3), ուր սերովբէները Աստուծոյ շուրջը կանգնած եւ իրենց դէմքերը թեւասքողած՝ անդադար կ'երգեն. «Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Տէր Զօրութեանց»:

«Սուրբ, Սուրբ» երգը կամ ինչպես երբեմն անիկա կը բնութագրուի՝ «սերովբեական երգը», նոյն այդ պահն է որ կ'արտացոլացնէ, ամենայն հարագատութեամբ եւ մանրամասնութեամբ: Եթէ, սակայն, Եսայի մարգարէի ունեցածը տեսիլք մըն էր միայն Աստուծոյ անմատչելի փառքին, Պատարագի համախմբուած հաւատացեալ ժողովուրդը Աստուծոյ այդ փառքին դիմաց կը կանգնի ուղղակիօրէն: Հոս տեսիլքը շօշափելի իրականութիւն է: Եւ նոյնիսկ եթէ մարմնաւոր աչքերով չենք տեսներ սերովբէներն ու քերովբէները, որոնք Քրիստոսի աթոռին շուրջը կանգնած են, բայց հաւատքի աչքերով անպայման կը տեսնենք, եւ անոնց ձայնակցելով՝ միասնաբար կ'երգենք. «Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Տէր զօրութեանց. լի են երկինք եւ երկիր փառօք քո...» (=Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ ես, Ամենակա՛լ Տէր: Երկինք եւ երկիր փառքովդ են լեցուն: Օրհնութի՛ւն քեզի՝ բարձունքներուն մէջ: Օրհնեալ ես դուն, որ Տիրոջ անունով կու գաս. Ովսաննա՛ բարձունքներուն մէջ):

Այս երգին հետ եկեղեցիէն ներս գտնուողները բոլորն ալ մագնիսականութեամբ մը կը բռնուին, հմայուած, եւ բառերը լրիւ հասկնան կամ ոչ՝ կը վերանան անպայման: Այդ իրագործումին մէջ Պատարագի խորհուրդին չափ իր դերը ունի երգին եղանակաւորումը, որ պարզապէս հիանալի է՝ թէ՛ իր Եկմալեան եւ թէ՛ իր Կոմիտասեան տարբերակներով: Ինչքա՛ն եկեղեցիներու եւ այլազան ծէսերու մէջ լսած ենք նոյն երգը, բայց ո՛չ մէկ տեղ անիկա Հայկական Պատարագին ներգործութիւնը կ'ունենայ:

«Առէք, կերէք»

Մինչ դպիրներ եւ ժողովուրդ «Սուրբ, Սուրբ» կ'երգեն, պատարագիչը կ'արտասանէ կեդրոնական այն աղօթքը, որ մասնագիտական լեզուով կը կոչուի «գոհաբանական աղօթք», որ քաղելով կ'ամփոփէ ամբողջ փրկագործութեան պատմութիւնը, յիշելով թէ ի՛նչպէս Աստուած իր

նախախնամութիւնը ցուցաբերեց անկեալ մարդկութեան հանդէպ՝ անցեալին մարգարէներ դրկելով, Օրէնքը տալով, քահանայութիւնը հաստատելով եւ կենդանական զոհերու միջոցաւ մարդոց միտքը պատրաստելով գալիք ճշմարիտ Ջոհին, իսկ երբ իր որոշած ժամանակը հասաւ՝ իր Որդին դրկելով աշխարհ, որ մեր մեղապարտ անձերուն փոխարէն ինքզինք ընծայեց *«իբրեւ պարտապան եւ պարտք, իբրեւ զոհ եւ Օծեալ, իբրեւ Գառնուկ եւ երկնաւոր Հաց, իբրեւ Քահանայապետ եւ Պատարագ»*, եւ մեր մեղքերուն դատաւճիռը պատռեց: Որ այդ իսկ նպատակով ստուգապէս մարդացաւ, եւ *«մեզ փրկելու համար կամաւորաբար խաչուելու եկաւ»*, եւ վերնատան մէջ, Վերջին Ընթրիքին ընթացքին, նախ հացը առաւ, օրհնեց, եւ իր Հօրը շնորհակալութիւն յայտնելէ ետք՝ կտրեց, եւ իրեն հետ բազմած աշակերտներուն տուաւ, ըսելով. *«Առէ՛ք, կերէք, ասիկա իմ Մարմինս է, որ ձեզի եւ շատերուն համար կը բաշխուի, մեղքերու քաւութեան եւ թողութեան համար»*: Յետոյ գինիով լեցուն բաժակը առաւ, օրհնեց, եւ իր Հօրը շնորհակալութիւն յայտնելէ ետք՝ խմեց, եւ իր կողքին բազմած աշակերտներուն տուաւ, ըսելով. *«Խմեցէ՛ք ասկէ բոլորդ. ասիկա նոր Ուիստի իմ Արիւնս է, որ ձեզի եւ շատերուն համար կը թափուի, մեղքերու քաւութեան եւ թողութեան համար»*:

Աղօթքը հոս չի վերջանար, բայց մենք պահ մը կանգ առնենք: Դժբախտաբար մենք ծածուկ կատարուած այս աղօթքը չենք լսեր, բացի բարձրաձայն ըսուած կամ երգուած այն բաժիններէն, որոնք ծանօթ են բոլորին. *«Առէ՛ք, կերէ՛ք, այս է Մարմին իմ...»*, *«Արբէ՛ք ի սմանէ ամենեքեան, այս է Արիւն իմ նորոյ Ուիստի...»*: Սակայն պարզօրէն կը տեսնուի, որ առանց իրենց շրջագիծը կազմող այս աղօթքին, Քրիստոսի այս բառերը օդէն առկախ խօսքերու կը նմանին, կամ զոհարներու՝ որոնք ոսկի շղթային վրայ ագուցուած չեն:

Միս կողմէ, «Առէք կերէք»ի պահը վստահաբար ամենէն զգայուն եւ խորհրդալից մէկ պահն է Սուրբ Պատարագին, եւ ժողովուրդին մտքին մէջ՝ նոյնիսկ բարձրակէ՛տը անոր, իբրեւ Վերջին Ընթրիքի պահուն Քրիստոսի արտասանած բառերուն վերյիշումը կամ կրկնութիւնը:

Այդ պահէն սկսեալ մեր դիմաց դրուած Հացին ու Գինին չե՛նք նայիր իբրեւ լոկ հաց եւ սուկական գինի, այլ՝ ինչպէս Քրիստոս զանոնք կոչեց եւ մենք իր բառերով կը կոչենք՝ Մարմին եւ Արիւն, «Տիրոջ Մարմին»ը, ինչպէս պիտի ըսէր Պօղոս առաքեալ (Ա.Կր 11.29), եւ «Տիրոջ Արիւնը»: Մեր եւ Արեւելեան բոլոր եկեղեցիներու աստուածաբանական հասկացողութիւնը այն է, որ հացին ու գինին՝ Քրիստոսի Մարմնին եւ Արիւնին փոխարկումը, այսինքն՝ Մարմին եւ Արիւն դառնալը, դեռ ամբողջացած չեն: Խորհուրդը կ'ամբողջանայ եւ փոխարկումը իր լրումին կը հասնի միայն այն ատեն՝ երբ պատարագիչը Սուրբ Հոգիին ոգեկոչումով կ'օրհնէ հացն ու գինին, մինչ դպիրները կ'երգեն «Որդի Աստուծոյ» երգը: Եւ Սուրբ Հոգին իր էջքով է որ կը սրբագործէ ընծաները եւ կը կատարէ փոխարկումը: Հացը իր գոյացութեամբ կը մնայ հաց, եւ գինին՝ գինի, բայց այսուհետեւ անոնք Քրիստոսի Մարմնին ու Արիւնն են, որովհետեւ Քրիստոս ինք իր աստուածութեամբ կը միանայ անոնց, այնպէս՝ ինչպէս իր մարդեղութեան ժամանակ նոյն աստուածութեամբ միացաւ մարմնին, եւ եղաւ մէ՛կ անձ, միաւորեալ մէ՛կ բնութիւն, միաժամանակ Աստուած եւ Մարդ. միութիւն մը, որ երբեմն կ'արտայայտենք «Աստուածամարդ» բառով կամ բացատրութեամբ, որովհետեւ ինչպէս Քրիստոսի մէջ զԱստուած կը տեսնենք մարդացած, այնպէս ալ մարմինը կը տեսնենք աստուածացած: Նոյնպէս ալ հոս, Պատարագին մէջ, ինչպէս կը խոստովանինք եւ կը հաւատանք թէ Աստուած ի՛նք կու գայ եւ կը միանայ այս հացին ու գինին, այնպէս ալ կը խոստովանինք եւ կը հաւատանք, որ նոյն միացումով՝ այս ընծաները կը միանան

Աստուծոյ, եւ հաց ու գինի մնալով հանդերձ՝ կը դառնան Քրիստոսի սուրբ Մարմինն ու Արիւնը:

«Հայր երկնաւոր», «Որդի Աստուծոյ» եւ «Հոգի Աստուծոյ»

Մինչ պատարագիչը իր աղօթքը կը շարունակէ անլսելի ձայնով, դպիրներ եւ ժողովուրդ կը սկսին երգել «Հայր երկնաւոր» երգը:

Անցեալին, դեռ մինչեւ 13-րդ դարու սկիզբը, անիկա չկար: Հաւանաբար մինչ այդ պատարագիչը բարձրաձայն կը շարունակէ իր աղօթքը, մինչ ժողովուրդը լուռ մտիկ պէտք էր ընէր: Այս երգը, ինչպէս նաեւ յաջորդ «Որդի Աստուծոյ» եւ «Հոգի Աստուծոյ» երգերը, 13-15-րդ դարերու յաւելում են, որովհետեւ 15-րդ դարէն սկսեալ կը յայտնուին Պատարագամատոյցներուն մէջ: Որքան ալ մենք այսօր դժուար կը պատկերացնենք մեր Պատարագը առանց այս երգերուն, որոշ է որ շուրջ 10 դար առանց անոնց Պատարագը կատարէր ենք: Ինչպէս անոնց յաւելման ճշգրիտ ժամանակը, այնպէս ալ դժբախտաբար անոնց հեղինակները կամ հեղինակը մեզի անծանօթ կը մնան:

Երեք երգերը ձեւով մը մէկ ամբողջութիւն կը կազմեն (թէպէտ ընդմիջումով), որովհետեւ առանձին-առանձին ամենասուրբ Երրորդութեան երեք անձերուն ուղղուելով հանդերձ՝ Քրիստոսի փրկագործական գոհագործման մէջ Հօրը կամքը եւ նպատակը, Որդիին ինքնանուէր ընծայումը, եւ Սուրբ Հոգիին կամակցութիւնը կը յայտնեն, միաժամանակ այս Պատարագին խորհուրդին ընդմէջէն աղաչելով որ Հայրը ողորմի իր բանաւոր հօտին, ինչպէս իր կամքն է արդէն, Որդիին Հօրը հետ հաշտեցնէ մեզ՝ իր սուրբ արիւնով փրկուած հօտը, եւ Սուրբ Հոգին գայ եւ իր լրումին հասցնէ իրեն փառակից Որդիին պատարագումին խորհուրդը:

Պատարագիչը, ինչպէս ըսինք, մինչ այդ կը շարունակէ իր երկար եւ միակտուր աղօթքը, յիշելով այս խորհուրդը տեւականօրէն կրկնելու Քրիստոսի հրահանգը, որուն իբրեւ

գործադրութիւն՝ ահա մենք «կը յիշատակենք մեզի համար անոր փրկագործ չարչարանքները, կենսատու խաչելութիւնը, երեքօրեայ թաղումը, երանելի յարութիւնը, աստուածապէս համբարձումը, Հօրը աջ կողմը նստիլը, եւ անոր ահաւոր ու փառաւոր երկրորդ գալուստը»:

«Յամենայնի»

Այս աղօթքին անմիջական պատասխանն է «Յամենայնի օրհնեալ եւ, Տէր» կարճ երգը, որ Աստուծոյ ուղղուած գեղեցիկ փառաբանութիւն մըն է, պարզ բայց իմաստով պերճ, եւ եղանակով (իր քանի մը տարբերակներն ալ) յաղթական ու տօնական: (Զմոռնանք, ինչպէս ըսինք ու կը կրկնենք, որ ամբողջ Պատարագը գոհաբանութիւն է, եւ հետեւաբար, եղանակները բնաւ պէտք չէ կամայականօրէն դանդաղ ու քաշքշուք դառնան, այլ ըլլան զգաստ ու պիրկ, հոգեկրթիչ ու ոգեւորիչ: Այլ խօսքով, խօսքերուն անմիջականութիւնը եւ իմաստէն բոխող ներքին լարումը պէտք է նաեւ երգերուն մէջ դրսեւորուի):

Երգին հետ պատարագիչը ինք եւս ժողովուրդին գոհաբանութիւնը կը կրկնէ, մանաւանդ անոր համար՝ որ Աստուած մեր անարժանութիւնը անտեսելով՝ «մեզ այսպիսի ահաւոր եւ անպատմելի Խորհուրդի մը սպասաւոր կարգեց», ո՛չ թէ մեր արժանիքներուն նայելով, (որ չունինք), այլ իր բազմագեղ, ամենառատ ողորմութեամբը:

Սուրբ Հոգիին Կոչումը

Ապա, մինչ դպիրներ ու ժողովուրդ «Որդի Աստուծոյ» կ'երգեն, պատարագիչը կ'երկրպագէ սուրբ Սեղանին, եւ կ'աղօթէ՝ որ Սուրբ Հոգին գայ եւ իրմով օրհնէ Սեղան դրուած Հացն ու Բաժակը, այնպէս որ անոնք ստուգապէս փոխարկուին մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Մարմինին եւ Արեան: Ապա Սուրբ Հոգիին ոգեկոչումով նախ առանձին-առանձին կ'օրհնէ հացն ու զինին, եւ ապա երկուքը միասին:

Պատարագիչի իւրաքանչիւր օրհնութեան հետ Սարկաւազը կը խնկարկէ, իսկ աւարտին՝ խորանին վրայ գտնուող բոլոր սպասարկողները երկիւղածութեամբ կ'երկրպագեն սուրբ Սեդանին եւ նուիրագործուած Ընծաներուն:

Վերը բացատրեցինք արդէն, որ մինչ Լատին եկեղեցին «Առէք կերէք»ին մէջ կը տեսնէ Ընծաներուն փոխարկման պահը, մեր եւ Արեւելեան բոլոր եկեղեցիներու աստուածաբանական հասկացողութեամբ՝ հացին ու գինիին փոխարկումը, այսինքն՝ Քրիստոսի ճշմարիտ Մարմինն ու Արինը դառնալը ա՛յս պահուն է որ իրենց լրումը, «կատարումը», կը գտնեն Սուրբ Հոգիով, որ կը սրբագործէ Ընծաները եւ կը կատարէ փոխարկումը: Եւ այս փոխարկումէն ետք՝ այլեւս անոնք Տիրոջ Մարմինն ու Արինն են, եւ հաւատքով ճաշակողներուն համար գրաւական են Աստուծոյ դատաստանէն ազատութեան, եւ մեղքերու քաւութեան ու թողութեան, ինչպէս բարձրաձայն կը դաւանի պատարագիչը («Որպէսզի եղիցի սա...»):

Մեր եկեղեցոյ այս համոզումը պարզորոշ կերպով կը տեսնենք նաեւ յաջորդ աղօթքը կանխող ծանօթութեան մէջ, ուր կ'ըսուի. «Քահանան ասկէ ետք չի խաչակնքեր Խորհուրդին վրայ: Ձեռքերը միշտ սկիհէն աւելի ցած կը տարածէ, իսկ աչքերը սուրբ Խորհուրդին յառած կը պահէ»:

«Հոգի Աստուծոյ»

Այս հանգրուանին դպիրներ ու ժողովուրդ կ'երգեն «Հոգի Աստուծոյ»: Ի տարբերութիւն «Հայր երկնաւոր» եւ «Որդի Աստուծոյ» երգերուն, որոնք միայն կենդանի հաւատացեալներուն համար աղաչանքներ կ'ընեն, «Հոգի Աստուծոյ» երգը կ'աւարտի՝ աղաչելով որ Սուրբ Հոգին «հանգի՛ ստ պարգեւէ մեր ննջեցեալներու հոգիներուն»:

Պէտք է գիտնալ, որ Սուրբ Պատարագը կը մատուցուի «վասն կենդանեաց եւ ննջեցելոց»: Եւ ահա, ողջերուն համար անդադար եւ բազմաթիւ աղաչանքներ մատուցանելէ ետք,

այժմ այն հանգրուանն է, երբ յատուկ աղօթքներով կը յիշատակենք նաեւ ննջեցեալները: Եւ ասիկա այն պարզ պատճառով, որ Եկեղեցին Քրիստոսի Մարմինն է, իսկ «Քրիստոսի Մարմին» ըսելով միայն ողջերը, այսինքն՝ Զինուորեալ Եկեղեցին չէ որ կը հասկնանք, այլ նաեւ ննջեցեալները, այսինքն՝ Յաղթական Եկեղեցին:

Ուրեմն, մեր հաւատքին մէջ Եկեղեցին միութիւնն է այս երկուքին, որոնք անբաժանելի են, միացած՝ նո՛յն Տիրոջ, նո՛յն Հաւատքին եւ նո՛յն Յոյսին մէջ, նո՛յն սիրոյն եւ փոխադարձ աղօթքին մէջ: Մենք միշտ կը յիշատակենք զանոնք ու կ'աղօթենք անոնց համար, ինչպէս անոնք մեզ կը յիշատակեն եւ կ'աղօթեն մեզի համար: Ասիկա առաքելահիմն եւ անխախտելի համոզումն է Եկեղեցիին, որ այս փոխադարձ յիշատակումին եւ աղօթքին մէջ կը տեսնէ Քրիստոսական սիրոյ պատուերին կատարումը եւ լրումը:

Արդ, ննջեցեալներու յիշատակութիւնը կը կատարէ նաեւ պատարագիչը, որ մասնաւորելով ու խմբաւորելով կը թուէ *«Քրիստոսի հաւատքով ննջած բոլոր նախահայրերը, հայրապետները, մարգարէները, առաքեալները, վկաները կամ մարտիրոսները, եպիսկոպոսները, երէցները, սարկաւազները, եկեղեցւոյ բոլոր սպասարկուները, եւ հաւատքով վախճանած բոլոր հաւատացեալները, այր թէ կին»:*

Ի դէպ, յիշենք նաեւ, որ 13-15 դարերու կարգ մը ձեռագիր Պատարագամատոյցներու մէջ «Հոգի Աստուծոյ» երգը «Գոհութիւն եւ փառաբանութիւն» եղանակաւոր քարոզէն եւ «Ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցուն» երգէն ետք կու գայ, նկատի առնելով որ ննջեցեալներու հոս սկսած յիշատակութիւնը՝ «Գոհութիւն եւ փառաբանութիւն» երգով կ'աւարտի:

«Առաքելոց սրբոց» եւ «Գոհութիւն»

«Հոգի Աստուծոյ» երգէն ետք սարկաւագներուն կողմէ կը կատարուի յիշատակութիւնը Եկեղեցին բաղկացնող բոլոր հաւատացեալներուն, ողջերուն թէ ննջեցեալներուն, առաքեալներէն սկսեալ («Առաքելոց սրբոց»), յանուանէ յիշատակելով շատ մը սուրբեր կամ նահատակներ եւ հաւատքի ախոյեաններ: Ասիկա եկեղեցիին հնագոյն մէկ սովորութիւնն է, եւ կարելոք անոր համար որ՝ Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցիին ամբողջականութիւնը կը պատկերացնէ:

Այս յիշատակութիւնները երկու խումբի կը բաժնուին: Առաջին խումբին մէջ կը մտնեն առաքեալները, մարգարէները, եկեղեցւոյ առաջին «վարդապետ»ները, մարտիրոսները, սուրբ հայրապետները եւ արդէն այս կէտանքէն ելած բոլոր սուրբերը: Ասոնց յիշատակութիւնը կատարելու համար սարկաւագները կու գան սուրբ Մեղանին աջակողմը կը կանգնին, որ խորհրդանշանականօրէն ցոյց կու տայ՝ թէ անոնք արդէն Աստուծոյ աջին կը գտնուին, այսինքն՝ անդրանկաց՝ յաղթական եկեղեցիին մաս կը կազմեն:

Ապա «Ընդհանուր ամենայն հաւատացելոց» երգուած ատեն սարկաւագներու խումբը կու գայ կեդրոն, սուրբ Մեղանը համբուրելու եւ Մեղանին ձախակողմը անցնելու համար: Եւ այստեղ, Մեղանին ձախ կողմը կանգնած, անոնք կը կատարեն յիշատակութիւնը Զինուորեալ Եկեղեցիին, ինամաձութեան պատասխանատուութիւնը ունեցողները՝ կաթողիկոսներն ու առաջնորդները, երգելով՝ «Գոհութիւն եւ փառաբանութիւն մատուցանեմք...»:

Այստեղ երկու նկատողութիւն.-

1.- «Առաքելոց սրբոց» բաժինին մէջ անուններու յիշատակութիւնը նոյնը չէ եղած միշտ: Ժամանակին, տեղին եւ երբեմն յիշատակող անձերու ջերմեռանդութեան համաձայն անոնք փոխուած, աճած կամ երբեմն ալ յապաւուած (կրճատուած) են: (Յիշեցէք 4-րդ դարուն Վաչէեանց համար Ներսէս Մեծի կարգադրութիւնը, եւ վերջին

օրինակը՝ Մովսէս Տաթեւացի Կաթողիկոսին անուան յաւելումը տպագիր ժամագիրքերուն մէջ...):

2.- Ոմանք ալ այս յիշատակութիւնները աւելորդ համարելով կը կրճատեն, եւ հազիւ իւրաքանչիւր տունի առաջին մէկ-երկու բառերը արտասանուած՝ զայն կը կտրեն «Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛» յանկերգով, որ այս ձեւով իր իմաստէն ալ կը պարպուի: Բայց կը կրկնենք, որ այս յիշատակութիւնները Պատարագի արարողութեան հնագոյն եւ ամենէն իմաստալից բաժիններէն մէկը կը կազմեն 3-րդ դարու սկիզբներէն եկող. քմահաճօրէն այդպէս վարուողները կը մոռնան, որ այս յիշատակութիւնները թե՛ սիրոյ պարտականութիւն են եւ թե՛ դաստիարակչական նշանակութիւն ունին հաւատացեալներուն համար. անոնք կը ծառայեն յիշեցնելու թէ Եկեղեցին միայն երկրի վրայ ապրողները չեն, այլ նաեւ՝ Քրիստոսով ննջող հաւատացեալները, որոնք Քրիստոսի միացած կը մնան եւ մեզի հետ միասին կը կազմեն Քրիստոսի հոգեւոր, խորհրդական Մարմինը՝ սուրբ Եկեղեցին:

Յիշելեաց Քարոզ

Այս անունով կը հասկցուի այն եղանակաւոր քարոզը, որ «Գոհութիւն եւ փառաբանութիւն» երգի աւարտին կ'երգուի փոխն ի փոխ՝ Սարկաւազին եւ դպիրներուն կողմէ, եւ բոլորիս ալ ծանօթ է իր երեք նշանաւոր տարբերակներով, Եկմալեան, Կոմիտասեան եւ Չիլինկիբեան, որոնք երեքն ալ չափազանց ծանր ու հանդիսաւոր են, եւ նոյն քան գեղեցիկ ու տպաւորիչ:

Հետաքրքրական է գիտնալ, որ 10-րդ դարու Անձեւացիի Մեկնութեան մէջ անիկա չ'երեւիր, բայց 12-րդ դարուն Լամբրոնացիի եւ յետոյ անոր աշակերտ Արճիշեցիի Մեկնութիւններուն մէջ ներկայ է: Հետաքրքրական է, դարձեալ, ու զարմանալի, գիտնալ՝ որ մինչ կարգ մը ձեռագիր Պատարագամատոյցներ որոշակիօրէն կ'ըսեն՝ թէ անիկա «Ի

թիւ» կ'ըսուի կամ պէտք է ըսուի⁴¹, 19-րդ դարէն մեզի հասած աւանդութիւնը այսքան հանդիսաւորութիւն կապած է անոր, կարծէք հմուտ երաժշտագէտ դպրապետներ իրենց ստեղծագործական ամբողջ տաղանդն ու վարպետութիւնը դրած են անոր մէջ, հաւանաբար մէկը միւսէն օրինակ առնելով, թէպէտ իրարու անման:

Տէրունական Աղօթք

Մինչ վերոյիշեալ Յիշելեաց քարոզը կ'եղանակուի, պատարագիչը կ'աղօթէ Հօր Աստուծոյ, շնորհակալութիւն յայտնելով անոր անսահման ողորմութեան համար, «որ մեզ՝ որ մեղքի դատապարտութեան ենթակայ էինք, շա՛տ աւելի պատուեց քան երանելի Նահապետները, որովհետեւ անոնց Աստուածը կոչուեցաւ, իսկ մեզի գթալով՝ հաճեցաւ Հայր կոչուիլ», իրեն որդեգիր դարձնելով: Ուստի բոլոր հաւատացեալներուն անունով կ'աղաչէ՝ որ «մեզի տրուած որդեգրութեան այս շնորհքը օրէ օր աւելի պայծառանայ իր սուրբ Եկեղեցիին մէջ»: Ապա ծածուկ այս աղօթքը կ'աւարտէ բարձրաձայն կոչով մը՝ «Եւ տո՛ւր մեզ համարձակաձայն բարբառով բանալ զբերանս մեր, կարդալ զքեզ, երկնաւո՛րդ Հայր, երգել եւ ասել» (=Եւ թոյլ տուր, որ համարձակօրէն՝ դիմենք քեզի, ո՛վ երկնաւոր Հայր, եւ երգաձայն աղօթքով ըսենք):

Պատարագիչին այս հրաւերին իբրեւ պատասխան, Եկեղեցւոյ միութեան գիտակցութեամբ եւ Աստուծոյ որդեգիր դարձած ըլլալու երջանկութեամբն ու երախտագիտութեամբը լեցուած՝ հիմա հաւատացեալները միասնաբար կ'երգեն Տէրունական աղօթքը՝ «Հայր մեր»:®

«Միայն սուրբ, միայն Տէր»

⁴¹ Տե՛ս Հացունի, Պատարագամատոյց..., էջ 110, ծնթ. 50:

Անմիջապես կը յաջորդեն երկու երգեր, որոնք հաւատքի խոստովանութիւն են:

Առաջինը, «Միայն սուրբ, միայն Տէր Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր. ամէն», փառաբանութիւն մըն է միակ Սուրբին, մեր միակ Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի, որուն ընդմէջէն մենք կը փառաւորենք երկնաւոր Հայրը: Այս հաւատքի խոստովանութիւնը, հնագոյն Պատարագին յատուկ, նոյնինքն Աստուածաշունչէն առնուող տող մըն է (Փլպ 2.11):

Երկրորդ երգը փառաբանութիւնն է ամենասուրբ Երրորդութեան երեք անձերուն, նախ առանձին-առանձին («Օրհնեալ Հայր Սուրբ Աստուած ճշմարիտ», «Օրհնեալ Որդիդ Սուրբ Աստուած ճշմարիտ», «Օրհնեալ Հոգիդ Սուրբ Աստուած ճշմարիտ»), յետոյ երեքը միասին, փառատրութեամբ հանդերձ («Օրհնութիւն եւ փառք՝ Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ...»):

Մինչ այդ պատարագիչը դարձեալ ծածուկ աղօթքի մէջ է, այս անգամ՝ խոնարհած վիճակով, որ խնդրանքին թախանձական ըլլալը կ'արտայայտէ: Պատարագիչը կ'աղաչէ որ Տէր Յիսուս Քրիստոս զինք եւ իրեն պաշտօնակիցները «արժանի նկատէ եւ իր անարատ Մարմինն ու թանկագին Արիւնը տայ իրենց, որպէսզի իրենք ալ ամբողջ ժողովուրդին տան»: Ապա երկրպագելով կը համբուրէ Մեղանը, յետոյ մաղզման սկիհէն վերցնելով կը դնէ Մեղանին վրայ: Եւ սուրբ Մարմինը առնելով՝ լման կը թաթխէ անապական Արիւնին մէջ, դարձեալ աղօթելով որ Տէրը մեր մեղքերուն թողութեան ծառայեցնէ անոր ճաշակումը:

Այնուհետեւ պատարագիչը «Ի սուրբ, ի սուրբ պատուական Մարմնոյ եւ յԱրենէ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի՝ ճաշակեցուք սրբութեամբ...» բառերով կը դառնայ ժողովուրդին եւ Տիրոջ Մարմինովն ու Արիւնովը զանոնք կ'օրհնէ, հրաւիրելով որ հաւատացեալներ զան եւ ճաշակեն զանոնք, որովհետեւ անոնցմով Յիսուս Քրիստոս

ինք՝ «երկինքէն իջած՝ մեզի կը բաշխուի»: Եւ կ'աւելցնէ՝ «Ասիկա Կեա՛նք է, Յարութեան յոյս, եւ մեղքերու քաւութիւն ու թողութիւն:

Բայց ժողովուրդին ճաշակումը անմիջապէս տեղի չ'ունենար: Պատարագիչը դէպի Սեղան կը վերադառնայ եւ վարագոյրը կը քաշուի, որպէսզի պատարագիչը առանձնութեան մէջ նախ ինք հաղորդուի, նախապատրաստելով ժողովուրդին հաղորդումը:

«Տէր Ողորմեա»

Անցեալին այստեղ վարագոյր գոցել չկար: Սարկաւազը անմիջապէս կը ձայնէր՝ «Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերում, դպի՛րք...», եւ ժողովուրդ ու դպիրներ կը սկսէին երգել «Օրհնեալ է Աստուած: Քրիստոս պատարագեալ բաշխի» օրհներգը: Ներկայիս այստեղ սակայն տեղաւորուել է մեր ժողովուրդին շատ սիրելի կտոր մը՝ «Տէր ողորմեա»ն:

Հին Պատարագին մէջ «Տէր ողորմեա»ն չկար, որովհետեւ այդ երգը ի՛նք չկար մինչեւ 1772 թուականը: Այդ թուականին անիկա գրուեցաւ Միմեռն Երեւանցի Կաթողիկոսին կողմէ, այն ալ՝ ո՛չ Պատարագին համար: Իրմէ ետք էր որ (թէպէտ դժուար է ճշդիւ ըսել՝ ե՞րբ) անիկա սիրուեցաւ եւ մուտք գործեց Պատարագին մէջ: Ուրեմն, հազիւ 230 տարուան կեանք ունի անիկա, իսկ Պատարագին մէջ՝ դեռ աւելի նուազ: Հետաքրքրական է որ ամէն անգամ երբ այս մասին կը խօսինք եւ երբ կը յանդգնինք ժողովուրդին ըսել որ այս յետսամուտ տարրը (Տէր ողորմեա)ն պէտք է դուրս գայ Պատարագէն, ժողովուրդը կը զարմանայ, կը դժգոհի եւ նոյնիսկ կը բողոքէ:

«Քրիստոս պատարագեալ բաշխի»

Նախքան ժողովուրդին հաղորդումը կ'երգուի «Օրհնեալ է Աստուած: Քրիստոս պատարագեալ բաշխի» երգը, որ 34-րդ եւ 150-րդ Սաղմոսներէն քաղուած տողերու միակցումն է,

ժողովուրդը Աստուծոյ հետ հաղորդութեան («Ճաշակեցէք եւ տեսէք՝ զի քաղցր է Տէր») եւ օրհնաբանութեան հրաւիրող:

Անցեալին այս երգը չկար, եւ անոր տեղ կ'արտասանուէր 34-րդ Մաղմուսը, որ հինէն ի վեր Քրիստոսի Մարմինին եւ Արեան ճաշակումին կապուած է: Ներկայ երգը իր այժմեան գեղեցիկ ձեւը եւ եղանակը ստացած է 12-րդ դարուն, Սուրբ Ներսէս Շնորհալիի ձեռքով: Բայց թերեւս ճշդում մը պէտք է ընել: Ճիշդ չէ ըսել՝ «իր այժմեան ձեւը...: (Միջանկեալ 6 տուներ...«Լոյս ճշմարիտ եւ ճառագայթ Հօր...», «Հաց կենաց եւ անմահութեան ճաշակ...» եւլն, որոնք այսօր չեն երգուիր, Միջին դարերուն ալ միշտ չեն երգուած, եւ անոնց եղանակները դժբախտաբար կորսուած են...)⁴²:

Հաղորդութիւն

Հազիւ երգը աւարտած՝ Սարկաւազը կը ձայնէ՝ «Երկիւղիւ եւ հաւատով յառա՛ջ մատիք եւ սրբութեամբ հաղորդեցարո՛ւք» (=Երկիւղածութեամբ եւ հաւատքով մօտեցէք եւ սրբութեամբ հաղորդուեցէ՛ք):

[Մինչեւ 12-րդ դար Սուրբ Հաղորդութիւնը իր երկու տեսակներով՝ Մարմին եւ Արիւն, առանձին-առանձին կը տրուէր ժողովուրդին. Մարմինը պատարագիչին ձեռքէն, իսկ Արիւնը՝ բաժակէն: Այս դարէն սկսեալ է որ սկիզբ առաւ Մարմինը Արեան մէջ թաթախելու սովորութիւնը եւ Արեան մէջ թաթախուած Մարմինը տալու հաւատացեալներուն⁴³]:

Գոհաբանութիւն

Սուրբ Հաղորդութեան ստացումով՝ Պատարագին խորհուրդը արդէն իր լրումին հասած է: Կը մնայ միայն շնորհակալութիւն կամ երախտագիտութիւն յայտնել Տիրոջ,

⁴² Տե՛ս Զարեհ Վարդապետ, «Ներսէս Շնորհալի Երաժիշտը եւ Սուրբ Պատարագի Երգեցողութիւնը», Հասկ, 1973, Նոյեմբեր-Դեկտեմբեր, էջ 480-483:

⁴³ Տե՛ս Անդրանիկ Ծ. Վրդ. Կռանեան, «Հայ Ծիսական Պաշտամունքը», Պէրոյթ, 2001, էջ 193:

որ մեզ արժանի ըրաւ իր Մարմինն ու Արիւնը ճաշակելու: Եւ այս գոհութիւնը կ'արտայայտէ ժողովուրդը՝ «Լցաք» եւ «Գոհանամք» երգերով, իսկ պատարագիչը՝ իր լուռ աղօթքով:

Այս երկու երգերով կը փակուի Բուն Պատարագի բաժինը, եւ կը մնայ միայն Արձակումը, որ շատ կարճ է:

4.- ԱՐՁԱԿՈՒՄ

Երգերու աւարտին պատարագիչը վերջին «տիեզերական» աղօթք մը կ'արտասանէ՝ բարձրաձայն, եղանակով, «Որ օրհնես զայնուսիկ որք օրհնեն զքեզ, Տէր», որուն իւրաքանչիւր պարբերութիւնը կ'ընդմիջուի ժողովուրդին փառաբանական բացագանչութիւններով՝ «Օրհնեա՛լ է Աստուած» եւ «Ամէ՛ն», որոնք կ'աւարտին «Եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմհետէ մինչեւ յաւիտեան» երգով: Իսկ պատարագիչը անմիջապէս կ'օրհնէ եւ կ'արձակէ ժողովուրդը:

Երկու դիտողութիւն.-

1) Ներկայ ժամանակներուն մենք կը տեսնենք, որ ամէն Պատարագ կ'աւարտի Աւետարանի ընթերցումով: Ասիկա շատ ուշ յաւելում մըն է, 17-րդ դարուն որդեգրուած, Լատին եկեղեցւոյ ազդեցութեամբ, որ Պատարագի խորհուրդին վրայ ունէ բան չ'աւելցներ, եւ անհարկիօրէն կ'երկարէ Արձակման կարճ ու գեղեցիկ կերպը:

2) Պատարագի արարողութեան հետ անմիջական կապ մը չունի Հոգեհանգստեան պաշտօնը, որ կը կատարենք Պատարագէն ետք, ըստ հաւատացեալներու փափաքին: Պատարագը արդէն կը մատուցուի, ինչպէս ըսինք, «վասն կենդանեաց եւ ննջեցելոց», եւ ննջեցեալները յատուկ աղօթքներով կը յիշատակենք արդէն: Բայց արգելք մը չկայ, անշուշտ, որ Հոգեհանգիստը աւելցնենք ըստ փափաքի: Պէտք է գիտնալ սակայն որ հոգեհանգիստը կրնանք կատարել ունէ օր, ունէ ժամանակ: Կիրակի օրերուն եւ Պատարագէն ետք կատարումը պայմանական է պարզապէս, որովհետեւ

ներկայիս միայն այդ օրը ազատ են եւ կրնան ընտանեօք կամ ազգականական պարագաներով եկեղեցի գալ՝ իրենց սիրոյ պարտականութիւնը կատարել:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Սուրբ Պատարագը միայն Քրիստոսի զոհագործումը յիշատակող եւ անոր փրկագործական խորհուրդը տեսականացնող եւ այժմեականացնող ծէս մը չէ, միայն գեղեցիկ, վեհացնող ու վերացնող երաժշտութիւն չէ, այլ մանաւանդ՝ գագաթնակէտն է եկեղեցւոյ ծէսին, այլ խօսքով՝ պաշտամունքին, որովհետեւ Պատարագին մէջ հաւատացեալ մարդը ո՛չ միայն միտքով ու հոգիով կը միանայ Աստուծոյ, այլ նաեւ մարմնաւորապէս կը հաղորդակցի անոր հետ, հաղորդուելով մեր Տիրոջ եւ Աստուծոյն՝ Յիսուս Քրիստոսի կենդանարար Մարմինին եւ Արեան:

Պատարագի խորհուրդին մէջ մեր հաւատքը իր ամենէն իրաւ, վաւերական, նոյնիսկ շօշափելի արտայայտութիւնը կը գտնէ. յոյսը կը դադրի միայն ապագայի ակնկալութիւն ըլլալէ, որովհետեւ ներկային մէջ կը հանդիպի, կը տեսնէ ու կը գրկէ ակնկալութեան իր առարկան՝ զԱստուած. եւ, որ ամենէն կարեւորն է, Աստուծոյ հանդէպ սերը իր կիզակէտին կը բարձրանայ, իր լրումին կը հասնի, որովհետեւ Աստուծոյ սիրոյն կը միանայ եւ անոր հետ երանական իր միութիւնը կ'ապրի երկրի վրայ: Պահ մը երկիրը երկինքի կը վերածուի, կամ երկինքը երկիր կը փոխադրուի: Եւ այս փորձառութեան գիտակցութիւնը չէ՞ որ կ'արձանագրէ ու մեզի կը յիշեցնէ Պատարագի մէկ աղօթքը, ուր կը կարդանք՝ «Եւ իբրեւ Աստուած՝ նոր ճարտարապետութեամբ մը երկիրը երկինքի վերածեց»⁴⁴:

Բնիկ Հայկական Պատարագի մասերը խօսքի, այսինքն՝ բնագիրի բաժինները չեն այնքան, որքան երգերը: Բնագրային

⁴⁴ Տե՛ս Խորհրդատետր, էջ 70:

մասը մեծաւ մասամբ թարգմանութիւն է, որոշ պատշաճեցումներով եւ տարբեր Պատարագներէ լաւագոյն տարրերու իւրացումովն ու նորովի խմբագրութեամբը:

Գալով երգային բաժինին, Հայկական Պատարագը իւրայատուկ է եւ եզակի: Զուտ Հայկական են՝ «Խորհուրդ խորին, Մարմին Տէրունական, Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, Հայր երկնաւոր, Որդի Աստուծոյ, Հոգի Աստուծոյ, Տէր ողորմեա՛, Օրհնեալ է Աստուած, Քրիստոս պատարագեալ բաշխի, Լցաք եւ Գոհանամք» երգերը, մէկ խօսքով՝ երգերու մեծագոյն տոկոսը:

Ի վերջոյ, Հայկական Պատարագը բոլոր Պատարագներէն աւելի շքեղ ու գեղեցիկ, ո՛չ միայն իր դաշնաւորեալ վիճակին մէջ, այլ նախ իր միաձայն եղանակներով, որոնք ազնուագոյն ներշնչումի եւ բարձրագոյն ճաշակի արտայայտութիւն եղող գոհարներ են: Եւ ճիշդ աստոր համար ալ, հաւատացեալը պարզ հանդիսատես մը չէ եւ պէտք չէ ըլլայ, այլ՝ մասնակից մը սուրբ Պատարագին:

**ԱՄՓՈՓ ՊԱՏԿԵՐ
ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ**

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ԻԲՐԵԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Աստուածաշունչը որքան ալ հաւատքի գիրք մըն է նախ եւ առաջ, եւ զայն սկիզբէն իսկ կոչեցինք Աստուծոյ յայտնութիւնը, բայց յայտնութիւնը անորոշ ժամանակի մը մէջ եւ անորշ մարդոց խումբի մը ուղղուած չէր, եւ չէ՛: Աստուծոյ յայտնութիւնը տրուած ժամանակին մէջ, որոշ ժամանակաշրջանի մը, մարդոց որոշակի խումբի մը: Ահա թէ ինչու կ'ըսենք թէ Աստուածաշունչը, կամ Աստուծոյ յայտնութիւնը, պատմական յայտնութիւն մըն է:

Ընուածներէն բնականաբար կը հետեւի, թէ Աստուածաշունչը պատմական գիրք մըն է, եւ ուստի նաեւ՝ պատմութեան գիրք մըն է: Բայց եւ այնպէս, սովորական իմաստով պատմութիւն մը չէ որ ունինք այնտեղ, այլ՝ յատուկ նկարագիրով պատմութիւն մը:

Երեք կարեւոր հաստատումներ կան, որոնք մտքի մէջ պէտք է ունենալ Աստուածաշունչի պատմութեան մասին խօսած ատեն.-

1.- Աստուածաշունչին մէջ բովանդակուած պատմութիւնը զուտ պատմութիւն կամ ժամանակագրութիւն չէ միայն, այլ՝ մեկնաբանուած պատմութիւն է: Կրօնական որոշակի փորձառութեան մը լոյսին տակ արձանագրուած, անիկա դաստիարակչական նպատակ մը ունի: Այս իմաստով յատկանշական է, որ յաճախ «պատմութիւն» հասկացողութիւնը Աստուածաշունչին մէջ կ'արտայայտուի Եբրայերէն «միտրաշ» բառով (տե՛ս Բ.Մն 13.22, 24.27), որ առաջին հերթին կը նշանակէ՝ «մեկնութիւն, բացատրութիւն», եւ ուստի կը նշէ մեկնաբանուած պատմութիւն կամ արձանագրութիւն:

2.- Ասիկա կու գայ անկէ, որ Աստուածաշունչին մէջ պատմութիւնը արձանագրողները մարգարէներն են (հմմտ Ա.Մն 29.29: Բ.Մն 9.29, 12.15, 13.22, 20.34, 23.19, 26.22, 32.32), որոնց մտահոգութիւնը Աստուծոյ կամքը աւանդելն է, եւ ուստի անձերն ու դէպքերը կը դիտեն յարաբերաբար այդ կամքին, յարաբերաբար Աստուծոյ ծրագիրին եւ անոր հանդէպ անձերուն ցուցաբերած հաւատարմութեան ու հնազանդութեան:

3.- Սուրբ Գրոց պատմութիւնը (սրբագան), կամ (հոգեւոր), պատմութիւն է: Անիկա դէպքերու կամ դրուագներու անընդմէջ շղթայ մը չէ պարզապէս, այլ՝ ներկայացումն է Աստուծոյ խորհուրդներուն: Այնտեղ մենք կը գտնենք Աստուծոյ փրկութեան ծրագիրին հանգրուանները, կարեւոր հանգոյցները, որոնք լոյս կը սփռեն մարդկային մեր գոյութեան վրայ, եւ մեր կեանքը կը դնեն այս աշխարհէն անցնող Աստուծոյ ճանապարհին վրայ:

Այս գլուխով պիտի փորձենք Հին Կտակարանի պատմութեան ամփոփ պատկերը տեսնել եւ սորվիլ: Բայց, վերը նշուած կէտերը նկատի ունենալով, միայն թուականներ եւ դէպքեր չէ որ պիտի փորձենք միտք պահել, ո՛չ միայն կարեւոր դէմքերը, այլ՝ այն կարեւոր երեւոյթները, որոնք երբեմն տեսանելի եւ երբեմն ալ անտեսանելի ձեւով՝ խորքը կը կազմեն այդ պատմութեան թելին, մեզի բերելով այն նպատակը, որուն համար գրուած է յիշեալ պատմութիւնը:

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՕԹԸ ԿԱՐԵՒՈՐ ՕՂԱԿՆԵՐԸ

Սուրբ Գրոց ոեւէ ուսանող, կամ Աստուածաշունչին մօտիկ ոեւէ անձ, Հին Կտակարանի պատմութիւնը կրնայ դիւրաւ իր միտքին մէջ ունենալ՝ հետեւեալ ամփոփ պատկերը իրացնելով:

Հին Կտակարանի պատմութիւնը գլխաւոր եօթը հանգրուաններու կը բաժնուի.-

- 1.- Համամարդկային պատմության անցեալ ժամանակը:
- 2.- Նահապետներու պատմութեան ժամանակը:
- 3.- Եգիպտոսէն ելքին եւ անապատային թափառումներուն պատմութիւնը:
- 4.- Դատաւորներու պատմութեան ժամանակը:
- 5.- Թագաւորներու պատմութեան ժամանակը:
- 6.- Բաբելոնի գերութեան ժամանակը:
- 7.- Նախաքրիստոնէական չորս դարերու պատմութիւնը:
Առանձին-առանձին տեսնենք իւրաքանչիւր հանգրուանի կարեւորագոյն դէպքերը եւ անձերը:

1.- ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼ ԺԱՄԱՆԱԿԸ

Այս մասին կը խօսին Ծնունդներու գիրքին առաջին 11 գլուխները:

Կը սկսի աշխարհի ստեղծագործութեամբ, եւ կ'աւարտի Բաբելոնի աշտարակաշինութեամբ եւ ազգերու ցրումով:

Կ'ընդգրկէ պատմութեան ժամանակաշրջան մը որ թուականներով կարելի չէ սահմանել: Անցեալին ոմանք փորձած են յիշեալ ժամանակահատուածին մէջ յիշատակուած անձերու կեանքին տարիները գումարելով որոշ թուականներ առաջարկել, աշխարհի սկիզբը Ք.Ա. 4004 թուականին դնելով: Բայց այս մէկը յայտնապէս սխալ մեկնակէտ մըն է, անընդունելի արդիւնքով: Աստուածաշունչը ժամանակագրութիւն չի տար:

Այս շրջանին կարելուր դեպքերն են.-

ա) Աշխարհի ստեղծագործութիւնը, «վեց օրեր»ու ընթացքին: Սակայն այս «օր»երը ժամանակի ընդարձակ միաւորներ են, որոնք հարիւր հազարաւոր կամ միլիոնաւոր տարիներ կրնան ըլլալ:

բ) Առաջին մարդերուն՝ Ադամի եւ Եւայի ստեղծումը եւ դրախտային վիճակը, եւ ապա անոր կորուստը:

գ) Մարդկութեան աստիճանական չարացումը:

դ) Նոյի օրով ջրհեղեղը:

ե) Բաբելոնի աշտարակաշինութիւնը:

զ) Սերունդներու եւ ազգերու բազմացումը եւ ցրումը աշխարհի վրայ:

Այս շրջանին կարելուր դեմքերն են.-

ա) Ադամ, առաջին մարդը, որուն անհնազանդութեամբ մեղքը աշխարհ մտաւ:

բ) Ենոք (Ենովք), որ «Աստուծոյ հետ քալեց», կատարեալ աստուածպաշտութեան օրինակ հանդիսանալով, եւ Աստուծոյ կողմէ ալ ողջ-ողջ երկինք առնուեցաւ (Մն 5.22-24):

գ) Նոյ, որ «իբր դարուն մարդոց մէջ արդար ու կատարեալ մարդ մըն էր, եւ Աստուծոյ հետ քալեց» (Մն 6.9), եւ ատոր համար ալ իբր ընտանիքով միասին տապանով փրկուեցաւ ջրհեղեղէն:

Այս շրջանին վերաբերող կարելուր երեւոյթներն են.-

ա) Ադամին մեղանշումով՝ ամբողջ մարդկութեան ենթարկումը մեղքին ու մահուան (հմմտ Հո 5.12):

բ) Աստուծոյ փրկութեան խոստումը՝ «կնոջ սերունդով» (Մն 3.15):

գ) Ջրհեղեղով Նոյի եւ անոր սերունդին փրկութիւնը, իբրեւ պատկերացում՝ մկրտութեամբ գալիք Քրիստոսի փրկութեան (հմմտ Ա.Պտ 3.20-21):

2.- ՆԱՀԱՊԵՏՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Այս մասին կը խօսին Ծնունդներու գիրքին 12-50 գլուխները:

Կը սկսի Աբրահամով, եւ կ'աւարտի Յովսէփով:

Կ'ընդգրկէ շուրջ 300 տարիներու պատմութիւն մը, Ք.Ա. շուրջ 2090 թուականէն մինչեւ շուրջ 1800: Աստուածաշունչը թուականներ չի տար, բայց պատմութիւնը մօտաւոր կերպով կը վերակառուցուի՝ նահապետներու կեանքին տարիներու հաշիւով:

Այս շրջանին կարելոր դէպքերն են.-

ա) Աբրահամին կանչուիլը Աստուծոյ կողմէ եւ Քանան գալուստը:

բ) Աստուծոյ ուխտը Աբրահամին հետ (Ծն 15-րդ գլուխ):

գ) Յովսէփի Եգիպտոս ծախուիլը եւ ապա Աստուծոյ առաջնորդութեամբ մինչեւ փոխարքայի պաշտօնին բարձրանալը:

դ) Յակոբի եւ իր զաւակներուն Եգիպտոս տեղափոխուիլը:

Այս շրջանին կարելոր դէմքերն են.-

ա) Աբրահամ, հաւատքի հայրը:

բ) Իսահակ, Քրիստոսի նախատիպը:

գ) Յակոբ, Իսրայէլացի ժողովուրդին 12 նահապետներուն հայրը:

դ) Յուդա, Աստուծոյ ժողովուրդին ապագայ առաջնորդութեան խոստումը ունեցողը:

ե) Յովսէփ, Աստուծոյ ժողովուրդին փրկութեան գործիքը, Քրիստոսի կատարեալ նախատիպը:

Այս շրջանին վերաբերող կարելոր երեւոյթներն են.-

ա) Աբրահամին եւ Իսահակին տրուած խոստումները, թէ Աստուած իրենց սերունդով (=Քրիստոսով) պիտի օրհնէ աշխարհի բոլոր ազգերը (Մն 22.18, 26.4: Գղ 3.8-9 եւ 16):

բ) Իր ժողովուրդի առաջնորդութեան համար Աստուծոյ կատարած ընտրութիւնները, որոնք մարդկային մեր չափանիշներուն համաձայն չեն, եւ յաճախ մեր տրամաբանութեան հակառակ կը թուին (օրինակ՝ Յակոբ, Յուդա), բայց որոնք ի վերջոյ ցոյց կու տան այդ ընտրութեան անսահման իմաստութիւնը եւ մեզի համար դաստիարակչական նշանակութիւնը:

գ) Աբրահամի եւ միւս նահապետներուն իբրեւ «պանդուխտ» ապրիլը (հմտտ Եբր 11.13-16):

դ) Աստուծոյ գործունէութեան խորհրդաւոր կերպերը, որով ուղղակիօրէն կը դեկավարէ աշխարհի եւ մարդկութեան պատմութիւնը, զանոնք առաջնորդելու համար իր որոշադրած նպատակին:

3.- ԵԳԻՊՏՈՍԷՆ ԵԼՔԻ ԵՒ ԱՆԱՊԱՏԱՅԻՆ ԹԱՓԱՌՈՒՄՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Այս մասին կը խօսին Ելից եւ Թուոց գիրքերը:

Կը սկսի Եգիպտոսի մէջ գերութեան եւ Մովսէսի պատմութեամբ, եւ կ'աւարտի Սինայի անապատին մէջ քառասնամեայ թափառումներով, մինչեւ խոստացուած երկրին սահմանները հասնիլը:

Կ'ընդգրկէ շուրջ 430 տարիներու պատմութիւն մը, Ք.Ա. շուրջ 1875 թուականէն (Յակոբի Եգիպտոս էջքը) մինչեւ 1406 թուականին:

Այս շրջանին կարելոր դէպքերն են.-

ա) Եգիպտոսի մէջ ստրկութեան նեղութիւնները:

բ) Եգիպտոսի վրայ Աստուծոյ 10 հարուածները:

գ) Եգիպտոսէն հրաշալի ազատագրութիւնը:

դ) Մինա լերան վրայ Աստուծոյ յայտնութիւնը եւ Օրէնքին տրւչութիւնը:

ե) Անապատին մէջ թափառումները եւ փորձութիւնները:

զ) Առաջին պատերազմները, խոստացուած երկրին տիրանալու համար:

Այս շրջանին կարելոր դէմքն է.-

ա) Մովսէս, Աստուծոյ ժողովուրդին միջնորդ-ազատարարը, Աստուծոյ Օրէնքին միջնորդը, Հին Ուխտը կնքողը, որ նաեւ նախատիպն է «իբեն պէս» գալիք մարգարէին կամ Փրկիչին (հմմտ Բ.Օր 18.18):

Այս շրջանին վերաբերող կարելոր երեւոյթներն են.-

ա) Տիրոջ հաստատած Չատիկը, փրկութեան տօնը, որ օրինակն էր Քրիստոսով գալիք ճշմարիտ Չատիկին (Ել 12-րդ գլուխ հմմտ Ա.Կր 5.7-8):

բ) Աստուծոյ Օրէնքը, Տասնաբանեայով սկսող (Ել 20-24 գլուխներ):

գ) Վկայութեան Խորանը (=շարժական տաճարը), որ Աստուծոյ Եկեղեցիին եւ երկնային Սրբարանին օրինակն է:

դ) Աստուծոյ անտեսանելիութեան կարելոր դասը (Ել 33.18-23):

ե) Աստուծոյ պարգեւած մանանան եւ ջուրը (հմմտ Յե 6.32-35, 48-52: Ա.Կր 10.3-4):

զ) Մովսէսի մահը խոստացուած երկրէն դուրս, իբրեւ օրինակ եւ դաս բոլոր սերունդներուն:

4.- ԴԱՏԱԻՈՐՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼ ԺԱՄԱՆԱԿԸ

Այս մասին կը խօսին Յեսուի եւ Դատաւորներու գիրքերը, եւ Ա.Թագաւորներու 1-8 գլուխները:

Կը սկսի Մովսէսի յաջորդին՝ Յեսուի պատմութեամբ, եւ կ'աւարտի թագաւորութեան հաստատուելէն առաջ տիրող խառնակ ժամանակներու պատկերացումով:

Կ'ընդգրկէ շուրջ 350 տարիներու պատմութիւն մը, ք.Ա. 1406 թուականէն (Մովսէսի մահը) մինչեւ 1050 թուականը:

Այս շրջանին կարելոր դէպքերն են.-

ա) Քանանի երկրին աստիճանական նուաճումը Իսրայէլի ցեղերուն կողմէ, տեղաբնակ ցեղերուն հետ պատերազմելով:

բ) Վիճակ ձգելով երկրին բաժանումը Իսրայէլի 12 ցեղերուն միջեւ:

գ) Իսրայէլի 12 ցեղերուն միջեւ ներքին անհամաձայնութիւնները եւ յաճախակի բաղխումները:

Այս շրջանին կարելոր դէպքերն են.-

ա) Յեսուն, Մովսէսի յաջորդը, որ Աստուծոյ ժողովուրդը առաջնորդէ եւ տիրացաւ խոստացուած երկրին:

բ) Գեղէն, ճշմարիտ աստուածպաշտութեան եւ Տիրոջ թագաւորութեան ախոյեանը (տե՛ս Դտ 8.22-23):

գ) Սամփսոն, Աստուծոյ ուխտակիրը:

դ) Սամուէլ, դատաւորներէն վերջինը եւ ամենէն նշանաւորը, որուն օրով սկիզբ առաւ թագաւորութիւնը:

Այս շրջանին վերաբերող կարելոր երեւոյթներն են.-

ա) Յորդանան գետէն հրաշալի անցքը՝ կրկնութիւնը Աստուծոյ առաջնորդութեամբ Կարմիր Ծովէն անցքին (Յես 3.9-17):

բ) Աստուծոյ հետ ուխտին կրկնութիւնը՝ խոստացուած երկրին մէջ (Յես 8.30-35):

գ) Ուխտի Տապանակին թափառական վիճակը եւ ժամանակաւոր գերեվարութիւնը Փղշտացիներուն կողմէ:

5.- ԹԱԳԱԻՈՐՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼ
ԺԱՄԱՆԱԿԸ

Այս մասին կը խօսին Թագաւորներու չորս գիրքերը եւ Մնացորդներու երկու գիրքերը:

Կը սկսի Սամուէլի եւ Սաւուղի պատմութեամբ, եւ կ'աւարտի Յուդայի թագաւորութեան անկումով եւ Բաբելոն գերութեամբ:

Կ'ընդգրկէ շուրջ 500 տարիներու պատմութիւն մը, Ք.Ա. 1050 թուականէն մինչեւ 587 թուականը:

Այս շրջանին կարելոր դէպքերն են.-

ա) Թագաւորութեան սկզբնաւորումը վերջին դատաւորին՝ Սամուէլ մարգարէի օրով:

բ) Սողոմոնէն ետք՝ թագաւորութեան բաժանումը երկուքի.- «Յուդայի (կամ հարաւի) թագաւորութիւն», որուն կազմին մէջ կը մնային Յուդայի եւ Բենիամինի ցեղերը, եւ «Իսրայէլի (կամ հիւսիսի) թագաւորութիւն», որուն կազմին մէջ կը մտնէին միւս տասը ցեղերը:

գ) Ասորեստանի հարուածներուն տակ անկում հիւսիսի թագաւորութեան, գրաւում Սամարիայի (Ք.Ա. 722 թուականին), եւ տասը ցեղերուն գերի տարուիլը Ասորեստան:

դ) Բաբելական կայսրութեան ձեռքով անկում Յուդայի թագաւորութեան եւ կործանում Երուսաղէմի ու տաճարին (Ք.Ա. 587 թուականին):

Այս շրջանին կարելոր դէպքերն են.-

ա) Սաւուղ, առաջին թագաւորը:

բ) Դաւիթ, Աստուծմէ ընտրեալ եւ ներշնչեալ թագաւորը:

գ) Սողոմոն, իմաստուն թագաւորը:

դ) Աքաաբ, Իսրայէլի աստուածամարտ թագաւորը, որուն օրով կը գործէ Եղիա մարգարէ:

ե) Քրիստոսէ առաջ 8-րդ դարու վերջը ապրած մեծ տեսանողը, մեսիական կարեւորագոյն խոստումները աւանդող մարգարէն, որ մարգարէացաւ Սամարիայի անկման եւ գերեվարութեան օրերուն:

զ) Եզեկիա, Յուդայի բարեպաշտ թագաւորը եւ Աստուածաշունչ գիրքերու երկրորդ ժողովածուն կազմողը:

է) Մանասէ, Յուդայի ամբարիշտ թագաւորը, որուն օրով կը գործէ Նահում (Նաոււմայ) մարգարէ:

ը) Եոսիա (Յովսիա), բարեկարգիչ թագաւորը որ Օրէնքի գիրքերը ազգային կանոնագրութիւն հռչակեց, եւ որուն օրով գործեցին Սոփոնիա եւ Երեմիա մարգարէները:

թ) Երեմիա, Յուդայի անկումի օրերուն գործող ու ողբացող մեծ մարգարէն:

Այս շրջանին վերաբերող կարեւոր երեւոյթներն են.-

ա) Տաճարին շինութիւնը Դաւիթի նախապատրաստութեամբ եւ Սողոմոնի ձեռքով:

բ) Ասորեստանի Սարգոն Բ. թագաւորին ձեռքով Սամարիայի պարպուիլը իր բնակիչներէն, Իսրայէլի տասը ցեղերէն, որոնց փոխարէն Ասորեստանէն հեթանոս ցեղեր պիտի բերէր եւ բնակեցնէր Սամարիա, որ այնուհետեւ պիտի դառնար հեթանոսներով խառն շրջան մը:

գ) 587 թուականին Երուսաղէմի տաճարին կործանումով ժամանակաւոր խափանում տաճարական պաշտամունքին եւ զոհերուն:

6.- ԲԱԲԵԼՈՆԻ ԳԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Այս մասին կը խօսին Դանիէլի, Եսթերի, Եզրասի ու Նեհեմիայի գիրքերը:

Կը սկսի Նաբուգոդոնոսոր թագաւորի ձեռքով Հրէաստանի գերեվարութեամբ (Ք.Ա. 587 թուականին), եւ կ'աւարտի գերեվներու խումբ-խումբ վերադարձով:

Կ'ընդգրկէ շուրջ 150 տարիներու պատմութիւն մը, Ք.Ա. 587 թուականէն մինչեւ շուրջ 430 թուականը:

Այս շրջանին կարեւոր դէպքերն են.-

ա) Բաբելոնի գրաւումը՝ Մարերու եւ Պարսիկներու թագաւորին՝ Կիւրոսի կողմէ, Ք.Ա. 539 թուականին:

բ) Յուդայի վերջնութեւր թագաւորին՝ Յովակիմի թոռ Զորաբաբելի առաջնորդութեամբ Հրեաներու գերեզարձին սկիզբը Կիւրոսի հրովարտակով (Ք.Ա. 538 թուականին):

գ) Երուսաղէմի տաճարին վերաշինութիւնը՝ Ք.Ա. 520-516 թուականներուն:

դ) Երուսաղէմ քաղաքին վերաշինութիւնը՝ Ք.Ա. 445-443 թուականներուն:

Այս շրջանին կարեւոր դէմքերն են.-

ա) Եզեկիէլ, իր ժողովուրդին հոգեւոր վերականգնումին եւ Երուսաղէմի տաճարին վերաշինութեան տեսիլքը տուող մարգարէն, Բաբելոնի մէջ:

բ) Դանիէլ, աստուածային խորհուրդները յայտնող, մարգարէն Բաբելոնի մէջ:

գ) Անգէ, տաճարի վերաշինութեան կոչը հնչեցնող մարգարէն:

դ) Զաքարիա, Աստուծոյ փրկութեան շեփորահար մարգարէն:

ե) Եզրա, գերեվներու 2-րդ խումբ մը երկիր առաջնորդող մեծ Դպիրը եւ բարեկարգիչը, որ Աստուածաշունչ գիրքերու հաւաքման ախոյեանը եղաւ եւ մեկնութեան հիմնադիրը:

զ) Նեհեմիա, գերեալներու վերջին խումբը երկիր առաջնորդող եւ Երուսաղէմի աւերուած պարիսպները վերանորոգող կառավարիչը եղաւ:

է) Մաղաքիա, Հին Կտակարանի վերջին մարգարէն:

Այս շրջանին վերաբերող կարեւոր երեւոյթներն են.-

ա) Ժողովարաններու դրութեան ստեղծումը Բաբելոնի մէջ տաճարին բացակայութեան, եւ Դպիրներու դասակարգին առաջ գալը:

բ) Աստուածաշունչ գիրքերու վերջնական ժողովածուին կազմութիւնը, Եզրայի եւ իր դպրոցին աշխատանքով:

գ) Անցեալ պատմութեան վերաքննութիւնը՝ հոգեւոր հայեացքով (Մնացորդներու գիրքերու օրինակ):

7.- ՆԱԽԱՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՉՈՐՍ ԴԱՐԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻԻՆԸ

Այս մասին կը խօսին Եբրայական կանոնէն դուրս մնացած կարգ մը «Երկրորդականոն» գիրքեր, ինչպէս Մակաբայեցիներու գիրքերը:

Կը սկսի Աղեքսանդր Մեծի արշաւանքները կանխող տարիներով, եւ կ'աւարտի Պաղեստինի վրայ Հռոմէական տիրապետութեան հաստատումով:

Կ'ընդգրկէ շուրջ 400 տարիներու պատմութիւն մը, մինչեւ Քրիստոսի ծնունդը:

Այս շրջանին կարեւոր դէպքերն են.-

ա) 333 թուականին Պաղեստինի գրաւումը Աղեքսանդր Մակեդոնացիի կողմէ:

բ) Սելեւկեան թագաւոր Անտիոքոս Դ. Եպիփանէսի կողմէ տաճարի սրբապղծումը Ք.Ա. 167 թուականին, եւ Մատաթիա քահանայի եւ անոր որդիներուն առաջնորդութեամբ ապստամբութիւն Սելեւկեաններուն դէմ:

զ) Հասմոնական գերդաստանի (Յուդայ Մակաբեի ընտանիքը) իշխանութեան գլուխ գալը, մինչեւ Հռոմէական տիրապետութիւն:

դ) Հռոմ կը գրաւէ Պաղեստինը, Ք.Ա. 63 թուականին:

ե) Տաճարին վերաշինութիւնը կը սկսի Հերովդէս Մեծի կողմէ, Ք.Ա. 20 թուականին:

Այս շրջանին կարելոր դէմքերն են.-

ա) Յուդա Մակաբէ, Մատաթիա քահանայի որդին, Սելևկեաններու դէմ ապստամբութեան ոգեշնչողը:

բ) Մեծն Հերովդէս, որուն գահակալութեան վերջին տարին պիտի ծնէր Քրիստոս:

Այս շրջանին վերաբերող կարելոր երեւոյթներն են.-

ա) Ազգային թագաւորութեան մը վերահաստատումը, Մակաբէեանց օրով:

բ) Ծաւալուն գաղութներու գոյութիւնը աշխարհի տարածքին, մանաւանդ Բաբելոնի եւ Աղեքսանդրիայի (Եգիպտոս) մէջ:

գ) Հին Կտակարանի առաջին գրաւոր թարգմանութիւնը Յունարէնի (LXX) եւ բերանացի թարգմանութիւնները Արամերէնի:

դ) Կրօնական եւ ազգային խմբակցութեանց (Փարիսեցիներ, Սադուկեցիներ, Եսսենացիներ, Նախանձայոյզներ) կազմաւորումը:

ԾՆՆՂՈՑ ԳԻՐՔԸ

ԱՆՈՒՆ

Ծննդոց գիրքը առաջինն է այն հինգ գիրքերուն («Հնգամատեան» կոչումով ծանօթ), որոնք Հրէից մէջ ընդհանրացած աւանդութեամբ մը՝ միասնաբար կը բնութագրուէին կամ կը կոչուէին «Օրէնք»:

Ինչպէս Սուրբ Գրոց գիտութիւնը կու գայ բացատրել մեզի, սկզբնապէս ասոնցմէ առաջին չորսը (Ծնունդք, Ելք, Ղեւտացոց եւ Թիւք) շարունակական մէկ ամբողջութիւն կը կազմէին: Ն.Ք. 6-րդ դարուն երբ Աստուածաշնչական կանոնը վերջնական խմբագրութեան մը կ'ենթարկուէր քահանայական դպրոցին կողմէ, այս չորս մասերը անջատուեցան իրարմէ եւ իւրաքանչիւրը կոչուեցաւ իր առաջին քանի մը բառերով, ինչպէս է մինչեւ հիմա Եբրայական սովորութիւնը: Սակայն, երբ Ն.Ք. շուրջ 250 թուականին Հին Կտակարանը Յունարէնի թարգմանուեցաւ, իւրաքանչիւր գիրքի առանձին անուն մը տրուեցաւ՝ զայն բնորոշելու համար: Ահա այդպէս էր որ առաջին այս գիրքին տրուեցաւ «Ծնունդք» (Յուն. Γενεσις, Անգ. Genesis) կամ «Ծննդոց Գիրք» անունը: Մինչ Եբրայերէնի մէջ անիկա իր առաջին բառով կը կոչուի «Պըրէշիթ» (=Ի սկզբանէ):

«Ծնունդք» անունը ինքնին ցոյց կու տայ, թէ գիրքը զանազան ծնունդներ (որ կը նշանակէ նաեւ՝ ծագումներ կամ սկիզբներ, եւ ծննդաբանութիւններ կամ սերունդներ) կը ներկայացնէ մեզի:

ՀԵՂԻՆԱԿ

Ամբողջ Հնգամատեանը աւանդաբար կը վերագրուի Մովսէսի: Թէպէտեւ գիրքերուն մէջ այդ մասին ռեւէ նշում չկայ, բայց հետագայ Հրէական աւանդութիւնը անոնց հեղինակութիւնը Մովսէսի կու տար, եւ Քրիստոս ու Նոր Կտակարանը եւս նոյն աւանդութիւնը կ'ընդունին: Քրիստոս Ելից եւ Բ.Օրինաց գիրքերուն կապակցութեամբ այդ վկայութիւնը կու տայ (Մր 12.26: Յհ 5.46: Հմմտ Բ.Օր 18.15, 18)⁴⁵: Ղուկաս 2.22-ի մէջ Ղեւտացոց գիրքը «Մովսէսի Օրէնքը» կը կոչուի, իսկ Գրծ 15.21-ի մէջ ամբողջ Հնգամատեանին կ'ակնարկուի իբրեւ «Մովսէս» (այսինքն՝ Մովսէսի գիրք):

Աւանդական այս կարծիքը բառացիօրէն ճիշդ չէ հարկաւ: Անկասկած որ Մովսէս իր կարելոր բաժինը ունի անոր մէջ, եւ ատիկա կարելի չէ հերքել: Բայց գիրքը այնպէս ինչպէս հասած է մեզի՝ հաստատապէս խմբագիր գործ մըն է, ուր զանազան նիւթեր կամ աղբիւրներ մէկտեղուած են: Այսպէս, օրինակ.-

Ա.- Միջագետքի մէջ կատարուած պեղումները Սուներ-Աքքատեան գրականութեան յայտնաբերումով՝ շատ լուսաբանիչ եղան, օրինակ, Ծննդոց գիրքին մասին անուղղակի վկայութիւններ բերելով: Անոնց մէջ գտնուեցաւ Ծննդոցի ներկայացուցած կարգ մը աւանդութեանց նմանները, ինչ որ հասարակաց աւանդութեան մը մասին կը վկայէ, քանի գրաւոր այդ աղբիւրները դեռ անծանօթ էին Ծննդոցի գրութեան կամ խմբագրութեան ժամանակներուն: Անոնց մէջ գտնուեցան նաեւ հետքերը կամ արձագանգները նահապատներու կեանքին մաս կազմող շատ մը

⁴⁵ Թէպէտ Քրիստոսի վկայութիւնը կարելի է հասկնալ նաեւ Ծննդոց գիրքին համար.- հմմտ Ծն 8.15, 12.8, 18.18, 22.18, 49.10:

սովորութիւններու⁴⁶, որոնք Հին Կտակարանի միւս գիրքերուն մէջ չեն հանդիպիր, այլ խօսքով՝ հետագայ դարերուն արդէն գործնականօրէն դադրած եւ ժողովուրդին մէջ անծանօթ են, ինչ որ ցոյց կու տայ, դարձեալ, թէ նահապետներուն վերաբերող պատմութիւնները հետագային յօրինուած կամ խմբագրուած չեն կրնար ըլլալ՝ այդ սովորութիւններուն անծանօթ գրիչներու կողմէ, այլ վաւերականօրէն դարերու խորքէն կու գան, բերանացի աւանդումով հասած մինչեւ Մովսէսի օրերը եւ դեռ աւելի ուշ:

Բ.- Ուրիշ նիւթեր, յատկապէս՝ ցեղերու եւ թագաւորներու ազգաբանական կամ ժամանակագրական ցուցակներ, գրաւորապէս գոյութիւն ունեցած պէտք է ըլլան դեռ Մովսէսէն ալ առաջ, որովհետեւ շատ մեծ նմանութիւններ ունին Ասորա-Բաբելական նման ցանկերու հետ՝ կաւէ սալիկներու վրայ պահուած:

Գ.- Հնգամատեանին մէջ ունինք վկայութիւններ, թէ Մովսէս ինք շատ մը բաներ գրեց նոյնինքն Աստուծոյ հրամանով (Ել 17.14, 24.3-7: Բ.Օր 31.24 շեյն: Իսկ Յեսուի գիրքը (8.30-35) ամբողջ «Օրէնքի գիրք»ին գրութիւնը Մովսէսի կ'ընծայէ):

⁴⁶ Ն.Ք. 2-րդ հազարամեակի սկիզբներէն, այսինքն Աբրահամի ժամանակակից Աքքատական արձանագրութիւններէն՝ «Նուզի» կոչուած սալիկներուն մէջ վկայուած կը գտնենք, թէ ինչպէս.- 1.- Ընտանիքի որդեգիր վերակացու մը կամ ստրուկ ծառայ մը կրնար ժառանգորդ ըլլալ անգուակ մարդու մը (հմմտ Ծն 15.1-4): 2.- Ամուլ կին մը պարտատու էր աղախինի մը միջոցաւ գաւակներ տալ իր ամուսինին (հմմտ Ծն 16.2-4): 3.- Նման աղախին մը եւ իր գաւակները կարելի չէր տունէն վտարել (հմմտ Ծն 20.10-11): 4.- Մահուան անկողնի մէջ արտայայտուած փափաքը անփոփոխելի օրէնքի ոյժ ունէր, գրաւոր կտակին համագոր (հմմտ Իսահակի օրհնութիւնը Ծն 27.1-4, 22-23, 33: Յակոբի ցանկութիւնը՝ Ծն 47.28-31 եւ 48-րդ գլուխ):

Արդ, կը հետեւի՝ թէ Ծննդոց գիրքը եւ ընդհանրապէս Հնգամատեանը մէկ հեղինակի գործ չէ: Բերանացի թէ գրաւոր զանազան աղբիւրներ ի մի բերուած են, կազմելու համար զայն:

ԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՍ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԹՈՒԱԿԱՆ

Վերեւ ըսուածները ցոյց կու տան, թէ կարելի չէ գրութեան մէկ եւ միակ թուականի մը մասին խօսիլ, այլ կարելի է միայն անոր հանգրուանները նշել եւ կանխագոյն կամ յետնագոյն սահմանները ճշդել:

Արդ, Սուրբ Գրոց գիտութիւնը անոր մեջ գրութեան առնուազն երեք հանգրուաններ կը ճանչնայ. իսկ կանխագոյն եւ յետնագոյն թուականները կը ճշդէ այսպէս.-

Մովսէսի ձեռամբ արձանագրուած կամ իր կողմէ բերանացի ասանդուած նիւթերը Ն.Ք 15-րդ դարուն վերջին տասնամեակներէն կու գան⁴⁷: Բայց այնուհետեւ խմբագրական առնուազն երկու աշխատանքներ կատարուած են: Խմբագրական առաջին աշխատանքը կատարուած պէտք է ըլլայ Ն.Ք. 10-րդ դարուն, Դաւիթի թագաւորութեան ժամանակ (1010-970 թուական) կամ առ առաւելն՝ Սողոմոնի օրով (970-930 թուական), թագաւորութեան երկուքի բաժանումէն առաջ: Այդ հանգրուանին, Իսրայէլի անջատ ցեղերուն վերաբերող ասանդութիւնները հաւաքուեցաւ եւ ի

⁴⁷ Գ.Թգ 6.1-ը կ'ըսէ. «Իսրայէլի որդիներուն Եգիպտոսի երկրէն ելլելուն 480-րդ տարին, Սողոմոնի Իսրայէլի վրայ թագաւորելուն 4-րդ տարին Զիւ ամսուն, այսինքն 2-րդ ամսուն մեջ, անիկա Տիրոջ տունին հիմը դրաւ»: Եթէ այս տեղեկութիւնը ուղիղ է, Իսրայէլացիներու Եգիպտոսէն ելքը տեղի ունեցած պիտի ըլլայ Ն.Ք. 1446 թուականին, Ամենհոթեփ Բ. փարաւոնին օրով, որովհետեւ Սողոմոն թագաւորեց 970 թուականին, իսկ տաճարին հիմնադրութիւնը տեղի ունեցաւ 966 թուականին, որ Եգիպտոսէն ելքի 480-րդ տարին էր: Այս հաշուով՝ Մովսէս վախճանած պիտի ըլլայ 1406 թուականին, ինչ որ կը նշանակէ թէ իր ձեռքով գրուած կամ ասանդուած բաժինները կու գան 15-րդ դարու վերջաւորութենէն:

մի բերուելով խմբագրուեցան, ինչպէս ներքին կարգ մը տուեալներ ցոյց կու տան⁴⁸: Իսկ վերջնական խմբագրութիւն մը կատարուած է Բաբելոնի գերութեան շրջանին, Ն.Ք. 6-րդ դարուն, Եզեկիէլ մարգարէի գլխաւորած քահանայական դպրոցին աշխատանքով:

ԽՈՐՔԸ ԵՒ ՈՒՐԻՇ ԱՂԲԻՒՐՆԵՐՈՒ ՀԵՏ
ՀԱՆԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վերեւ ակնարկեցինք Ծննդոց գիրքի եւ Միջագետեան մէկ-երկու աղբիւրներու միջեւ կարգ մը աւանդութեանց նմանութեան: Այսպէս.-

- Աշխարհի ստեղծագործութեան դրուազը (1-2 գլուխներ) իր նմանը ունի Աքքատեան աղբիւրներէն (Ատրահասիսի դիւցազնավէպ)-ին մէջ (Ն.Ք. 2-րդ հազարամեակի սկիզբներէն, այսինքն Աբրահամի ժամանակէն եկող):

- 5-րդ գլուխին մէջ ներկայացուած նախահայրերու ազգաբանական ցուցակը իր նմանները ունի՝ Ն.Ք. 3-րդ հազարամեակի վերջաւորութենէն եկող Մումերական աղբիւրներուն մէջ:

- Ջրհեղեղին եւ տապանով մը Նոյի փրկութեան պատմութիւնը (Ծն 6-8 գլուխներ) իր նմանը ունի Աքքատական երկու աղբիւրներու՝ «Գիլգամէշի» եւ «Ատրահասիսի» դիւցազնավէպերուն մէջ (երկուքն ալ 2-րդ հազարամեակի սկիզբներէն եկող):

Ի՞նչպէս կը բացատրուին այս նմանութիւնները:

⁴⁸ Ասոր մէկ կողմնակի ակնարկութիւնն է, օրինակ, 36.31-ը «ասոնք են այն թագաւորները, որոնք Եդովմի երկրին մէջ թագաւորեցին, Իսրայէլի որդիներուն վրայ, ոեւէ թագաւորի թագաւորելէն առաջ»: Յայտնապէս այսպիսի բան չէր կրնար գրուիլ թագաւորութեան ստեղծումէն առաջ: Ուրիշ տուեալներու կարելի է անդրադառնալ Ծննդոց բնագիրի քննութեան ստեւն:

Եթէ չմոռնանք որ Աբրահամ ինք Միջագետացի մըն էր, հարաւային Միջագետքի Ուր քաղաքէն, եւ թէ Իսահակ հոնկէ հարս բերաւ, եւ Յակոբ քսան տարիներ այնտեղ ապրեցաւ իր մօրեղբօր՝ Լաբանի հետ, բացատրութիւնը բաւական պարզ կը դառնայ: Վստահաբար Աբրահամ իր հօրենական ամբողջ տունով միասին նոյն այդ ւանդութիւնները սերնդական յիշողութեամբ եւ բերանացի ւանդումով կը պահէր ու կը փոխանցէր յետնորդներուն, մինչեւ որ Մովսէսի ժամանակ կամ աւելի ուշ անոնք գրի առնուեցան եւ մաս կազմեցին «աշխարհի պատմութեան» ուրուագիրը ներկայացնող Ծննդոց գիրքին:

ԳԻՐՔԻՆ ԸՆԴԳՐԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԸ

Պատմութեան ձեռնարկ մը չէ Ծննդոցը, բայց եւ այնպէս կարելոր մասով պատմական խորք ունի:

Առաջին 11 գլուխներուն համար կարելի չէ ժամանակագրական ռեւէ փորձ: Հեռաւոր եւ մշուշոտ անցեալին վերակառուցում մըն է անիկա՝ ընդհանուր քանի մը գիծերու մէջ, ո՛չ թէ գիտական կամ պատմական մտահոգութեամբ կատարուած, այլ հաւատքի կարելոր հաստատումներ ընելու համար պարզապէս:

12-րդ գլուխէն սկսեալ, Աբրահամով բացուող նահապետական շրջանը ընդհանուր ձեւով մը կարելի է տեղադրել պատմական շրջագիծի մէջ: Ըստ Սուրբ Գրոց ներքին տուեալներուն, Աբրահամ, Իսահակ եւ Յակոբ ապրած են Ն.Ք. 20-19-րդ դարերուն:

ՆՊԱՏԱԿ

Գրուած պարզ ու պատկերաւոր լեզուով մը, ժամանակի մարդոց զարգացման մակարդակին եւ աշխարհահայեացքին համաձայն, գիրքը հիմնական ճշմարտութիւններ կ'ընծայէ, որոնք կարելոր են մեր հաւատքին ու փրկութեան համար: Կը հետապնդէ հիմնական քանի մը նպատակներ.-

1.- Ինչպէս (Օնունդք) անունն իսկ կը թելադրէ, ընդհանուր նպատակն է ցոյց տալ ամէն բանի ծագումը կամ սկիզբը, ո՛չ գիտական միտքով կամ հայեացքով, այլ հաւատքի՝ հայեացքով: Ցոյց տալ ծագումը կամ սկիզբը

- Տիեզերքին,
- Մեր աշխարհին,
- Կեանքին (բուսական ու կենդանական),
- Մարդուն ու մարդկութեան,
- Ամուսնական կապին եւ ընտանիքին,
- Մեղքին ու չարիքին,
- Մարդկային ընկերութեան ու քաղաքակրթութեան,
- Արեւստներուն եւ արուեստներուն,
- Լեզուներուն եւ ազգերուն, եւլն:

2.- Կ'ուզէ ցոյց տալ՝ թէ աշխարհ եւ պատմութիւն Աստուծոյ կողմէ ստեղծուած եւ Աստուծոյ նախախնամութեամբ ալ կը պահուին ու յառաջ կ'ընթանան դէպի որոշ նպատակակէտ մը: Մարդկային ցեղերուն ճիւղաւորումը կը պատմէ եւ ազգաբանական ցանկեր կու տայ՝ շեշտելու համար մարդկութեան հիմնական միութիւնը՝ իր ծագման եւ անկման մէջ, որով բոլորն ալ Աստուծոյ խնամքին ու փրկարար շնորհքին պէտք ունին:

3.- Անկեալ բնութեան հետզհետէ աւելի դէպի չարը հակող եւ ինքզինք սրբազրելու անկարող վիճակին դիմաց՝ կ'ուզէ մատնանշել սկիզբը Աստուծոյ փրկութեան ծրագիրին, խոստումներուն եւ փրկագործական քայլերուն: Բազմաթիւ

օրինակներով ցոյց կու տայ, թէ Աստուծոյ ընտրութիւնը, փրկութիւնն ու խոստումները չեն հիմնուիր մարդկային արժանաւորութեան, այլ պարզապէս Աստուծոյ գերիշխան եւ ազատ կամքին վրայ⁴⁹: Նոյնպէս ալ, յատուկ արժանիքի մը հիման վրայ չէր որ Աստուած Աբրահամի սերունդը ընտրեց իբրեւ իր «ժողովուրդը», այլ պարզապէս իր ազատ կամքով զայն ընտրեց՝ փրկագործական իր նպատակին իրականացման ծառայեցնելու համար:

4.- Ի վերջոյ, մեր առջեւ կը բանայ հաւատքի ախոյեաններու (Ենովք, Նոյ, Աբրահամ, Իսահակ, Յակոբ, Յովսէփ) եւ մարդկային վարմունքներու լայն եւ բարոյակրթիչ պաստառ մը, որուն արձագանգները ամենուրեք կը հանդիպին Հին եւ Նոր Կտակարաններուն մէջ (տե՛ս օրինակ, Եբր 11-րդ գլուխ):

ՄԱՍԵՐ ԵՒ ՈՒՐՈՒԱԳԻԾ

Ծննդոց գիրքը 50 գլուխներ ունի: Ընդհանրապէս կը բաժնուի երկու գլխաւոր մասերու.-

1-11 գլուխները կը ներկայացնեն ծագման պատմութիւն, որ կ'ընդգրկէ նաեւ փրկագործութեան պատմութեան սկիզբը: Իսկ 12-50 գլուխները կը պատկերացնեն՝ (ա) Իսրայէլի ժողովուրդին կազմութիւնը՝ որ կը սկսի Աբրահամին կոչումով եւ Աստուծոյ իրեն տուած խոստումով, եւ (բ) Աստուծոյ կոչին դիմաց՝ նահապետներուն հաւատքի պատասխանները:

⁴⁹ Այդ ընտրութեան ազատութիւնը մասնաւորաբար ցոյց կը տրուի՝ անդրանկութեան իրաւունքի փոխանցումովը ոչ-անդրանիկ ծնունդներու: Այսպէս.- Կայէնի անդրանկութեան իրաւունքը՝ Սէթին, Յաբեթինը, Մեմին, Իսմայէլինը՝ Իսահակին, Եսաիինը՝ Յակոբին, Ռուբենի եւ յաջորդ երկու եղբայրներուն՝ Յուդային, Մանասէինը՝ Եփրեմին: Նոյն ազատ ընտրութիւնը կ'ընէ ժողովուրդներու մակարդակին վրայ, որոնցմէ կրտսեր եւ սակաւաւոր մը Եբրայեցի ժողովուրդը կ'ընտրէ իբրեւ «անդրանիկ» (Ել 4.22):

Գիրքին ուրուագիծը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.-

Ա.- ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹԻՒՆ կամ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

- 1.- Աշխարհի ստեղծումը (1.1-էն մինչեւ 2.4):
- 2.- Դրախտային կեանք եւ անկում (2.4-էն մինչեւ 3.24):
- 3.- Երկրի բնակչութեան տարածումը (4.1-էն մինչեւ 6.4):
- 4.- Մարդկութեան չարանալը եւ ջրհեղեղ (6-9 գլուխներ):
- 5.- Ազգերու ցուցակ (10.1-32):
- 6.- Բաբելոնի աշտարակաշինութիւն եւ Սեմի սերունդները (11.1-32):

Բ.-ՆԱՀԱՊԵՏՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ կամ ՀՐԵԱՅ ԱԶԳԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

- 1.- Աբրահամի պատմութիւնը (12.1-էն մինչեւ 25.18):
- 2.- Իսահակի պատմութիւնը (25-27 գլուխներուն մէջ ցրուած):
- 3.- Յակոբի պատմութիւնը (25.19-էն մինչեւ 36-րդ գլուխ):
- 4.- Յովսէփի պատմութիւնը (37-50 գլուխներ):

ԵԼԻՑ ԳԻՐՔԸ

ԱՆՈՒՆ

Եբրայերենի մեջ գիրքը կը կոչուի իր առաջին բառերով. «Եւ ասոնք են անունները» (=we'elleh shemoth): «Եւ»ով սկսիլը ինքնին ցոյց կու տայ, թէ Ելքը առանձին գիրք մը չէ, այլ անմիջական շարունակութիւնն է Ծննդոցին, եւ Հնգամատեանի միւս գիրքերուն հետ մէկ ամբողջութիւն կը կազմէ: Իսկ Ելք անունը Յունարէն Եօթանասնից թարգմանութենէն կու գայ մեզի: «Ելք» կը նշանակէ դուրս ելլել, դուրս գալ, կամ մեկնիլ (հմմտ Ղկ 9.31): Այդ անունը բնորոշիչ է բովանդակութեան, որովհետեւ կը նշէ Եգիպտոսէն եւ Եգիպտոսի մէջ ապրուած դառն ծառայութեան (=ստրկութեան) լուծէն դուրս գալը:

ԵԼՔԻՆ ԲԱՑԱՌԻԿ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ՝ ԵԲՐԱՅԵՑԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ

Այդ իրողութիւնը, սակայն, զուտ պատմական նշանակութիւն ունեցող եղելութիւն մը չէ: Նկարագրուած «Ելք»ը ո՛չ թէ Եբրայեցի ժողովուրդին կամքով ու ճիգերովը կատարուած արարք մըն է, այլ Աստուծոյ փրկարար շնորհքին եւ զօրութեան⁵⁰ մէկ մեծ արարքը, որ Եբրայեցի ժողովուրդին ազգային եւ կրօնական փորձառութեան մէջ եզակի եւ անկրկնելի է, եւ ըստ այնմ ալ անջնջելի յիշատակով կապուած է իրենց կեանքին բոլո՛ր երեսներուն եւ հանգրուաններուն: Այսպէս, եթէ միայն իրենց տօները նկատի առնենք, - Բաղարջակերք, Չատիկ, Պենտէկոստէ,

⁵⁰ «Աջ քո, Տէր, փառաւորեալ է զօրութեամբ, աջ քո, Տէր, խորտակեաց զթշնամին...: Առաջնորդեցեր արդարութեամբ ժողովրդեան քում այսմ, զոր փրկեցեր, միախարեցեր զօրութեամբ քով ի բանակետոյ սրբութեան քոյ» (15.6, 13):

Տաղաւարահարց, Շաբաթի հանգիստը⁵¹, եւլն - կը տեսնենք որ բոլորն ալ, կա՛մ ամբողջութեամբ եւ կամ մասնակիօրէն կապուած են այս մեծ ազատագրութեան պատմութեան: Միւս կողմէ, Հին Կտակարանի գիրքերուն մեծամասնութեան մէջ տեւականօրէն յիշատակուած եւ նորանոր մեկնութեանց կամ ազգային-հոգեւոր խորհրդածութեանց առիթ դարձած է ազատագրութեան այս հրաշալի պատմութիւնը:

Ինչո՞ւ եզակի է Ելից գիրքը:

1.- Ծնունդներու գիրքին մէջ Աստուծոյ փրկագործական արարքները ուղղուած են կա՛մ անհատներու, եւ կա՛մ սակաւաթիւ մարդոց, եւ սահմանուած են աւելի ընդհանո՛ւր նշանակութիւն մը ունենալու, համայն աշխարհին համար, ամբողջ մարդկութեան համար: Մինչդեռ Ելքը կը վերաբերի Աստուծոյ ընտրած «ժողովուրդ»ին, լման «ազգ»ի մը, եւ առաջին հերթին՝ Եփրայեցի ժողովուրդին, թեպէտ անոր փրկագործական նշանակութիւնը երբե՛ք ալ նեղ ազգային չէ, այլ համամարդկային, որուն ապացոյցը նոյնինքն Նոր Կտակարանին եւ քրիստոնէական բոլոր եկեղեցիներուն կողմէ անոր օգտագործումն է:

2.- Ելից գիրքը Եփրայեցի ժողովուրդին ազգ դառնալու պատմութիւնն է նաեւ, եւ ատիկա կը սկսի ո՛չ թէ նահապետներով, որոնց միայն խոստումը տրուած էր («մեծ ազգ մը պիտի ընեմ քեզ...»), այլ կը սկսի Մովսէսով:

⁵¹ Պենտեկոստէն, ըստ Օրէնքի գիրքին, ստրկական ծառայութենէ ազատագրուելուն առիթով արտայայտուած երախտագիտութեան տօն է (հմմտ Բ.Օր 16.9-12): Իսկ հետագայ աւանդութիւնը տօնին կապած է նաեւ Սինայի վրայ Օրէնքի տրուելու յիշատակը: Տաղաւարահարաց տօնը անապատային քառասնամեայ թափառումներուն կապուած յիշատակ էր արդէն, որուն միացած էին՝ հետագայ աւանդութեամբ՝ կրակէ սինին առաջին երեւումը եւ Ուխտի Տապանակին շինութեան սկիզբը, Մովսէսի հրահանգով: Իսկ Շաբաթի հանգիստը սկզբնապէս թէեւ Աստուծոյ ստեղծագործութեան աւարտին կապուած (Ել 20.11), բայց Բ.Օրինաց գիրքին մէջ բացատրուած է իբրեւ Եգիպտոսէն ազատագրութեան յիշատակին կապուած աստուածային պատուէր (5.15):

ԵՐԲ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ Է ԵԼՔԸ

Ելից 12.40-41 համարները մեզի կ'ըսեն՝ թե Իսրայելի որդիները Եզիպտոս մնացին 430 տարի (հմմտ Գղ 3.17): Իսկ Օննդոց գիրքին մեջ միայն 400 տարիներու շրջան մը կը յիշուի (15.13: Հմմտ Գրծ 7.6): Եթէ յիշեալ 400-430 տարիները սկսինք հաշուել շուրջ 1800-ական թուականներէն, որ Յակոբի եւ իր որդիներուն Եզիպտոս իջնելու մօտաւոր ժամանակն է, Իսրայելացիներու ելքը կը զուգադիպի 1400-ական թուականներու վերջերը: Սակայն Օննդներու գիրքին մասին խօսած աստէն ակնարկեցինք թէ Գ.Թագաւորութեանց գիրքին մեջ (6.1) կայ ուրիշ տեղեկութիւն մըն ալ, որուն եթէ կռթնինք՝ աւելի ճշգրիտ թուականի մը կը հասնինք: Հոն կ'ըսուի. *«Իսրայել որդիներուն Եզիպտոսի երկրէն ելլելուն չորս հարիւր ութսուներորդ տարին, Սողոմոնի Իսրայելի վրայ թագաւորելուն չորրորդ տարին, Ջիւ ամսուն, այսինքն երկրորդ ամսուն մեջ, անհկա Տիրոջ տունին հիմը դրաւ»*: Այս տեղեկութեան հիմամբ՝ Եզիպտոսէն ելքը տեղի ունեցած պիտի ըլլայ Ք.Ա. 1446-թուականին, երբ Եզիպտոսի փարաւոնն էր՝ Ամենհոթեփ Բ.: Այդ պարագային ծանրագոյն ճնշումները սկսած պիտի ըլլան անոր նախորդին՝ Թուֆմոս Գ.ի օրով⁵²:

⁵² Սուրբ Գրոց ժամանակագրութեամբ զբաղած կարգ մը բանասերներ աւելի ուշ թուական մը կ'առաջարկեն: Հիմնուելով Ելքի գիրքին առաջին գլխու 11-րդ համարին վրայ, ուր կը յիշուի թէ Իսրայելացի գերիներ Փիթոմ եւ Ռամսէս քաղաքները շինեցին, եւ նկատի ունենալով որ այդ քաղաքները շինուած են Ռամսէս Բ. փարաւոնին օրով (շուրջ 1300-1235), կ'ենթադրեն որ ելքը կրնայ տեղի ունեցած ըլլալ նոյնինքն այս փարաւոնին օրով, շուրջ 1290-ին: Բայց այս մէկը շատ հաւանական չէ, մանաւանդ երբ նկատի առնենք ուրիշ տեղեկութիւն մը, այս անգամ Դատաւորներու գիրքէն (11.26), ուր Յեփթայէ դատաւորը Ամմոնացիներու թագաւորին յղած իր պատգամին մեջ կը յիշատակէ, թէ ահա արդէն 300 տարի է՝ որ Իսրայելացիներ կը տիրեն որոշ քաղաքներու: Արդ, նկատի ունենալով, որ Յեփթայէն ետք, մինչեւ Սաւուդի թագաւորելը (Ք.Ա. 1050 թ.) դեռ շուրջ հարիւրամեակ մը եւս պիտի անցնի. 1446 թուականը աւելի յարմար կու գայ ընդհանուր ժամանակագրութեան ճշգրտութեան:

ՀԵՂԻՆԱԿԸ

Ինչպես Ծննդոց գիրքի պարագային ըսինք, այս գիրքին ալ հեղինակը, ըստ աւանդութեան, Մովսէս է (հմմտ Սիրաք 45.5: Մրկ 1.44: Յհ 1.45): Այդ մասին գիրքը ինք ալ ներքին վկայութիւններ ունի (տե՛ս, օրինակ, Ել 17.14): Այս մէկը իբրեւ հիմնական ճշմարտութիւն ընդունելով հանդերձ, կը ճանչնանք նաեւ, թէ Հնգամատեանի միւս գիրքերուն հետ միասին՝ այս մէկը եւս հետագայ վերախմբագրութեան մը ենթարկուած է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՈՒՐՈՒԱԳԻՐԸ

Գիրքը կը բաղկանայ 40 գլուխներէ, եւ ունի զլիսաւոր երկու մասեր, որոնք կարելի է հետեւեալ ձեւով բնութագրել.-

ա) Եգիպտոսի ծառայութիւնը եւ Մովսէսի ձեռքով ելքը դէպի անապատ (1-18 գլուխներ):

բ) Սինայի մէջ Աստուծոյ Օրէնքին տրւչութիւնը (19-40 գլուխներ):

Քիչ մը աւելի մանրամասնեալ պատկերով, գիրքը հետեւեալ բաժանումներով կը ներկայանայ մեզի.-

Ա.- ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԵԼՔ ԵԳԻՊՏՈՍԷՆ (1-18 գլուխներ)

1.- Սկիզբ հալածանքներու (1-2):

2.- Մովսէսի կոչումը (3-4):

3.- Հանդիպումներ փարաւոնին հետ (5):

4.- Մովսէսի կոչումին մէկ ուրիշ ներկայացումը (6.1-էն մինչեւ 7.13):

5.- Եգիպտոսի կրած տասը պատիժները (7.14-էն մինչեւ 11.10):

6.- Պատրաստութիւն, առաջին Չատիկ եւ մեկնում (12-րդ գլուխ եւ 13.1- 16):

7.- Անցք Կարմիր ծովէն (13.17-էն մինչեւ 15.21):

8.- Անապատային թափառում (15.22-էն մինչեւ 18.27):

Բ.- ՕՐԷՆՔԻ ՏԸԻՉՈՒԹԻԻՆԸ ՄԻՆԱՅԻ ՄԷՁ (19-40 գլուխներ)

1.- Աստուծոյ ներկայութեան յայտնութիւնը (19):

2.- Տասնաբանեայ պատուիրաններ (20.1-21):

3.- Ուխտին գիրքը (20.22-էն մինչեւ 23.33):

4.- Ուխտին կնքումը (24):

5.-Տապանակին եւ Վկայութեան Խորանին մասին հրահանգներ (25-31):

6.- Անապատի կեանքէն դրուագներ (32-34):

7.- Տապանակին եւ Վկայութեան Խորանին շինութիւնը եւ վերջին հրահանգներ (35-40):

ՆՊԱՏԱԿԸ

Գիրքին ծանօթացումը ցոյց կուտայ, որ անիկա կը հետապնդէ հիմնական քանի մը նպատակներ.-

1.- Նախապատրաստել Ելք-ին խորքը: Իսրայէլի ստրկութեան դառն վիճակը եւ հետզհետէ ծանրացող խստութիւնները պատկերացնելով՝ ցոյց կու տայ, թէ միայն աստուածային բացառիկ միջամտութիւն մը կրնար յանկարծօրէն ազատագրել զիրենք եւ ազատ ժողովուրդ դարձնել:

2.- Աստուծոյ սեփական ժողովուրդին կազմութիւնը եւ կոչումը ցոյց տալ: Այդ խորքին վրայ է որ Աստուած իր փրկարար զօրութիւնը պիտի ցոյց տար այն ժողովուրդին՝ որ պիտի դարձնէր իր սեփական ժողովուրդը եւ փրկութեան կանչուելիք բոլոր ժողովուրդներուն «անդրանիկը» (տե՛ս Ել 4.22), իր Օրէնքը տալով անոր եւ Ուխտ մը կնքելով անոր հետ:

Օրէնք մը եւ Ուխտ մը, որով ազատագրեալ Իսրայէլը այնուհետեւ պիտի դառնար աստուածպետական դրութեամբ ղեկավարուող, այսինքն՝ Աստուծով եւ իր անմիջական ներկայացուցիչներով կառավարուող ազգ կամ ժողովուրդ:

3.- Աստուծոյ ժողովուրդը պատրաստել՝ Աստուծոյ ներկայութիւնը իր մէջ ընդունելու: Մինայի վրայ տրուած Օրէնքը, մանաւանդ Վկայութեան Խորանին սարքաւորման վերաբերող իր երեսներով, ցոյց կու տայ, թէ հակառակ իր բնակութիւնը իր ժողովուրդին մէջ հաստատելու Աստուծոյ խոստումին, տակաւին ժողովուրդը անմիջական կապ պիտի չունենա՝ ըստ Աստուծոյ հետ, այլ միայն միջնորդութեամբը քահանաներուն. եւ նոյնիսկ ասոնք այդ կապը չունէին, բացի Քահանայապետէն, որ տարին միայն մէկ անգամ թոյլտուութիւն ունէր: Այս իրողութիւնները պատկերաւոր ձեւով ճշմարտութիւն մը կը փորձեն բերել, կը միտին ժողովուրդը դաստիարակելու եւ պատրաստելու գալիք այն ժամանակին՝ երբ իր ժողովուրդին մէջ ըլլալու եւ անոնց հետ բնակելու աստուածային խոստումը Քրիստոսով պիտի իրականանար (ատոր համար ալ Հին Կտակարանը Քրիստոսի կու տար «Էմմանու-Էլ» անունը, որ կը նշանակէ՝ «Աստուած մեզի հետ»), սպասելով Աստուծոյ արքայութեան մէջ այդ խոստումին վերջնական կատարումին:

ԿՐՕՆԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ

Ելից գիրքին կրօնական-աստուածաբանական առումով մեծ արժէք կը ներկայացնէ, առաջին հիմնաքարը դառնալով աստուածաշնչական մեզի ծանօթ շատ մը ըմբռնումներու: Այսպէս.-

1.- Մեզի Աստուծոյ անունը («ԵՀՈՎԱ» =ԱՆ Որ Է) ծանօթացնելով, հիմնական ծանօթութիւններ կու տայ նաեւ Անոր Էութեան եւ շատ մը ստորոգելիներուն մասին, եւ ցոյց կու տայ, թէ զԱստուած ճանչնալ՝ կը նշանակէ ճանչնալ

Աստուծոյ նկարագիրին հիմնական յատկութիւնները.- Արդար ըլլալը, ճշմարիտ, ողորմած, իր խոստումներուն հաւատարիմ եւ սուրբ ըլլալը, եւլն:

2.- Մեզի կը սորվեցնէ, թէ Աստուած է տէրը եւ ղեկավարը մարդկային պատմութեան, ուր ամէն ինչ իր գիտութեամբ, կամքով եւ թոյլտուութեամբ է որ տեղի կ'ունենայ: Նահապետներուն տրուած խոստումներուն աստիճանական կատարումը այդ ճշմարտութեան խորունկ մէկ արտայայտութիւնն է:

3.- Մեզի կը սորվեցնէ, թէ Աստուած է Փրկիչը մարդոց եւ ազգերուն: Պատմութեան ընթացքին ժամանակաւոր ազատագրութիւնը կամ փրկութիւնը տեսակ մը պատկերացումը կը կազմեն գալիք վերջնական եւ մնայուն փրկութեան, որ պիտի իրագործուի Քրիստոսով:

4.- Մեզի կը սորվեցնէ, թէ բարոյական պատուերները (տասնաբանեան եւ միւս օրէնքները) իրենց ծագումը եւ հիմը ունին Աստուծոյ մէջ, եւ Աստուած անոնցմով կ'ուզէ պատրաստել իր ժողովուրդը:

5.- Մեզի կը սորվեցնէ, թէ Աստուծոյ պաշտամունքը, այլ խօսքով՝ Աստուծոյ ծառայելն ու բոլոր գործերով զայն փառաւորելը մարդուն գոյութեան հիմնական նպատակն ու արժէքն են, եւ ուստի՝ մարդուն գլխաւոր առաքելութիւնը:

ԵԼԻՅ ԳԻՐՔԸ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Մեր եկեղեցական տօնացոյցին վրայ եթէ աչք մը նետենք, կը տեսնենք որ բոլոր մեծ տօներուն առիթով անպայման ընթերցում մը ունինք Ելից գիրքէն: Այսպէս, Ծնունդի ճրագալոյցին, Մեծ Պահքի Չորեքշաբթի օրերուն, Զատիկուան ճրագալոյցին (կրկնակ ընթերցումներ), Ոտնալուային, Վարդավառի մեռելոցին, եւլն: Ինչո՞ւ: Որովհետեւ Ելից գիրքը Աստուծոյ փրկագործութիւնը պատմող մեծ գիրքն է, եւ մեր

տերունի տօները նոյն փրկագործութեան խորհուրդին տարբեր երեսները կ'ընծայեն մեզի:

Արդարեւ, Ելից գիրքը իր ամբողջութեանը մէջ՝ այլաբանականօրէն կամ խորհրդանշականօրէն կը պատկերացնէ՝ Աստուծոյ նոր ժողովուրդին ծնունդն ու գնացքը դէպի աւետեաց երկիր: Այլ խօսքով, անոր մէջ կը գտնենք նախապատկերացումը Քրիստոսի Եկեղեցիին, որ յստակ կը դառնայ հետեւեալ ամփոփ համեմատութեամբ.-

1.- Եգիպտոսի մէջ մարմնաւոր փարաւոնին պարտադրած դառն ստրկութեան տակ կը հեծէր Եփրայեցի ժողովուրդը, որ պատկերացումն է Չարին՝ «Անմարմին փարաւոնին» (Շրկ.) պարտադրած մեղքի դառն ստրկութեան տակ հեծող ամբողջ մարդկութեան:

2.- Ինչպէս աստուածային փրկութեան նշանը զատկական գառնուկը պիտի ըլլար, եւ դռներուն վրայ քսուած անոր արիւնը այդ փրկութիւնը պիտի իրագործէր՝ հեռացնելով Աստուծոյ դատապարտութեան մահացուցիչ հարուածը, այնպէս ալ Քրիստոս՝ «Աստուծոյ Գառնուկը» աստուածային փրկութեան իսկական նշանը եւ միջոցը եղաւ, որ իր արիւնով կնքուածները փրկեց՝ անոնցմէ հեռացնելով Աստուծոյ դատապարտութեան մահացուցիչ հարուածը:

3.- Ինչպէս Աստուած Հին Իսրայէլին ազատագրութիւնը իրագործեց իր մեծ ծառային՝ Մովսէսի ձեռքով, այնպէս ալ Աստուծոյ բուն ժողովուրդին՝ Նոր Իսրայէլի ազատագրութիւնը կը կատարուի Աստուծոյ «Օծեալ Ծառային», Աստուածորդիին ձեռքով:

4.- Ինչպէս Եփրայեցի ժողովուրդին Կարմիր ծովէն անցքը մարմնաւոր ազատագրութեամբ՝ նոր վիճակի եւ նոր կեանքի մը անցնիլ պիտի նշանակէր, այնպէս ալ համայն մարդկութեան համար մեղքի ծովէն դէպի արդարութեան ափունքը անցնիլը ելք մը կամ անցում մըն է՝ «ի խաւարէ ի լոյս, ի մահուանէ ի կեանս, յապականութենէ

յանապականութիւն, յանգիտութենէ ի գիտութիւն ճշմարտութեան» (Ժամագիրք):

5.- Ինչպէս Եգիպտոսէն ազատագրութեամբ ծնունդ կ'առնէ Երրայեցի ազգը, նոյնպէս Քրիստոսով մեղքէն ազատագրուելով ծնունդ կ'առնէ Աստուծոյ նոր ժողովուրդը, Եկեղեցին:

6.- Ինչպէս Ելքի գիրքին մէջ Աստուծոյ կողմէ նոր ազգի մը հիմերը կը դրուին Աստուծմէ տրուած Օրէնքով մը՝ Սինայի բարձունքին, այնպէս ալ Աստուծոյ Նոր Ժողովուրդին եւ «սուրբ ազգ»ին՝ Եկեղեցիին (հմմտ Ա.Պտ 2.9) հիմերը կը դրուին նոր Օրէնքով մը՝ լերան քարոզով տրուած (Մտ 5-7):

7.- Ինչպէս Սինայի բարձունքին՝ Օրէնքին վրայ հիմնուած Ուխտ մը կ'նքուեցաւ Աստուծոյ եւ իր ժողովուրդին միջեւ՝ յատուկ զոհերու (Ել 24.5-8) արիւնով, այնպէս ալ Գողգոթայի բարձունքին՝ Աստուծոյ եւ իր նոր ժողովուրդին միջեւ հոգեւոր Նոր Ուխտ մը կ'նքուեցաւ՝ Աստուծոյ Որդիին իբրեւ զոհ պատարագումովը եւ խաչին վրայ թափած փրկարար արիւնովը:

8.- Ինչպէս փարաւոնին զօրքերէն փրկուած եւ Կարմիր ծովէն անցած ժողովուրդը այնուհետեւ 40 տարիներ հոգեւոր պայքարի փորձառութեան եւ աստուածային օրէնքներու հնազանդութեան դաստիարակութեան ճամբէն քալեց՝ մինչեւ խոստացուած երկիրը հասնիլը, այնպէս ալ մեղքի ծովէն անցած եւ դատապարտութեան կրակէն փրկուած ժողովուրդներս երկրաւոր կեանքի մեր օրերուն՝ նոյն հոգեւոր պայքարի փորձառութեան եւ աստուածային կամքին ու ծրագիրին հնազանդութեան դաստիարակութեան ճամբէն կը քալենք՝ մինչեւ «աւետեաց երկիրը» հասնիլը:

ՂԵԻՏԱՑԻՈՑ ԳԻՐՔԸ

ԱՆՈՒՆ

Հնգամատեանի երրորդ գիրքն է այս գիրքը, որուն Եբրայերէն անուանումն է՝ "Եւ կոչեաց", (Wayyiqra), գիրքին առաջին երկու բառերը, ինչպէս Եբրայական սովորութիւնն է Հին Կտակարանեան ուրեք գիրք կոչել իր առաջին բառով կամ բառերով: Յունարէն Եօթանասնից (LXX կրճատումով ծանօթ) թարգմանութիւնը զայն կը կոչէ "Ղեւտական", որուն "Ղեւտացոց" ձեւը տրուեք է աշխարհաբարի մէջ: Ի վերջոյ, Հրեայ բաբբիներ զայն կը կոչեն "Քահանայական Օրէնք" կամ "Քահանայական ձեռնարկ" (Priestly Manual):

Այս անուանումները գիրքը կը բնութագրեն իբրեւ Ղեւտացիներու, այսինքն քահանայական ցեղին պարտականութեան ծիրը ճշդող գիրք: Եւ ասիկա ճշմարիտ է, եթէ նկատի ունենանք որ նոյնիսկ ժողովուրդին վերաբերող ծիսական թէ կենցաղային - առողջապահական օրէնքերու գործադրութեան հսկիչները միշտ քահանաներն էին, ինչպէս իրենց վստահուած էր Օրէնքը ժողովուրդին ուսուցանելու պատասխանատուութիւնը (տե՛ս Բ.Օր 31.9, 33.10: Նէ 8-րդ գլուխ):

ԲՆԱԳԻՐ, ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԺԱՄԱՆԱԿ

Ղեւտացոց գիրքին բնագիրը Հին Կտակարանի գիրքերուն մէջ լաւագոյնս պահուած բնագիրներէն է:

Գործը ինք իր մէջ ունի հաւաստումներ՝ թէ օրէնքներու այս ամբողջութիւնը տրուեցաւ Աստուծոյ կողմէ, Սինայի վրայ (1.1, 27.34): Թէպէտ գիրքին մէջ ուրեք տեղ չէ ըսուած թէ Մովսէս ինք գրի առաւ զայն, բայց շուրջ երեսուն անգամներ կրկնուած www.hygradaran.weebly.com 282

է, թէ Աստուած Մովսէսի միջոցաւ տուաւ այս օրէնքները, ինչ որ տեսակ մը անուղղակի վկայութիւն է՝ թէ Մովսէսի ձեռքով կամ իր օրով եւ իր թելադրութեամբ էր որ անոնք արձանագրուեցան:

Ըստ բանասիրութեան, սակայն, անիկա խմբագրական աշխատանք մըն է ուր կը գտնենք հին եւ նոր տարրեր: Այսպէս, օրինակ, գիրքին մէջ առանձին բաժին մը կը կազմէ 17-27 գլուխները, ծանօթ՝ «Սրբութեան օրէնքներ» անունով: Այս բաժինը ինքն ալ բազմաթիւ խաւեր ունի, տեսակ մը առանձին խմբագրութիւն է: Թէ՛ այս բաժինին եւ թէ՛ ամբողջ գիրքին մէջ զգալի է Օրինապաշտ (D կրճատումով ծանօթ) եւ քահանայական (P կրճատումով ծանօթ) խմբագրական դպրոցներու աշխատանքը, եւ Եզեկիէլի մարգարէութեան հետ սերտ կապը, որով խմբագրութեան վերջին թուական կարելի է ճանչնալ 600-570 թուականները, այսինքն առաջին տաճարին վերջին տարիները եւ Բաբելոնեան գերութեան առաջին տարիները:

Իսկ կանխագոյն թուականի մը մասին կարելի՞ է խօսիլ:

Արդի բանասիրութիւնը Ղեւտացոց գիրքին հասկացողութեան համար շատ բան քաղած է Ն.Ք. 2-րդ հազարամեակի հին Մեմական ժողովուրդներու ծիսական եւ օրինական գիրքերէն, ինչպէս՝ Եփրատի միջին հոսանքին վրայ գտնուող Մարի քաղաքին եւ Լաթաքիոյ մօտերը գտնուող Ուկարիթ (այժմ՝ Ռաս Շամրա) քաղաքին պեղումներէն գտնուած արձանագրութիւններէն եւ կաւե սալիկներու վրայ պահուած գրութիւններէն: Նմանութիւնները ցոյց կու տան, որ Ղեւտացոց գիրքի ծիսական եզրաբանութիւնը (կամ ընդհանրապէս Իսրայէլի ծիսական եզրաբանութիւնը) բաւական հին է, ինչ որ իր

կարգին կը վկայէ թէ գիրքին մէջ որոշ խաւ մը կու գայ Մովսէսի ժամանակէն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՈՒՐՈՒԱԳԻՐԸ

Եթէ դիտենք՝ որ բնագիրը «Եւ»ով կը սկսի, պարզ կ'ըլլայ որ գիրքը կը ներկայանայ որպէս (եւ իրօք կը կազմէ) շարունակութիւնը Ելից գիրքին, աւանդուած Սինայի անապատին մէջ:

Գիրքը ունի 27 գլուխ: Կարելի է գայն 5 մասերու վերածել.-

Ա.- ԶՈՂԻ ՕՐԵՆՔԸ (1-7 գլուխներ)

1.- Ժողովուրդին ուղղուած հրահանգներ (1-5 գլուխներ եւ 6.1-7):

2.- Քահանաներուն զոհերը եւ անոնց բաժինները (6.8-30, 7-րդ):

Բ.- ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԱԼ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԻ ՄԿԶԲՆԱԻՈՐՈՒՄԸ (8-10 գլուխներ)

1.- Ահարոնի եւ իր որդիներուն օծումը եւ պատուէրներ (8-րդ):

2.- Ահարոնի մատուցած առաջին զոհերը (9-րդ):

3.- Քահանաներուն ուղղուած որոշ օրէնքներ (10-րդ):

- Նադաբի եւ Աբիուղի պատիժը,

- Պաշտօնավարութեան ընթացքին գինի չխմել,

- Զոհերու մնացորդները ուտել:

Գ.- ՄԱՔՐՈՒԹԵԱՆ ՕՐԵՆՔԸ (11-16 գլուխներ):

1.- Սուրբ եւ անսուրբ կենդանիներու մասին

2.- Մեռած կենդանիներու դպչելուն անմաքրութիւնը

3.- Կնոջ անմաքրութեան եւ բորոտութեան մասին:

4.- Բորոտութեան անմաքրութիւնը (13-14 գլուխներ):
5.- Մարմնական ծորումներու անմաքրութիւնը (15-
րդ):

6.- Քաւութեան Օրուան հրահանգներ (16-րդ):

Դ.- ՄԲՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔԸ (17-26 գլուխներ)

1.- Սրբուելու անհրաժեշտութիւնը, որովհետեւ
Աստուած ինք Սուրբ է:

2.- Չոհի անհրաժեշտութիւնը եւ արին չուտելու
հրահանգ (17-րդ):

3.- Արդարութեան եւ բարոյական վարքագիծի
պահանջներ՝ կեանքի բոլոր երեսները եւ յարաբերութիւնները
202ափող (18-22 գլուխներ):

4.- Գլխաւոր տօները եւ անոնց կապուած
պարտաւորութիւններ (23-26 գլուխներ):

Ե.- ՈՒԽՏԵՐ, ՆՈՒԷՐՆԵՐ ԵՒ ՏԱՍԱՆՈՐԴ (27-րդ):

ԳԻՐՔԻՆ ԴԻՏՈՒՄԸ

Արարողական կեանքի, կենդանիներու միջեւ
խտրութեան եւ մաքրութեան կամ սրբութեան կապուած
կեանքի ամենօրեայ երեսներու մանրամասնեալ
բացատրութիւնները, անոնց տրուած
պատճառաբանութիւնները, եւ անոնց կապուած
պահանջները երբեմն խրտչեցուցիչ կրնան թուիլ մեզի, կարգ
մը բաներ ալ այսօր մեր հասկացողութենէն կրնայ խուսափիլ:
Բայց այդ բոլորին մէջ մենք պէտք է տեսնենք երեք հիմնական
նպատակներ.-

Ա.- Յոյց տալ՝ բացառիկ նախանձախնդրութիւնը
քահանայութեան մը՝ որ Աստուծոյ ղեկավարուած
(=աստուածպետական դրութիւն) ազգ մը կ'ուզէ ստեղծել, եւ
www.hygradaran.weebly.com 285

ժողովուրդի մը՝ որ հակառակ իր բոլոր թերացումներուն՝ կ'ուզէ ինքզինքը Աստուծոյ ժողովուրդ ճանչնալ եւ Աստուծոյ կամքին ենթարկուիլ:

Բ.- Ցոյց տալ Ուխտի ժողովուրդին պաշտամունքը եւ ապրելակերպը՝ Աստուծոյ կամքին համաձայն: Ըսինք, որ Ղեւտացոց գիրքը անընդմեջ շարունակութիւն կը կազմէ Ծննդոց եւ Ելից գիրքերուն: Եթէ Ծննդոցը կը ներկայացնէր մարդուն աստուածաստեղծ հանգամանքը, անկումն ու խարխափումները եւ Աստուծոյ կողմէ փրկութեան խոստումը, եւ եթէ Ելիցը կը ներկայացնէր Իսրայէլի ժողովուրդին ազատագրութիւնը կամ փրկագործութիւնը Աստուծոյ ձեռքով եւ աստուածային Օրէնքին տրչւթիւնը, այս գիրքը կը ներկայացնէ ազատագրեալ ժողովուրդը՝ Փրկիչ Աստուծոյ ծառայութեան (=պաշտամունք) մէջ եւ այդ ծառայութեան (=պաշտամունքին) կերպերը:

Այլ խօսքով, Հնգամատեանի առաջին երկու գիրքերը կը պատմէին Աստուծոյ եւ իր ժողովուրդին միջեւ կնքուած Ուխտին մասին. իսկ այս գիրքը կը ճշդէ Ուխտի ժողովուրդին ապրելակերպը եւ իր Աստուծոյ հետ յարաբերութիւնը, որ հիմնուած պէտք է ըլլայ արդարութեան եւ սրբութեան վրայ: Այս սկզբունքներուն արտացոլացումը կարելի է խտացած տեսնել «Դուք սուրբ եղէք, որովհետեւ ես՝ ձեր Տէր Աստուածը, սուրբ եմ» հրահանգին մէջ (19.2): Աստուած եկած է իր սրբարանը իր ժողովուրդին մէջ հաստատելու, եւ իրենք տեւականօրէն պէտք է զգան՝ թէ «Աստուծոյ ներկայութեան» կամ՝ «Աստուծոյ դիմաց» է որ կը կանգնին, ինչպէս տեւականօրէն կը կրկնուի (մօտ 60 անգամներ): Ատոր համար ալ պէտք է հեռու մնան ռեւէ անմաքրութենէ եւ նոյնինքն մեղքէն, իսկ մեղանշումի պարագային՝ անմիջապէս իրենք գիրենք պէտք է մաքրեն Աստուծոյ կողմէ հրահանգուած յատուկ զոհերով ու ծէսերով եւ անոնց ընկերացող զոջումով, Աստուծոյ հնազանդութեամբ եւ այդ հնազանդութեան

արտայայտութիւնը եղող արդար գործերով, առանց որոնց՝
զոհերն ու ծէսերը անօգուտ եւ անարժէք կը դառնան:

Գ.- Յոյց տալ քաւութեան անհրաժեշտութիւնը, այսինքն՝
թէ յանցանքին դիմաց մարդուն ստացած պատիժը բաւարար
չէ՝ Աստուծոյ հետ մարդուն յարաբերութիւնը վերականգնելու
համար: Մարդը կրնայ իր յանցանքին հետեւանքները կրելով
սրբագրուիլ, կրնայ բարոյական բարձր ըմբռնումի եւ
ընկերային արդարութեան հասնիլ, բայց չի՝ կրնար Աստուծոյ
հետ հաշտուիլ եւ Աստուծոյ հետ իր հաղորդակցութիւնը
վերականգնել՝ լոկ սեփական իր ճիգերով կամ սեփական
գործերով: Ճիշդ ինչպէս երբ մէկու մը դէմ յանցանք գործած
ըլլանք, կամ անիրաւած ըլլանք մէկը, յանցանքին համար՝
պատիժ կրելը կամ տուգանքային հասկացողութեամբ՝
հատուցումը կատարելով անիրաւութիւնը (զոհութիւն,
յափշտակութիւն, բարոյական վնաս, եւլն) դարմանելը չէ՛ն
բաւեր մեր եւ անիրաւուած անձին միջեւ հաշտութիւն յառաջ
բերելու, յարաբերութիւնները շտկելու կամ վերականգնելու,
այլ մեր կողմէ յաւելեալ քայլ մը պէտք է առնուի՝ ներողութիւն
խնդրելու, արժանապատուութիւնը վերականգնելու եւ
այդպիսիով միայն զայն հաշտութեան խոնարհեցնելու, նոյնն
է հասկացողութիւնը եւ միջոցը Աստուծոյ հետ հաշտութեան:
Ասկէ՝ անհրաժեշտութիւնը զոհերուն, մանաւանդ
կենդանական զոհին, արեան հեղումին (տե՛ս 19.11), ուր
կենդանիին արիւնը (=կեանքը) միջնորդ կը դառնայ
քաւութեան:

Զոհերու անհրաժեշտութիւնը շեշտելը Ղեւտացոց
գիրքին երեւութական դիտումն է, սակայն: Երբ զայն կը
դիտենք Նոր Կտակարանին լոյսին տակ, կը հասնինք
խորունկ ճշմարտութեան, թէ ի վերջոյ զոհերը ինքնին
կարելոր չեն եւ ինքնանպատակ չէ՛ն, այլ առժամեայ միջոց
մըն են դաստիարակութեան, որ Աստուած կը գործածէ իր

ժողովուրդը նախապատրաստելու համար ապագայ իրականութեանց: Արդարեւ, Եբրայեցոց նամակը յատկօրէն մեզի կ'ըսէ, թէ Մովսիսական Օրէնքին մէջ ներկայացուած այս կարգերը «պարզապէս գալիք նոր կարգերուն շուրջ», այսինքն մօտաւոր նմանութիւնը միայն կը ներկայացնեն (Եբր 10.1). մինչ անոնց բուն, հարագատ իրականութիւնը Քրիստոսի զոհագործումը պիտի ըլլար, երբ Աստուած բոլոր նախկին զոհերը պիտի վերցնէր եւ անոնց տեղ Քրիստոսի զոհը պիտի հաստատէր (Եբր 10.9):

Մինչ այդ, Հին Կտակարանի զոհերը անհրաժեշտ էին՝ ժողովուրդին միտքերուն մէջ դրոշմելու համար երկու ճշմարտութիւններ.-

1.- Քաւութիւնը միայն Աստուած կրնայ տալ: Քաւութիւնը մարդիկ իրենք չեն կրնար իրագործել կամ շահիլ, այլ Աստուած է որ զայն կը պարգեւէ ձրիօրէն:

2.- Քաւութիւնը կը տրուի՝ Աստուծոյ կողմէ որոշուած եւ Աստուծոյ կողմէ տրուած զոհով: Բոլոր կենդանիներն ալ Աստուծոյ կը պատկանին, յատկապէս՝ անդրանիկները (հմտ Ել 13.2). բայց դեռ անոնք նախապատկերացումներն են պարզապէս այն գերագոյն Զոհին՝ Քրիստոսի, որ Աստուած ինք միանգամընդմիջտ պիտի տար աշխարհի փրկութեան համար [Հնգամատեանին մէջ ասոր սքանչելի պատկերացումն է՝ Իսահակի զոհագործման դրուագին մէջ Աստուծմէ տրուած խոյը (Օն 22.13)]:

ԿԱՐԵԻՈՐՈՒԹԻՒՆԸ ՄԵԶԻ ՀԱՄԱՐ

Գիրքը մեծ մասամբ կապուած ըլլալով տաճարի պաշտամունքին, մեզի համար շատ այժմեականութիւն կրնայ

չներկայացնել: Բայց այս հաստատումով երբեք ալ չի նուագիր գիրքին կարելորությունը: Անիկա կարելոր կը մնայ.-

1.- Կարենալ հասկնալու համար Աստուծոյ կանչուած ժողովուրդին պաշտամունքային լեզուն ու կանոնները, այլ խօսքով՝ Իսրայելի պաշտամունքային կեանքը, որ ինքնին կեդրոնական տեղը կը գրաւէր Իսրայելի մտածողութեան ու կեանքին:

2.- Ապա, նոյն այդ պաշտամունքային լեզուին ու մտածողութեան ծանօթացումով՝ կարենալ հասկնալու համար նոյնինքն Նոր Կտակարանի ծիսական-պաշտամունքային լեզուն եւ մտածողութիւնը (հմտ շո 8.3 կամ Բ.Կր 5.21): Այլ խօսքով, Ղեւտացոց գիրքին ծանօթացումը բանալի մը դառնայ մեզի՝ Նոր Կտակարանի զոհագործական եզրաբանութիւնն ու բացատրութիւնները հասկնալու եւ Քրիստոսի քահանայապետական պաշտօնն ու զոհագործումը հասկնալու համար:

3.- Ի վերջոյ, տեսնելու եւ հասկնալու համար մեր փրկութեան վերաբերեալ Աստուծոյ ծրագիրին խորութիւնն ու բերած ճշմարտութիւնները: Անշուշտ ծիսական օրէնքները իրենց ժամանակաւոր բնոյթին բերումով՝ մեզի համար կորսնցուցած են իրենց կարելորութիւնը, բայց անոր մէջ տեղ գտած բարոյական պատուէրները իրենց ոյժն ու կարելորութիւնը կը պահեն նաեւ ոեւէ քրիստոնէայի համար:

Բայց Օրէնքին կողքին այնտեղ կը պատկերացուի նաեւ Քրիստոսի շնորհքը: Արդարեւ Աստուած սկիզբէն մեր մեղքերուն քաւութիւնը պատկերացուց կենդանական զոհերով, որոնք միայն աղօտ պատկերացումն էին այն իսկական քաւութեան որ Աստուած պիտի պարգեւէր իր սուրբ Որդւոյն՝ Քրիստոսի ձեռքով, իր որոշած ժամանակին:

Եւ Քրիստոս ինք եղաւ մեզի համար թէ՛ «մեղքի զոհ» եւ թէ՛ «քաւութեան պատարագ», եւ թէ՛ միաժամանակ ճշմարիտ քահանայապետ (հմնտ մասնաւորաբար «Քաւութեան Օր»ուան արարողութիւնները, 16-րդ գլուխ), որ իբրեւ միակ միջնորդ Աստուծոյ եւ իր ժողովուրդին միջեւ՝ իր անձը իբրեւ կատարեալ զոհ պիտի մատուցանէր Աստուծոյ, մեր մեղքերու քաւութեան համար, որպէսզի յաւիտենական կեանք պարգեւէ բոլոր իրեն հաւատացողներուն:

ԹՈՒՈՑ ԳԻՐՔԸ

ԱՆՈՒՆ

«Թիւք» կամ «Թուոց գիրք» անհրապոյր անուանումը Յունարէն Եօթանասնից (LXX) թարգմանութենէն կու գայ, գլխաւորաբար թելադրուած 1 եւ 26-րդ գլուխներէն, ուր Իսրայէլի 12 ցեղերուն մարդաթիւերը կը ներկայացուին: Սակայն գիրքը հետաքրքրական եւ հարուստ է իր բովանդակութեամբ: Հրեաներ գիրքը կը կոչեն առաջին տողի 5-րդ բառովը «Անապատին մէջ» (Bemidhbar). եւ իրօք Թուոցը կը ներկայացանէ Իսրայէլի ժողովուրդին ճամբորդութիւնը անապատին մէջ, Սինայի ստորոտէն մինչեւ Քանանու երկրին սահմանները հասնիլը:

ՀԵՂԻՆԱԿԸ

Հնգամատեանի միւս գիրքերուն մասին խօսած ատեն արդէն շոշափած ենք Թուոց գիրքին ալ հեղինակի հարցը: Աւանդութեան ճանչցած հեղինակը Մովսէսն է, եւ չկայ ոեւէ լուրջ առարկութիւն որ ստիպէ մեզ տարբեր ենթադրութեան դիմելու, թէպէտ Սուրբ Գրոց բանասիրութեան մէջ տեղ գտած տեսակ մը «նորոյթ» է գործը տարբեր ժամանակներու խմբագրութիւն նկատելու վարկածը:

ԳԻՐՔԻՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

Տեսանք, որ Ծննդոց գիրքը կը ներկայացնէր Աստուծոյ ժողովուրդին ընտրութիւնը դէռ յատուկ կերպով կոչուելէ իսկ առաջ. Ելից գիրքը կը ներկայացնէր Աստուծոյ ժողովուրդին սքանչելի փրկութիւնը եւ Աստուծոյ հետ Ուխտին կնքումը. իսկ Ղեւտացոց գիրքը կը ներկայացնէր Աստուծոյ

ժողովուրդին սրբութեան կոչումը եւ Աստուծոյ ընծայելիք պաշտամունքին կարեւորագոյն երեսները:

Արդ, Թուոց գիրքը կը ներկայացնէ Իսրայէլի ժողովուրդին անապատային թափառումներու շրջանը: Այս շրջանը առաջին հերթին պատմական նշանակութիւն եւ կարեւորութիւն ունի, որովհետեւ կը ներկայացնէ Իսրայէլի իբրեւ ազգ կազմաւորումը՝ իրեն յատուկ կազմակերպչական հարցերով լեցուն: Ատոր բնական բերումն են՝ գիրքին մէջ երեւան եկող կարգ մը երեւոյթներ. ինչպէս տարբեր ցեղերու մրցակցութիւնները, հասարակաց ազգային իտէալի մը պակասը, օրէնսդրական հատուածները, եւլն:

Երկրորդ, այս գիրքը կը ներկայացնէ Աստուծոյ ժողովուրդին աստիճանական գնացքը՝ Սինայէն, կամ այլ բացատրութեամբ՝ սրբութեան կոչումէն, մինչեւ Քանանու երկրին սահմանը: Այլ խօսքով, Թուոց գիրքին նպատակն է ցոյց տալ՝ ներկայ աշխարհին մէջ Աստուծոյ ժողովուրդին ապրած վերիվայրումները եւ Աստուծոյ վերաբերումը անոր հանդէպ: Արդարեւ այս գիրքը մեզի կ'ընծայէ Իսրայէլի ժողովուրդի կեանքին շատ մը կարեւոր դրուագները՝ անապատային թափառումներուն կապուած, որոնք հետագայ պատմութեան համար եւս իրենց կարեւորութիւնը ունին: Անոնց ընդմէջէն երեք կարեւոր երեսներ կարելի է դիտել, որոնք կը ցուցնեն՝ թէ Թուոց գիրքին նպատակն է ցոյց տալ, թէ Աստուծոյ ժողովուրդը.-

1.- Կոչուած է սրբութեան եւ կարգաւորեալ կեանքի (1-10 գլուխներ): Աստուած ինք կը դասաւորէ 12 ցեղերը այնպէս՝ որ Տապանակը (այսինքն՝ իր ներկայութիւնը) գրաւէ իր ժողովուրդին մէջ կեդրոնական տեղը, եւ իր ժողովուրդէն հեռու պահել կու տայ ինչ որ անմաքուր է, որպէսզի անիկա ըլլայ ամբողջապէս իրեն ընծայուած սուրբ ժողովուրդ մը,

որուն մանրանկարը կը կազմեն Տիրոջ ուխտեալները (6-րդ գլուխ): Այսուհետեւ Աստուծոյ ժողովուրդին դէպի խոստացուած երկիր գնացքը սկիզբ կ'առնէ Տիրոջ Զատիկին ճաշակումով:

2.- Յաճախ կը տրտնջայ եւ կ'ըմբոստանայ Աստուծոյ դէմ, ինչ որ պատճառ կ'ըլլայ որ «իյնայ անապատին մէջ» (11-20 գլուխներ): Երեք անգամներ Իսրայէլի ժողովուրդը ըմբոստացաւ ու տրտնջաց Աստուծոյ դէմ.- առաջինը՝ մտելէն ուտելիքի համար, երկրորդ՝ իր վրայ կարգուած առաջնորդներուն՝ Մովսէսի եւ Ահարոնի համար, եւ երրորդ՝ Քանանու երկրի եզրին, անոր բնակիչներէն վախնալով: Այս տրտունջքները Աստուծոյ հանդէպ անվստահութեան ցոյցեր էին. ատոր համար ալ Աստուած խստօրէն պատժեց իր ժողովուրդը, վճռելով որ Եգիպտոսէն ելած ամբողջ սերունդը անապատին թափառումներուն ընթացքին մահանայ, բացի Աստուծոյ վստահած երկու երիտասարդներէ՝ Յեսուէն եւ Քաղեբէ, որոնք պիտի արժանանային խոստացուած երկիր հասնելու:

3.- Բայց գնացքը կը շարունակուի՝ դէպի խոստացուած երկիր, եւ Աստուծոյ վստահողները յաղթանակ կ'ապահովեն թշնամիին դէմ (21-36 գլուխներ): Այդպէս էր որ յաղթանակներ տարուեցան Ամօրհացիներու, Սեհոն եւ Բասանի Ովգ թագաւորներուն դէմ, այդպէս էր որ Աստուած Բաղասամ մարգարէին բերնով երիցս օրհնեց իր ժողովուրդը, այդպէս էր որ Մադիանացիները բնաջինջ եղան, երկուքուկէս ցեղեր ժառանգեցին Յորդանանի արեւելեան հողամասերը. իսկ միւս ցեղերուն միջեւ խոստացուած երկրին բաժանումը ճշդուեցաւ վիճակով:

ԻՏԷԱԼԱԿԱՆԱՑԱԾ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Անապատային թափառումներու այս շրջանին Աստուծոյ ժողովուրդին կեանքը եւ մանաւանդ Աստուծոյ հետ անոնց կապը յատկանշող դրական եւ ժխտական այս երեւոյթները, որոնք փոխնիփոխ կը ներկայացուին Թուոց գիրքին մէջ, իրենց ճիշդ այդ հակասական բնոյթին համար ալ՝ հետագայ մարգարեական գրականութեան մէջ եւս իտեալականացած են հակասական պատկերացումներով: Այսպէս.-

Ա.- Անհաւատարմութեան եւ դատաստանի ժամանակաշրջան: Սաղմոսաց գիրքը (Սղ 95: Հմմտ 78.8-422, 106.6-332), ինչպէս նաեւ աւելի ուշ Եզեկիէլ մարգարէն (Եզ 20.5-272: Հմմտ 23.1-82), անապատային թափառումներու այս 40 տարիները կը դիտեն որպէս Աստուծոյ հանդէպ մնայուն անհաւատարմութեան հանդէս, երբ Աստուած նաեւ իր ընտրութեան եւ կոչման անհաւատարմութեան հանդէպ ցոյց տուաւ իր խիստ դատաստանը:

Բ.- Հոգեւոր դաստիարակութեան ժամանակաշրջան: Բ.Օրինաց գիրքը այս շրջանը կը հասկնայ իբրեւ Աստուծոյ կողմէ իր ժողովուրդին հաւատարմութիւնը փորձաքարի զարնելու եւ հօր մը պէս՝ իր որդին հաւատքի դաստիարակելու ժամանակաշրջան մը, որպէսզի անիկա սորվի, թէ «մարդ միայն հացով չ'ապրիր, այլ Աստուծոյ պատգամներով» (Բ.Օր 8.2-6):

Գ.- Աստուծոյ հետ նոր յարաբերութեան ժամանակաշրջան: Ովսէէ մարգարէ (Ովս 2.16-23: Հմմտ Եր 2.2-3) այս շրջանը կը հասկնայ իբրեւ Աստուծոյ եւ իր ժողովուրդին սիրոյ մտերմիկ յարաբերութեան սկիզբը, որպէս "նշանախօսութիւն" բնորոշուած, որ կը դիտէ իբրեւ նախապատկերացումը՝ ապագայ վերջնական փրկութեան ժամանակաշրջանին Աստուծոյ իր ժողովուրդին հետ ունենալիք սերտ յարաբերութեան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՈՒՐՈՒԱԳԻՐԸ

Թուոց գիրքին մեջ կը գտնենք թե՛ պատմական դրուագներ, թե՛ վիճակագրական տուեալներ, եւ թե՛ օրէնսդրական հատուածներ:

Գիրքին 36 գլուխները բնական չորս մասերու կը բաժնուին, հետեւեալ ստորաբաժանումներով.-

Ա.- ԴԷՊԻ ԽՈՍՏԱՑՈՒԱԾ ԵՐԿԻՐ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ (1.1-էն մինչեւ 10.10)

1.- Պատերազմի կարող մարդոց համարը եւ դասաւորումը (1-2 գլուխներ):

2.- Ղեւտացիներու համարը եւ ազգատոհմերուն վստահուած պարտականութիւնները (3-4 գլուխներ):

3.- Անմաքրութեանց հեռացումը բանակատեղիէն (5-րդ գլուխ):

4.- Ուխտել անձերու վերաբերող կանոնը եւ քահանայական օրհնութիւն (6-րդ գլուխ):

5.- Իւրաքանչիւր ցեղի նուէրը Վկայութեան Խորանին (7-րդ գլուխ):

6.- Ղեւտացիներու սրբուիլը եւ ընծայումը Աստուծոյ (8-րդ գլուխ):

7.- Երկրորդ Զատիկը եւ ճամբորդութեան հրահանգներ (9.1-էն մինչեւ 10.10):

Բ.- ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԻՆԱՅԷՆ ՄԻՆՉԵՒ ՄՈՎԱԲԻ ԴԱՇՏԵՐԸ (10.11-էն մինչեւ 22.1)

1.- Մինայէն չումը (10.11-36):

2.- Տրտունջներ եւ աստուածային պարգեւներ եւ պատիժներ (11-րդ գլուխ):

3.- Մարիամի եւ Ահարոնի յանցանքը Մովսէսի դէմ եւ Աստուծոյ վկայութիւնը (12-րդ գլուխ):

4.- Քանանու երկրին հետազօտումը, ժողովուրդին վախը եւ տրտնջացող այդ սերունդին վրայ Աստուծոյ դատավճիռը (13-14 գլուխներ):

5.- Ծիսական հրահանգներ (15-րդ գլուխ):

6.- Կորիսի, Դաթանի եւ Աբիրոնի ըմբոստութիւնը եւ պատիժը (16-րդ գլուխ):

7.- Ահարոնեան քահանայութեան աստուածային վաւերացումը եւ քահանաներու պաշտօնը (17-18 գլուխներ):

8.- Երինջի մոխիրով մաքրութեան ջուրը (19-րդ գլուխ):

9.- Անապատին մէջ ժայռէն ջուր եւ պղինձէ օձը (20.1-էն մինչեւ 21.9):

10.- Յաղթանակ Ամորիացիներուն եւ Բասանի դէմ (21.10-էն մինչեւ 22.1):

Գ.- ԲԱՂԱՍՄԻ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԴՐՈՒԱԳՆԵՐ (22.2-էն մինչեւ 25.18)

1.- Կոչում եւ ազդարարութիւն Բաղասամի (22.2-41):

2.- Բաղասամի մարգարէութիւնները (23-24 գլուխներ):

3.- Կռապաշտ անհաւատարմութիւն եւ պատիժ (25-րդ գլուխ):

Դ.- ՔԱՆԱՆ ՄՈՒՏՔԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ (26.1-էն մինչեւ 36.13)

1.- Նոր մարդահամար՝ երկիրը բաժնելու համար (26-րդ գլուխ):

2.- Ժառանգութեան իրաւունք եւ Յեսուի նշանակումը իբրեւ Մովսէսի յաջորդ (27-րդ գլուխ):

3.- Զոհերու եւ ընծաներու, տօներու եւ ուխտերու վերաբերող կանոններ (28-30 գլուխներ):

4.- Վրէժխնդրութիւն Մադիանացիներէն (31-րդ գլուխ):

5.- Անդրյորդանանի բաժանումը (32-րդ գլուխ):

6.- Եզիպտոսէն մինչեւ Մովսէս իջեւաններուն ցուցակը (33-րդ գլուխ):

7.- Խոստացուած երկրին սահմանները, զայն ցեղերուն միջեւ բաժնելու կերպը եւ ժառանգութեան սկզբունքը (34-36 գլուխներ):

ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՄԵԶԻ ՀԱՄԱՐ

Այս գիրքին մեզի համար ներկայացուցած կարեւորութիւնը կրնանք դիտել երկու երեսներով.-

1.- Թուոց գիրքը իր կարգ մը դրուագներով Քրիստոսի սքանչելի նախապատկերացումը՝ կ'ընծայէ մեզի: Այդ նախապատկերացումը կը տեսնենք՝

Ա.- Նախ՝ Ահարոնի կատարած հաշտարարի դերին մէջ: Երբ Իսրայէլացիներ Մովսէսի եւ Ահարոնի դէմ տրտնջացին եւ Աստուած ժանտախտ դրկեց, Մովսէսի թելադրութեամբ՝ Ահարոն բուռովարը առնելով *«ժողովուրդին համար քաւութիւն ըրաւ»*՝ Աստուծոյ զայրոյթը մեղմելու համար. *«մեռելներուն եւ ողջերուն մէջտեղ կանգնեցաւ, եւ ժանտախտը դադրեցաւ»* (16.48): Ատով Ահարոն կը նախապատկերացնէր մեր Տէրը՝ իր բարեխօսի եւ քահանայապետի պաշտօնով, որ մեղքին մեր վրայ բերած ու բերելիք հարուածը (=դատաստանն ու մահը) կը դադրեցնէ՝ Աստուծոյ մօտ մեզի համար յաւիտենական քաւութիւն ընելով:

Բ.- Պղինձէ օձին օրինակին մէջ: Երբ ժողովուրդը երրորդ անգամ ըլլալով ըմբոստացաւ եւ տրտնջաց Աստուծոյ դէմ, Աստուած իր ժողովուրդին վրայ կիզող օձեր ուղարկեց, որոնք իրենց խայթոցներով մահ կը պատճառէին: Ապա երբ Մովսէսին միջնորդութեան դիմեցին, Աստուած հրահանգեց պղինձէ օձ մը շինել եւ ձողի մը վրայ բարձրացնել, որպէսզի անոր նայողը փրկուի եւ առողջանայ (21.4-9): Քրիստոս ինքն

իսկ յայտարարեց, ըսելով. «Ինչպէս Մովսէս պղինձէ օձը բարձրացուց անապատին մէջ, այնպէս ալ Մարդու Որդին պէտք է բարձրանայ, որպէսզի անոր հաւատացողը յաիտենական կեանք ունենայ» (Յի 3.14-15): Բոլոր անոնք որոնք մեղքին մահացու խայթոցը կը զգան եւ հաւատքով կը դառնան խաչեալ Փրկիչին՝ հոգեւոր մահուրնէն կը փրկուին եւ իրենց հոգիին մէջ կը բուժուին:

Գ.- Իսրայէլի բարձրացումին, թագաւորական իշխանութեան հասնելուն եւ իր թշնամիները նուաճելուն մէջ: Բաղասամ մարգարէին բերնով Աստուած ցոյց կու տայ, թէ իր ժողովուրդին յաջողութիւնները նախապատկերացումը պիտի ըլլան հեռաւոր («կը տեսնեմ զայն, բայց ո՛չ հիմա. կը զննեմ զայն, բայց ո՛չ մօտէն») ապագայի մը կապուած «Յակոբէն ծագած Աստղ»ին՝ Քրիստոսի, պատկերացնելով անոր թագաւորութիւնը եւ բոլոր իշխանութիւններու նուաճումը իր կողմէ (հմմտ Ա.Կր 15.24-26):

2.- Թուոց գիրքը մեր ներկայ կեանքին ու հաւատացեալի վիճակին հարազատ պատկերն է: Ա.Կր 10.1-11ին մէջ Պօղոս առաքեալ Թուոց գիրքի որոշ դրուագներուն առիթով կ'ըսէ. «Այս բոլորը անոնց պատահեցան՝ իբրեւ օրինակ գալիքին, եւ գրուեցան՝ իբրեւ ազդարարութիւն մեզի, որ ժամանակներու վախճանին մօտեցեր ենք»: Արադրեւ Թուոց գիրքը քրիստոնէայ ոեւէ ընթերցողի համար լաւագոյնս կը պատկերացնէ իր ներկայ կեանքը՝ իր քանի մը հիմնական երեսներով.-

Ա.- Իսրայէլացի ժողովուրդին պէս, Քրիստոսի Եկեղեցին (=Աստուծոյ նոր ժողովուրդը) եւս «Եգիպտոսէն», այսինքն մեղքի ստրկութենէն դուրս եկած է եւ փրկութեան ափը դուրս եկած՝ Զատկական Գառնուկին ճաշակումովը վերանորոգուած, եւ հիմա ներկայ կեանքի անապատին մէջ

կը թափառի իբրեւ «պանդուխտ» (Եբր 13.14: Ա.Պտ 2.11: Հմմտ Եբր 11.8-16), եւ իբրեւ ժառանգորդ՝ խոստացուած երկիր մուտքին կը սպասէ:

Բ.- Իսրայէլացի ժողովուրդին պէս, Քրիստոսի հետեւորդներս եւս կոչուած ենք՝ թէ՛ «այս աշխարհի մէջ» ըլլալու եւ թէ՛ «այս աշխարհէն ջրլալու» (հմմտ Յե 17.11, 14-16), այսինքն՝ թէ՛ չարիքներու մէջ եւ չարին կողքին ըլլալու եւ թէ՛ չարիքներուն անմասն եւ անոնցմէ հեռու մնալու ճիգին մէջ ըլլալու:

Գ.- Խոստացուած երկիր մուտքի առաջին արգելքը Աստուծոյ վստահելու քաջութեան պակասը եղաւ Իսրայէլացիներուն համար, որոնք մինչեւ Քանանու սահմանը հասան, բայց թշնամիներու երեւոյթին եւ իրենց տկարութեանց նայելով՝ վախցան ներս մտնելու եւ դատապարտուեցան 40 տարիներ թափառելու եւ տանջուելու անապատին մէջ: Մենք եւս յաճախ այդ քաջութեան պակասը կ'ունենանք մարմնաւոր պատճառներով, այսինքն՝ ընկերային մեր շրջապատին եւ անհատական տկարութեանց պատճառով "կը վախնանք" Աստուծոյ խօսքին վստահելու եւ յաւիտենական կեանքի ճամբով քալելու, ինչ որ պատճառ կը դառնայ մեր ընկրկումին եւ հոգեկան երկար տուայտանքներուն:

Դ.- Քրիստոնէաներս եւս մինչեւ "խոստացուած երկիր" մտնելը՝ ներկայ կեանքի անապատին մէջ մարմնաւոր մեր պայմաններուն բերումը եղող բոլոր թերութիւնները աստիճանաբար պէտք է թօթափենք, ինչպէս Իսրայէլացիներ Եգիպտոսէն կրած իրենց յոռի ազդեցութիւնները աստիճանաբար պիտի թօթափէին մինչեւ Քանան մուտքը:

Ե.- Խոստացուած երկիր մուտքի մեծագոյն արգելքը՝ անհաւատութիւնը կամ Աստուծոյ հանդէպ անհաւատարմութիւնը եղաւ Իսրայէլի համար: Սակայն խոստացուած երկիրը նիւթեղէն այս աշխարհը չէր, այլ Աստուծոյ խոստացած "հանգիստ"ն էր (Սղ 95.10-11), որմէ զրկուեցան Իսրայէլացիները: Այդ հանգիստը մեզի խոստացուած է այժմ, եթէ մենք ալ նոյն անհաւատութեան մեղքով չփակենք մեր ականջները Աստուծոյ կոչին դիմաց (Եբր 3.7-19):

Թուոց գիրքը այս կէանքի պատերազմներէն անցնող հաւատացեալին գիրքն է: Ահա թէ ինչու քրիստոնէայ ընթերցողը հոգեւոր մեծ փորձառութիւն եւ առաջնորդութիւն կը քաղէ անկէ:

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՕՐԻՆԱՑ ԳԻՐՔԸ

ԱՆՈՒՆ

Հնգամատեանի 5-րդ այս գիրքին «Երկրորդումն Օրինաց» [Օրենքի կրկնութիւնը կամ Օրենքի ընդօրինակութիւնը] անուանումը կու գայ յունարէն Եօթանասնից (LXX) թարգմանութենէն, եւ խորքին մէջ առնուած է գիրքին 17.18-էն, ուր իշխանութեան գլուխ եկող ռեւէ թագաւորի կը հրահանգուի, ըսելով. *«Եւ եղիցի յորժամ նստիցի յիշխանութեան իւրում, գրեսցես նման գերկրորդումն օրինացս այսոցիկ ի մատենի, առ ի քահանայիցն Ղեւտացոց»*: Հրեաներ ըստ իրենց սովորութեան՝ գիրքը կը կոչեն իր առաջին բառերով, «Ասոնք են խօսքերը» (Elleh had-devarim), թէպէտ երբեմն զայն կոչած են նաեւ «Երկրորդումն Օրինաց» կամ «Օրենքի կրկնութիւնը» (Mishneh hat-toran):

Այս անուանումը լաւագոյնս կ'արտայայտէ այն իրողութիւնը, որ խոստացուած երկիր մուտքին նախօրեակին, Մովաբի բարձունքներուն վրայ, Մովսէս, գիտնալով որ մօտ է իր մահը, վերստին կ'ամփոփէ եւ իր ժողովուրդին կը յիշեցնէ Աստուծոյ սքանչելի գործերը իր ժողովուրդին ազատագրութեան համար, եւ կը կրկնէ անոր պատգամները, պահանջներն ու պատուերները, երբեմն նոյնիսկ կարգ մը հատուածներ բառացի վերարտադրելով նախորդ երեք գիրքերէն: Այդուհանդերձ, գիրքը պարզ կրկնութիւն մը ըլլալէ շատ հեռու է, ինչպէս պիտի տեսնենք:

ՏԵՂԸ ԻՍՐԱՅԷԼԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Թէ ո՛րքան կեդրոնական տեղ եւ մեծ ազդեցութիւն ունեցած է Երկրորդումն Օրինաց գիրքը Իսրայէլի

պատմութեան մէջ՝ կարելի է դատել շատ մը երեւոյթներէ ու դրուագներէ:

Ա՛յս էր այն գիրքը որուն համար Աստուած ըսաւ Մովսէսի յաջորդին՝ Յեսուին, որ երբեք իր *«բերնէն չգատուի, այլ գիշեր ցերեկ անոր վրայ մտածէ, որպէսզի բոլոր անոր մէջ գրուածները կատարէ»* (Յես 1.8): Ա՛յս էր այն գիրքը, որուն օրինակը Յեսու արձանագրել տուաւ Գարիզի ու Գեբալ լեռներուն միջեւ իր շինել տուած զոհասեղանին քարերուն վրայ, եւ ժողովուրդին *«կարդաց Օրէնքին բոլոր խօսքերը, թէ՛ օրհնութիւնները եւ թէ՛ անէծքները, ինչ որ գրուած էր Օրէնքի գիրքին մէջ»*, առանց Մովսէսի պատուիրածներէն բան մը դուրս ձգելու (Յես 8.30-35):

Դարձեալ ա՛յս էր այն «Մովսէսի Օրէնքի գիրքը», որ Դաւիթ իր մահուան անկողնին մէջ յանձնարարեց իր որդւոյն՝ Սողոմոնի, որպէսզի պահէ անոր մէջ արձանագրուած կանոնները, պատուիրանները, դատաստաններն ու վկայութիւնները (Գ.Թգ 2.3):

Վստահաբար այն «Ուխտի գիրք»ը, որ Ն.Ք. 622 թուականին Քելկիա քահանայապետը Երուսաղէմի տաճարին մէջ գտաւ (Դ.Թգ 22.8) եւ որ Յովսիա թագաւորի կրօնական բարեկարգութեան հիմը դարձաւ՝ Երկրորդումն Օրինացն էր, որովհետեւ կրօնական այդ բարեկարգութիւնը, օտար աստուածներու բնաջնջումի եւ պաշտամունքը Երուսաղէմի տաճարին շուրջ կեդրոնացնելու իր ուղղութեամբ ու ծրագրով, ճիշդ ու ճիշդ կը համապատասխանէ Բ.Օրինաց գիրքի պահանջներուն (Դ.Թգ 23.4-20: Հմմտ Բ.Օր 12-րդ գլուխ):

Նոյնպէս, վստահաբար այս գիրքն էր, որ Բաբելոնի գերութենէն դարձին՝ Եզրաս եւ իր օգնական դպիրները կարդացին ու մեկնեցին ժողովուրդին (տե՛ս Նէ 8.12):

Բ.Օրինաց գիրքը շատ մեծ ազդեցություն ունեցած է նաև Հին Կտակարանի գրականության վրայ, պատմական գիրքերին սկսեալ՝ մինչև մարգարեություններն ու իմաստության գրականության գիրքերը: Իր հիմնական առաջադրանքները - միշտ յիշել Տիրոջ գործերը կեանքի եւ մահուան գոյգ ճամբաներուն միջեւ ընտրություն ընել եւ նորոգուած ուխտով կապուիլ Աստուծոյ - մնայուն ուղեցոյց դարձած են հետագայ բոլոր կրօնական գործիչներուն:

ՀԵՂԻՆԱԿԸ

Գիրքը ինք մեզի կ'ըսէ, թէ այս օրէնքները Մովսէս ինք էր որ «յայտնեց» (1.5). *«Մովսէս այս օրէնքը գրեց, եւ զանկէա Տիրոջ Ուխտին տապանակը վերցնող Ղեւտացի քահանաներուն եւ Իսրայէլի բոլոր ծերերուն տուաւ»* (31.9: Հմմտ 31.24-26: Նէ 8.1): Յետուի գիրքին մէջ Օրէնքի այս գիրքին վերաբերող բազմաթիւ յիշատակությունները (1.8 եւլն) ցոյց կու տան թէ ան արդէն գրուած պատրաստ էր:

Գիրքին կանուխ գրութեան եւ գոյութեան մասին կը վկայեն թէ՛ պատմական յիշատակները, որոնց անդրադարձանք, եւ թէ՛ լեզուական ու գաղափարական այն նմանությունները որ կը գտնենք կանխագոյն՝ 8-րդ դարու մարգարեություններուն հետ, ինչպէս նաև ու մանաւանդ Երեմիայի մարգարեութեան հետ (հմմտ Յես 1 եւ 23 գլուխներ: Դտ 2.6-23, 3.1-6: Ա.Թգ 12: Գ.Թգ 8: Դ.Թգ 17: Եր 2.4-7 [Բ.Օր 6.10-13], 4.4 [Բ.Օր 10.16], 31.31-34 [Բ.Օր 30.1-10]):

Թէ ե՛րբ անոր վրայ կատարուեցան այն յաւելումները, որոնք Մովսէսի գրիչին չեն կրնար պատկանիլ (յատկապէս իր մահն ու թաղումը պատմող վերջին գլուխը), կարելի չէ բացարձակ յստակութեամբ վճռել: Ոմանք զանոնք Յետուի

ձեռքով աւելցած կը համարեն, Մովսէսի մահէն անմիջապէս ետք, ուրիշներ սակայն աւելի ուշ թուականներ կ'առաջարկեն:

Կարգ մը ուսումնականներ կ'ենթադրեն, թէ Յովսիայի օրով գտնուած այդ գիրքը Մովսիսական ասանդութիւններու հիման վրայ խմբագրուեցաւ նոյն 7-րդ դարու սկիզբները, Մանասէ թագաւորի կրօնական բուն հալածանքներու ժամանակաշրջանին, երբ կրապաշտութիւնը նոր թափ ստացած էր (տե՛ս Դ.Թգ 21-րդ գլուխ): Ոմանք յաւելումները նոյնիսկ Յովսիայի բարեկարգութիւններէն ետք կ'ենթադրեն:

Գիրքին վրայ խմբագրական աշխատանքի մը դրոշմը տեսնողները կը մատնանշեն, որ Բ.Օրինացը ոճականօրէն շատ նման է ո՛չ թէ նախորդ (Մենդոց-Թուոց) գիրքերուն, այլ յաջորդ (Յեսու-Դ.Թագաւորաց գիրքերուն): Նման խմբագրութիւն մը Ղեւտացի քահանաներու աշխատանքին արդիւնքը կրնայ ըլլալ, որովհետեւ Օրենքի գիրքը պահպանելու եւ ժողովուրդին կարդալով ուսուցանելու պարտականութիւնը Մովսէս իրենց վստահած էր (31.24-26 եւ 9.11: Հմմտ 17.18, 27.9 եւ 14):

ԳԻՐՔԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1.- Ճիշդ ինչպէս Ղեւտացոց գիրքին պարագային ըսինք, Բ.Օրինացին մէջ եւս կը տեսնենք որ պատմական շարժում չկայ: Գիրքը կը բացուի անապատային թափառումներու 40-րդ տարուան 11-րդ ամսուան առաջին օրով, երբ Իսրայէլի ժողովուրդը հասած է «Յորդանանի ասդիի կողմը, Մովաբի երկրին մէջ» (1.3-5), այսինքն՝ Յորդանանը կտրելով Քանան մտնելէն երկուքուկէս ամիս առաջ (հմմտ Յես 4.19), եւ կը փակուի ճիշդ նոյն տեղը, Մովսէսի մահով:

2.- Ամբողջ գիրքը կը ներկայանայ իբրև տեսակ մը իրատական ճառ, որ Մովսէս խօսեցաւ իր մահէն անմիջապէս առաջ: Այդ պատճառով ալ անոր մէջ Աստուծոյ «ուղղակի» խօսքը չունինք, այլ՝ Մովսէսի կողմէ վերապատմուած:

3.- Ճիշդ է որ գիրքին բովանդակութիւնը «օրէնք» կը կոչուի բազմաթիւ անգամներ (1.5, 4.44, 17.18-19), եւ իրօք զուտ օրինական բաժիններ ալ կան (մանաւանդ՝ 5-րդ գլուխը եւ 12-26 գլուխները), բայց գիրքը հիմնականին մէջ աւելի բարոյական յորդորի բնոյթ ունի: Նոյնիսկ զուտ օրինական բաժինները չոր օրէնսդրական լեզու եւ նկարագիր չունին, կեանքը ապրելու բացասական կամ ժխտական օրէնքներ չեն սահմաներ, այլ աւելի ուսուցողական եւ յորդորական բնոյթ ունին, եւ լեցուն են՝ կոչերով եւ ազդարարութիւններով:

Այս առումով ալ, գիրքին մէջ կարելի է ցոյց տալ երեք տեսակի տարրեր.-

1.- Պատմական ամփոփ բաժիններ, որոնք անապատային կեանքի շրջանի որոշ դէպքերուն կ'անդրադառնան եւ Մովսէսի կեանքին վերջին դրուագները կը ներկայացնեն:

2.- Քարոզախօսական բաժիններ կամ յորդորական ճառեր, որոնք ժողովուրդը կը յորդորեն ամբողջ սրտով ու մտքով զԱստուած սիրելու, անոր կապուելու եւ ամբողջական հնազանդութեամբ անոր պատուիրանները կատարելու: Այս յորդորներուն կցուած են նաեւ օրհնութիւններ՝ Օրէնքին հնազանդողներուն համար, եւ անէծքներ՝ անհնազանդներուն:

3.- Քահանաներուն ուղղուած հրահանգներ՝ Օրէնքի այս գիրքին օրինակը պահելու, արտագրելու եւ զայն ժողովուրդին սորվեցնելու, ինչպէս նաեւ եօթը տարին անգամ մը, Տաղաւարահարաց տօնին, զայն ամբողջապէս կարդալու ժողովուրդին, որպէսզի նոր սերունդները եւս լսեն, սորվին ու պահեն (Բ.Օր 31.9-13):

4.- Գիրքը արձակ գրութիւն է, օրինական գրականութեան յատկանիշներով, բայց նաեւ յորդորական գործերու յատուկ հանդիսաւոր, հռետորական ոճով: Վերջաւորութեան դրուած են նաեւ Մովսէսի վերագրուած երկու քանաստեղծութիւններ, առաջինը՝ «երգ» կոչուած (32.1-43), իսկ երկրորդը՝ «օրհնութիւն» (33-րդ գլուխ):

ԳԻՐՔԻՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՒ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Ընդհանուր կերպով մը կրնանք ըսել, թէ գիրքին հիմնական բնաբաններն են.- Մէկ կողմէ՝ Աստուծոյ բացարձակ միակութիւնը, եւ շեշտը՝ միակ սրբարանի մը, միակ քահանայութեան մը եւ միակ Օրէնքի մը վրայ: Իսկ միւս կողմէ՝ Իսրայէլի սրբութեան կոչումը, եւ հետեւաբար Աստուծոյ օրէնքներուն եւ առաջնորդութեան բացարձակ վստահութիւն եւ հնազանդութիւն ցուցաբերելու անհրաժեշտութիւնը:

Վերեւ ըսուեցաւ, թէ գործը իր ամբողջութեանը մէջ տեսակ մը խրատական-յորդորական ճառախօսութիւն է, որ Մովսէս կ'արտասանէ իր մահուրնէն առաջ: Անով կ'ուզէ իր ժողովուրդին յիշեցնել.-

- 1.- Իրենց աստուածային ընտրութիւնը:
- 2.- Աստուծոյ խոստումը՝ Քանանի վերաբերեալ:

3.- Սրբազան Ուխտը եւ Աստուծմէ տրուած պատուէրները: Եւ

4.- Իրենց կոչումը՝ զԱստուած սիրելու եւ ամբողջ հոգիով, սրտով ու մտքով անոր հնազանդելու եւ ծառայելու:

Գիրքը իր ամբողջութեանը մէջ կ'ուզէ բացարձակ միաստուածութիւն ստրվեցնել: Կը շեշտէ Աստուծոյ միակութիւնը (6.4) եւ անոր հաւատարմութիւնը իր ժողովուրդին հանդէպ, որուն վկայութիւնն է Իսրայէլի անցեալ պատմութիւնը: Աստուած մը, որ միշտ մօտիկ է իր ժողովուրդին, սիրով կապուած անոր, եւ Ուխտ կնքած անոր հետ: Փոխադարձաբար՝ Իսրայէլ պէտք է իր հաւատարմութիւնը յայտնէ՝ միայն Տէրը ճանչնալով իբրեւ ճշմարիտ Աստուած եւ մերժելով բազմաթիւ կուռքերն ու պաշտամունքային վայրերը: Աստուծոյ միակութիւնը պէտք է արտայայտուի նաեւ պաշտամունքային միակ կեդրոն մը ունենալով (12.5), հնազանդելով Աստուծոյ միակ Օրէնքին, եւ դառնալով անոր մէկ եւ միակ ժողովուրդը:

Իսրայէլի պատասխանը Աստուծոյ կոչին՝ պէտք է ըլլայ հնազանդութիւնը, փոխադարձաբար սիրելով զԱստուած ամբողջ սրտով եւ ամբողջ զօրութեամբ (6.5), արդարութիւնը փնտռելով պատուիրաններու կատարումին մէջ (6.25), պահելով տօներն ու Շաբաթները, եւ մանաւանդ՝ թլփատելով իր սիրտը (10.16), այսինքն՝ իրմէ հեռացնելով չար ցանկութիւններն ու անարդար վարմունքները, եւ ընդհակառակը՝ տէր կանգնելով խեղճին, աղքատին, որբին, տկարին ու պանդուխտին. այլ խօսքով՝ ընկերային արդարութիւն ընելով:

Հետեւաբար, Իսրայէլ ընտրութիւն մը ունի ընելիք: Այս ճամբուն հետեւելով միայն Իսրայէլ Աստուծոյ օրհնութիւնն ու խոստումները կրնայ վայելել: Հակառակ պարագային՝

դժբախտութիւններն ու աղետները անպակաս պիտի ըլլան իր կեանքէն, ինչպէս անապատի փորձառութիւնը ցոյց կու տայ:

Այս ուսուցումը ուղղուած է ամբողջ Իսրայէլին, եւ յանկերգի մը պէս միշտ կը կրկնուի. «Լսէ՛, ով Իսրայէլ» կոչը (4.1, 5.1, 6.4, 9.1 եւլն): Ամբողջ գիրքին մէջ խօսքը Իսրայէլին կ'ուղղուի երբեմն յոգնակիով եւ երբեմն եզակիով, որ աւելի անմիջական, մտերիմ եւ ջերմ կը դարձնէ խօսքը, որ հայրական յորդորի եւ դաստիարակ մարդու գորովալից խրատականին ձեւը կ'առնէ: Եւ չմոռնանք, որ այս գիրքը ուսուցողական մնայուն ձեռնարկ, կամ դասագիրք մը ըլլալու սահմանուած է արդէն, սկիզբէն իսկ, որովհետեւ Մովսէս ինք կը հրահանգէ, որ եօթը տարին անգամ մը այս Օրինագիրքը հրապարակաւ կարդացուի ժողովուրդի ականջին, որպէսզի հիները վերյիշեն եւ նոր սերունդները սորվին (31.9-13): Այս առումով, գիրքը հետաքրքրական նմանութիւններ ունի ուսուցողական ուրիշ գիրքի մը՝ Առակացին հետ (Բ.Օր 4.5-8 հմմտ Առ 2.6: Բ.Օր 4.40 հմմտ Առ 3.2: Բ.Օր 8.5 հմմտ Առ 3.11-12: Բ.Օր 16.19 հմմտ Առ 17.23 եւլն):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՈՒՐՈՒԱԳԻՐԸ

Գիրքին 34 գլուխները կարելի է երկու ձեւի բաժանումներու ենթարկել.-

1.- Կարելի է զայն բաժնել չորս մասերու, հետեւեալ ստորաբաժանումներով.-

Ա.- ՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ ԿՈՉ (1-11 գլուխներ)

1.- Ներածական առաջին ծանօթութիւն (1.1-5):

2.- Մովսէսի առաջին ճառը-պատմական ականարկ՝ անապատային քառասուն տարիներուն վրայ (1.6-էն մինչեւ 4.43):

3.- Մովսէսի երկրորդ ճառը-յորդոր՝ Աստուծոյ հաւատարմութեան (4.44-էն մինչեւ 11.32):

Բ.- ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐԷՆՔԸ (12-27 գլուխներ)

1.- Երկրորդում օրէնքներու (12-26 գլուխներ):

2.- Քանանէն ներս պաշտամունքի կեդրոնի հաստատում (27-րդ գլուխ):

Գ.- ՌԻԽՏԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ (29-30 գլուխներ)

1.- Մովսէսի երրորդ ճառը-Աստուծոյ Ուխտին վերանորոգումը եւ պահանջները (29-30 գլուխներ):

Դ.- ՅԱԻԵԼՈՒԱԾՆԵՐ (31-34 գլուխներ)

1.- Մովսէսի վերջին խօսքերն ու կարգադրութիւնները (31-րդ գլուխ):

2.- Մովսէսի երգը (32-րդ գլուխ):

3.- Մովսէսի օրհնութիւնը 12 ցեղերուն (33-րդ գլուխ):

4.- Մովսէսի մահը, թաղումն ու գովքը (34-րդ գլուխ):

2.- Կարելի է նաեւ զայն աւելի մանրամասնեալ եօթը մասերու բաժնել, հետեւեալ ստորաբաժանումներով.-

Ա.- ԱՄՓՈՓՈՒՄ ՌԻԽՏԻ ՆԱԽԸՆԹԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ (1-4 գլուխներ)

1.- Ներածական առաջին ծանօթութիւն (1.1-5):

2.- Քորեբէն մինչեւ Կադէս (1.6-46):

3.- Կադէսէն մինչեւ Անդրյորդանան, եւ անոր գրաւումը (2.1-էն մինչեւ 3.11):

4.- Գրաւուած երկրին բաժանումը (3.12-17):

5.- Քանան մուտքի պատրաստութիւն (3.18-29):

6.- Մովսէս Աստուծոյ հնազանդելու կոչ կ'ուղղէ Իսրայէլի (4.1-43):

Բ.- ՈՒԽՏԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ (4-11 գլուխներ)

- 1.- Ներածական երկրորդ ծանոթություն (4.44-49):
- 2.- Աստուծոյ եւ իր ժողովուրդին միջեւ Ուխտին պահանջները եւ հնազանդութեան անհրաժեշտութիւնը (5-11 գլուխներ):

Գ.- ՈՒԽՏԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ (12-26 գլուխներ)

- 1.- Սրբարանին օրէնքը (12.1-28):
- 2.- Կռապաշտութեան յանցանքը (12.29-էն մինչեւ 13.18):
- 3.- Հեթանոսական սուգի կերպերը արգիլուած (14.1-2):
- 4.- Մաքուր եւ անմաքուր ուտելիքներ (14.3-21):
- 5.- Տասանորդ (14.22-29):
- 6.- Ազատագրութեան տարին (15.1-11):
- 7.- Ստրկութեան սահմանափակում (15.12-18):
- 8.- Անդրանիկներու օրէնքը (15.19-23):
- 9.- Տարեկան երեք ուխտագնացութիւնները (16.1-17):
- 10.- Դատաւորներու եւ դատերու մասին (16.18-էն մինչեւ 18.22):
- 11.- Սրբազան պատերազմի օրէնքներ (20-րդ գլուխ):
- 12.- Խառն օրէնքներ (21-25 գլուխներ):
- 13.- Ուխտի ժողովուրդին պահելիք երախայրիներու եւ տասանորդներու օրէնքը (26-րդ գլուխ):

Դ.- ՈՒԽՏԻՆ ԱՊԱԳԱՅ ՆՈՐՈԳՈՒՄԸ (27-րդ գլուխ)

- 1.- Օրէնքը պէտք է քարերու վրայ գրուի (27.1-8):
- 2.- Ազդարարութիւն եւ անէծքներ (27.9-26):

Ե.- ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԱՆԵԾՔՆԵՐ (28-րդ գլուխ)

- 1.- Հնազանդութեան օրհնութիւնները (28.1-14):
- 2.- Անհնազանդութեան անէծքները (28.15-68):

Զ.- ՈՒԽՏԻ ԿՐԿՆՈՒԹԻՒՆ (29-30 գլուխներ)

- 1.- Պատմական ակնարկ եւ Ուխտի նորոգութիւն (29.1-15):
- 2.- Անհնազանդութեան պատիժը (29.16-29):
- 3.- Ապաշխարողներուն խոստացուած ներումը (30.1-10):
- 4.- Յանձնառութեան հրաւեր (30.11-20):

Է.- ՈՒԽՏԻՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
Կ'ԱՊԱՀՈՎՈՒԻ (31.1-էն մինչեւ 34.12)

- 1.- Յետի ճանաչումը իբրեւ Մովսէսի յաջորդ (31.1-8):
- 2.- Եօթը տարին անգամ մը Օրէնքը կարդալ (31.9-13):
- 3.- Մովսէս Օրէնքի պահպանութեան վերաբերող երգ մը կը գրէ ու կը սորվեցնէ (31.14-30):
- 4.- Մովսէսի երգը (32-րդ գլուխ):
- 5.- Մովսէսի օրհնութիւնը՝ Իսրայէլի ցեղերուն (33-րդ գլուխ):
- 6.- Մովսէսի մահը (34-րդ գլուխ):

ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՄԵԶԻ ՀԱՄԱՐ

Նոր Կտակարանին մէջ աւելի քան 80 անգամներ մեջբերում կը կատարուի այս գիրքէն կամ ակնարկութիւն կ'ըլլայ անոր:

Այս գիրքին մէջ է որ կը գտնենք Մովսէս մարգարէի կարեւոր նախագուշակութիւնը՝ Քրիստոսի մասին. *«Քու Տէր Աստուածդ քու եղբայրներուդ մէջէն ինծի պէս մարգարէ մը պիտի հանէ քեզի. անոր մտիք ըրէք»* (Բ.Օր 18.15, 18-19: Հմմտ Յհ 1.45: Գրծ 3.22, 7.37):

Շատ յատկանշական է Բ.Օրինաց գիրքին բազմիցս գործածութիւնը Քրիստոսի կողմէ: Այսպէս, մկրտութենէն ետք, անապատին մէջ իր երեք փորձութիւններուն ալ Քրիստոս այս գիրքէն տուաւ իր պատասխանները (Մտ 4.4, 7

եւ 10: Հմնտ Բ.Օր 8.3, 6.16 եւ 13), որոնք ճշմարիտ աստուածապաշտութեան հիմնական ուղեգիծը կը կազմեն, եւ ասիկա առաւել կարեւորութիւն կը ստանայ եթէ չմոռնանք, որ Յիսուսի մկրտութիւնը փոխանորդական արժէք ունի իւրաքանչիւր քրիստոնէայի համար: Ապա, յատկապէս այս գիրքէն կը քաղէ Մովսէսի եւ Աստուծոյ անցեալ վկայութիւնները իր մասին (տե՛ս Յհ 5.39 եւ 45-46): Յատկանշական է նաեւ որ Յիսուս այս գիրքին մէջ կը տեսնէ Հին Կտակարանի Օրէնքն ու մարգարէութիւնները իր մէջ խտացնող առաջին եւ հիմնականագոյն պատուիրանը (Բ.Օր 6.4: Մր 12.29-30):

Այսօրուան քրիստոնէային համար եւս Բ.Օրինացը կը մնայ աստուածապաշտ կեանքի մը լաւագոյն ուղեցոյցը, որովհետեւ ժխտական սահմանումներ կատարող եւ բացասական պատուիրաններ տուող գիրք մը չէ անիկա, այլ հիմնականին մէջ թելադրական զօրութիւն ունեցող Օրինագիրք մըն է: Չի պարտադրեր, չի բռնանար, չի ստիպեր, այլ կը խրատէ, կը յորդորէ ու կը մղէ՝ երախտագիտութիւն, աստուածսիրութիւն, մարդասիրութիւն եւ արդարասիրութիւն ստրվեցնելով, ինչ որ մարդկային օրինագիրքերէն իր մեծ տարբերութիւնը կը կազմէ եւ անոր աստուածային նպատակը կը յայտնէ:

ԵՕԹԸ ՆԱՄԱԿՆԵՐ՝ ԵՕԹԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ

Յայտնութեան գիրքին 2-րդ եւ 3-րդ գլուխները մեզի կը ներկայացնեն եօթը եկեղեցիներուն ուղղուած եօթը նամակները, որոնք որոշակի նմանութիւններ ունին իրարու հետ: Այսպէս.-

1.- Սկզբնական բանաձեւ: Բոլորն ալ կը սկսին նոյն բանաձեւով, որ հեղինակին՝ Յովհաննէսի ուղղուած հրահանգ մըն է: Բոլորն ալ թելադրուած են Յիսուս Քրիստոսի կողմէ:

2.- Ողջոյն: Բոլորն ալ նամակագրական նոյն կաղապարին կը հետեւին, թէպէտ իւրաքանչիւրին բովանդակութիւնը եւ պատգամը կը տարբերի:

Եկեղեցւոյ գլուխը՝ Քրիստոս, նախ իր ողջոյնը կու տայ իւրաքանչիւր եկեղեցիի, ամէն անգամ ինքզինք ներկայացնելով նոյն այն բացատրութիւններով կամ տիտղոսներով, որոնք առաջին գլխուն տեսիլքին տարբերը կը կազմէին («Ան՝ որ իր աջ ձեռքին մէջ ունի եօթը աստղերը», «Ան՝ որ մեռաւ ու վերակենդանացաւ», «Ան՝ որ սրուած երկսայրի սուրը ունի» ելն), եւ որոնք Քրիստոսի աստուածային ինքնութիւնը բացայայտելու տեսակէտէն անչափօրէն կարեւոր են: Հետաքրքրական է որ իւրաքանչիւր պարագային յիշուած տիտղոսները անմիջականօրէն առնչուած են այն պատգամին՝ որ Քրիստոս կ'ուզէ տալ տուեալ եկեղեցիին:

3.- Գնահատանքներ եւ դժգոհութիւններ: Ապա իւրաքանչիւրին ուղղելով իր հակիրճ խօսքը, կ'ըսէ՝ թէ գիտէ անոր ընթացքը, առաւելութիւններն ու թերութիւնները, որոնք ըստ այնմ գովելի կամ խոտելի են: Չանոնք կը զգուշացնէ եկեղեցի թափանցել սկսած սխալ վարդապետութիւններէն եւ քրիստոնէական ուղիղ ու մաքուր կենցաղին սպառնացող փորձութիւններէն:

4.- Ազդարարութիւն: Այնուհետեւ կ'ազդարարէ անոնց, թէ ի՛նչ կրնայ պատահիլ՝ եթէ չանսան եւ չապաշխարեն,

որովհետեւ ինք շուտով կու գայ իւրաքանչիւրին հատուցանելու իր գործերուն համեմատ:

5.- Յորդոր եւ խոստում: Ամէն մէկ նամակ կ'աւարտի յորդորականով մը՝ լսելու Սուրբ Հոգիին ազդարարութիւնը, դարմանելու տուեալ եկեղեցիին մէջ առկայ սխալները կամ թերիները, ամուր մնալու հաւատքին մէջ եւ յաղթանակ տանելու, որովհետեւ միայն յաղթանակողն է որ յաւիտենական կեանքը պիտի ժառանգէ եւ արժանի վարձատրութիւն պիտի ստանայ Աստուծմէ:

Ի՞նչ կը ներկայացնեն այս եօթը եկեղեցիները:

Այս կապակցութեամբ արդէն տեսանք մեկնութեան որոշ նշմարներ: Առհասարակ մեկնիչներու հայեացքը պատմական է՝ զոյգ իմաստներով, այսինքն՝ այս եկեղեցիներուն մէջ կը տեսնեն.-

1.- Յովհաննէսի ժամանակակից եկեղեցական համայնքներ, Փոքր Ասիայի տարածքին, որոնցմէ իւրաքանչիւրին ներկայացուցած յատկանիշները յատուկ են նաեւ բոլոր ժամանակի քրիստոնէական համայնքներուն կամ եկեղեցիներուն:

2.- Քրիստոսի Եկեղեցիին շարունակական պատմութիւնը իր յաջորդական եօթնապատիկ հանգրուաններով, որ կը սկսի Եփեսոսի եկեղեցիին ներկայացուցած դրական ու գովելի պատկերով, եւ ժամանակի ընթացքին աստիճանական այլասերումով, քրիստոնէական վարդապետութեան թէ բարոյականութեան ճշմարիտ ուղղութենէն հեռացումով, մինչեւ Քրիստոսի երկրորդ գալուստը՝ պիտի հասնի Լաւողիկիայի եկեղեցիին ներկայացուցած գաղջ եւ անտարբեր վիճակին:

ՆԱՄԱԿ ԵՓԵՍՈՍԻ ԵԿԵՂԵՑԻԻՆ (2.1-7)

Առաջին նամակը կ'ուղղուի «Եփեսոսի եկեղեցիին»: Յովհաննէսի ժամանակ Եփեսոսը Ասիա նահանգին

կարելորագոյն եւ ամենէն բազմամարդ քաղաքն էր, եւ Հռոմայեցի կառավարիչին նստավայրը: Վաճառականական ուղիներու հանգոյց մը ըլլալուն՝ վաճառականական կարելոր կեդրոն մըն էր: Եւ թէպէտ քաղաքը անմիջականօրէն ծովեզերքին չէր գտնուեր, բայց ունէր իր նշանաւոր ներքամաքեայ նաւահանգիստը, որ Կայստեր գետին միջոցաւ կը միանար 5 քլմ. հեռու գտնուող Եգէական ծովուն: Քաղաքը ունէր նշանաւոր շինութիւններ, որոնցմէ մէկն էր Արտեմիս չաստուածուհիին (համապատասխանը Հայկական Անահիտին) նուիրուած տաճարը, հին աշխարհի եօթը հրաշալիքներէն մէկը, որ հռչակուած ուխտատէղի մըն էր (տե՛ս Գրծ 19.23-31): Քրիստոնէութեան սերմերը այստեղ ցանուած էին արդէն, երբ Պօղոս եկաւ աւետարանելու, եւ երկու տարիներ մնաց այնտեղ (Գրծ 19. 1-10):

«Հրեշտակին գրէ՛»: Մեկնիչներէն շատեր այս բառը այստեղ կ'ուզեն հասկնալ՝ ո՛չ իբրեւ Եփեսոսի եկեղեցիին պահապան հրեշտակը, այլ՝ այդ եկեղեցւոյ ներկայացուցիչ առաջնորդը, վերակացուն, այսինքն՝ պատասխանատուն, որուն կ'ուղղուի նամակը:

«Այսպէ՛ս կ'ըսէ ան՝ որ իր աջ ձեռքին մէջ ունի եօթը աստղերը, եւ որ կը շրջի եօթը ճրագարաններուն միջեւ» (հմր 1): Եօթը աստղերը եօթը եկեղեցիներուն հրեշտակները կամ առաջնորդներն են, իսկ եօթը ճրագարանները՝ նոյնինքն եօթը եկեղեցիները, այլ խօսքով՝ Եկեղեցին իր ամբողջութեանը մէջ: Քրիստոս կը ներկայանայ իբրեւ իր Եկեղեցիին բացարձակ Տէրը, Թագաւորը եւ Մեծ ու Յաւիտենական Քահանայապետը, որ եկած է իր հետեւորդները փորձելու, թէ հաւատքը կը պահէ՞ն արդեօք (հմմտ Ղկ 18.8: Բ.Կր 14.5), տեսնելու՝ թէ եկեղեցիին փոխանցած իր պատուիրանները եւ աւանդը կը պահէ՞ն արդեօք. քննելու անոնց գործերը եւ իր վճիռը տալու անոնց մասին, ինչպէս պիտի տեսնենք անմիջապէս, Եփեսոսի այս եկեղեցիէն սկսեալ:

«Գիտեմ քու գործերդ, վաստակդ եւ համբերութիւնդ: Գիտեմ որ չես հանդուրժեր չար մարդոց: Փորձեցիր զանոնք, որոնք իրենք զիրենք առաքեալ կը կոչեն եւ սակայն չեն, ու գտար որ անոնք ստախօս են» (հմր 2): Եփեսոսի եկեղեցիին մասին ներկայացուած բոլոր տուեալները դրական են: Անիկա կը յատկանշուի ու կը փայլի իր գործերով, իր վաստակով եւ համբերութեամբ: Բայց առաքինութեանց ցանկը ատով չ'ըսպառիր: Անիկա նաեւ ուղղամիտ ու ճշմարտասէր է եւ սուտին թշնամի, իսկ սուտը արդէն թափանցել սկսած է ո՛չ միայն անհատ մարդոց վարքին մէջ, այլ նաեւ՝ քրիստոնէական վարդապետութեան եւ եկեղեցւոյ մէջ, ուր կան սուտ առաքեալներ կամ մարգարէներ:

Տխուր բան է՝ տեսնել բարիին այլասերումը, թէ ի՛նչպէս հազիւ բարին սերմանուած՝ չարը կու գայ անոր կողքին յայտնուելու. բայց ատիկա ներկայ աշխարհի դժբախտ իրականութիւնն է, որ Քրիստոս պատկերացուց Որոմներու Առակին մէջ (Մտ 13.25): Այդպիսիները ճանչնալու համար՝ պէտք է զանոնք փորձել, քննարկել անոնց քարոզութիւնը, անոնց տուած պատգամները (Ա.Կր 14.29). փորձել՝ «գիտնալու համար, թէ իրապէս Աստուծոյ Հոգիո՞վ կը խօսին» (Ա.Յհ 4.1)::

«Դուն համբերեցիր եւ տառապեցար ինծի համար, ու տեղի չտուիր» (հմր 3): Ով որ կ'ապրի սուտին ու կեղծիքին մէջ՝ երկու ընտրութիւն ունի.- Կա՛մ կը համակերպի շրջապատին եւ ինքն ալ կը բռնէ նոյն ճամբան, կամ՝ կ'ընդդիմանայ ու կը հակադրուի անոր, եւ անխուսափելի կը դառնայ բաղխումը՝ թէ՛ ներքին հոգեկան մակարդակի վրայ, որ տառապանքի դուռ կը բանայ, եւ թէ՛ արտաքին մարմնաւոր մակարդակի վրայ, որ կրնայ հասնիլ հալածանքի ու մահուան: Արդ, Եփեսոսի եկեղեցիին ուրիշ մէկ առաքինութիւնն է՝ Քրիստոսի անունին համար յանձն առած տառապանքը, առանց երբեք տեղի տալու:

«Բայց հիմա դժգոհ եմ քեզմէ, որովհետեւ զիս առաջուն պէս չես սիրեր» (հմր 4): Այդքան գովելի առաքինութեանց դիմաց՝ կայ սակայն դժգոհութեան կէտ մը, որ իբրեւ ազդարարութիւն կը հնչէ: Ատիկա՝ սիրոյ նուագումն է: Այս եւս մարդկային կեանքին յատուկ է, եւ տխուր երեսներէն մէկն է մեր կեանքին: Մարդը ժամանակաւոր եւ անցաւոր ըլլալուն, ինչպէս իր մարմինը կը հիննայ ու կը մաշի, այնպէս ալ իր մէջ կը մաշին ու կը մարին հետաքրքրութիւնները, եւ որ աւելի վտանգաւորն է՝ կը մաշի սէրը, բոլոր մակարդակներու վրայ: Ինչքան յաճախ կը տեսնենք ուժգին սիրոյ սկզբնական անգուսպ պոռթկում մը, որ ժամանակ մը ետքը աստիճանաբար տեղի կու տայ, սկզբնական ջերմութիւնը կը կորսնցնէ, եւ շատերու մօտ ամենեւին կը մարի, կը սառի: Նոյն երեւոյթը Եփեսոսի եկեղեցիին մէջ կը մատնանշէ Քրիստոս, մղելու համար որ անիկա արթնայ եւ վերադարձ մը կատարէ, իր մէջ վերարժարժելու համար սկզբնական սէրը եւ նախանձախնդրութիւնը Քրիստոսի հանդէպ:

Բնագրին մէջ չկայ «զիս», եւ ուստի այդ սէրը կարելի է հասկնալ՝ ո՛չ միայն Քրիստոսի հանդէպ ցուցաբերուած սէրը, այլ նաեւ՝ իրարու հանդէպ ցուցաբերուածը: Երկու պարագային ալ՝ սիրոյ նուագումը կրնայ առաջնորդել քրիստոնէական ոգիի եւ նախանձախնդրութեան նուագումի, որ կը սպառնայ հաւատքին եւ հետեւաբար՝ փրկութեան:

«Յիշէ՛, հետեւաբար, թէ ի՛նչ վիճակէ հոս ինկար, ապաշխարէ՛ եւ վերադարձի՛ր նախկին գործերուդ. ապա թէ ոչ՝ եթէ չապաշխարես՝ շուտով կու գամ եւ կը վերցնեմ քու ճրագարանդ իր տեղէն» (հմր 5): Եթէ ուրիշները փորձելը անհրաժեշտ է՝ խոտելու համար սուտն ու կեղծը, որքա՞ն աւելի կարեւոր է նաեւ ինքզի՛նք փորձելը, գէթ երբեմն երբեմն, տեսնելու համար մեր անցած ճանապարհը, եւ մեր կեանքը գնահատելու համար սիրոյ եւ հաւատարմութեան աստուածային պահանջքին չափանիշով: Եւ յաճախ կրնայ պատահիլ, որ դէպի ետ նետուած այդ հայեացքը մեզ դնէ

ցաւալի իրականութեան մը դիմաց, եւ մենք անդրադառնանք, թէ չէ՛նք գտնուիր հոն՝ ուր կոչուեցանք եւ ուր կը գտնուէինք ժամանակ մը: Թէ չենք գտնուիր երբեմնի այն առանձնաշնորհեալ վիճակին մէջ, ուր հրաւիրեց եւ դրաւ մեզ Աստուած՝ հակառակ մեր թերութիւններուն, սկարութիւններուն եւ մեր անարժանութեան (հմտտ Ա.Կր 1.26): Եւ հետեւաբար անդրադառնանք, թէ մենք դաւաճանած ենք Աստուծոյ, չարաշահած ենք իր հայրական վստահութիւնը, անտեսած ենք անոր անսահմանօրէն մեծ սէրն ու մեզի ըրած շնորհքը, եւ անառակ որդիի մը պէս՝ ինկած ենք մեր դիրքէն ու պատիւէն, խոզերու ընկերակցութեան մէջ եւ խոզերու պէս զայն ոտքի կոխան ընելով աշխարհի կեղտին ու տիղմին մէջ:

Յետադարձ այդպիսի ակնարկ մը պէտք է առիթ ըլլայ՝ անառակին պէս զղջալու մեր կորսնցուցածին համար, ապաշխարելու եւ վերադարձ կատարելու դէպի Հայրական գիրկը, որ պատրաստ է ամենայն ներողամտութեամբ ու բացարձակ սիրով մեզ ընդունելու եւ մեզ վերականգնելու, վերստին մեզի շնորհելու նոյն այն փրկութեան ու փառքի պատմութեանը, որ մենք կամաւոր կերպով մեր վրայէն մերկացանք, եւ վերստին մեր մատերուն անցընելու այն մատանին, որ Աստուծոյ որդիութեան եւ արքայութեան ժառանգորդութեան կնիքն ու գրաւականն է: Հակառակ պարագային, եթէ չզղջանք ու չապաշխարենք, մօտ է վերջնական անկումը եւ կորուստը. շուտով Յիսուս կու գայ մեր ճրագարանը իր տեղէն հանելու ընդմիջտ:

«Ճրագարան»ը իւրաքանչիւր եկեղեցիի համար գործածուած խորհրդանիշ մըն է, ինչպէս տեսանք: Ի՞նչպէս կ'ըլլայ զայն իր տեղէն շարժելը: Ճրագարանը նաեւ լոյսի եւ փրկութեան խորհրդանիշ մըն է, եւ Եկեղեցւոյ ճրագը Քրիստոս ինքն է: Քրիստոս կը սպառնայ իր լոյսէն, իր լոյս ներկայութենէն եւ փրկութենէն զրկել զայն, այնպէս՝ ինչպէս առաջին մարդը, Ադամ, Աստուծոյ անմիջական

ներկայութեան շնորհքը կը վայելէր մինչեւ իր անկումը, իսկ այնուհետեւ կորսնցուց զայն:

«Միակ նպաստաւոր բանը որ ունիս՝ այն է, որ կ'ատես Նիկողայոսի հետեւորդներուն գործերը, որ ես ալ կ'ատես» (հմր 6): Առաջին դարը ներկայ մեր դարէն ոչ նուազ աղանդաւորական հոսանքներ ու մտածողութիւններ ունեցաւ: Ոմանք Քրիստոսի աստուածութիւնը չճանչցան, ուրիշներ անոր ճշմարիտ մարդեղութիւնը ուրացան (Ա.Յհ 4.2-3 եւլն), ուրիշներ մարմիններու յարութիւնը մերժեցին կամ միայն հոգեղէն յարութիւն մը ընդունելով՝ արդէն իսկ մեռելներու յարութիւնը եղած հռչակեցին (Բ.Տմ 2.17-18), եւ տակաւին տեսակ տեսակ մոլորութեանց մէջ ինկան: Այս աղանդներէն ոմանց մասին բաւական պատկերացում ունինք, իսկ ուրիշներու մասին շատ քիչ եւ շատ անբաւարար բան գիտենք: Այս վերջիններէն է Նիկողայոսեանց աղանդը, որուն մասին գրեթէ ոչինչ գիտենք:

Ըստ 3-րդ դարու հեղինակ Եւսեբիոս Պատմիչին, այս աղանդին հիմնադիրը Երուսաղէմի առաջին եկեղեցւոյ եօթը սարկաւագներէն՝ Նիկողայոս կոչուածն է, բնիկ Անտիոքացի (Գրծ 6.5): Աղանդը, ինչպէս այս գիրքին մէջ տրուած անկատար տեղեկութիւններէն կրնանք դատել, կը փորձէր քրիստոնէութիւնը հաշտեցնել հեթանոսութեան հետ, որդեգրելով պաշտամունքային որոշ կերպեր, բայց մանաւանդ որդեգրելով բարոյական շատ թոյլ հասկացողութիւն մը, որ անբարոյութիւնը քաջալերելու համազօր էր: Աղանդը իր հետեւորդները ունէր նաեւ ուրիշ քաղաքներու մէջ, ինչպէս՝ Պերգամոնի մէջ (տե՛ս հմր 14-15): Ըստ երեւոյթին որոշ աղերս մը կայ այս աղանդին եւ Պերգամոնի եկեղեցիին մէջ յայտնուած ուրիշ աղանդի մը միջեւ, որ Բաղասամի անունով կը յիշատակուի (հմր 14), եւ որ դարձեալ անբարոյութեան առնչուած է: Նոյնպէս կրնայ կապ մը ըլլալ այս աղանդին եւ Թիատիրի եկեղեցիին մէջ յայտնուած նմանօրինակ աղանդի մը միջեւ, որուն ղեկավարը

Եզաբել կոչուած կին մըն է (հմր 20): Ամէն պարագայի, բոլորին հասարակաց գիծերն են՝ հեթանոսական ըմբռնումներով շաղախուած ըլլալը, կուռքերու զոհուած միւ ուտելը եւ բարոյական թուլութեան քաջալերանքը:

Քրիստոս իր զօրեղ խորշանքը կը յայտնէ նման անհաւատարմութեան, բարոյական սկզբունքներու թուլութեան եւ մինչեւ իսկ պոռնկութեան առաջնորդող վտանգաւոր վարքագիծի մը հանդէպ, որ երբեք փրկութեան ելք չէ, այլ կրակի հետ խաղալ է պարգապէս, շատերը կորուստի առաջնորդող. այն շատերը՝ «որոնց համար Քրիստոս մեռաւ» (Հո 14.15 Ա.Կր 8.11): Անոր համար է որ Քրիստոս կ'ըսէ՝ «կ'ատեմ անոնց գործերը»:

Արդ, Եփեսոսի եկեղեցին եթէ իր սիրոյն մէջ թուլցած է, բայց եւ այնպէս հեռու մնացած է բարոյական այս թուլութիւններէն, որոնք հաւատքին սրբութիւնը կ'աղարտեն, փրկութեան շնորհքէն կը հեռացնեն եւ արքայութեան խոստումէն կը զրկեն մարդս (տե՛ս 22.14-15: Հմմտ Ա.Կր 6.9-10: Գղ 5.19-21):

«Ան որ ականջ ունի՝ թող լսէ, թէ Հոգին ի՛նչ կ'ըսէ եկեղեցիներուն» (հմր 7): Այս բանաձեւը, որ բոլոր նամակներուն աւարտին կը գտնենք, ցուցանի՞ մըն է, որ խորքին մէջ նամակը ընդհանրական բնոյթ ունի. միայն մէկ եկեղեցի նկատի չունի, այլ՝ բոլո՛ր «Եկեղեցիները»: Ինչ որ այստեղ կ'ըսուի՝ առաջին հերթին յատուկ կրնայ ըլլալ Եփեսոսի եկեղեցիին, բայց «ականջ ունեցողը», միտք եւ իմաստութիւն ունեցողը կը հասկնայ, որ արտայայտուած գնահատանքը, եղած քննադատութիւնը, ազդարարութիւնն ու խոստումը հաւասարապէս կ'ուղղուին բոլորի՛ն, որովհետեւ աշխարհի մէջ ո՛ր ալ ըլլան եւ ե՛րբ ալ ըլլան՝ բոլոր եկեղեցիներն ալ դէմ յանդիման կը գտնուին նոյն հիմնական դժուարութիւններուն ու նեղութիւններուն, ենթակայ են նոյն տառապանքներուն ու փորձութիւններուն, եւ նոյն վտանգը կրնայ սպառնալ բոլորին. ուստի բոլորին դիմաց կը դրուի

նոյն պահանջքը՝ ինքզինք քննելու, ապաշխարելու եւ սկզբնական անկեղծ սիրոյն ու հարազատ հաւատքին վերադառնալու, չկորսնցնելու համար Աստուծոյ թանկագին խոստումները, որոնց կատարումը մօտ է արդէն:

Հետաքրքրական է դիտել, որ մինչ նամակը (եւ յաջորդող միւս նամակները) թելադրողը Քրիստոս ինք է, աւարտին կը խօսի Սուրբ Հոգիին անունով, վերջին խոստումները կու տայ Սուրբ Հոգիին անունով. «թող լսէ, թէ Հոգին ի՛նչ կ'ըսէ»: Երեւութապէս զարմանալի, բայց Աստուածաշունչի ներքին տրամաբանութեան մէջ շատ հետեւողական գիծ մըն է ասիկա: Ամբողջ Աստուածաշունչը, որ բնագիրը ինք էւ բնագրին հետեւողութեամբ մենք կը կոչենք Աստուծոյ խօսքը, ուրիշ բան չէ՝ եթէ ոչ յայտնութիւնը Որդիին, որ ինք Աստուծոյ խօսքն է: Բայց նոյն Աստուածաշունչը բազմիցս կը վկայէ, թէ զայն արձանագրող բոլոր հեղինակներն ալ Սուրբ Հոգիով խօսեցան, կամ Սուրբ Հոգիին ազդեցութեամբ կամ մղումով խօսեցան (հմմտ Բ. Թգ 23.2: Նէ 9.30: Զք 7.12: Մտ 22.43: Ղկ 1.41 եւ 67: Գրծ 1.16, 11.28: Ա. Կր 2.10: Ա. Պտ 1.11-12: Բ.Պտ 1.21 եւլն): Ասոնք երբեք հակասական չեն, այլ նոյն եւ մէկ ճշմարտութեան արտայայտութիւնները, որովհետեւ յայտնութիւնը տուողը Որդին է, իսկ զայն ներշնչողը Աստուծոյ Հոգին, որ շատ յատկանշականօրէն կը կոչուի նաեւ «Քրիստոսի Հոգին» (Հռ 8.9: Փլպ 1.19: Հմմտ Գրծ 16.7): Դարձեալ յատկանշական է, այս իմաստով, ինչ որ Հին Կտակարանի մարգարէներուն կապակցութեամբ կը կարդանք Ա. Պետրոսի մէջ. «Այս փրկութիւնն էր որ փնտոեցին ու փորձեցին հասկնալ մարգարէները, որոնք ձեզի տրուելիք շնորհքին մասին մարգարէանալով՝ կը փորձէին հասկնալ, թէ ի՛նչ ժամանակ եւ պարագաներ կը ծանուցանէր իրենց մէջ գործող Քրիստոսի Հոգին, որ կանուխէն կը վկայէր Քրիստոսի չարչարանքներուն եւ անոնց յաջորդելիք փառքին մասին» (Ա.Պտ 1.10-11): Ահա թէ ինչո՛ւ Սուրբ Հոգիին անունով կը տրուի, կամ հաւատացեալներուն սրտին մէջ կը

դրոշմով, իւրաքանչիւր նամակի վերջին խոստումը: Ի վերջոյ չմոռնանք, որ Յովհաննէս ինքն ալ պատգամները Քրիստոսէ առաւ՝ Սուրբ Հոգիով լեցուելէ ետք (տե՛ս 1.10):

«Ով որ յաղթանակէ՝ անոր իրաւունք պիտի տամ ճաշակելու Կեանքի ծառէն, որ կը գտնուի Աստուծոյ դրախտին մէջ» (հմբ 7): Խոստումի մը կապուած այս կոչի ձեւը կը գտնենք իւրաքանչիւր նամակի մէջ: Առաջին այս խոստումը կը վերաբերի Կենաց ծառին, որ Աստուծոյ դրախտին մէջ է: Այդ ծառին առաջին յիշատակութիւնը կը գտնենք Ծնունդներու գիրքին սկիզբը (2.9, 3.22-24), իսկ երկրորդ եւ վերջին յիշատակութիւնը՝ Յայտնութեան այս գիրքին մէջ (22.2 եւ 14), որ Աստուածաշունչին եզրափակումն է եւ վերադարձ մը դէպի աստուածատունկ դրախտը:

Այս դրախտը երկրաւոր չի՛ կրնար ըլլալ, ո՛չ ալ կը նշէ Աստուծոյ անմիջական ներկայութեան ըլլալու այն վիճակը, որ աշխարհի կատարածին պիտի վայելեն Աստուծոյ ժողովուրդին մաս կազմողները: Այլ՝ կը ներկայացնէ երանական վիճակ մը, որ առաջին մարդուն պարգեւուած էր Աստուծոյ կողմէ, եւ որմէ արտաքսուեցաւ մարդը իր անհնազանդութենէն ետք, եւ որ այժմ, մահուան վրայ Քրիստոսի տարած յաղթանակէն ետք՝ միջանկեալ վիճակ մըն է կեանքի եւ մարմնաւոր յարութեան միջեւ, երբ արդարներու հոգիները Աստուծոյ խոստացած երանական հանգիստը եւ յաւիտենական կեանքի բարիքներուն նախաճաշակը պիտի վայելեն, մինչեւ հասնի աշխարհի կատարածը եւ բոլորը մաս կազմեն Վերին Երուսաղէմին: Քրիստոս այդ դրախտն էր որ խոստացաւ այն աւագակին, որ վերջին պահու գոջումով ապաւինեցաւ իրեն եւ փրկութիւնը ժառանգեց, լսելով անհաւատալի աւետիսը. «Այսօր ինձի հետ պիտի ըլլաս դրախտին մէջ» (Ղկ 23.43): Նոյն այդ դրախտին մասին խօսեցաւ Քրիստոս Մեծահարուստին եւ Աղքատ Ղազարոսի առակին մէջ (տե՛ս Ղկ 16.22), եւ նոյն դրախտը յափշտակուած Պօղոս առաքեալ այդ փորձառութեան մասին

կը խօսի Կորնթացիներուն ուղղած իր Բ. նամակին մէջ (12.2-4):

Այս դրախտը վերականգնումն է Աստուծոյ եւ մարդուն միջեւ անխրամատ եւ սերտ մտերմութեան վիճակին, որ առաջին մարդը ունէր մեղանշումէն եւ անկումէն առաջ, եւ որ այժմ դարձեալ պիտի վայելեն իրենց հաւատքով մեղքին ու չարին վրայ յաղթանակ տանողները:

Բայց միայն ապագային նայող խոստում մը չէ՝ տրուածը: Ըսինք՝ որ իւրաքանչիւր նամակի սկիզբը յիշուած տիտղոսը անմիջականօրէն կապ ունի նոյն նամակին մէջ տրուած խոստումին կամ խոստումներուն: Եւ այս նամակին սկիզբը Քրիստոս ինքզինք կը ներկայացնէր իբրեւ Տէրը եւ Թագաւորը եւ Քահանայապետը իր Եկեղեցիին, որուն մէջ կը շրջի: Արդ, եկեղեցւոյ հասկացողութեամբ ու մեկնաբանութեամբ՝ կենաց ծառը նոյնինքն Քրիստոս է, որ մեզի յաւիտենական կեանքը կու տայ: Եւ կենաց ծառին պտուղը նոյնինքն յաւիտենական կեանքը, կամ անմահութիւնն է: Կը նշանակէ՝ թէ խորքին մէջ յաղթանակող եկեղեցիին կամ հաւատացեալին Քրիստոս ինքզինք տալ կը խոստանայ, այնպէս ինչպէս քիչ մը անդին նոյնը պիտի տեսնենք երկնաւոր մանանային կապուած խոստումին առիթով (տե՛ս 2.17): Իսկ ինքզինք պարգեւելու այս խոստումը կապուած է ներկայ կեանքին, աւելի ճիշդ՝ կապուած է եկեղեցւոյ կեանքին, որովհետեւ եկեղեցին է այն խորհրդական դրախտը, ուր մեզ վերադարձուց Քրիստոս՝ մեզ ետ խլելով աշխարհէն, ուր արտաք-սուած էինք Ադամի մեղանշումով, եւ եկեղեցւոյ այդ դրախտին մէջ յաւերժօրէն ինքզինք կը պարգեւէ իբրեւ կեանքի ծառը, որպէսզի մենք իրմէ ճաշակենք եւ մեր մէջ ունենանք անմահութեան պտուղը:

ՆԱՄՍԿ ՉՄԻՌՆԻԱՅԻ ԵԿԵՂԵՑԻԻՆ (2.8-11)

Երկրորդ նամակը Ջմիռնիային է, այժմ Իզմիր անունով ծանօթ, որ կը գտնուէր Եփեսոսէն աւելի վեր, հիւսիս-արեւմուտքը: Այս հօր եւ շատ հարուստ քաղաքը, որ ընդարձակ ծովածոցի մը մէջ հաստատուած կարելոր նաւահանգիստ մըն էր նաեւ, նշանաւոր էր կայսերական պաշտամունքի իբրեւ կեդրոն, եւ միաժամանակ ունէր Հրեայ բաւական մեծ համայնք մը, որ քրիստոնեաներուն դէմ հալածանքին պիտի միանար: Կ'ենթադրուի, որ այս եկեղեցիին «հրեշտակը» կամ առաջնորդը, որուն կ'ուղղուի նամակը, Յովհաննէս առաքեալի Պօղիկարպոս աշակերտն էր, որուն նահատակութիւնը մեզի հասած առաջին վկայագրութիւններէն մէկն է:

«Այսպէ՛ս կ'ըսէ Առաջինն ու Վերջինը, ան՝ որ մեռաւ ու վերակենդանացաւ» (հմր 8): Հալածանքներու մէջ տուայտող Ջմիռնիայի եկեղեցիին՝ Յիսուս քաջալերութեան պատգամ կ'ուղղէ՝ նախ իր աստուածային անունն ու հանգամանքը յիշեցնելով. «Առաջինն ու Վերջինը» Գրք.ը ունի՝ «Անսկիզբն ու Անվախճանը»: Առաջին պահէն կը յիշեցնէ, թէ ժամանակաւոր եւ անցաւոր այս աշխարհի մէջ ի՛նչ ալ ըլլայ մեզի վերապահուած բաժինը, մեր աչքերը պէտք է ուղղուած ըլլան յաւիտենականին, իրէ՛ն՝ յաւիտենական Աստուծոյն, որ ո՛չ սկիզբ ունի եւ ոչ վախճան, եւ որուն ձեռքին մէջ են բոլորը, առաջինէն մինչեւ վերջինը: Աշխարհի ճակատագիրը տնօրինողը մարդիկ իրենք չէ՛ն, որքան ալ այդպէս թուի՝ մեր նիւթական մտածողութեան ու մարմնաւոր մեր աչքերուն: Հաւատքի հայեացքը ունեցողը գիտէ, թէ աշխարհի դէկն ու ճակատագիրը Աստուծոյ ձեռքերուն մէջ են, եւ ըստ այնմ ալ կը յանձնուի անո՛ր կամքին ու առաջնորդութեան:

Յիսուս նաեւ քաջալերանքի պատգամ կ'ուղղէ՝ յիշեցնելով երկրաւոր կեանքի իր օրինակը. «Ան՝ որ մեռաւ ու վերակենդանացաւ»: Իր մարդեղութիւնը եւ փոխանորդական չարչարանքներն ու մահը կենդանի օրինակ մըն են այս աշխարհի մէջ ապրող իւրաքանչիւր հաւատացեալ մարդու,

թե՛ հալածանքներն ու չարչարանքները չարին յաղթանակը չե՛ն նշանակեր, այլ՝ Աստուծոյ յատուկ ճամբան են՝ չարին դէմ պայքարելու: Պայքար մը, որուն մէջ մարդը կոչուած է մեղքին վրայ յաղթանակ տանելու: Այո՛, անոնք Աստուծոյ յատուկ ճամբան են՝ մարդս աշխարհի տիղմէն բարձրացնելու եւ իր փառքին հաղորդակից դարձնելու: Ուստի չարչարանքները ո՛չ ահարկու են եւ ո՛չ ալ նահանջելի: Աստուած ռեւէ մէկուն չարչարանքը չի՛ կամենար, բայց նաեւ չ՛ուզեր որ մենք փախուստ տանք անոնցմէ, երբ կեանքը մեզ անոնց դէմ յանդիման կը դնէ, որովհետեւ անոնք մարդս մաքրող ու բիրեղացնող քուրան են (հմմտ Ա.Պտ 1.6-7), կատարելութեան ճանապարհը եւ դէպի արքայութեան անանց փառքը տանող սանդուխը: Ատոր համար է, որ Աստուած մարդոց փրկութեան համար իր Որդին աշխարհ դրկեց, որպէսզի փրկութեան ճանապարհը ցոյց տայ՝ անարգ խաչին միջոցաւ: Այդ նպատակը շատ լաւ կը պատկերացնէ առաքեալը. «Աստուած, որ իրեն համար ստեղծեց եւ իրմով կը պահէ ամէն ինչ, իր բոլոր որդիները մասնակից դարձնելու համար իր փառքին՝ յարմար գտաւ, որ զանոնք փրկութեան առաջնորդողը՝ Յիսուս ի՛նք օրինակը տայ չարչարանքներէն անցնելով կատարելութեան հասնելու» (Եբր 2.10): Եւ հիմա նոյն Փրկիչը ինք, «որ չարչարուելով փորձուեցաւ» եւ «կրնայ օգնել փորձութեան մէջ եղողներուն» (Եբր 2.18), իր սրտապնդիչ օգնութեան խօսքը կ՛ուղղէ իրեններուն, ըսելու համար՝ թէ բոլոր անոնք որոնք իր օրինակով յանձն կ՛առնեն Աստուծոյ կամքը, եւ այդ կամքին հաւատարմութեան սիրոյն ի հարկին նաեւ մահը, մահէն ետք անվախճան կեանքը պիտի ունենան: Հետեւաբար հալածանք, չարչարանք եւ նոյնիսկ մահ՝ երբեք ընկճում, պարտութիւն ու վախճան չեն նշանակեր: Քրիստոս այդ ճամբայէն անցաւ՝ յաղթելով, եւ կանուխէն ալ իրեններուն ըսաւ. «Աշխարհի վրայ նեղութիւն պիտի ունենաք, բայց քաջալերուեցէք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհին» (Յհ 16.33): Քրիստոսի ճամբով ընթացողը

նոյնպէս յաղթող մըն է, որովհետեւ անցաւոր կեանքը կու տայ՝ յաւիտենական կեանք շահելու համար, ախտաւոր եւ անարգ կեանքին տեղ ձեռք բերելու համար անախտ ու փառաւոր կեանքը:

«Գիտեմ քու գործերդ, նեղութիւնդ եւ աղքատութիւնդ» (Հմբ 9): Զմիռնիայի եկեղեցիին ունեցած երեք առաքինութիւններն են՝ գործերը եւ յանձն առած նեղութիւնն ու աղքատութիւնը, որոնց համար Քրիստոս գնահատանք կ'արտայայտէ՝ «Գիտեմ» բայով, որ կը նշանակէ՝ թէ Աստուծոյ քով ատոնք մոռացութեան չեն տրուիր, այլ՝ ընդհակառակը՝ անոնք միշտ Աստուծոյ գիտակցութեան մէջ են, անուշաբոյր պատարագի պէս (Հմմտ Գրծ 10.31): Խօսքը այստեղ հաւատքի գործերուն մասին է, վստահաբար, որոնք հաւատքին կենդանութեան նշանն են (Հմմտ Յկ 2.17 եւ 26):

Նեղութիւնը այն հալածանքներն ու չարչարանքներն են, որոնց կ'ենթարկուին անոնք հեթանոսներուն թէ հրեաներուն կողմէ, եւ այդ բոլոր հալածանքներուն մէջ կը պահեն իրենց հաւատքին ջերմեանդութիւնը: Գալով աղքատութեան, զոյգ իմաստներով կը ներկայանայ անիկա: Նախ՝ տառական իմաստով: Գիտենք որ յաճախ պետական հալածանքներուն կ'ընկերանար սեփական ինչքերու բռնագրաւումը, որ ենթական կը զրկէր իր բոլոր ունեցուածքներէն եւ կը ձգէր տառացի աղքատութեան մէջ: Երկրորդ, հալածանքին ու չքաւորութեան մէջ պահուած բարեպաշտութիւնը, որ Աստուածշնչական լեզուին մէջ յաճախ կ'արտայայտուի «աղքատ» եզրով (տես Մդ 9.9 եւ 18, 34.6, 44.24 եւլն: Հմմտ Մտ 11.5: Ղկ 4.18): Այդպիսի աղքատներո՛ւն է որ Յիսուս երանի կարդաց (Մտ 5.3), եւ այստեղ նոյն երանելի վիճակին մէջ կը դիտէ ու կը յայտարարէ Զմիռնիայի եկեղեցին եւ անոր օրինակին հետեւող բոլոր ժամանակներու ճշմարիտ հաւատացեալները:

«Աղքատ կ'երեւիս, բայց հարուստ ես դուն», (Հմբ 9): Այստեղ «աղքատ» եւ «հարուստ» բառերը դարձեալ իրենց

փոխաբերական նշանակութեամբ գործածուած են: Բարեպաշտ մարդը աշխարհի աչքին զրկուած ու «խեղճ» կրնայ երեւիլ եւ մարդիկ արգահատանքով կրնան նայիլ անոր եւ ըստ այնմ վերաբերիլ անոր հետ, բայց իրողութիւնը տարբե՛ր է Աստուծոյ աչքին եւ Աստուծոյ հաւատացող մարդուն համար: Պօղոս առաքեալ ա՛յնքան գեղեցիկ կերպով կը բացայայտէ այդ վիճակը՝ իր սեփական փորձառութեամբը. «ամէն տեսակ նեղութիւն ունինք, բայց ընկճուած չենք. տազնապի մատնուած ենք, բայց յուսահատ չենք. հալածանքներ անպակաս են, բայց լքուած չենք. յաճախ խոշտանգուած, բայց խորտակուած չենք: Շարունակ Յիսուսի մահը մեր մարմիններուն մէջ կը կրենք, որպէսզի Յիսուսի կեանքն ալ մեր մարմիններուն մէջ յայտնուի» (Բ.Կր 4.8-10): Նոյնպէս, կարելորը երկրի վրայ հարուստ ըլլալը չէ՛, ո՛չ ալ մարդոց աչքին հարուստ ու փարթամ ըլլալը. կարելորը Աստուծո՛յ աչքին հարուստ ըլլալն է՝ հաւատքով եւ երկինքի մէջ իբրեւ գանձ դիզուած առաքինութիւններով ու բարեգործութիւններով (Տե՛ս Մտ 6.20: Ղկ 12.33: Ա. Տմ 6.18: Յկ 2.5: Հմմտ Ղկ 12.21):

«Գիտեմ անարգական խօսքերը, որ կ'ըսեն անոնք՝ որոնք իրենք զիրենք հրեայ կը նկատեն եւ սակայն չեն. անոնք սատանայի հետեւորդներ են» (Հմր 9): Բացայայտօրէն կ'ակնարկուի ոչ-քրիստոնէայ Հրեաներու վարմունքին, որ անարգական ու կատաղօրէն մերժողական է՝ իրենց քրիստոնէայ ազգակիցներուն հանդէպ: Այդ վերաբերումը անոնք որդեգրեցին՝ ո՛չ միայն իրենց կրօնական համոզումներէն մղուած, այլ մանաւանդ՝ իրենց կոյր մոլեռանդութենէն տարուած, որպէսզի Քրիստոսի հետեւորդները չօգտուէին կայսերական պաշտամունքէն գերծ ըլլալու առանձնաշնորհումէն, որ հրեաներ ունէին, եւ ուստի մատնուէին կայսերական ատեաններու հետապնդումներուն: Այսպիսի եղբայրատեաց վարմունքն ու եղբայրասպան տրամադրութիւնը չե՛ն կրնար Աստուծմէ գալ, այլ՝

Սատանային թելադրութիւնը միայն կրնան ըլլալ: Ատով իսկ անոնք ցոյց կու տան՝ թէ իրենք ճշմարիտ հրեաներ չե՛ն (Հմմտ Հո 2.28-29, 9.6-8), Աստուծոյ որդիներ չե՛ն, այլ՝ սատանային ծնունդները եւ անո՛ր հետեւորդները (Հմմտ Յհ 8.40-44):

«Մի՛ վախնար այն չարչարանքներուն համար, որ պիտի կրես» (Հմր 10): Տրդ համարին առիթով ըսինք արդէն, թէ սրտապնդիչ խօսք մը ուղղելն է հիմնական նպատակը այս նամակին: Քաջալերանքի խօսք մը՝ չարչարուող եկեղեցիի մը, եւ նախազգուշացում մը, որ տակաւին ուրիշ նեղութիւն ու չարչարանքներ կան դիմացը, որոնք պէտք է դիմա-գրաւել ամենայն քաջութեամբ եւ Աստուծոյ խոստումներուն վրայ կատարեալ վստահութեամբ:

«Ահա Բանսարկուն ձեզմէ ոմանք բանտ պիտի նետե՛՛ ձեզ փորձելու համար, եւ ձեր նեղութիւնը տասը օր պիտի տեւե՛» (Հմր 10): «Բանսարկու» կը նշանակէ չարախօս, զրպարտիչ. տիտղոս մը՝ որ Աստուածաշունչին մէջ տրուած է Սատանային, նկատի ունենալով այն դերը, որուն մէջ զինք կը ներկայացնէ յատկապէս Յոբի գիրքը (Հմմտ Յոբ 1.6-12, 2.1-6): Այդ գիրքէն կը սորվինք նաեւ, թէ Աստուած թոյլտուութիւն տուած է Բանսարկուին՝ փորձելու մարդիկը, որպէսզի փորձաքարի զարնուելով ի յայտ գայ մարդոց առաքինութիւնը եւ Սատանան տկար մարդոց իսկ ձեռամբ պարտուի՝ Աստուծոյ դիմաց իր ամբարտաւան յաւակնութիւններուն մէջ: Այս իրողութիւնը յիշեցնելով մէկտեղ, Քրիստոս ընդգծելով կը յիշեցնէ ուրիշ ճշմարտութիւն մը, որ ամէն մէկ հաւատացեալ պէտք է գիտնայ, թէ Աստուած մարդու կարողութիւններէն վեր թոյլ չի՛ տար փորձել զայն (Ա.Կր 10.13: Հմմտ Յկ 1.13), եւ թէ՛ փորձութիւնը կարճ ժամանակի համար է միայն: «Տասը օր» բացատրութիւնը չի միտիւր օրերու ճշգրիտ գումար մը նշել, այլ պարզապէս՝ շատ կարճ ժամանակ մը նշել (Հմմտ Օն 24.55: Դն 1.12), ըսելու համար՝ թէ մեր ժառանգելիք

յաւիտենականութեան դիմաց՝ ոչինչ բան է չարչարանքներու տեսողութիւնը (Հմմտ Հո 8.18):

«Հաւատարիմ եղիր ինձի, նոյնիսկ եթէ մեռնիլ պէտք է, եւ եւ քեզի կեանքի պսակը պիտի տամ» (Հմր 10): Պսակը այստեղ դափնիի ճիւղերով կամ ուրիշ դալար ոստերով կամ ծաղիկներով պատրաստուած պսակն է, որ անցեալին կը տրուէր մարգական խաղերուն մէջ յաղթական հանդիսացողին: «Կեանքի պսակը», ակնարկութիւն է յաւիտենական կեանքին, որ Քրիստոսի հաւատարիմները կը շահին մրցադաշտին վրայ շահուած դափնեպսակի մը պէս (Հմմտ Ա.Կր 9.24: Փլպ 3.12 եւ 14: Տե՛ս նաեւ 3.11, 4.4 եւ 10, 6.2 եւլն), իբրեւ յաղթանակի եւ փառքի պսակ: Եւ իրօք քրիստոնէային կեանքը այդպիսի մրցանք մըն է, ո՛չ թէ անցաւոր եւ վաղաթարշամ պսակ մը ձեռք բերելու համար, այլ շահելու համար անանց փառքի անթառամ պսակը, «արդարութեան պսակը», որ Փառաց Տէրը, Արդար Դատաւորը այն օրը իբրեւ հատուցում պիտի տայ իրեններուն (Հմմտ Բ. Տմ 4.7-8): Հաւատքի կատարեալ հաւատարմութիւն ցուցաբերած եւ չարին դէմ յաղթանակ տարած հաւատացեալը յաւիտենական կեանքի պարգեւէն զատ՝ պիտի ստանայ նաեւ Քրիստոսի հետ թագաւորելու, անոր թագաւորական պատիւին ու փառքին մասնակից դառնալու բացառիկ առանձնաշնորհումը (Տե՛ս Բ Տմ 2.12: Հմմտ Մտ 19.28: Ղկ 22.30):

«Ան որ ականջ ունի՝ թող լսէ թէ Հոգին ի՛նչ կ'ըսէ եկեղեցիներուն.- Ով որ յաղթանակէ՝ երկրորդ մահէն պիտի չվնասուի» (հմր 11): Նախորդ բացատրութեան կրկնութիւնն է՝ տարբեր պատկերով մը: Դարձեալ յաւիտենական կեանքի խոստումն է որ կը տրուի, բայց՝ ակնարկելով այն «երկրորդ մահուան», որ անհաւատներուն եւ անօրէններուն բաժինը պիտի ըլլայ:

Առաջին մահը բնականօրէն եւ անշփոթ կերպով կը հասկնանք որպէս մարմնաւոր մահը, որուն ենթակայ ենք

բոլորս, եւ որ, ահա, հալածանքի ու չարչարանքի ենթակայ քրիստոնէաներուն ամէն վայրկեան կը ներկայանար՝ իբրեւ իրենց գլխուն վրայ կախուած Դամոկլեան սուր: Իսկ ի՞նչ է այդ «երկրորդ մահը», որուն մասին կը խօսի Քրիստոս, եւ ոմանց միտքին մէջ շփոթ ստեղծած է մինչեւ հիմա: Այն աղանդները կամ մարդիկ, որոնք դժոխքին գաղափարը չեն ուզեր ընդունիլ կամ ճանչնալ, այս «երկրորդ մահ» բացատրութիւնը կ'ուզեն հասկնալ դարձեալ մարմնաւոր իմաստով մը, ըսելով՝ թէ մարմինով յարութիւն առնելէ ետք, աստուածային դատաստանով դատապարտուածները անգամ մը եւս պիտի մեռնին, եւ՝ ա՛լ վերջնականապէս: Ատիկա անոնց ամբողջական բնաջնջումը պիտի ըլլայ, կ'ըսեն: Բայց նման տեսութիւն մը Աստուածաշունչէն չի գար, այլ արդիւնք է քմահաճ ցանկութեան եւ կամաւորաբար Աստուածաշունչը սխալ հասկնալու դիտումին:

Նախ ըսենք, որ ամբողջ Նոր Կտակարանի մէջ միայն այս գիրքն է որ կը խօսի երկրորդ մահուան մասին: Երկրորդ, նոյն այս գիրքին 20.6-ին մէջ դարձեալ կը յիշուի անիկա, եւ 20.14-ին մէջ կը բացատրուի իբրեւ «կրակի լիճը» (հմմտ 21.8), ուր նետուողները «պիտի չարչարուին գիշեր ու ցերեկ, յաւիտեանս յաւիտենից» (20.10): Արդ, կրնա՞յ ըլլալ, որ այս լիճը նետուողները մարմնաւորապէս մեռած եւ բնաջնջուած ըլլան եւ յետոյ չարչարուին գիշեր ու ցերեկ յաւիտեանս յաւիտենից: Ծիծաղելի չէ՞ այդպիսի անհեթեթ բացատրութիւն մը: Մինչդէռ եթէ թոյլ տանք որ բնագիրը ինքզինք բացատրէ, կը գտնենք ճշմարտութիւնը՝ թէ, ինչպէս ամբողջ գիրքը փոխաբերութիւններով ու խորհրդանիշներով կը յորդի, այնպէս ալ «երկրորդ մահ» բացատրութիւնը փոխաբերական իմաստ մը ունի, եւ կը նշանակէ՝ թէ անիկա այն ծանրագոյն դատապարտութիւնն է, որուն կրնայ ենթարկուիլ ոեւէ արարած: Ինչպէս ֆիզիքական մահը մեր նիւթական մտածողութեան մէջ յետին չարիքն է, այնպէս ալ «հոգեւոր» մահը կրօնական մտածողութեան մէջ չարիքներու չարիքն է:

Արդ, երկրի վրայ կեանք եւ մահ բացատրութիւնները մարմինին յարաբերաբար կը հասկնանք, բայց երկնային յաւիտենական կեանքի մեջ այդ մարմնաւոր հասկացողութիւնը չկայ, եւ ուստի «մահ» բացատրութիւնը տարբե՛ր, հոգեւո՛ր նշանակութիւն ունի: Ինչպէս որ յաւիտենական «Կեանքը» Աստուծոյ ներկայութեան եւ Աստուծոյ հետ ապրուած կեանքն է՝ իրեն յատուկ բոլոր երեսներով.- Լուսաշող ու սրբաբոյր եւ զուարթառատ կեանքով, արդարութեան ու խաղաղութեան յագեցածութեամբ, կատարեալ երանութեամբ ու փառքով. այնպէս ալ յաւիտենական «Մահը» Աստուծմէ հեռու եւ Աստուծմէ զուրկ ապրելու դատապարտումն է՝ իրեն յատուկ բոլոր երեսներով.- Խաւարով եւ պիղծ խորհուրդներու ահացուցիչ տագնապովն ու տառապանքովը յատկանշուող, ուր խաղաղութիւնը ընդմիջտ կորսուած պիտի ըլլայ, եւ դառն զրկանքը, անօգուտ զոջումն ու հառաչանքը եւ անխնայ ինքնաձաղկումը պիտի ըլլան բաժինը անոր ենթարկուողներուն:

Ահա ա՛յս մահէն է որ պիտի փրկուին Բանսարկուին փորձութիւններուն եւ կեանքի նեղութիւններուն դէմ դնողները եւ յաղթանակողները, ինչպէս կը յիշեցնէ մեզի Աստուծոյ Հոգին:

ՆԱՄԱԿ ՊԵՐԳԱՄՈՆԻ ԵԿԵՂԵՑԻԻՆ (2.12-17)

Քրիստոնէական առաջին դարերուն Պերգամոնը Հռոմէական կարեւոր եւ ծաղկուն քաղաք մըն էր, շեշտուած կրօնական բնոյթով: Մաս կը կազմէր Փոքր Ասիայի Միսիա նահանգին, որ Ատտալեան թագաւորներու նստավայրը եղած էր նախապէս: Քաղաքը իր անունը առած է մագաղաթէն, որ հոս կ'արտադրուէր, եւ անուանի էր 200000 գիրք հաշուող իր մատենադարանով, որ Հռոմայեցիներու օրով կողոպտուեցաւ

եւ տարուեցաւ Եզիպտոս, Աղեքսանդրիայի մատենադարանը: Հնագիտական պեղումները յայտնաբերած են անոր սքանչելի շինութեանց ակերակները՝ Չեւսի նուիրուած տաճար մը, թատրոն, ամփիթատրոն, կրկէս, Աթենա չաստուածուհիին նուիրուած տաճար մը, եւ բժշկութեան աստուած Ասկլեփոսին նուիրուած սրբարան մը: Բազմաթիւ չաստուածներու պաշտամունքին առընթեր՝ կարելոր տեղ ունէր նաեւ կայսեր պաշտամունքը, որուն պաշտօնական կեդրոնն էր այս քաղաքը Քրիստոսէ առաջ 29 թուականէն սկսեալ, եւ ըստ ոմանց՝ այդ պատճառով է որ Յայտնութեան գիրքը այստեղ Պերգամոնը կը բնութագրէ իբրեւ «հոն՝ ուր Սատանան իր աթոռը ունի» (հմբ 12):

«Այսպէ՛ս կ'ըսէ ան՝ որ սրուած երկսայրի սուրը ունի» (հմբ 12): Տե՛ս 1.16 եւ բացատրութիւնը: Սուրը դատաստանի, արդար վրէժխնդրութեան եւ պատիժի խորհրդանիշ է: Խօսողը կը ներկայանայ իբրեւ տիեզերքի գերագոյն Դատաւորը, որ գնահատանքի եւ ազդարարութեան իր արդար խօսքը կ'ուղղէ Պերգամոնի եկեղեցիին:

«Գիտեմ գործերդ, եւ գիտեմ որ կը բնակիս հոն՝ ուր Սատանան իր աթոռը ունի» (հմբ 13): Աստուծոյ ծանօթ են մարդոց գործերը եւ անոնց վիճակը, անոնց ապրած դժուարութիւններն ու վայելած դիւրութիւնները: Պերգամոնի եկեղեցիին դժուար պայմաններու մէջ ապրող եկեղեցիին է: «Հոն՝ ուր Սատանան իր աթոռը ունի» բացատրութիւնը, ինչպէս ըսինք, ակնարկութիւն է այն իրողութեան, որ Պերգամոն քաղաքը կեդրոն էր բոլոր հեթանոսական պաշտամունքներուն, եւ յատկապէս՝ կայսեր պաշտամունքին:

«Բայց դուն իմ անունս պահեցիր եւ ինձի հանդէպ ունեցած հաւատքդ չուրացար՝ նոյնիսկ երբ իմ հաւատարիմ վկաս, Անտիպաս, ձեր դիմաց սպաննուեցաւ հոն՝ ուր Սատանան կը բնակի» (հմբ 13): Դիւական ոյժերու գործունէութեան այդպիսի կեդրոնի մը մէջ իբրեւ

քրիստոնեայ ապրիլն ու գործելը իսկական քաջութեան եւ գնահատանքի արժանի հաւատարմութեան վկայութիւն է: Նոյն իրողութիւնը այստեղ կը շեշտուի, երբ քաղաքը նման բնորոշումով մը կը ներկայացուի իբրեւ «հոն՝ ուր Սատանան կը բնակի»: Սատանան բացարձակ տիրապետութիւն՝ հաստատած էր Պերգամոնի մէջ, ինչ որ կը նշանակէր՝ կատաղի հալածանք եւ ամենազգի նեղութիւն Աստուծոյ հաւատարիմներուն համար: Այդպիսի հաւատարիմ վկայ մը եղաւ այնտեղ՝ Անտիպասը, որ, ըստ եկեղեցական աւանդութեան, Դոմետիանոս կայսեր օրերուն նահատակուեցաւ՝ պղնձեայ կաթսայի մը մէջ խորովուելով՝ մինչեւ մահ, ատով իսկ նմանելով իր Տիրոջ եւ Փրկչին՝ Յիսուսի, «Հաւատարիմ Վկային» (1.5): Որոշապէս Քրիստոս կ'ըսէ, թէ ով որ իրեն կը հետեւի եւ իրեն հանդէպ ունեցած հաւատքը չ'ուրանար, ով որ հալածանքներու եւ չարչարանքներու մէջ իսկ իր անունը կը պահէ, այսինքն՝ իր հետքերով կը քալէ, իր կատարեալ նմանութիւնը կը դառնայ եւ Քրիստոսի հաւատարիմ վկան կոչուելու առանձնաշնորհումին կ'արժանանայ:

«Բայց քեզի դէմ կարգ մը դժգոհութիւններ ունիմ: Քու շարքերուդ մէջ ունիս Բաղասամի վարդապետութեան հետեւորդներ. այն Բաղասամին, որ Բալակի սորվեցուց՝ Իսրայէլի որդիները մեղքի մղել, որպէսզի անոնք կուռքերու զոհուած միս ուտեն եւ պոռնկութիւն ընեն» (հմբ 14): Նահատակութեան ճամբէն քալող այս եկեղեցին վիրաւոր կողմ մը ունի, սակայն: Իր շարքերուն մէջ ունի կարգ մը անձեր, որոնք նահատակութիւնը յանձն չառնելու համար սկսած են հետեւիլ Բաղասամի ուսուցած անհաւատարմութեան ճամբուն:

Բաղասամը Սուրիացի մարգարէ մըն էր, որ Մոաբի Բալակ թագաւորին կողմէ կանչուեցաւ՝ որպէսզի մարգարէանայ եւ անիծէ Աստուծոյ ժողովուրդը, Իսրայէլը (տե՛ս ԹՎ 22.2-6), բայց Աստուած իրեն արգիլեց անիծել, որով

Բաղասամ զրկուեցաւ Բալակի խոստացած հարստութենէն: Երբ մարգարէութեան ճամբով չկրցաւ Բալակի կամքը կատարել ու զայն հաճեցնել, նոյն բանը ըրաւ ուրիշ կերպով: Խորհուրդ տուաւ՝ Մադիանացի աղջիկներուն միջոցաւ գայթակղեցնել ու պոռնկութեան մէջ ձգել Իսրայէլացիները եւ մղել զանոնք՝ որ Մադիանացիներու Բել աստուածը պաշտեն եւ անոր զոհուած միսերէն ուտեն, ասով Աստուծոյ գայրոյթն ու պատիժը բերելու համար անոնց վրայ (տե՛ս Թւ 25.1-3, 31-16):

Քրիստոնէութեան դէմ հալածանքներու ժամանակաշրջանին, ինչպէս բռնամիջոցները՝ այնպէս ալ համոզելու քաղցր կերպերը ի գործ դրուեցան, Քրիստոսի հետեւորդները մղելու համար որ յանձն առնեն ուրացութիւնը եւ իրենց կեանքերը փրկեն: Այս մարդիկը կայսերական պաշտօնեաներն էին յաճախ, երբեմն ալ՝ եկեղեցւոյ անդամներ, ինչպէս յաջորդ համարէն կը հետեւի: Առաջիները Բալակ թագաւորին նմանութիւնն էին՝ իրենց խոստումներով, երկրորդները Բաղասամի նմանութիւնն էին՝ իրենց առաջարկներով, եւ երկուքն ալ անգիտակցաբար Սատանային կամքը կը կատարէին, քրիստոնէաներուն դիմաց գայթակղութեան քար դնելով եւ կռապաշտութեան ու հեթանոսական բարքերուն եւ պոռնկութեանց մղելով զանոնք:

«Նոյնպէս, դուն ալ Նիկողայոսի վարդապետութեան հետեւորդներ ունիս» (հմբ 15): Վերը ակնարկուեցաւ Նիկողայոսի եւ անոր աղանդին: Կը թուի թէ Նիկողայոս եւ իրեն համախոհները հալածանքներու ենթակայ քրիստոնէական համայնքներուն խորհուրդ կու տային յանձն առնել կայսերական պաշտամունքը եւ կուռքերուն զոհուած միսերէն ճաշակելը, առանց ուրանալու Քրիստոսը: Այլ խօսքով, կը փորձէին Քրիստոսը հաշտեցնել Հռոմի հետ, քրիստոնէութիւնը հաշտեցնել հեթանոսութեան հետ, ինչ որ աներեւակայելի եւ անկարելի էր ճշմարիտ քրիստոնէական հայեացքով (հմմտ Ա. Կր 10.20-21: Բ. Կր 6.14-16): Հաշտեցման

նման փորձ մը եթէ հաւատարմութիւն պիտի նշանակէր կայսրին, եւ կեանք՝ մահուան վտանգին ենթակայ հաւատացեալներուն, բայց մեծագոյն անհաւատարմութիւն պիտի նշանակէր Աստուծոյ դէմ, եւ մահ՝ Աստուծոյ աչքին:

«Արդ, ապաշխարէ՛, ապա թէ ոչ՝ շուտով պիտի գամ եւ բերանէս ելլող սուրովը անոնց դէմ պիտի պատերազմիմ» (հմր 16): Եթէ հեթանոսութեան հետ լեզու գտնելու հնարքը կեանքի պատճառ կրնայ ըլլալ այս աշխարհին համար, բայց մահ կը նշանակէ Աստուծոյ համար. մարմինը կը փրկուի, բայց հոգին կը մեռնի: Ապաշխարութեան կոչը սպառնական շեշտով զօրեղ ազդարարութիւն մըն է այստեղ. ազդարարութիւն մը՝ որ ուրիշ բառերով արտայայտուած կը գտնենք Աւետարանին մէջ. «Մի՛ վախնաք անոնցմէ, որոնք մարմինը կը սպաննեն եւ սակայն հոգին չեն կրնար սպաննել: Բայց դուք վախցէք մանաւանդ անկէ, որ կրնայ թէ՛ հոգին եւ թէ՛ մարմինը կորուստի մատնել դժոխքին մէջ» (Մտ 10.28): Եթէ նամակին սկիզբը Քրիստոս ինքզինք կը ներկայացնէ իբրեւ «Ան՝ որ սրուած երկսայրի սուրը ունի», ատիկա զուր տեղը չէ. սուրը պատրաստ է բարկութեամբ դատելու եւ պատժելու Աստուծոյ աչքին չար գործողները (հմմտ Հո 13.4):

«Ան որ ականջ ունի՝ թող լսէ, թէ Հոգին ի՛նչ կ'ըսէ եկեղեցիներուն.- Ով որ յաղթանակէ՝ անոր ճաշակել պիտի տամ պահուած մանանայէն» (հմր 17): Պերգամոնի եկեղեցիին մէջ՝ Բաղասամի օրինակին հետեւորդները երկրաւոր եւ կուռքերուն զոհուած անմաքուր ուտելիք կ'ընծայէին՝ աշխարհին հետ իրենց կապն ու միութիւնը պահելու սիրոյն: Քրիստոս իրեն հաւատարիմ մնացողներուն եւ այս մեծ փորձութեան մէջ անտեղիտալի մնացողներուն ու յաղթողներուն կը խոստանայ «պահուած մանանան», «երկինքէն հացը» կամ «հրեշտակներու հացը» (հմմտ Սղ 78.24-25), որ «Կեանքի Հաց»ն է, նոյնինքն Քրիստոսի Մարմինն ու Արիւնն է (հմմտ Յհ 6.31-35 եւ 48-51), եւ Քրիստոսի հետ սերտ եւ ամբողջական միութեան

խորհրդանիշն է այստեղ եւ յաւիտենական կեանքի խոստումը (հմմտ Յհ 6.58): Այս Մանանան Քրիստոս միշտ կու տայ եւ պիտի տայ իրեններուն, բայց անիկա «պահուած» կամ ծածուկ է դուրսիներէն, որոնց իրաւունք տրուած չէ ճաշակելու անկէ (հմմտ Եբր 13.10):

«Ինչպէս նաեւ պիտի տամ մաքուր գիրքը, ուր գրուած է նոր անուն մը, որ բացի ստացողէն՝ ո՛չ ոք գիտէ» (հմր 17): «Մաքուր գիրքը», Յուն.ը «ճերմակ քար մը»: Թէ ի՛նչ է այս «ճերմակ քար»ին նշանակութիւնը՝ որոշ չէ: Ոմանք զայն կը բացատրեն հեթանոս աշխարհին մէջ ծանօթ սովորութեամբ մը, որով մարդիկ իրենց վիզերէն կիսաթանկագին քարեր կը կախէին՝ վրան արձանագրուած մոգական անունով մը, որ իբրեւ թէ զիրենք կը պաշտպանէր վտանգներէն ու նեղութիւններէն: Այս իմաստով առնուած, Քրիստոսի խօսքը կը հասկցուի իբրեւ խոստում մը՝ աստուածային ամբողջական պաշտպանութեան: Հեթանոսական կուրքերը եւ անոնց անունները ոեւէ պաշտպանութիւն չեն կրնար տալ. բայց ես, իբրեւ Տէրը ամբողջ տիեզերքին, ձեզի պիտի տամ իսկական քար մը՝ նոր եւ աշխարհին անծանօթ անունով մը, որուն ապաւինողը իսկական պաշտպանութիւնը եւ ապահովութիւնը պիտի ունենայ:

Ուրիշներ զայն կը բացատրեն ուրիշ սովորութեամբ մը, որով սերտ մտերմութեամբ իրարու կապուած անձեր կը կրէին քարեր, կամ քարի մը կիսուած մէկ բաժինը, որոնց վրայ գրուած անունը կը կարդացուէր միայն՝ երկու բաժինները իրարու քով բերելու պարագային, ասով ճանչնալու համար իրար կամ ստուգելու համար իրարու ինքնութիւնը: Այս պարագային՝ անոր վրայ գրուած անունը միայն տուողն ու ստացողը կը գիտնային: Այստեղ անունը վստահաբար Քրիստոսի անունն է, կամ թերեւս՝ «քրիստոնէայ» անունը, նշելու համար թէ ստացողը Քրիստոսի՝ կը պատկանի:

Բայց անոր մէջ կարելի է տեսնել նաեւ պարզապէս նոր կեանքի մը խոստումը: Այս աշխարհի համար իր կեանքը

կորսնցնողը Աստուծոյ քով նոր կեանք մը պիտի գտնէ՝ սրբութեամբ ու փառքով յատկանշուող (=ճերմակ), եւ անպատում երանութիւններով լեցուն, որովհետեւ «Աստուած զինք սիրողներուն համար պատրաստեց այնպիսի փառք մը, որ ոեւէ աչք չէ տեսած, ոեւէ ականջ չէ լսած, եւ ոեւէ մէկուն միտքէն իսկ չէ անցած» (Ես 64.4: Հմմտ Ա Կր 2.9):

ՆԱՄՍԿ ԹԻԱՏԻՐԻ ԵԿԵՂԵՑԻԻՆ (2.18-29)

Թիատիրը, այժմու անունով Աքսիհար, Փոքր Ասիայի Լիդիա նահանգին մէկ քաղաքն էր, Միսիա նահանգին սահմանակից, հաստատուած Գայլ (Յուն. Լիքոս) գետին վրայ: Հին քաղաք մը, որ յետոյ Մակեդոնիայէն եկած գաղթականներով բնակուած զինուորական կեդրոն մը դարձաւ Սելեւկոս Ա. թագաւորին կողմէ, Ք.Ա. 281-ին: Ք.Ա. 129 թ. ինկաւ Հռոմէական իշխանութեան տակ: Վաճառականական աշխոյժ կեդրոն մըն էր, նշանաւոր իր ծիրանեգոյն ներկով:

«Այսպէ՛ս կ'ըսէ Աստուծոյ Որդին, որուն աչքերը կրակի բոցի պէս են, եւ ոտքերը՝ հրաշէկ անագապղինձի նման» (հմր 18): Տե՛ս 1.14-15 եւ բացատրութիւնը: Բայց մինչ առաջին գլխուն մէջ այս բացատրութեամբ կը ներկայացուէր Քրիստոս՝ իբրեւ «մարդու Որդիին նմանող մէկը», այստեղ ինքզինք կը ներկայացնէ իբրեւ Աստուծոյ Որդին, որուն աչքերը ամենաթափանց են եւ բոլորը լուսաւորող, եւ որուն ոտքերը, այս աշխարհին վրայ դրուած, հրաշէկ են, դատաստանի բոցով վառած են արդէն եւ պատրաստ են գալու եւ դատելու ամբարշտութիւնն ու անօրէնութիւնները:

Անդրեաս Կեսարացի այս բացատրութեան մէջ եւս կը տեսնէ Քրիստոսի աստուածութեան ակնարկութիւն մը, որովհետեւ հրաշէկ ոտքերը կ'առնէ իբրեւ խորհրդանիշ անոր աշխարհ գալուն եւ մարդեղութեան խորհուրդին, որուն մէջ

հողեղեն մարմինը միացաւ աստուածային բնութեան կրակին եւ դարձաւ հրաշէկ:

«Գիտեմ գործերդ, սէրդ, հաւատքդ եւ համբերութեամբ կատարած ծառայութիւնդ, եւ գիտեմ որ վերջին գործերդ նախկիններէն աւելի են» (հմր 19): Ի՛նչ գեղեցիկ դրուատական է որ կու տայ Յիսուս Թիասիրի եկեղեցիին, որ պահած է եւ ունի քրիստոնէական երեք կարեւորագոյն առաքինութիւնները՝ հաւատքը, յոյսը (=համբերութիւն) եւ սէրը (հմմտ Ա. Կր 13.13), որոնցմէ մեծագոյնը՝ սէրը նախադաս յիշուած է: Բայց ասոնք միայն տեսական առաքինութիւններ չեն, որոնք կարելի է միտքին կամ հոգիին մէջ ամբարել. այլ՝ կ'արտայայտուին կեանքով, որ իրենց լրացուցիչն է: Հաւատքին, յոյսին եւ սիրոյն ապացոյցը, անոնց կենդանութեան նշանը գործերն են, եւ մասնաւորաբար՝ ուրիշներուն ընծայուած ծառայութիւնը (հմմտ Յկ 2.17-26):

«Բայց քեզի դէմ դժգոհութիւն ունիմ, քանի կը հանդուրժես Եզաբէլին, կնոջ մը՝ որ ինքզինք մարգարէուհի կը նկատէ: Անիկա իմ ծառաներս կը մոլորեցնէ, անոնց պոռնկութիւն ընել եւ կուռքերուն զոհուած միս ուտել սորվեցնելով» (հմր 20): Եթէ մեծամասնութեան համար գովասանք ունի, բայց նաեւ դժգոհութիւն ունի ոմանց դէմ:

Թիասիրի եկեղեցիին դէմ դժգոհութիւնը նման է Պերգամոնի դէմ արտայայտուած դժգոհութեան: «Եզաբէլ» անունը, որ այստեղ վստահաբար խորհրդանշական անուն մըն է, առնուած է Թագաւորութեանց գիրքերէն (հմմտ Գ. Թգ 16.31, 19.1-2: Դ. Թգ 9.22 եւ 30), ուր Եզաբէլ թագուհին, Փիւնիկէի Սիդոն քաղաքէն Աքաաբ թագաւորին հարս եկած զօրեղ անհատականութիւն մը, կը ներկայանայ իբրեւ հեթանոսական պաշտամունքներու եւ ապականած բարոյականութեան հովանաւոր եւ ճշմարիտ աստուածպաշտութեան մեծագոյն վտանգ մը: Այդ անունով հաւանաբար կ'ակնարկուի «Նիկողայոսի հետեւորդներու» աղանդին մէջ հեղինակութիւն վայելող կնոջ մը, «սուտ

առաքելի»ի մը (հմմտ 2.2), ինքզինք «մարգարէութի» նկատող եւ որպէս այդպիսին ներկայացող անձի մը, որուն ինքնութիւնը անճանօթ է մեզի: Բայց անոր գործերը ծանօթ են եւ կը ձաղկուին:

«Պոռնկութիւն» բառը գոյգ իմաստներով կը ներկայանայ: Առաջին հերթին մարմնաւոր իմաստ մը չունի այստեղ, որովհետեւ առհասարակ Աստուածաշունչին մէջ այդ եզրով կը հասկցուի Աստուծոյ հանդէպ անհաւատարմութիւնը, հաւատքէն շեղումը կամ անկումը եւ օտար աստուածներու պաշտամունքը (հմմտ Ես 1.21, 57.3-5: Եր 2.20, 3.8-9: Եզ 16.15: Ովս 3.1 եւլն): Բայց նոյն բացատրութեան կողքին անոր բառական իմաստն ալ ներկայ է, որովհետեւ, ինչպէս Աստուածաշունչը եւ կրօններու պատմութիւնը կամ ուսումնասիրութիւնները ցոյց կու տան, պոռնկութիւնը այդ պաշտամունքներուն ընկերացող սովորական երեւոյթ մըն էր յաճախ: Եւ թէպէտ վստահ չենք՝ եկեղեցւոյ անդամները մինչեւ հոն հասան թէ ոչ, բայց կարելի է ենթադրել, որ հաւատքէն անկումը բնականօրէն կրնայ առաջնորդել բարոյական թոյլ հասկացողութեանց եւ ամէն տեսակի արարքներու:

«Ես իրեն ժամանակ տուի որ ապաշխարէ իր պոռնկութեան համար, բայց չապաշխարեց: Ուստի ահա զինք հնոց պիտի նետեմ եւ իր գործակիցները, որոնց հետ շնութիւն ըրաւ, մեծամեծ նեղութիւններու մէջ պիտի ձգեմ՝ եթէ չապաշխարեն իրենց կատարած գործերուն համար» (հմր 21-22): Քրիստոս կը յիշեցնէ իր աստուածային անսահման ներողամտութիւնը, որ կը համբերէ մարդոց չար գործերուն, սպասելով որ անոնք ուղղուին եւ փրկուին: Այդպէս ալ, Եզաբէլին ապաշխարութեան ժամանակ տրուեցաւ, բայց չապաշխարեց: Ուստի կը մնայ իր ահեղ դատապարտութիւնը: «Հնոց պիտի նետեմ», յուն.ը «անկողնի պիտի գամեմ»: Ո՛ր ձեռով ալ առնենք, բացատրութիւնը ցոյց կու տայ, թէ Եզաբէլի համար վճիռը տրուած է արդէն. անոր

կը սպասէ «հնոց»ը, որ ուրիշ մէկ անուանումն է «կրակէ լիճ»ին (տե՛ս 20.10 եւ 14-15), կամ թերեւս ահաւոր պատիժ մը նախ ներկային մէջ, ուր անիկա անկողինին պիտի գամուի:

Մինչ խիստ ու ծանր է դատապարտութիւնը Եզրէլի դէմ, յարաբերաբար աւելի մեղմ է արտայայտութիւնը անոր «գործակիցներ»ուն հանդէպ, որոնք հաւանաբար աղանդին ազդեցութեան տակ են, բայց ամբողջական հետեւորդներ չեն, ուստի յոյս կայ որ թօթափեն այդ ազդեցութիւնները եւ դառնան ճշմարտութեան, Աստուծոյ հաւատարիմ ընթացքին:

«Չարաչար պիտի սպաննեմ իր որդիները, եւ բոլոր եկեղեցիները պիտի գիտնան՝ թէ ե՛ս եմ որ կը ճանչնամ մարդոց ցանկութիւններն ու մտածումները» (հմբ 23): Մինչ գործակիցները ուղղակի հետեւորդներ չեն, ըսինք, «իր որդիները» բացատրութեամբ կ'ակնարկէ Եզրէլի հետեւորդներուն կամ իր օրինակին հետեւող ուրիշներու: Ասոնց ալ պատիժը ծանր պիտի ըլլայ եւ այդ պատիժը միայն Աստուծոյ ապագայ դատաստանին չի վերաբերիր, այլ վստահաբար նաեւ անմիջական ներկային, որովհետեւ Քրիստոս կ'ուզէ որ այդ պատիժը ազդարարութիւն մը եւ զգաստացուցիչ օրինակ մը ըլլայ միւս եկեղեցիներուն:

«Եւ իւրաքանչիւրին կը հատուցանեմ իր գործերուն համաձայն» (հմբ 23): Աստուածային հատուցումները միշտ մարդոց գործերուն համաձայն են (տե՛ս Մտ 16.27: Հո 2.6: Հմմտ Յտ 18.6, 20.12-13, 22.12): Հետեւաբար կարելի չէ՛ ըսել՝ թէ մարդոց գործերը բնաւ ալ կարելոր չեն: Այդպիսի ըմբռնում մը հակառակ է Աստուածաշունչի բոլոր ուսուցումներուն: Ճիշդ է որ մեր փրկութիւնը ամբողջութեամբ Աստուծոյ շնորհքն է, ձրի պարգեւ մըն է մեզի տրուած, բայց անգամ մը Քրիստոսի միանալէ, իր Մարմինին մաս եւ անդամ դառնալէ ետք մեր գործերը կարելոր են, որովհետեւ պէտք է բնական պտուղները ըլլան այդ նոր կապին, Քրիստոսի հետ մեր անմիջական յարաբերութեան: «Լաւ ծառը լաւ պտուղ կու տայ», կ'ըսէ Քրիստոս, «եւ գէշ ծառը՝ գէշ պտուղ» (Մտ 7.17):

Եթէ մենք էապէս փոխուած ենք, մեր գործերը միայն այդ դրական փոփոխութեան արտացոլացումը պէտք է ըլլան. եթէ բարին մեր մէջ առած ենք՝ մեր գործերը այդ բարին բնական դրսեւումը կ'ըլլան, եւ աստուածային հատուցումն ալ միշտ կը հետեւի անոր:

«Գալով Թիատիրի մէջ գտնուող մնացեալ հաւատացեալներուդ, որ չհետեւեցաք այդ վարդապետութեան եւ չճանչցաք ինչ որ կը կոչեն "Սատանային ծածուկ խորհուրդները", ձեզի կ'ըսեմ որ ուրիշ բեռ պիտի չդնեմ ձեր վրայ, սակայն ինչ որ ունիք՝ հաստատուն պահեցէք, մինչեւ որ ես գամ» (հմբ 24-25): Գնաստիկեան աղանդի որոշ ներկայացուցիչներ կ'ուսուցանէին, որ Սատանային յաղթելու համար պէտք է անոր միջնաբերդը մտնել, այսինքն՝ անոր ծածուկ խորհուրդները ճանչնալ, որ կարելի է միայն՝ չարին խորունկ փորձառութեամբ, գիտակցաբար ու կամաւորաբար խորանալով մեղքին մէջ: Կրնայ ըլլալ, որ նման ուսուցումի մը եւ անոր հետեւող անառակ վարքի մը կ'ակնարկուի, որ իր կարգին շատ նման է Նիկողայոսեանց աղանդին որդեգրած ուղղութեան (յիշենք, որ անոնց ուսուցումներն ալ «գաղտնի» բնոյթ ունենալ կը թուին): Ամէն պարագայի այս բացատրութեան տակ վերեւ յիշուած Եզաբէլի վարդապետութիւնը եւ ջատագոված լոյծ բարոյականն է որ Քրիստոս նկատի ունի, եւ թերեւս երեքն ալ պարզապէս նոյն բաներն են:

«Ով որ յաղթանակէ եւ շարունակէ կատարել ինչ որ ես կ'ուզեմ, անոր իշխանութիւն պիտի տամ ազգերուն վրայ, այնպէս՝ ինչպէս որ ես ալ իմ իշխանութիւնս ստացայ իմ Հօրմէս: Անիկա պիտի հովուէ երկաթէ մականով, եւ զանոնք պիտի փշրէ կաւէ ամաններու պէս» (հմբ 26-28): Յաղթանակողը Աստուծոյ կամքը կատարողն է, եւ պիտի շարունակէ այդ կամքը իշխանաբար իրագործել նաեւ շրջապատին մէջ, աշխարհի վրայ: Իսկ այնպիսիին Քրիստոս

աւելի՛ իշխանութիւն պիտի տայ, պիտի ըսէ՝ «Ապրի՛ս, բարի՛ ծառայ, քանի այդ փոքրիկ բանին մէջ հաւատարիմ գտնուեցար՝ ահա քեզ տասը քաղաքներու վրայ կառավարիչ կը նշանակեմ» (Ղկ 19.17): Այդ իշխանութիւնը թագաւորական փառքն էր, որ իր աշակերտներուն խոստացաւ (տե՛ս Մտ 19.28 եւ 25.31: Հմմտ Յյտ 3.21): Իշխանութիւն մը՝ զօրաւոր, որուն արտայայտութիւնն է «երկաթեայ մական»ը (հմմտ Սղ 2.8-9 [LXX]):

Քրիստոս զայն կը համեմատէ Հօրմէն իր ստացած իշխանութեան հետ: Այս համեմատութիւնը աղանդամիտ մարդոց միտքին մէջ սխալ կը թարգմանուի: Բայց այստեղ «ստացայ» բայը չի՛ նշանակեր թէ Քրիստոս այդ իշխանութիւնը չունէր նախապէս: Որոշ է, որ Քրիստոս կը խօսի ո՛չ թէ իր աստուածային ծագման կամ նախագոյութեան մասին՝ թէ Հօրմէն ստացաւ բան մը որ նախապէս չունէր, այլ՝ կը խօսի իր մարդեղութեան համար, երբ երկրի վրայ մեզի ներկայացաւ՝ կամաւորապէս իր աստուածային փառքէն մերկացած վիճակով, Հօրը ամբողջական հնազանդութեան մէջ (հմմտ Փլպ 2.7-8), թեպէտ իր աստուածային էութեան մէջ յաւիտենապէս եւ միշտ ունէր ամբողջական փառքը (տե՛ս Յհ 17.5): Չենք մոռնար անշուշտ, որ նոյնիսկ երկրի վրայ Քրիստոս կարգ մը առիթներով ցոյց տուաւ իր աստուածային բացարձակ իշխանութիւնը (տե՛ս Մտ 11.27, 28.18: Մր 2.10: Յհ 3.35-36, 5.22, 13.3, 10.18, 17.2) , ինչպէս Նոր Կտակարանը այլապէս ալ կը շեշտէ ամենուրեք (հմմտ Գրծ 2.36: Հո 14.9: Ա. Կր 15.25-27: Եփ 1.1-22: Փլպ 2.9-10: Եբր 1.2):

«Անոր պիտի տամ առաւօտեան աստղը» (հմր 28): Այս «առաւօտեան պայծառ աստղը» նոյնինքն Քրիստոս է (տե՛ս 22.16), որ ինքզինք պիտի տայ յաղթողին՝ իբրեւ գերագոյն նուէր:

Կայ, սակայն, երկրորդ հասկացողութիւն մըն ալ: Առաւօտեան աստղը կրնայ ակնարկութիւն մը ըլլալ Սատանային, որ Աստուածաշունչին մէջ ծանօթ է նաեւ

Արուսեակ (=առաւօտեան աստղ) անունով (տե՛ս Ես 14.12): Նոյն անունին այս ամողջապէս ներհակ իմաստով բացատրութիւնը մեզ պէտք չէ զարմացնէ, որովհետեւ մէկէ աւելի օրինակներ ունինք, որոնց մէջ կը տեսնենք՝ թէ Սատանան կը ներկայանայ Քրիստոսի իսկ տրուած անուններով: Այսպէս, երկրորդ օրինակ մըն է «Առիժ» անուանումը, որ թէ՛ Քրիստոսին տրուած է իբրեւ տիտղոս (տե՛ս 5.5: Հմմտ Ծն 49.8-10 եւլն), եւ թէ՛ Սատանային (հմմտ Ա.Պտ 5.8): Հարկաւ կը յիշենք ինչ որ Պօղոս առաքեալ սուտ առաքեալներու կապակցութեամբ կ'ըսէ. «Սատանան ինքն ալ լուսաւոր հրեշտակի կերպարանքով կը ներկայանայ» (Բ. Կր 11.14): Եւ ասիկա մեզի ցոյց կու տայ անոր նկարագիրը եւ ստութեան հայր ըլլալը (Յհ 8.44), որով կը փորձէ Քրիստոսի կեղծ նմանութիւնը իր վրայ առնել՝ ճշմարիտ հաւատացեալները մոլորեցնելու համար (տե՛ս նաեւ 6.2-ին եւ 13.11-ին բացատրութիւնները):

Այս երկրորդ բացատրութիւնը որդեգրելու պարագային, Քրիստոսի խոստումը կը հասկցուի իբրեւ կատարեալ վստահութիւն մը կամ ապահովութիւն մը, որ կը տրուի հաւատացեալներուն, թէ իրենք պէտք չունին սարսափելու Սատանայէն, որուն վրայ Քրիստոս իրենց փոխարէն յաղթանակ տարաւ եւ իր յաղթական երթին մասնակից կը դարձնէ մեզ, տալով վստահութիւնը՝ որ եթէ հաւատքի իմաստութեամբ ապրինք, բարի գործերով առատանանք, եւ չար գործերէն հեռու մնալով անմեղադրելի ըլլանք՝ Աստուած շուտով մեր ոտքերուն տակ պիտի խորտակէ Սատանան (Հո 16.20):

ՆԱՄԱԿ ՍԱՐԴԻԿԷԻ ԵԿԵՂԵՑԻՆ (3.1-6)

Սարդիկէն անցեալին Լիդիա նահանգին գեղեցիկ մայրաքաղաքն էր, քրիստոնէական առաջին դարուն սկիզբը՝

17 թ. երկրաշարժով մը ավերուած եւ կարճ ժամանակ մը ետք վերաշինուած: Վաճառականական մեծ ճամբու վրայ, հարուստ քաղաք մը եղած է, եւ ունեցած իր թատրոնն ու կրկէսը, ինչպէս նաեւ Դեմետր չաստուծոյն նուիրուած տաճարը Ք.Ա. 6րդ դարէն: Իսկ բնակիչները ճանչցուած էին իրենց անատակութեամբ: Այժմ անոր ակերակներուն վրայ գիւղ մը միայն կայ, Սարդ-Մուսթաֆա անունով:

«Այսպէ՛ս կ'ըսէ ան՝ որ Աստուծոյ եօթը հոգիները եւ եօթը աստղերը ունի» (հմր 1): Տե՛ս 1.4 եւ 1.16 եւ բացատրութիւնը: Այս տիտղոսը շատ կարեւոր ու խօսուն է Քրիստոսի համար:

2.7-ին մէջ մատնանշեցինք, որ Սուրբ Հոգին շատ յատկանշականօրէն կը կոչուի նաեւ «Քրիստոսի Հոգին» (Հո 8.9: Փլպ 1.19: Ա.Պտ 1.10-11): Նոր Կտակարանի մէջ ուրիշ տեղեր անիկա կը կոչուի նաեւ «Որդիին Հոգին» (Գղ 4.6), կամ «Յիսուսի Հոգին» (Գրծ 16.7: Փլպ 1.19), կամ «Տիրոջ Հոգին» (Գրծ 5.9 Բ.Կր 3.17-18: Հմմտ Դտ 3.10, 6.34, 11.29: Առ 6.16: Ես 11.2, 34.16, 63.14: Եզ 11.5: Մք 3.8 եւլն), որոնք բոլորն ալ նոյն բանը կ'արտայայտեն: Արդ, մենք գիտենք, որ Աստուածաշունչը առհասարակ Սուրբ Հոգին կը ճանչնայ իբրեւ «Աստուծոյ Հոգին» (տե՛ս, օրինակ, Ծն 1.2: Ելք 31.3: Թւ 24.2: Յոբ 27.3, 33.4 եւլն: Մտ 3.16, 12.28: Հո 8.9 եւ 14, 15.19: Ա.Կր 2.10-11 եւլն), կամ «Հօրը Հոգին» (Մտ 10.20: Գրծ 4.8, 6.10: Բ.Տմ 4.18): Ի՞նչ ցոյց կու տան այս բոլորը: Այս բացատրութիւնները ցոյց կու տան, թէ Սուրբ Հոգին ո՛չ միայն Հօր Աստուծոյ Հոգին է, այլ նաեւ Որդիին, այսինքն Քրիստոսի Հոգին, եւ Հօրմէն ու Որդիէն անբաժան կը ներկայանայ, գործունէութեան կատարեալ նոյնութեամբ մը, որ ինքնին ցոյց կու տայ անոնց էութեան նոյնութիւնը եւ փոխադարձ կապը, որ աւելի ճիշդ՝ փոխադարձ պատկանելիութիւն է: Ատիկա անատարկելիօրէն մեզի կ'ըսէ, թէ Որդին եւ Սուրբ Հոգին իրենք Հօրը հետ միասին նոյն եւ մէկ Աստուածութիւնը կը ներկայացնեն, եւ թէ իր աստուածային բնութեան մէջ Հոգին Որդիէն անբաժան է: Այս սերտ, բնութենական միութիւնն է,

որ առաջին հերթին պատկերաւոր ձեւով կ'արտայայտուի Քրիստոսի այս տիտղոսին առաջին բաժինին մէջ:

Երկրորդ, Եկեղեցին Աստուծոյ ծնունդը եւ Աստուծոյ տաճարն է, եւ Սուրբ Հոգիին ներգործութեան վայրը: Հոն է որ Սուրբ Հոգին կը գործէ, պարգեւելով իր շնորհքները իրենց ամբողջութեանը մէջ: Իսկ Սուրբ Հոգիին բաշխումը կամ պարգեւումը Քրիստոսի ձեռքն է, ինչպէս Քրիստոսի ձեռքին մէջ են բոլոր եկեղեցիները:

Տիտղոսին երկրորդ բաժինը «եօթը հրեշտակներ» բացատրութեամբ կ'ակնարկէ եօթը եկեղեցիներու առաջնորդներուն, եւ անգամ մը եւս կ'արտայայտէ այն՝ ինչ որ ըսինք արդէն, թէ Քրիստոս ինք իր Եկեղեցիին կը ներկայանայ իբրեւ Քահանայապետը եւ Թագաւորն ու Դատաւորը, որ եկեղեցիներուն բացարձակ Տէրն է, իշխանութիւն ունի հաստատելու կամ իրենց տեղէն շարժելու, այսինքն պահելու կամ ջնջելու գանձք:

Որոշապէս վերոյիշեալ տիտղոսը առնչուած է նամակին բովանդակութեան, որ Սարդիկէի եկեղեցիին կը ներկայանայ շատ խիստ յանդիմանութեամբ եւ ազդարարութեամբ մը: Անիկա իր հաւատքին մէջ մեռած է, որովհետեւ պարպուած է Աստուծոյ եւ Քրիստոսի Հոգիէն: Սուրբ Հոգին ինքն է Եկեղեցոյ կեանքն ու կենդանութիւնը, իսկ անոր բացակայութիւնը մահ է ու մեռելութիւն, այն վիճակը՝ որուն մէջ է Սարդիկէի եկեղեցին: Եւ եթէ չապաշխարէ՝ Քրիստոս անակնկալօրէն կու գայ իր ալ ճրագարանը իր տեղէն շարժելու:

«Գիտեմ քու գործերդ, եւ գիտեմ՝ որ միայն անունով ողջ ես, բայց իրականութեան մէջ մեռած ես» (հմր 1): Աստուած գիտէ մեր բոլոր գործերը: Քրիստոս լաւապէս կը ճանչնայ եկեղեցիները եւ անոնց գործերը, որոնք կրնան դրական ու գովելի ըլլալ, կամ ժխտական եւ դատապարտելի: Սարդիկէի եկեղեցիին ուղղուած գովասանք չկայ, այլ միայն դժգոհութիւն: «Միայն անունով ողջ ես»: Քրիստոսի անունը կը

կրէ, աշխարհին կը ներկայանայ իբրեւ Քրիստոսի հետեւորդ եւ անով նոր կեանք ու կենդանութիւն ստացած, բայց ատիկա երեւոյթ է միայն. իրականին մէջ ինք մեռած է: Ինչ է մեռելութիւնը, եթէ ոչ՝ հաւատքի արտայայտութիւն եղող գործերու պակասը: «Ինչպէս մարմինը առանց հոգիի մեռած է, այնպէս ալ հաւատքը առանց գործերու մեռած է» (Յկ 3.26): Քրիստոսի հանդէպ իր հաւատքը մեռած է, քանի համապատասխան գործերով չ'արտայայտուիր. մինչդէռ հաւատքին կենդանութեան նշանը գործերն են:

«Արթուն եղիր եւ զօրացո՛ւր անդամներդ, նախքան անոնց մեռնիլը» (հմր 2): Առաջին ընդհանուր դժգոհութենէն ետք այժմ խօսքը կը մասնաւորէ, ըսելու համար՝ թէ «մեռած» մեծամասնութեան կողքին դեռ հաւատքով կենդանի փոքրամասնութիւն մը կայ, որ նոյն մեռելութեան մէջ կրնայ սուզուիլ, եթէ եկեղեցւոյ առաջնորդը չ'արթննայ եւ հոգեւոր արթնութեան ճիգ չթափէ:

«Որովհետեւ կը տեսնեմ որ գործերդ կատարեալ չեն Աստուծոյ աչքին» (հմր 2): Եկեղեցին հաւատքի այն համայնքն է, որ առաջին հերթին լսողն է Աստուծոյ կոչին եւ անոր Օրէնքին, պատգամներուն ու խոստումներուն: Լսելուն կը յաջորդէ երկրորդ քայլը, որ ընդունիլն է: Իսրայէլ լսեց, չհաւատաց (հմմտ Հո 10. 19-21): Եկեղեցին լսեց եւ հաւատաց, այսինքն ընդունեց: Հաւատաց եւ ընդունեց մասնաւորաբար Քրիստոսի խօսքերը, պատուիրաններն ու խոստումները, որոնք իրեն փոխանցուեցան կամ աւանդուեցան բերանացի կերպով: Պօղոս առաքեալ զայն կը կոչէ «աւանդ» (հմմտ Ա. Տմ 6.20: Բ.Տմ 1.14): Եկեղեցին այդ աւանդը, այսինքն՝ հաւատքի ճշմարտութիւնները ստացաւ եւ ամուր պահեց, մինչեւ անոնց գրի առնուիլը եւ նոյնիսկ անկէ ետք ալ, որովհետեւ ամէն ինչ գրի չառնուեցաւ. շատ բան մնաց բերանացի, եւ կազմեց Եկեղեցւոյ աւանդութիւնը՝ առաքեալներէն ժառանգուած:

Եկեղեցին պարտականութիւն ունի իրեն տրուած աւանդը պահելու, ինչպէս նոյն պարտաւորութիւնը ունի

իւրաքանչիւր քրիստոնէայ: Պահել՝ չի՝ նշանակեր զայն թանգարանի մէջ դնել կամ Յիսուսի քանքարներու առակին անպէտ ու ծոյլ ծառային պէս ծրարել եւ հողին մէջ թաղել (Մտ 25.24-25), այլ խօսքով, չի՝ նշանակեր՝ բարեխիղճ կերպով պահպանել զայն, առանց սակայն կեանքին խառնելու: Այլ՝ կը նշանակէ զայն մեր մտքին ու սրտին մէջ առնել եւ անով ղեկավարուիլ եւ առաջնորդուիլ: Կեանքի չվերածուած պատուիրանները մեռած են, անիմաստ եւ անօգուտ. մինչդեռ կեանքի վերածուելու պարագային կը դառնան հաւատքի կենսունակութիւն եւ կեանքի իմաստալից տնտեսութիւն մը, Աստուծոյ եւ մարդոց ծառայութեան դրուած: Իսկ այդպիսի կեանք մը դէպի Աստուած դարձած կեանքն է:

Արդ, ի՞նչ է «ապաշխարութիւն»ը, եթէ ոչ՝ նոյնինքն դէպի Աստուած դարձած կեանքը, չարէն հրաժարումը եւ ամբողջական հետեւորդութիւն մը բարիին. կեանք մը՝ Քրիստոսի անապական արիւնովը գնուած, վերանորոգուած ու սրբուած, Հօր Աստուծոյ ընծայուած, եւ Սուրբ Հոգիի առաջնորդութեան տակ դրուած, եւ մնայուն հոգեւոր արթնութեամբ յատկանշուած: Այդպիսին էր Սարգիկէի եկեղեցին, երբ Քրիստոսով քայլել սկսաւ. հաւատարիմ էր իր լսած Աւետարանին եւ հոգեւին փարած՝ իր ընդունած ճշմարիտ աւանդին: Բայց հիմա մեռելութեան եզրին է արդէն, եթէ ամբողջական ետդարձ մը չկատարէ մահուան ճամբայէն, ուր զինք կը տանի աշխարհը իր հրապոյրներով եւ իր հրամցուցած թմրութեան գինիով:

«Եթէ արթուն չմնաս՝ գողի պէս պիտի գամ եւ ո՛ր մէկ ժամուն քեզի գալս պիտի չիմանաս» (հմբ 3): Սարգիկէն կորսնցուցեր է հոգեւոր կեանքի մէջ այս արթնութիւնը: Ուստի Քրիստոս կ'ազդարարէ եւ կը յիշեցնէ Աստուծոյ թէ՛ քաղցրութիւնը եւ թէ՛ կարծրութիւնը, ինչ որ Պօղոս առաքեալ պիտի ըսէր ուրիշ բառերով. «Տե՛ս թէ ո՛րքան բարի է Աստուած եւ խիստ՝ միաժամանակ: Խիստ է հաւատքի մէջ

կործանածներուն հանդէպ, եւ բարի՝ քեզի հանդէպ, պայմանաւ որ շարունակես անոր բարութեան արժանի մնալ» (Հո 11.22): Իսկ անոր բարութեան արժանի մնալ՝ կը նշանակէ միշտ արթուն մնալ եւ անոր կամքին համաձայն՝ ապրիլ արդարութեան, սրբութեան, սիրոյ, նուիրումի եւ ծառայութեան կեանք մը: Արարիչին հանդէպ բնական յարգանքը եւ Փրկիչին հանդէպ ինքնաբոլիս երախտագիտութիւնը միայն այդպիսի կեանք մը կրնան թելադրել, մինչդեռ ապականած, ինքնակեղրոն եւ անտարբեր կեանք մը արհամարհանք է Աստուծոյ հանդէպ: Ուստի քունով պէտք չէ տարուիլ, այլ՝ արթուն եւ պատրաստ հսկել, որովհետեւ Տիրոջ գալուստը անակնկալ պիտի ըլլայ, գողի մը գալուն պէս, որուն ո՛չ օրը եւ ո՛չ ժամը գիտենք (Մտ 24.42-43: Ա.Թս 5.2: Բ.Պտ 3.10):

Անսպասելի այս գալուստը միայն երկրորդ գալուստը չէ, հարկաւ: Ակնարկութիւնը կրնայ նաեւ վերաբերիլ մահուան, որ ռեւէ պահու կրնայ մարդու վրայ հասնիլ եւ զայն դնել անակնկալի դիմաց, մեզմէ առնելով մեզի տրուած պատեհութեան ժամանակը: Այն ատեն, եթէ պատրաստուած ենք այդ գալուստին, այլ խօսքով՝ եթէ պահած ենք մեզի տրուած հաւատքի եւ պատուիրաններու աւանդը եւ զայն արդիւնաւորած ենք մեր կեանքին մէջ, այդ գալուստը մեզի միայն հանգիստ կրնայ խոստանալ եւ մխիթարութիւն միայն կրնայ բերել մեր ներկայ տաժանալից կեանքէն ետքը. իսկ եթէ անպատրաստ կերպով դիմաւորենք այդ պահը, անիկա մեզ կը դնէ առաւել դատաստանի դիմաց:

«Բայց Սարդիկէի մէջ քիչ թիւով մարդիկ կան, որոնք իրենց հագուստները չաղտոտեցին. անոնք ինծի հետ պիտի շրջին ճերմակ հագուստներով, որովհետեւ արժանի են» (Խմբ 4): Բարեբախտաբար կան նաեւ սակաւաթիւ հաւատացեալներ, որոնք պահած են իրենց արթնութիւնը եւ իրենց անձերուն սրբութիւնը: Անոնք «իրենց հագուստները չաղտոտեցին», իսկ հագուստը նկարագիր կը խորհրդա-նշէ:

Նկարագրի այս անարատությունը ցուցանիշն է ճշմարիտ հաւատքին եւ անկեղծ բարեպաշտութեան: «Հօր Աստուծոյ համար անկեղծ եւ իսկական բարեպաշտութիւնը... աշխարհի մէջ ապրելով հանդերձ՝ ինքզինք անարատ պահելն է» (Յկ 1.27): Անոնք որոնք հալածանքներու կամ աշխարհէն եկող ամէն տեսակ նեղութիւններու ենթարկուելով հանդերձ նկարագրով մաքուր մնացին՝ «Ճերմակ հագուստ» պիտի ունենան, որ վկայութիւնն է իրենց արդարութեան եւ սրբութեան, իրենց ցուցաբերած առաքինութիւններուն եւ փրկուած ըլլալուն (հմմտ 3.18, 4.4, 6.11, 7.9 եւ 13- 19.14): Անոնք պիտի վայելեն բացառիկ առանձնաշնորհումը Քրիստոսի հետ ըլլալու յաւիտեան եւ անոր հետ շրջելու (տե՛ս 7.13-17, 14.1-5):

«Ով որ յաղթանակէ՝ այսպէս ճերմակ պիտի հագնի» (հմր 5): Չարին ու չարիքներուն դէմ մղուող պայքարին մէջ, հաւատքը պահող եւ համբերատարութիւն ու տոկուն առաքինութիւն ցուցաբերող անձերը պիտի ստանան «արդարութեան պսակը» (հմմտ Բ.Տմ 3), որուն խորհրդանիշն է ճերմակ հագնիլը: Բայց ճերմակը միայն արդարութեան, սրբութեան ու փրկութեան արտայայտիչ չէ, անիկա նաեւ խորհրդանիշ է փառաւորութեան կամ փառքի: Քրիստոսով յաղթանակողը Աստուծոյ փառքին հաղորդակից կը դառնայ, եւ երկինքի արքայութեան մէջ արեգակի պէս պիտի փայլի (Մտ 13.43):

Առաջին խոստումին անմիջապէս կը յաջորդէ երկրորդը. «Անոր անունը պիտի չջնջեմ կեանքի գիրքէն» (հմր 5): Այս բացատրութիւնը խորքին մէջ կը նշանակէ, թէ յաղթողը յաւիտենական կեանք պիտի ունենայ, որովհետեւ “կեանքի գիրք” հասկացողութիւնը անպայմանօրէն տոմարական հասկացողութիւն մը չէ, որուն մէջ մեր անունները տառացիօրէն կ’արձանագրուին: Ատիկա պարզապէս թելադրող տող մըն է, ըսելու համար՝ թէ մենք Աստուծոյ յիշողութեան մէջ դրոշմուած պիտի ըլլանք: Աստուած չի

մոռնար իրենները եւ երբեք պիտի չմոռնայ անոնք որոնք իրեն հաւատարիմ մնացած են եւ այդ հաւատարմութեան համար այս կեանքի մէջ ամէն տեսակի նեղութիւն յանձն առած: Աստուած անպայմանօրէն պիտի պահէ զանոնք եւ վարձատրէ, եւ անոնք Աստուծմէ անբաժան պիտի ըլլան: Բարի Հովին է որ կը խօսի, ըսելու համար՝ թէ ինք կը ճանչնայ իրենները եւ կը ճանչցուի անոնցմէ, եւ յաւիտենական կեանքը կու տայ անոնց (տե՛ս Յհ 10.14):

Իսկ երկրորդ խոստումին կը յաջորդէ երրորդը. «Եւ ես Հօրս եւ անոր հրեշտակներուն դիմաց զայն ինծի հետեւորդ պիտի դաւանիմ» (հմր 5): Այս խօսքերը առանձնաշնորհումին վրայ կու գան նոր առանձնաշնորհում մը տալու, որ Յովհաննէսի ժամանակակից քրիստոնէաներուն, ինչպէս բոլոր դարերու հաւատացեալներուն համար մեծագոյն մխիթարութիւնն ու քաջալերանքն են: Ասիկա կրկնութիւնն է նոյն այն խոստումին, որ Քրիստոս տուաւ իր աշակերտներուն եւ բոլոր անոնց, որոնք իրենց կեանքով զինք կը դաւանին. «Ով որ մարդոց առջեւ դաւանի թէ ինծի կը հետեւի, ես ալ զայն ինծի հետեւորդ պիտի դաւանիմ իմ Հօրս դիմաց, որ երկինքի մէջ է» (Մտ 10.32: Հմմտ Ղկ 9.26): Այս դաւանութիւնը, որ ուրիշ խօսքով Քրիստոսի վկայութիւնն է մեր մասին, իրեն հաւատացողներուն մասին, մեր դիմաց կը բանայ վերջին դատաստանի պատկերը, բայց ամբողջութեամբ հեռու անոր դատապարտողական նկարագրէն. ընդհակառակը, նոյնիսկ դատաստանի պատկերը հաճելի եւ գեղեցիկ կը դարձնէ մեր դիմաց, իբրեւ գերագոյն երանութեան, գերագոյն երջանկութեան եւ ուրախութեան այն պահը, երբ Աստուածորդին ի՛նքը Իր բարի վկայութիւնը պիտի տայ երկրի վրայ իրեն վկայութիւն տուողներուն մասին: Եւ եթէ մարդոց կողմէ գովասանքն ու դրուատիքը, այսինքն՝ մարդոց վկայութիւնը մեզի համար կարելոր են, եւ կեանքի մէջ ամէնքս ալ առաւել կամ նուազ կը փնտռենք ասիկա, (որքան ալ փախչինք երբեմն անոնցմէ),

որովհետեւ անոնք մեզի համար գոհունակութեան, մխիթարութեան, սրտապնդումի աղբիւր կ'ըլլան, ինչպիսի գերազանց մխիթարութիւն եւ երանութիւն պիտի ըլլայ Աստուծոյ բերնով տրուած դրուատիքը եւ վկայութիւնը, որուն իբրեւ կնքում՝ Քրիստոս պիտի ըսէ, «Եկէ՛ք, Հօրս կողմէ օրհնեալներ, եւ ժառանգեցէ՛ք այն արքայութիւնը, որ ձեզի համար աշխարհի սկիզբէն պատրաստուած է» (Մտ 25.34):

ՆԱՄԱԿ ՖԻԼԱՏԵԼՏԻԱՅԻ ԵԿԵՂԵՑԻԻՆ (3.7-13)

Ֆիլիատելֆիա կը նշանակէ «եղբայրսիրութիւն»: Փոքր Ասիայի Լիդիա նահանգին մէկ քաղաքն էր, հիմնադրուած Պերգամոնի Ատտալոս Բ. Ֆիլատելֆոս թագաւորին կողմէ եւ իր անունով, որ կը նշանակէ՝ «եղբայրասէր»: Հելլենիստական մշակոյթի կարեւոր կեդրոն մըն էր: Ք.Ա. 133 թուականէն սկսեալ մաս դարձաւ Հռոմէական կայսրութեան: Այսօր կը կոչուի Ալա Շէհիր:

Ամենէն գեղեցիկ վկայութիւնը Քրիստոս այս եկեղեցիին է որ կու տայ: Ո՛չ մէկ դիտողութիւն, ո՛չ մէկ դժգոհութիւն. միայն գովասանք, միայն դրուատիք ունի:

«Այսպէ՛ս կ'ըսէ Սուրբը , ճշմարիտը, ան՝ որ Դաւիթի բանալին ունի. երբ բանայ՝ չկա՛յ մէկը որ գոցէ զայն, եւ երբ գոցէ՝ չկա՛յ մէկը որ բանայ զայն» (հմր 7): Քրիստոսի երեք նոր տիտղոսները ունինք այստեղ, որոնք շատ կարեւոր են. անոր համար, որ առաջին երկուքը Հին Կտակարանի մէջ տրուած են միշտ Աստուծոյ, ինչ որ ցոյց կու տայ Հօրը եւ Որդիին անուններուն նոյնութիւնը: Այսպէս.-

1.- «Սուրբը»: Ասիկա պարզապէս Աստուծոյ տրուած ստորոգելի մը չէ, այլ Աստուծոյ էութի՛ւնը, Աստուծոյ բուն ինչութիւնը: Աստուած պարզապէս Սուրբ Աստուածը չէ՛ (հմմտ Ղւ 10.3, 11.44-45, 19.2, 20.7, 21.8: Ա. Թգ 2..2: Սղ 22.3, 99.5 եւ 9: Ես 5.16: Եզ 20.41: Ա.Պտ 1.16), կամ պարզապէս սուրբ անուն ունեցողը չէ՛ (հմմտ Ղւ 20.3, 22.32: Ա.Մն 16.10 եւ 35: Սղ

33.21, 99.3, 103.1, 105.3, 106.47, 145.21: Եզ 36.23), այլ՝ Սո՛ւրբը, իր բացարձակ առումովը (տե՛ս Սղ 78.41: Ես 1.4,5.19, եւ 24, 10.17, 29.19, 30.11-12, 40.25, 41.16, 49.7, 54.5, 55.5: Եր 51.5: Ամբ 3.3: Ա.Պտ 1.15): Եւ Եսայիի նշանաւոր տեսիլքին մէջ սերովբէները երեք անգամ Սուրբ կը կոչեն Տէրը (Ես 6.3): Նոյն այս անունը կամ տիտղոսը Նոր Կտակարանի մէջ կը տրուի Քրիստոսի (տե՛ս Սր 1.24: Ղկ 1.35: Գրծ 3.14: Հմմտ Գրծ 2.27, 13.35 [Սղ 16.10]), եւ Եսայիով պատկերուած երեքսրբեանն ալ կը վերագրուի Քրիստոսի (տե՛ս 4.8 բացատրութիւնը): Ուստի Քրիստոս ինք Սո՛ւրբն է. «Սուրբը եւ արդարը», ինչպէս պիտի ըսէր Պետրոս առաքեալ (Գրծ 3.14). «Սուրբը եւ ճշմարիտը», ինչպէս ինք կը բնութագրէ ինքզինք (հմմտ 6.10):

2.- «Ճշմարիտը»: Այս մէկը եւս Հին Կտակարանի մէջ Աստուծոյ տրուած անուն մը կամ տիտղոս մըն է: Ո՛չ միայն անոր խորհուրդները, խօսքերը, պատուիրանները, յայտնութիւնները, դատաստանները, ճամբաները եւ գործերը ճշմարիտ են (հմմտ Բ.Թզ 7.28: Գ.Թզ 17.24: Սղ 19.7, 119.86: Ես 25.1, 45.19: Ովս 5.9: Տե՛ս նաեւ Յտ 15.5, 16.7, 19.2), այլ՝ ի՛նքը ճշմարիտ է (Բ.Մն 15.3: Յհ 3.33, 7.28, 8.26, 17.3: Ա.Թս 1.9), եւ բացարձակ ճշմարիտն է (հմմտ Ես 65.16): Նոր Կտակարանի մէջ նոյն բաները կը գտնենք Քրիստոսի համար, որ ո՛չ միայն ճշմարիտ է (Մտ 22.16), ճշմարիտ Լոյսը (Յհ 1.9), ճշմարիտ երկնաւոր Հացը (Յհ 6.32), ճշմարիտ Որթատունկը (Յհ 15.1), եւ ճշմարտութիւնը (Յհ 14.6), այլ, ինչպէս այս գիրքը մեզի կը յայտնէ, ճշմարիտ Վկան (3.14, 19.11), եւ մանաւանդ՝ Սուրբ եւ ճշմարիտ Տէրը (6.10): Այդ բոլորը արդէն ցոյց կու տան, թէ Քրիստոս ինք ալ իր Հօրը պէս բացարձակ ճշմարիտն է, ինչպէս հոս կ'ըսուի: Եւ ատիկա անգամ մը եւս զօրեղապէս կը շեշտէ Հօրը եւ Որդիին նոյնութիւնը, համահաւասարութիւնն ու համապատուութիւնը աստուածութեան մէջ: Այս տիտղոսին կապակցութեամբ յատկանշական է Յովհաննէս առաքեալի վկայութիւնը նաեւ իր առաջին նամակին մէջ, որուն աւարտին կ'ըսէ. «Գիտենք թէ Աստուծոյ Որդին եկաւ ու

բացաւ մեր միտքերը, որպէսզի ճանչնանք Աստուածը: Մենք միացած ենք ճշմարիտ Աստուծոյ եւ Անոր Որդիին՝ Յիսուս Քրիստոսի: Ա՛ն է ճշմարիտ Աստուածը եւ յաւիտենական կեանքը» (Յհ 5.20): Յիսուս Քրիստոսի համար պարզ ու յստակ կերպով կ'ըսուի՝ «Ա՛ն է ճշմարիտ Աստուածը»: Հայրն ալ ճշմարիտ Աստուածն է, Որդին ալ ճշմարիտ Աստուածն է, այնպէս ինչպէս Նիկիական Հաւատամքը կ'ըսէ՝ «Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ». ճշմարիտ Աստուծմէն ծնած ճշմարիտ Աստուած է:

3.- «Ան՝ որ Դաւիթի բանալին ունի»: Բանալին ինք լիազօր իշխանութեան եւ իրաւունքի նշան է. իսկ «երբ բանայ՝ չկա՛յ մէկը որ գոցէ զայն, եւ երբ գոցէ՝ չկա՛յ մէկը որ բանայ զայն» խօսքը աւելի եւս կ'ընդգծէ այդ իշխանութեան բացարձակութիւնը:

Նախ, այս պատկերով Քրիստոս կը յիշեցնէ Հօրմէն ստացած իր բացարձակ իշխանութիւնը (տե՛ս Մտ 28.18), որ միայն երկրի վրայ եւ երկրաւոր հասկացողութեամբ իշխանութիւնը չէ, այլ՝ բացարձակ իշխանութիւնն է ամբողջ արարչութեան վրայ, որուն ստեղծիչն է ան (հմմտ Յհ 1.3 եւ 10: Եփ 3.9: Կղ 1.16: Եբր 1.2: Յյտ 4.11), եւ իշխանութիւնը կեանքին եւ մահուան վրայ, որովհետեւ, ինչպէս տեսանք, ինքզինք կը ներկայացնէր նաեւ իբրեւ «Ան՝ որ Մահուան եւ Դժոխքի բանալիները իր ձեռքին մէջ ունի» (տ՛ես 1.18): Այս վերջին իմաստը այստեղ բնագրին մէջ տեսնելու մեզ կը մղէ մանաւանդ այն պարագան, որ կարգ մը Յունարէն ձեռագիրներ «Դաւիթի բանալին» բացատրութեան փոխարէն ունին «Դժոխքի բանալին» տարբերակը, իսկ որոշ Հայկական ձեռագիրներու մէջ կը հանդիպի նաեւ «Դրախտի բանալին» տարբերակը: Քրիստոս իր Սուրբ Հոգին մեզի վերստին պարգեւելով՝ լայն բացաւ շնորհքներու, այսինքն՝ Սուրբ Հոգիի պարգեւներուն դուռը, մեր դիմաց բացաւ յաւիտենական կեանքի դուռը եւ Ադամի մեղանշումով մեր դիմաց փակուած դրախտին դուռը:

Երկրորդ, Բանալին գոցելու եւ բանալու իշխանութիւնն է, որ Աստուածաշունչին մէջ եւ Աստուծոյ խօսքին կապակցութեամբ կ'արտայայտէ զայն ժամանակաւորապէս փակելու, «կնքելու» եւ փակ պահելու, կամ՝ յայտնելու, մեկնելու, բացատրելու իրաւունքը կամ իշխանութիւնը, որ բացարձակ իմաստով Քրիստոսինն է (հմմտ 5.1 եւ բացատրթ.), իր կողմէ տրուած նաեւ իր Եկեղեցիին: Յատկանշական է, որ իր երկրաւոր առաքելութեան ընթացքին Քրիստոս յաճախ ուղղակի եւ անուղղակի մեկնութիւնը կատարեց Հին Կտակարանին, Օրէնքին, մարգարէութիւններուն թէ՛ Սաղմոսներուն: Իսկ իր յարութենէն ետք վերնատան մէջ անգամ մը եւս անոնց ցոյց տուաւ իր մասին գրուած մարգարէութիւնները եւ տուաւ անոնց մեկնութիւնը, եւ «յետոյ անոնց միտքերը ԲՍՄԻ, որպէսզի հասկնան Սուրբ գիրքերը» (Ղկ 24.45): Այդ առումով՝ Եկեղեցիին համար Հին Կտակարանի բանալին Քրիստոս է, եւ ով որ զայն չէ ընդունած՝ չի կրնար Հին Կտակարանը հասկնալ (տե՛ս Բ.Կր 3.14-17: Հմմտ Ա.Կր 2.14):

Իսկ Դաւիթի բանալին (հմմտ Ես 22.22) խորհրդանիշ մըն է Դաւիթի թագաւորութեան, եւ այդ թագաւորութեան վրայ բացարձակ իրաւունքին եւ իշխանութեան: Դաւիթի թագաւորութիւնը պատմութեան մէջ օրինակ մըն էր գալիք ճշմարիտ թագաւորութեան, որ Քրիստոսինն է դարձեալ:

«Գիտեմ գործերդ: Ահա դիմացդ բանալ տուի դուռը, որ ո՛չ ոք պիտի կրնայ գոցել» (հմր 8): Քրիստոս Ֆիլատելֆիայի եկեղեցիին գործերուն թուումը չի կատարեր, բայց ուրիշ ձեւով ցոյց կու տայ, որ այդ գործերը միայն գովելի են: Անցեալի գործերէն գոհ ըլլալուն համար է որ կ'ըսէ՝ «դիմացդ բանալ տուի դուռը...»: «Դուռ մը բանալ» ոճական դարձուածքը կը նշանակէ՝ պատեհութիւն ընծայել, առիթ տալ, յաջողութիւն տալ (հմմտ Գրծ 14.26: Ա Կր 16.9: Բ.Կր 2.12: Կդ 4.3): Այս եկեղեցիին հաւատարմութեան փոխարէն, Տէրը յաջողութեան դուռը լայն պիտի բանայ անոր դիմաց, եւ ոեւէ մէկը պիտի

չկարենայ արգելք ըլլալ անոր: Այդ յաջողութիւնը կը ներկայացուի 9րդ համարին մէջ:

«Գիտեմ որ քիչ մը զօրութիւն ունիս. պահած ես խօսքերս եւ չես ուրացած զիս» (հմր 8): Ոմանք «քիչ մը զօրութիւն» բացատրութեան մէջ կը փորձեն տեսնել եկեղեցիին թուական տկարութիւնը կամ փոքրութիւնը, այսինքն՝ քիչ հաւատացեալներ ունենալը, եւ կամ հոգեւոր եռանդի կամ աշխոյժի յարաբերական նուազութիւնը, թեպէտ կարծէք այս տուեալը երբեք մեղադրանքի ձեռով չի ներկայանար: Միւս կողմէ, սակայն, ժամանակի կացութեան մէջ, հալածանքներու եւ նեղութեան ժամանակի մը մէջ մեծագոյն առաքինութիւնը կամ առաւելութիւնն է՝ Քրիստոսի խօսքերը պահած ըլլալը, որ կը նշանակէ՝ անոր պատուիրանները պահած ըլլալ եւ Քրիստոսի անունն ու հաւատքը չուրանալ: Ատոր համար ալ Տէրը յատուկ դեր մը կը վերապահէ Տիլատելֆիայի եկեղեցիին:

«Ահաւասիկ քեզի պիտի յանձնեմ Սատանային հետեւորդներէն կարգ մը մարդիկ, որոնք իրենք զիրենք Հրեայ կը նկատեն, բայց իրականութեան մէջ չեն՝ անոնք կը ստեն» (հմր 9): Խօսքը որոշապէս Հրեաներու մասին է, որոնք, ինչպէս նախորդ գլխուն մէջ ալ ըսինք, «Սատանայի հետեւորդ» կոչուած են՝ ո՛չ միայն որովհետեւ զՔրիստոս չեն ընդունիր, այլ նաեւ իրենց ազգակից եւ գրեթէ հաւատակից եղբայրները անխիղճ կերպով Հռոմէական կայսրութեան դատաւորներուն ու դահիճներուն ձեռքը կը յանձնեն. այլ խօսքով, ո՛չ միայն եղբայր-սիրութիւն ցոյց չեն տար, այլ ընդհակառակը՝ եղբայրատեցութիւն ունին, այնպէս ինչպէս Կայէն իր եղբայրը ատեց եւ սպաննեց: Այնպիսին չի կրնար Աստուծոյ որդին ըլլալ, այլ անպայմանօրէն՝ Սատանայի որդի է եւ Սատանայի հետեւորդ մը (հմմտ Յհ 8.44): Այնպիսիներ Հրեայ կը նկատեն իրենք զիրենք, բայց Հրեայ չեն, որովհետեւ իրականին մէջ Հրեայ կը նշանակէ՝ ճշմարիտ հաւատացեալ, մինչդեռ իրենք

այդպիսին չեն. անունով միայն Աստուծոյ հաւատացողներ են, բայց իրականին մէջ չեն (Հո 2.28-29):

«Այնպէս մը պիտի ընեմ, որ անոնք զան եւ երկրպագեն ոտքերուդ առջեւ, ու գիտնան՝ թէ ես քեզ սիրեցի» (հմբ 9): Այս խօսքը տառացի իմաստով երկրպագութեան մասին չէ, կամ, ամէն պարագայի, բնաւ պաշտամունքային նշանակութիւն չունի: Պարզապէս կը նշանակէ՝ անոնք պիտի զան եւ քեզի հնազանդին: Հաւանական ակնարկութիւն մը կրնանք սեպել, թէ ժամանակ պիտի գայ, երբ անոնք անդրադառնան իրենց սխալին, եւ դարձի գան, դիմելով եկեղեցի: Այդ ժամանակը հեռաւորը կամ վախճանականը չէ, այլ ներկան, որ Յովհաննէսի օրերէն կը սկսի եւ կը շարունակուի եկեղեցւոյ պատմութեան ամբողջ ընթացքին, եւ կը վերաբերի բոլոր այն Հրեաներուն, որոնք կը ճանչնան Յիսուս Քրիստոսը իբրեւ Աստուծոյ Օծեալը, զայն կ'ընդունին իբրեւ Փրկիչ եւ Աստուծոյ Որդի, եւ ճշմարիտ հաւատքը որդեգրելով մուտք կը գործեն եկեղեցի, հնազանդելով Քրիստոսի:

Վերը ըսինք, որ Տիլատելֆիայի եկեղեցիին ցուցաբերած հաւատարմութեան համար Տէրը յատուկ դեր մը կը վերապահէ անոր.- Թերեւս Տիլատելֆիայի եկեղեցին իր կեցուածքով ու վարքագիծով ի՛նք պատճառ պիտի դառնայ այդ Հրեաներու դարձին: Այս դերը եթէ կապենք այս եկեղեցիին անունին եւ անոր ունեցած նշանակութեան, խորհրդանշական եւ մեծ ճշմարտութիւն մը կը գտնենք, եւ իւրայատուկ մեկնութիւն մը կ'ունենանք:

Ըսինք, որ Յունարէնով «Տիլատելֆիա» կը նշանակէ եղբայրսիրութիւն: Եթէ Քրիստոս այս եկեղեցիին կ'ըսէ, թէ ինք պատճառ պիտի դառնայ որ Սատանայի հետեւորդներէն շատեր դառնան Քրիստոսի, մենք անունին նշանակութեան հետեւելով կրնանք ըսել, թէ եղբայրսիրութիւնը քրիստոնէական լաւագոյն մէկ վկայութիւնն է աշխարհին տրուած: Երբ Աւետարանի պատգամը եղբայրսիրութեան ընդմէջէն կը տրուի աշխարհին, միշտ ալ պատճառ կ'ըլլայ

գրաւչութեան եւ դարձի, որովհետեւ մարդիկ անոր մէջ կը տեսնեն կեանքի վերածուած ճշմարտութիւն մը, որ զօրեղագոյն վկայութիւնը կ'ըլլայ ճշմարտութեան: Պատակտուած եւ կռիւի մէջ եղող եկեղեցիները ինչպէս աշխարհին կրնան հրաւեր տալ եւ ըսել՝ Քրիստոսի ճշմարիտ հաւատքը ընդունեցէք, որովհետեւ ա՛յս է ճշմարիտ հաւատքը: Մարդիկ անմիջապէս դիտողութիւն պիտի չընեն, եւ պիտի չըսեն՝ Ի՞նչ է այդ ճշմարիտ հաւատքը, եթէ երբեք դուք իրարու հետ կը կռուիք, ի՞նչ տեսակ Աստուծոյ հաւատացեալներ էք. եթէ դուք իրար կը դաւանիք իբրեւ Աստուծոյ որդիներ, եւ եթէ Աստուծոյ որդիները իրարու հետ կը կռուին, աւելի լաւ է մենք Աստուծոյ որդի չըլլանք: Մարդիկ Յովհաննէս առաքեալին բառերով պիտի չպատասխանեն մեզի, ըսելով. «Ով որ կ'ըսէ՝ թէ ինք լոյսի մէջ է, եւ իր եղբայրը կ'ատէ, անիկա տակաւին խաւարի մէջ է: Ով որ արդարութիւն չի գործեր՝ Աստուծոյ որդի չէ. ով որ իր եղբայրը չի սիրեր՝ նոյնպէս Աստուծոյ որդի չէ: Այն մարդը որ կ'ըսէ՝ “Ես կը սիրեմ զԱստուած”, բայց իր եղբայրը կ'ատէ, ստախօս մըն է: Ով որ չի սիրեր իր եղբայրը՝ որ կը տեսնէ, ինչպէս կրնայ սիրել զԱստուած՝ որ չի տեսներ» (Ա.Յհ 2.9, 3.10, 4.20):

Այո՛, հաւատքի զօրեղագոյն վկայութիւնը՝ կեանքի վկայութիւնն է՝ դրսեւորուած սիրոյ ընդմէջէն: Զուր տեղը չէ որ Քրիստոս անդադար կրկնեց՝ «Միրեցէք իրար», եւ Նոր Կտակարանն ալ, առաքելական նամակներն ալ “Միրեցէք իրար” հրահանգը մնայուն կերպով կը կրկնեն, որովհետեւ Քրիստոս կ'ըսէր. «Ձեր իրար սիրելով է որ մարդիկ պիտի գիտնան, թէ դուք իմ աշակերտներս էք» (Յհ 13.35): Աստուծոյ եւ Քրիստոսի մասին տրուած լաւագոյն վկայութիւնը եղբայրսիրութիւնն է, եւ եղբայրսիրութիւնն է որ բոլոր միւս կրօններուն եւ անոնց հետեւորդներուն դիմաց կրնայ լայնօրէն բանալ այն դուռը՝ որ հաւատքի դուռն է, որպէսզի անոնք գան եւ ճանչնան Քրիստոսով եւ Քրիստոսի մէջ պարփակուած ճշմարտութիւնը:

Ֆիլատելիայի եկեղեցիին տրուած դերը առանձնաշնորհում մըն է հարկաւ, եւ ասիկա Քրիստոսի յատուկ սիրոյն արտայայտութիւնը պիտի ըլլայ այս եկեղեցիին հանդէպ. «Անոնք պիտի գիտնան, թէ ես քեզ սիրեցի»: Որքան աւելի սիրոյ գործերու կը նուիրուինք, Քրիստոս այնքան աւելի առատօրէն կը զեղու իր սէրը մեր վրայ, եւ այդ սիրոյն վկայութիւնը կու տայ մեր կեանքերուն մէջ: Աստուածային խոստում մըն է ասիկա նաեւ, որուն քաղցր պտուղը կը վայելեն անոնք՝ որ զայն կը փորձեն գործնականացնել իրենց կեանքին մէջ:

«Եւ որովհետեւ պահած ես իմ խօսքս, որով համբերել սորվեցար, ես ալ քեզ պիտի պահեմ այն փորձութեան ժամուն, որ պիտի գայ ամբողջ տիեզերքին վրայ՝ փորձելու համար երկրի երեսին գտնուող բոլոր բնակիչները» (հմբ 10): Երկրորդ խոստում մըն է որ Քրիստոս կու տայ, եւ այս խոստումը կը վերաբերի կարելոր ժամանակի մը:

Իր երկրաւոր առաքելութեան վերջին օրերուն, Քրիստոս շատ կարելոր յայտնութիւններ կատարեց Երուսաղէմի կործանման, ինչպէս նաեւ աշխարհի վախճանին եւ իր երկրորդ գալուստին մասին: Այդ յայտնութիւնը իր ամբողջութեանը մէջ կը կոչենք Յայտնութեանական ճառ, խօսուած Չիթենեաց լեռան վրայ, իր աշակերտներէն չորսին ներկայութեան (տե՛ս Մտ 24, Մր 13, Ղկ 21): Այդ ճառին մէջ Քրիստոս իր գալուստը անմիջապէս կանխող ժամանակին մասին խօսելով՝ զայն որակեց «մեծ նեղութեան օրեր» կամ «մեծ նեղութեան ժամանակը», որ պիտի գայ ամբողջ աշխարհի վրայ: Այս գիրքը լաւապէս պիտի ներկայացնէ այդ ժամանակը (տե՛ս 9.1-էն սկսեալ):

Ֆիլատելիայի եկեղեցիին Քրիստոս կը խոստանայ՝ «քեզ պիտի պահեմ այն փորձութեան ժամուն, որ պիտի գայ ամբողջ տիեզերքին վրայ»: Թէպէտ փորձութիւնը ունէ աստէն կրնայ գալ անհատին, կամ համայնքի մը, կամ ամբողջ աշխարհին վրայ, բայց այստեղ յստակ է, որ սովորական

փորձութեան մասին չէ խօսքը, այլ արտակարգօրէն ծանր փորձութեան մը, որ «տիեզերական» ծաւալ պիտի ունենայ: «Այնպիսի՝ մեծ նեղութեան օրեր պիտի գան, որոնց նմանը աշխարհի ստեղծագործութեան սկիզբէն մինչեւ այսօր չէ պատահած, եւ ոչ ալ պիտի պատահի» (Մտ 24.21): Իսկ «տիեզերք» բառը հոս կը նշանակէ ո՛չ թէ մեր աշխարհէն դուրս գտնուող տիեզերական մարմիններու ամբողջութիւնը, այլ՝ մեր աշխարհը, այն ժամանակուան ծանօթ բոլոր երկիրներու ամբողջութիւնը իր ընդհանուր պատկերով, որ պազապէս կը նշանակէ՝ ամբողջ աշխարհը:

Փորձութեան այդ ժամանակը պիտի գայ՝ «փորձելու համար երկրի երեսին գտնուող բոլոր բնակիչները»: Հակառակ իր համայնական երեւոյթին, «երկրի երեսին գտնուող բոլոր բնակիչները» բացատրութիւնը չի՝ վերաբերիր տառացիօրէն աշխարհի բոլոր բնակիչներուն, որոնց մէջ անշուշտ կան նաեւ եկեղեցիները, այլ խօսքով՝ Քրիստոսի հաւատացեալները, կամ Աստուծոյ ընտրեալները: Այդ բացատրութիւնը, իր աննշան տարբերակներով, Յայտնութեան գիրքին մէջ յատուկ կերպով կը գործածուի՝ Աստուծոյ ընդդիմացող չար մարդկութիւնը նշելու համար (տե՛ս նաեւ 1.7, 6.10, 8.13, 11.10, 13.8,12 եւ 14, 14.6, 17.2 եւ 8): Ատիկա շատ կարեւոր է, գիտնալու համար՝ թէ այստեղ ազդարարուած մեծ նեղութիւնը Աստուծոյ ընտրեալները փորձելու համար չէ՝ որ պիտի գայ, այլ մեղքին եւ անօրէնութեան ծառայողները:

Եթէ ատիկա մէկ կողմէ ճշմարտութիւն մը հաստատելու կամ լուսաբանելու դիտումը ունի, միւս կողմէ կը միտի ապահովութիւն եւ մխիթարութիւն տալու, եւ քաջալերելու Քրիստոսի ապաւինողները, որոնք իրենց Տիրոջ պահպանութեամբ զերծ պիտի մնան այդ մեծ փորձութեան ժամանակին չար աշխարհին վրայ գալիք սուկալի՝ հարուածներէն: Երանական եւ խաղաղարար խոստում՝

եկեղեցիին, մանաւանդ եղբայրսիրութեամբ ողջ մնացող եկեղեցիին:

«Ահա շուտով կու գամ. ամո՛ւր պահե ինչ որ ունիս, որպէսզի ռեւէ մէկը ձեռքէդ չառնէ յաղթանակի պսակը» (հմբ 11): Մենք աշխարհի մտածողութեամբ եւ աշխարհի ժամանակով յաճախ ուշացած կը նկատենք երրորդ այս խոստումը, Տիրոջ գալուստը: Բայց խոստացողը կ'ըսէ՝ թէ պիտի չուշանայ, այլ «շուտով» արդէն պիտի ըլլայ այդ գալուստը, թէպէտ անոր ժամն ու ժամանակը մեզմէ ծածկուած կը մնան Աստուծոյ ամենիմաստուն կամքովն ու կարգադրութեամբը: Կարելորը օրն ու ժամը գիտնալը չէ սակայն, այլ այդ օրուան ու ժամուն պատրաստ ըլլալը: Գողն ու թշնամին անակնկալօրէն կու գան: Նոյնպէս կու գայ հոգիներու գողը եւ թշնամին՝ Չարը, մեզ անպատրաստ վիճակով թակարդի մէջ բռնելու եւ կործանելու համար: Եւ թոյլ, անհոգ ու անպատրաստ վիճակը պատճառ կ'ըլլան, որ յանկարծ մեր ձեռքէն առնուի առաքինութեանց երկարամեայ վաստակը եւ անոր վարձատրութիւնը հանդիսացող յաղթանակի պսակը: Ահա թէ ինչու զգուշութեան եւ զգաստութեան այս կոչը կ'ուղղուի եկեղեցիին:

«Ով որ յաղթանակէ՝ զայն սին մը պիտի ընեմ իմ Աստուծոյ տաճարին մէջ, ուրկէ այլեւս դուրս պիտի չելլէ: Անոր վրայ պիտի գրեմ իմ Աստուծոյ անունը, ինչպէս նաեւ իմ Աստուծոյ քաղաքին անունը, այսինքն՝ Նոր Երուսաղէմ, որ երկինքէն իմ Աստուծոյ մօտէն պիտի իջնէ: Եւ անոր վրայ պիտի գրեմ նաեւ իմ նոր անունս»: (հմբ 12): 8-10 համարներուն մէջ երեք խոստումներ տեսանք, իսկ այս միակ համարին մէջ ունինք չորս խոստումներ՝ յաղթանակողին: Ընդամենը՝ 7 խոստում, կամ ուրիշ բացատրութեամբ՝ խոստումներու ամբողջութիւնը:

1.- «Զայն սին մը պիտի ընեմ իմ Աստուծոյ տաճարին մէջ, ուրկէ այլեւս դուրս պիտի չելլէ»: Տառական իմաստով՝ ամէն շէնք հարկաւ սիններու վրայ կը կանգնի եւ սինն է որ

իր վրայ կը պահէ շէնքը: Այդ իմաստով ոեւէ սին շինութեան մը մէջ կարելորագոյն բաժինն է: Ասոր փոխաբերական առումով, երբ մարդու մը համար ըսենք՝ «մեր հաստատութեան, մեր կազմակերպութեան սիւներէն է», անմիջապէս կը հասկնանք՝ թէ շատ կարելոր դեր մը կամ պաշտօն մը ունի այնտեղ. առանց իրեն՝ տուեալ հաստատութիւնը իր ներկայ կազմակերպական վիճակին, իր փայլքին, իր ծաղկուն վիճակին մէջ չ'ըլլար: Այստեղ՝ Քրիստոս Ֆիլատելֆիայի եկեղեցիին եւ այդ եկեղեցիի իւրաքանչիւր հաւատացեալին կը շեշտէ իրենց դերին կենսական կարելորութիւնը Աստուծոյ ընդհանրական եկեղեցիին մէջ, մանաւանդ իբրեւ եղբայրսիրութիւնը արտայայտող եկեղեցի: Այդ եղբայրսիրութեան վեմին կամ սինին վրայ Քրիստոս պիտի բարձրացնէ իր շէնքը: Աստուծոյ տաճարը Քրիստոսի Եկեղեցին է, եւ իր եկեղեցիին մէջ այդ դերը Քրիստոս կու տայ կամ կ'ընծայէ այս եկեղեցիին:

Բայց խոստումը միայն երկրաւոր եւ ժամանակաւոր չէ, այլ նաեւ կը վերաբերի յաւիտենական կեանքին: Կը նշանակէ՝ թէ յաղթողը մնայուն կերպով Աստուծոյ ներկայութեան պիտի կանգնի, ինչպէս սին մը յաւերժօրէն կը կանգնի տաճարի մը մէջ: Աստուած ի՛նքն է տաճարը (տե՛ս 21.22), որուն մէջ սին մը ըլլալ՝ կը նշանակէ մնայուն կերպով անոր փառքը տեսնել ու վայելել, այդ փառքին մէջ ըլլալ եւ երկնային բոլոր դասակարգութեանց հետ յաւերժօրէն փառաբանել զայն (հմմտ 4-5 գլուխներուն պատկերացումը):

2.- «Անոր վրայ պիտի գրեմ իմ Աստուծոյս անունը»: Անցեալին ծանօթ սովորութիւն էր որոշ տաճարներու սիւներուն վրայ արձանագրութիւններ պահել, որոնք տաճարին հովանաւորին կամ բարերարներուն անունը կը կրէին: Այսպէս, Եգիպտոսի տաճարներէն շատերու սիւները մեհենագիրներով ծածկուած են: Կափառնաումի մէջ յայտնաբերուած ժողովարանը երկու այդպիսի սիւներ ունէր՝ ժողովարանին բարերարներուն անուններով: Այս

պարագային՝ անձին վրայ գրուելիք անունը նուիրատու եւ բարերար մարդու մը անունը պիտի չըլլայ, այլ նոյնինքն Բարերարին՝ Աստուծոյ անունը, անոր՝ որուն կը պարտինք մեր գոյութիւնն ու կեանքը, եւ որուն կը պարտինք մանաւանդ մեր փրկութիւնը, որ իր անսահման մարդասիրութեամբը անիկա շնորհեց մեզի: Անշուշտ տառացի հասկացողութեամբ մը չէ՛ որ այս անունը գրուած պիտի ըլլայ յաղթողին վրայ: Ինչպէս Աստուծոյ տաճարին մէջ սին մը ըլլալը իրականին մէջ Աստուծոյ անմիջական ներկայութիւնն ու փառքը վայելել կը նշանակէ ըսինք, այնպէս ալ Աստուծոյ անունը վրան գրուած ունենալ՝ կը նշանակէ տաճար մը դառնալ Աստուծոյ տաճարին մէջ (հմմտ Ա.Կր 3.16-17, 6.19: Բ.Կր 6.16: Եփ 2.21-22: Ա.Պտ 2.5), եւ զԱստուած իր մէջ ունենալ (հմմտ Յհ 14.23), այլ խօսքով՝ Աստուծոյ միաւորուած ըլլալ:

3.- «Անոր վրայ պիտի գրեմ նաեւ իմ Աստուծոյս քաղաքին անունը, այսինքն՝ Նոր Երուսաղէմ, որ երկինքէն՝ իմ Աստուծոյս մօտէն պիտի իջնէ»: Աստուծոյ քաղաքը այս պարագային երկրաւոր Երուսաղէմը չէ, այլ երկնաւոր այն քաղաքը՝ որ Աստուած իր հաւատքի զաւակներուն համար պատրաստած է (տե՛ս Եբր 11.16), եւ որ Եբրայեցիներուն նամակին հեղինակը կը կոչէ «կենդանի Աստուծոյ քաղաքը, Նոր Երուսաղէմը» (12.22), որ, ինչպէս այս գիրքը իր աւարտին ցոյց պիտի տայ, երկինքէն պիտի իջնէ՝ հարսի մը պէս զարդարուած իր Փեսային՝ Քրիստոսի համար: Քրիստոնէայ մարդը այս աշխարհի մէջ ապրելով հանդերձ, գիտէ որ ինք «այս աշխարհէն չէ», այսինքն այս աշխարհին չի պատկանիր (հմմտ Յհ 15.19, 17.14 եւ 16), որովհետեւ իր հոգեւոր հայրենիքը երկինքն է (հմմտ Եբր 11.13-16). այլ խօսքով, այս աշխարհին քաղաքացի չէ, «երկինքի քաղաքացի» է (Փլպ 3.20), «սուրբերուն քաղաքակիցը եւ Աստուծոյ ընտանիքը» (Եփ 2.19): Արդ, ինչպէս ոեւէ հայրենիքի բնակիչ իր քաղաքացիութիւնը ցուցնող փաստաթուղթ կամ

արձանագրութիւն կ'ունենայ, նոյնպէս ալ յաղթանակողին պիտի տրուի Երկնաւոր Երուսաղէմի քաղաքացիութիւնը: Ա՛յս է անոր վրայ Աստուծոյ քաղաքին անունին գրուիլը:

4.- «Եւ անոր վրայ պիտի գրեմ նաեւ իմ նոր անունս»: Վերջին խոստումը Քրիստոսի անունին գրուիլն է այդ «սին»ին վրայ: Սօտաւոր բացատրութիւն մը մենք տեսանք 2.17-ին մէջ: Բայց այստեղ կ'ըսէ՝ «իմ նոր անունս»: Հաւանաբար խօսքը նոր անունի մասին չէ, այլ՝ այն ճշմարիտ ծանօթութեան, որ իրեն հաւատացողները ունին, բայց բացարձակ յստակութեամբ ու վստահութեամբ պիտի ունենան կատարածին, երբ զայն պիտի տեսնեն «դէմ առ դէմ», իր ճշմարիտ փառքին եւ ինքնութեան մէջ (հմմտ Ա.Կր19.12): Հրեայ ժողովուրդը Յիսուսը ճանչցաւ միայն մարմնաւորապէս, առաւելագոյնը՝ իբրեւ մարգարէ մը: Քրիստոսի հետեւորդները նախ անոր մէջ ճանչցան Մեսիան, Աստուծոյ Օծեալը եւ աշխարհ ղրկած Փրկիչը: Բայց յարութենէն ետք զայն ճանչցան ու դաւանեցան իբրեւ «Տէր եւ Աստուած» (տե՛ս Յի 20.18: Հմմտ 21.7 եւ 12): Աշխարհի մտածողութեամբ դատող մարդուն համար միշտ ալ դժուար եղած է ճանչնալ զԱստուած մարմնաւորապէս եկած. այլ խօսքով, երկրի վրայ ապրած ու գործած պատմական անձնաւորութիւն մը ճանչնալ, եւ հաւատալ անոր աստուածութեան, ու զայն դաւանիլ Տէր եւ Աստուած: Քրիստոսի այս ճշմարիտ ինքնութիւնը այս գիրքին մէջ կը յայտնուի նոր անունով մը, կամ նոյն «ՏԷՐ» անունին նոր տարազաւորումովը, որ Հօր Աստուծոյ տրուած փառահեղ անունն է՝ Դանիէլի մարգարէութենէն առնուած (2.47: Հմմտ Ա.Տմ 6.16), եւ որուն պիտի հանդիպինք 17.14-ի եւ 19.16-ի մէջ. «ԹԱԳԱԻՈՐ ԹԱԳԱԻՈՐԱՅ ԵԻ ՏԷՐ ՏԵՐԱՆՑ»: Հօր Աստուծոյ տրուած անունին Քրիստոսի եւս տրուիլը անգամ մը եւս կը մատնանշէ այն նոյնութիւնը որ կայ Հօրը եւ Որդիին միջեւ՝ ըստ աստուածութեան, ըստ համապատուութեան, փառքի եւ գործունէութեան, իբրեւ մէկ եւ միակ Աստուածութիւն:

Նոյն այս գիրքը կը յիշէ Քրիստոսի ուրիշ մէկ անունը, որ կը գտնենք նոյն հեղինակին արձանագրած Աւետարանին սկիզբը եւս. «Անոր անունն է՝ ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԸ», կամ Գրաբարեան ձեւով՝ «ԲԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ» (Յյտ 19.13: Հմմտ Յհ 1.1 եւ 14: Ա.Յհ 5.7):

Այդ նոր անունը ի՛նչպէս ալ հասկնանք, վերջ ի վերջոյ անիկա անջնջելի կերպով պիտի դրոշմուի յաղթանակողներուն վրայ, որոնք իրենց կեանքով հաւատարմօրէն Քրիստոսի անունին վկայութիւնը տուին, զայն պահեցին եւ արժեցուցին, եւ ուստի այդ անունով ալ պիտի ճանչցուին թէ՛ երկրի վրայ, թէ՛ երկինքի մէջ (հմմտ Մտ 10.32: Ղկ 12.8: Հռ 10.9-10: Հմմտ Յյտ 3.5), եւ ատիկա կրելը իրենց համար պիտի ըլլայ մեծագոյն փառքը եւ փառաւորումը:

ՆԱՄԱԿ ԼԱԻՈՂԻԿԻԿԱՅԻ ԵԿԵՂԵՑԻԻՆ (3.14-22)

Լաւողիկիան Փոքր Ասիայի Փոփոքի նահանգին մեծ եւ հարուստ մէկ քաղաքն էր, Գայլ գետին վրայ: Նախապէս Զեւս չաստուածին անունով կը կոչուէր Դիոսպոլիս, բայց երբ Անտիոքոս Բ. քաղաքը ընդարձակեց, զայն վերակոչեց իր կնոջ՝ Լաւողիկիայի անունով: Ք.Ե. 65/66 թ. երկրաշարժէն կործանեցաւ, բայց անմիջապէս վերաշինուեցաւ Մարկոս Աւրելիոս կայսեր կողմէ: Առաջին դարուն Հրեայ մեծ համայնք մը կար այնտեղ, ինչպէս Յովսէփոս կը վկայէ: Այնտեղի քրիստոնէական եկեղեցիին մասին կը կարդանք Պօղոս առաքեալի Կողոսացիներուն գրած նամակին մէջ (2.1, 4.13-16), ուր նաեւ կը տեսնենք թէ առաքեալը անոնց ալ ուղղած է նամակ մը, որ մեզի անձանօթ է (թէպէտ կայ նոյնանուն անվաւեր նամակ մը): Չորրորդ դարու սկիզբները, շուրջ 314 թ. այնտեղ եկեղեցական կարեւոր ժողով մը գումարուեցաւ, որուն կանոնները կը պահուին նաեւ մեր եկեղեցոյ

Կանոնագիրքին մէջ: Անցնող դարերուն ծանօթ եղած է Էսկի Հիսար անունով, իսկ ներկայիս վերակոչուած է Փամուք Քալէ:

Անցեալին քաղաքը նշանաւոր էր երեք բաներով, որոնք իւրայատուկ կերպով իրենց անդրադարձը ունին այս նամակին մէջ: Անուանի եղած է իբրեւ դրամական գործառնութեանց կեդրոն, երկրորդ՝ իր բժշկական դպրոցով, երրորդ՝ իր արտադրած թաւափայլ սեւ բուրդով եւ կերպասագործութեամբ: Քաղաքը միայն ջուրով աղքատ եղած է:

«Այսպէ՛ս կ'ըսէ Ամէնը, հաւատարիմ եւ ճշմարիտ Վկան, Աստուծոյ ստեղծագործութեան Սկիզբը» (հմբ 14): Այս նամակը եւս մեզի կ'ընծայէ քրիստոսաբանական քանի մը տիտղոսներ, որոնք կարեւոր են: Այս համարը երեք տիտղոսներ կամ անուններ կու տայ.-

1.- «Ամէնը»: Իւրաքանչիւր քրիստոնէայ՝ եկեղեցւոյ պաշտամունքային կեանքէն գիտէ այս բառը: Անիկա Եբրայերէն է, յետոյ Աստուածաշունչին ճամբով անցած Յունարէնին եւ միւս լեզուներուն: Իր սովորական գործածութեամբը զայն կը գտնենք առհասարակ Աստուծոյ ուղղուած բոլոր մաղթանքներուն, աղօթքներուն, փառաբանութիւններուն եւ հաւատքի խոստովանութիւններուն աւարտին, իբրեւ եզրափակում, որովհետեւ անիկա կը նշանակէ՝ «Այո», «հաստատապէս», կամ «թող ըլլայ», եւ կամ՝ «ճշմարիտ է», «ճշմարտապէս», եւ այդ իմաստով՝ ընդհանուր հաւատացեալներուն հաւանութեան դրոշմն է աղօթքներու կամ փառաբանութիւններու աւարտին: Արդ, մեր հատուածին համար ամենէն կարեւորը վերջին՝ «ճշմարիտ», կամ «ճշմարտութիւն» իմաստն է: Գործածութենէն կ'երեւի, որ անիկա հանդէս կու գայ իբրեւ յատուկ անուն կամ տիտղոս, տրուած Քրիստոսի: Այս գործածութիւնը Հին Կտակարանէն կու գայ, ուր Ես 65.16-ին մէջ երկիցս գործածուած կը գտնենք՝ Հօր Աստուծոյ համար. «Որպէսզի երկրի վրայ օրհնուողը

Ճշմարիտ (Եբր. Ամէն) Աստուծով օրհնուի, եւ երկրի վրայ երդում ընողը՝ Ճշմարիտ (Եբր. Ամէն) Աստուծով երդում ընէ»: Հին Կտակարանի մէջ Հօրը, իսկ Նոր Կտակարանի մէջ Քրիստոսի տրուած անունին նոյնութիւնը հարկաւ կը վկայէ անոնց աստուածային բնութեան նոյնութեան, կամ ուրիշ խօսքով՝ Քրիստոսի աստուածութեան մասին:

2.- «Հաւատարիմ եւ ճշմարիտ Վկան»: Այս տիտղոսը տեսանք եւ անոր մասին խօսեցանք 1.5-ին եւ 3.7-ին մէջ: Իսկ հիմա «Ամէն» անունին կապակցութեամբ ըսինք, որ խորքին մէջ այս երեք տիտղոսներն ալ նոյնն են, կամ երեք տարբեր եզրերով կ'արտայայտեն նոյն ճշմարտութեան երեք տարբեր երեսները:

3.- «Աստուծոյ ստեղծագործութեան սկիզբը»: Վերջին այս բացատրութիւնը յաճախ ծառայած է Քրիստոսի Աստուածութիւնը մերժող աղանդաւորներուն, որոնք անոր մէջ ուզած են տեսնել վկայութիւն մը՝ թէ Քրիստոս Աստուած չէ՛, այլ՝ «արարած» մը, բոլոր արարածներուն առաջինը եւ սկիզբը: Բայց արդեօք բնագիրը այդպիսի հաստատում մը կ'ընէ Ռոդիին մասին: Առաջին գլխուն մէջ տեսանք, թէ ինչպէս անիկա ինքզինք կը կոչէր «Առաջինն ու վերջինը», «Սկիզբն ու Վախճանը» (տես 1.8 եւ 17 եւ բացատրութիւնը): Սկիզբ՝ ոչ թէ յարաբերական իմաստով մը, աշխարհին կամ ստեղծագործութեան յարաբերաբար, ինչպէս կրնայ թուիլ այստեղ, այլ՝ բացարձակ իմաստով սկիզբ մը. այսինքն սկիզբ մը՝ որ իրականին մէջ սկզբնակէտ մը չունի՛, այլ՝ լեզուական բացատրութիւն մըն է մեզի համար, որովհետեւ չունինք ուրիշ եւ աւելի յարմար ռեւէ բացատրութիւն: Այսպէս, կ'ըսենք՝ Աստուած սկիզբէն է: Ի՞նչ կը հասկնանք. մինչեւ ժամանակ մը Աստուած չկար եւ յետոյ եղաւ կամ սկսաւ. «սկիզբ»ը հոս ժամանակ ցոյց կու տայ: Ո՛չ. Աստուծոյ գոյութիւնը ժամանակի կապուած չէ եւ ժամանակի հասկացողութենէն դուրս է, բան մը՝ որ մենք դժուար կը պատկերացնենք եւ հետեւաբար դժուար ալ կը հասկնանք: Նոյնն է Ռոդին

Աստուած: Անիկա բացարձակ սկիզբէն է, անժամանակ է եւ անվախճան, եւ Ի՛նքն է ամէն բանի սկիզբը: Եւ ճիշդ այս է «Աստուծոյ ստեղծագործութեան Սկիզբը» բացատրութեան ուղիղ իմաստը:

Արդարեւ, յունարէնի մէջ «Սկիզբ» (արիսի՛) բառը կը նշանակէ՝ «սկզբնապատճառ»: Այստեղ Քրիստոսի սկիզբին մասին չէ՛ որ կը խօսուի, այլ՝ տիեզերքին, աշխարհին, մարդուն ստեղծագործութեան, որոնց սկիզբը, այսինքն սկզբնապատճառը կամ հեղինակը Որդին Ի՛նքն է, ինչպէս Նոր Կտակարանը ա՛յնքան անգամներ կ՛ուսուցանէ մեզի: Յովհաննու Աւետարանը Որդիին մասին հաստատելէ ետք՝ թէ «Բանը Աստուած էր», անմիջապէս կ՛աւելցնէ. «Անով էր որ Աստուած ամէն ինչ ստեղծեց, առանց Անոր ո՛չ մէկ բան ստեղծեց: Կեանքը անով սկիզբ առաւ...: Աշխարհի մէջ էր անիկա, աշխարհը իրմով ստեղծուեցաւ, սակայն աշխարհը զինք չճանչցաւ» (Յհ 1.1,3-4 եւ 10: Հմմտ Եփ .9: Կղ 1.16: Եբր 1.2-3):

Բայց տակաւին ասով չ՛սպառիր այս նախադասութեան իմաստը: «Սկիզբ» (արիսի՛) բառը յունարէնի մէջ ուրիշ իմաստներ ունի, եւ այս շրջագիծին մէջ զայն կարելի էր թարգմանել նաեւ՝ «գլուխը» կամ «իշխանը», այսինքն տէրը, իշխողը: Եւ արդարեւ Նոր Կտակարանը բազմիցս կը նշէ, թէ Քրիստոս գլուխն է ամբողջ ստեղծագործութեան, բոլոր արարածներուն (Հմմտ Եփ 1.20-22: Կղ 2.10: Եբր 2.7-8), եւ Եկեղեցիին (Եփ 1.22, 4.15-16: Կղ 1.18, 2.19): Այս իմաստը կապուած է «նոր ստեղծագործութեան» հասկացողութեան: Քրիստոս իր փրկագործութեամբ մարդն ու աշխարհը մեղքի հնութենէն դուրս բերելով նորոգեց եւ նոր ստեղծուած ու նոր մարդ դարձուց, որպէսզի մենք Աստուծոյ ծառայենք՝ Սուրբ Հոգիով նորոգուած իբրեւ նո՛ր արարածներ (տե՛ս Հո 6.4: Բկր 3.17: Եփ 4.24: Կղ 3.10), իսկ այդ նոր ստեղծագործութեան գլուխը, սկիզբը եւ առաջինը դարձեալ Քրիստոս Ի՛նք էղաւ,

«որպէսզի Ինք առաջնութիւնն ունենայ ամէն, ամէ՛ն բանի մէջ» (Կդ 1.18):

«Գիտեմ գործերդ, դուն ո՛չ պաղ ես, ո՛չ ալ տաք: Պէտք էր կա՛մ պաղ ըլլայիր եւ կա՛մ տաք: Սակայն դուն գաղջ ես, ո՛չ տաք եւ ո՛չ ալ պաղ, ուստի քեզ բերանէս դուրս պիտի փսխեմ» (հմր 15-16): Լաւողիկիայի եկեղեցիին գործերուն մէջ Քրիստոս գովելի բան մը չի գտներ, եւ անմիջապէս կ'անցնի իր դժգոհութիւնը արտայայտելու:

Առաջին դժգոհութիւնը այն է, որ յիշեալ եկեղեցիին գործերը «գաղջ» են, ո՛չ տաք, ո՛չ պաղ: Գիտենք, օրինակ, որ տաք ջուրը, մանաւանդ հանքային տաք ջուրը՝ բուժիչ յատկութիւն ունի, բժշկող է: Պաղ ջուրը՝ արթնցնող, զովացնող, թարմացնող, կենդանացնող յատկութիւն ունի: Լաւողիկիայի եկեղեցին կը համեմատուի ջուրի հետ, բայց ո՛չ մէկն է, եւ ոչ ալ միւսը. ո՛չ դարման կը բերէ հոգիով հիւանդացածներուն, ո՛չ ալ հոգիով ծարաւներուն յագեցում եւ զովացում կու տայ: Ուստի անպէտ է Աստուծոյ գործին համար: Գաղջ ջուրը ի՞նչ բանի կը ծառայէ. անիկա բժշկութեան մէջ յաճախ կը գործածուի՝ փսխել տալու համար: Եւ ահա Տէրը նոյն համեմատութիւնը կ'ընէ: Լաւողիկիայի եկեղեցին իր գործերով միայն սրտխառնուք կը պատճառէ, եւ ուստի Քրիստոս զայն իր բերանէն դուրս պիտի փսխէ գաղջ ջուրի պէս:

Շատ գեղեցիկ բացատրութիւն մը կու տայ Սուրբ Գրիգոր Աստուածաբան հայրապետը, ըսելով՝ թէ իրաւամբ մարդս «պաղ» կ'ըլլայ՝ երբ հաւատքին անհաղորդ է տակաւին, թէպէտ յոյս ունի որ մկրտուելով կը հասնի անոր. իսկ «տաք» կ'ըլլայ՝ երբ վերըստին ծնունդով կը կենդանանայ իր հաւատքով: Բայց եթէ յետոյ անտեսէ հաւատքին գործերը, անօգուտ կը դարձնէ ստացած շնորհքը, ո՛չ պաղ կ'ըլլայ եւ ոչ տաք, այլ կը դառնայ ծանրատաղտուկ եւ գարշելի:

«Կ'ըսես՝ թէ «Հարուստ էի եւ աւելի հարստացայ, եւ ո՛չ մէկ բանի կարօտ եմ». սակայն չես գիտեր՝ թէ դուն ողորմելի

մըն ես, խեղճ ու աղքատ, մերկ եւ կոյր» (հմր 17): Վստահաբար բոլոր Լաւոդիկիացիները, քրիստոնէաներն ալ ներառեալ, հպարտ էին իրենց քաղաքին ունեցած առաւելութիւններով, հարստութեամբ, բժշկական դպրոցով, կերպասագործութեամբ: Եւ այստեղ առաջին արտայայտութիւնը այդ ճշմարտութիւնը կը յայտնէ: Աշխարհի հարստութեամբ եւ ճոխութեամբ պարծենալը օգուտ մը չունի, եթէ աստուծոյ զԱստուած մոռցընել կու տան մեզի: Հաւատքի ակնոցով դիտուած՝ մարդս փորձութեան ամենէն վտանգաւոր կէտին կը հասնի՝ երբ կը սկսի մտածել եւ ինքն իրեն ըսել՝ «Ուեւ քանի կարօտ չեմ, ուեւ մէկուն կարօտ չեմ»: Այնպիսին ինքն իրեն համար իր թագաւորութիւնը կը ստեղծէ եւ ի վերջոյ զԱստուած ալ կ'անտեսէ: Հոգիի կարօտութիւնը սկիզբն է փրկութեան, իսկ անկարօտութիւնը՝ սկիզբը կորուստին: Զուր տեղ չէր որ Քրիստոս ըսաւ. «Երանի՛ հոգիով աղքատներուն, որովհետեւ անոնցն է երկինքի արքայութիւնը» (Մտ 5.3), եւ զուր տեղ չէր որ յիշեցուց երկրաւոր հարստութեանց կառչած ըլլալուն վտանգը, որ մեզ կրնայ երկինքի թագաւորութենէն զրկել (Սր 10.23-25): Եւ այստեղ կ'ըսէ, որ աշխարհի չափանիշով Լաւոդիկիայի եկեղեցին կրնայ հարուստ ու փառքի տէր ըլլալ, բայց Աստուծոյ աչքին կը մնայ խեղճ ու ողորմելի, եւ իր ամբողջ ճոխութեանը մէջ՝ մերկ եւ կոյր: Խեղճ ու ողորմելի է, որովհետեւ չի գիտեր թէ ի՛նչ քանի պէտք ունի, չի տեսներ թէ ի՛նչ քանի կարօտ է ինք. եւ որովհետեւ չի գիտեր ու չի տեսներ, կը նշանակէ թէ կոյր է մտքով ու հոգիով, եւ արժանի է արգահատանքի. ողորմելի մըն է: Նոյնպէս մերկ է, որովհետեւ փառաւոր հագուստները չե՛ն մարդուս իսկական զգեստը եւ զարդարանքը, այլ՝ մարդուս նկարագիրը, մաքուր վարքը, առաքիւնութիւնները, մտաւոր ու հոգեւոր բարեմասնութիւնները, իր ցուցաբերած սերը, որոնցմէ կամաւորաբար ինքզինք մերկացուցած է ան, եւ ուստի

դարձեալ արժանի է խղճացուելու միայն, հակառակ իր ամբողջ պարծանքին:

«Ուստի քեզի հետեւեալ խորհուրդը կու տամ.- Կրակէն անցած զուտ ոսկի գնէ ինձմէ, որպէսզի հարստանաս, եւ ճերմակ հագուստներ առ՝ հագնելու համար, որպէսզի մերկութեանդ ամօթը ծածկես: Նաեւ դեղ դիր աչքերուդ, որպէսզի տեսնես» (հմբ 18): Երեք խորհուրդները, որ Քրիստոս կու տայ, կապ ունին այն բաներուն հետ, որոնցմով գլխաւորաբար կը պարծենար այս քաղաքը: Նոյնինքն այն նիւթական առաւելութիւնները, որ ունի, հոգեւոր գետնի վրայ կը պակսին իրեն:

1.- Լաւողիկիան նշանաւոր էր իր դրամատուներով կամ նիւթական գործառնութիւններով: Հարուստ էր եւ ինքզինք առանձնաշնորհեալ կը նկատէր, ամբողջ աշխարհը իրեն կը նայէր, եւ ինք կը կարծէր թէ ոեւէ բանի կարօտ չէ: Բայց Քրիստոս դիտողութիւն կ'ընէ, ըսելով՝ «Կրակէն անցած զուտ ոսկի գնէ ինձմէ, որպէսզի հարստանաս»: Այն դրամը, որով կը խաղար Լաւողիկիան եւ գոր կը պաշտէ արդի աշխարհը, սկիզբն է գայթակղութեանց եւ մոլութեանց, արմատը եւ մայրն է բոլոր չարիքներուն (Ա.Տմ 6.10: Հմմտ Ելք 23.8: Բ.Օր 16.19): Անիկա մարդս չի հարստացներ Աստուծոյ համար: Աստուծոյ քով մթերուող հարստութիւնը միայն ազնիւ նկարագիրը, անբասիր կեանքը եւ բարի գործերը կրնան ըլլալ, որոնք սուղ ձեռք կը բերուին, յաճախ զոհողութեանց գնով, որուն համար հարկ կ'ըլլայ որ ենթական կրակի բովէն անցնի: Այդպիսի նկարագիր մը, կեանք մը եւ բարեգործութեան նուիրում մը՝ չեն կրնար ըլլալ եւ հասկցուիլ առանց հաւատքի, եւ ուստի իսկական հարստութիւնը մեզի աւանդուած ճշմարիտ հաւատքն է, հաւատքի գանձը, որ մենք կը կրենք մեր այս հողեղէն մարմիններուն մէջ՝ «կաւէ անօթներու պէս» (Բ.Կր 4.7): Այդ զուտ, կրակէ անցած ոսկին է որ պէտք է գնենք, որովհետեւ Աստուծոյ քով միայն անով է որ կրնանք հարստանալ: Բայց այդ հաւատքը աշխարհէն չէ՝ որ

կրնանք գնել. աշխարհի սեղանաւորները այդ գանձը ո՛չ ունին, ո՛չ ալ կրնան տալ. ո՛չ կրնան գնահատել, ո՛չ ալ կրնան պահել: Այդ գանձը միայն Աստուծմէ՝ ճշմարիտ սեղանաւորէն կարելի է գնել, որ զայն «կը ծախէ» կամ կու տայ առանց դրամի (հմմտ Ես 55.1-2). Քրիստոս՝ մեր Աստուածը ի՛նք է որ զայն կը խոստանայ եւ կու տայ ձրիօրէն, պայմանաւ որ երթանք իրեն եւ ուզենք, ըսելով. «Տէր, մեր հաւատքը աւելցուր» (Ղկ 17.5):

2.- Լաւողիկիան անուանի էր իր թաւշափայլ սեւ բուրդով եւ հիւսուածեղէնի գործով: Բայց Քրիստոս կ'ըսէ.- Դուն՝ որ այդքան կը պարծենաս քու կերպասներովդ, որով աշխարհին զգեստեղէն կը մատակարարես, նայէ՛ դուն քեզի, եւ տես թէ մերկ ես: Մանաւանդ «Ճերմակ» հագուստի պէտք ունիս: Ա՛յնքան աշխարհիկ դարձեր ես քու մտահոգութիւններովդ, որ քու «զգեստ»ներդ ալ քու արտադրած սեւ բուրդիդ գոյնը առեր են: Դուն՝ զՔրիստոս հագած պէտք էր ըլլայիր (հմմտ Հո 13.12: Գղ 3.27), դուն՝ որ Քրիստոսով «նոր մարդ»ը պէտք էր հագած ըլլայիր (Եփ 4.24: Կղ 3.10), դուն՝ որ Աստուծոյ սպառազինութիւնը, լոյսի զէնքերը, հաւատքի եւ սիրոյ զէնքերը պէտք էր հագած ըլլայիր (Հո 13.14: Եփ 6.11: Ա.Թս 5.8), դուն՝ որ Աստուծոյ շնորհքներու պատմուճանը վրայ պէտք էր ունենայիր, կամաւորաբար հաներ ես գանոնք, եւ Աստուծոյ դիմաց մերկ ես, ո՛րքան ալ աշխարհի աչքին ճոխ զգեստաւորուած երեւիս: Արդ, վերստի՛ն եկուր ինձի,- կ'ըսէ Քրիստոս,- եւ «Ճերմակ հագուստներ առ՝ հագնելու համար, որպէսզի մերկութեանդ ամօթը ծածկես»: Աստուած մարդս ստեղծած ատեն լուսազարդ շնորհքներով զգեստաւորած էր զայն, բայց մարդը իրեն տրուած պատիւին չգիտակցեցաւ ու կորսնցուց իր ունեցած փառքը, զգաց առանց Աստուծոյ շնորհքին իր «մերկութիւնը» (հմմտ Ծն 3.7): Քրիստոս եկաւ մարդը վերստին զգեստաւորելու իր աստուածաստեղծ փառքի պատմուճանով, եւ դուն սուրբ աւագանէն վերստին ծնունդով այդ պատմուճանը վերստին զգեցար. բայց հիմա կը

տեսնեմ որ քու անփութութեամբդ, հաւատքի կեանքիդ հանդէպ նախանձախնդրութեան պակասին հետեւանքով զայն կրկին անգամ մերկացեր ես, եւ ամօթալի մերկութեամբ մը կը ներկայանաս Աստուծոյ: Դարձի՛ր, հրաժարե՛ հպարտութենէդ ու սին պարծանքներէդ: Հարստութիւնը քեզ կենցաղային թուլութիւններու առաջնորդեր է, սրբագրե՛ զանոնք, մաքրե՛ կեանքդ, որովհետեւ Աստուծոյ համար մեր կեանքի զգեստն է կարեւորը, որ պէտք է անարատ «ճերմակ» ըլլայ, Աստուծոյ սրբութեան եւ փառքին իբրեւ արտացոլացումը երկրի վրայ:

3.- Ի վերջոյ՝ Լաւողիկիան ծանօթ եւ անուանի էր իր բժշկական դպրոցով, որ իր ժամանակին համար անսովոր, բացառիկ երեւոյթ մըն էր, որ իր ընդհանուր նշանակութենէն զատ՝ ունէր նաեւ յատուկ մասնագիտութիւն մը, աչքերու որոշ հիւանդութիւններ բուժող յատուկ դէղ մը, որուն ճիշդ ինչ ըլլալը չենք գիտեր, բայց որուն մասին պատմական վկայութիւն ունինք: Ամէն կողմէ մարդիկ այնտեղ կ'երթային իրենց աչքերու ցաւին դարման մը ունենալու համար: Եւ ասիկա պարծանք էր Լաւողիկիացիներուն համար:

Քրիստոս այս առաւելութիւնը եւս Լաւողիկիայի եկեղեցիին դէմ կը դարձնէ, իր դիտողութիւնը ընելու համար: Դուն, կ'ըսէ, ուրիշներու մարմնաւոր աչքերը բուժելով կը պարծենաս, սակայն դո՛ւն պէտք ունիս քու հոգիիդ աչքերը բանալու: «Դեղ դիր աչքերուդ, որպէսզի տեսնես»: Հիւանդոտ են այդ աչքերը, եւ լաւ չեն տեսներ. ուստի պէտք ունիս դէղ դնելու: Իսկ ի՞նչ է այդ դէղը, եթէ ոչ՝ որդեգրել աշխարհը եւ կեանքը դիտելու եւ դատելու Աստուծոյ հայեացքը եւ չափանիշը: Աշխարհը եւ մեր շրջապատը կարելի է դիտել սովորական մարդու հայեացքով եւ կամ հաւատքի աչքերով, այսինքն՝ Աստուծոյ հայեացքով, նայած թէ մենք ի՛նչպէս կը դիտենք, կը կշռենք կամ կը գնահատենք մեր շրջապատը եւ մեր կեանքը:

Առաջին հերթին, հարստութեամբ պարծեցող համայնք մը կամ անհատ մը ձգտումը ունի ամէն ինչ չափելու եւ արժեւորելու նիւթական արժողութեամբ, դրամով, նիւթական շահով կամ օգուտով: Մինչդէռ մարդուս կեանքը եւ փրկութիւնը կախեալ չեն դրամէն եւ հարստութենէն. սէրը, ազնուութիւնն ու բարութիւնը, առաքինութիւնները, բարեգործութիւնն ու յօժարական ծառայութիւնը դրամով պայմանաւոր չեն:

Երկրորդ, աշխարհի խորհողութիւնն ու չափանիշը որդեգրած համայնք մը կամ անհատ մը ինքնաբերաբար նոյն աշխարհին կենցաղակերպը կամ ապրելակերպը կ'որդեգրեն, եւ կ'իյնան հաւատքին հակասող երեւոյթներու մէջ: Մինչդէռ քրիստոնէան կոչուած է ո՛չ թէ այս աշխարհի մարդոց վարմունքը ընդօրինակելու, այլ՝ նորոգուած միտքով նոր մարդ ըլլալու, իր աշխարհահայեացքը փոխելու եւ նոր աշխարհահայեացք որդեգրելու, որպէսզի Աստուծոյ կամքին կատարողը ըլլայ (հմմտ Հո 12.2):

Երրորդ, աշխարհային բաներով պարծեցող համայնք մը կամ անհատ մը երկնաւորը կամ աստուածայինը փնտռող մը չէ, կա՛մ զայն չէ ունեցած բնաւ եւ չունի, եւ կամ՝ արդէն իսկ զայն ետին ձգած է ու մոռցած: Մինչդէռ Քրիստոսի կոչուած մարդը աշխարհայինն է որ իր ետին պէտք է ձգէ, իր հայեացքը միշտ դարձուցած դէպի առջեւ՝ գալիքին (հմմտ Փլպ 3.13), եւ ուշադրութիւնը դարձուցած վեր՝ Քրիստոսի եւ երկնաւոր բաներուն (Կղ 3.1-2):

Քրիստոս Լաւողիկիայի եկեղեցիին կը թելադրէ՝ փոխել իր հայեացքը եւ չափանիշները, բայց ատոր համար անհրաժեշտ է նախ սի՛րտը փոխել, զայն Աստուծոյ ներկայութեան կրակով բռնկեցնել, մաքրել եւ Աստուծոյ բնակարան դարձնել, որպէսզի հոգեւոր մահը նահանջէ եւ Կեանքը զայ մեր սրտի սեղանին բազմելու, մեզի հետ դէմ դիմաց:

Ներածական բաժինին մէջ հաւանական ենթադրեցինք, որ այս գիրքին մէջ յիշատակուած 7 եկեղեցիները 7 տարբեր երեսներ ըլլան եկեղեցւոյ կեանքին մէջ, կամ 7 հանգրուաններ ըլլան եկեղեցւոյ հետագայ պատմութեան մէջ: Արդ, հաւանական է որ այդ 7-րդ հանգրուանը արդէն եկեղեցւոյ պատմութեան ներկայ այն հանգրուանն է, ուր կը գտնուինք մենք՝ 20-րդ դարու աւարտին, մասնաւորաբար երբ նկատի ունենանք, թէ ի՛նչպէս ներկայ ժամանակին մարդկութիւնը իր հայեացքը ուղղած է միայն նիւթական արժէքներու, եւ ամբողջ կեանքը, աշխարհը, մարդիկը եւ նոյնիսկ զԱստուած կամ հաւատքի ճշմարտութիւնները կը փորձէ դատել ո՛չ թէ իրենց յատուկ չափանիշովը կամ արժէքովը, այլ՝ նիւթին յարաբերաբար, անմիջական շահերու յարաբերաբար, իսկ դրամը այլասերիչ է, ինչպէս կ'ըսէ Բ. Օրէնքի գիրքը, «Կաշառքը իմաստուններուն աչքը կը կուրցնէ, եւ արդարներուն խօսքերը կը թիւրէ» (Բ.Օր 16.19: Հմմտ Ելք 23.8): Եթէ մարդ կարենայ ինքզինք կտրել նիւթէն եւ նիւթը հետապնդելու ցանկութենէն, հաւանաբար կարենայ հասնիլ այնտեղ՝ ուր իսկապէս իր աչքերը բացուին եւ կարենայ ճշմարտութիւնը գնահատել իր եղած ձեւով:

Երկրորդ, ներկայ ժամանակը իրօք ճոխութեան ժամանակն է, երբ մարդիկ կը լողան դրամի եւ ամէն բանի առատութեան, նոյնիսկ շռայլութեան մէջ, եւ այդ ճոխութիւնը իրենց մոռցնել կու տայ այն հիմնական կարիքները, որ ունին հոգեւոր գետնի վրայ: Շռայլութիւնը, դիւրակեցութիւնը, զգայարանական դիւրին հաճոյքները մէկ կողմէ, եւ կեանքը թեթեւի առնելու եւ պատասխանատուութիւններու տակ չմտնելու բարոյալքիչ կարգախօսներն ու յայտնի թէ ծածուկ քարոզչութիւնը միւս կողմէ, այնպէ՛ս մը կը շփոթեցնեն միտքերը, կը շլացնեն աչքերը եւ կը պղտորեն հայեացքը, որ մարդս կը դժուարանայ տեսնելու ճշմարտութիւնը: Ուստի՝ Լաւողիկիայի եկեղեցիին ուղղուած Քրիստոսի կոչը՝

«Աչքերուդ դեղ դիր որպէսզի կարենաս տեսնել» մեզի համար եւս իր մեծ եւ կարեւոր տեղը եւ նշանակութիւնը կ'ունենայ:

«Ես իմ սիրած անձերս կը յանդիմանեմ ու կը խրատեմ. ուստի նախանձախնդիր եղիր եւ ապաշխարէ՛» (Խմբ 19): Դիտեցինք, որ այս եկեղեցին ունէր առաւելութիւն չի ներկայացներ, գովելի ունէր բան չունի, այլ՝ միայն դժգոհելի եւ յանդիմանելի կողմեր: Հակառակ այդ իրողութեան, Քրիստոս դարձեալ իր սերը կը յիշեցնէ: Եւ ասիկա այն ճշմարտութիւնն է, որ յաւերժօրէն Աստուածաշունչ Մատեանը կը յիշեցնէ բոլորիս.- Մէկ կողմէ՝ մարդուն անհաւատարմութիւնը, միւս կողմէ՝ Քրիստոսով յայտնուած Աստուծոյ սերը, որ պայման չի դնէր եւ չի ճանչնար, նկատի չ'ունենար մարդուն վիճակը, նկատի չ'ունենար մարդուն մտածելակերպը, խորհելակերպը, Աստուծմէ փախուստի մնայուն հոգեբանութիւնը եւ ճիգը, այլ, ընդհակառակը, կայուն եւ յարատեւ սիրով մը, «հաւատարիմ» սիրով մը կը սիրէ մարդ արարածը, այնպէս՝ ինչպէս Աստուծոյ յաւերժութեան, Աստուծոյ յաւիտենականութեան եւ հաւատարմութեան կը վայելէ:

Հոս նոյն սերը կը յիշեցնէ՝ անհաւատարիմ եւ արդէն գրեթէ իր հաւատքը կորսնցուցած եկեղեցիի մը: Թէպէտ,- կ'ըսէ,- ես քեզի նեղութիւն ալ կու տամ եւ պիտի՛ տամ, եւ նեղութեան այդ ժամանակը փորձիչ պիտի ըլլայ իսկապէս, բայց նեղութիւնը, խրատը, պատիժը երբեք չեն նշանակեր՝ թէ քեզ չեմ սիրէր. ընդհակառակը ատոնք սիրոյ արտայայտութիւն են: Նոյնը մեզի կը յիշեցնէ առաքեալը Եբրայեցիներուն նամակին մէջ. «Ո՛րդեակս, մի՛ արհամարհէր Տիրոջ խրատը, եւ մի՛ վհատիր երբ քեզ կը յանդիմանէ. որովհետեւ երբ Տէրը կը խրատէ՝ կը նշանակէ, թէ կը սիրէ քեզ. երբ կը պատժէ՝ կը նշանակէ թէ քեզ իբր զաւակ կ'ընդունի» (Եբր 12.5-6: Հմմտ Առ 3.11-12): Այո՛, Աստուծոյ կողմէ պատիժը սիրոյ պակաս չի՛ նշանակէր: Տէրը իր սիրածները աւելիո՛վ կը պատժէ: Եւ եթէ երկրաւոր մեր հայրերը մեզի ժամանակաւոր բարիք մը տալու համար մեզ

կը խրատեն, մեր յաւիտենական Հայրը մեզի ամբողջ յաւիտենականութիւն մը պարգեւելու համար այդ խրատը կամ պատիժը պիտի չտայ (հմմտ Եբր 12.9-11): Երանի անոր, որ կ'անդրադառնայ եւ կը ճանչնայ թէ իրեն ուղղուած այդ ազդարարութիւնները, հարուածներն ու նեղութիւնները Աստուծոյ սիրոյ արտայայտութիւնն են, ո՛չ թէ տհաճութեան կամ մերժումի իբրեւ նշան, ո՛չ թէ Աստուծոյ կողմէ տեսակ մը քինախնդրութեան կամ վրէժխնդրութեան իբրեւ դրսեւորում, այլ՝ ճիշդ հակառակը՝ Աստուծոյ կողմէ յաւելեալ կոչ մը, որ կրակէն անցնող ոսկիի պէս ըլլանք մենք ալ:

Փաստօրէն այդպէս ալ կ'ըսէ. «նախանձախնդիր եղիր եւ ապաշխարէ՛»: Անտարբերութիւնը մեռելութիւն է, որմէ պէտք է դուրս գայ Լաւոդիկիայի եկեղեցին: Աստուած թէ՛ դատապարտութեան վճիռը լսելի կը դարձնէ, եւ թէ՛ միաժամանակ ապաշխարութեան կոչ կ'ուղղէ: Աստուծոյ համար պատիժը չէ՛ վերջնական նպատակը, այլ մեղաւորին դարձը, որքան ատեն որ կայ ատոր հնարաւորութիւնը: Աստուծոյ համար ժամանակաւոր պատիժները չե՛ն կարելորը. անոնք միջոց մըն են՝ իր ժողովուրդը կամ քրիստոնէայ անհատը առաջնորդելու այն նպատակին, որուն կանչած է, որուն կը հրաւիրէ զայն: Հետեւաբար իբրեւ սիրոյ արտայայտութի՛ւն պէտք է ճանչնալ զանոնք եւ ապաշխարել, դառնալ չար ճամբայէն, վերադառնալ Աստուծոյ:

«Ահա ես դրան առջեւ եմ ու կը բաղխեմ: Եթէ մէկը իմ ձայնս լսէ եւ դուռը բանայ՝ ներս պիտի մտնեմ եւ անոր հետ պիտի ընթրեմ, ան ալ ինձի հետ» (հմր 20): Հնագոյն ժամանակներէն մարդոց սրտին եւ մտքին խօսած գեղեցկագոյն պատկեր մըն է պատկերը այն Փրկիչին, որ դրան ետին կանգնած՝ պատրաստ կը սպասէ ամէն վայրկեան ներս մտնելու. կը բաւէ որ մենք իր ձայնը լսելու եւ զինք ընդունելու պատրաստակամութիւնը, տրամադրութիւնը արտայայտենք, եւ անիկա անպայմանօրէն ներս պիտի մտնէ:

Ճիշդ է որ նիւթականօրէն, տեսանելիօրէն Քրիստոս մեզի հետ չէ, կամ մենք զայն մեր ֆիզիքական աչքերով կրնանք չտեսնել, բայց անհկա հոգեւորապէս միշտ մեր կողքին է: Դժբախտաբար մե՛նք է որ յաճախ չենք տեսներ Աստուծոյ ներկայութիւնը մեր կողքին, որովհետեւ, ինչպէս վերը ըսուեցաւ, մեր հայեացքը նիւթով պայմանաւորուած է, ժամանակաւոր տարրերով մշուշուած է. ուստի եւ չենք յաջողիր տեսնել այն ներկայութիւնը, որ կը թախանձէ, կը պահանջէ, նոյնիսկ կը խնդրէ՝ որ մենք անպայմանօրէն դառնանք իրեն, լսենք իր կոչը եւ սեղանակից ըլլանք իրեն, իր արքայութեան: Ամէն օր, եւ օրը օրին, Քրիստոս մեր խղճմտանքին ընդմէջէն իր խօսքը, իր կոչը կ'ուղղէ մեզի՝ մեզ արթնցնելու համար: Անդադար կը բաղխէ մեր սրտին դուռը, որպէսզի մենք տեսնենք մեր սխալը եւ այդ սխալէն նաեւ անդրադառնանք: Պատահական չէ, որ Հին եւ Նոր Կտակարանները մարդուս ներքին աշխարհին մաքրութիւնը կը կոչեն «սրտի թլփատութիւն», որ նիւթական իր պատկերացումին տակ կը նշանակէ՝ ներքին բոլոր չար տրամադրութիւնները, չար մտածելակերպը, չար խորհելակերպը, զգալու եղանակը եւ ուրիշներու հանդէպ չար վերաբերումը ամբողջութեամբ մերժել, կտրել եւ նետել, հեռացնել մեր սիրտերէն, եւ մաքրել զայն, Աստուծոյ համար իսկապէս տաճար մը դարձնելու համար: Միայն այդպիսի մաքուր տունի մը կամ տաճարի մը մէջ է որ Աստուած կը բնակի, եւ Քրիստոս ներս կու գայ՝ մեզի հետ ընթրիք ընելու համար:

Ընթրիք ընելու այս պատկերացումը հարկաւ ունէ մէկս նիւթական կերպով չենք հասկնար. բոլորս ալ գիտենք անոր հոգեւոր խորհրդական նշանակութիւնը: Արդ, ի՞նչ կը նշանակէ անհկա: Միասին ընթրիք ընելը Աստուծոյ եւ մարդուն կողմէ փոխադարձ արարք մը կ'ենթադրէ: Աստուծոյ կողմէ, այդ ընթրիքը հրամցնելը մեզի՝ Տիրոջ կողմէ պարգեւուած Աստուծոյ խօսքն է, անոր վայելքը մեզի եւ անոր

բերած բոլոր տեսակի բարիքները մեր կեանքին մէջ, որով մեր սովահար հոգիները կը կերակրէ, այնպէս ինչպէս Եսայիի մարգարէութեան մէջ ալ կ'ըսէ. «Ո՛վ բոլոր ծարաւածներ, ջուրերուն եկէք. ո՛վ դրամ չունեցողներ, եկէ՛ք, ծախու առէք ու կերէ՛ք. եկէ՛ք, առանց դրամի, առանց գին վճարելու գինի ու կաթ ծախու առէք» (Ես 55.1): Աստուծոյ ընծայածը ո՛չ մարմնաւոր հաց է, ո՛չ նիւթական ջուր, այլ իր խօսքին սնուցումն է, իր անմահաբար խօսքին հացն ու ջուրը, որպէսզի մեր ներքին հոգեւոր սովը անցընէ, եւ Աստուծոյ փափաքող մեր հոգին եւ սիրտը գտնեն զԱստուած եւ յազենան իրմով:

Իսկ հաւատացեալին կողմէ ընծայուածը՝ Աստուծոյ կամքին կատարումն է՝ խոնարհ սրտով եւ ամբողջական հնազանդութեամբ, մնայուն գոհաբանութեամբ, օրհնութեամբ, գոհունակութեամբ, շնորհակալութեամբ եւ աղօթքով, եւ ուրիշներուն ընծայուած սիրոյ անվերապահ ծառայութեամբ: Ասոնք են Աստուծոյ կամեցած ուտելիքը եւ սնունդը իրեն համար, այնպէս ինչպէս Քրիստոս պիտի ըսէր. «Իմ կերակուրս այն է՝ որ գործադրեմ զիս դրկողին կամքը եւ լրումին հասցնեմ անոր գործը» (Յհ 4.34): Նոյն բանը ճշմարիտ է թէ՛ մարդուն համար եւ թէ՛ Աստուծոյ: Աստուծոյ կամքը կատարելը եթէ մեզի համար հոգեւոր սնունդ է, նոյնը Աստուծոյ համար մեր կողմէ իրեն հրամցուած ընթրիքն է, մեր կողմէ իրեն հրամցուած անուշահոտ Պատարագը եւ սեղանն է, եւ այս պարագային սեղանը կը դառնայ այն իսկական հաղորդութիւնը, երբ մեր Տէրը ինք եւ մենք նոյն սեղանը կը նստինք, նոյն սեղանէն ճաշակելու համար իր հոգեւոր, խորհրդական իմաստով:

«Ո՛վ որ յաղթանակէ՝ անոր իրաւունք պիտի տամ նստելու ինձի հետ իմ գահիս վրայ, այնպէս՝ ինչպէս ես յաղթեցի եւ բազմեցայ Հօրս հետ իր գահին վրայ» (հմբ 21): Այստեղ, յաղթանակողին տրուած խոստումն է՝ գահակից ըլլալ իրեն՝

Քրիստոսի, ինչպէս նոյն խոստումը տեսանք 2.26-27ին մէջ, թեթեւակիօրէն տարբեր բացատրութեամբ մը:

Երբոր մենք Աստուծոյ խոստումին եւ հրահանգին կամ պատուիրաններուն լսողը կը մնանք, անպայման նաեւ իրաւունքը կ'ունենանք յաղթանակողներու խումբին մէջ դասուելու, եւ Աստուած կը խոստանայ իր փառքին եւ իր թագաւորութեան մասնակից դարձնել մեզ, որպէսզի ինչպէս Ինք յաղթեց աշխարհին՝ մենք ալ աշխարհին յաղթող ըլլանք եւ Իրեն պէս բազմինք այն գահերուն վրայ, որ մեզի պիտի ընծայէ: Իսկ գահ եւ աթոռ վստահաբար կը նշանակեն այն անվախճան, յաւիտենական, հանդերձեալ կեանքը եւ այն հանդերձեալ հանգիստը, որ Աստուած կը խոստանայ տալ բոլոր իրեններուն:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱԻԱՏԱՄՔԻՆ
ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ

ՀԱԻԱՏԱՄՔ

ԻՆՉ Է ՀԱԻԱՏԱՄՔԸ

Հաւատամքը մեր հաւատքին արտայայտութիւնն է: Հաւատք ըսելով կը հասկնանք երեք բան.- 1) Աստուծոյ վրայ մեր վստահութիւնը եւ անմիջականօրէն մեր չտեսած ճշմարտութիւններուն մեր համոզուածութիւնը: 2) Կեանքով կամ գործերով արտայայտուած հաւատքը: 3) Մեր հաւատացած ճշմարտութիւններուն ամբողջութիւնը: Հաւատամքը այս վերջինն է, խտացած վիճակով:

Քրիստոնէական հաւատքի ճշմարտութիւնները Քրիստոս ինք յայտնեց մեզի, թէ՛ Հին Կտակարանով գրաւորապէս, թէ՛ իր մարդեղութեանը մէջ՝ բերանացի: Առաքելները այս ճշմարտութեանց պահապանները եւ փոխանցողները եղան, թէ՛ բերանացի քարոզութեամբ, եւ թէ՛ գրաւորապէս, Նոր Կտակարանի գիրքերուն մէջ:

Եկեղեցին ժառանգեց այդ ճշմարտութեանց աւանդը, եւ զայն նախանձախնդրօրէն պահեց առաքելական յաջողութեամբ:

ԻՆՉՊԷՍ ԾՆՈՒՆԴ ԱՌԱԻ ՀԱԻԱՏԱՄՔԸ

Քրիստոնէութեան առաջին իսկ դարէն, Եկեղեցւոյ մէջ եւ անոր կողքին յայտնուեցան աղանդներ, կամ հերձուածներ, որոնք ճշմարիտ հաւատքէն շեղած անձեր կամ խմբակցութիւններ էին: Սխալ վարդապետութիւններ սկսան տարածուիլ ըլլա՛յ Աստուծոյ ինքնութեան վերաբերեալ, ըլլա՛յ աշխարհի ստեղծագործութեան, ըլլա՛յ ամենասուրբ Երրորդութեան հասկացողութեան, ըլլա՛յ Քրիստոսի

ինքնութեան (աստուածութեան կամ, մարդեղութեան), ըլլա՛յ Սուրբ Հոգիին աստուածութեան վերաբերեալ, եւլն:

Աղանդները պատճառ եղան, որ Եկեղեցին շատ կանուխէն իր հաւատքը արձանագրէ խտացեալ ձեւով, որպէսզի ճշմարիտ հաւատացեալները զայն սորվին եւ այդպէս դաւանին իրենց հաւատքը: Այս խտացեալ դաւանութիւնները կը կոչենք «Հաւատքի Հանգանակ»: Տեղական եկեղեցիները իրենց հանգանակները ունէին, որոնք թէպէտ թեթեւ տարբերութիւններ ունէին իրարմէ, բայց հիմնական կէտերը նոյնն էին: Հնագոյններէն մէկը կը կոչուի «Առաքելական Հանգանակ»:

4-րդ դարուն լայն տարածում գտաւ Արիոս Աղեքսանդրացիի եւ իր հետեւորդներուն աղանդը, որ կ'ուրանար Քրիստոսի աստուածութիւնը: Այս աղանդին դէմ պայքարելու համար, տարբեր եկեղեցիներէ 318 հայրապետներ հաւաքուեցան Փոքր Ասիայի Նիկիա քաղաքին մէջ 325 թուականին: Ասոնց մէջ էր նաեւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի որդին եւ յաջորդը՝ Սուրբ Արիստակէս: Նիկիոյ ժողովը վաւերացուց բոլոր եկեղեցիներուն կողմէ ճանչցուած հանգանակ մը, որ ժողովին անունով կոչուեցաւ Նիկիական Հանգանակ: Այս հանգանակը զօրեղապէս կը շեշտէր Քրիստոսի աստուածութիւնը եւ մեր փրկութեան համար ճշմարիտ մարդեղութիւնը:

Նոյն դարուն արծարծուած երկրորդ մեծ հարցը Սուրբ Հոգիին աստուածութիւնն էր, որ կարգ մը աղանդաւորներ կ'ուրանային: 381 թուականին, Կոստանդնուպոլսոյ մէջ գումարուեցաւ ժողով մը, 150 հայրապետներու ներկայութեամբ, որ հռչակեց Սուրբ Հոգիին աստուածութեան մասին եկեղեցւոյ հաւատքը: Ժողովը այդ առիթով վաւերացուց արդէն գոյութիւն ունեցող հանգանակ մը, որուն վրայ Սուրբ Հոգիին բաժինը որոշապէս կ'արտայայտէր Եկեղեցւոյ հաւատքը:

Այս ձեռով լրացած Հաւատամքը կամ Հաւատքի Հանգանակը ընդունուեցաւ բոլոր եկեղեցիներուն կողմէ, եւ դարձաւ ուղղափառութեան նշան:

Հայ Եկեղեցւոյ գործածած Հանգանակը, որ Նիկիական կը կոչուի, բուն Նիկիականը չէ, այլ՝ անոր լրացուած տարբերակը:

ՀԱՒԱՏԱՄՔԸ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆ

1.- Եկեղեցին հաւատքի համայնք մըն է: Այսինքն՝ հաւատացող համայնք մըն է, միակ հաւատքի մը շուրջ խմբուած եւ միակ հաւատքով մը կապուած համայնք մըն է:

Հաւատամքը արտացոլացումն է այդ հաւատքին: Ո՛չ միայն խտացումն է Եկեղեցւոյ հաւատալիքներուն, այլ նաեւ հաւատքի փորձառութեան: Այլ խօսքով, մենք անոր մէջ կը կարդանք պատմութիւնը այն հանգրուաններուն, որոնցմէ անցաւ այդ հաւատքը՝ հասնելու համար մինչեւ մեր օրերը:

2.- Եկեղեցին խոստովանող համայնք մըն է: Խոստովանիլ բայը այստեղ կ'արտայայտէ՝ ոեւէ ճշմարտութիւն ճանչնալ, ընդունիլ եւ յայտարարել իմաստը: Կ'ըսենք նաեւ՝ դաւանիլ: Ճշմարտութեան ոեւէ հետեւորդ՝ իր ճանչցած եւ ընդունած ճշմարտութիւնը պէտք է խոստովանի կամ դաւանի յայտնապէս, այլապէս ճշմարտութեան հետեւորդ մը չէ (Մտ 10.32-33: Հո 10.9-10): Հետեւորդութիւնը տեսական չէ, այլ՝ գործնական:

Հաւատամքը հիմն է Եկեղեցւոյ դաւանութեան, որով մենք կ'արտայայտենք Քրիստոսի մեր պատկանելիութիւնը, մեր ինքնութիւնը:

3.- Եկեղեցին հաւաքական մարմին մըն է: Պօղոս առաքեալ Քրիստոսի Եկեղեցին կը ներկայացնէ իբրեւ Քրիստոսի Մարմինը: Միակ մարմին մը՝ բազմաթիւ անդամներով: Իսկ այդ անդամները տեղական եկեղեցիներն են, ինչպէս նաեւ իւրաքանչիւր եկեղեցին բաղկացնող

անդամները՝ առանձնաբար ու հաւաքաբար: Հաւատամքը
հիմն է Եկեղեցւոյ միութեան:

ՀԱԻԱՏԱՄՔԻՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Շատ կարեւոր է գիտնալ, որ մեր Հաւատամքը զուտ Աստուածաշնչական տուեալներու վրայ կը հիմնուի: Կարելի է ըսել, որ անիկա Աստուածաշնչական ճշմարտութեանց խտացումը եւ համագումարն է: Մէկ բացառութեամբ, բոլոր բառերն ու բացատրութիւնները Աստուածաշունչէն քաղուած են, եւ ատիկա կարելի է անձամբ ալ ստուգել՝ աչքի առջեւ ունենալով հետեւեալ պատկերը.-

Կը հաւատանք (Յհ 4.42, 6.70, 9.38, 16.30: Բ.Կր 4.13: Գրծ 8.37: Բ.Կր 4.13):

մէկ Աստուծոյ, (Բ.Օր 6.4):

Ամենակալ Հօր, (Բ.Կր 6.18: Յյտ 1.8, 21.22: Ա.Կր 8.6: Եփ 4.6):

որ արարիչն է երկինքին ու երկրին, (Օն 1.1, 14.19 22. Ես 40.28):

տեսանելի եւ անտեսանելի ստեղծուածներուն: (Կղ 1.16: Եբր 11.3):

Կը հաւատանք մէկ Տէր Յիսուս Քրիստոսի, (Գրծ 2.36: Հո 10.9: Ա.Կր 8.6):

Աստուծոյ Որդիին, (Մտ 3.17: Ղկ 1.35: Հո 1.4: Ա.Յհ 5.5):

որ Հօր Աստուծմէ ծնած է (Եբր 1.5):

որպէս միակ ծնունդ (Միածին) (Յհ 1.14, 3.16):

այսինքն՝ Հօրը էութենէն է: (Յհ 10.30: Կղ 2.9: Բ.Յհ 3):

Աստուած է՝ Աստուծմէ ծնած, (Յհ 1.1):

Լոյս է՝ Լոյսէն յառաջ եկած: (Յհ 1.9, 8.12, 9.5: Ա.Յհ 1.5):

Ճշմարիտ Աստուծմէն ծնած ճշմարիտ Աստուած է (Ա.Յհ 5.20: Եբր 1.5):

եւ ո՛չ արարած:

Անիկա Հօրը բնութենէն է: (Եբր 1.3):

Իրմով ստեղծուած է ամէն ինչ (Յհ 1.3: Եփ 3.9):

որ կայ երկինքի մեջ եւ երկրի վրայ, տեսանելի թէ անտեսանելի: (Կդ 1.15-17):

Ինքն էր որ մեզի՝ մարդերուս

եւ մեր փրկութեան համար երկինքէն իջաւ (Յհ 3.13: Գդ 4.4):

եւ մարմին առաւ, մարդացաւ, (Յհ 1.14: Հո 1.3):

Սուրբ Հոգիին ներգործութեամբ սուրբ կոյս Մարիամէն ծնելով (Մտ 1.18, 20):

որպէս կատարեալ մարդ՝ մարմինով, հոգիով եւ միտքով, (Հո 8.3):

եւ ամէն ինչով որ մարդկային է. (Եբր 2.14, 4.15):

ո՛չ թէ երեւութապէս, այլ ճշմարտապէս: (Ա.Յհ 4.2-3: Բ.Յհ 7):

Չարչարուեցաւ, (Մտ 26.67-68, 27.28-30: Մր 14.65, 15.17-19: Ղկ 22.63-65):

խաչուեցաւ, (Մտ 27.33-37):

թաղուեցաւ, (Մտ 27.57-60):

երրորդ օրը յարութիւն առաւ, (Մտ 28.1-6):

նոյն մարմինով երկինք ելաւ (Մր 16.19: Ղկ 24.51: Գրծ 1.11):

եւ Հօրը աջ կողմը նստաւ: (Մր 16.19: Գրծ 7.55):

(Կր հաւատանք նաեւ) թէ վերստին պիտի գայ, (Գրծ 1.11: Ա.Թս 4.16):

նոյն մարմինով եւ Հօրը փառքով, (Մտ 16.27, 24.30, 25.31):

ողջերն ու մեռածները դատելու. (Յհ 5.22-24):

ինք՝ որուն թագաւորութիւնը անվախճան է: (Յյտ 11.15):

Կր հաւատանք անեղ եւ կատարեալ Սուրբ Հոգիին, (Բ.Կր 3.17):

որ իսուեցաւ Օրէնքին, մարգարէներուն (Բ.Պտ 1.21: Ղկ 1.70: Գրծ 1.16):

եւ Աւետարաններուն ընդմեջէն. (Գրծ 28.25: Բ.Տմ 3.16):

որ Յորդանան գետին վրայ իջաւ, (Մտ 13.13, 16):

առաքեալներուն ուսուցանեց (Յհ 14.26):

եւ սուրբերուն մէջ բնակեցաւ: (Ա.Կր 6.19):
 կը հաւատանք նաեւ մէկ, ընդհանրական (Կղ 1.18, 24:
 Ա.Տմ 3.15):
 եւ առաքելական (սուրբ) Եկեղեցիին. (Եփ 1.22-23, 2.19-21,
 4.16):
 մէկ մկրտութեան, (Եփ 4.5):
 ապաշխարութեան, (Գրծ 2.38):
 մեղքերու քաւութեան եւ թողութեան. (Ա.Յհ 1.9):
 մեռելներու յարութեան, (Ա.Թս 4.16: Յհ 6.40):
 հոգիներու եւ մարմիններու յաւիտենական
 դատաստանին, (Յհ 5.28-29):
 երկինքի արքայութեան հաստատումին (Մտ 19.14: Բ.Տմ
 4.18):
 եւ յաւիտենական կեանքին: (Յհ 6.40):

Ամէն անգամ որ կ'արտասանենք մեր հաւատքի
 հանգանակը, յիշենք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խօսքը.-

*«Ով որ մարդոց առջեւ դաւանի թէ ինձի կը հետեւի, ես ալ
 զայն ինձի հետեւորդ պիտի դաւանիմ Հօրս դիմաց, որ
 երկինքի մէջ է: Իսկ ով որ զիս ուրանայ մարդոց առջեւ,
 նոյնպէս ալ ես զինք պիտի ուրանամ Հօրս դիմաց, որ երկինքի
 մէջ է» (Մտ 10.32-33):*

Եւ չմոռնանք Պօղոս առաքելի սա կարեւոր յորդորը.-

*«Եթէ բերանովդ խոստովանիս թէ Յիսուս Տէր է, եւ սրտիդ
 մէջ հաւատաս թէ Աստուած զինք մեռելներէն յարուցանեց, կը
 փրկուիս: Այսինքն, ոեւէ մէկը որ իր սրտին մէջ կը հաւատայ
 կ'արդարանայ, եւ երբ բերանով խոստովանի՝ կը փրկուի» (Հո
 10.9-10):*

ՀԱԻԱՏԱՄՔ

*«Հաւատամք ի մի Աստուած,
ի Հայրն ամենակալ,®
եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս,®
եւ ի Սուրբ Հոգին»:*

1.- Աստուած եւ աստուածաբանութիւն: Աստուածաբանութիւնը այն գիտութիւնն է, որ կը խօսի Աստուծոյ մասին, եւ կը քննէ հաւատքին վերաբերող բոլոր երեսները: Այդ գիտութեան հիմը Աստուածաշունչն է, առանց որուն՝ աստուածաբանութիւնը ռեւէ բան չի հաստատեր: Բայց աստուածաբանութեան մէջ մտածողութեան այն կերպը, որ կը գործածուի՝ իմաստասիրական (փիլիսոփայական) մտածողութեան կերպն է:

2.- Կրնա՞նք ճանչնալ զԱստուած: Աստուած իր բնութեամբ անճանաչելի է, այսինքն՝ կարելի չէ ճանչնալ: Մենք զԱստուած ճանչնալու երկու հիմնական կերպեր ունինք.-

ա) Յայտնութիւնը, այսինքն՝ Աստուածաշունչը եւ բերանացի յայտնութիւնը: Մենք զԱստուած կը ճանչնանք միայն այնքան՝ որքան որ ինք ինքզինք յայտնած է մեզի անցեալին՝ նահապետներուն եւ մարգարէներուն միջոցաւ, եւ ներկայ ժամանակին՝ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ:

բ) ՉԱստուած կը ճանչնանք իր գործերէն, այսինքն՝ ստեղծագործութենէն եւ իր նախախնամութենէն:

3.- Աստուած եւ գիտութիւն: Գիտութիւնը չ'ըզբաղիր Աստուծոյ հարցով, ոչ ալ աստուածային ճշմարտութիւններով: Անոր առարկան տիեզերքն է, աշխարհը եւ մարդը: Միւս կողմէ, աստուածաբանութիւնը գիտութիւն է որոշ իմաստով, որովհետեւ իր

եզրակացութիւններուն համար Աստուածաշունչէն զատ (եւ Աստուածաշունչէն անկախ) կը հիմնուի մարդկային միտքի դատողութեան եւ ապացոյցներու վրայ: Օրինակ, անհաւատի մը խօսած ատեն կարելի չէ Աստուծոյ գոյութիւնը ապացուցանել Աստուածաշունչով: Պէտք է խօսիլ՝ միտքին դիմելով: Արդ, մարդկային միտքին համար Աստուծոյ գոյութեան ապացոյցներն են.-

ա) Աշխարհին գոյութիւնը: Ոեւէ բան ինքնիրեն չի գոյանար. անհրաժեշտօրէն բացարձակ Գոյութիւն մը պէտք է ըլլայ պատճառը բոլոր տեսանելի եւ անտեսանելի գոյութեանց: Ամէն ինչ միակէ մը կը սկսի, եւ առաջին ու բացարձակ Միակը Աստուած է:

բ) Շարժումին գոյութիւնը: Նիւթը ինքնին անկեանք եւ անշարժ է, եթէ իրմէ դուրս շարժիչ մը չունենայ: Այդ շարժիչը ինք նիւթ եւ նիւթէդէն չի կրնար ըլլալ. պէտք է աննիւթ Գոյութիւն մը ըլլայ, որ Աստուած է:

գ) Տիեզերական կարգաւորութեան գոյութիւնը: Այս կարգաւորութիւնը պատահականութեան ծնունդը չի կրնար ըլլալ: Ինքնիրեն ձգուած բնութիւնը դէպի անկարգութիւն կ'երթայ: Կարգաւորութիւնը տիեզերքին ետին գործող Մեծ Միտքի մը կամ Բանականութեան մը արդիւնքը միայն կրնայ ըլլալ:

դ) Մարդուն մէջ անհունին հասնելու փափաքը, կատարելութեան ցանկութիւնը, անմահութեան ձգտումը, բարոյական հասկացողութեանց եւ խղճմտանքին գոյութիւնը կը հաստատեն Աստուծոյ գոյութիւնը:

4.- Մէկ Աստուածութիւն եւ Սուրբ Երրորդութիւն: Աստուած մէկ է: Ամբողջ Աստուածաշունչը կը խօսի այս միակութեան մասին, եւ անդադար կը շեշտէ զայն, զգուշացնելու համար բազմաթիւ աստուածներ պաշտելու մոլորութենէն, որ մարդիկը Աստուծմէ հեռացնելու սատանայական հնարքն է:

Աստուած մէկ է: Հին Կտակարանին մէջ անիկա ինքզինք կը յայտնէ իբրեւ Ամենակալ Աստուածը, Ամենակարող Աստուածը, Յաւիտենական Աստուածը, «Ան՝ որ է» (Ել 3.14, 6.3): Նոր Կտակարանին մէջ Աստուած ինքզինքը կը յայտնէ իբրեւ Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի:

«Երրորդութիւն» բառը չկայ Աստուածաշունչին մէջ, բայց անոր հասկացողութիւնը կամ վարդապետութիւնը կու գայ Աստուածաշունչէն, Հին Կտակարանի մէջ քօղարկուած ձեւով, իսկ Նոր Կտակարանի մէջ՝ բացայայտօրէն (Մտ 28.19: Բ.Կր 13.13: Հմմտ Ա.Կր 12.4-6):

Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին երեք անձեր են, բայց ո՛չ երեք Աստուածներ: Անոնք մէկ եւ նոյն Աստուածն են: Իրենց բնութեամբ եւ յատկութիւններով, իրենց կամքով ու գործով, իրենց կարողութեամբ եւ իշխանութեամբ նոյնն են անոնք, բայց իրենց ներքին կապերով եւ յարաբերութիւններով կը զանազանուին, առանց երբեք շփոթուելու իրարու հետ: Օրինակ.-

Ինչպէս մաղկային հոգի ըսելով երեք բաներ կը հասկնանք.- կամքը, որմէ ծնունդ կ'առնէ միտքը, եւ որմէ կը բղխի կարողութիւնը. եւ այս երեքը՝ կամք, միտք եւ կարողութիւն, երեք անշփոթելի բաներ ըլլալով հանդերձ՝ երեք հոգիներու մասին չենք խօսիր, այլ մէկ եւ միակ հոգիի մասին: Նոյնն է երեք անձնաւորութեանց պարագային, որոնք մէկ եւ միակ ճշմարիտ Աստուածն են:

5.- Հայրն Աստուած: Աստուած ամէն բանի սկիզբն է, սկիզբը սկիզբներուն, միակ սկիզբը ամէն բանի, ինքը ըլլալով միակ անսկիզբը: Այս ճշմարտութիւնը կը վերաբերի Սուրբ Երրորդութեան, բայց յատուկ կերպով զայն կը մասնաւորենք Հայր Աստուծոյ համար: Որդին եւ Սուրբ Հոգին թեպէտ անսկիզբ են եւ անժամանակ, բայց իրենց պատճառը եւ սկիզբը ունին Հօր Աստուծոյ մէջ, այնպէս՝ ինչպէս ճառագայթն ու ջերմութիւնը արեւէն սկիզբ կ'առնեն բայց անոր հետ

միաժամանակ կան (եւ ո՛չ թէ յետոյ), որովհետեւ արեւ չկայ առանց ճառագայթի եւ ջերմութեան:

6.- Աստուած Հայրը՝ աստուածութեան եւ ապագայ Եկեղեցւոյ Ընտանիքին յարաբերաբար: «Հայր» կոչումը Սուրբ Երրորդութեան առաջին անձնաւորութեան կու տանք, որովհետեւ Որդին ինք, մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս, միշտ այդպէս կոչեց զայն: Այդ անունը մարդկային հայրութեան հասկացողութեան հետ նմանութիւն ունի բայց նոյնը չէ: Հայր մը իր որդիին հետ նոյն բնութիւնը ունի, բայց տարիքով ու փորձառութեամբ անկէ մեծ է, նկարագրով, կամքով ու գործով անկէ տարբեր է: Այդպէս չէ Աստուծոյ Որդիին եւ Հօրը պարագային: Որդին ո՛չ միայն Հօրը բնութիւնը ունի, այլ նաեւ նոյն կամքը, նոյն իշխանութիւնը, նոյն փառքը եւ պատիւը: Անիկա *«Հօրը փառքին յոյսը եւ անոր էութեան ճշգրիտ պատկեր»*ն է (Եբր 1.3): Բայց Որդի կը կոչուի՝ մեզի համար, մեզի սորվեցնելու համար՝ թէ ի՛նչպէս կրնանք ճշմարիտ եւ կատարեալ որդիներ ըլլալ Աստուծոյ:

Եւ արդարեւ Աստուած Հայր է նաեւ մեզի համար: Այս հայրութիւնը բնութենական չէ, այսինքն՝ մենք Հօրը բնութենէն ծնած չենք: Մեր պարագային Աստուծոյ հայրութիւնը հոգեւոր է. մենք հաւատքի ճամբով Աստուծոյ որդեգիրներ ենք: Որովհետեւ Աստուծոյ յաւիտենական ծրագիրն է՝ մարդոցմէ իրեն ժողովուրդ մը կազմել, եւ այդ ժողովուրդը իր սեփական «ընտանիքը» դարձնել: Այդ ժողովուրդը եւ ընտանիքը Աստուծոյ Եկեղեցին է, որ մենք բոլորս ենք (Եփ 2.19): Ահա թէ ինչու՝ Հաւատամքին մեջ երբ կ'ըսենք՝ *«Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն ամենակալ»* (Կը հաւատանք մէկ Աստուծոյ՝ ամենակալ Հօր), անով նաեւ կ'արտայայտենք մեր որդիութիւնը Աստուծոյ, եւ մեր կոչումը՝ իբրեւ Աստուծոյ Ընտանիքին անդամները:

ՀԱԻԱՏԱՍՔ

*«Յարարիչն երկնի եւ երկրի,
երևելեաց եւ աներևութից»:*

Առաջին հերթին այս բացատրութիւնը պատասխան մըն էր Գնոստիկեան աղանդաւորներուն, որոնք կը մերժէին Արարիչ Աստուածը ճանչնալ որպէս ճշմարիտ Աստուածը: Անոնց համար Հին Կտակարանի Աստուածը, որ Հին Կտակարանի առաջին իսկ էջին վրայ կը ներկայանայ իբրեւ երկինքի եւ երկրի արարիչը, ճշմարիտ Աստուծմէն տարբեր է, անկէ ստորադաս (այսինքն՝ անկէ վար, անոր ենթակայ), մինչ, կ'ըսէին,- ճշմարիտ Աստուածը գործ չունի նիւթեղէն չար աշխարհին հետ: Այստեղ այս բացատրութեամբ Եկեղեցին կ'արտայայտէ իր հաւատքը՝ մէկ եւ միակ Աստուծոյ մը հանդէպ, որ նոյնինքն Հին Կտակարանի Աստուածն է, երկինքի եւ երկրի արարիչը:

1.- Արարչութիւն տիեզերքի, հրեշտակներու, մեր աշխարհին եւ մարդուն:

Աստուած ստեղծագործութեան առաջին իսկ պահուն «ստեղծեց երկինքն ու երկիրը»: Ամէն ինչ գոյութեան եկաւ ոչինչէն, Աստուծոյ խօսքով կամ հրամանով (Սղ 33.6-9):

Ստեղծագործութեան երկրորդ հանգրուանը եղաւ անոր կարգաւորումը: Ամէն ինչի համար Աստուած կարգ ու կանոն դրաւ, ջուրերէն դուրս բերաւ ցամաքը:

Ստեղծագործութեան երրորդ հանգրուանը եղաւ՝ զայն կեանքով լեցնելը: Նախ բուսական կեանքը, յետոյ կենդանականը, եւ ի վերջոյ բանականը կամ մարդկայինը:

Ե՛րբ ստեղծուեցան «անտեսանելիները», հոգեղէն էակները, այսինքն՝ հրեշտակները: Թէպէտ Ծնունդներու գիրքին առաջին գլուխին մէջ կը թուի թէ այդ մասին տեղեկութիւն մը չունինք, բայց Աստուածաշունչը յստակօրէն

կը վկայէ այդ մասին (Մդ 104.4): Անոնք ստեղծուեցան իբրև «լոյս», այսինքն՝ լուսեղէն արարածներ, ստեղծագործութեան առաջին օրը: Սուրբ Ներսէս Շնորհալի Կիրակիին առաջին օրուան իր երգին մէջ կ'ըսէ.-

«Նորաստեղծեալ բանն յանէից ի սկըզբանէ գերկինս երկնից,

եւ գերկնային զօրս անմարմնոցն իմանալեացըն զըւարթնոց,

եւ ըզգալի տարերց քառից հակառակաց միաբանից.

որով յաւէտ փառաբանի Երրորդութիւն անճառելի»:

Հաւատամքը յատուկ կերպով կը շեշտէ, թէ Աստուած է «արարիչը տեսանելի թէ անտեսանելի (արարածներուն)», հերքելու համար կարգ մը աղանդներու եւ իմաստասիրութեանց այն սխալ կարծիքը, թէ հոգեղէն անտեսանելի արարածները ո՛չ թէ ստեղծուած են, այլ՝ Աստուծոյ բանական էութենէն յառաջ եկած: Հաւատամքը յստակօրէն կը հաստատէ, թէ բոլոր գոյութիւններն ալ, հոգեղէն ըլլան թէ մարմնաւոր, մեզի համար տեսանելի ըլլան թէ անտեսանելի, ստեղծուած են միակ Արարիչէն, Աստուծոյ կողմէ:

2.- Նախախնամութիւն:

Աստուած միայն տիեզերքի ստեղծիչը չէ, այլ նաեւ՝ նախախնամողը, այսինքն՝ զայն խնամողը, պահողը, անոր մասին հոգացողը, աշխարհին եւ մարդուն վիճակով զբաղողը: Ասիկա սիրող եւ «Հայր» Աստուծոյ մը՝ ճշմարիտ հասկացողութիւնն է, ամբողջութեամբ տարբեր՝ աշխարհի շատ մը կրօններու եւ իմաստասիրութիւններու ցուրտ հասկացողութենէն, որ զԱստուած կը պատկերացնէ իբրև աշխարհէն հեռու, անկէ ամբողջապէս ինքզինք կտրած արարիչ մը կամ անհաղորդ բանականութիւն մը:

3.- Արարչութիւնը իր հրաշալիքներով - «Բարի»:

Աստուածաշունչը իր առաջին էջով իսկ կը յայտարարէ, թէ Աստուած ի՛նք ամէն ինչ ստեղծեց, եւ «տեսաւ որ բարի է»: Ասով Աստուածաշունչը կը հաստատէ, թէ Աստուծոյ ամբողջ ստեղծագործութիւնը բարի է, որովհետեւ ստեղծիչը ինք գերագոյն Բարին է: Իրօք, երբ կը ճանչնանք մեզ շրջապատող աշխարհը, տիեզերքը, մեր միտքն ու սիրտը կը լեցուին հմայքով: Ամէն ինչ կը վկայէ գերագոյն եւ հոգածու Բանականութեան մը մասին, որ ամէն ինչ ստեղծած է ինքն իր մէջ հրաշալի կատարելութեամբ: Իրապէս որ երկինք եւ երկիր Տիրոջ փառքով լեցուն են, անոր մասին կը վկայեն եւ անոր փառքը կը պատմեն (Ես 6.3: Սղ 19.1):

Հաւատամքը յստակօրէն կը հաստատէ, թէ Աստուծոյ բոլոր ստեղծածներն ալ բարի են. ո՛չ միայն հոգեղէնները, այլ նաեւ մարմնաւորները: Ասիկա կ'ընէ՝ հերքելու համար կարգ մը աղանդներու եւ իմաստասիրութեանց այն սխալ կարծիքը, որ նիւթը, այսինքն՝ մեր մարմինը կը նկատէ չար եւ չարիքի աղբիւր: Ճշմարտութիւնը սակայն հակառակն է: Նիւթը կամ մարմինը Աստուծմէ ստեղծուած է, եւ ուստի բարի է:

4.- Արարչութեան ներկայ վիճակը: Ուրկէ՞ չարը, եւ ի՞նչ է չարը:

Երբ մեր շուրջ եւ աշխարհը կը դիտենք, անշուշտ կը տեսնենք նաեւ չարը, չարիքը, որ մեզ կը տագնապեցնէ եւ յաճախ անպատասխան հարցումներու դիմաց կը դնէ: Ուրկէ՞ կու գայ չարը, ի՞նչ է անիկա, այսքան տարածուն եւ երեւութապէս անյաղթահարելի:

Որոշ կրօններ չարին գոյութիւնը ճանչնալով հանդերձ՝ կը փորձեն մերժել զայն, ըսելով՝ թէ անիկա իրական չէ, այլ՝ պատրանք է պարզապէս: Մենք գիտենք, սակայն, որ անիկա անուրանալի իրականութիւն մըն է: Հետեւաբար, ուրկէ՞ եւ ինչո՞ւ չարը:

Աստուածաշունչը չարին իրականութիւնը ճանչնալով հանդերձ՝ ցոյց կու տայ թէ չարը Աստուծոյ կողմէ ստեղծուած

չէ: Անիկա արդիւնքն է մարդուն ազատ կամքին եւ գործերուն: Աստուած մարդուն տուած է բացարձակ ազատութիւնը՝ ընտրելու եւ ընելու ինչ որ կ'ուզէ, ընտրելու չարը կամ բարին, մահը կամ կեանքը: Բայց Աստուած մարդուն կը յիշեցնէ նաեւ, որ մեր ընտրութիւնը իր հետեւանքները ունի, որ մարդ պիտի կրէ անպայմանօրէն: Միսլ որոշում մը իր ցաւալի արդիւնքները կրնայ ունենալ, որ մարդ պիտի կրէ անխուսափելիօրէն: Աստուած մարդուն ցոյց կու տայ ուղիղը, բայց չի կաշկանդէր մարդուն ազատութիւնը՝ ընտրելու ինչ որ կ'ուզէ:

5.-Արարչութեան նպատակը եւ վախճանակէտը:

Ամբողջ ստեղծագործութիւնը Աստուծոյ սիրոյն արտայայտութիւնն է: Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ կ'ըսէ. *«Արարիչին սէրը ստիպեց զինք ստեղծելու բոլոր արարածները, թէ՛ տեսանելիները եւ թէ՛ անտեսանելիները: Ո՛չ թէ Աստուած ինք պէտք ունէր, այլ՝ որպէսզի ի յայտ գայ իր փառքը, որ տեսանելի թէ անտեսանելի արարածներուս ընդմէջէն կը տեսնուի եւ կը հասկցուի»* (Յաճախապատում, Ճառ Բ.):

«Ամէն ինչ իրմէ է, իրմով եւ իրեն համար գոյութիւն ունի» կ'ըսէ Հռոմայեցիներուն նամակը (11.36): Եւ ասիկա ցոյց կու տայ Աստուծոյ ճշմարիտ նպատակը: Աստուած աշխարհը մարդուն համար ստեղծեց, եւ մարդը՝ իր սիրոյն եւ իր փառքին համար: Աստուած իր սիրոյն եւ իր բարիքներուն հաղորդակից կը դարձնէ մեզ, որպէսզի մենք ալ իրեն հանդէպ մեր սիրով հաղորդուինք իրեն, իր սեփական «Ժողովուրդը» եւ «ընտանիքը» դառնանք (հմմտ Եփ 2.19), եւ Տիրոջ հետ ըլլանք յաւիտեան (Ա.Թս 4.17):

ՀԱԻԱՏԱՍՔ

*«Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս յՈրդին Աստուծոյ,
ծնեալն յԱստուծոյ Հօրէ, միածին, այսինքն՝ յէութենէ Հօր»:*

1.- Բանն Աստուած:

Յովհաննէսի Աւետարանը «Բան» կը կոչէ Աստուծոյ Որդին (Յհ 1.1, 14: Հմնտ Ա.Յհ 1.1): Քրիստոնէական գրականութեան մէջ յաճախ Որդիին մասին կը խօսինք, զայն անուանելով Բանն Աստուած, կամ՝ Աստուած Բանը, որովհետեւ Յովհաննէսի Աւետարանը յստակօրէն կ'ըսէ. *«Մկիզբէն էր Բանը, եւ Բանը Աստուծոյ քով էր, եւ Աստուած էր Բանը»:* Նիկիական հանգանակին մէջ այս բացատրութիւնը չկայ, թերեւս առիթ չտալու համար այն շփոթին, որ Արիոս Աղեքսանդրացի եւ իր հետեւորդները ունէին (տես վարը, 2.3):

2.- Մէկ Տէր:

Ա.- Աստուած մէկ է: Հետեւաբար մէկութիւնը յատուկ է ամենասուրբ Երրորդութեան անձերէն իւրաքանչիւրին եւ երեքին միասնաբար: Այդ իմաստով, «Մէկ Տէր» բացատրութիւնը որոշակիօրէն Քրիստոսի աստուածութիւնը ընդգծելու նպատակ ունի:

Բ.- Յիսուս Քրիստոս միակ Տէրն է, ճշմարիտ Տէրը, տարբեր՝ բոլոր միւս տէրերէն, որոնք ճշմարտապէս տէր չեն: Անիկա *«տէրերու Տէրը եւ թագաւորներու Թագաւորը»* (Յյտ 17.14, 19.16), եւ բոլորէն վեր եղող Աստուածն է (Հո 9.5: Հմնտ Ա.Տմ 6.14-16):

Գ.- Անիկա նոյն եւ մէկ յաւիտենական Բանն էր, որ աշխարհ գալով մարմնացաւ:

Դ.- Մէկ եւ նոյն Տէր Յիսուս Քրիստոսի երկու բնութիւններուն, այսինքն՝ աստուածութեան եւ մարդկութեան միջեւ բաժանում չկայ: Քրիստոս աստուածային եւ

մարդկային կատարեալ բնութիւններուն սքանչելի միութիւնն է, առանց շփոթելու մէկը եւ միւրը, բայց նաեւ առանց երբեք բաժնելու ինչ որ յատուկ է Յիսուս Քրիստոսի աստուածամարդկային միաւորեալ մէկ բնութեան:

3.- «Տէր» կոչումը, անոր գործածութիւնը եւ իսկական նշանակութիւնը:

«Տէր»ը միայն տիտղոս մը չէ, Աստուածաշնչական հասկացողութեամբ, այլ նաեւ անուն մըն է, Աստուծոյ անունն է: Այն անունն է, որ յայտնուեցաւ Մովսէս մարգարէին (Ել 3.14-15), եւ որով լեցուն են Հին եւ Նոր Կտակարանները: Այդ անունը, Եբրայերէն ձեւով՝ «Եահուէ» (կամ «Եհովա»), առհասարակ բոլոր միւս լեզուներուն մէջ թարգմանուած է «Տէր» բառով: Արդարեւ, իրարմէ տարբեր չեն Եահուէն եւ Յիսուս Քրիստոսը: «Եահուէ» անունը յատուկ է Աստուծոյ, Սուրբ Երրորդութեան երեք անձերուն հաւասարապէս, եւ մարմնացեալ ու մարդացեալ մեր Փրկիչը ինք ալ Տէր է, այսինքն՝ Եահուէ Աստուածը (տե՛ս, օրինակ, Յհ 12.37-41 եւ հմմտ Ես 6.1-10):

Նոր Կտակարանը միշտ այսպէս՝ Տէր կը կոչէ Որդին, Յիսուս Քրիստոսը, անոր մէջ տեսնելով Որդիին աստուածութիւնը, հաւասար Հօրը եւ Սուրբ Հոգիին: Ուստի «Տէր» անունին մէջ կը տեսնենք ո՛չ միայն Յիսուս Քրիստոսի իշխանութիւնը եւ տիրութիւնը ամբողջ ստեղծագործութեան եւ մեր վրայ, այլ նաեւ կը տեսնենք անոր աստուածութիւնը, որ կը դաւանինք եւ կը հռչակենք՝ իբրեւ հիմը մեր փրկութեան:

4.- Յիսուս Քրիստոս:

«Յիսուս» Եբրայերէն անուն մըն է, որ կը նշանակէ՝ «Տէրը կը փրկէ»: Յիսուսի անունն իսկ կը յայտնէ իր փրկագործական առաքելութիւնը, որ քրիստոնէական եկեղեցին խտացուցած է միակ բառի մը կամ տիտղոսի մը

մեջ.- «Փրկիչ»: Ա՛ն է մեր ազատարարը՝ մեղքին եւ Չարին ծառայութենէն: Յիսուս իր անձը փրկանք տուաւ մեր բոլորին փոխարէն, մեզ մեղքի ծառայութենէն զնկելու համար (տե՛ս Մտ 20.28, 26.28: Մր 10.45: Ա.Տմ 2.6: Եբր 9.28):

«Քրիստոս»ը անուն չէ, այլ՝ տիտղոս մը: «Քրիստոս» Յունարէն բառ մըն է, որ կը նշանակէ՝ Օծեալ: Ասիկա համապատասխանն է Եբրայերէն «օծեալ» (Եբր. «մաշի՛ահ», կամ մեզի համար սովորական դարձած կերպով՝ «մեսիա») բառին կամ տիտղոսին, որ կը տրուէր թագաւորներուն, քահանաներուն եւ մարգարէներուն: Յիսուս Օծեալ կը կոչուի, նախ՝ որովհետեւ իր մարդկութեան մէջ յղութեան պահէն իսկ ամբողջապէս Սուրբ Հոգիով լեցուեցաւ (Մտ 1.18: Ղկ 1.35), Սուրբ Հոգիով աճեցաւ ու զօրացաւ (Ղկ 1.80), անով առաջնորդուեցաւ (Մտ 4.1: Մր 1.10-12): Այդ իմաստով ալ, Յիսուս իր երկրաւոր ամբողջ առաքելութեան ընթացքին ամբողջապէս ունէր Աստուծոյ Հոգին (Յհ 3.34), որովհետեւ Որդին ինք անբաժան է Սուրբ Հոգիէն, ինչպէս անբաժան է Հօրմէն:

5.- Որդի Աստուծոյ:

Քրիստոս «Աստուծոյ Որդի է» կը յայտարարէր Նոր Կտակարանը (Մտ 3.17: Ղկ 1.35: Հո 1.4: Ա.Յհ 5.5): Բայց ի՞նչպէս պէտք էր հասկնալ այդ որդիութիւնը: Ոմանք զայն կ'ուզէին հասկնալ այնպէս՝ ինչպէս է մեր որդիութիւնը Աստուծոյ: Բայց մինչ մենք Հօրը բնութենէն չենք, եւ Աստուծոյ որդի կը դառնանք իբրեւ մեզի պարգեւուած բացառիկ շնորհք մը, որդեգրուելով Հօրը կողմէ, Յիսուս ինք Աստուծոյ համար որդեգիր մը չէ, այլ հարազատ որդի, Հօրը բնութենէն ծնած անժամանակ կերպով:

Այդպիսի աղանդամիտ մտածող մըն էր Արիոս Աղեքսանդրացի, որ Յիսուս Քրիստոսը կը նկատէր պարզ արարած մը, որ սակայն Հօրը կամքին իր ամբողջական հնազանդութեամբը արժանի եղաւ փառքի եւ Աստուծոյ որդի

կոչումին: Այս որդիութիւնը Արիոսի համար ճիշդ Աստուծոյ կողմէ մեր որդեգրութեան կը նմանէր:

6.- Հօրը Միածինը, անոր էութենէն ծնած:

Հաւատամքը զօրեղապէս կը պատասխանէ Արիոսի սխալ մտածողութեան, շեշտելով՝ թէ Յիսուս Քրիստոս, ճշմարտապէս Աստուծոյ Որդին է, Հօրը բնութենէն ծնած: Անիկա բացառիկ եւ եզակի ծնունդ մըն է, Հօրը միա՛կ ծնունդը: Ատոր համար ալ Աստուածաշունչը զայն կը կոչէ «Միածին» կամ «միածին Որդի» (Յհ 1.14, 3.16): Արդ, եթէ Որդին Աստուծոյ միակ ծնունդն է, ճշմարտապէս Հօրը Որդին է (Բ.Յհ 3), եւ Հօրը էութենէն է, այսինքն՝ Հօրը հետ մէկ եւ նոյն է (Յհ 10.30), եւ իր մէջ ունի «աստուածային բնութեան ամբողջ լիութիւնը» (Կդ 2.9), կը նշանակէ՝ թէ ան կատարեալ Աստուած է:

7.- Համագոյակից եւ արարչակից Հօրը:

Նիկիոյ ժողովին կողմէ գործածուած բառն է՝ «համագոյակից», որ կը նշանակէ՝ Հօրը հետ նոյն էութենէն (էակից), նոյն գոյութենէն (գոյակից), այսինքն՝ նոյն բնութենէն (բնութենակից): Ասիկա պարզապէս նպատակ ունի հաստատելու Քրիստոսի կատարեալ աստուածութիւնը. ո՛չ թէ արարած, այլ՝ արարիչ ըլլալը, որով նաեւ Հօրը արարչակից է:

8.- Որդի կոչումը՝ աստուածութեան եւ ապագայ Եկեղեցոյ Ընտանիքին յարաբերաբար:

Յիսուս Քրիստոս ո՛չ միայն Աստուծոյ Որդին է՝ իբրեւ Աստուծոյ բնութենէն ծնունդ, այլ նաեւ Որդի է՝ յարաբերաբար մեզի: Ինքն է մեր ստեղծիչը, որ իր պատկերով ստեղծեց մեզ (Ծն 1.26-27), որպէսզի մենք եւս Աստուծոյ որդիներ ըլլանք որդեգրութեան ճամբով: Այս նպատակով ալ անիկա երկրի վրայ եւս ծնաւ իբրեւ որդի (Մտ 1.23: Հմմտ Ես 9.6), եւ ամէն

ինչով մեզի նման եղաւ՝ բացի մեղաւորութենէն (Եբր 4.15: Ա.Յհ 3.5), որպէսզի մեր եղբայրը դառնայ (Եբր 2.11), մեռելներէն առաջին ծնունդը ըլլայ (Կդ 1.18), եւ Աստուծոյ ընտանիքին մէջ առնէ մեզ, ինքը *«բազմաթիւ եղբայրներու մէջ անդրանիկը ըլլալով»* (Հո 8.29):

ՀԱԻԱՏԱՍՔ

*«Աստուած՝ յԱստուծոյ,
լոյս՝ ի լուսոյ,
Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ,
ծնունդ եւ ո՛չ արարած:
Նոյն ինքն ի բնութենէ Հօր,
որով ամենայն ինչ եղել յերկինս եւ ի վերայ երկրի,
երեւելիք եւ աներեւոյթ»:*

1.- Աստուած է՝ Աստուծմէ (ծնած):

Այս մասին Աստուածաշունչը մեզի կու տայ ուղղակի եւ անուղղակի վկայութիւններ: Ուղղակի կը կոչենք այն վկայութիւնները, ուր Որդին, մարմնացեալ Յիսուս Քրիստոսը, ուղղակիօրէն Աստուած կը կոչուի կամ կ'անուանուի (Յհ 1.1: Հո 9.5: Բ.Պտ 1.1-2: Ա.Յհ 5.20): Իսկ անուղղակի կը կոչենք այն վկայութիւնները, որոնք տարբեր կերպով, թեպէտ բաւականին բացայայտ եւ անհերքելի կերպով, կը հաստատեն մեր Տիրոջ աստուածութիւնը (Մտ 1.22-23, 28.19: Ղկ 1.15-17, 5.20-21: Յհ 5.18, 10.30-33: Փլպ 2.6: Կդ 1.15-19, 2.9: Տիտ 2.13: Եբր 1.2-3, 13.8: Յյտ 1.7-8):

2.- Լոյս է՝ Լոյսէն (յառաջ եկած):

Այս բացատրութիւնը նպատակ ունի նշելու երեք իրողութիւններ.-

1) Որդիին ծնունդին աննիւթականութիւնը, այսինքն՝ անմարմին ծնունդ ըլլալը, որպէսզի միտքերը հեռու պահէ մարդկային կամ կենդանական ծնունդներու համեմատութենէն:

2) Որդիին ծնունդով՝ աստուածային բնութեան աննուագութիւնը: Որդիին ծնունդով Հօրը բնութիւնը ռեւէ կերպով նուագում չէ կրած, ճիշդ ինչպէս որ երբ մոմէ մը ուրիշ մոմ մը վառենք՝ առաջինին լոյսէն բան չի պակսիր:

3) Որդիին ծնունդով՝ աստուածային բնութեան անփոփոխելիութիւնը: Ստեղծական ծնունդներու պարագային, իւրաքանչիւր ծնունդ որակական փոփոխութիւն կամ այլայլութիւն կը մտցնէ ծնողին ու ծնունդին բնութեան մէջ, մինչդեռ այդպէս չէ՝ Աստուծոյ ծնունդին պարագային:

3.- Ճշմարիտ Աստուծմէ (ծնած) ճշմարիտ Աստուած է:

Այս բացատրութիւնը կը նշէ Հօրը եւ Որդիին կատարեալ հաւասարութիւնը: Որդին երկրորդական «աստուած» մը չէ՛, կամ այլ խօսքով՝ «աստուածային էակ մը» չէ՛ պարզապէս, ինչպէս կ'ըսէին Արիոսականներ եւ այս օրերուն կը կրկնեն Եհովայի Վկաներ:

Որդին Հօրմէն կրտսեր չէ՛ ժամանակով, որովհետեւ «սկիզբէն» է ինք, անժամանակ, եւ ստեղծիչը ժամանակին: Ո՛չ ալ Հօրմէն փոքր կամ նուազ է փառքով ու պատիւով: Անիկա կատարեալ Աստուած է, այսինքն՝ անեղ, անժամանակ, յաւիտենական: Ինչպէս հաւատքի մեր միւս հանգանակը կ'ըսէ. «Կը հաւատանք Բան Աստուծոյ, որ անեղ է, Հօրմէն ծնած եւ սկսած՝ բոլոր ժամանակներէն առաջ. ո՛չ անկէ ետք է, ո՛չ ալ անկէ կրտսեր. այլ որքան որ Հայրը հայր է, նոյնքան ալ Որդին՝ որդի»:

4.- Ծնած է, եւ ո՛չ թէ արարած:

Որդին անսկիզբ եւ անժամանակ կերպով ծնած է Հօրմէն, որովհետեւ, ինչպէս տեսանք, Աստուածաշունչին մէջ կը կոչուի «Որդի» եւ «Միածին» (Մտ 1.18, 20: Ղկ 1.35: Յհ 1.14: Եբր 1.5), որոնք երկուքն ալ ծնած ըլլալը կը նշեն: Արդ, եթէ ծնած է, կը նշանակէ թէ «ստեղծուած» չէ Հօրմէն, ինչպէս մենք մեր հայրերուն եւ մայրերուն ծնունդն ենք, բայց ո՛չ ստեղծումը:

Այս հաստատումը երկու աղանդներու հերքումը կը կատարէր.-

1) Մաբէլ Լիպիացիի մոլորութիւնը, որ Երրորդութիւնը ուրանալով կ'ըսէր, թէ երեք անձեր չկան, այլ նոյն եւ մէկ անձը

ըստ պարագայի կը յայտնուի իբրև Հայր, կամ Որդի, կամ Սուրբ Հոգի:

2) Արիոս Աղեքսանդրացիի մոլորութիւնը, որ Երրորդութիւնը կ'ընդունէր երեք անձերով, բայց Որդիին եւ Հոգիին աստուածութիւնը կը մերժէր, զանոնք «ստեղծուած» կոչելով:

Եկեղեցին կը դաւանի, որ եթէ մէկը ծնող է եւ միւսը ծնունդ, կը նշանակէ թէ Հայրը եւ Որդին իրարմէ կը զանազանուին իբրև անձեր, թեպէտեւ բնութեամբ կատարելապէս մէկ են: Միւս կողմէ, եթէ Որդին «Միածին ծնունդ» կը կոչուի, կը նշանակէ թէ Հօրը բնութիւնը ունի: Եւ եթէ Որդին Հօրը հետ նոյն բնութիւնը ունի, եւ Հայրը ճշմարտապէս Աստուած է, ճշմարիտ Աստուծոյ Որդին ուրիշ բան չի՝ կրնար ըլլալ՝ եթէ ոչ ճշմարիտ Աստուած:

5.- Անիկա Հօրը բնութենէն է:

Դարձեալ կը կրկնուի՝ ինչ որ անգամ մը հաստատուած էր արդէն՝ «այսինքն Հօրը էութենէն է» բառերով: Յունարէնի մէջ այս երկու բացատրութիւններն ալ կ'արտայայտուին միեւնոյն բանաձեւով, որ բառացիօրէն կարելի է թարգմանել՝ «Համագոյակից Հօրը», կամ «եակից Հօրը» կամ «բնութենակից Հօրը»: Կրկնութիւնը անգամ մը եւս ցոյց կու տայ Նիկիոյ հայրերուն մտահոգութեան առարկան, եւ Արիոսական աղանդին պատասխանը.- Մարդացեալ Որդին, Յիսուս Քրիստոսը պարզապէս մարդ մը չէ՛, արարած մը չէ՛, այլ՝ Հօրը աստուածային բնութիւնը ունեցող եւ անոր հետ համապատիւ Աստուած Բանը:

6.- Իրմով ստեղծուած է ամէն ինչ որ կայ երկինքի մէջ թէ երկրի վրայ, տեսանելի թէ անտեսանելի:

Հաստատելէ ետք՝ թէ Յիսուս Քրիստոս «արարած» չէ, հիմա կը շեշտուի՝ թէ անիկա «Արարիչ» է: Ամէն ինչ Որդիով

ստեղծուեցաւ (Յհ 1.3-4, 9-11: Եբր 1.2-3): Այս մասին առաջին հաւատքի «հանգանակ» մը՝ (տե՛ս Կղ 1.15-20: Ա.Կր 8.6):

Հաստատել թէ Որդին արարիչ է, ինքնին կը նշանակէ հաստատել թէ արարած չէ՛, ստեղծուած չէ, այլ՝ անեղ է եւ յաւիտենական, «սկիզբէն է», ինչպէս պիտի ըսէր Յովհաննէսի Աւետարանը (1.1): Եւ եթէ սկիզբ չունի, նաեւ վախճան չունի, եւ յաւէտ նոյնն է եւ անփոփոխ, ինչպէս Եբրայեցիներուն նամակը կը բանաձեւէ. *«Յիսուս Քրիստոս նո՛յնն է միշտ - երէկ, այսօր եւ յաւիտեան»* (Եբր 13.8), եւ ինչպէս Յայտնութեան գիրքին մէջ կը բնութագրուի. *«Ան՝ որ է, որ էր եւ որ պիտի գայ»* (Յյտ 1.4, 8):

Վերոյիշեալ հաստատումներով Նիկիական Հանգանակը զօրեղ ու վերջնական պատասխան մը տուած կ'ըլլայ Քրիստոսի աստուածութիւնը մերժող բոլոր աղանդներուն, ապահովելով առաքելաւանդ ուղղափառ հաւատքին յաղթանակը:

ՀԱԻԱՏԱՍՔ

*«Որ յարագս մեր մարդկան
եւ վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից»:*

1.- Մարդուն մեղանշումը, անկեալ վիճակը եւ ինքզինք փրկելու անկարելիութիւնը:

«Ինքն էր որ մեզի՝ մարդերուս եւ մեր փրկութեան համար երկինքէն իջաւ»: Այս բացատրութիւնը անմիջապէս մեր միտքերուն դիմաց կը բանայ պատմութիւնը տիեզերքին, աշխարհին եւ մարդուն: Թէ ի՞նչպէս Աստուած աշխարհը ստեղծելէ եւ բուսական ու կենդանական կեանքով լեցնելէ ետք, ուզեց զայն զարդարել նաեւ բանական կեանքով, եւ «իր պատկերով ու նմանութեամբ» ստեղծեց մարդ արարածը:

Մարդը կոչուած էր յաւերժական կեանքը եւ երանութիւնը վայելելու, բայց անզգուշութեամբ ինկաւ Բանասարկու Սատանային լարած ծուղակին մէջ, եւ կորսնցուց այն արդարութիւնը եւ սրբութիւնը, որով ստեղծուած էր: Կորսնցուց նաեւ Աստուծոյ կամքին գիտութիւնը եւ Աստուծոյ հետ անմիջական հաղորդակցութեան պարզելը: Հեռացաւ Աստուծմէ, եւ կորսնցուց ազատութեան պարզելը, դառնալով մեղքին գերին, եւ ենթարկուելով մահուան դատապարտութեան:

Իր այս «անկեալ» վիճակին մէջ, եւ տկարացած իր կամքին մէջ, մարդը հնարաւորութիւնը չունէր ամբողջական բարին գործելու, Աստուծոյ կատարեալ հնազանդութեան մէջ ապրելու եւ ինքզինք փրկելու:

2.- Մարդուն փրկութեան անհրաժեշտութիւնը եւ Աստուծոյ փրկագործական նպատակը:

Գիտնալով մարդուն կողմէ ինքզինք փրկելու անկարելիութիւնը, Աստուած անկումի առաջին իսկ պահուն մարդուն տուաւ փրկութեան սքանչելի խոստում մը (Մն 3.15):

Խոստում մը, որ իր ատենին պիտի կատարուէր Քրիստոսով (հմտ Գղ 4.4-5):

Այս խոստումով Աստուած ցոյց կու տար փրկագործական իր նպատակը, որուն տարբեր երեսները կը ներկայացուին եւ կ'ուրուագրուին Հին Կտակարանի ամբողջ երկայնքին, Օրէնքին, մարգարէութեանց եւ միւս գիրքերուն մէջ: Բոլոր խոստումներն ալ կապուած են Քրիստոսի աշխարհ գալուստին, այլ խօսքով՝ մարդէղութեան: Մարդէղութեան նպատակն էր.-

1.- Մարդկութիւնը նորովի արարչագործել, մեղքը հալածելով եւ ապականութիւնը վերցնելով:

2.- Մարդիկը լուսաւորել եւ ճշմարիտ աստուածաճանաչութիւն տալ:

3.- Մեզ սրբել եւ սուրբ կեանքի մը առաջնորդութիւնը տալ:

4.- Աշխարհի բոլոր ազգերէն ու ժողովուրդներէն Աստուծոյ համար մէկ ժողովուրդ կազմել, իր թագաւորութեան հպատակները պատրաստել (Յհ 10.16), եւ զանոնք իր արքայութեան մասնակից դարձնել (Մտ 25.34):

3.- Քրիստոսի մարդէղութեան անհրաժեշտութիւնը:

Արդեօք չկար փրկութեան ուրիշ կերպ մը, որ Աստուած որդեգրէր, փրկելու համար իր արարածները: Անհրաժեշտ էր մարդէղութիւնը:

Աստուծոյ համար անկարելի բան չկայ, եւ ուստի Աստուած ոեւէ այլ կերպով եւս կրնար փրկել մարդիկը: Բայց եթէ այս կերպը կամեցաւ, կը նշանակէ՝ թէ անոր մէջ տեսաւ մարդկային մտածողութեան համար անկիւնադարձային եւ հիմնապէս վերափոխիչ այն տուեալը, որ կարելոր էր՝ մարդը Աստուծոյ վերադարձնելու համար:

1.- Աստուած մարդացաւ՝ իր գերազանց սէրը ցուցաբերելու համար:

2.- Աստուած մարդացաւ՝ իր աչքին մարդուն գերագանց արժէքը ցուցնելու եւ մարդը բարձրացնելու համար:

3.- Աստուած մարդացաւ՝ արդարութեան պահանջքը իրմով հատուցանելու եւ մարդը մահուան դատապարտութենէն փրկելու համար:

4.- Աստուած մարդացաւ՝ մարդուն կողմէ Չարին վրայ յաղթանակ տանելու համար:

5.- Աստուած մարդացաւ՝ իր մարմնին մէջ մեղքը սպաննելու եւ մեզ ազատութեան Հոգիով իրեն կապելու համար:

4.- Ինչո՞ւ աւելի շուտ տեղի չունեցաւ Քրիստոսի մարդեղութիւնը:

Աստուած ինք գիտէ ամէն բանի ճշգրիտ ժամն ու ժամանակը, եւ իւրաքանչիւր միջոցի յարմարաւետութիւնն ու օգտաւետութիւնը: Աստուած ուզեց որ մարդը նախ պատրաստուի անոր, եւ յետոյ միայն, երբ ի վիճակի ըլլայ ընդունելու, այն ատեն միայն գայ սպասուած իրականութիւնը: Այլ խօսքով, Աստուած վարուեցաւ դաստիարակչական յատուկ կերպով մը, որ մարդուն բարիքին համար իսկ չափազանց կարեւոր ու անհրաժեշտ էր: Որովհետեւ, ինչպէս գիտենք, շատ մը բաներ անօգուտ եւ աննպատակ կ'ըլլան իրենց ճիշդ ժամանակէն առաջ կամ ետք:

Արդ, Աստուած մարդոց համար անհրաժեշտ գտաւ այդ նախապատրաստութիւնը եւ դաստիարակութիւնը, որ ինք մատակարարեց իր Օրէնքին ու մարգարէներուն միջոցաւ, մինչեւ որ յարմար ժամանակը եկած համարեց (Գղ 3.24-25):

Աստուածաշունչը այս յարմար ժամանակը կը կոչէ «ժամանակին լրումը», «ժամանակին լրանալը», կամ «ժամանակին լեցուիլը» (հմմտ Մր 1.1: Գղ 4.4: Եփ 1.10):

5.- Ի՞նչ իրազործեց Քրիստոսի մարդեղութիւնը:

Քրիստոս իր մարդեղութեամբ մարդը վերադարձուց իր սկզբնական արդարութեան եւ սրբութեան, փորձութեանց դիմաց եւ Չարին վրայ մարդուն կատարեալ յաղթանակը ապահովելով, իր մարմինին մէջ սպաննելով մեղքը, մարդը ազատագրելով մեղքին ճիրաններէն, մահուան մեր դատավճիռը խաչափայտին վրայ գամելով եւ իր սուրբ արիւնով ջնջելով, խափանելով մահուան իշխանութիւնը եւ մեզ Աստուծոյ վերադարձնելով եւ Աստուծոյ որդեգիր դարձնելով:

ՀԱԻԱՏԱՍՔ

*«Մարմնացաւ՝ մարդացաւ՝ ծնաւ կատարելապէս
ի Մարիամայ Սրբոյ կուսէն Հոգւովն Սրբով:
Որով էառ մարմին՝ հոգի եւ միտ,
եւ զամենայն որ ինչ է ի մարդ,
ճշմարտապէս եւ ո՛չ կարծեօք»:*

1.- Մարմնացաւ, մարդացաւ:

«Մարմնանալ» կը նշանակէ.- 1) Մարմին ըլլալ, մարմինի վերածուիլ, թանձրանալ, նիւթականանալ: 2) Մարմինի ձեւ կամ երեւոյթ ունենալ: 3) Մարդ ըլլալ: Այստեղ այս իմաստներէն 1-ը եւ 3-ը նկատի ունի: Բացատրութիւնը առնուած է Յովհաննէսի Աւետարանէն (Յհ 1.14): Անմարմին Աստուած Բանը, որ մարդոց համար անտեսանելի եւ անշօշափելի է, մարմին եղաւ, որպէսզի կարելի ըլլայ տեսնել ու շօշափել զայն (Ա.Յհ 1.1):

Աղանդաւորներէն ոմանք կ'ըսէին, թէ Բանը մարդկային մարմին առաւ, բայց մարմին մը՝ առանց բանական հոգիի եւ միտքի, որովհետեւ, կ'ըսէին, Բանը ինք հոգիին ու միտքին տեղը առաւ: Ասով, անոնք կը ժխտէին Քրիստոսի մարդկութեան կատարելութիւնը: Հաւատամքը «մարմնացաւ» բառին քով կ'աւելցնէ «մարդացաւ», որպէսզի «մարմին»ը կամայականօրէն չբացատրուի, այլ հասկցուի իբրեւ կատարեալ «մարդ»:

Մարդանալով՝ Բանը չդադրեցաւ կատարեալ Աստուած ըլլալէ: Կամաւորապէս մարդկային բնութեան կարիքներուն ինքզինքը ենթարկած, իր աստուածային փառքէն մերկացած, եւ մեզի համար խաչը բարձրացած, բայց մարգարէն զայն կը յայտարարէ «Հօր Աստուած» եւ «Յաւիտենականութեան Հայր» (Ես 9.6), իսկ առաքեալը անոր մէջ կը դիտէ «աստուածային բնութեան ամբողջ լիութիւնը», կատարեալ Աստուածը:

2.- Ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն
Հոգւովն Սրբով:

Այս հաստատումը երկու կողմ ունի: Կը վերաբերի թե՛
Քրիստոսի աստուածութեան եւ թե՛ մարդկութեան:

1.- Ան՝ որ աստուածային կատարելութիւնը ունէր եւ
կատարեալ Աստուած էր՝ ռեւէ փոփոխութիւն կամ
նուագութիւն չկրեց, այլ՝ մնաց ինչ որ էր: Իր աստուածութիւնը
չայլայլեցաւ, մարմնական բնութեան չվերածուեցաւ:

2.- Մարդկութեան վերաբերմամբ այս բացատրութիւնը
կը հաստատէ մարդկային բնութեան ամբողջականութիւնը:
Եւ այս հաստատումը չափազանց կարեւոր է մեր
փրկագործութեան համար: Քրիստոսի մարմինը
ճշմարտապէս մարդկային էր, երկինքէն բերուած չէր,
հետեւաբար երկնային չէր:

Սուրբ Կոյս Մարիամէն ծնունդը կ'ընդգրկէր
Աստուածորդիին խոնարհ ծնունդը, ցոյց տալով թէ Աստուծմէ
ծնած կատարեալ Աստուածը անարգութիւն չհամարեց
ծնանիլ Սուրբ Կոյսէն, եւ իր ծնունդով գերազանցօրէն
պատուեց եւ օրհնեց ու սրբեց մարդկային ծնունդները: Իսկ
այդ գերահրաշ ծնունդին պատճառաւ Սուրբ Կոյսը
«Աստուածածին» կը կոչուի, որովհետեւ սոսկ մարդ մը չէր իր
ծնածը, այլ նոյնինքն փառաց Տէրը (Ա.Կր 2.8), եւ բոլորէն վեր
եղող յաւէտ օրհնեալ Աստուածը (Հո 9.5):

Քրիստոսի յղութիւնն ու ծնունդը տեղի ունեցան Սուրբ
Հոգիին ներգործութեամբ: Ասիկա երկու ճշմարտութիւններ
կը բերէ մեզի.- 1.- Քրիստոս ծնաւ առանց մարդկային սերմի,
առանց հօր: 2.- Սուրբ Հոգին Սուրբ Կոյսին արգանդը սրբեց եւ
զայն յարդարեց իբրեւ տաղաւար Աստուծոյ բնակութեան,
Հօրը զօրութեամբ եւ հովանաւորութեամբ ծնունդ տալու
համար Բանին՝ Աստուածորդիին մարմինին:

3.- Քրիստոսի կատարեալ մարդկութիւնը – մարմին, հոգի եւ միտք:

Ըստ Արիոս եւ Ապոդինար աղանդաւորներուն, «Բանը» իր մարդկութեան մէջ կատարեալ չէր: Մարմնացաւ ու մարդացաւ, բայց մարդկային հոգի չունէր: Բանը ինք մարդկային հոգիին տեղը կը բռնէր: Ապոդինար կ'ըսէր նաեւ, թէ Քրիստոս մարդկային միտք ալ չունէր: Ահա թէ ինչու մեր ներկայ Հաւատամքին մէջ «մարմին»ին կողքին աւելցուած է «հոգի եւ միտք», որպէս ամբողջական ճշդում եւ պատասխան նման մտածողներուն:

Քրիստոսի մէջ մարդկային բանական հոգիին ժխտումը ամբողջ փրկագործութեան մերժումը կրնար ըլլալ, որովհետեւ եթէ Քրիստոս կատարեալ Աստուած չէր՝ չէր կրնար մարդոց փրկութիւնը իրագործել, իսկ եթէ կատարեալ մարդ չէր՝ իր յաղթանակը չէր կրնար մարդ արարածին յաղթանակը ըլլալ Չարին՝ Սատանային վրայ տարուած:

4.- Ամէն ինչ որ մարդկային է, բացի մեղքէն:

Թէպէտ «բացի մեղքէն» բառերը այժմու մեր Հաւատամքին մէջ չկան, բայց անհրաժեշտ է յատուկ կերպով անդրադառնալ անոր: Եթէ Քրիստոս մարդացաւ՝ առնելով մարմին, հոգի եւ միտք, արդեօք մեղքն ալ առաւ: Այլ խօսքով, Քրիստոսի մէջ մեղք կա՞ր թէ՛ ոչ:

Պատասխանը «ոչ» է: Աստուածորդին առաւ ամէն ինչ որ մարդկային է, բացի մեղքէն, որովհետեւ մեղքը մեղանշական մարդուն յատուկ է, բայց յատուկ չէ՛ր սկզբնաստեղծ մարդուն: Իսկ Քրիստոս առաւ մեղքէն զերծ եղող մարդկային բնութիւնը, եւ աշխարհ եկաւ ջնջելու համար մեղքը (Ա.Յհ 3.5):

Քրիստոս իր մարդկային բնութեամբ անմեղ էր, իր ստեղծած մարդուն՝ Ադամին պէս: Կարելիութիւնը ունէր մեղանշելու, բայց բնաւ մեղք չգործեց, ինչպէս դարձեալ Նոր Կտակարանը զօրեղապէս կը հաստատէ (Ա.Պտ 2.22: Հմմտ Ես 53.9: Բ.Կր 5.21): Ասիկա կը նշանակէ՝ թէ Քրիստոս

չտիրապետուեցաւ մեղքէն ու մահէն, եւ ուստի կրնար սպաննել կամ բնաջնջել մեղքը եւ մահուան զօրութիւնը, ինչ որ իրագործեց նախ իր մարդեղութեամբ, եւ ապա իր կամաւոր չարչարանքներով, կամաւոր մահուամբ եւ հրաշափառ սուրբ յարութեամբ:

5.- Ո՛չ թէ երեւութապէս, այլ՝ ճշմարտապէս:

«Երեւութական» կոչուած աղանդաւորները Քրիստոսի մարմինին համար կ'ըսէին՝ թէ մարմինի ձեւ կամ երեւոյթ ունէր, բայց իրական մարմին չէր: Չայն պարզապէս տեսիլք կը համարէին, տեսակ մը ուրուական:

Այսպիսի աղանդաւորներ կային դեռ առաքելական ժամանակներէն սկսեալ: Յովհաննէս աւետարանիչ կատաղօրէն կը պայքարի անոնց դէմ՝ որոնք կը փորձէն ուրանալ ճշմարիտ մարդեղութիւնը (Ա.Յհ 4.1-3: Բ.Յհ 7):

6.- Ճշմարիտ մարդեղութեան կարեւորութիւնը մեր փրկութեան համար:

Մերժել կամ ուրանալ մարդեղութիւնը եւ Քրիստոսի ճշմարիտ մարմինը, կը նշանակէ մերժել կամ ուրանալ մեր փրկութիւնը: Արդարեւ, Քրիստոս ի՞նչպէս մեր մեղանշական բնութիւնը պիտի սրբէր սկզբնական մեղքէն, առանց ինք այդ բնութիւնը առնելու: Ի՞նչպէս պիտի կրնար մեր մեղքերը սրբել իր մկրտութեամբ, եթէ չունէր մարմին մը որ Յորդանանի մէջ լուացուեցաւ Յովհաննէսի ձեռքով: Եթէ մարմին չառաւ, ի՞նչպէս կրնար իր մարմինին մէջ սպաննել մեղքը: Ի՞նչպէս իր արիւնը փրկանք պիտի տար բոլոր մարդոց փոխարէն, եթէ ճշմարիտ մարմին եւ արիւն չունէր: Եթէ չունէր մարմին մը որ մահկանացու ըլլար, ի՞նչպէս պիտի կարենար խաչուիլ եւ մեր բոլորին փոխարէն մահը ճաշակել, մեր մահուան դատապարտութիւնը ինք կրելու համար: Տեսիլքը կամ ուրուականը չեն կրնար մեռնիլ, ո՛չ ալ յարութիւն առնել: Իսկ եթէ ուրանանք Քրիստոսի մահը եւ յարութիւնը, կը նշանակէ՝

Թե փրկուած չենք, եւ ենթակայ կը մնանք մահուան
դատապարտութեան:

ՀԱԻԱՏԱՍՔ

«Չարչարեալ, խաչեալ, թաղեալ»:

1.- «Այսպէս գրուած էր եւ այսպէս պէտք էր կատարուէր»
- Մարգարեական նախագուշակութիւնները՝ Աստուծոյ չարչարուող ծառային մասին:

Ինչպէս ամբողջ Աստուածաշունչին մէջ, այնպէս ալ Հաւատամքին մէջ բանալի բառ է «Չարչարեալ»ը, որ Աստուծոյ փրկագործական ծրագիրին ճշմարիտ հասկացողութիւնը կը բանայ մեր դիմաց:

Հին Կտակարանի մէջ այդ ծրագիրը կը նախապատկերացուի քաւութեան գոհերով, եւ ապա կը նախաձայնուի Օրէնքով ու մարգարէներով: Ամէն մեղք գործող մահուան դատապարտուած է (Եզ 18.4): Արդ, որովհետեւ բոլոր մարդիկ մեղքի մէջ են, բոլորն ալ մահուան դատապարտութեան տակ են: Չոհերու արիւնը միայն խորհրդանշական քաւութիւն մը կու տար իրենց, պարզապէս մատնանշելով՝ թէ Աստուած ճշմարիտ քաւութիւնը պիտի տայ ի՛ր ընտրած յատուկ Չոհով, որ կենդանիներուն մէջէն ընտրուած պիտի չըլլար, բայց որ խորհրդանշականօրէն պիտի կոչուէր «Աստուծոյ Գառնուկը, որ աշխարհի մեղքը կը վերցնէ» (Յհ 1.29): Եսայի մարգարէ այդ Չոհը կը նոյնացնէ Օծեալին հետ, կամ Աստուծոյ ընտրեալ Ծառային հետ, որ իր չարչարանքներով մեր անօրէնութիւնը պիտի վերցնէր ու մեզ հոգեւորապէս բժշկէր ու փրկէր (տե՛ս Ես 53րդ գլուխ):

Նոր Կտակարանը մեզի ցոյց կու տայ կատարումը այդ խոստումներուն: Քրիստոս ինք ցոյց տուաւ թէ ամբողջ Հին Կտակարանը իր մասին է որ կը խօսի (Յհ 5.39), թէ իր կեանքն ու չարչարանքները կատարումն են բոլոր գրուածներուն (Մտ 16.21-23, 20.17-19, 26.53-54: Հմմտ Ա.Կր 15.3-4), եւ ինք պէտք է իր կեանքը տայ բոլոր մարդոց փրկութեան համար (Մր 10.45: Գրծ 26.22-23: Ա.Տմ 2.5-6: Տիտ 2.14):

2.- Չարչարեալ, խաչեալ:

Չարչարանքները միայն խաչին վրայ ապրուած տանջանքները չեն, այլ՝ համապարփակ կերպով այն բոլոր փորձութիւնները, նեղութիւնները եւ տառապանքները, որ Աստուածորդին կամաւորապէս կրեց, անոնց ընդմէջէն մեզի փրկութիւն բերելու համար:

Չարչարանքներուն լրումը մահն է անշուշտ: Իսկ եթէ Հաւատամքին մէջ մահը չի յիշուիր, պարզապէս անոր համար՝ որ ատիկա ինքնաբերաբար կը հասկցուի թէ՛ «խաչեալ» բացատրութենէն եւ թէ՛ հետեւող «թաղեալ» բացատրութենէն:

3.- Աստուած ի՞նչպէս կրնայ չարչարուիլ:

Աստուածութիւնը ի՞նչպէս կրնայ չարչարուիլ: Չէ՞ որ Աստուած անչարչարելի է: Թէպէտեւ աստուածութիւնը անչարչարելի է, բայց չարչարուեցաւ՝ մարմնովը: Նոյնպէս, անմահ է աստուածութիւնը, բայց, ինչպէս կ'ըսէ Պօղոս առաքեալ, Յիսուս «"հրեշտակներէն քիչ մը վար" դասուեցաւ՝ մահուան չարչարանքը յանձն առնելու համար, որպէսզի Աստուծոյ շնորհքով բոլոր մարդոց փոխարէն մահը ճաշակէ» (Եբր 2.9): Այսպէս ըլլալով հանդերձ, երբեք չե՛նք ըսեր՝ թէ՛ Քրիստոսի մէջ միայն մարդը չարչարուեցաւ, այլ՝ Աստուածորդին ինքը չարչարուեցաւ իր մարմնով:

Տեսանք, թէ Եկեղեցին կը դաւանի Քրիստոսի կատարեալ աստուածութիւնը՝ անշփոթ եւ անբաժանելի կերպով միացած կատարեալ մարդկութեան: Երկու կատարեալ բնութիւններէն մէկ եւ միակ միացեալ, միաւորեալ բնութիւնն է այլեւս անիկա, եւ ուստի խաչելութիւնը, մահն ու յարութիւնը առանձին մարդկային բնութեանը չեն, այլ՝ միաւորեալ մէկ բնութեանը: Այս անշփոթ եւ անքակտելի միաւորութեան պատճառով՝ Քրիստոսի աստուածութեան յատուկ եղող բաները կ'ընծայուին նաեւ մարդկութեան, ինչպէս որ

մարդկութեան յատուկ բաները կ'ընծայուին աստուածութեան:

4.- Քրիստոսի չարչարանքներուն փրկագործական նշանակութիւնը:

Քրիստոս կամաւորաբար յանձն առաւ չարչարանքները, մարդոց փրկութեան համար:

5.- Քրիստոսի թաղումը եւ «դժոխք իջումը»:

«Թաղեալ» բացատրութիւնը Քրիստոսի ճշմարտապէս մեռած ըլլալը ցոյց կու տայ, իբրեւ պատասխան անոր մահը ուրացողներուն: Այս առիթով Նոր Կտակարանը կը հաստատէ, թէ Քրիստոս իր հոգիով գնաց քարոզեց բանտի մէջ գտնուող հոգիներուն (Ա.Պտ 3.18-19): Այդ «բանտը» մեռելներու աշխարհն էր, ուր Քրիստոս իջաւ անոնց ալ աւետելու համար իր բերած փրկութիւնը, որուն կը սպասէին անոնք եւս: Քրիստոս գնաց բնաջնջելու մահուան իշխանութիւնը, եւ ազատելու համար Հին Կտակարանեան ժամանակի բոլոր արդարները:

6.- Ո՞ր են մեռելները հիմա:

Հողեղէն ամէն գոյութիւն մահկանացու է: Մարդը ինք ալ հողեղէն է: Եւ թէպէտ իրեն շնորհուած էր կարելիութիւնը կենաց ծառէն ճաշակելով անմահ մնալու, բայց իր անհնազանդութեամբ մարդը կորսնցուց այդ վիճակը եւ իբրեւ մարմին՝ սահմանուեցաւ մահուան: Բայց մարդը նաեւ հոգի է, եւ հոգին ինք անմահ է: Մահը հոգիին անջատումն է մարմինէն: Արդ, ի՞նչ կ'ըլլայ եւ ո՞ր կերթայ մարմինէն անջատուած հոգին:

Արեւելքի բոլոր եկեղեցիները, ինչպէս նաեւ Հայոց Եկեղեցին, իւրաքանչիւր մարդու վերջնական հատուցումը կապուած կը տեսնեն ընդհանրական այն միակ դատաստանին, որ կապուած է Քրիստոսի 2րդ գալուստին եւ

մեռելներու յարութեան (Յյտ 20.11-15): Ո՞ր են հոգիները մինչ այդ: Անոնք բոլորը միատեղ կը մնան աննիւթական «վայր»ի մը մէջ, որ քրիստոնէական գրականութեան մէջ կը կոչուի «հոգիներու կայան»: Անոնք թեպէտ այժմ դատաստանին սպասման վիճակի մէջ են, բայց իրենց սպասող արդար հատուցումին գիտակ են հիմակուրնէ, եւ ըստ այնմ ալ կը նախաճաշակեն իրենց յաւիտենական երանութիւնը կամ տանջանքը:

Հայաստանեայց Եկեղեցին առանձնական դատաստան եւ անմիջական հատուցում չի ճանչնար, որովհետեւ Աստուածաշունչը յայտնապէս հակառակը կ'ուսուցանէ (Եբր 11.39-40: Յյտ 6.9-11): Իսկ Քաւարանի մը մասին Աստուածաշունչը ո՛չ մէկ խօսք ունի:

ՀԱԻԱՏԱՍՔ

*«Յերրորդ աւուր յարուցեալ.
Էլեալ ի յերկինս նովին մարմնովն՝
նստաւ ընդ աջմէ Հօր»:*

1.- Քրիստոսի յարութեան կեդրոնական նշանակութիւնը մեր հաւատքին համար:

Քրիստոնէական հաւատքին հիմնաքարն է Քրիստոսի յարութիւնը, առանց որուն չկայ եւ չի կրնար ըլլալ մեր հաւատքը: Ճիշդ այդ մեծագոյն կարեւորութեան համար է, որ մենք Քրիստոսի Եկեղեցին կը հասկնանք իբրեւ Քրիստոսի յարութեան վկայող Մարմին: Դարձեալ ասոր համար է որ Պօղոս առաքեալ կ'ըսէ. *«Եթէ Քրիստոս յարութիւն առած չէ՝ զուր է մեր քարոզութիւնը, զուր է նաեւ ձեր հաւատքը»* (Ա.Կր 15.14):

2.- Երրորդ օրը:

Ըստ օրացուցային հաշուամերուն, եւ ըստ Եկեղեցւոյ պահած աւանդութեան, Քրիստոսի խաչելութեան տարին, 30 թուականին, Հրեական Չատիկը Հինգշաբթի օր մըն էր: Արդ, Վերջին Ընթրիքը տեղի ունեցաւ Հինգշաբթի արեւմարէն անմիջապէս ետք, երբ հրեական օրացոյցին համաձայն կը սկսէր Նիսան ամսուն 15-ը, այսինքն՝ Չատիկի տօնը: Նոյն իրիկունը եւ գիշերը տեղի ունեցան ձերբակալութիւնը, դատավարութիւնը եւ չարչարանքները, եւ առտու կանուխ տրուեցաւ մահավճիռը: Խաչելութիւնը տեղի ունեցաւ Ուրբաթ առտու ժամը իննին, իսկ կէսօրէ ետք ժամը երեքին Յիսուս աւանդեց իր հոգին, եւ յաջորդ երկու ժամերուն ընթացքին խաչէն իջեցուեցաւ եւ դրուեցաւ գերեզման:

Յարութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ երեկոյեան կամ գիշերը, որ արդէն Մէկշաբթի կամ Կիրակի օրը կ'ըլլար, ըստ օրերը հաշուելու Հրեական կերպին, եւ կ'ըլլար երրորդ օրը,

ինչպես որ ատիկա նախագուշակուած էր Ովսէա մարգարէին կողմէ (Ովս 6.12):

3.- Քրիստոսի յարութիւնը՝ պատմութեան մեծագոյն հրաշքը:

Քրիստոսի յարութիւնը ապացոյցն է իր աստուածութեան: Մարդիկ կրնային չհաւատալ իր խօսքերուն, եւ շատեր չհաւատացին: Մարդիկ կրնային չհաւատալ իր գործերուն, հրաշքներուն ու բժշկութիւններուն, եւ շատեր չհաւատացին: Իբրեւ գերագոյն հրաշք եւ իբրեւ գերագոյն ապացոյց՝ Քրիստոս անոնց ընծայեց իր մահը եւ յարութիւնը, որոնք նախագուշակուած էին Աստուածաշունչին մէջ:

4.- Քրիստոսի յարութեան անհերքելի իրականութիւնը:

Աւետարանները բոլորն ալ, եւ ամբողջ Նոր Կտակարանը կը վկայեն Քրիստոսի յարութեան: Քրիստոս ինք բազմաթիւ առիթներով խօսեցաւ իր չարչարանքներուն, մահուան, երեքօրեայ թաղման եւ յարութեան մասին, սկիզբէն իր աշակերտներն ու հետեւորդները նախապատրաստելու համար այս կարեւոր իրականութեան:

Ղուկաս Աւետարանիչ կը պատմէ, թէ իր յարութենէն ետք Քրիստոս երկու առիթներով իր աշակերտներուն խօսեցաւ Հին Կտակարանի մէջ իր չարչարանքներուն, մահուան եւ յարութեան կապակցութեամբ գրուածներուն եւ անոնց կատարումին մասին (Ղկ 24.25-27 եւ 44.47):

5.- Պէտք էր իրականանային գրուածները:

Ի՞նչ էին «Օրէնքի գիրքին, մարգարէական գիրքերուն եւ Մաղմունքներուն մէջ» այս մասին գրուածները: Այդ նախագուշակումներէն մէկ-երկուքը բացայայտ հաստատումներ են, միւսները ակնարկութիւններ, բայց որոնց մեկնութիւնը անխուսափելիօրէն մեզ կը յանգեցնէ նոյն

իրականութեան: Տե՛ս Սղ 69.5 եւ հմմտ Յհ 15.25: Տե՛ս Սղ 41.10 եւ հմմտ Մտ 10.4: Տե՛ս Չք 11.12-13 եւ հմմտ Մտ 26.14-16 եւ 27.3-10: Տե՛ս Չք 13.7 եւ հմմտ Մտ 26.31: Տե՛ս Ես 53.10-12 եւ հմմտ Մտ 27.12-14 եւ Ա.Պտ 2.21-25: Տե՛ս Ես 50.6 եւ հմմտ Մտ 26.67 եւ 27.26: Տե՛ս Սղ 22.8 եւ հմմտ Մտ 27.29-30: Տե՛ս Սղ 22.17 եւ հմմտ Ղկ 23.33: Տե՛ս Սղ 22.18 եւ հմմտ Մտ 27.35: Տե՛ս Սղ 69.22 եւ հմմտ Յհ 19.28: Տե՛ս Չք 12.10 եւ հմմտ Յհ 19.37: Տե՛ս Սղ 36.1 եւ հմմտ Ղկ 23.46: Տե՛ս Ամս 8.9 եւ հմմտ Մտ 27.45: Տե՛ս Ելք 12.46 եւ հմմտ Յհ 19.33 եւ 36: Տե՛ս Ես 53.12 եւ հմմտ Մտ 27.38: Տե՛ս Ես 53.9 եւ հմմտ Մտ 27.57-60: Տե՛ս Սղ 16.10 եւ հմմտ Գրծ 2.29-31: Տե՛ս Սղ 68.19 եւ հմմտ Գրծ 1.9 եւ Եփ 4.8: Տե՛ս Սղ 110.1 եւ հմմտ Սր 16.19, Գրծ 2.34 եւ Եբր 1.3:

6.- Քրիստոս ի՞նք յարութիւն առաւ, թե՛ Հայրը զայն յարուցանեց:

Աստուածաշունչէն երկու կարգի վկայութիւններ ունինք: Բնագիրներուն մէկ մասը կ'ըսէ՝ թե՛ Հայրը յարուցանեց Քրիստոսը, իսկ միւս մասը կ'ըսէ՝ թե՛ Քրիստոս ինք յարութիւն առաւ: Բայց ոեւէ զատորոշում ձեւական է. Որդին Հօրմէն անբաժան է, եւ անոր հետ մէկ (Յհ 10.30): Չկայ աստուծային ոեւէ գործ կամ կարողութիւն, որ Որդին չունենայ, ինչպէս որ ինքը ըսաւ. «Ինչ որ Հայրս ունի՝ իմս է» (Յհ 16.15): Հօրը գործը իրն է, եւ իր գործը՝ Հօրը: Հետեւաբար չի կրնար ըլլալ որ յարութիւնը Հօրը գործը ըլլայ, եւ միաժամանակ չըլլայ Որդիին գործը: Ատիկա միեւնոյն ատեն ամենասուրբ Երրորդութեան վերաբերող անհերքելի ճշմարտութիւն մըն է, կապուած նաեւ Սուրբ Հոգիին (Հռ 1.3-4):

7.- Յարուցեալ մարմինը՝ նոյն մարմինը:

«Յարութիւն» բառը ինքնին ցոյց կու տայ, թե՛ իսօսքը կը վերաբերի նոյն այն մարմինին կամ անձին, որ մեռած էր եւ հիմա յարութիւն կ'առնէ: Յստակ է, հետեւաբար, որ երբ կը

խօսինք «յարուցեալ մարմին»ի մը մասին, այդ նոյն մարմինը նախապէս մեռած մարմինը պէտք է ըլլայ:

«Նոյն մարմինը» հաստատումը այստեղ պարզապէս կ'ուզէ ըսել, որ յարուցեալ մարմինը նախկինէն տարբեր է նոր մարմին մը չէր, ո՛չ ալ անիրական է երեւութական մարմին մըն էր: Այլ՝ նոյն այն մարմինն էր, որ Քրիստոս նախապէս ունէր, եւ այս յարուցեալ մարմինը նոյնքան իրական ու ճշմարիտ մարմին մըն էր, միտով ու ոսկորով, տեսանելի ու շօշափելի (տե՛ս Ղկ 24.39: Յհ 20.27):

Միւս կողմէ, սակայն, Պօղոս առաքեալ մեզի կը բացատրէ՝ թէ ի՛նչ է տարբերութիւնը յարութենէն առաջ մեր սովորական մահկանացու մարմինին, եւ յարութենէն ետք նոյն այդ մարմինին ձեռք բերած նոր վիճակին, որ կը կոչենք «փառաւորեալ» վիճակ: Այժմ մեր մարմինները «շնչաւոր» են, եղծանելի, անարգ, տկար, մահկանացու. յարութենէն ետք պիտի ըլլան՝ «հոգեւոր», անեղծ, փառաւոր, զօրաւոր եւ անմահ (տե՛ս Ա.Կր 15.42-44): Այս բոլորով հանդերձ, տարբեր մարմիններ պիտի չըլլան, այլ՝ նոյն մարմինը որ նախապէս ունէինք, եւ որ Աստուած սկիզբէն սահմանած էր յարութեան:

8.- Նոյն մարմինով երկինք ելաւ:

Կարգ մը աղանդաւորներ կ'ըսէին, թէ Քրիստոս մարմինով չէր որ երկինք համբարձաւ: Մարմինը իրեն հետ երկինք չտարաւ, կ'ըսէին անոնք, այլ՝ օդին մէջ տարրալուծեց, կամ լուսատուներէն մէկուն վրայ ձգեց: Հաւատամքը ինչպէս մարդեղութեան մէջ կը շեշտէր Քրիստոսի աստուածութեան եւ մարդկութեան անբաժանելի եւ անշփոթ միաւորութիւնը, նոյնպէս կը դաւանի, թէ յարութենէն ետք նոյն միաւորութիւնը մնաց անքակտելի, Մարդու Ռդդի եղած Աստուածորդին իր մարմնով համբարձաւ երկինք:

9.- Հօրը աջ կողմը նստաւ:

Աջ կողմը նստիլը՝ նշանակ է պատիւի, փառաւորութեան, հաւասարապատուութեան: Ասով Աստուածաշունչը յստակօրէն կը յայտնէ, թէ Որդին աթոռակից եւ փառակից է Հօրը (Յհ 6.61-62: Հմմտ Ղկ 22.66-69: Կդ 3.1: Եբր 8.1):

ՀԱԻԱՏԱՄՔ

*«Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր,
ի դատել զկենդանիս եւ զմեռեալս:
Որոյ թագաւորութեանն ո՛չ գոյ վախճան»:*

1.- Գալոց է - «Պիտի գայ»:

Քրիստոնէական մեր հաւատքին կարեւորագոյն երկրորդ հաստատումը, որ սպասումն է որոշակի ժամանակակէտի մը, Քրիստոսի երկրորդ գալուստին, որ պիտի ըլլայ աւարտը ներկայ ժամանակին եւ սկիզբը գալիք յաւիտենական կեանքին:

Երկրորդ գալուստը Նոր Կտակարանի մէջ կը յատկանշուի քանի մը կարեւոր երեւոյթներով.-

1.- Ամբողջացումը տիեզերքի նպատակին, ներկայ կարգին, եւ սկիզբը նոր կարգին:

2.- Փրկութիւն: Ազատագրութիւնը մեր մարմիններուն եւ ամբողջ աշխարհին (հմմտ Հո 8.19-25):

3.- Մեռելներու յարութիւն: (Ա.Կր 15.20-23: Ա. Թս 4.14):

4.- Դատաստան: Մարդու Որդիին գալուստը պիտի ըլլայ փայլակի մը պէս, անսպասելի եւ շանթահարող, եւ Աստուծոյ դատաստանը պիտի բերէ չար աշխարհին վրայ, ճիշդ ինչպէս Նոյի օրերուն պատահեցաւ ջրհեղեղով (Մտ 24.27, եւ 37-39): Այն ատեն սուրբերը իրենց փառքը պիտի հագնին, իսկ չարագործները իրենց դատապարտութիւնը ստանան:

5.- Հատուցում՝ մարդոց գործերուն համաձայն: Իւրաքանչիւրը իր մարմինով պիտի ընդունի հատուցումը երկրի վրայ իր կատարած բարի կամ չար գործերուն (Բ.Կր 5.10):

6.- Նոր երկինք եւ նոր երկիր: Տիրոջ անակնկալ գալուստով աշխարհը պիտի վերափոխուի, եւ պիտի կատարուի նոր երկինքի եւ նոր երկրի խոստումը (հմմտ Ես 65.17):

Եկեղեցին կ'ապրի սպասումովը այդ գալուստին, որ մօտալուտ է, թեպէտ անոր ժամն ու ժամանակը չենք գիտեր:

2.- Նովին մարմնովն:

Աստուածորդին, Աստուած Բանը, մարմնացաւ՝ ո՛չ թէ ժամանակաւորապէս իր վրայ առնելով մարմինը, այլ՝ միանգամընդմիջտ միացաւ սուրբ կոյս Մարիամէն առած իր մարմինին, եւ այնուհետեւ ա՛լ յաիտենապէս անբաժանելի կը մնայ անկէ: Նոյն այդ մարմինով երկինք համբարձաւ եւ Հօրը աջ կողմը նստաւ, իր թագաւորութիւնը առնելով. եւ նոյն այդ մարմինով է որ վերստին պիտի գայ իր աստուածային փառքով, եւ նոյն այդ մարմինով է որ դատաստանի աթոռը պիտի նստի, դատելու համար ողջերն ու մեռեալները:

Ասիկա նախ կը շեշտէ Քրիստոսի անձին անփոփոխելի նոյնութիւնը, եւ մեր փրկութեան անփոփոխելի իրականութիւնը: Ասիկա կը շեշտէ նաեւ երկրորդ գալուստին տեսանելիութիւնը, թէ Քրիստոս պիտի վերադառնայ երեւելի կերպարանքով, եւ տեսանելի պիտի ըլլայ բոլորին:

3.- Եւ փառօք Հօր:

«Հօրը փառքով» բացատրութիւնը երբեք չի նշանակեր թէ այդ փառքը յատուկ է Հօրը, բայց ոչ՝ Որդիին: Չի նշանակեր թէ միայն Հայրը ունի այդ փառքը, եւ ոչ՝ Որդին: «Ինչ որ Հայրս ունի՝ իմս է», կ'ըսէ Քրիստոս (Յհ 16.15): Այդ փառքը յատուկ է աստուածային բնութեան, եւ ինչ որ յատուկ է աստուածութեան, յատուկ է հաւասարապէս Սուրբ Երրորդութեան բոլոր անձերուն: Հետեւաբար Հօրը փառքը խորքին մէջ նաեւ Որդիին փառքն է, ինչպէս նաեւ փառքն է Սուրբ Հոգիին:

Այստեղ այդ փառքը ինքն իր մէջ չէ՛ որ կը դիտուի, այլ՝ կապուած Քրիստոսի երկրորդ գալուստին, որ փառքով վերադարձը պիտի ըլլայ: Ներկայ ժամանակին մէջ, առաջին գալուստի օրերուն մարդիկ գայն տարբեր կերպով տեսան ու

ճանչցան, առանց իր թագաւորական փառքին, որ կամաւորաբար մերկացած էր մեր փրկութիւնը իրագործելու համար: Բայց ապա իր փրկագործութեան պարգեւները մեզի բաշխելէ ետք ժամանակաւոր կերպով «հեռաւոր երկիր» գնաց, իր թագաւորական փառքով վերադառնալու համար օր մը, եւ ահա երկրորդ գալուստը վերադարձի այդ օրը պիտի ըլլայ, երբ անիկա իր աստուածային ամբողջ փառքով պիտի գայ, իբրեւ Փրկիչ (Եբր 9.28) եւ Դատաւոր (Յհ 5.22-23: Գրծ 10.42):

4.- Ի դատել զկենդանիս եւ զմեռեալս:

Աստուած է Դատաւորը բոլորին: Երբ կ'ըսենք «Աստուած», կը հասկնանք Սուրբ Երրորդութիւնը: Բայց դատաւորական գործը հաւասարապէս երեք անձերունը ճանչնալով հանդերձ, Հին եւ Նոր Կտակարաններէն գիտենք, թէ այդ պաշտօնը մասնաւորապէս կը վերաբերի Որդիին (Յհ 5.22-23):

1.- Քրիստոս այդ պաշտօնը ունի՝ նախ իբրեւ արարիչ, որ իր պատկերով ստեղծեց մարդը, եւ զայն իշխան ու տնտես կարգեց աշխարհին:

2.- Քրիստոս այդ պաշտօնը ունի իր մարդեղութեանը մէջ, իբրեւ հաղորդակից մարդկային մեր բնութեան:

3.- Քրիստոս այդ պաշտօնը ունի մանաւանդ իբրեւ Փրկիչ, որովհետեւ իր արիւնով գնեց մարդը մեղքի եւ մահուան ծառայութենէն:

4.- Քրիստոս այդ պաշտօնը ունի, դարձեալ, իբրեւ մահուրնէ կեանքի անցած Մարդու Որդին, որ իր մահուամբ եւ յարութեամբ ձեռք բերաւ այդ դատաւորական իշխանութիւնը (Հռ 14.9):

5.- Որոյ թագաւորութեանն ո՛չ գոյ վախճան:

Աստուած, իբրեւ Տէրը եւ արարիչը տիեզերքին, ինքն է նաեւ անոր Թագաւորը: Եւ այս տիեզերական

Թագաւորութիւնը անդադար ներբողուած իրականութիւն է Աստուածաշունչին մէջ: Ինքնին հասկնալի է, որ այդ թագաւորութիւնը ամենասուրբ Երրորդութեանն է, հաւասարապէս Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին:

Բայց սկիզբէն իսկ Աստուած յայտնեց, թէ իր կամքն է՝ որ այդ երկնաւոր թագաւորութիւնը նաեւ իր արտայայտութիւնը գտնէ երկրի վրայ, այն սերունդին կեանքին մէջ, որ Աբրահամով իրեն կանչուած սերունդը պիտի ըլլար, իր սեփական ժողովուրդը, սուրբ ազգ մը, քահանաներու թագաւորութիւն մը (Ելք 19.5-6: Հմմտ Ա.Պտ 2.5,9: Յյտ 1.6, 5.10, 20.6):

Արդ, Աստուած բազմաթիւ անգամներ Աբրահամի այդ սերունդին տուաւ իր խոստումը, թէ իրենցմէ պիտի տայ թագաւոր մը, որուն թագաւորութիւնը յաւիտենական պիտի ըլլայ (Դն 2.44, 7.13-14): Այդ թագաւորութիւնը պիտի գար իր Օծեալին ձեռքով: Նոր Կտակարանը ցոյց կու տայ այս խոստումներուն կատարումը Քրիստոսով (Ղկ 1.32-33):

ՀԱԻԱՏԱՍՔ

*«Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին,
յանեղն եւ ի կատարեալն»:*

1.- Սուրբ Հոգին:

Աստուածաշունչը կ'ուսուցանէ, թէ Սուրբ Հոգին Աստուած մէկն է ամենասուրբ Երրորդութենէն (Մտ 28.19: Բ.Կր 13.13):

Նիկիական Հանգանակին մէջ սկզբնապէս ռեւէ բան չկար Սուրբ Հոգիին մասին: 4րդ դարուն, երբ Արիոս Աղէքսանդրացի եւ Կոստանդնուպոլսոյ պատրիարք Մակեդոն ուրացան Սուրբ Հոգիին աստուածութիւնը եւ զայն «արարած» համարեցին, 381 թ. գումարուեցաւ Կոստանդնուպոլսոյ ժողովը, որ տիեզերական 2րդ ժողով կը կոչենք: Հոն հաւաքուած 150 հայրապետներ դատապարտեցին Մակեդոնը, զօրեղապէս հերքելով անոր մոլորութիւնը:

2.- Սուրբ Հոգիին բղիտումը Հօրմէն:

Քրիստոս Սուրբ Հոգիին համար ըսաւ, «Որ Հօրմէն կ'ելլէ»: Նոր Կտակարանը երբ կը խօսի Հօրը եւ Սուրբ Հոգիին առնչութեան մասին, այսինքն՝ անոնց ներքին կապին մասին, կը գործածէ «ելում» բառը, իսկ աստուածաբանական գրականութիւնը աւելի յաճախ կ'օգտագործէ «բղիտում» բառը:

Ա.- Այս բղիտումը առաջին հերթին կը նշէ Սուրբ Հոգիին սկիզբը Հօրմէն, ընդգծելու համար նոյնութիւնը Հօրը եւ Հոգիին էութեան կամ բնութեան:

Բ.- Այս բղիտումը աղբիւրի պատկերին ընդմէջէն մեզի ցոյց կու տայ Սուրբ Հոգիին շարունակական բղիտումը կամ արտահոսումը Հօրմէն, ինչ որ միաժամանակ կը նշէ անհատ եւ անբաժանելի ըլլալը անկէ:

Գ.- Այս բղխումը ցոյց կու տայ, որ Սուրբ Երրորդութեան գործունէութեան մէջ երեք անձերուն ալ գործը նոյնն է:

3.- Սուրբ Հոգին Աստուած, «անեղ եւ կատարեալ»:

Արիոսի եւ Կոստանդնուպոլսոյ պատրիարք Մակեդոնի մոլորութեան դէմ, Կ. Պոլսոյ տիեզերական ժողովը Հաւատամքին մէջ շեշտեց՝ թէ Սուրբ Հոգին «անեղ» է, այսինքն՝ «եղած չէ», ստեղծուած մը չէ, արարած մը չէ: Բայց նոյն բառը ինքնաբերաբար կը հաստատէ, թէ Սուրբ Հոգին ինքնագոյ է, եւ հետեւաբար՝ արարիչ է եւ ստեղծող, ինչ որ կը նշանակէ՝ թէ Աստուած է:

Աստուածաշունչը ինք «Աստուած» կը կոչէ Սուրբ Հոգին (հմմտ Բ.Թգ 23.1-3: Գրծ 5.3-4: Ա.Կր 3.16, 12.4-7): Սուրբ Հոգիին աստուածութեան մասին կը վկայեն նաեւ իրեն տրուած ստորոգելիները կամ յատկութիւնները.- Ամենակարող, ամենագէտ, անսահման: Այս յատկութիւնները անսխալ կերպով ցոյց կու տան, թէ Սուրբ Հոգին արարած մը չէ՝, այլ՝ Աստուծոյ էութեան հաղորդակից, անոր բնութենակից եւ աստուածային փառքին ու կամքին, կարողութեան ու զօրութեան, ստեղծագործութեան ու նախախնամութեան ամբողջապէս բաժնեկից անձնաւոր էակն է, մէկը անբաժանելի Սուրբ Երրորդութենէն:

Սուրբ Հոգիին աստուածութեան մասին կը վկայեն նաեւ իրեն վերագրուած աստուածային գործերը, որոնք արարածի յատուկ չեն: Անիկա արարիչ է, նախախնամող է, հրաշագործ է: Ինքն է որ կը ներշնչէ մարգարէները եւ կը խօսի անոնց բերնով: Կ'օժէ, կ'առաքէ եւ կ'առաջնորդէ Մեսիան: Կը կառավարէ Եկեղեցին եւ անոր պաշտօնեաները: Կը սրբէ, կը լուսաւորէ, կ'արդարացնէ հաւատացեալները: Շնորհքներ կը բաշխէ բոլոր հաւատացեալներուն, մեր քրիստոնէական կեանքը ուղղելու եւ Եկեղեցւոյ ընդհանուր բարիքին ծառայեցնելու համար: Աստուծոյ սիրով կը լեցնէ մեզ եւ սիրոյ կեանքը կարելի կը դարձնէ մեզի համար: Ի վերջոյ, Սուրբ

Հոգիին աստուածութեան մեծագոյն վկայութիւնը Քրիստոս ի՛նք կու տայ (Մտ 12.31-32):

4.- Սուրբ Հոգիին կատարեալ անձնաւորութիւնը:

Սուրբ Հոգիին աստուածութիւնը ուրացողները կը մերժէին նաեւ անոր կատարելութիւնը, այսինքն՝ կը մերժէին Սուրբ Հոգին ճանչնալ իբրեւ անձ, եւ (այսօրուան Եհովայի Վկաներուն պէս) զայն կը համարէին պարզապէս աստուածային ոյժ մը կամ զօրութիւն մը, եւ ո՛չ թէ անձ մը:

Բայց Աստուածաշունչը մեզի ցոյց կու տայ, թէ Սուրբ Հոգին բանական եւ գիտակից անձ մըն է: Բանականութենէ եւ ինքնութենէ զուրկ պարզ «զօրութիւն» մը ի՞նչպէս կրնայ խօսիլ տալ առաքեալներուն (Գրծ 2.4), ի՞նչպէս կրնայ խորհիլ (Հռ 8.27), կամ խօսիլ (Մտ 10.19-20), առաջնորդել մարդիկը կամ Եկեղեցին (Յհ 16.13), մխիթարել ու յանդիմանել (Յհ 16.8), տրտմիլ (Եփ 4.30), քննել մարդոց մտածումները եւ Աստուծոյ խորհուրդները (Ա.Կր 2.10-11), եւ բարեխօս ըլլալ մեզի համար (Հռ 8.26-27): Ասոնք անառարկելի կերպով ցոյց կու տան, թէ Սուրբ Հոգին կատարեալ անձնաւորութիւն մըն է:

5.- Սուրբ Հոգին ուսուցիչը եւ առաջնորդը Եկեղեցւոյ:

Ինչպէս Քրիստոս ինք ըսաւ, Սուրբ Հոգին ինքն է ուսուցիչը Եկեղեցւոյ, որ ո՛չ միայն մնայուն կերպով կը յիշեցնէ եւ բոլոր ժամանակներուն համար կը նորոգէ կամ կը թարմացնէ Քրիստոսի ուսուցումները, այլ նաեւ նոր յայտնութիւն կու տայ (Յհ 14.25-26): Ինքն է որ կը մատակարարէ եւ կը բաւարարէ Եկեղեցւոյ կեանքին հիմնական կարիքները՝ վարդապետական, ծիսական ու վարչական երեսներուն մէջ, ինչպէս նաեւ ընդհանուր Եկեղեցւոյ թէ անհատ հաւատացեալներու հոգեւոր կեանքին աճումն ու յառաջընթացը՝ շնորհքներու մատակարարումով (Ա.Կր 12.4-11 եւ 13):

Իրմով է որ վերստին կը ծնինք Աստուծոյ համար (Յհ 3.6-8): Իրմով է որ քրիստոնէական կեանք մը Սուրբ Հոգիին պարգեւած նորոգութեամբ կը յատկանշուի (Յհ 6.63: Գղ 3.2-3), եւ Սուրբ Հոգիով կարելի կը դառնայ, կ'ամրապնդուի ու հաստատուն կը մնայ (Բ.Կր 1.21-22: Եփ 3.14-17): Իրմով է որ ներում կը գտնենք մեր մեղքերուն (Յհ 20.22), եւ ձեռք կը բերենք Աստուծոյ պարգեւած ազատութիւնը եւ արդարութիւնը (Բ.Կր 3.9 եւ 17-18), մեր վրայ կ'առնենք Աստուծոյ սպառազինութիւնը (Եփ 6.11-17), կամաց-կամաց ձերբազատուելով մարդկային գործերէն եւ հասնելով առաքինի կեանքի մը գեղեցիկ արդիւնքին (Հռ 8.9-17: Գղ 5.16-25): Իրմով է որ Աստուծոյ տաճար եւ բնակարան կը դառնանք (Յհ 14.15-17 եւ 23: Հմմտ Ա.Պտ 4.14), եւ աստիճանաբար կը փոխակերպուինք, պատրաստուելով ապագայ ամբողջական պայծառակերպութեան (Բ.Կր 5.4-5):

ՀԱԻԱՏԱՍՔ

«Որ խօսեցաւ յՕրէնս եւ ի Մարգարէս եւ յԱւետարանս»:

1.- Սուրբ Հոգին՝ աշխարհի մէջ հնչող մնայուն ձայնը Աստուծոյ:

Ինչ որ Հաւատամքին այս տողին մէջ կը խտանայ, Եկեղեցոյ հաւատքն է, թէ Աստուծոյ ամբողջ յայտնութիւնը, որ մենք կը կոչենք «Աստուածաշունչ», Խօսքն է կամ գործն է Սուրբ Հոգիին: Ա՛ն է տուիչը այն ներշնչումին, աստուածային այն մղումին, որով խօսեցան Աստուծոյ մարդիկը, աստուածային Օրէնքին տուիչները, մարգարէները, տեսանողները, եւ ավետարանագիրներն ու Նոր Կտակարանը գրի առնողները (Բ.Պտ 1.21: Ա.Պտ 1.10-12: Հմմտ Բ.Թգ 23.2: Ղկ 1.70: Գրծ 1.16):

2.- Սուրբ Հոգին խօսեցաւ Աստուածաշունչ Օրէնքին ընդմէջէն:

Այստեղ «Օրէնքը» բնական օրէնքը չէ, որ Աստուծոյ կողմէ մարդուն մէջ դրուած գիտակցութիւն եւ պահանջք մըն է՝ ներքին կարգաւորութեան ու կարգապահութեան: Ո՛չ ալ այն հասարակական օրէնքն է, որ ազգերու եւ ժողովուրդներու առաջնորդներուն կողմէ կը սահմանուի՝ մէկ կողմէ մարդոց արարքները սահմանաւորելու եւ անկարգութիւններն ու չարիքները սանձելու համար, եւ միւս կողմէ՝ անհատներու եւ ընկերութիւններու իրաւունքները ճշդելու եւ պաշտպանելու համար: Այստեղ «Օրէնք» բառով կը հասկցուի Աստուածաշնչական Օրէնքը: Ատոր համալ ալ յաճախ զայն կը գրենք գլխագիրով, զանազանելու համար սովորական օրէնքէն:

Աստուածաշունչին պարագային եւս, «Օրէնք» բառը մէկ եւ միակ իմաստով մը չի գործածուիր:

ա) Եբրայական մտածողութեան մէջ Հին Կտակարանը երեք մասերու կը բաժնուի.- Օրէնք (կամ՝ ուսուցում), Մարգարէներ, եւ Գիրքեր: Այս իմաստով՝ Օրէնքը կը ներկայանայ իբրեւ Աստուածաշունչին առաջին եւ հիմնական մասը:

բ) Յաճախ ամբողջ Հին Կտակարանը կը կոչուի «Օրէնք», նկատի ունենալով որ ո՛չ միայն զուտ օրինական գիրքերը, այլ՝ պատմական, մարգարէական եւ բանաստեղծական գիրքերը եւս Աստուծոյ օրէնքը բացատրելու եւ սորվեցնելու կը ծառայեն:

գ) Աստուածաշունչին իրաքանչիւր մասը կը բնորոշուի իբրեւ «Օրէնք»: Հին Կտակարանը՝ իբրեւ «Հին Օրէնք», եւ Նոր Կտակարանը՝ իբրեւ «Նոր Օրէնք»:

Աստուածային Օրէնքին նպատակը եռակի էր.- 1.- Մարդոց ճանչցնել Արարիչին հանդէպ իրենց արարածի հանգամանքը, եւ ճանչցնել իրենց յանցանքները, որոնք սրբագրուելու պէտք ունին (Գղ 3.19): 2.- Աստուածսիրութեան դաստիարակութիւնը տալ, Աստուծոյ եւ մարդոց հանդէպ սէր ուսուցանելով (Մտ 22.35-40): 3.- Բարին ուսուցանել, բարին խորհելու եւ գործելու հիմնական սկզբունքը տալով մարդոց (Մտ 7.12):

Աստուածաշնչական այս Օրէնքը երեք գլխաւոր խմբաւորումներու տակ կարելի է դասակարգել.- 1.- Բարոյական օրէնքներ, որոնցմով լեցուն է Աստուածաշնչական օրէնքը, եւ որոնց մէկ խտացումն է Տասնաբանեան: 2.- Խորական օրէնքներ: Ասոնք ծիսական կանոնները կամ պահանջներն են՝ զոհերուն եւ ուտելիքներուն, ծիսական լուացումներուն եւ մեղքերու քաւութեան կերպերուն կապուած: 3.- Դատաստանական օրէնքներ: Այսպէս կը կոչուին քաղաքացիական, ընկերային եւ անհատական (կալուածական, ամուսնական, ժառանգական, ելն) իրաւունքներու կապուած կանոնները,

որոնց վերաբերեալ դատաստանը պիտի վճռուէր Աստուծոյ կողմէ կարգուած դատաւորներու ձեռքով:

Աստուածաշնչական Օրէնքին նպատակը Աստուծոյ ժողովուրդին դաստիարակութիւնը եւ Քրիստոսի գալուստին պատրաստելն էր: Ճիշդ այս պատճառով ալ, Օրէնքը ժամանակաւոր դեր մը եւ պաշտօն մը ունէր (Գղ 3.23-26): Քրիստոս մեզի ցոյց տուաւ, որ Հին Կտակարանի Օրէնքին բարոյական պատուիրանները մեզի համար եւս ի զօրու կը մնան (հմմտ Մտ 19.16-19): Բայց ինչ կը վերաբերի ծիսական կամ խորական կամ դատաստանական օրէնքներուն, անոնք կարելոր մասով ի զօրու չեն մեզի համար (հմմտ Եփ 2.15: Եբր 7.12, 9.8-9), որ Քրիստոսով ունինք նոր Օրէնքը (Ա.Կր 9.21: Գղ 6.2), ազատութեան օրէնքը (Յկ 1.25, 2.12), Հոգիի՝ն օրէնքը (Հո 8.2), որ խորքին մէջ օրէնք չէ, այլ՝ շնորհք (Հո 6.14):

3.- Սուրբ Հոգին խօսեցաւ մարգարէներուն ընդմէջէն:

Մարգարէն Աստուծոյ «բերանը» կամ խօսնակն է, Աստուծոյ պատգամախօսը: Այն անձն է, որուն Աստուած իր կամքը եւ իր գործը կը յայտնէ: Այդ իմաստով մարգարէն կը ներկայանայ երեք պաշտօններով.- 1.- Ան աստուածային վկայախօսը կամ վկայագրողն է անցեալ պատմութեան (Մովսէս, նախկին մարգարէներ): 2.- Ան Աստուծոյ ձայնը եւ ազդարարութիւնն է ներկայ ժամանակներուն մէջ, սխալէն ու մեղքէն զգուշացնելու եւ դարձի կոչելու համար (Ա.Կր 14.24): 3.- Ան նախաձայնողը կամ նախագուշակն է ապագային, ըլլա՛յ դատապարտութեան (թէ՛ Իսրայէլի եւ թէ՛ այլ ազգերու), ըլլա՛յ խոստումներուն (Քրիստոսի, Աստուծոյ թագաւորութեան):

Սովորաբար մենք մարգարէութիւնը կը հասկնանք այս վերջին իմաստով, եւ «մարգարէութիւն» ըսելով կը հասկնանք՝ գուշակութիւն, ապագայի գիտութիւնը: Պատճառը այն է, որ մարդ արարածը շատ հետաքրքրուած չէ անցեալով: Անշուշտ հետաքրքրուած է ներկայով, բայց միայն ա՛յնքան՝ որքանը կը

բաւէ հանգիստ եւ հաճելի կեանք մը անցընելու համար: Մինչդէռ ապագան անձանօթ ըլլալուն համար թե՛ խորհրդաւոր է ու գրաւիչ եւ թե՛ հետաքրքրական է ու վախցնող, ահացուցիչ: Այդ պատճառով ալ, բոլոր ժամանակներու մարդն ալ ուզած է գիտնալ ապագան, գալիքը, վաղը:

Ապագան գիտնալու մարդոց հետաքրքրութիւնը փորձութեան կը վերածուի, եւ փորձութիւնը կ'առաջնորդէ անթոյլատրելի միջոցներու, որոնք երեւութապէս անմեղ կ'երեւին, բայց մարդս կը դնեն հոգեւոր ստրկութեան եւ անելի դիմաց, եւ յաճախ կ'աւարտին մարդուն կործանումով: Այս միջոցներն են՝ գուշակութիւնը, հմայութիւնը, դիւթութիւնը, կախարդութիւնը, ոգեհարցութիւնը, մեռելահմայութիւնը: Բայց ապագային ճշմարիտ գիտութիւնը միայն Աստուծոյ յատուկ է, եւ Աստուած իր մարգարէներուն միջոցաւ մարդուն կը յայտնէ միայն այն՝ ինչ որ իր փրկութեան ծրագիրին կը վերաբերի, եւ ինչ որ անհրաժեշտ է որ մարդը գիտնայ՝ փրկութեան հասնելու համար: Անկէ աւելին չարէն կու գայ (Բ.Օր 29.29):

4.- Սուրբ Հոգին խօսեցաւ Աւետարաններուն ընդմէջէն:

Օրէնքին եւ մարգարէներուն լրումն է Աւետարանը, որ դարձեալ իրականացաւ, ներշնչուեցաւ եւ արձանագրուեցաւ Սուրբ Հոգիին մղումով, եւ Սուրբ Հոգիին ներգործութեամբ ալ մշտականօրէն կը խօսի մարդոց սիրտերուն մէջ, զանոնք հրաւիրելով ապաշխարութեան եւ Քրիստոսով իրագործուած փրկութեան, եւ Աստուծոյ որդեգրութեան պարգեւին: Որովհետեւ ոեւէ մէկը Քրիստոսը մարմինով եկած չի կրնար խոստովանիլ առանց Աստուծոյ Հոգիին (հմմտ Ա.Յհ 4.2), ոեւէ մէկը չի կրնար արդարանալ, սրբուիլ ու փրկուիլ առանց Աստուծոյ Հոգիին (Ա.Կր 6.11: Ա.Պտ 1.2: Բ.Թս 2.12), եւ ոեւէ մէկը առանց Քրիստոսի Հոգիին չի կրնար զԱստուած «Աբբա, Հայր» կանչել (Գղ 4.6):

5.- Սուրբ Հոգին կը խօսի Եկեղեցիին ընդմէջէն:

Աստուածաշունչը եւ մանաւանդ Աւետարանները, Սուրբ Հոգիին կենդանի խօսքն է, որով Աստուած մնայուն կերպով «կը խօսի» Եկեղեցոյ մէջ, ինչպէս կը դաւանինք ամէն անգան որ Աւետարանի ընթերցում կը կատարուի եկեղեցիէն ներս, («ասէ Աստուած»):

Այդ Խօսքը կենդանի է եւ ազդու, որ կը թափանցէ մարդուս հոգիին մէջ եւ կը քննէ մտածումներն ու սրտի խորհուրդները (Եբր 4.12-13): Այդ խօսքը մնայուն կերպով կը հնչէ Եկեղեցոյ մէջ, որպէսզի հաւատացեալ թէ անհաւատ՝ զայն լսողները իրենց յանցանքին մէջ քննուին ու յանդիմանուին, անոնց սրտին գաղտնիքները երեւան գան, եւ անոնք խոնարհութեամբ ու խոստովանութեամբ ճանչնան զԱստուած (Ա.Կր 14.24-25):

ՀԱԻԱՏԱՍՔ

*«Որ էջն ի Յորդանան,
քարոզեաց յառաքելսն
եւ բնակեցաւ ի սուրբսն»:*

Այս նախադասութիւնը չկայ Նիկիական կամ Կոստանդնուպոլսոյ Հաւատամքին մէջ: Անիկա մեր գործածած Հաւատամքին մէջ յաւելում մըն է, որ լռելեայն պատասխան կու տայ կարգ մը աղանդներու արծարծած հարցերուն, յաւելեալ ճշդում բերելով աշխարհի մէջ Սուրբ Հոգիին գործունէութեան մասին:

ՈՐ ՅՈՐԴԱՆԱՆ (ԳԵՏԻՆ ՎՐԱՅ) ԻԶԱԻ

Այս կարճ նախադասութիւնը.-

1.- Պատասխան մըն է «Որդեգրական» աղանդին:

Առաջին դարէն իսկ կային աղանդաւորներ, որոնք զՔրիստոս Աստուծոյ Որդի ճանչնալով հանդերձ, կ'ըսէին՝ թէ անիկա պարզ մարդ մըն էր, որ Աստուծոյ յատուկ շնորհքը վայելեց եւ Աստուծոյ կողմէ որդեգրուեցաւ: Եւ որդեգրութեան պահը նոյնինքն Քրիստոսի մկրտութեան պահն էր,- կ'ըսէին,- երբ Սուրբ Հոգին իջաւ անոր վրայ: Բայց Հաւատամքը ամենագորեղ բացատրութիւններով կը հաստատէ Որդիին՝ մեր Տիրոջ եւ Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի կատարեալ աստուածութիւնը, որ տեղ չի ձգեր Որդեգրականութեան: Արդ, այս նախադասութիւնը լռելեայն կերպով կը մատնանշէ, թէ մկրտութեան պահուն Սուրբ Հոգին կը յայտնուի.-

Ա.- Վկայելու համար Որդիին եւ անոր աստուածութեան (Յհ 1.32-34):

Բ.- Տոյց տալու համար, որ Աստուած Քրիստոսով բոլոր մարդիկը կը կոչէ որդեգրութեան:

2.- Սկիզբ նոր ստեղծագործութեան:

Սուրբ Հոգին Աստուած ստեղծագործ զօրութիւնն է, եւ արարիչ (Յոր 33.4: Սղ 104.30): Քրիստոսի մկրտութիւնը հոգեւոր եւ նոր ստեղծագործութիւնն է, երբ Սուրբ Հոգին իր էջքով՝ Յորդանանը մկրտութեան աւազանի կը վերածէ, ինչպէս ամէն մկրտութեան խորհուրդի՝ Եկեղեցւոյ աւազանին վրայ իջնելով՝ զայն նոր Յորդանանի կը վերածէ, զայն կը վերածէ ստեղծագործութեան ջուրերուն (հմմտ Ծն 1.2), հոնկէ նորոգ ստեղծելու համար մկրտուելու եկած երախան, իբրեւ հոգեղինացած արարած եւ իբրեւ Աստուծոյ որդի:

3.- Ինչո՞ւ Սուրբ Հոգին աղանակերպ երեւցաւ:

Մկրտութեան պահուն, Սուրբ Հոգին Աստուած, որ իր էութեամբ եւ ներկայութեամբ ամբողջ տիեզերքը կը լեցնէ (հմմտ Եր 23.24), իր ներկայութիւնը մարմնաւորապէս զգալի եւ տեսանելի դարձուց մարդոց, աղանիկ կերպարանքով, (Մտ 3.16: Սր 1.10: Ղկ 3.21-22): Յիսուսի մկրտութեան պահուն, Սուրբ Հոգին աղանակերպ էջքը երեք խորհուրդներ կը բերէ մեզի.-

1.- Սուրբ Երրորդութեան յայտնութիւնը: Նոր Կտակարանին մէջ առաջին անգամ ըլլալով կը տեսնենք աստուածութեան երեք անձերուն միաժամանակ յայտնութիւնը:

2.- Սուրբ Հոգիին տեսանելի ներկայութիւնը՝ ապացոյց անոր առանձին անձնաւորութիւն ըլլալուն: Հին Կտակարանը յաճախ կը խօսի Հոգիին մասին, բայց անիկա կարծէք միշտ կը մնայ աստուածային անտեսանելի եւ խորհրդաւոր ոյժը, որ երբեք տեսանելի չի դառնար, իր անձնաւորութիւնը առանձնաբար չի դրսեւորեր: Մինչ ահա այստեղ կը յայտնուի «մարմնաւոր երեւոյթով», աղանիկ մը պէս: Հօրը եւ Որդիին կողքին այս երեւումը անսխալ կերպով ցոյց կու տայ Սուրբ Հոգիին զանազանութիւն Հօրմէն ու Որդիէն, եւ անոր անջատ անձնաւորութիւն մը ըլլալը, թէպէտ միաժամանակ անբաժանելի միութիւնը Հօրը եւ Որդիին հետ:

3.- Սուրբ Հոգիին հիմնական յատկանիշը: Սուրբ Հոգին կը յայտնուի աղանիի մը պէս, սակայն կերպարանքը կամ նմանութիւնը շփոթելու չէ Սուրբ Հոգիին ճշմարիտ ինքնութեան հետ: Աստուծոյ յայտնութիւնները ամէն անգամ տարբեր կերպարանքով կը կատարուին, իւրաքանչիւր անգամին Աստուծոյ տարբեր մէկ յատկանիշը արտայայտելու համար: Աղանին նշանակ է միամտութեան, անկեղծութեան, անմեղութեան եւ հաւատարմութեան: Քրիստոնէական Եկեղեցիին համար աղանին սրբութեան խորհրդանիշն է: Եւ Յորդանան գետին վրայ յայտնութիւնը ճիշդ այս սրբութեան կ'առնչուի, որովհետեւ մեր Տէրը բոլոր մարդոց տեղը ի'նք մկրտուեցաւ, զանոնք բոլորը մաքրելու եւ սրբելու համար իրենց մեղքերէն, նոր եւ անարատ սիրտ մը եւ հոգի մը տալու համար անոնց (հմտտ Սղ 51.7 եւ 10-11):

ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ ՈՒՍՈՒՑԱՆԵՑ

Այս հաստատումը կ'ակնարկէ Վերնատուն էջքին, եւ առաջին հերթին՝ առաքեալներուն շնորհուած նո'ր մկրտութեան (տե'ս Մտ 3.11: Գրծ 2.1-4):

Սուրբ Հոգիին կրակով մկրտութիւնը կը հասկցուի.-

Ա.- Նախ՝ հնոցի մը պէս, որ ամէն աղտ կ'այրէ եւ կը սպառէ:

Բ.- Կրակի գետի մը պէս, որ աշխարհ կ'երթայ՝ նոյնպէս այրելու մոլորիւններն ու մոլորութիւնները, եւ առաքիւնութեանց ոսկին եւ արծաթը փայլեցնելու:

Գ.- Բոցին աննիւթականութեամբ, ջերմութեամբ եւ մշտապէս դէպի բարձունք ձգտումին օրինակով՝ մարդիկը օրէ օր կը ձերբազատէ իրենց նիւթական ձգտումներէն, կը լեցնէ աստուածային սիրոյն եւ վերին ճշմարտութեանց սիրոյն ջերմութեամբն ու կրակովը, եւ զանոնք միշտ կը մղէ վեր:

Վերնատան մէջ բոցեղէն լեզուներու կերպարանքով իջնելով առաքեալներուն վրայ, Սուրբ Հոգին.-

- 1.- Առաքելները իր պատգամով (լեզու) լեցուց:
- 2.- Չանոնք օժտեց պարգեւներով, յատկապէս՝ ուսուցանելու կարողութեամբ:
- 3.- Քրիստոսի աստուածութեան ճանաչողութիւնը եւ ապացոյցը դրաւ անոնց սրտին մէջ:
- 4.- Առաքելները Քրիստոսի վկաներու վերածեց (Պենտէկոստէի օր):
- 5.- Քրիստոսի մկրտութեամբ սկսած նոր ստեղծագործութիւնը շարունակեց, ծնունդ տալով Քրիստոսի Եկեղեցիին:

ԵՒ ՍՈՒՐԲԵՐՈՒՆ ՄԷՋ ԲՆԱԿԵՑԱԻ

Աստուած սկիզբէն իր Հոգին տուաւ մարդուն, որպէսզի մարդը կարենայ յարաբերիլ Աստուծոյ հետ: Բայց մարդը իր արարքներով տրտմեցուց Աստուծոյ Հոգին, եւ Աստուած լքեց մարդը (Մն 6.3): Եւ սակայն բոլոր ժամանակներուն ալ Աստուծոյ Հոգին եկաւ եւ բնակեցաւ այն մարդոց մէջ, որոնք Աստուծոյ ներկայութեան ապրելու ջերմ ցանկութիւնը ունեցան, եւ իրեն հնազանդ կամք մը ցուցաբերեցին: (Հին Կտակարանի արդարներ, մարգարէներ):

Հոգեգալուստով, մարդկութենէն առնուած Սուրբ Հոգին վերստին պարգեւուեցաւ մարդկութեան: Մարդը վերստին դարձաւ տաճար եւ բնակարան Աստուծոյ: Դարձաւ Աստուծոյ նուիրուած «սուրբ»: Արդարեւ, սուրբերը եկեղեցւոյ ծիսական կեանքին մէջ յիշատակուող եւ տօնուող անձերը չեն միայն, այլ՝ բոլոր քրիստոնէաները: Նոր Կտակարանը «սուրբեր» կը կոչէ բոլոր քրիստոնէաները (հմմտ Հո 15.25 եւ 31: Բ.Կր 13.12: Փլպ 1.1, 4.23: Ա.Տմ 5.10 եւլն), որովհետեւ.-

Ա.- Անոնք Քրիստոսով սրբուած են (Ա.Կր 1.2: Հմմտ Յդ 1): Սրբուած են անոր աստուածային սրբարար Խօսքով ու զօրութեամբ, եւ տեւականօրէն կը սրբագործուին նոյն Խօսքով ու զօրութեամբ (Յհ 15.3, 17.17):

Բ.- Անոնք կանչուած են «սուրբեր ըլլալու», այսինքն՝ «Աստուծոյ սուրբ ժողովուրդը ըլլալու» (Հո 1.7: Ա.Կր 1.2: Բ.Տմ 1.9):

Գ.- Անոնք Աստուծոյ հետ իրենց միութիւնը վերագտած, եւ իրենք զիրենք ամբողջութեամբ Աստուծոյ նուիրած են:

Դ.- Անոնք իրենք զիրենք Աստուծոյ տաճար եւ բնակարան դարձուցած են:

Ե.- Անոնք սրբութեան ձգտող կեանքով մը կ'ապրին:

Գեղեցիկ է Հռոմայեցիներուն ուղղուած նամակին մէջ Պօղոս առաքեալի խորհրդածութիւնը, որ Սուրբ Հոգիով ապրուած կեանքի պատկերը կը գծէ, եւ մեզ բոլորս կը լեցնէ յոյսով, լաւատեսութեամբ եւ հոգիի խաղաղութեամբ, եւ ապագայ փառքին լուսեղէն հորիզոնը կը բանայ մեր միտքերուն դիմաց (Հո 8.1-17):

ՀԱԻԱՏԱՍՔ

*«Հաւատամք եւ ի մի միայն
ընդհանրական եւ առաքելական (սուրբ) եկեղեցի»:*

Ա.- Մինչեւ այստեղ, Հաւատամքին նիւթը աստուածութեան անձերուն վերաբերեալ դաւանութիւնն էր: Ասկէ կը սկսի երկրորդ բաժինը, որ կարելի է կոչել՝ հաւատքի աստուածայայտ ճշմարտութիւնները.- 1.- Եկեղեցի, 2.- Մկրտութիւն, 3.- Ապաշխարութիւն եւ մեղքերու թողութիւն, 4.- Մեռելներու յարութիւն, 5.- Յաւիտենական դատաստան, 6.- Երկինքի արքայութիւն, 7.- Յաւիտենական կեանք:

Բ.- Նիկիոյ հանգանակին վրայ եթէ ակնարկ մը նետենք, կը տեսնենք, որ այս նախադասութեամբ սկսող ամբողջ բաժինը չկայ այնտեղ: Այս բաժինը որդեգրուած է Կոստանդնուպոլսոյ տիեզերական ժողովով:

Ի՞նչ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ ԵԿԵՂԵՑԻ

Թե՛ Հին եւ թե՛ Նոր Կտակարաններուն մէջ յաճախ կը հանդիպինք «Եկեղեցի» բառին, որ բոլոր պարագաներուն ալ կը նշանակէ՝ «հաւաքոյթ», մանաւանդ՝ «պաշտամունքային հաւաքոյթ»: Աստուածաշունչին մէջ բնա՛ւ չի գործածուիր նշելու համար շէնքը, ուր տեղի կ'ունենայ նման պաշտամունքային հաւաքոյթը, այլ՝ միշտ ակնարկութիւն է հաւաքուածներուն, Աստուծոյ ժողովուրդին:

Ինչո՞ւ եւ ի՞նչ հանգամանքով կայ Եկեղեցին այս աշխարհի վրայ:

1.- Եկեղեցին այս աշխարհի վրայ Աստուծոյ ժողովուրդն է, Անոր «ժառանգութիւնը»: Աստուծոյ հաւատարիմներու հաւաքոյթն է ան, մարդկութեան աստուածապաշտ սերունդը, Մէթի սերունդը, Աստուծոյ «սեփական ժողովուրդը», իր «ժառանգութիւնը» (Բ.Օր 9.20: Սղ 28.9, 33.12 եւլն), որ

Աբրահամի մարմնաւոր սերունդը պիտի չըլլար: Աստուած այդ ժողովուրդը պիտի ընտրէր բոլոր ազգերէն:

2.- Եկեղեցին այս աշխարհի վրայ երկինքի քաղաքացիութեան պատրաստութեան վայրն է, Աստուծոյ օրէնքներուն պահպանութեամբ: Եկեղեցին, իբրեւ Աստուծոյ ժողովուրդ, պէտք է ապրի համաձայն Աստուծոյ դրած օրէնքներուն, որոնք երկնային հայրենիքին սահմանադրութիւնը կը կազմեն: Աստուծոյ ժողովուրդին համար դաստիարակութեան ամբողջ ընթացք մըն է անիկա, որմէ անհրաժեշտ է անցնիլ, ձեռք բերելու համար երկնային քաղաքացիութիւնը: Այդ պատճառով ալ Աստուած իր ժողովուրդին կեանքը կազմակերպեց այնպէս, որ անիկա աստուածապետութիւն մը ըլլայ: Այսինքն, ըլլայ ժողովուրդ մը, որուն Թագաւորը Աստուած ինքն է, եւ ի՛նքն է անոր Օրէնսդիրը եւ Դատաւորը:

3.- Եկեղեցին այս աշխարհի վրայ Աստուծոյ Ընտանիքն է: Իր ժողովուրդին հետ Աստուծոյ կապը ծնողական ջերմ կապն է: Եկեղեցին ո՛չ միայն Աստուծոյ ժողովուրդն է, այլ մանաւանդ՝ անոր Ընտանիքը (Եփ 2.19), ուր բոլորը անոր տղաքն ու աղջիկներն են, անոր գուրգուրանքին եւ բերկրալից սիրոյն առարկան:

4.- Եկեղեցին Քրիստոսի Հարսն է: Աստուած կը կամենայ իր ժողովուրդին հետ ունենալ աւելի մտերիմ սիրոյ կապ մը, որ կ'արտայայտուի այր եւ կնոջ ամուսնական մտերմագոյն կապին օրինակով: Այդ սէրն է որ իր Եկեղեցիին կը ցուցաբերէ երկնաւոր Փեսան՝ Քրիստոս:

5.- Եկեղեցին այս աշխարհի վրայ Աստուծոյ Արքայութեան նախանկարն է: Մենք ամէն օր Աստուծմէ կը խնդրենք, որ իր թագաւորութիւնը գայ (Մտ 6.10): Եւ ամբողջ Եկեղեցին արքայութեան այդ սպասումով է որ կ'ապրի, կ'աղօթէ եւ արթուն կը հսկէ: Բայց միաժամանակ գիտենք, որ իր մարդեղութեամբ Քրիստոս Աստուծոյ թագաւորութեան ներկայութեան ապացոյցները տուաւ, եւ իր յարութենէն 40

օրեր ետք երկինք համբառնալով Հօրը աջ կողմը նստաւ, ինչ որ Քրիստոսի թագաւորութեան հաստատումը կը նշէր երկրի վրայ, մանաւանդ Եկեղեցիին վրայ: Եկեղեցիին մէջ Քրիստոս կը թագաւորէ իր ամբողջ փառքով: Եւ մենք բոլորս իր շուրջն է որ կը բոլորուինք ամէն անգամ, երբ ի մի կու գանք մեր պաշտամունքին ու փառաբանութեան համար:

ՄԷԿ ԵԿԵՂԵՑԻ

1.- Եկեղեցին միայն մէկ վայրի մէջ հաւաքուած հաւատացեալները չի նշէր, այլ՝ աշխարհի վրայ ոեւէ տեղ գտնուող հաւատացեալներու ամբողջութիւնը, իբրեւ ընդհանրական մէկ մարմին:

2.- Բայց Եկեղեցին միայն այս աշխարհի վրայ գտնուող հաւատացեալներու ամբողջութիւնը չէ, այլ՝ նաեւ գումարը անոնց, որոնք այժմ մեզմէ բաժնուած, բայց անբաժանելի մասն են Քրիստոսի Մարմինին, Եկեղեցիին: Այս աշխարհի վրայ գտնուողները կը կոչենք «Զինուորեալ Եկեղեցին», որովհետեւ տակաւին ներկայ կեանքին մէջ իրենց հոգեւոր պայքարը կը մղեն չարին դէմ: Մինչդեռ արդէն այս կեանքէն ելածները կը կոչենք «Յաղթական Եկեղեցին», որովհետեւ իրենց պայքարը մղած, չարին դէմ յաղթած, եւ երկինքի մէջ վերջնականօրէն Քրիստոսի միացած՝ իրենց ապագայ փառքն ու երանութիւնը կը նախաճաշակեն այժմէն:

Արդարեւ, Եկեղեցին «խորհրդական» այն Մարմինն է, որուն գլուխը Քրիստոս ինքն է: Այդ Մարմինը մէկ է եւ միակ, քանի մը պատճառներով.-

1.- Եկեղեցին մէկ է իր Գլուխով՝ Քրիստոսով: Քրիստոս ինքն է Եկեղեցին ղեկավարողը եւ առաջնորդողը (Եփ 5.23-24): Այդ կառավարութիւնը Քրիստոս կ'իրագործէ մարդկային ձեռքերով, իր առաքեալներով եւ եկեղեցւոյ վրայ կարգուած հովիւներով: Ինքն է Եկեղեցին խնամողը եւ պահողը, անոր ճշմարիտ Հովիւը (Յհ 10.16, 27-28: Հմմտ 18.9): Ինքն է Եկեղեցիին ճշմարիտ Քահանայապետը, մեր փրկութեան

միակ միջոտրդը Աստուծոյ քով (Ա.Տմ 2.5), որ մեզի համար կը բարեխօսէ եւ յաւիտենական կեանք կը պարգեւէ (Եբր 7.24-25):

2.- Եկեղեցին մէկ է իր հաւատքով: Այս հաւատքը ամբողջութիւնն է այն հաւատալիքներուն, որոնց վրայ խարսխուած է ան: Այդ հաւատալիքները Աստուածաշունչին մեզի ընծայած ճշմարտութիւններն են, որոնք Աստուծոյ եւ մեր փրկագործութեան վերաբերող դաւանութիւնը կը կազմեն: Այս հաւատքին խտացումն են առաքելական ժամանակներէն սկսեալ Եկեղեցւոյ մէջ կեանքի կոչուած եւ գործածուող Հաւատամքները: Ուղղափառ իւրաքանչիւր քրիստոնէայ պարտաւոր է այդ ճշմարտութիւնները գիտնալու եւ դաւանելու, որովհետեւ առանց այդ ուղղափառ հաւատքին՝ Եկեղեցին իր հաւատքի միութիւնը կը կորսնցնէ, եւ անկէ հեռացող քրիստոնէան դուրս կը մնայ Եկեղեցւոյ միութենէն, ինչ որ պարագան է բոլոր հերետիկոսներուն կամ աղանդաւորներուն:

3.- Եկեղեցին մէկ է իր միակ ծնունդով՝ Եկեղեցւոյ սուրբ Աւագանէն: Եկեղեցւոյ սուրբ Աւագանէն ծնածներս մէկ ընտանիք եւ մէկ միութիւն ենք (Գղ 3.27-28), եւ Աստուծոյ յաւիտենական ծրագիրն էր այս մէկը (Եփ 3.6, 2.19-22):

4.- Եկեղեցին մէկ է իր կառավարութեամբ, իր հոգեւոր առաջնորդներով: Եկեղեցիին միութեան կեդրոնը Քրիստոս ինքն է: Բայց ինչպէս որ Քրիստոս անբաժանելիօրէն մէկ է իր Հօրը հետ, այնպէս ալ իւրաքանչիւր եկեղեցւոյ գլուխը եղող եպիսկոպոսը միացած է Քրիստոսի, եւ հաւատացեալները քահանայից դասին միջոցաւ միացած են եպիսկոպոսին: Այսպիսով է որ եկեղեցին իր սերտ միութիւնը ունի ինքն իր մէջ, եւ սերտ միութիւնը՝ Աստուծոյ հետ:

5.- Եկեղեցին մէկ է իր պաշտամունքով ու ծէսով: Եկեղեցին կայ՝ զԱստուած փառաբանելու համար: Եկեղեցիին ուղղափառ հաւատքի դաւանութիւնը առաջին հերթին կը կատարուի մեր պաշտամունքին ընդմէջէն, այլ խօսքով՝

Եկեղեցւոյ ծիսական կեանքին ընդմէջէն: Այս միութեան գերագոյն նշանը եւ զայն ճշմարտապէս իրագործող խորհուրդը Սուրբ Պատարագի խորհուրդն է, երբ ուղղակիօրէն կը հաղորդուինք մեր Տիրոջ հետ, զԱյն մեր մէջ կ'ընդունինք մարմնաւորապէս, եւ Անոր հետ կը միանանք ճշմարտապէս, դառնալով մէկ Մարմին (Ա.Կր 10.16):

6.- Եկեղեցին մէկ է իր միաւորիչ զօղով, Սուրբ Հոգիով: Սուրբ Հոգին է Եկեղեցւոյ միութեան շարկապը (Եփ 4.3-6: Ա.Կր 12.12-13):

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Ըսինք, թէ Եկեղեցին միայն մէկ վայրի մէջ հաւաքուած հաւատացեալները չի նշեր, այլ՝ աշխարհի վրայ ոեւէ տեղ գտնուող հաւատացեալներու ամբողջութիւնը: Ասկէ կու գան զոյգ անուանումներ եւ զոյգ սահմանումներ.-

1.- Տեղական Եկեղեցի: Այսինքն, իւրաքանչիւր գաւառի, նահանգի կամ երկրի մէջ գտնուող եկեղեցի:

2.- Ընդհանրական կամ տիեզերական Եկեղեցի: Այսինքն, տեղական եկեղեցիներու ամբողջութիւնը: Հոսկէ կու գայ բոլոր եկեղեցիներուն գործակցութեամբ կամ համաձայնութեամբ գումարուած ընդհանրական ժողովներուն տրուած «տիեզերական ժողով» անուանումը: Այս իմաստով ճշմարտապէս միայն երեք տիեզերական ժողովներ կը ճանչնայ Հայաստանեայց Եկեղեցին: Նոյնպէս միայն երեք հատ կը ճանչնան Արեւելքի միւս ուղղափառ եկեղեցիները (Ղպտի, Ասորի, Եթովպիական, Հնդիկ-Մալապար, եւ Էրիթրեայի): Մինչդեռ Բիւզանդական աւանդութեան պատկանող եկեղեցիներու խումբը եօթը տիեզերական ժողովներ կը ճանչնայ, իսկ Հռոմէական Եկեղեցին՝ 21 ժողովներ:

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Եկեղեցին «Առաքելական» կը կոչուի, որովհետեւ.- 1.- Առաքելներու հիմին վրայ շինուած է (Եփ 2.20): 2.- Առաքելական հաւատքին վրայ կը կանգնի: 3.- Առաքելական (աւետարանչութեան) գործ կը կատարէ թէ՛ ներսը՝ իր հօտին համար, եւ թէ՛ դուրսը՝ ոչ-քրիստոնէայ ազգերը կոչելով Քրիստոսի:

ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ

1.- Եկեղեցին սուրբ է իր Գլուխով, Քրիստոսով (հմմտ Յհ 6.10):

2.- Եկեղեցին սուրբ է, որովհետեւ Քրիստոսով սրբուած է (Եփ 5.25-27):

3.- Եկեղեցին սուրբ է, որովհետեւ իր մէջ ունի Սուրբ Հոգիին սրբարար ներկայութիւնը եւ զօրութիւնը, որ տեւականօրէն զայն կը սրբէ եւ կ'ընծայէ Հօրը:

4.- Եկեղեցին սուրբ է, որովհետեւ իր մէջ ունի սրբութեան աւազանը, այսինքն մկրտութեան աւազանը, որմէ երկրորդ անգամ կը ծնինք՝ մաքրուած մեր մեղքերէն, եւ այնուհետեւ միւս խորհուրդներուն մատակարարումով կը ստանանք Սուրբ Հոգիին պարգեւները եւ սուրբ կենցաղի մը անհրաժեշտ հոգեւոր զօրութիւնը:

ՀԱԻԱՏԱՍՔ

*«Ի մի մկրտություն, յապաշխարություն,
ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց»:*

1.- Մկրտութեան անհրաժեշտութիւնը:

Մկրտութիւնը փրկութեան անհրաժեշտ պայմաններէն մէկն է (Մր 16.16: Յհ 3.5): Ուստի պարզապէս արտաքին ձեւ մը չէ: Անիկա անհրաժեշտ նախապայման է Քրիստոսի եւ Եկեղեցիին պատկանելութեան (Գրծ 2.37-38):

2.- Մկրտութեան նշանակութիւնը:

Մկրտութիւնը աւազանի ջուրերէն վերստին ծնունդ է, որ մեզ կը ծնի յաւիտենական կեանքին համար: Մկրտութիւնը Քրիստոսի հետ նոյնացում մըն է (իբրեւ Քրիստոսի Մարմին), երբ զՔրիստոս կը հագնինք, այսինքն՝ կատարելապէս կը միանանք իրեն (Գղ 3.27): Անիկա մասնակցութիւն մըն է Քրիստոսի մահուան եւ յարութեան (Հռ 6.3-4: Հմմտ Կղ 2.12), եւ որդեգրութիւն է Աստուծոյ (Գղ 3.26):

Աստուածաշունչին մէջ երեք տեսակի մկրտութիւններ կը ներկայացուին.-

Ա.- Մովսէսի Օրէնքով հրահանգուած մկրտութիւնը: Ասոնք մարմնական լուացումներ էին, ծիսականօրէն պղծուած անձերուն համար: Օրէնքին դիտումը մարմինը մաքրել չէր այնքան, որքան ժողովուրդին սորվեցնել, թէ Աստուծոյ աչքին մեծագոյն անմաքրութիւնը կամ պղծութիւնը մեղքն է, որ մարդուս հոգին կը պղծէ: Եւ պիղծը չի կրնար Աստուծոյ մօտենալ, որքան ատեն որ մաքրուած չէ:

Բ.- Յովհաննէսի կատարած մկրտութիւնը: Անիկա հոգեւոր բարոյական նշանակութիւն մը ունէր: Ապաշխարութեան նշան մըն էր անիկա, եւ նախապատրաստութիւն մըն էր՝ դիմաւորելու եւ ընդունելու Փրկիչը՝ Յիսուս Քրիստոսը:

Գ.- Յիսուսի բերած մկրտութիւնը: Այս մկրտութիւնը ճշմարտապէս մարդիկը կը սրբէ նախ իրենց սկզբնական՝ Ադամական մեղքէն, այսինքն՝ մարդոց մեջէն կը ջնջէ Աստուծոյ հանդէպ անհնազանդութեան մեղքը եւ անոր հետեւանքը եղող մահուան դատապարտութիւնը, եւ ապա՝ կը քաւէ մարդոց կատարած բոլոր յանցանքներն ու անօրէնութիւնները, նոր եւ մաքուր սիրտ մը եւ հոգի մը պարգեւելով անոնց, նորոգելով եւ նոր ստեղծուած դարձնելով զանոնք: Այս սրբութիւնն ու նորոգութիւնը մարմնաւոր չեն, այլ՝ հոգեւոր: Քրիստոսի ընծայած մկրտութիւնը նշան է որդեգրութեան (Հո 8.15-17), օծումն է Սուրբ Հոգիին, եւ անոր պարգեւներուն մատակարարումն է՝ իրեն հաւատացողներուն, զանոնք հաւատքի կեանքի մը եւ չարին դէմ պայքարի կեանքի մը համար զինելու նպատակով:

3.- Մկրտութիւնը Քրիստոսի՞ անունով, թէ՛ ամենասուրբ Երրորդութեան անունով:

Մկրտութիւնը ամենասուրբ Երրորդութեան անունով կատարելու հրահանգը կու գայ Քրիստոսէ (Մտ 28.20): Բայց Նոր Կտակարանի միւս գիրքերը միշտ մկրտութիւնը կը յիշեն՝ Քրիստոսի անունով (Գրծ 2.38, 8.16, 10.48, 19.5: Հո 6.3: Գղ 3.27): Խորքին մէջ ասոնք իրարմէ տարբեր չեն, որովհետեւ Յիսուսի անունով մկրտութիւնը պէտք է հիմնուած ըլլայ անոր աստուածութեան հաւատքին վրայ: Իսկ Քրիստոսի աստուածութիւնը խոստովանիլ՝ կը նշանակէ Սուրբ Երրորդութիւնը խոստովանիլ եւ մկրտուիլ:

4.- Մկրտութիւնը անկրկնելի է:

Մկրտութեան անկրկնելիութիւնը սերտօրէն կապուած է Եկեղեցոյ մէկութեան եւ մեր Տիրոջ ու մեր հաւատքին մէկութեան: Եթէ մէկ է Քրիստոս, եթէ մէկ է մեր հաւատքը՝ Քրիստոսով մեզի ընծայուած Աստուծոյ փրկարար շնորհքին մասին, այն ատեն մկրտութիւնը չի կրնար կրկնուիլ,

որովհետև ունի նոր մկրտութիւն՝ կը նշանակէ այդ մկրտութիւնը հիմնել նոր հաւատքի մը, նոր Տիրոջ մը եւ Փրկիչի մը, նոր Սուրբ Հոգիի մը եւ նոր եկեղեցիի մը վրայ: Այս մէկը կը շեշտէ Պօղոս առաքեալ (Եփ 4.3-6):

Եթէ կը ճանչնանք, որ Քրիստոսով մեզի պարգեւուած մկրտութիւնը ըստ էութեան տարբեր է Հին Կտակարանի մարմնական լուացումներէն, եւ Յովհաննէս Մկրտիչի խորհրդանշական մկրտութենէն, արդէն ինքնաբերաբար կ'ընդունինք, թէ կարելի չէ կրկնել քրիստոնէական մկրտութիւնը:

Ա.- Եթէ մկրտութիւնը մեղքերուն համար մեռնիլ կը նշանակէ, կարելի չէ որ անձ մը երկու եւ աւելի անգամներ մեռնի Քրիստոսի հետ (հմմտ 6.3-4):

Բ.- Եթէ մկրտութիւնը վերստին ծնունդ մըն է, կարելի չէ որ անձ մը երկու կամ աւելի անգամներ ծնի հոգեւորապէս, ինչպէս որ կարելի բան չէ որ երկու կամ աւելի անգամներ ծնի մարմնապէս (հմմտ Յհ 3.4):

Գ.- Եթէ մկրտութիւնը սկզբնական մեղքին լուացումն է, եւ մկրտութենէն առաջ գործուած բոլոր մեղքերուն քաւութիւնը, այդ լուացումն ու քաւութիւնը չեն կրնար կրկնուիլ, այլապէս ուրացած կ'ըլլանք այդ քաւութեան զօրութիւնը:

2-րդ դարէն սկսեալ, կարգ մը աղանդաւորներ կ'ուսուցանէին թէ մեղանչողները պէտք է վերստին մկրտել: Ասիկա մկրտութիւնը անարգել եւ իր իմաստէն պարպել կը նշանակէր: Եկեղեցին հաստատեց թէ մկրտութիւնը անկրկնելի է: Նոյնիսկ վաւերական ճանչցաւ հերետիկոսներու ձեռքով կատարուած մկրտութիւնը, եթէ անիկա մատակարարուած է ուղիղ կերպով, այսինքն՝ ամենասուրբ Երրորդութեան անունով:

5.- Մանուկներու մկրտութիւնը վաւերակա՞ն է:

Ուել արժեք կը ներկայացնե՞ մանուկի մը մկրտութիւնը: Չե՞ որ մկրտութիւնը կապուած է ապաշխարութեան, դէպի Աստուած դարձին: Արդ, եթէ մէկը գիտակից չէ, եւ ապաշխարած չէ, ի՞նչպէս կրնայ ստանալ մկրտութիւնը:

Նոր Կտակարանը մանուկներու մկրտութիւն չի յիշեր, բայց այս լռութիւնը չի նշանակեր, թէ առաքեալներու ատեն Եկեղեցին մանուկներու մկրտութիւն չէր կատարեր: Առ հասարակ մարդիկ ամբողջ ընտանիքով կը մկրտուէին, ինչ որ բնականօրէն կ'ենթադրէ մանուկներու մկրտութիւնը եւս (Գրծ 16.31-34: Հմմտ Ա.Կր 1.15):

Եկեղեցւոյ առաջին շրջանի Հայրերը արդէն կը վկայեն մանուկներու մկրտութեան սովորութեան: Երանոս եւ Տերտուլիանոս հայրապետներ կը հաստատեն սովորութիւնը: Որոգիներէ Հռոմայեցիներու նամակին իր մեկնութեան մէջ մանուկներու մկրտութիւնը առաքեալներէն եկած սովորութիւն կը կոչէ: Կիպրիանոս հայրապետ նոյնիսկ նախընտրելի կը գտնէ մանուկ տարիքին մկրտութիւնը: Այս սովորութեան մասին կը վկայէ նաեւ «Կանոնք Առաքելականք» կոչուած կանոններու խումբը:

6.- Ապաշխարութեան անհրաժեշտութիւնը:

Ապաշխարութիւնը բացարձակապէս անհրաժեշտ է մեր փրկութեան համար (Ղկ 13.3, 5: Գրծ 2.37-38, 3.19 եւլն):

7.- Ի՞նչ կը հասկնանք «Ապաշխարութիւն» ըսելով:

Ապաշխարութիւնը միակ ճանապարհն է Քրիստոսի գալու: Ապաշխարութիւն կը նշանակէ.-

Ա.- Հրաժարում Աստուծմէ հեռու կեանքէն, եւ դարձ դէպի Աստուած:

Բ.- Մեղքերու խոստովանութիւն Աստուծոյ դիմաց՝ որ մեր հոգիներու բժիշկն է:

Գ.- Կեանքի կտրուկ շրջադարձ կամ փոփոխութիւն:

Դ.- Անհրաւորութեանց դարմանում:

Ե.- Ուղիղ հաւատք եւ ուղիղ կեանք ու գործ:

Ապաշխարութիւնը ո՛չ միայն մեր նախաքրիստոնէական կեանքին համար է, այլ նաեւ՝ յետ-մկրտութեան քրիստոնէական մեր կեանքին համար, եթէ իյնանք ռեւէ մահացու մեղքի մէջ, որ դարձեալ մեզ կ'անջատէ Աստուծմէ:

8.- Ապաշխարութիւնը կրկնելի՞ է, թէ՛ անկրկնելի:

Երբայեցիներուն նամակին մէջ ունինք հատուած մը, որ կը թուի թէ ապաշխարութիւնը անկրկնելի կը յայտարարէ (Եբր 6.4-6: Հմմտ 10.26-27):

Կրկնելիութեան հարցը ծագեցաւ, երբ 3-րդ դարուն, քրիստոնէութեան դէմ հալածանքներուն ընթացքին շատեր հաւատքը ուրացան եւ կուռքերուն պաշտամունք մատուցանեցին: Հալածանքներու դադարէն ետք հարց ծագեցաւ, թէ այսպիսիները ներում ունի՞ն: Որովհետեւ «ուրացումը» մահացու մեղք մը կը համարուէր, իսկ համոզումը այն էր՝ որ մահացու մեղքերը թողութիւն չունին:

Աւետարաններուն մէջ «մահացու» մեղքը Սուրբ Հոգիին դէմ հայեցողութիւնն է (Մր 3.28-29): Եկեղեցին հաւատքի ուրացումը նոյնացուց Սուրբ Հոգիին դէմ հայեցողութեան հետ, եւ զայն նկատեց «մահացու» մեղք: Սպանութիւնը, ազահութիւնը եւ «պոռնկութիւնը», այսինքն՝ սանձարձակ անբարոյութիւնը եւս հոգին սպաննող մահացու մեղքեր նկատուած են:

Եկեղեցւոյ առաջին հայրերը մկրտութենէն ետք ապաշխարութեան միայն մէկ առիթ կը ճանչնան՝ մահացու համարուած մեղքերուն համար: Իսկ այս «երկրորդ ապաշխարութիւն»ը շատ դաժան պայմաններ ունէր, եւ կ'ենթադրէր ո՛չ միայն մեղքին հրապարակային խոստովանութիւնը, այլ երկար տարիներու վրայ տարածուած ապաշխարանքի ձեւեր: Աստիճանաբար այս խստութիւնը նահանջ արձանագրեց, եւ Եկեղեցին աւելի ներողամիտ կեցուածք մը որդեգրեց, ներելի նկատելով

մահացու մեղքերն ալ, պայմանաւ որ ենթական յատուկ ապաշխարանք կատարէ անոնց համար:

9.- Ո՞վ կրնայ մեղքերը ներել:

Միայն Աստուած է որ կրնայ մեղքերը ներել: Բայց ինչպէս որ Քրիստոս իր մարդեղութեանը մէջ ցոյց տուաւ, որ «Մարդու Որդին երկրի վրայ իշխանութիւն ունի մեղքերը ներելու» (Մր 2.10), նոյնպէս ալ իր Եկեղեցիին իշխանութիւն տուաւ մեղքերը ներելու: Բայց Եկեղեցի հասկացողութիւնը անորոշ հասկացողութիւն մը չէ: Եկեղեցին, իբրեւ Մարմին, ունի իր առաջնորդները, Տիրոջ կողմէ կարգուած հովիւները, որոնք հաւատքի, կարգի (կարգապահութեան) եւ բարոյականութեան խնդիրներուն մէջ վճռական ձայն ունեցող Աստուծոյ պաշտօնեաներն են:

Քրիստոս իր առաքեալներուն տուաւ յատուկ իշխանութիւնը «կապելու եւ արձակելու», որ յիշեալ հեղինակութիւնն էր իր Եկեղեցիին վրայ, եւ մասնաւորաբար՝ մեղքերը ներելու իշխանութիւնը (Մտ 16.19, 18.18: Հմտ 3հ 20.23):

Ներելու իշխանութեան մասին ամենէն լուրջ հարցը ստեղծուեցաւ՝ մահացու մեղքերուն կապակցութեամբ, որոնցմէ ամենէն փշոտը հաւատքի ուրացումն էր:

10.- Ապաշխարութիւնը սրբութեան ճանապարհն է:

Եկեղեցին «սուրբ» է: Մենք սուրբ չենք, մեղաւորներ ենք բոլորս: Բայց մեր գլուխը՝ Քրիստոս սուրբ է, եւ իրմով կը սրբէ մեզ (3հ 17.17-19): Եկեղեցին «մեղաւորաց քաւարան» է: Հոն կու գան ո՛չ թէ սուրբերը, այլ անոնք՝ կը կամենան սրբուիլ:

Թէպէտ Հաւատամքը միւս խորհուրդները չի յիշեր, եւ միայն Մկրտութիւնը եւ Ապաշխարութիւնը կը յիշէ, բայց բնականօրէն մկրտութիւնը կարելի չէ հասկնալ առանց դրոշմի խորհուրդին: Մկրտութիւնը եթէ Աստուծոյ հաւատալն է եւ Աստուծոյ ապաւինիլը, դրոշմը Աստուծոյ Հոգիին օծումը

ստանալն է: Նոր Կտակարանը եւ յատկապէս առաքեալներու գործերը, բազմաթիւ օրինակներով ցոյց կու տան թէ առհասարակ ասոնք իրարու կապուած են, թեպէտ նոյնը չեն (Բ.Կր 1.21-22):

Նոյնպէս, կարելի չէ ապաշխարութիւնը հասկնալ՝ առանց անոր յաջորդող Հաղորդութեան խորհուրդին: Եթէ մեղքը մեզ Աստուծմէ հեռացնող եւ անջատող իրականութիւնն է, եւ ապաշխարութիւնը վերադարձ մըն է դէպի Աստուած, այդ վերադարձին նպատակը ուրիշ բան չի կրնար ըլլալ՝ եթէ ոչ վերստին եւ ամբողջական միաւորումը Աստուծոյ հետ, որ Սուրբ Հաղորդութիւնն է:

Ապաշխարութիւնը ինքն է նաեւ դուռը Եկեղեցւոյ միւս խորհուրդներուն: Առանց ապաշխարութեան կարելի չէ ստանալ Եկեղեցւոյ միւս խորհուրդները, սուրբ պսակը, ձեռնադրութեան կարգը, հիւանդներու օծումը:

ՀԱԻԱՏԱՍՔ

«Ի յարութիւն մեռելոց:

Ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց»:

1.- Ընդհանրական յարութիւնը Հին եւ Նոր Կտակարաններուն մէջ:

Թե՛ Հին եւ թե՛ Նոր Կտակարաններուն մէջ կը խօսուի մեռելներու ապագայ յարութեան մասին, երբ բոլոր *«հողին մէջ քնացողները պիտի արթնան, ոմանք յաւիտենական կեանքի համար, ոմանք ալ նախատինքի ու յաւիտենական անարգանքի համար»* (Դն 12.2 եւ 23: Հմմտ Մտ 25.46: Յհ 5.28-29: Գրծ 24.15): Քրիստոսի ժամանակակից Հրեաները այս զօրեղ հաւատքը ունէին (տե՛ս Յհ 11.17-27):

2.- Հոգիի անմահութիւն եւ մարմնաւոր յարութիւն:

Ա.- Ոմանք այս կեանքէն անդին ոեւէ գոյութիւն կը մերժեն ճանչնալ: Այդպիսին էին Սադուկեցիները Հրէից մէջ: Այդպիսիներ շատ կային Յոյն իմաստասէրներուն մէջ: Այդպիսիներ գտնուեցան եւ կան նաեւ քրիստոնէայ անունը կրողներու շարքին մէջ:

Բ.- Ուրիշներ հոգիներու անմահութիւնը կը ճանչնան ու կ'ընդունին, բայց կը մերժեն ընդունիլ մարմնաւոր յարութիւնը: Այսպիսին էին 2-րդ դարուն՝ Մարկիոն Պոնտացի, 3-րդ դարուն՝ Մանի, եւ ուրիշներ: Բայց Աստուածաշունչը յստակօրէն կ'ուսուցանէ մարմիններու յարութիւնը (տե՛ս Յհ 5.21-29): Հոգին արդէն անմահ է եւ յարութեան պէտք չունի: Մարմի՛նն է որ պէտք ունի յարութեան:

Գ.- Ուրիշներ մեռելներու յարութիւնը կ'ընդունին, բայց կ'ըսեն՝ թէ մեր այս մարմինները չեն որ յարութիւն պիտի առնեն, այլ՝ հոգիները երկնային մարմին պիտի ստանան:

Բայց Աստուածաշունչը կ'ըսէ, թէ նո՛յն մեր այս մարմինները յարութիւն պիտի առնեն (տե՛ս Յոբ 19.25-27: Փլպ 3.20-21):

Դ.- Տակաւին, ուրիշներ մերժեցին ընդհանրական յարութիւնը, ըսելով թէ միայն արդարները յարութիւն պիտի առնեն (այսպէս նաեւ՝ Եհովայի Վկաները): Մինչդեռ Աստուածաշունչը յստակօրէն հակառակը կը վկայէ (տե՛ս Գրծ 24.15):

3.- Ի՞նչպիսի մարմին պիտի ըլլայ յարուցեալ մարմինը:

«Ի՞նչպէս յարութիւն կ'առնեն մեռելները. կամ ի՞նչպիսի մարմինով պիտի գան» (Ա.Կր 15.36-37): Ինչպէս հողին մէջ նետուած ցորենահատիկը եւ անկէ ծլած եւ աճած հասկին հատիկները տարբեր մարմիններ չեն, այլ նոյնը, մէկը միւսին նորոգութիւնը, բայց միաժամանակ միեւնոյն հատիկները չեն, այլ նորերը հինին փոխակերպուածն են, այնպէս ալ մեռած մարմինը երբ հողէն դուրս գայ՝ ներկայի մարմինէն տարբեր պիտի չըլլայ, այլ՝ նոյն մարմինը, սակայն նորոգուած ու փոխակերպուած: Որովհետեւ այժմ մեր մարմինները «շնչաւոր» են, եղծանելի, անարգ, տկար, մահկանացու, մինչդեռ յարութենէն ետք նոյն այդ մարմինները պիտի ըլլան՝ «հոգեւոր» անեղծ, փառաւոր, զօրաւոր եւ անմահ (տե՛ս Ա.Կր 15.42-44):

Արդ, յարութեան օրը բոլորս ալ պիտի փոխակերպուինք այնպէս՝ որ մարմինները վերագտնեն սկզբնական իրենց վիճակը, առաջին կատարելութիւնը, երբ տակաւին մեղքը չէր տիրած մարդուն եւ անոր հետեւանքը եղող տկարութիւններն ու խեղութիւնները չէին եղծած աստուածաստեղծ մեր պատկերը:

Բոլոր մարդիկ պիտի յայտնուին առաջին մարդուն՝ Ադամի վիճակով ու տարիքով, բոլորն ալ երեսուն տարեկան: Արդարներու մարմինները պիտի ըլլան Քրիստոսի մարմինին պէս՝ թափանցիկ, թանձրութիւնը թօթափած, նուրբ ու թեթեւ, լուսափայլ, արեգակի պէս պայծառ, փայլակի պէս

արագաշարժ: Իսկ կորուստի դատապարտուածներուն մարմինները պիտի մնան թանձր ու ծանր՝ իրենց մեղքերուն պէս, եւ պիտի ըլլան տգեղ ու խաւարին, իրենց հոգեկան աշխարհին պէս:

4.- Ընդհանրական Դատաստան ողջերու եւ մեռեալներու:

1.- Մէկ է Դատաւորը՝ Քրիստոս:

Աստուածաշունչը երբեմն ընդհանուր կերպով Աստուծոյ կը վերագրէ դատաստանը (հմմտ Սղ 50.1-5, 58.11 եւլն), եւ երբեմն կը մասնաւորէ, դատելու իշխանութիւնը ընծայելով Որդիին՝ Քրիստոսի (Յհ 5.22-23: Հմմտ Մտ 13.40-43, 25.31-46):

Նոր Կտակարանը բազմաթիւ անգամներ կը հաստատէ թէ Քրիստոս ինքն է Աստուծմէ սահմանուած Դատաւորը (Գրծ 10.42: Ա.Կր 4.5: Հռ 14.9-11: Բ.Տմ 4.1):

2.- Մէկ է դատաստանը, եւ ընդհանրական:

Հաւատամքը կը խօսի միակ դատաստանի մը մասին, որ կը կոչէ յաւիտենական: Այդ միակ դատաստանն է որ կը կոչենք՝ Ընդհանրական Դատաստան: Հայաստանեայց Եկեղեցին կը մերժէ առանձնական դատաստանի տեսութիւնը: Աստուածաշունչը կը խօսի մէկ եւ միակ դատաստանի մը մասին, որ տեղի պիտի ունենայ միայն մէկ անգամ, բոլորին համար միասնաբար, Քրիստոսի երկրորդ գալուստին: Պօղոս առաքեալ կ'ըսէ թէ Աստուած միակ օր մը սահմանած է այդ դատաստանին համար (Գրծ 17.31): Արդ, եթէ նոյն եւ միակ օրուան մեջ պիտի կատարուի բոլորին դատաստանը, անկարելի է ըսել՝ թէ իւրաքանչիւրը առանձնապէս պիտի դատուի իր մահէն անմիջապէս ետք:

5.- Դատաստանը՝ Աստուծոյ արդարութիւնը:

Դատաստան մը ոմանց համար անհաշտելի կը թուի Աստուծոյ գերազանց բարութեան ու արդարութեան, սիրոյն եւ քաղցրութեան հետ: Բայց նման պատկերացում արդար չէ:

Չկայ արդարութեան հասկացողութիւն մը, որ մերժէ ոեւէ արարքի արժանի հատուցումը: Ինչո՞ւ չենք կրնար ընդունիլ ոեւէ անարդարութիւն, ըլլա՛յ մեզի դէմ գործուած, ըլլա՛յ մարդոց կամ աշխարհին: Ասիկա մեր մէջ դրուած աստուածային զգայարանքն է, որ կը մերժէ չարը, անօրէնը, անիրարը, վայրագը, անպատկառը, անբարոյականը, անընդունելին:

Աստուած, որ կատարեալ բարին, արդարութիւնը եւ իրաւունքն է, չի կրնար ընդունիլ ինչ որ անիրաւ է ու անարդար: Ամբողջ ներկայ ժամանակին Աստուած մեղաւորին առիթ կու տայ իր չար ճամբայէն դառնալու, բայց կը յիշեցնէ, որ կայ դատաստանի ժամանակ մը, երբ աստուածային ազդարարութիւններն ու հայրական սիրոյ կոչերը չլսող անհնազանդ մարդիկը պիտի կանգնին Աստուծոյ ատեանին դիմաց, հաշիւ տալու համար իրենց ընթացքին ու գործերուն համար: Եւ Աստուած ինք չէ՛ որ պիտի դատապարտէ զիրենք, այլ՝ իրենց սեփական խիղճը եւ իրենց սեփական գործերը պիտի ըլլան զիրենք դատապարտողը, որով ի յայտ պիտի գայ Աստուծոյ կատարեալ արդարութիւնը:

6.- Հատուցումը՝ ո՛չ միայն հոգիով, այլ նաեւ՝ մարմինով:

«Բոլորս ալ Քրիստոսի ատեանին դիմաց պիտի կանգնինք, որպէսզի իւրաքանչիւրը իր մարմինով ընդունի հատուցումը երկրի վրայ իր կատարած բարի կամ չար գործերուն» (Բ.Կր 5.10): Ինչպէս որ մարդ միայն հոգիով չէ որ կը գործէ, այլ՝ հոգիով ու մարմինով միասնաբար, նոյնպէս ալ միայն հոգիով չէ որ պիտի ընդունի իր գործերուն հատուցումը, բարի թէ չար, այլ՝ հոգիով ու մարմինով միասնաբար: Մարմինը Աստուծոյ ստեղծագործութեան անբաժան մասն է, եւ մեր փրկութիւնը միայն մարմինով ամբողջական պիտի ըլլայ: Փրկութիւն չկայ առանց մարմնի, եւ այս աշխարհի վրայ սկսած փրկութիւնը իր լրումին կը

հասնի՝ ամբողջ ստեղծագործութեան ազատագրումով, որ իր մէջ կ'առնէ նաեւ մարմիններու փրկութիւնը (Հո 8.18-24):

7.- Հատուցում՝ ըստ իւրաքանչիւրին գործերուն:

Յայտնութեան գիրքը այդ դատաստանը կը պատկերացնէ՝ համաձայն մարդոց գործերուն, որոնք արձանագրուած են Աստուծոյ գիրքերուն մէջ (Յյտ 20.11-15: Հմմտ Ղկ 10.20): Ըստ այնմ, արդարները պիտի ստանան իրենց պսակումը (Բ.Տմ 4.7-8), եւ մեղաւորները՝ իրենց դատապարտութիւնը:

Արդարներուն ընծայուած գերագոյն հատուցումը՝ Աստուծոյ երանական տեսութիւնն է (Ա.Յհ 3.2), որ անոնց կատարեալ հաւատքին վարձատրութիւնն է: Բայց անոր վրայ պիտի գայ աւելնալու այն պսակումը, որ Աստուած պիտի տայ իւրաքանչիւրին գործերուն համաձայն: Գալով մեղաւորներուն, կամ կորուստի դատապարտուածներուն, անոնց գերագոյն դատապարտութիւնը Աստուծոյ տեսութենէն ընդմիջտ զրկումն է, որ Քրիստոս իր առակներուն մէջ յաճախ կը պատկերացնէ իբրեւ *«արտաքին խաւարը, ուր պիտի ըլլայ լալ եւ ակռաները կրճտել»* (Մտ 8.12, 22.23):

Թէ՛ արդարներուն վերապահուած երանութիւնն ու փառքը, եւ թէ՛ մեղաւորներուն սահմանուած այս զրկանքն ու տանջանքը *«յաւիտենական»* են, այսինքն՝ անոնք ժամանակաւոր բնոյթ չունին, այլ՝ մնայուն եւ անվախճան են:

ՀԱԻԱՏԱՍՔ

«Յարքայութիւնն երկնից, եւ ի կեանսն յաւիտենականս»:

1.- Երկինքի արքայութիւնը՝ ամբողջացումը Աստուածաշնչական խոստումներուն:

Աստուածաշնչական բոլոր խոստումները իրենց ամբողջացումը կը գտնեն երկինքի արքայութեան հաստատումով, որ Աստուծոյ ծրագիրին իրականացումն է:

Ուել թագաւորութեան հասկացողութիւնը անբաժան է իր բաղկացուցիչ տարրերէն, որոնք են.- Ա.- Թագաւորը: Բ.- Թագաւորութեան վիճակը: Գ.- Թագաւորութեան հպատակները:

Երկինքի արքայութեան պարագային նոյնն է հասկացողութիւնը: Այստեղ՝

1.- Թագաւորը Քրիստոս է: Մինչ ուել իշխանութեան կամ թագաւորութեան գլուխը հողեղէն, սխալական մարդ մըն է, երկինքի արքայութեան Թագաւորը Քրիստոս Աստուած ինքն է, որ ներկայիս իր թագաւորական իշխանութիւնը կը տարածէ միայն իրեն ենթարկուող հաւատացեալներուն վրայ, բայց որ ժամանակներու աւարտին իրեն պիտի ենթարկէ երկրաւոր եւ երկնաւոր բոլոր իշխանութիւններն ու թագաւորութիւնները, որպէսզի Աստուած ըլլայ ամէն բան՝ ամէն բանի մէջ (հմմտ Ա.Կր 15.23-28):

2.- Երկինքի արքայութեան տարբերութիւնը երկրաւոր թագաւորութիւններէն: Այս աշխարհին յատուկ ուել իշխանութիւն անկատար է, աշխարհային իր պայմաններուն իսկ բերումով: Երկինքի թագաւորութիւնը իր ներկայ հասկացողութեամբ (Եկեղեցին) անկատար է տակաւին, թէպէտ իր գլուխով եւ իր օրէնքներով սուրբ է եւ կատարեալ: Բայց Քրիստոսի 2-րդ գալուստով երբ արքայութիւնը գայ իր վերջնական վիճակով, իր ամբողջութեանը մէջ պիտի ըլլայ սուրբ եւ կատարեալ, որովհետեւ անոր հպատակները եւս

թօթափած պիտի ըլլան մեղքը եւ այս աշխարհին յատուկ մտածողութիւնն ու թերութիւնները, եւ ի վիճակի պիտի ըլլան ամբողջապէս կատարելու Աստուծոյ կամքը (հմմտ Մտ 6.10):

3.- Արքայութեան հպատակները, որոնք արդարները կամ փրկութիւնը շահածներն են:

Երկինքի արքայութեան վերջնական հաստատումը կը սկսի վերջին դատաստանով, երբ հրապարակաւ կը յայտարարուի, թէ որո՛նք են արքայութեան քաղաքացիները կամ հպատակները, եւ որո՛նք են՝ անկէ արտաքսուելիքները, դուրս մնացողները (Մտ 13.40-43), եւ իւրաքանչիւրը իր գործերուն համաձայն կը ստանայ իր հատուցումը կամ վարձատրութիւնը:

2.- Յաւիտենական կորուստ կամ թշուառութիւն մեղաւորներու:

Մեղաւորներուն վերապահուած ելքը տարբեր-տարբեր բացատրութիւններով տրուած կը գտնենք Աստուածաշունչին մէջ.- Բարկութիւն, զայրոյթ, նեղութիւն, տառապանք, բոցավառ կրակ, կրակի լիճ, կրակի եւ ծծումբի լիճ, կորուստ, երկրորդ մահ, յաւիտենական մահ, եւլն (տե՛ս Հո 2.5-6, 8-9: Բ.Թս 1.7-9: Յյտ 20.10 եւ 14-15) եւլն:

Յիսուս ինք կը գործածէ «բոցավառ հնոց» (Մտ 13.42), «յաւիտենական կրակ», «յաւիտենական պատիժ» բացատրութիւնները (տե՛ս Մտ 25.41 եւ 46), իսկ քանի մը անգամներ նաեւ կը կոչէ «գեհէն» (Մտ 5.29-30, 10.28, 23.15: Ղկ 12.5: Յկ 3.6), կամ «գեհէնի կրակը» (հմմտ Մտ 5.22, 18.9: Մր 9.46), կամ «գեհէնի անշէջ կրակը» (Մր 9.42, 44), կամ «գեհէնի դատապարտութիւնը» (Մտ 23.33):

Այս գեհէնի կրակը կամ կրակի լիճը, կամ դժոխքը, նիւթական վայր մը չէ, հետեւաբար պէտք չէ խօսիլ տեղի մը մասին:

Ոմանք յաւիտենական այս դատապարտութիւնը եւ տանջանքները երկու ձեւով կը հասկնան.- Հոգեւոր եւ

մարմնաւոր, առաջինը կոչելով «յանցանքի պատիժ», իսկ երկրորդը՝ «զգայարանական պատիժ»: Պէտք չէ մոռնալ սակայն որ մեղաւորները յաւիտենական թշուառութեան մէջ պիտի ըլլան, որովհետեւ ընդմիշտ զրկուած պիտի ըլլան Աստուծոյ ներկայութենէն, դատապարտուած իրենց սիրած խաւարին եւ առանձնութեան:

3.- Յաւիտենական երանութիւն արդարներու:

Արդարներուն վերապահուած վարձատրութիւնը անսպառ ուրախութիւնն է կամ երանութիւնը, որ ինքնին երկինքի արքայութիւնն է: Քանի մը նշումներ.-

Ա.- Երկինքի արքայութիւնը արդարներուն վերապահուած հատուցումը կամ վարձատրութիւնն է, իբրեւ ժառանգութիւն: (Հմմտ Մտ 19.28-29, 25.34: Փլպ 3.20: Ա.Պտ 1.4):

Բ.- Երկինքի արքայութիւնը արդարներուն վերապահուած բնակարանն է: (Հմմտ Յհ 12.26, 14.2-3):

Գ.- Երկինքի արքայութիւնը արդարներուն վերապահուած հանգիստն է: Հանգստացում աշխարհային վիշտերէն ու նեղութիւններէն, հալածանքներէն ու չարչարանքներէն՝ թէ՛ մարմիններուն եւ թէ՛ հոգիներուն: (Հմմտ Եբր 4.9-10: Հո 2.10: Բ.Թս 1.5-7):

Դ.- Երկինքի արքայութիւնը երկնաւոր Փեսային հարսնարանն է, արդարներուն ուրախութեան վայրը: (Հմմտ 25.1-10):

Ե.- Երկինքի արքայութիւնը արդարներուն վերապահուած փառքն է: (Հմմտ Բ.Տմ 4.7-8: Մտ 13.43):

Զ.- Երկինքի արքայութիւնը Աստուծոյ երանական տեսութիւնն է: Արքայութեան մէջ այդ տեսութիւնը պիտի ըլլայ ամբողջական, որովհետեւ Տէրը պիտի տեսնենք թէ՛ մարմնաւոր աչքերով եւ թէ՛ հոգիի պայծառացած հայեացքով (Ա.Կր 13.12: Հմմտ Բ.Թս 1.7, 10): Թէպէտ Աստուած իր բնութեամբ անտեսանելի է (Ել 33.20: Սղ 104.2: Յհ 1.18: Ա.Տմ

6.12, 14-16: Ա.Յհ 4.12), բայց իր տեսութիւնը պիտի շնորհէ արդարներուն, սրտով անարատներուն (Մտ 5.7: Հմմտ Յհ 14.21: Եր 29.12-14, 31.3): Այս տեսութիւնը ի՛նչ կերպով եւ ի՛նչ տարողութեամբ պիտի ունենան անոնք, ոեւէ պատկերացում չունինք: Ուստի Աստուծոյ խոստումը կ'ընդունինք հաւատքով եւ երկհիւղալից խնդրութեամբ, անձկութեամբ սպասելով անոր կատարումին եւ գերագոյն այդ երանութեան վայելքին:

4.- Յաւիտենական կեանք:

Հաւատամքը կ'աւարտի յաւիտենական կեանքի դաւանութեամբ, որ Աստուածաշնչական բոլոր խոստումներուն լրումն է եւ մեր հաւատքի վախճանակէտը: Քրիստոս անով կ'աւարտէ վերջին դատաստանի իր առակը (Մտ 25.46): Աստուած այդ կեանքը պիտի տայ իբրեւ լրումը հատուցումներուն, մարդոց արդար գործերուն համար (Հո 2.7, 6.22-23):

Յաւիտենական կեանքը անմահութիւնն է, որ Աստուծոյ յատուկ է, իբրեւ անոր բնութեան մաս (Ա.Տմ 6.12, 15-16), բայց որ Աստուած իբրեւ հայրական պարզեւ պիտի շնորհէ մարդուն: Անիկա բոլոր Քրիստոսով կանչուածներուն վերապահուած հասարակաց վարձատրութիւնն է՝ իրենց գործերուն փոխարէն (տե՛ս Մտ 20.1-16): Այս գործերը մարդու հաւատքէն եւ քրիստոնէական եղբայրսիրութենէն բղխած բոլոր տեսակի արարքներն են:

Ճշմարիտ յաւիտենական կեանքը զԱստուած ճանչնալն է (Յհ 17.1-3): ԶԱստուած ճանչնալ կը նշանակէ ո՛չ միայն Հայրը ճանչնալ, այլ՝ նաեւ Որդին (Ա.Յհ 1.2), եւ Սուրբ Հոգին: Իսկ այս կեանքին աղբիւրը Աստուծոյ յայտնութիւնն է, որ «Աստուծոյ խօսքը» կը կոչենք (Յհ 12.49-50):

Յաւիտենական կեանքի մէջ ամէն ինչ անվախճան է, թէ՛ արդարներուն վերապահուած երանութիւնն ու փառքը, եւ թէ՛ մեղաւորներուն սահմանուած զրկանքն ու տանջանքը:

5.- «Ինչ որ ունի աչք չէ տեսած, ունի ականջ չէ լսած, եւ ունի մէկուն միտքէն իսկ չէ անցած»:

Աստուծոյ արքայութիւնը եւ յաւիտենական կեանքը կապուած են վերջին խոստումի մը, որ Աստուած կանուխէն տուաւ.- «Ահա ես նոր երկինք ու նոր երկիր կը ստեղծեմ» (Ես 65.17): Աստուած իր ամբողջ ստեղծագործութիւնը պիտի վերանորոգէ, զայն նոր ստեղծագործութիւն դարձնելու, նոր երկինքի ու նոր երկրի վերածելու համար, որպէսզի անկապ արդարութեամբ բնակուած ըլլայ (Բ.Պտ 3.7, 10 եւ 13: Հմմտ Սղ 102.25-27: Մտ 24.35: Եբր 1.10-12):

Աստուած այդ նոր երկինքին ու երկրին յայտնութիւնը տեսիլքով մը տուաւ Պօղոս եւ Յովհաննէս առաքեալներուն (տե՛ս Բ.Կր 12.3-4: Յյտ 21.1: Հմմտ 20.11): Եւ թէպէտ Յովհաննէս կը փորձէ իր տեսածները գրել երկու գլուխներով, սակայն անոնք կը մնան աննկարագրելի (Ես 64.4: Հմմտ Ա.Կր 2.9): Բայց հաւատացեալ սրտին համար այսքանը կը բաւէ: Որովհետեւ հաւատքը յուսացուած բաներուն վստահութիւնն է, եւ համոզումը այն բաներուն՝ որոնք չեն երեւիր (Եբր 11.1): Մենք հաւատքով կը յուսանք եւ յոյսով կը սպասենք այդ պարգեւին (Հո 8.24-25):

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Մենք կոչուած ենք հաւատքի եւ առաքինութեանց այս սանդուխներէն քայլ առ քայլ վեր բարձրանալու դէպի երկինք, որովհետեւ Աստուած մեզ իր որդիները դարձուցած է: Այս կոչումը դարձեալ մեզի կը յիշեցնէ մեր բարձր պատասխանատուութիւնը, որ Յովհաննէս առաքեալ կը յիշեցնէ մեզի. «Միրելինե՛ր, այժմ Աստուծոյ որդիներ ենք: Թէ ի՛նչպէս պիտի ըլլանք յետոյ՝ տակաւին չենք գիտեր: Բայց գիտենք թէ՛ երբ Քրիստոս յայտնուի՝ իրեն նման պիտի ըլլանք, որովհետեւ զինք պիտի տեսնենք իր իսկութեան մէջ: Ով որ

այս յոյսը ունի՝ ինքզինք կը մաքրէ, ինչպէս որ Քրիստոս ինք մաքուր է» (Ա.Յհ 3.2-3):

Դժուար է սուրբ ըլլալ, ինչպէս Քրիստոս ինք սուրբ է: Բայց Տէրը անկարելի բան չէ որ կը պահանջէ մեզմէ: Ի՛նքն է մեր օգնականը, ո՞վ կրնայ մեզի հակառակ կենալ: Ի՛նքն է ինքզինք մեզի համար ընծայողը, ո՞վ կրնայ անոր շնորհածը մեր ձեռքէն խլել: Ի՛նքն է մեզ ընտրողը, ո՞վ կրնայ մեզ մեղադրել: Ի՛նքն է մեզ արդարացնողը, ո՞վ կրնայ մեզ դատապարտել: Ի՛նքն է մեզ իրեն կապողը եւ միաւորողը, ո՞վ կրնայ մեզ իրմէ բաժնել (հմմտ Հո 8.31-35): Կը բաւէ որ արթուն ըլլանք մտքով եւ մանաւանդ հոգիի արթնութիւն ունենանք: Ահա թէ ինչո՛ւ մեր երանեալ Հայրապետը՝ Սուրբ Ներսէս Շնորհալի կ'երգէ, ու կը հրաւիրէ մեզ որ իրեն հետ երգենք.- «Փութացի՛ր, անձն իմ, փախչիլ ի չարեաց, փափաքիլ բարեաց: Քեզ միշտ մերձ ծանիր քուն մահու եկեալ, քննող Դատաւոր» (Երգ «Աշխարհ ամենայն»): Իսկ եթէ արթուն ենք եւ միշտ մեր մտքի աչքերուն դիմաց ունինք Արդար Դատաւորին քաղցր պատկերը, վստահ ենք նաեւ թէ մե՛րն են խոստումները, մե՛րն է փրկութիւնը, մե՛րն է երկինքի արքայութիւնը, մե՛րն է յաւիտենական կեանքը եւ յաւիտենական երանութիւնը:

ՄԵՐ ԳՈՐԾԱԾԱԾ ՀԱԻԱՏԱՄՔԸ

Հաւատամք ի մի Աստուած,
ի Հայրն ամենակալ,
Յարարիչն երկնի եւ երկրի,
երեւելեաց եւ աներեւութից:
Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ,
ծնեալն յԱստուծոյ Հօրէ, Միածին,
այսինքն՝ յէութենէ Հօր:
Աստուած՝ յԱստուծոյ, լոյս՝ ի լուսոյ,
Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ,
ծնունդ եւ ո՛չ արարած:
Նոյն ինքն ի բնութենէ Հօր,
որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի,
երեւելիք եւ աներեւոյթք:
Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան
իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ,
ծնաւ կատարելապէս
ի Մարիամայ սրբոյ կուսէն՝ Հոգւովն Սրբով.
որով էառ զմարմին, զհոգի եւ զմիտ,
եւ զամենայն որ ինչ է ի մարդ,
ճշմարտապէս եւ ո՛չ կարծեօք:
Չարչարեալ, խաչեալ, թաղեալ.
յերրորդ արուր յարուցեալ.
Էլեալ ի յերկինս նովին մարմնովն,
նստաւ ընդ աջմէ Հօր.
գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր՝
ի դատել զկենդանիս եւ զմեռեալս.
որոյ թագաւորութեանն ո՛չ գոյ վախճան:
Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին,
յանեղն եւ ի կատարեալն,
որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարգարէս եւ յաւետարանս.
որ էջն ի Յորդանան,

քարոզեաց յառաքեալսն
եւ բնակեցաւ ի սուրբսն:
Հաւատամք եւ ի մի միայն
ընդհանրական եւ առաքելական (սուրբ) եկեղեցի:
Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն,
ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:
Ի յարութիւն մեռելոց,
ի դատաստանն յաւիտենից՝ հոգւոց եւ մարմնոց,
յարքայութիւնն երկնից եւ ի կեանսն յաւիտենականս:

(Իսկ որք ասեն, էր երբեմն յորժամ ոչ էր Որդին,
կամ էր երբեմն յորժամ ոչ էր Սուրբ Հոգին,
կամ թէ յչէից եղեն, կամ յայլմէ էութենէ
ասեն լինել զՈրդին Աստուծոյ եւ զՍուրբ Հոգին,
եւ թէ փոփոխելիք են կամ այլայլելիք,
զայնպիսիսն նզովէ՝ կաթուղիկէ
եւ առաքելական սուրբ եկեղեցի):

Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՆԳԱՆԱԿ

Հաւատամք ի մի Աստուած,
Հայր ամենակալ,
յարարիչ երկնի եւ երկրի,
ամենեցուն երեւելեաց եւ աներեւութից:
Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս,
Որդին Աստուծոյ, Միածին, որ ի Հօրէ ծնեալ
յառաջ քան զամենայն յաւիտեանս,
այսինքն՝ յեութենէ Հօր:
Լոյս՝ ի լուսոյ,
յԱստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ,
ծնեալ եւ ոչ արարեալ. յեակից Հօր,
որով ամենայն եղեւ,
որ ինչ յերկինս եւ որ ինչ յերկրի:
Որ վասն մեր մարդկան,
եւ վասն մերոյ փրկութեան,
էջ յերկնից եւ մարմնացաւ ի Հոգւոյն սրբոյ
եւ ի Մարիամայ կուսէն.
եւ մարդացաւ եւ խաչեցաւ
վասն մեր առ Պոնտացոյ Պիղատոսիւ.
եւ չարչարեցաւ եւ թաղեցաւ
եւ յերիբ աւուր յարեաւ ըստ գրոց.
եւ ել յերկինս եւ նստաւ ընդ աջմէ Հօր.
եւ գայ միւսանգամ հաղներձ փառօք՝
դատել զկենդանիս եւ զմեռեալս.
որոյ թագաւորութեանն մի՝ լիցի վախճան:
Եւ ի Հոգին Սուրբ, Տէր եւ կենդանարար,
որ ի Հօրէ ելանէ,
որ ընդ Հօր եւ ընդ Որդւոյ
երկրպագութիւն առնու եւ փառաւորի,
որ խօսեցաւ մարգարէիւք:
Ի մի սուրբ կաթողիկէ եւ առաքելական եկեղեցի:

Խոստովանիմք մի մկրտություն ի թողություն մեղաց.
ակն ունիմք յարութեան մեռելոց
եւ կենացն հանդերձելոցն յաւիտենից: Ամէն:

(Իսկ ոյք ասենն, թէ էր երբեմն՝ զի չէր,
եւ թէ մինչչեւ ծնեալ չէ՛ր, կամ թէ ի չգոյէ եղև,
կամ յայլմէ էութենէ, ասեն լեալ հոսական
կամ այլայլելի գՌրդին Աստուծոյ,
զայնպիսիսն նգովէ՛ կաթուղիկէ եւ առաքելական
եկեղեցի):

ՆԻԿԻԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿ

Հաւատամք ի մի Աստուած,
Հայր ամենակալ,
ամենեցուն երեւելեաց եւ աներեւութից արարիչ:
Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ,
ծնեալ ի Հօրէ, Միածին, այսինքն է՝ ի գոյութենէ Հօր:
Աստուած՝ յԱստուծոյ, լոյս՝ ի լուսոյ,
Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ,
ծնեալ եւ ո՛չ արարեալ.
Նոյն էութիւն Հօր,
որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ յերկրի:
Որ վասն մեր մարդկան,
եւ վասն մերոյ փրկութեան,
էջ եւ մարմնացաւ
ի սրբոյ կուսէն Մարիամայ.
չարչարեցաւ վասն մեղաց մերոց.
մեռաւ եւ յերրորդ աւուր յարեաւ.
Ել յերկինս, նստաւ ընդ աջմէ Հօր.
գայ դատել զկենդանիս եւ զմեռեալս:
Եւ ի Սուրբ Հոգին:

(Եւ վասն այնոցիկ ոյք ասեն, էր երբեմն զի չէր,
եւ մինչչեւ ծնեալ էր՝ չէ՛ր, եւ զի յոչնչէ եղեւ,
կամ իբրեւ յայլմէ էութենէ
կամ ի գոյութենէ համարին թէ իցէ,
կամ փոփոխելի, կամ անցանելի զՈրդին Աստուծոյ,
գնոսա նզովէ՛ կաթուղիկէ եւ առաքելական եկեղեցի):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- 1.- Յիսուսի առաքելությունը՝ մեր առաքելությունը
- 2.- Եբրայական տօները
- 3.- Մեկնություն Մատթեոս 13.44-52ի
- 4.- Հազարամեակը եւ անոր կապուած հարցերը
- 5.- Ո՞վ է Նեոը (Յյտ 13)
- 6.- Աստուծոյ ըմբռնումը Հրեայ ժողովուրդին մօտ
- 7.- Կրօնական որոշ հաւատալիքներ
Հին Կտակարանին մէջ
- 8.- Մերտողություն
(Ա.Տմ 1-3 գլուխներ եւ 4.1-3)
- 9.- Խորհրդածություն
(Եբր 6.4-6 եւ 10.19-31)
հատուածներուն վրայ
- 10.- Արհեստական վիժումը
Հայց. Եկեղեցոյ հայեցողութեան մէջ
- 11.- Աստուածաշունչին հեղինակությունը
եւ ներշնչականությունը
- 12.- Հասկնանք մեր Սուրբ Պատարագը
- 13.- Ամփոփ պատկեր
Հին Կտակարանի պատմութեան
- 14.- Ծննդոց գիրքը
- 15.- Ելից գիրքը
- 16.- Ղեւտացոց գիրքը

17.- Թուոց գիրքը

18.- Երկրորդումն Օրինաց գիրքը

19.- Եօթը նամակներ՝ եօթը եկեղեցիներուն

Նամակ Եփեսոսի եկեղեցիին

Նամակ Չմիոնիայի եկեղեցիին

Նամակ Պերգամոնի եկեղեցիին

Նամակ Թիատիրի եկեղեցիին

Նամակ Սարդիկէի եկեղեցիին

Նամակ Ֆիլատելֆիայի եկեղեցիին

Նամակ Լաւոդիկիայի եկեղեցիին

20.- Հայ Եկեղեցոյ Հաւատամքին մեկնութիւնը
ՀԱԻԱՏԱՄՔ

Հաւատամքին Աստուածաշնչականութիւնը

«Հաւատամք ի մի Աստուած,
ի Հայրն ամենակալ,®
եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս,®
եւ ի Սուրբ Հոգին»:

«Յարարիչն երկնի եւ երկրի,
երեւելեաց եւ աներեւութից»:

«Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս
յՈրդին Աստուծոյ,
ծնեալն յԱստուծոյ Հօրէ, միածին,
այսինքն՝ յեութենէ Հօր»:

«Աստուած՝ յԱստուծոյ, լոյս՝ ի լուսոյ,
Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ,

ծնունդ եւ ո՛չ արարած:
Նոյն ինքն ի բնութենէ Հօր,
որով ամենայն ինչ եղեւ
յերկինս եւ ի վերայ երկրի,
երեւելիք եւ աներեւոյթք»:

«Որ յաղագս մեր մարդկան
եւ վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից»:

«Մարմնացաւ՝ մարդացաւ՝ ծնաւ կատարելապէս
ի Մարիամայ Սրբոյ կուսէն Հոգւովն Սրբով:
Որով էառ մարմին՝ հոգի եւ միտ,
եւ զամենայն որ ինչ է ի մարդ,
ճշմարտապէս եւ ո՛չ կարծեօք»:

«Զարչարեալ, խաչեալ, թաղեալ»:

«Յերրորդ աւուր յարուցեալ.
ելեալ ի յերկինս նովին մարմնովն՝
նստաւ ընդ աջմէ Հօր»:

«Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր,
ի դատել զկենդանիս եւ զմեռեալս:
Որոյ թագաւորութեանն ո՛չ գոյ վախճան»:

«Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին,
յանեղն եւ ի կատարեալն»:

«Որ խօսեցաւ յՕրէնս
եւ ի Մարգարէս եւ յԱւետարանս»:

«Որ էջն ի Յորդանան,
քարոզեաց յառաքեալսն
եւ բնակեցաւ ի սուրբսն»:

«Հաւատամք եւ ի մի միայն
ընդհանրական եւ առաքելական (սուրբ) եկեղեցի»:

«Ի մի մկրտություն, յապաշխարություն,
ի քաություն եւ ի թողություն մեղաց»:

«Ի յարություն մեռելոց:
Ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց»:

«Յարքայությունն երկնից,
եւ ի կեանսն յաւիտենականս»:

Մեր գործածած Հաւատամքը

Կ. Պոլսոյ Հանգանակ

Նիկիական Հանգանակ